ՄԵԾ ԵՂԵՌՆԵՐ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԸ

Ինգա Ավագյան

1915 թ. Բիթլիսյան ողբերգություն

Միհրան Դաղարյանի հուշապատումը

ԳՅՈՒՄՐԻ
«Դպիր» հրատարակչություն
2008

ՀՏԴ -941(479.25):891.981-94
ԳՄԴ - 63.3(2Հ)+84Հ-4
Ա - 770

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի (16.02.2008),
Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական
ինստիտուտի պատմության ամբիոնի (13.11.2007),
Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանի որոշումներով

Գիտական խմբագիր՝ *պատմ.գիտ. դոկտոր*
Լավրենտի Բարսեղյան,
Գրախոսներ՝ ***Պարույր Զաքարյան,***
Ստեփան Տեր-Մարգարյան
Խմբագիր՝ ***Հովիկ Կարապետյան***

Ավագյան Ինգա
Ա - 770 1915 թ. Բիթլիսյան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը. - Գյումրի: Դպիր, 2008. - 312 էջ:

«Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարով՝ հեղինակի երրորդ գիրքն է, որը ևս ստեղծվել է իրական դեպքերի և փաստերի հենքի վրա: Այս անգամ մշակվել, պատմական փաստերի հետ համադրվել և ընթերցողի սեղանին են դրվել Արևմտյան Հայաստանում 1915 թ. հայոց եղեռնը վերապրած բիթլիսցի 14-ամյա պատանու՝ կոտորածից մազապուրծ Միհրան Ղազարյանի հիշողությունները: Վերջիններս, ի պատիվ թե՛ հուշագրողի, թե՛ աշխատության հեղինակի, պատմականի, փաստագրականի, աղբյուրագիտականի և ազգագրականի հետ մեկտեղ, ունեն նաև գեղարվեստական արժեք, քանզի դեպքերը, գործող հերոսները, վերապրողի քնարական պատումները վիպականություն են հաղորդում գրքին: Հերոսների մեջ առանձնանում է նաև հայ ազգային-ազատագրական պայքարի աննկուն ղեկավար Անդրանիկ Օզանյանի կերպարը, ով ռուսական բանակի կազմում ազատագրում է Բիթլիսը: Ընթերցողի վրա ծանր տպավորություն են գործում չհաջողված ինքնապաշտպանության փորձերի նկարագրությունը և «Արաբու կամուրջ» կոչվող մահվան համակենտրոնացման ճամբարում թուրք ոճրագործների հրեշավոր գործողությունները, և ի պատասխան դրանց՝ ոգևորությամբ է ներկայացված ատելությամբ համակված հայ վրիժառու կանանց գործունեությունը:

Գիրքը մեծապես արժեքավորվում է հեղինակի գիտական և մեկնաբանական հարուստ ծանոթագրություններով, քարտեզներով, լուսանկարներով, ինչպես նաև բիթլիսցու խոսվածքում օգտագործվող և օտար բառերի բառարանով:

Գիրքը հասցեագրվում է Մեծ եղեռնի թեմայով զբաղվող գիտական հաստատություններին, պատմաբաններին, աղբյուրագետներին, ազգագրագետներին, բանասերներին, ժողովրդագրությամբ զբաղվողներին և, ընդհանրապես, ընթերցող լայն շրջանակներին:

ԳՄԴ 63.3(2Հ)+84Հ-4

ISBN 978-99930-58-53-3

© Ավագյան Ի. Է., 2008թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայ դատը հայի համար հավատ է, անընկչելի հավատ: Ողբի և հեծեծանքի մեջ և նրանց հետ պահվել է և մեզ է ավանդվել մի անշեջ հույս, որ վերջապես արդարության դռները պիտի բացվեն և հայ հայրենիքի վրա: Հույսը վատաբախտի համար կրկնակի ուժ է, մեզ համար այն հսկայական կանթեղը, որ տեսնում էին երազում հայրերը՝ երկնքից կախ հայրենի բարձունքների վրա»:

Ն.Ադոնց[1]

Տարիներ են անցնում, սակայն ավելի է մեծանում հետաքրքրությունը XXդ. սկզբի խոշորագույն ոճրագործության՝ Հայոց Մեծ եղեռնի նկատմամբ, որը պայմանավորված է բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչումով: Հայոց ցեղասպանության մասին լույս են ընծայվել բազմաթիվ ուսումնասիրություններ, գիտական և գեղարվեստական աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ: Հրատարակված գրականության մեջ փոքր մաս է կազմում պատմական հիշյալ իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես վկաների և Մեծ եղեռնը վերապրածների պատմած և գրառած հիշողությունները: Հայ դատի լուծման և հայոց ցեղասպանության ճանաչման համար մեծ նշանակություն ունեն նաև զանգվածային ոճրագործության զոհ դարձած հայ ժողովրդի մազապուրծ փոքրամասնությունը կազմող վերապրածների գրավոր և բանավոր վկայությունները:

2003-ի ամռանը հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանի /ԿԱԹ/ հանձնարարությամբ նախաձեռնեցինք **«Մեծ եղեռն վերապրածները»** խորագրով մատենաշարի հրատարակությունը՝ ընդգրկելով Երևանում, Շիրակի մարզում և Գյումրիում բնակվող Մեծ եղեռն վերապրած մարդկանց հուշապատումները: Դեռևս 2002-ի դեկտեմբերից էինք նախաձեռնել այս աշխատանքը. մատենաշարով հրատարակած մեր առաջին աշխատությունն էր **«Ծննդավայրիցս դեպի Տեր Զոր /Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները/»** վերնագրով հուշապատումը: 2006-ին մատենաշարը համալրվել է ևս մեկ հուշապատումով՝ **«Հուշեր անցյալից /Հայրապետ Տոնոյանի հիշողությունները/»**: Այժմ ընթերցողի սեղանին ենք դնում Միհրան Ղազարի Ղազարյանի՝ **«Կենսագրական ողբերգություն. 1915թ. Թուրքիա»** վերնագրով հուշապատումը:[2] Վերջինս բավակա-

նին սերտ է նախորդ աշխատանքին, քանի որ երկու գրքերի հերոսների ծննդավայրերը՝ Մշո դաշտը և Բիթլիս քաղաքը, օրգանապես կապված են եղել՝ մտնելով նույն Բիթլիսի կամ Բաղեշի նահանգի մեջ:

Հայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած կամ գրառած հուշերը իրենց կառուցվածքով կա՛մ հակիրճ են ու սեղմ, կա՛մ ծավալուն ու երկարապատում: Մյուս հուշապատումների նման՝ Միհրան Ղազարյանի հիշողություններն էլ ունեն հակիրճ-սեղմ և ծավալուն-երկարապատում դրվագներ, որոնք ներառում են նաև զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսություն բանավոր ավանդույթներ /երգ, վիպերգ, զրույց, առած-ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք, երդում/: Այս ամենով հուշագիրը փորձում է հաստատել իր պատմածի հավաստիությունը՝ առավել արժանահավատ ու տպավորիչ դարձնելով իր խոսքը:

Միհրան Ղազարի Ղազարյանի **«Կենսագրական ողբերգություն. 1915թ. Թուրքիա»** հիշողությունները գրառված են մի քանի օրինակներով: Առաջին օրինակը սևագիր ձեռագիրն է՝ բաղկացած տասնյոթ տետրից, որոնցից առաջին երկուսը պարունակում են հիշողությունների կազմման կառուցվածքի կետերը, մյուս տասնհինգը՝ տեքստը: Երկրորդ օրինակը մաքրագիր ձեռագիրն է, որն անավարտ է, պահպանված են 1-96, 101-111 էջերը: Երրորդ օրինակը 88 էջից բաղկացած մեքենագիրն է, որին հուշագիրը կցել է մաքրագիր ձեռագրի 101-111 էջերը: Բավականին ուշագրավ է Միհրան Ղազարյանի՝ Բիթլիս քաղաքին, գավառին և վիլայեթին վերաբերող մի շարք պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը: Ակնհայտ է, որ հիշողությունները հագեցած են պատմականությամբ: Ինչպես մյուս վերապրողները, այնպես էլ Միհրան Ղազարյանն իր պատումի հավաստիության նկատմամբ զգում է բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցում: Հայոց ցեղասպանությունը, որը իրականացվել է XX դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսի զգայարաններով և անջնջելի կերպով տպավորվել նրա հիշողության մեջ: Իրադարձությունների ականատես վկան, խոր ցավով վերապրելով իր տխուր անցյալը, մեզ է հաղորդում իր անձնական հուշերը՝ պատմական հայրենիքի, ծննդավայրի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք վաղուց չկան: Այդ անձնական հուշապատկերները նա կրել է իր ողջ կյանքի ընթացքում և, ինչպես մյուս վերապրածները, չի կարողացել ազատվել այդ դառը հիշողությունների մղձավանջից:

Միհրան Ղազարյանի հիշողությունները միանշանակ են իրենց եզակիությամբ, բայց և համանման՝ մյուս վերապրողների պատմած հուշերին: Հուշապատման մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է: Նա ոչ միայն պատմում է դաժան իրադարձությունները, այլև դրսևորում է իր աշխարհայացքը, անհատականությունը, լեզուն, ոճը, մոտեցումներն

ու տեսակետները: Մատենաշարում հրատարակված երեք հուշապատումներն էլ աչքի են ընկնում իրենց եզակիությամբ, բայց իրարից անկախ, գրեթե նույնությամբ պատկերում են պատմական նույն իրողությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, նույն ահասարսուռ տեսարաններն ու դաժանությունները, որոնք զուգակցվելով՝ հաստատում, շարունակում, լրացնում և ամբողջացնում են միմյանց՝ անձնականից վերածվելով համընդհանուրի, համազգայինի, Մեծ եղեռնի և հայոց ցեղասպանության:

Մ.Ղազարյանի հուշապատումում կան նաև ոճական և պատմական բնույթի որոշ անճշտություններ, այդ իսկ պատճառով հուշապատումը ներկայացվում է մեր մասնակի միջամտություններով: Հեղինակի հուշերում կան թվագրման հետ կապված անճշտություններ, որոնք ուղղված են անմիջապես տեքստում: Ընթերցելով հիշողությունները՝ չմոռանանք, որ մեր ականատեսը Մեծ եղեռնի ժամանակ եղել է ընդամենը 13-14 տարեկան դեռահաս: Մեր խոսքը՝ մեջբերումներ, լրացումներ, ընդգծումներ, մեկնաբանություններ, բերված են ծանոթագրություններում: Հուշապատման վերջում մեր կողմից ներկայացված է վերապրողի գրառումներում օգտագործված օտար բառերի բառարան: Որոշ փոփոխություն ենք մտցրել հուշապատման վերնագրի մեջ՝ գիրքը հրատարակելով **«1915թ. Բիթլիսյան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը»** խորագրով:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մ.Ղ.Ղազարյանի դստերը՝ ***Ջուլիետտա Ղազարյանին*** և թոռնուհի ***Գայանե Ղազարյանին***՝հուշապատման ձեռագիր և մեքենագիր օրինակները, լուսանկարները և այլ պահպանված նյութերը և փաստաթղթերը տրամադրելու համար: **Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում** «ԱրմենՏելի» Շիրակի մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ ***Էդուարդ Ավագյանին*** և Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ***Արտակ Հովհաննիսյանին***՝ գրքի հրատարակությանը սատարելու համար, ինչպես նաև պատմական գիտությունների դոկտոր ***Լավրենտի Բարսեղյանին,*** Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանի տնօրեն ***Պարույր Զաքարյանին*** և գլխավոր ֆոնդապահ ***Ստեփան Տեր-Մարգարյանին***՝ պատրաստակամ աջակցություն ցուցաբերելու համար:

Սույն գրքով ցանկանում ենք հանրության ուշադրությունը մեկ անգամ ևս սևեռել 1915 թ. հայոց ցեղասպանության, Հայկական հարցի և Հայ դատի վրա:

Նվիրում եմ տատիկիս՝ Վիկտորիա Ավագյանի հիշատակին:

Ինգա Էդուարդի Ավագյան

Համառոտ նկարագրություն՝ Բաղեշ-Բիթլիս քաղաքի*

Բիթլիս[3] /Բաղեշ, նախկին Սալնոռոր/[4] քաղաքը շրջապատված է բարձրադիր լեռներով,[5] բազում սառնորակ աղբյուրներով, ունի հարուստ բուսականություն[6], պտղատու այգիներ: Երեք կողմերից հոսող գետերը, քաղաքի կենտրոնով անցնելով, աշխատեցնում էին ջրաղացներ:[7] Քաղաքի կենտրոնում՝ ժայռաբլրի վրա, գտնվում է բերդը, որը Ալ. Մակեդոնացու արշավանքների ժամանակ կառուցել է Բաղեշ զորավարը: Բաղեշի պատմական անունն է Սալնաձոր: Ըստ ավանդության՝[8] Ալ. Մակեդոնացին, Սալնոռոր /Բաղեշ-Բիթլիս/ քաղաքը գրավելով և Բաղեշ զորավարին թողնելով այստեղ, հրամայում է կառուցել մի այնպիսի բերդ-ամրոց, որ ինքն անգամ չկարողանա գրավել: Ալ. Մակեդոնացին արշավում է դեպի Ասորեստան: Մոտ յոթ-ութ տարի հետո վերադառնալով և հասնելով քաղաքի շրջակայքը՝ նկատում է, որ իր զորավար Բաղեշը, իրեն ըստ պատշաճի չի դիմավորում՝ անգամ սպառնալով բերդին չմոտենալ: Ալ. Մակեդոնացին հրամայում է շրջապատել բերդը և բռնելով հանդուգն զորավարին՝ կախել բերդից: Պաշարումը երկար ժամանակ է տևում, և չկարողանալով գրավել այն՝ Ալ. Մակեդոնացին ստիպված հեռանում է: Այդժամ Բաղեշ զորավարը, փողերը հնչեցնելով, շքախմբով դուրս է գալիս բերդից, դիմում Ալ. Մակեդոնացուն և խոնարհվելով՝ ասում.*«Տե՛ր իմ, ես կատարեցի Ձեր հրամանը. կառուցեցի մի այնպիսի բերդ, որ դուք անգամ չկարողացաք գրավել»:* Դահիճները մոտենում են՝ ապստամբ զորավարին գլխատելու: Հեռատես աշխարհակալը կռահում է իր զորավարի խոսքերը՝ «Ես կատարեցի Ձեր հրամանը», և գրկախառնվելով՝ հրամայում է այս քաղաքը կոչել Բաղեշ:

Բերդը[9] կառուցվել էր քաղաքի կենտրոնում, երկու գետերով շրջապատված ժայռաբլրի վրա: Բերդի ներսում սենյակներ և պահեստային մառաններ կային: Բերդն ուներ կամարաձև մուտք: Բացի գլխավոր մուտքից, կային ևս երկու գաղտնանցքներ: Մեկը ժայռի արևելյան ստորոտին գտնվող դարբնոցից, մյուսը արևմուտքից. երկուսն էլ 10-15 մ գետից հեռու: Դարբին Ղարիբջանի արհեստանոց-դարբնոցի գաղտնի անցքով բարձրանալիս մոտ քառասուն-քառասունհինգ աստիճաններով երևում էր մեծ դահլիճ՝ մեջտեղը՝ ջրավազան, որի վրա ցոլում էր նեղ լուսամուտներից թափանցող աղոտ լույսը, վերելքի երկու գաղտնի անցքեր և մութ սենյակներ /խցեր/: Բերդի դահլիճը և մյուս խցերը լուսավորվում էին խողովակաձև պատուհանների հախճապակյա ապակիներով թափանցող ճառագայթներով: Բերդի հարավային և արևելյան ստորոտին էր գտնվում շուկան՝ մթերային խանութներով և արհեստանոցներով: Շուկայի կողմից գլխավոր մուտքով սայլերով կարելի էր բերդ բարձրանալ: Հարավային կողմից /Հարսնցոյ թաղ/ նեղլիկ ճանապարհով երթևեկում էին բերդում ապրող թուրքերը: Բերդի վերևում ապրում էին միայն թուրքեր: Այստեղ էր գտնվում ճապախանեն /զինանոցը/:

* Այստեղից սկսվում է Միհրան Ղազարյանի հուշապատումը:

Եկեղեցի[10] **և դպրոց:**[11] Քաղաքում կային շատ եկեղեցիներ ու վանքեր: Քաղաքի կենտրոնում՝ **Ս. Կարմրակ** եկեղեցին էր, որի գմբեթին խաչի փոխարեն դարերից ժառանգություն էր մնացել կարմրագույն քարից /յաղուտ[12]՝ կարմիր քար, սուտակ-рубин/ քանդակված աղավնին, որը թե՛ հնության պատճառով, թե՛ վառած մոմերի կանթեղների ծխից գորշացել էր: Սև էին նաև տաճարի պատերն ու սրբապատկերները: Աղավնին քրիստոնեության ընդունումից առաջ տեղում կառուցված հեթանոսական մեհյան-տաճարի մնացորդն էր: 1915-ի մարտի վերջերին եկեղեցում հայտնվեց կիսատ-պռատ հայերենով խոսող մի քահանա, որը արտոնություն էր ստացել ապրելու առաջնորդարանում: Մի շաբաթից հետո նա անհետացավ՝ գողանալով տաճարի գմբեթի աղավնին՝ «կարմիր ակը»: Դպրոցում, որտեղ ես սովորում էի, հայտնեցին, որ եկեղեցու կարմիր ակը գողացել են: Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ գողը չհայտնաբերվեց: Որոնումներն իզուր էին, գողը ամերիկյան հյուպատոսության կեղծ միսիոներն էր: Կարմրակ եկեղեցու գերեզմանոցում էր թաղված Սերոբ փաշայի գլուխը, որի վրա դրված էր մարմարից քանդակված մի հիանալի արձան: Կարմրակ եկեղեցուն կից կար կենտրոնական դպրոց, որտեղ սովորում էին հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն լեզուներով, ուներ հինգ կարգ/ հինգ դասարաններով/: Շուկայի մոտ էր գտնվում **Ս. Սարգիս** եկեղեցին: Այս եկեղեցուց 200 մ հեռավորությամբ բարձրադիրում էր գտնվում **Ս. Հինգխորան** եկեղեցին: *Ավելմեյդան* թաղի ճանապարհին էր գտնվում **Ս. Գևորգ** եկեղեցին: Քաղաքի արևելյան մասում՝ *Ծապրկորի* թաղում, **Տժիկ** սարի ստորոտին, Ծապրկորու ական մոտ էր **Ս. Կարապետ** եկեղեցին: Տժիկ սարի ստորոտից ահագին դղրդոցով հսկայական քանակով բխում, ցայտում էր զուլալ, սառը ջուրը և բաժանվում երկու առուների. ջուրն օգտագործում էին արևելյան բոլոր թաղամասերը՝ ընդհուպ մինչև *Ավեխի* թաղը, իսկ մյուս կեսը օգտագործում էին արտերն ու թաղամասի այգիները ջրելու նպատակով: Սարի՝ Ս. Գևորգ լեռան գագաթին էր գտնվում Ս. Գևորգ եկեղեցին: *Գոմաց* թաղում՝ **Ս.Նշան** եկեղեցին: Գոմաց թաղում էին գտնվում նաև նշանավոր **Ամրդոլու Ս.Հովհաննես վանքը**[13] և վերը նշված Ս.Գևորգ եկեղեցին: Քաղաքի հարավարևմտյան մասում՝ Ավեխի թաղում, գտնվում էր Ավեխու՝ **Թաթոս Առաքելի /Ս.Թադևոս/** վանքը, որտեղ գիշերօթիկ դպրոց կար և Ավելմեյդան թաղում՝ **Ս. Խնդրակատար** վանքը: Ավելմեյդան թաղից քիչ հեռու՝ քաղաքի հարավային մասում, ջերմուկների ջրի մոտ ևս երկու հինավուրց վանքեր կային. Ս. Գևորգ եկեղեցու դիմաց գտնվում էր **Ս. Հակոբ** վանքը, որը 1900 թ. թուրքերը քարուքանդ արեցին: Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածներից խուսափելու նպատակով այստեղ ապաստանած հայերը կոտորվեցին, իսկ եկեղեցին վերածվեց մզկիթի՝ *ջամի*:[14]

1908-ից[15] հետո հայկական թաղամասերում բացվեցին թաղային դպրոցներ աղջիկների ու տղաների համար: Բոլոր եկեղեցիներին կից գործում էին տարրական դպրոցներ, բացի Կարմրակ եկեղեցու միջնակարգ դպրոցից, որտեղ ընդունվում էին երրորդ դասարանից բարձր աշակերտներ: Բոլոր վանքերին կից գործում էին գիշերօթիկ դպրոցներ: *Քաղքի* թաղում էր գտնվում

ասորիների եկեղեցին, որի հաճախորդները մեծ մասամբ հայեր էին: Ավելմեյդան թաղում՝ Ամերիկյան հյուպատոսությանը կից, հայերեն և անգլերեն լեզուներով սովորում էին բողոքականները:[16] 1909-ին Ծապրկորի թաղում բացվել էր աղջիկների օրիորդաց դպրոց:

Արհեստ:[17] Առանց բացառության բոլոր արհեստավորները հայերն էին, բացի նալբանդներից մի քանիսի, որոնք պատրաստի նալերը հայերից էին գնում: Զարգացած էր ոսկերչությունը: Պատրաստված ապարանջաններն ու ականջօղերն առաքվում էին այլ քաղաքներ: Դարբնոցը[18] գտնվում էր բերդի ստորին շրջապատում: Դարբնոցի վարպետները իրենց պատրաստած գյուղատնտեսական գործիքներով՝ խոփ ու գերանդի, բահ-կացին, քլունգ և այլ տնտեսական գործիքներ, հիացնում էին օտարներին: Դարբնոցի շարքում հսկողության տակ էին ավելի հմուտ արհեստավորները, որոնք պատրաստում էին դանակներ և դաշույններ: Կոշկակարները կարում էին տղամարդու և կանացի կոշիկներ, կարմիր սոլեր, թախթա փափուշ՝ խանումների համար, կունդուրա: Հարուստները մաշիկների և տրեխների կաշին պատրաստում էին դաբախանայում: Սկզբում բոլոր դերձակները հայերն էին, սակայն հյուրիէթից հետո /1908թ./[19] թուրքերն, հայերին նախանձելով, սկսեցին հայերից դերձակություն սովորել և արհեստանոցներ բանալ: Պղնձագործները պատրաստում էին մեծ և փոքր պղինձներ՝ ճաշի և բաղնիքի համար, պղնձյա սափորներ, ափսեներ, սինիներ, թեյնոց, բաժակներ և այլ տնտեսական իրեր: Պղնձի հումքը բերում էին Ավեխի լեռան ստորոտից, իրենք էլ հալում ու մշակում էին հանքանյութը: Տեղական ջուլհակների գործած կտորից պատրաստում էին սպիտակեղեն: Ջուլհակ-շիլաջիները կտորը ներկում էին կարմիր որթով:[20] Բաղեշից այլ քաղաքներ արտահանվում էր շիլան, կտավներ, ասեղնագործություններ, շրեշտ[21], չոր մրգեր: Ցիու մազից գործում էին աբաներ, կուրտիկներ: Օղի-գինեգործությունը սակավ էր, բայց Բաղեշի օղին,[22] արտահանում էին այլ քաղաքներ: Մանր առևտուրը գլխավորապես թուրքերի ձեռքին էր, բայց վաճառականների ճնշող մասը հայեր էին, որոնք Թուրքիայի և հարևան երկրների տարբեր քաղաքներից քարավաններով բերում էին հատկապես մանուֆակտուրային և արդյունաբերական ապրանքներ: Քաղաքի կենտրոնում գտնվում էր երկհարկանի առևտրական տունը՝ «խան»,[23] որի վաճառականների 70%-ը հայեր էին: Բիթլիսն ուներ երեք բաղնիք:[24]

Բիթլիսը համանուն վիլայեթի[25] /նահանգ/ վարչական կենտրոնն էր, լինելով վեց[26] վիլայեթներից[27] մեկը՝ կառավարվում էր փաշայի /կուսակալ, նահանգապետ/ կողմից: Քաղաքն ուներ 42000 բնակիչ, որի 15% քրդեր և թուրքեր էին:

1915-ի ապրիլ:[28] Վանը ապստամբել էր և քաջարի կռվում էր: Ռուսները մոտեցել էին Էրզրումին և Խնուսի վրայով շարժվում էին դեպի Բիթլիս: Վանի, Էրզրումի վիլայեթներից գաղթողներն ու ռազմաճակատի վիրավորները գիշեր-ցերեկ գաղթում էին հարավ: Մարտի վերջին փակվեցին Բաղեշի դպրոցները: Վանի և Էրզրումի նահանգների ոստիկանական կազմը իրենց արբանյակներով և քրդական հրոսակախմբերով կիսապաշարողական վի-

ճակում էր պահում քաղաքը՝ հսկելով կարևոր ճանապարհները: Քաղաքի ազգաբնակչությունը, հատկապես հայությունը, սրտաճմլիկ վիճակում էր: Մարտի 20-ի առավոտյան բարձրաստիճան խորհրդակցությունից /մեճլիս/, թուրքերը հեռացրեցին հայ պաշտոնյաներին, որոնց թվում նաև փաշայի փոխանորդ Տիգրան Ալթունյանին: Առաջնորդարանում տեղի ունեցավ երեսփոխանների ժողով՝ աչքի ընկնող անձնավորությունների մասնակցությամբ: Այս խորհրդակցությունում ընթերցվեց թաքուն կերպով ձեռք բերված Էնվերի[29] ու Թալեաթի՝[30] հայերին բնաջնջելու մասին[31] գաղտնի հրամանը: Այդ ժողովին մասնակցում էին բորոր թաղերի ներկայացուցիչները, այդ իսկ պատճառով բնակչությունը սպասում էր նրանց վերադարձին և միջոցառումներին:

Թուրքական իշխանությունները նախօրոք գիտեին հայերի խորհրդակցության մասին: Նախ շրջապատելով առաջնորդարանը՝ ձերբակալեցին բոլոր մասնակիցներին՝ առաջնորդ Ս.Գալումյանի գլխավորությամբ և տեղափոխեցին *հյուքյումեթ*, բացի դարբին Մամփրեից, որին հաջողվել էր ուշ երեկոյան ծածկաբար հասնել տուն: Երեկոյան՝ ժամը ութին-ինինին ոստիկանության հսկողությամբ բանտարկյալները երկու-երեք ժանդարմների ուղղեկցությամբ ուղարկվեցին իրենց տները: Ըստ պատշաճի հյուրասիրվելով և ճաշակելով սեղանների բարիքները՝ ժանդարմները մնացին հայոց տներում կամ բակերում՝ տեղաշարժերը հսկելու: Գիշերվա ժամը 10-11-ից հայկական բոլոր թաղերում վխտում էին ասքյարների *թաքուրներ* /վաշտեր/, և տները ու տանիքները հսկողության տակ վերցնելով՝ թաղի ոստիկանները ցուցակը ձեռքերին մտնում էին տները, հավաքում տղամարդկանց և հանձնում զինվորներին:

Հայրս ու հորեղբայրս, ինչպես նաև այլ արհեստավորներ, մոբիլիզացվել և աշխատում էին *ամալիա թաբուրում* /աշխատանքային վաշտ/[32] և միայն կիրակի օրերն էին տուն գալիս: Նրանք շինարարություն էին անում, քնում տեղում, բայց սնվում մեր հաշվին: Արևոտ օր էր: Սովորականի նման, հորս և հորեղբորս ճաշ տանելու և հորեղբորս տուն գնալու համար առավոտյան դուրս եկա տնից: Ի՜նչ զարմանք, բոլոր հայոց տների տանիքներին և բակերում նկատեցի տաս-տասնհինգական զինվոր: Չկար ոչ մի երթևեկություն: Բարեբախտաբար մեր տան ներքնահարկում և մեր կողքին մեզ հետ մտերիմ թուրքեր էին ապրում: Քանի որ մեր տանը չափահաս տղամարդ չկար, չկային նաև հսկող ասքյարներ: Հարևան թուրքերը մեզ զգուշացրին, որ տնից դուրս չգանք. նրանք էլ մեզ նման սարսափի մեջ էին: Այդ գիշեր մինչև առավոտյան ժամը 10-11-ը հիմնականում բոլոր հայ տղամարդկանց տարան: Երեկոյան մի *քոմսեր* /ոստիկանապետ/ երկու ժանդարմների ուղղեկցությամբ մեր տուն մտավ. կանչեց նաև մեր թուրք հարևաններին՝ ասելով.« *Փաշայի հրամանով՝ ամալիա թաբուրում աշխատողների ընտանիքները անշեռնմխելի են*»: Այսպիսով՝ կոտորածի առաջին օրը մեր և հորեղբորս տան դռներին փակցրեցինք քոմսերի տված կնքված թերթիկները՝ մեր անձեռնմխելիության մասին արտոնագրերը:

Դիմադրության փորձեր տեղի ունեցան Ծապրկորի թաղում դոկտոր Ճեր-

ճիս էֆենդու,[33] Սանդի թաղում դարբին Մամփրեի և Թաղիգլխում՝ Խանոյենց Մինաս աղայի գլխավորությամբ: Ճերճիս էֆենդին մոտ քառասուն-քառասուներկու տարեկան էր,[34] նախապես զորակոչվել էր *օրդա* /բանակ/ զինվորական ծառայության՝ իբրև զինվորական սափրիչ, ապա փախնելով բանակից՝ կրթություն ստացել Կ.Պոլսում, հետո գործուղվել Ֆրանսիա: Զինվորական բժշկի մասնագիտություն ստանալով՝[35] վերադարձել էր Կ.Պոլիս: Ուսանողական շրջանում մասնակցել էր թատրոնի աշխատանքներին, եղել վարսավիր-դիմահարդար: Նախքան ընդհանուր պատերազմի սկսվելը՝ նա աշխատել էր Տրապիզոնում, Էրզրումում, ապա կնոջ ու երկու երեխաների հետ 1912-ին տեղափոխվել Բիթլիս, որտեղ աշխատանքի էր մտել նոր բացված զինվորական հիվանդանոցում: Ընտանիքի ժամանակակից հայացքները ձևավորվել էին նախ Թուրքիայի արևմտյան մասում բնակվելու, ապա Ֆրանսիա և Գերմանիա կատարած շրջագայության ժամանակ: Նրա միջնորդությամբ 1914-ի քրդերի ապստամբության ժամանակ, քրդական հրոսակախմբերին դիմակայելու համար հայերին զենք բաժանվեց: Նրա ինտենսիվ գործունեության շնորհիվ՝ բռնվեցին քրդերի տասնչորս պարագլուխները՝ շեյխ Շահբադդինի և սեյդ Ալիի[36] գլխավորությամբ: Վերջինիս հաջողվեց փախչել և ապաստանել ռուսական կոնսուլի մոտ: Սուլթան Ռաշիդի *ֆարմանով*[37] ձերբակալված շեյխ պարագլուխները *կոկմեյդանում* /հրապարակ/ կախաղան բարձրացվեցին, իսկ շեյխ սեյդ Ալիին, որպես պետության դավաճանի, բռնեցին 1914-ի աշնանը՝ ռուսական կոնսուլի հեռանալու օրը, և նույն օրը կախեցին:

Ներքին պայմանավորվածության համաձայն՝ հայ տղամարդիկ **Պոռա** միջին անտառում փոքր խմբերով հավաքվում էին և զինավարժություններ[38] անցկացնում: Այս զինավարժություններին էր մասնակցում դոկտորի կինը՝ Սառան: Նա տղամարդու կիրթ հագուստով էր ներկայանում, կրակում էր դիպուկ և արժանանում խրախուսանքների: Դոկտորի կնոջ արարքը բաբմասվում էր խավարամիտ հետադիմականների, սնոտիապաշտ պոռոտախոսների, իրենց քթից հեռու չտեսնողների շրջանում, բայց դոկտորի հեղինակությունը վանում էր ասեկոսները: Դոկտորի շրջագայությունները և կապը բարձր հասարակության, զինվորական աստիճանավորների, անհատների և խմբերի[39] հետ տարակուսանք էր առաջացրել փաշայի մտքում, որի հանձնարարությամբ ոստիկանությունը գաղտնի հետևում էր դոկտորին:

Ճերճիս էֆենդին գլխավորում էր վարդապետի, թաղային երեսփոխանների և մեր դպրոցականների հայկական շքախումբը, որը Դաստալոշիրում հանդիպեց Վանից Բիթլիս եկող Վռամյանին:[40] Նրանց մոտեցան փաշան՝ Մանդոի պեյը և Տիգրան էֆենդին՝ իր ծիրանագույն ժապավեններով ու պաշտոնական զգեստով: Թուրքական քաղաքավարությամբ բարևներ փոխանակելով՝ Բիթլիսի վալին[41] առաջարկեց իր հյուրընկալությունը և *Կոք մեյդան* չհասած՝ դիմավորողները ըստ ցանկության առանձնացան: Ճերճիսի գլխավորած խումբը շարժվեց դեպի *հուքիմեթ*:

Հայկական ըմբոստ կազմակերպությունները դեմ էին Վռամյանի Վանից դուրս գալուն, սակայն Վռամյանը, հավատալով իրեն եղբայրացած Էնվեր

պեյի երդմանը ու հեռագրին, խուսափելով արյունահեղությունից՝ նախընտրեց ներկայանալ Կ.Պոլիս՝ Էնվերին: Վանեցիները, հիասթափվելով Վռամյանի սխալ[42] քաղաքականությունից և Ճևտետի սպառնալիքները չհանդուրժելով, ապստամբեցին: Սկսվեց վանեցիների քաջարի կռիվը, որոնք մոտ երեք ամիս տևած գրոհներին դիմադրություն ցույց տվեցին: Թուրքերը թողեցին Վանը և հեռացան Վասպուրականի բոլոր շրջաններից:

Ճերճիս էֆենդին շատ մարդամոտ էր, որպես մարդասեր բժիշկ՝ իր վերաբերմունքով վայելում էր Բիթլիսի հայ և թուրք քաղաքացիների համակրանքն ու հարգանքը: Չնայած այս ամենին՝ նրա ընտանիքը ծպտված կյանք էր վարում: Նա հաճախ էր գալիս առաջնորդարան և զրուցում վարդապետի և թաղային երեսփոխանների հետ:

Դոկտորի կինը՝ Սառան, քսանհինգ տարեկան էր: Նա շատ ամրակազմ և գրագետ կին էր՝ հեքիմի աղջիկ: Ունեին երկու փոքրիկ տղա՝ յոթ և ինը տարեկան: Ապրում էին սոլկար Մանուկենց տանը: Սառայի և ուսուցիչների հետ Կարմրակ, Ս. Գևորգ և Ս. Սարգիս եկեղեցիներում Ճերճիս էֆենդին կազմակերպում էր երեկույթներ, թատերական ներկայացումներ՝ զարմանքի և գովասանքի արժանանալով հայերի և հրավիրված թուրք աստիճանավորների կողմից: Սառան հաճախ կնոջ և տղամարդու դերեր էր խաղում: Դոկտոր Ճերճիսն ու տիկին Սառան հաճախ միասին էին այցելում հիվանդներին, հատկապես կանանց շրջանում գործում էր Սառան:

Ուշադրության է արժանի Ճերճիս էֆենդու հերոսական, անհավասար մարտնչումը: Ճերճիս էֆենդին կապ էր պաշտպանում երեսփոխանների խորհրդի հետ, հաճախում դպրոցներ: Եղեռնից մեկ-երկու օր առաջ նա տեսակցություն էր ունեցել փաշայի տեղակալ՝ Աղանայից եկած Տիգրան Ալթունյանի հետ, ումից իրազեկ էր դարձել իշխանության գաղտնի մտադրություններին:[43] Կազմակերպվող աղետի մասին տեղեկանալով՝ Ճերճիս էֆենդին անմիջապես *հյուրյումեթից*[44] իջել էր Կարմրակ եկեղեցի և այդ սոսկալի բոթի մասին իրազեկ դարձրել վարդապետ Ս. Գալումյանին: Նրանք երկուսով եկել էին վարժապետարան և այդ գույժը հայտնել մեր դպրոցի տնօրեն Գևորգ Մարզպետունուն, ով անմիջապես առաջարկել էր մեզ՝ աշակերտներիս, զգուշորեն ուղարկել տուն: Ինչպես վերը նշեցինք, նույն օրը տեղի ունեցավ երեսփոխանների ժողով՝ աչքի ընկնող թաղային գործիչների մասնակցությամբ: Ճերճիս էֆենդին և դարբին Մամփրեն ավելորդ համարելով ժողովը, առաջարկեցին ցրվել և դիմել միջոցառումների: Նրանք որոշեցին գնալ իրենց տները՝ պայմանավորվելով հանդիպել երեկոյան մթին: Նրանց հեռանալուց մոտ մեկ ժամ հետո ոստիկանությունը ներխուժեց առաջնորդարան և բոլոր խորհրդակիցներին կալանքի վերցրեց: Բերդի և ղշլաղների կայազորները, նախապես գրավելով քաղաքի գլխավոր ճանապարհներն ու անցուղիները, երեկոյան սկսեցին ներխուժել հայոց թաղերը՝ փակելով բոլոր երթուղիները: Ուշ երեկոյան տուն գալով՝ դոկտորը տեսավ, թե ինչպես զորքերը ոստիկանների հետ հաջողությամբ հորդում էին բակերն ու տանիքները: Ճերճիս էֆենդին, որպես զինվորական բժիշկ, հրավիրվել էր շտաբ, սակայն կռահելով, որ

ընկնելու էր որոգայթի մեջ, և պայմանավորվածություն ունենալով հանդիպելու դարբին Մամփրեի և Ծմպնեց դարբին Աղաջանի հետ, մնաց տանը և լուսամուտից տեսնելով թուրքերի տեղաշարժերը՝ կնոջը՝ Սառային, ուղարկեց Քամալկանց /Քամալյանների/ տուն, որը իրենց տնից մոտ երկու հարյուր մետր ցածր էր գտնվում՝ նրանց զգուշացնելու գալիք աղետի մասին: Նույն օրը, մոտավորապես ժամը իննին, հյուքյումեթի բանտում կալանքի առնվածները ոստիկանների հսկողությամբ ուղարկվեցին իրենց տները, սակայն ոստիկանները չհեռացան, հյուրասիրվեցին՝ սպասելով պաշտոնական հրահանգին:

Ըստ նախօրոք պայմանավորվածության՝ Ճերճիսը պետք է գնար Քամալկանց տուն, այդտեղ հավաքվածների հետ միանալով դարբին Մամփրեենց խմբին, գիշերը բարձրանար Տժիկ սարը: Ավա՜ղ, շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Տիկին Սառան, Քամալկանց տանից դուրս գալով, չկարողացավ ճանապարհը շարունակել և ստիպված ետ վերադարձավ: Ճերճիս էֆենդին երկու զավակների հետ շնչասպառ սպասում էր Սառային: Նա լուսամուտից տեսավ հայոց տներ հորդող ասքյարներին ու ոստիկաններին, որոնք, շրջապատելով բակերն ու տանիքները, մտնում էին հայոց տները և ըստ նախօրոք կազմած ցուցակների՝ խաթրով ու զոռով կապված ձեռքերով դուրս բերում բոլոր չափահաս տղամարդկանց՝ դիմադրողներին դաշունահար անելով: Նա տեսավ, թե ինչպես փողոցներն ու բակերը լցվեցին անմեղ ոչխարների նման սպանդանոց տարվող մարդկանցով: Նա փորձեց դուրս գալ և գնալ Սառայի ետևից, բայց ինչպե՞ս թողնել երեխաներին, հետո էլ գնալու հնարավորություն չկար: Թողնելով քնած երեխաներին անկողնում՝ Ճերճիսը զինվորական համազգեստով, զինված, խիզախելով դուրս եկավ Սառային դիմավորելու, բայց դուռը բացելիս, նկատելով ասքյարներին, փորձեց աստիճաններով իջնել: Բակում գտնվող ոստիկանները նրան ճանաչեցին և ցույց տալով գետնին փռված արյունլվա դիակը՝ ծաղրեցին.

-Դոկտո՛ր էֆենդի, արի բուժիր:

Ապա ատրճանակները ուղղեցին վրան: Այդ պահին Ճերճիսը լսեց թաղի քոմսերի ձայնը, որի հետ հաճախ կերուխում էր արել և բարեկամական սիրալիր հարաբերություններ ուներ: Քոմսերը ծաղրանքով դիմելով Ճերճիսին՝ կանչեց.

-Է՜յ, գյավուր,[45] *թեսլիմ օլ* /հանձնվիր/:

Ժանդարմները մոտեցան բռնելու, բայց մի ակնթարթում, խույս տալով, նա մտավ տուն և դուռը փակեց: Քոմսերը, նկատելով ըմբոստ հային, հրամայեց ջարդել դուռը: Կատաղած գազանների նման փախած որսի ետևից վազելով՝ սկսեցին դուռը ջարդել:

Ճերճիս էֆենդին ապրում էր սարի լանջին՝ սոլկար Մանուկ աղայի մեկուսացված երկհարկանի տանը, որի դուռը բացվում էր առաջին հարկի տանիքի վրա, ուներ մի լուսամուտ: Ճերճիսը կռթնած նայում էր Սառայի կողմը՝ զգալով, որ անհնարին էր նրա գալը: Լսվեց դռան ճռճռոցը: Դուռը ջարդվեց և կիսաբաց եղավ: Դուռը ջարդող ասքյարները ներս էին խուժում, լուսամուտից

կրակոցներ լսվեցին: Երեխաները լաց էին լինում: Երկու, երեք հոգի արդեն ներս էին մտել միջանցք և սվինները ուղղած՝ առաջանում էին դեպի սենյակ: Լսվեց հրացանի կրակոցը և տղայի ճիչը: Ճերճիս էֆենդին, պատուհանից շուռ գալով, ուշադրություն չդարձրեց գալարվող վիրավոր որդուն, այլ ատրճանակը ձեռքին վազեց դեպի դուռը և պարպեց միջանցքում գտնվողների վրա: Շանսատակ եղած ներխուժող ասքյարը գետին տապալվեց: Դոկտորը դռան ճեղքից կրակեց բակում և տանիքին գտնվողների վրա, որոնք հանկարծակիի գալով, սկսեցին հետ քաշվել և, թողնելով մի քանի վիրավորի՝ աստիճաններից ներքև թափվեցին:

Լսելով տղայի ճիչը, սարսափած Ճերճիսը ներս մտավ, տեսավ արնաշաղախ որդուն: Ատրճանակն ու փամփուշտները դռանը և լուսամուտին մոտեցնելով, նկատեց սանդուղքով բարձրացող զինվորներին, կրակեց նրանց վրա: Ջարդված դռնից սողոսկեցին երկու ասքյար: Դոկտորը հարձակվեց նրանց վրա, նրանք հազիվ փախան: Մի ակնթարթում շուռ գալով՝ տեսավ փոքր տղային փռված եղբոր կիսամեռ դիակին: Մոտեցավ մի քանի րոպե առաջ հեկեկող որդուն: Ջգալով նրա մահը՝ գրկեց, համբուրեց, սեղմեց կրծքին և պառկեցրեց սեղանի վրա: Թուրքերը նորից գրոհեցին, կրակը կենտրոնացնելով դռան անցքի և լուսամուտի վրա: Պատասխան կրակ չլսելով և *հուզում* գոռալով՝ հարձակվեցին դռան կողմից: Ճարճատեց Ճերճիսի ատրճանակը, և դահիճները փռվեցին գետնին: Թուրքերը այլևս դռան կողմը չբարձրացան:

Այս անհավասար կռիվը մահու և կենաց պայքար չէր: Ճերճիսը համոզված էր, որ ինքն էլ է մեռնելու, միայն թե ցավում էր ու ափսոսում, որ Սառան իր մոտ չէր: Օգտվելով կրակոցների ընդմիջումից՝ նա հանեց ծոցատետրը և Սառային կտակեց իր վերջին պատգամը.« *Միրելի՛ իմ Սառա՛, եթե քեզ բախտ վիճակվի գալ և մեր դիակները տեսնել, լաց չլինես և չվհատվես. ես հատուցել եմ կրկնակի, գուցե և ավելի: Սառա՛, Գուրգենիկը աչքիս առաջ սպանվեց, Արամը ինչ օգնում է: Հիմա թուրքերը դռնից ներխուժել չեն կարող: Միրելի Սառա՛, Արամին Գուրգենի արյունով կթաթախեմ, զգուշացրել եմ, որ մեռած չևանա: Քեզ ազատություն: Սառա՛, չեմ համարձակվում գրել, բայց գիտեմ, որ կմեռնենք: Թուրքերը նորից են հարձակվում: Տանիքը վերևից փորում են, կրակում են, չեմ կարող գրել: Սառա՛, մեր տուն ներխուժողը և ինչ վիա կրակողը մեր բարեկամ քոմսերն է, որը դեռ երեկ մեր տանը հաց էր ուտում, ինչ գաղաշմ, քեզ քույր համարում: Ա՜խ վիրավորվեցի: Սառա ի զուր չմեռնես,* **սպանի՛ր, որ չսպանվես,** *միևնույն է սպանելու են: Քո Ճերճը»:*

Երկտողը դնելով Գուրգենիկի կրծքին՝ շապիկով ծածկեց, համբուրեց երեխաներին և շարժվեց դեպի դուռը: Տղան հայտնեց, որ տանիքը քանդում են, և իրոք, առաստաղից թափվում էր հողը: Արամը վախից հոր կողքից չէր հեռանում: Դռնից, լուսամուտից և առաստաղից լսվող կրակոցները ավելի սաստկացան: Արամը՝ հայրի՛ն, ճչալով, հայտնեց, որ լուսամուտից թուրք ասքյարի գլուխ երևաց: Ճերճիսը մի ակնթարթում դռան կողմից թռավ դեպի լուսամուտը: Թուրք ասքյարները այստեղ էին բարձրացել սանդուղքի օգնությամբ: Դոկտորը նրանց էլ ներքև տապալեց: Դարձյալ շուռ գալով դեպի դուռը՝

Ճերճիսը պատասխանում էր հատ ու կենտ կրակոցներով: Մի քանի րոպեից կատարվեց ավելի ահավորը՝ հողի հետ ընկավ տանիքի գերանը: Մի կողմից տանիքի բացվածքից կրակում էին, մյուս կողմից շարունակում քանդել առաստաղը: Արամի ճիչը շփոթեցրեց հորը: Տանիքի կրակոցներից տղան ընկավ՝ երեք տեղից գնդակահարված, թույլ ձայն հանելով՝ մամա:

Դարձյալ կիսամեռ երեխային գրկելով՝ հայրը շառագունեց: Ճերճիսն Արամին էլ Գուրգենիկի կողքին պառկեցրեց, ապա ատրճանակը ուղղելով դեպի տանիքը՝ կրակեց տանիքից կրակողների և տանիքը քանդողների վրա: Հրացանի հետ միասին վար ընկավ մի ասքյար: Ճերճիսը մահվան ճիրաններում անգամ պայքարում էր արյան քենն ու վրեժը լուծելու համար: Դռան կողմից լսվեցին ոտնաձայներ: Հրացանը ձեռքին մոտեցավ դռանը, փողը ուղղեց դեպի դուրս, կրակեց, բայց ափսոս մի փամփուշտ կար մեջը: Հրացանը շպրտելով՝ նա վերցրեց ատրճանակը և այդ պահին նկատեց թոկով տան անկյունում առաստաղից իջնող երկու ասքյարների, որոնք երեսնիվայր կրակեցին նրա վրա: Մեջքը պատին հենելով՝ Ճերճիսը դարձյալ կրակեց: Զինվորները, գլուխները խոնարհելով, գալարվելով հատակին, սկսեցին թպրտալ: Ատրճանակի փամփուշտները սպառվում էին: Մնացել էր վերջին յոթ հատը: Փորից և թևից վիրավոր Ճերճիսը, ատամները կրճտացնելով, դարձյալ վերցրեց սպանված զինվորի հրացանը և փողը ուղղելով տանիքն ի վեր՝ կրակեց: Հրացանը շպրտելով և վերքերի ցավից ուժասպառ լինելով, սողալով՝ մոտեցավ դռան ճեղքին: Ասքյարները, օգտվելով առիթից, մոտեցել էին նախասենյակին: Ատրճանակը ձեռքին՝ Ճերճիսը դեմ առ դեմ կրակեց մոտեցող ժանդարմների վրա և սվինահար լինելով՝ ընկավ սեփական բնակարանի շեմին: Ներս մտավ «բարեկամ» քոմսերը և կատաղությունից՝ ատրճանակը պարպեց արդեն անշնչացած դիակի վրա և դուրս գալով՝ վրեժը լուծեց կապկպված հայերից:

Ճերճիս էֆենդու բնակարանը գտնվում էր Հոխիկյանների, դարբին Ղարիբջանյանի և Աղուբյանների տների դիմաց, որտեղից պարզ երևում էր դոկտորի տանը կատարվածը: Սարսափը պատեց Աղուբենց տան կանանց, բայց ոգևորեց պատանի Մճոյին /Մկրտիչ/, որի աչքի առաջ սրախողխող էին արել հորեղբորը: Մայրն ու հորեղբայրների կանայք մի կերպ հազիվ զսպեցին նրան՝ խլելով նրանից ատրճանակը. այս համառ պատանին փորձեց հարձակվել ժանդարմների վրա:

Հաջորդ օրը /թե երրորդ գիշերը/ Սառան սրտատրոփ գնաց տուն: Աղուբենց կանայք լուսամուտից նկատեցին նրան: Լուսամուտից Աղուբենց Մճոն էլ տեսավ և հակառակ մոր պաղատանքների՝ մոտեցավ նրան: Կանայք ձեռքով ներս կանչելով՝ Սառային մինչև երեկո պահեցին իրենց մոտ, պատմեցին ամուսնու քաջարի կռվի, նահատակության մասին, թուրքերի սպանվածների ու վիրավորների մասին: Մճոն, ճանաչելով մեր թաղի քոմսերին, Սառային հայտնեց, որ դոկտորին և երեխաներին սպանելու հրահանգը նա էր հնչեցրել՝ դառնալով սպանդի ղեկավար: Սառան Մճոյի հետ գնաց տուն և լուցկու լույսով տեսավ կատարված ոճիրը:

Այս տեսարանը կսարսափեցնի յուրաքանչյուր սիրտ ունեցողի: Երկու

անմեղ տղաները, մի քանի գնդակով խփված, սեղանին իրար կողք էին պառկած, սպիտակ շապիկները կարմիր արյունով էր ներկված: Ճերճիս էֆենդին հատակին էր ընկած՝ գլուխը ջնջված: Մայրը, զավակների գլուխները գրկելով, հպվեց երեխաներին՝ խոր կսկիծով, հեկեկանքով ողբաց: Գուրգենին գրկելիս և շոյելիս՝ նկատեց արյունոտ թղթի կտորը: Մութ էր, հնարավոր չէր կարդալ՝ մոտեցնելով լուցկու լույսին: Սառան երկտողը պահեց ծոցում: Մճոն, թևից քաշելով, ուզեց դուրս բերել, սակայն Սառան համառեց.

-Օգնիր ինձ, բալիկներիս թաղել,-և խնդրեց Մճոյին այգում մի փոս փորել, որ շտապ թաղեն:

Անմիջապես օգնության եկան հարևան երկու կանայք: Սկզբում հորը, հետո տղաներին թաղեցին միասին՝ թթենու տակ: Սառան, կատարելով սրբազան հուղարկավորությունը, աղիողորմ հեկեկալով՝ ամբողջ մարմնով փարվեց գերեզմանի հողերին: Գործը վերջացնելով՝ Մճոն, որը նույնպես լալիս էր, ձգելով կնոջ ձեռքից՝ զգուշացրեց.

-Աղոթարանը բացվում է, գնա՛նք:

Մճոյի խնդրանքով գնացին իրենց մոտ:

Նույն գիշեր Սանդի թաղում Կատաողլանյանների և Մակարյանների տների կողքին հատկապես մեծ դիմադրություն ցույց տվեց դարբին Մամփրեն: Իրենց տանը ապաստանած անձնվեր հարևաններով երեք օր կռվելով՝ սպանեց մոտ քսանհինգ-երեսուն ժանդարմ և ասքյար: Վերջին րոպեին ապստամբները իրենք իրենց տունը վառեցին:

Մամփրեն, նախօրոք գուշակելով, նախապատրաստվել էր դիմադրությանը: Նրա տունը շրջապատված էր մի հարկանի տների տանիքներով, երկհարկանի էր, երկու սենյակները աշտարակի նման բարձր էին, չորս կողմը լուսամուտներով, որտեղից հնարավոր էր նայել և տեսնել շրջապատը: Դարպասի դուռը ներսից քար շարելով՝ ապահովված էին դուռը ջարդել ներս մտնելուց: Կար մի ելք. ներքնահարկից անցք բացել, հարևան տների միջով, հնարավորության դեպքում հեռանալ և սար բարձրանալ: Ժանդարմները ահ ու սարսափի մեջ առաջարկեցին բաց անել դարպասը և լուռ ու մունջ հանձնվել՝ խոստանալով ազատ աքսոր: Ժանդարմները քանի անգամ պահանջեցին հանձնել տանը եղած տղամարդկանց, բայց մերժում ստանալով և տեսնելով լուսամուտներում դրված ալյուրի պարկերը, սինիներով դիրքավորումը՝ կանչեցին զինվորներին և սկսեցին չորս կողմից կրակել:

Մամփրեն իր լուսամուտներից պարզ տեսնում էր, թե ինչպես իր հարևաններին ծեծելով, սվինների հարվածներով տներից հանում էին և անմիջապես ձեռքերը մեջքին կապելով՝ հրելով տանում: Մինչև առավոտ թուրքերին չհաջողվեց տանիքների վրա բարձրանալ: Գնալով ավելի ուժեղացավ և՛ դիմադրությունը, և՛ հարձակումը: Ասքյարներին հրամայվեց կացիններով մոտենալ և դարպասը ջարդել: Մամփրեն ասքյարներին խնդրեց հեռանալ, բայց նրանք սկսեցին կրակել: Մամփրեն և իր զինակիցները, ունենալով դիրքային առավելություն, սկսեցին կրակել: Հենց առաջին րոպեից դիպուկ գնդակներով վիրավորվեցին ու սպանվեցին տանիքների վրա գտնվող և դուռը ջարդող ասք-

յարներից ու ժանդարմներից մի քանիսը, մյուսները թողեցին-փախան: Այս անսովոր դիմադրությունը թուրքերին խուճապի ենթարկեց, որոնք թողնելով մոտ տասնհինգ սպանված ու վիրավոր՝ փախան դես ու դեն:

Կես ժամից օգնության եկավ երկու *թաբուր* /վաշտ/ զորք, որոնք դիրքավորվելով քեռուս, Գարաօղլանյանների և այլ տանիքների վրա՝ սկսեցին տեղատարափ կրակը: Ասքյարներին հաջողվեց տանիքների վրա դիրքեր պատրաստել և անընդհատ գնդակոծել: Պաշտպանվողները ավելորդ չէին կրակում՝ սպասելով հարձակման կամ հարմար առիթի:

Թուրքերը կատաղությունից մաղձը թափեցին անպաշտպան հարևան հայերի վրա: Հարևան տներից հավաքելով պատանիներին՝ բարձրացրեցին տանիքի վրա և ստիպեցին սանդուղքներ տանել-դնել լուսամուտների մոտ: Խղճուկ երեխաները՝ արյունլվա, լաց ու կոծով բերեցին աստիճանները: Վերևից լսվեց Մամփրեի ձայնը.

-Երեխաներին չխփե՛լ, կհատուցեք կրկնակին:

Կատաղած օնբաշին իր դիրքից կրակեց երկու տղաների վրա և սպառնաց, որ եթե չհամաձայնվեն հանձնվել, բոլորին կսպանեն: Այդ միջոցին մի գնդակ լռեցրեց օնբաշուն, և լուսամուտից հնչող ձայնը սպառնաց.

-Թուրքե՛ր, մենք չենք ուզում մարդ սպանել, մի՛ք ստիպեք մեզ:

Հերոս Մամփրեն և իր զինակիցները չընկճվեցին. երկու օր՝ գիշեր-ցերեկ, կռվեցին: Թուրքերը, շատ զոհեր տալով, դադարեցրին կրակը՝ հայերին խոստանալով ազատ ճանապարհ-հեռանալու դեպքում: Երկրորդ օրն է, որ քաջաբար դիմադրում էին, միևնույն ժամանակ անցք բաց անելով կից հարևանների սենյակով՝ տների միջով, դեպի սարը դուրս գալու համար: Երրորդ գիշերը հասան նախավերջին տանը: Թուրքերը քնած չէին, նրանք բոլոր մոտակա հարևան տներից արտաքսել էին բնակիչներին և հսկում էին:

Քեռանցս տները տաս-տասներկու մետր հեռու էր Մամփրեենց տնից: Այդ գիշեր կատաղած թուրք ժանդարմները մտան նաև քեռուս տուն և հենց սենյակում սպանեցին քեռուս, որը կանացի զգեստով էր, և նրա երկու տղաներին: Մամփրեն և իր զինակիցները, հուսահատվելով փրկության միջոցներից, սկսեցին անխնա, դիպուկ կրակել: Երեկոյան թուրքերը, ասքյարների քանակը կրկնապատկելով ու սանդուղքներ բերելով՝ տանիքների վրայով սկսեցին բարձրանալ և հասան լուսամուտին: Ականատես թուրք հարևանների պատմածով՝ վիրավորված ձեռքով Մամփրեն խնդրել էր հեռանալ, բայց նրանք մերժել էին և համոզված լինելով, որ փամփուշտ չունենալու պատճառով հայերը այլևս անզոր են դիմադրելու, չորս կողմից գոռալով հարձակվել էին: Մամփրեն, լուսամուտից տեսնելով իր վաղեմի դրացի հաջի Մուստաֆային, խնդրել էր հեռանալ տանիքից, բայց նա՝ գյավուր, ասելով՝ ատրճանակն էր ցույց տվել: Ասքյարների համազարկերին հայերը պատասխանում էին, բայց ամեն մի գնդակ իր զոհն ուներ: Այդ երեկոյան միայն տանիքների վրա մնացել էր քսաներկու սպանված, որոնց թվում և հաջի Մուստաֆան:

Կռիվն ավելի բորբոքվեց. թուրքերին օգնության հասան *չուփչիները* /հրշեջներ/, որոնք ուզում էին ջրով լցնել սենյակները: Հայերի կողմից կրա-

կոցները գնալով պակասեցին: Թուրքերը նորից տանիք խուժեցին, հրշեջները սկսեցին դուռը ջարդել: Ահա սարսափելի դժնդակ մահվան պահին ներսից բացվեցին լուսամուտները, չորս կողմից բարձրացող ասքյարների գլխին թափվեց նավթի հեղեղը և կենդանի ասքյարներն ու հրշեջները բռնկվեցին: Տանիքների վրայից ահ ու սարսափով ասքյարները խուճապահար փախան դես ու դեն: Լուսամուտները այլևս չծածկվեցին, լռեցին հայերի կրակոցների ձայները, չորս կողմից՝ չորս լուսամուտներից երևացին կանանց և տղամարդկանց ահաբեկված դեմքեր, նրանք, հաշվի չառնելով կրակոցները, վերջին անգամ նայեցին պատուհաններից: Նրանցից այլևս ոչ մի ձայն: Թուրքերին հաջողվեց նավթի բանկաները շպրտել բակը, և առավոտյան հրդեհ բռնկվեց ներքնահարկում ու տարածվեց կից սենյակներում: Այդ ամեհի րոպեներին միանգամից լուսամուտներին բարձրացան ծխի քուլաներ, մի երկու րոպեից՝ բոցի լեզուներ: Վառվում էր դարբին Մամփրեի տունը, բոցի և ծխի քուլաները երկինք էին բարձրանում:

Գնալով դիմադրությունը թուլացավ և լռեց: Ոչ ոք չմոտեցավ նայելու: Երկու օր դեռ մխալու էր: Թուրքերը իրենց վիրավորվածներին փոխադրեցին Կարաօղլանյանների տունը, և սկսեցին պատրաստվել հետապնդելու հրդեհից ազատվողներին: Ոչ մի կին, ոչ մի երեխա, ոչ ոք չուզեց փախչելու փորձ անել: Բոլորը սպանվեցին և այրվեցին: Որպեսզի տղամարդկանց մահից հետո իրենց կանայք և երեխաները թուրքերի ձեռքը չընկնեն, ապստամբները վերջին փամփուշտները նվիրեցին իրենց հարազատներին և ինքնասպանությամբ վերջ դրին իրենց կյանքին: Մի շաբաթից, երբ վառված տունը այլևս չէր ծխում, թուրքերը ներս մտան տուն և, ի զարմանս իրենց, տեսան իրար վրա կուտակված յոթանասունմեկ դիակ, բոլորն էլ նախքան այրվելը իրենք իրենց ձեռքով գնդակահարված, բոլորն էլ անճանաչելի դարձած:

Ստիպողաբար, հայ կանանց միջոցով դիակները դուրս բերեցին և թաղեցին Վարդանանց այգում: Յոթանասունմեկ այրված անճանաչելի դիակներ, որոնցից քսանութը՝ կանայք, քսանմեկը՝ երեխաներ, քսաներկուսը՝ տղամարդիկ:[46] Թուրքերի վիրավորվածների թիվը մոտ քսանչորս հոգի էր, սպանվածների մասին խոսք չեղավ, բայց չար լեզուները ասում էին, որ սպանվածները ավելի շատ են եղել:

Ես՝ տասներեքամյա պատանիս, քեռուս տնից նայում էի վառված տան ավերակներին, սիրտ անելով՝ մտա այդ տունը: Նայելով՝ տեսա առաջին հարկի մի սենյակում այրված, կուչ եկած, սևացած և անճանաչելի դարձած դիակները, բայց ես ճանաչեցի քեռի Մամփրեին. նա ընկած էր մի քանի դիակների վրա, կողքին ատրճանակն էր՝ իր նման այրված ու սևացած: Լուռ ու մունջ թողի-հեռացա:

Խանոյենց Մինաս աղան իր հարստությամբ, իր երկու հարկանի գեղեցիկ շենքով, որը գտնվում էր Մոլլի կամուրջի մոտ, գետեզերքին փռված պտղատու այգիներով, չէր կարող վրիպել գետի մյուս ափին ապրող ղայմակամ Շեֆքեթ էֆենդու աչքից, որին բաժին էր ընկել այդ թաղամասի բնաջնջումը: Խանոյան եղբայրների նախանձելի, երկհարկ վեց սենյականոց գեղե-

ցիկ շենքը գրավում էր ամեն մի անցորդի ուշադրությունը:

Եղեռնի առաջին գիշերը, շրջապատելով շենքը՝ *սեր քոմսեր* Շեֆքեթ էֆենդին, մոտենալով դռանը, խփեց դռան կոչնակը: Դուռը բացեց ջոջ նանեն: Չորս-հինգ հոգով ներս մտան և պահանջեցին Մինաս և Քերոբ աղաներին: Խանոյան եղբայրները, ժամ առաջ լուսամուտից նկատելով ժանդարմների ու ասքյարների խմբերը հայոց տանիքներին ու բակերում, ճանապարհների փակվելը, տներից տղամարդկանց դուրս բերելը, հրացանների հարվածների ներքո մեկուսացնելը՝ չնայեցին Շեֆքեթ էֆենդու խոստումներին և պատսպարվեցին շենքին կից ապաստարանում: Կեսգիշերին ներխուժելով տուն ու խուզարկելով տունը՝ կանանց առանձնացրին ու բռնելով երկու եղբայրներին, *ղայմաղամի* ցուցումով առանձնացրին նկուղում՝ պահակի հսկողությամբ: Շեֆքեթ էֆենդին փոքր հարսին քաշելով՝ հանձնեց ժանդարմին՝ իրենց տուն տանելու համար: Փոքր երեխաները, որոնց թվում էր մոտ տասներեք-տասնչորս տարեկան Պարգևը, ողբալով փաթաթվեցին ջոջ նանեին: Զինվորներից մեկը, սվինահարելով Պարգևին, հրեց ձեռքերը դեմ արած ջոջ նանեին: Սկեսուրը դիմադրեց և նույն վայրկյանին սրախողխող եղավ, հրացանի կոշտ հարվածներով լռության մատնվեց՝ անտեր թողնելով երկու մանկիկներին: Մինասի տղաները ընկան իրենց տատի վրա: Նրանց նույնպես գնդակահարեցին և լուսամուտից ներքև շպրտեցին: Մեծ հարսին և երկու փոքր երեխաներին փոխադրեցին հարևանների տուն: Ներքնահարկի փոքր լուսամուտից նրանք տեսնում էին կամրջի վրայով ասքյարների տարած հայերին, որոնցից հանդուգներին դաշունահարելով քցում էին գետը:

Այդ նեղլիկ լուսամուտից պահակ ասքյարներին խնդրեցին, որ տնից իրենց հաց ու ջուր բերեն: Պահակ օնբաշին արհամարհանքով հարցրեց.

-Ո՞վ բերի, չիմացա՞ք, որ ձերոնց արդեն ուղարկել են էն աշխարհ:

Մինաս և Քերոբ աղաները մոտեցան իրար, գրկախառնվեցին: Մինաս աղան, նկուղի գաղտնի անցքը բաց արեց, վերցրին պահած ատրճանակները: Նկուղի փոքր լուսանցքից լսեցին կիսամեռ տղաների հևոցը, սկսեցին լուսամուտի ճաղերը հանել և դուրս եկան դեպի պարտեզ: Նկուղում պահված ատրճանակներով երեկոյան մթին դուրս թռան բակ: Անակնկալի բերելով պահակին՝ անձայն խեղդեցին: Լուսամուտի ներքևի հևոցը լսելով՝ մոտեցան. կիսամեռ սվինահար ընկած էր տասներեք տարեկան Պարգևը՝ Մինասի տղան, ով հազիվ պատմեց.

-Բոլորիս բերին թոնրատուն և սվիններով խփեցին, իսկ կայմակամը երկու հարսների ձեռքերը կապեց և չգիտեմ ուր տարավ:

Մինաս և Քերոբ եղբայրները, քառասուն-հիսուն տարեկան հասուն հասակում, սեփական տանը տեսան իրենց հարազատների խոշտանգված դիակները: Պարգևը, գլուխը բարձրացնելով և նայելով հորեղբորը, ասաց.

-Աշոտին ու Սաթիկին քցեցին էն լուսամուտից,-ու գլուխը հավերժ խոնարհեց:

Երկու եղբայր մի քանի քայլ արին և գրկած բերին կրծքից ու փորից սվիններով խոցված անշունչ երեխաներին: Իրենց արյունոտ զավակներին

համբուրելով՝ երեքին մի տեղ պառկեցրին, դողդողալով մի երկու թուփ կանաչով ծածկեցին, նորից խոնարհվեցին, ձեռքերով շոյեցին և հեռացան դեպի պատը:

Ուշ երեկոյան Շեֆքեթ էֆենդին, հերթական զոհեր մատուցելուց հետո, եկավ Խանոյենց տուն, և ի զարմանս իրեն, նկատեց պահակի դիակը: Սեղմեց, դուռը փակ էր, փականքը վրան: Կանչեց՝ Մինա՜ս աղա, բայց պատասխան չստացավ: Ստուգելիս նկատեց, որ լուսամուտի ճաղերը քանդված էին: Հաջորդ օրը՝ կեսօրին, քոմսերը երեք կանանց մի քանի զափթիաների հետ ուղարկեց տուն. պառավ տատիկի ու երեխաներից մեկի դիակը շպրտեցին այգին, իսկ կիսամեռ երեխաներին, ոտքերով հարվածելով, մայրերի ներկայությամբ կողովը քցեցին և ասքյարին հանձնարարեցին տանել-քցել գետը: Կանանցից երրորդը *սար քոմսեր* էֆենդու ընտանիքին երկարամյա հավատարմությամբ ծառայած, վստահելի տան տիրուհին էր: Երրորդ թուրք կինը, տեսնելով հայ կանանց լացն ու կոծը, կատաղելով պոռթկաց, պոկեց նրանց երեսի քողը և լռեցնելու համար սեղմեց բերաններին: Կանայք ուշաթափ ընկան հատակին:

Շեֆքեթը համոզված էր, որ Խանոյան եղբայրները, թաքնված լինելով, հանուն իրենց կանանց ու երեխաների՝ դուրս կգան ու իրենց ոտքով ուռկանը կընկնեն: Երեկոյան Շեֆքեթ էֆենդին, այցելության գալով, ներս մտավ հսկողության տակ առնված շենքը, շտապեց իրեն վաղուց հրապուրող սենյակները տեսնել: Նրան դիմավորեց դայակը, ում հետ, հիացմունքից բեղերը ոլորելով, մտան եկավ սենյակներում: Շեֆքեթ էֆենդու ցանկությունը միայն տանը տիրանալու միտքը չէր: Նա գիտեր և ինչպես մի անգամ այգում հյուրասիրվելիս արտահայտվել էր.

-*Մինա՛ս աղա, դու կուրով ոսկի ունես:*

Շեֆքեթ էֆենդին, եղբայրներին առանձնացնելիս, առաջարկել էր վճարել երկու հազար ոսկի՝ իրենց կյանքը ապահովելու, փրկելու համար:

Նա դուրս եկավ տնից, կարգադրություններ անելով, նորից մոտեցավ դայակին և պահանջեց, որ կանայք վեր կենան և միասին իջնեն առաջին հարկը տեսնելու: Զինվորների հրմշտոցից ոտքի կանգնելով՝ կանայք նայեցին սար քոմսերին, որն իսկույն իր հայացքը շուռ տվեց: Բակի աստիճաններով իջան ներքև և ծաղկանոցի մոտով անցնելով՝ մոտեցան ավազանին: Շեֆքեթը երազային վայելքի մեջ էր: Նա, դայակին աչքով ակնարկելով, ուսումնասիրեց շրջապատը և գնաց:

-*Ա՛յ գըզ հարամզադա,* որտե՞ղ են ձեր մարդիկը:

Խեղճ կինը ճչաց և վար ընկավ՝ ձեռքը կողքին սեղմելով: Տեքրակինը, կսկիծով նայելով, մի ահարկու ճիչ արձակելով, կանչեց.

-Ա՜յ Քերոբ, Մինաս:

Թուրք կնոջ ուժեղ ապտակը կիսամեռ կնոջը լռեցրեց:

Մինասն ու Քերոբը պահ էին մտել ջրավազանի կլորիկ ջրամբարի մեջ: Լսելով իրենց կանանց աղիողորմ ձայնը՝ գազանի նման որջից դուրս թռան, հարձակվեցին ուղեկցող զինվորների վրա և ձեռքով հարվածելով՝ գետնին

գլորեցին: Նկատելով, որ ժանդարմներից մեկը խույս տալով մտավ ծառի ետևը, ատրճանակը հանելու պահին Քերոբը հարձակվեց ու խլեց ձեռքից և գանգին հարվածելով՝ անշնչացրեց: Մինաս աղան հազիվ հասցրեց կնոջից իմանալ մոր ու երեխաների գեհենային վախճանի մասին: Քերոբի հետ բարձրացան և նկատեցին թուրք կնոջ հարձակումը իրենց կանանց վրա: Լուսամուտից կրակեցին, թրքուհու հետ ընկան[47] նաև իրենց կանայք:

Զգալով իրենց կյանքի կարճ տևողությունը՝ երկու անմխիթար, կեսօրում որբացած ծերուկները, որոշեցին գնալ տուն: Պատի կողքով անցնելով՝ մոտեցան իրենց տան դարպասին, մթնում ստուգեցին, մարդ չերևաց: Դարպասը բաց էր, շան հաչոց չլսվեց, շտապեցին դեպի տուն: Մթանը նկատեցին բակում սրախողխող ընկած իրենց մորը՝ Խանոյենց նանեին, երկու երեխային, իրենց կանանցը ու շանը՝ բնում կապած, սատկած: Բարձրացան իրենց տուն, որի դռները բաց էին: Ներս մտան, դռան սողնակը քաշեցին, լամպը վառեցին: Տանը ամեն ինչ գրեթե կարգին էր՝ միայն անկողինները չէին հավաքված: Նորից մոտեցան դռանը, նորից ամրացրին այն: Դուռը ամրացնելով՝ անցան սենյակներն ու լուսամուտներից դարձյալ տեսան նանեի և երկու տղաների անշունչ մարմինները՝ արյունով շաղախված: Գնացին թոնրատուն, պատի պահարանի արանքից երկու հրացան հանեցին, տոպրակով փամփուշտները բերին, նստեցին լուսամուտի մոտ, սկսեցին դիտել կամուրջը և երկկողմ ճանապարհները: Լռությունը խախտելով՝ Մինասն ասաց.

-Քերո՛բ, մեր երկու հարսին տարել են, միևնույն է՝ նրանց նույնպես սպանելու են: Այդ Շևքեթի արած գործերն են: Նա կստիպի նրանցից կորզել մեր հարստությունը: Ասա՛, Լուսիկը, քո հարսը, գիտի՞ որտեղ ենք պահել, իսկ ինչ վերաբերվում է իմ հարսին, ես համոզված եմ, որ եթե նրան կտոր-կտոր անեն, նա տեղը չի ասիլ:

-Ա՜յ տնաքանդ, մենք որ գնացինք, էլ ինչիս է պետք ոսկին:

-Չէ՛, չեմ ուզում էդ շան փայը լինի,-ասաց Մինասը:

Մինասն ու եղբայրը լուսամուտները զրահապատեցին սինիներով, հրացանները ստուգեցին և փամփուշտները մոտեցրին երկու կողմի լուսամուտներին: Ա՜խ քաշելով նայեցին լուսամուտներից, մեկը՝ դեպի կամուրջը, մյուսը դեպի այգին և դիմացը՝ Թաղիգլխի կողմը:

-Քերո՛բ, էս փամփուշտներով մենք ինչքա՞ն կարող ենք դիմանալ: Բա վերջը… լա՞վ չի լինի, մառանից նավթ բերենք և վերջում տունը վառենք: Ինչի՞ թողնենք հա՛մ մեզ սպանեն, հա՛մ էլ մեր հարստությանը տիրանան,-և մոմ վառելով շտապեց դեպի թոնրատունը, որտեղից պետք է անցներ մառանի կողմը:

Գիշերվա ժամը տասներկուսին մոտ Մինաս աղան նկատեց, որ կամրջի վրայով լապտերի լույսով դեպի իրենց կողմն են գալիս երեք հոգի: Նրանք մոտեցան պահակներին, որոնք պատվի կանգնելով՝ սպասեցին կարգադրության: Սպասելու պահը չէր: Մինասը եղբորը՝ Քերոբին կանչեց և մատնացույց արեց, որ Շեֆքեթը եկել է: Շեֆքեթը ներքնահարկի դռան կողպեքը բաց անելով, հրեց դուռը: Չբացվեց: Շևքեթը մոտեցավ դռան կողմից:

-Մինա՛ս աղա, ես եմ, դուռը բաց:

Նորից լռություն, կատաղեց, կանչեց զինվորներին: Զինվորները, ժանդարմները ներս մտնելու համար սկսեցին դուռը ջարդել: Լապտերը ձեռքերին ներս մտան, նայեցին չորս կողմ, ոչ ոքի չգտան: Շևքեթը հրամայեց ջարդել կարասները: Ամեն ինչ տակն ու վրա արին, ոչ մի հետք չգտան: Շեֆքեթը, ատամները կրճտացնելով, ապտակեց զինվորներին: Նրանք ստուգեցին միակ փոքր լուսամուտը, տեսան, որ երկաթյա ճաղերը անշարժ և ամուր էին: Կասկածեցին պահակ զինվորներին, չնայած համոզված էին, որ դռնից չէին դուրս եկել: Զինվորներին խուզարկեցին՝ կասկածելով կաշառքով բաց թողնելու մասին: Հիասթափված դուրս եկան նկուղից՝ անցնելով բակի կողմը:

Շեֆքեթը, պատի տակ կանգնելով, կարգադրեց ստորադրյալներին՝ մտնել տուն: Ի զարմանս բոլորի՝ դուռը չկարողացան բացել: Շեֆքեթը բարձրացավ վերև, սեղմեց դուռը՝ փակ էր: Նա պատին հենված՝ կարգադրեց դուռը ջարդել: Հենց որ սկսեցին գործիքներով դռանը մոտենալ, Մինասը առաջին գնդակով խփեց չավուշին: Շեֆքեթը, լսելով հրացանի ձայնը և տեսնելով զինվորի սպանվելը՝ փշաքաղվեց, ավելի ամուր հենվեց պատին ու հրամայեց կրակել դեպի լուսամուտները: Լսվեց Քերոբի սարսափեցնող ձայնը.

-Շեֆքեթ էֆենդի, կրակի՛ր, մենք էստե՛ղ ենք:

Մինաս ու Քերոբ եղբայրները սկսեցին կրակել: Զինվորները նույնպես սկսեցին կրակել, բայց մինչև նրանց կողմնորոշվելը, Մինասը դիպուկ նշանառությամբ խփեց երկուսին: Ներխուժողները իսկույն դուրս փախան՝ թողնելով երկու վիրավոր ասքյարի: Շեֆքեթը, ատրճանակը բռնած, կրակեց գլխի վերևի լուսամուտին: Մի ձեռքում՝ լապտերը, մյուս ձեռքում՝ ատրճանակը բռնած, չավուշը ուզեց անցնել ծառի ետևը և մթության մեջ մատնեց իրեն: Նա արժանացավ երկու գնդակի: Սարսափած Շեֆքեթը, զգալով իր դրությունը, լսելով գյավուրի ձայնը, տեղից չշարժվեց: Քիչ անց Շեֆքեթ էֆենդին, կռթնելով ծառին՝ ձայնեց.

-Մինաս աղա՛, եթե փողերը տաք, ձեզ բաց կթողնենք, կգնաք:

Քերոբ աղան, մոտենալով լուսամուտին, կրակեց ծառին հենված խաբեբային և դարձյալ նկատեց եղբոր որդիների դիակները:

Հայկական թաղում վխտում էր ժանդարմիան, զորքերը փակել էին փողոցներն ու նրբանցքները, հավաքում էին անպաշտպան հայերին ու խմբերով տանում-սպանում մերձակա ձորերում: Այդ ժամանակ մեր թուրք հարևաններից մեկը մեզ պահում էր իր նկուղում: Չնայած հայրս և հորեղբայրս տանը չէին, որպես արհեստավոր աշխատում ու մնում էին տեղում՝ զինվորների ուժեղ հսկողության տակ, դրա շնորհիվ մեզ օրենքով արտոնություն էր տրված: Հարևաններից իմացանք, որ հրամայված էր որևէ հայ տեսնելիս, անկախ նրա տարիքից ու սեռից, տեղում ոչնչացնել: Պարզվեց, որ թաղի վերին մասում հայերը մեկ օրում սպանել էին մոտ ութսուն ասքյար ու ժանդարմ. վերջում մեզ հայտնի եղավ, որ խոսքը Դարբին Մամփրեի տան մասին էր, մի ուրիշ տեղում՝ հինգ հոգու:

Լսելով հրացանակրի ձայնը՝ թուրքերը ամեն կողմից լցվեցին տանիքի

վրա ու շենքի չորս կողմը: Եղբայրները մինչև լուսադեմ հետևեցին Շեֆքեթ քոմսերին, բայց նա երեկոյան, նախքան ընդհարման սկսվելը, խուսափելով զոհերի պատասխանատվությունից, շտապել էր հեռանալ: Լուսադեմին սկսվեցին համատարած կրակոցները: Սկզբում Խանոյենց տնից կրակում էին կամրջին նայող լուսամուտներից, այդ պատճառով ըստ կայմակամի ցուցումի՝ օգնության եկած զորքը համազարկերը ուղղեց դեպի այդ լուսամուտները: Մինասը, պաշտպանվելով, սպասում էր հարմար առիթի ու չէր պատասխանում: Զորքը, կարծելով, որ դիմադրությունը ընկճված էր, խմբերով երկու լուսամուտների կողմից առաջ շարժվեց: Որոտաց Քերոբ աղայի մավուզերը: Գետնին թավալվեցին տասնյակ զինվորներ: Ոգևորվեց Մինասը և մինչ այդ գործի դրեց իր մավուզերը, շանսատակ անելով մարդասպաններից մի քանիսին, ստիպեց մյուսներին դիրքավորվել: Գնալով պայքարը ավելի կատաղի բնույթ էր կրում: Լսվեց Քերոբի ահռելի ձայնը.

-Շեֆքե՞թ ու՞ր էս մտել, արի երկու հազար ոսկին տար:

Նրա ձայնը լսեցին թուրք զինվորները, *չավուշներն* ու *յուզբաշիները*, որոնք գլխավորում էին դիմադրությունը: Մինասն ու Քերոբը որոշել էին իզուր փամփուշտ չծախսել: Հոշոտված, արյունլվա հարազատների դիակները աչքի առաջ ընկած տեսնելով, հույսերը կտրած ու իրենց գոյության մասին մոռացած՝ միայն մխիթարվում էին ոխը ու վրեժը լուծելով: Օգտվելով իրենց դիրքից, թիրախ ունենալով Մոլլի կամուրջը, երկու ճանապարհները՝ Խանոյան եղբայրները, երեք-չորս ժամ դիմադրելով, տասնհինգ զինվոր ու ժանդարմ սպանեցին:

Կեսօրն անցել էր, Շեֆքեթը պատի կողքով ծլկել էր, գործում էր կանոնավոր զորքը: Ըստ յուզբաշու՝ դիմադրող հայերի թիվը տասից անց էր: Թուրքերը, զգալով խմբովի հարձակման անարդյունավետությունը, սանդուղքներ բերին, սողալով սկսեցին պատին մոտենալ և պարանով սանդուղքը լուսամուտին մոտեցրին: Այդ ընթացքում զոհվեցին երեք զինվոր, բայց հաջողվեց երկու սանդուղք կանգնեցնել և բարձրանալ լուսամուտին: Դա կատարվեց այգու կողմից, որը պաշտպանում էր Քերոբը: Զինվորը հրացանի հարվածով փշրեց ապակին: Քերոբը գլխի ընկավ, և մի կրակոցից զինվորը սանդուղքի հետ վար ընկավ: Մյուսը երկյուղից իջավ: Եղբայրների ատրճանակների փամփուշտները վերջանում էին: Մինասը զգուշացրեց մնացած երեսուն փամփուշտը պահել: Թուրքերի զոհերի թիվը գնալով կրկնապատկվում էր: Ստիպված *հյուջումը* /հարձակում/, ժամանակավորապես դադարեցվեց, բայց թուրքերը դիմեցին այլ խորամանկության: Օգտվելով ընկուզենուց ու թթենուց՝ թուրք զինվորները բարձրացան, սկսեցին ուղիղ կրակել: Սինիները մաղի նման ծակոտվել էին: Եղբայրները նկատեցին, բայց ճիշտ նշանառությունը անհնարին էր: Ճիշտ է, Քերոբը երկուսին խփեց, բայց այդ ռոպեին լսեց Մինասի տնքոցը, որ վիրավորվեց ոտքից:

-Աղբա՛ր,-գոչեց Քերոբը,-դիմացի՛ր, դեռ փամփուշտ ունենք…

Կյանքից ձեռք քաշած վիրավոր վագրի կատաղությամբ՝ մոտեցավ լուսամուտին, նայեց իրենց շրջապատող թշնամուն և սկսեց թափել ոսկիները:

Ոչ ոքու հայտնի չեղավ, թե ինչքան, բայց լսվեց Քերոբի ձայնը.

-Զինվորնե՛ր, ահա ձեզ երկու հազար ոսկի:

Դեղին ոսկիները շպրտեցին երկու կողմից, որի զոհը եղան տասից ավելի զինվորներ:

Երեկո էր: Մինասն ու Քերոբը իրենց մնացած փամփուշտներն էին հաշվում և դիտելով, պատուհանից զարմանում, որ թուրքերը չէին կրակում և չէին փորձում մոտենալ: Հանկարծ տանիքից լսվեցին հարվածի ձայներ: Քերոբը փորձեց բուխարիկից /ծխնելույզ/ բարձրանալ: Չհաջողվեց. ստիպված սպասեցին իրենց օրհասական ժամին: Տանիքը ծակվեց, քանդված հողը ներքև էր թափվում: Երկու եղբայրները իրար էին նայում: Հրացանների փամփուշտները նույնպես վերջացել էին: Քերոբը, լուսամուտին մոտենալով, վեր քցեց երկու հրացանները և գոռաց.

-Հանձնվում ենք:

Քերոբը վիրավոր եղբորը քարշ տվեց դեպի դուռը, հրեց սողնակը, բացեց երկփեղկանի դուռը, դեպի բակ շաղ տվեց երկու ափ ոսկի և զինվորների աչքի առաջ պառկեց հատակին: Երկու կողմից ոչ մի կրակոց: Թուրքերը, տեսնելով, որ գյավուրները զինաթափ են եղել, օգտվեցին առիթից և ոսկիների փայլից ուզեցին մեկը մյուսից շուտ վազել ու գյավուրներին բռնելով՝ ոսկիներին տեր դառնալ: Այդ պահին հնչեց յուզբաշու[48] ձայնը, որը որպես հաղթող առաջ անցավ և սուրը բարձրացնելով ու՝ հյուջում, գոչելով՝ հարձակվեց: Մինասը, վիրավոր ոտքը քարշ տալով, մոտեցավ եղբորը, որն արդեն կիսամեռ վիճակում էր: Համբուրվեցին և իրար կողքի պառկած, գլուխները բարձր պահած՝ սպասեցին իրենց մահավճռին:

-Քերո՛բ, չմոռանա՛ս, վերջին գնդակը պահիր,-և նայելով ոհմակի մոտենալուն՝ պարպեց իր ատրճանակն ու լուռ պառկեց:

Քերոբը, տեսնելով եղբորը, մի վայրկյան նայեց նրան, դռան մեջտեղում կանգնեց ամբողջ հասակով, հատ-հատ կրակեց՝ հաշվելով մինչև ութը: Դռնից դուրս եկավ, իններորդը կրակեց եղբոր գլխին, վերջինը՝ իր սրտին, ու ընկավ եղբոր վրա:

Մարավ Խանոյանների նահապետական տոհմի մի ամբողջ սերունդ՝ տասներկու հոգի սեփական տան շրջապատում: Երկու ժամ տևող մաքառումներից հետո թուրքերին հաջողվեց ներխուժել և տեսնել միայն ապստամբների դիակները: Այս անհավասար կռվում թուրքերը տվեցին 37 սպանված և 22 վիրավոր, ընդ որում՝ մեկ յուզբաշի, երկու չավուշ, երեք ժանդարմ:

Մի ժամվա դիմադրության փորձ տեղի ունեցավ Թաղիգլխի Շողիկյանների տան մոտ գտնվող արտին կից տանը, որն անմիջապես հրդեհվեց: Զոհվեցին տան բնակիչները՝ մաքառողները:

* * *

Ապրիլի 22-ի ցերեկը, բացի վխտացող ժանդարմներից ու ասքյարներից, որոնք կապված զոհերին խումբ-խումբ տանում էին, փողոցներում ոչ ոք չէր շարժվում: Հաջորդ օրը մեր հարևան թրքուհիներից երկու հոգի եկան և մեզ պատմեցին տոքթորի մասին: Մորս խնդրանքով նրանք լուր բերեցին հորեղբորանցս դրության վերաբերյալ: Երկու օրվա ընթացքում, ըստ կուլուխի՝ ոստիկանատան ցուցակի, վերջացնելով տասնհինգ տարեկանից սկսած տղամարդկանց ձեռբակալությունը, թույլատրվեց հայատյաց մուսուլմաններին փնտրելու-գտնելու անձանց, որոնք չէին բռնվել:[49] Կատաղած ամբոխը մտնում էր հայերի տները, փրկանք պահանջելով գազանաբար սպանում անմեղ կանանց, երեխաներին: Մեր թաղի կուլուխը գտնվում էր Եզդանենց Ավագի տանը՝ Աղութենց տան արտի ներքևը: Արտն ու Եզդանենց տունը բաժանված էր ճանապարհով, որի լայնքը հինգ-վեց մետր էր, իսկ տունը շրջապատված էր բարձր պարսպով: Մի քանի տեղ պահակակետեր թողնելով՝ մեր թաղի կուլուխի քոմսերը փաշային զեկուցեց, որ չափահաս հայ տղամարդկանց ոչնչացումը հիմնականում ավարտված է:

Ռուս-թուրքական պատերազմը գնալով ավելի սարսափելի էր դառնում թուրքերի համար: Արաբական զորքերը դասալքում էին: Վանի կուսակալ Ճևտեր փաշան ապստամբած վանեցիների վրեժը լուծեց մյուս գավառների անպաշտպան հայերից: Մայիսի սկզբներին էր:[50] Գերեզմանային խոր լռություն էր տիրում հայոց թաղերում: Գիշեր-ցերեկ փողոցներում վխտում էին փոլիսների ու ժանդարմների խմբեր՝ փնտրելով թաքնված հայ տղամարդկանց: Անտեր մնացած շների ոհմակները հարձակվում էին՝ խանգարելով թուրքերի սանրող հետապնդումներին: Սովից կատաղած շները հոշոտում էին հայոց բակերում և փողոցներում ընկած սպանված հայերի դիակները՝ մանավանդ գիշերը հարձակվելով անծանոթ մարդկանց վրա: Կատաղած շները ավելի բարեսիրտ էին, քան մարդ կոչված թուրքերը: Թաղում հայտնի էին Եզդանենց հինգ շները, որոնք ահ ու դողի մեջ էին պահում իրենց շուրջկալող ժանդարմներին: Նրանք գիշեր-ցերեկ չէին հեռանում տիրոջ դիակի կողքից: Կարգադրվեց ոչնչացնել շներին ևս:

Տղամարդկանց սպանդը վերջացնելով՝ երեք օր հետո սկսեցին կանանց ու երեխաների աքսորը:[51] Տասներկու օրվա ընթացքում ժանդարմիան զորքերի մասնակցությամբ և փոլիսների գլխավորությամբ սվինի, դաշույնի ուժով նրանց դուրս էր բերում տներից, գիշերով հեռացնում քաղաքից: Հիվանդներին և ծերերին, որոնք չէին կարող քայլել, սպանում էին տեղում: Արգելվում էր հաց ու հագուստ վերցնելը, ճչալը: Մի փոքր դիմադրելու կամ աղաղակելու դեպքում սրախողխող էին անում տեղում՝ չխնայելով ո՛չ անմեղ երեխաներին, ո՛չ էլ նրանց ողբացող մայրերին: Տնից դուրս հանելուց կանանցից մեկը մի փոքր դիմադրել էր: Արյունարբու գազանները սրով կիսել էին երկու տարեկան աղջկան, ապա նրա, մոր և գրկանոց երեխայի վրա նավթ լցնելով՝ այրել:

Օգնության հասած շներից երկուսին թուրքերը գնդակահարել էին՝ դիակները գցելով այրվող մոր ու մանկան վրա: Մի ուրիշ բակում մոր գրկից սվիններով խլել էին երեխային և գցել թթենու ճյուղերի արանքը: Ըմբոստացած Խանամիրյանների երկու հարսները նույնպես արժանացան խարույկի. մի քանի դաշույնի հարված ստանալուց հետո, ի ցույց բոլորի, նավթ լցրեցին նրանց վրա և երեխաների հետ այրեցին: Շեմի վրա Նազլանց հարսի փորը պատռեցին և հռհռոցով ցույց տվին դուրս ընկնող կույր երեխային:[52] Իշխանության թույլտվությամբ ազատ գործում էին կրոնամոլ մոլլաները և շեյխերը,[53] որոնք մոլեգնած ամբոխի՝ թուրք և քուրդ բարբարոսների գլուխ անցած, խրախուսում էին վայրագությունները: Նրանք այլանդակում էին և չտեսնված տանջանքներով սպանում աքսորված քարավանից ետ մնացածներին կամ տներից հատուկենտ դուրս եկած կանանց և երեխաներին: Հաճախ ծաղրուծանակի ենթարկելով փողոցում հավաքած դժբախտ կանանց ու երեխաներին՝ մայրերից խլում էին զավակներին, ոտնահարում, կոխոտում: Տարբեր ոճրագործներ իրենց իրավունք էին վերապահել տարբեր ձևերի տանջանքներով ցույց տալ իրենց «շնորհքը»: Տաս օրվա ընթացքում ամայացան հայոց թաղերը: Այսպես մեկ ամիս տևեց, մինչև համոզվեցին, որ այլևս կենդանի հայեր չկան և արգելվեց մոլեգնած խուժանի մուտքը հայոց թաղեր, որը հայ փնտրելու պատրվակով թալանով էր զբաղվում: Երեք օրում ամայացան նաև հայոց գյուղերը: Թուրք և քուրդ արյունարբուներին իրավունք էր տրվում գյուղերում նույպես ման գալ, գտնել և սրախողխող անել թաքնվածներին: Մեկ շաբաթից արգելվեց, քանի որ դիակները մնում էին անթաղ, իսկ ամբոխը զբաղված էր թալանով: Տագնապալի լուրեր էին գալիս ռազմաճակատից, թուրք *մուհաճիրները*[54] /գաղթական/ գիշեր-ցերեկ գալով լցվում էին փողոցները, նրանք չէին ցանկանում ապրել հայոց թաղերում: Միայն քաղաքի կենտրոնական մասի ճանապարհին կից հայոց տներից[55] հատկացվեց մուհաճիրներին բնակեցնելու համար:

Սառան Աղութենց տանը սրտատրոփ սպասում էր քոմսերի երևալուն, բայց քոմսերը գրասենյակում նստած՝ միայն հրահանգներ էր տալիս: Սառան մի քանի անգամ կարդացել էր ամուսնու թողած թալիսման երկտողը: Երկու օրից փոլիսների գլխավորությամբ, զինվորների ու ժանդարմների[56] հսկողությամբ սկսեցին բռնի հավաքել կանանց ու երեխաներին և հեռացնել քաղաքի սահմաններից: Նրանք շրջում էին տնից տուն և դուրս շպրտում կանանց ու երեխաներին: Սառայի խորհրդով Մճոյի մայրը մոտենալով քունջն ու պուճախը[57] քրքրող ժանդարմին՝ փող առաջարկեց իրեն և Մճոյին չտանելու համար: Ժանդարմը համաձայնվեց և ձեռքով նրանց մեկդի անելով՝ մնացածներին դուրս բերեց տնից: Չնայած Սառան Աղութենց ընտանիքի ցուցակում չկար, բայց նրանց և հարևան աքսորյալների հետ հասավ մինչև գերեզմանները և օգտվելով զինվորների անփութությունից՝ մտավ քարերի արանքն ու գիշերը եկավ տուն: Նրանք երեքով մտան թոնրատուն: Կրծքից հանելով արյունոտ թղթի կտորը՝ լամպի լույսի տակ վանկ առ վանկ կարդալով՝ ծալեց այն ու ծոցը դնելով՝ դառավ Մճոյին ու խանում Խաթուն մորը: Մի պահ լռելով՝ ասաց.

-Խաթու՛ն քույրիկ, մեր օրերը հաշված են, մեզ սպանելու են, ես չեմ ուզում էշ նահատակ լինել,-և դառնալով տղային՝ հարցրեց,-Սկրտի՛չ, ճիշտ չե՞մ ասում:

Այսպես՝ գիշերները միասին, իսկ ցերեկները՝ առանձին մնացին՝ Սառան թաքնվելով զանազան տեղերում, մինչև խոստումը դրժելով՝ ժանդարմը սպանեց Խաթուն խանումին: Մճոն ու Սառան, պատսպարվելով իրենց տանը, սրտապնդեցին իրար և երդվեցին պահել Ճերճիսի սուրբ նշանաբանը, ի հաստատումն որի՝ ջերմ ողջագուրվեցին: Մճոն, զրկվելով ծնողներից և տեսնելով հարազատ մոր սպանությունը, հիվանդացավ. նա գիշերները զառանցում էր: Սառայի ձեռնարկած բուժումից չորս-հինգ օր հետո նա առողջացավ, և նրանք իրագործեցին կանխամտածվածը:

Անցել էր մի շաբաթ, դատարկվել էին հայերի շեները: Մնացել էր ընդամենը չորս տուն՝ իրարից անջատ ու հեռու: Մեր նման արտոնյալ ընտանիքները օրհասական վիճակում ժամանակավորապես ապրում էին իրենց տներում: Մենք շուկա չէինք գնում, տան եղած պաշարներից էինք օգտվում: Այսպես տևեց մոտ մեկ ամիս: Հորեղբորս կինը ամեն առավոտ գալիս էր մեր տուն և ուտելիք տանում հորս ու հորեբորս: Քանի որ վտանգավոր էր, հայրս պատվիրել էր, որ ես դուրս չգամ տնից: Մեր թուրք հարևանների ու ծուռ Մժոյի շնորհիվ ես հաճախ էի բարձրանում հորեղբորս տուն: Հորեղբորս տունը մեր տնից մոտ երկու հարյուր մետր հեռավորության վրա էր գտնվում: Ի՜նչ զարմանք, ի՜նչ ուրախություն պատեց ինձ, երբ իմացա, որ Մճոն գտնվում էր այստեղ: Նրա գալը բոլորովին գաղտնի էր: Ավա՜ղ դեռ միամիտ էինք, թե՛ ես, թե՛ հորեղբորս վեց տղաները, որոնցից ամենամեծը՝ Մուշեղը, ինձանից մեկ տարով փոքր էր: Ես Մճոյին կանչեցի այնպիսի զիլ ձայնով, որ հորեղբորս կինը ձեռքով բերանս փակեց: Մճոն անմիջապես դուրս եկավ, և մենք պինդ ողջագուրվեցինք՝ ցույց տալով իրար հանդեպ ունեցած պատանեկան սերը: Խեղճ հորեղբորս կինը երկուսից տասներկու տարեկան վեց երեխաների մայր էր և նայելով Մճոյին՝ կարեկցում էր նրան: Երեկո էր, Մճոն պատմեց մոր սպանվելու և դոկտորի կնոջ մասին: Նա, ցույց տալով իր ատրճանակը, ասաց.

-Եթե ես առաջուց մոտս պահեի, մորս աչքիս առաջ չէին սպանի,-և դառնալով հորեղբորս կնոջը՝ շարունակեց,-վաղը կամ մի քանի օրից ձեզ էլ, սրանց բոլորին հավի նման կփետրեն, քո մաշկն էլ կհանեն,-ու ձեռքը ճակատին դնելով և Մուշեղին գրկելով՝ ասաց՝…կսպանեն:

Մենք բաժանվեցինք իրարից, նա՝ դեպի վեր, ես՝ դեպի վար:

Մայրս, ուշանալուս պատճառով, թուրք հարևանուհիների հետ դրսում ինձ էր սպասում: Տուն գալով՝ երեկոյան պառկեցինք քնելու: Այդ օրվանից ես դադարեցի թուրք տղաների հետ խաղալ: Մեկուսացած երևակայությունս ինձ մարտնչող հերոսի կամ մարտնչող մրջյունի էր վերածում: Գիշերային աղոտ լույսի տակ թերթեցի դպրոցական գրքերս: Առաջինը, սատանայի պես, ձեռքումս ցցվեց «Թուրքական ազգային պատմությունը»: Թուրքերը, առաջանալով սելջուկյան ցեղերի ճիվաղներից, և պատահական հաղթանակներից

ոգևորվելով՝ առաջնորդվեցին Ղուրանի[58] պահանջներով: Այդ աննշան ցեղը, անվերապահորեն կոտորելով, իշխանություն կազմեց՝ Արաբիայից խլելով սուլթանի տիտղոսը, հույներից՝ Բյուզանդիան, Հռոմին սեղմելով և Բալկանները գրավելով՝ հասան Հունգարիա, որտեղ էլ ստացան կարմիր ֆեսը: Այստեղ կարդացի Կիլիկյան իշխանության /Լևոն VI/ կործանվելու և Արևմտյան Հայաստան ներխուժելու մասին: Դասագրքում նողկանքով էր խոսվում Մոսկովի՝ այսինքն ռուսների մասին, քանի որ թուրքերը առաջին պարտությունը կրել էին Պետրոս I-ի կողմից ձեռնարկած խաչակրած արշավանքի ժամանակ:[59] Ռուսիան, Ղրիմի և Կասպից ծովի ափերի գրավման համար առաջանալով, Հյուսիսային Կովկասը մաքրեց թուրք հրոսակախմբերից և Արդրկովկասյան ճակատում սահմանակից դարձավ Թուքիային և Պարսկաստանին: Թուրքերի ամբողջ պատմության մեջ ամենասարսափելի բանը Մոսկովն էր: Պատռելով ատելի տետրը՝ օջախը գցեցի: Մյուս գրքերից վերցրի «Հայոց պատմության» գիրքն ու տետրերը, խնամքով փաթաթեցի շորով և մուսանդարայի տակ քրքրելով՝ թաղեցի: Մայրս, աչքերը բաց, լուռ նայում էր:

Երկրորդ օրը հարևան թուքերից իմացանք *կուլուխի* աղբյուրի ճամփի մեջտեղում մի ժանդարմի սպանության և մյուսի վիրավորվելու մասին: Պատանի շրթունքներովս անցան տերտերական խոսքերը.*«Օրհնյալ լինի բազուկն պատրանոյ, զորս իսցի կուրծքն դավաճանի: Թող բարդունքն զորուսցե աջն նորա»*: Ուզեցի դուրս գալ, բայց թուրք հարևանները չթողեցին:

Անցել էր երեք օր: Կեսգիշերին մեր դուռը կամացուկ ծեծեցին: Սովորաբար մայրս էր բաց անում, բայց ձայնը խորհրդավոր էր: Ես, տեղիցս թռչելով, սողնակը քաշեցի: Դուռը բացվեց, և ներս մտավ Մճոն: Իմ աչքից չվրիպեց նրա ձեռքի թափահարումը, բայց նա համառորեն ոչինչ չասաց: Նա դառել էր հասունացած մարդ, ինձ անփորձ էր համարում՝ գաղտնիք պահելով ինձնից: Մայրս, մեր ունեցած հացի պաշարը մեջտեղ բերելով, երկու լավաշ մեզ համար վերցրեց, իսկ մնացածը կապեց Մճոյի մեջքին: Դուրս գալով, նա ոչինչ չասաց, թե ուր է գնում: Դուռը ծածկելով՝ հասանք մինչև Իսմայիլ աղայի տան վերջը, Մճոն նորից ցույց տվեց ատրճանակը և ստիպողաբար ինձ ետ ուղարկելով՝ հեռացավ: Ես վերադարձա տուն: Մայրս ինձ հորդորեց հեռու մնալ Մճոյից.«Փորձանքով լի օրեր են»: Ես կոպտեցի խեղճ մորս.

-Ի՞նչ է, մեզ պահելու են թոռշնի /թթու/ դնե՞ն, լավ չէ՞ր, մեզ էլ բոլորի հետ տանեին,-ու ջղայնությունից բարձրացա հորեղբորս տուն:

Հորեղբորս կինը, երկու հավ մորթելով, ճաշ էր պատրաստում, տղաները կծկվել էին պատի տակ: Ինձ տեսնելով՝ վազելով եկան, փաթաթվեցինք իրար: Մայրս ասել էր, որ թողնեն իրենց տունը, գան մեզ մոտ, միասին ապրենք, բայց հարգելի հորեղբորս կինը, չուզենալով ծանրաբեռնել մեծ հարսին, մերժել էր:

Հաջորդ օրվա վերջում մեր տուն սկզբում եկան երկու մոտիկ հարևանները, քիչ ուշ՝ Իսմայիլ աղան, ինչը մեծ զարմանք պատճառեց մեզ: Աղայի խոսքերից պարզվեց, որ ամալիա թաբուրը երկու-երեք օրից ուղարկելու են Սղերդի ուղղությամբ: Մայրս խնդրեց, որ թույլ տան հորեղբորս կնոջն ու երեխաներ-

րին՝ մեզ հետ լինել: Աղան գլխով հեգնեց և մեզ նայելով՝ արցունքներով լցված աչքերով՝ գնաց: Ես անմիջապես գնացի հորեղբորս տուն, դրությանը իրազեկ պահելու համար: Օրը երեք-չորս անգամ վերև-ներքև բարձրանում-իջնում էի:

Մեծ գերեզմանների ճամփով անցնող երկու ժանդարմների սպանության գուժը կատաղեցրեց ոստիկանությանը. գիշերային պահակակետեր նշանակվեցին փողոցների խաչմերուկներում ու հատման մասերում: Հատուկենտ իրարից հեռու տներում բնակվող թուրք հարևանները դիմեցին Իսմայիլ աղային՝ ապահովելու իրենց անվտանգությունը: Աղան ծաղրանքով նրանց ճանապարհ դրեց՝ ասելով.

-Ոչ մի գյավուր իր հարևաններին չի սպանի,-և այլ արհամարհական խոսքերով հետ վանեց իրենից:

Նույն գիշեր Սառան ու Մճոն որոշեցին գնալ Ավելմեյդան թաղ և ապաստարան խնդրել Ամերիկյան հյուպատոսությունից: Դուռը գտնվում էր հսկողության տակ: Սկրտիչը ստիպված էր հետ գալ և ապաստարան խնդրել մեր թաղի և հայկական հինգ մեծ գյուղերի մուֆթանց շեյխից, որը բնակվում էր Ս.Գևորգ եկեղեցու մոտ: Սառան, շնորհիվ ֆրանսերենի և թուրքերենի իմացության, մինչև իշխանությունների հետ պարզաբանումը, ժամանակավորապես ի պահ մնաց այստեղ: Ճարպիկ լեզվի շնորհիվ գրավելով մոնսոյ միստր Ներբիին՝[60] նա որոշ ժամանակ ազատ պտույտներ էր կազմակերպում՝ ծայրից ծայր շրջելով մեր թաղում, կապ պաշտպանելով Մճոյի հետ: Երկու շաբաթից մեկ ամիս քիչ ազատ ապրելով Ամերիկյան հյուպատոսության բողոքական ժողովարանում՝ Սառայով զբաղվող մարմինները անհիմն համարեցին Ամերիկյան հյուպատոսության միջնորդությունը՝ պահանջելով իրենց հանձնել ապաստանյալին: Սառան, իրազեկ լինելով, որ այսօր-վաղը բռնվելու էր և որպես այդպիսին ենթարկվելու էր բարդ հարցաքննությունների, չբացահայտվելու և իր ով լինելը թաքցնելու համար՝ երեկոյան դուրս գնաց պտտվելու: Հասնելով Ս.Գևորգ եկեղեցու գերեզմանների մոտ՝ մուֆթանց տներին՝ կանչեց պահակին և ինչպես միշտ մի ոսկի տալով՝ խնդրեց դուրս կանչել Մճոյին: Մճոն դուրս եկավ և նրանք երկար զրուցեցին: Մճոն հայտնեց, որ նրան թլպատել են, բայց պահում են խիստ պայմաններում՝ դռան ու ախոռատան պահակի և ջոջ խանումի հսկողության տակ: Սառան հայտնեց, որ էլ բողոքական առաջնորդարան չի գնալու, այլ կփորձի պահակի միջոցով մի ապաստան գտնել՝ մինչև վաղը երեկոյան Մճոյին դուրս բերելը:

Խնուսի, Ալաշկերտի անկումը, Վանի ապստամբությունը և Էրզրումի պաշարումը ողջախոհ, մանավանդ հայատյաց թուրքերին, որոնք տեսնում էին հուսալքված գաղթականների կարավանները, ստիպեցին նախապատրաստվել գաղթի ճամփան բռնելու: *Մուֆթանց շեյխը*՝ ծննդյան օրվանից հայի արյուն թափելով էր մեծացել: Պարզ էր, որ նա չէր սպասի հրահանգի, այլ համարվելով քաղաքի հզորներից մեկը՝ շատերին առաջարկել էր հետևելով իրեն գաղթել: Շեյխն ուներ երեք կին և ութ-ինանը երեխաներ: Նրանք սովորում էին տանը փակված, հազիվ տարրական կրթության հասնում: Հրամաններն ու

կարգադրությունները գրողն ու կարդացողը *քյատիպ մոլլան* էր, որն ըստ պահանջի էր ներկայանում: Շեյխը կեղծավոր էր իր ամբողջ էությամբ, խաբեբա ու երկերեսանի: Հաշվի առնելով քաղաքական իրադրությունը՝ հարմարվում էր տիրող ուժերին: 1914-ի գարնանը՝ քրդերի ապստամբության օրերին, նա էր քրդերին նենգամտորեն հարահրողը և մեծ զոհեր տալով՝ միաժամանակ կարողացավ փախցնել երկու ցեղապետերի:

Նախորդ երեկոյան մուֆթին դռան պահակին հանձնարարել էր Մճոյի հետ գնալ ման գալու: Երկուսով, ձիերը նստած, հասան Մճոյենց տան փողանին: Մկրտիչը, մոտ քսան րոպե անհետանալով, գրպանը լիքը ոսկիներով նստեց ձին և շարունակեցին ճանապարհն ու խոսակցությունը: Ծառան լավ էր ճանաչում Մճոյի ծնողներին և ներքուստ նախանձում խորամանկ շեյխին, որը կորզելով մեծ գումարներ՝ վերջում մի ձեռքով գյավուրներին հանձնում էր ժանդարմներին: Ծառան, քմծիծաղ տալով, ասաց.*«Հա՛մ զիարաթ, հա՛մ թուջարաթ»*: Ճանապարհին ծառան պատմեց ռուսների մոտենալու և գաղթի մասին: Պարզվեց, որ մի երկու օրից Մուֆթու երեք կանայք իրենց երեխաների հետ տաս-տասներկու ջորիներով գնալու էին Տիարբեքիր: Տանը մնալու էր պահակը՝ իր կնոջ ու երեխաների հետ: Մճոն մնաց երկմտանքի մեջ՝ լուռ սպասելով պահակի՝ հաջի Բաբայի վերջին խոսքին.

-Օղու՛լ, ուզում ես քեզ կպահեմ, թո՛ղ միայն Ալլահը իմանա, դու էլ քո լավությունը կանես:

-Հաջի Բաբա՛, դու խոսել էիր երեկվա ֆրանսզ կնոջ հետ, չէ որ նա իմ հորեղբոր կինն է, մենք միասին ենք լինելու: Նա գիշերը մնացել է քեզ մոտ, դե որ դու ճիշտ ես ասում, ինձ տար նրա մոտ:

Հաջի պահակը սիրով ընդունեց և մատնացույց անելով Ս.Գևորգ եկեղեցին՝ ասաց.

-Էն կինը այսօր երեկոյան քեզ կսպասի, միասին կգնանք նրան մոտ:

Առանց հաշվելու, մի բուռ դեղին ոսկիներ լցնելով հաջու ձեռքերի ափերի մեջ, նրանք դարպասից ներս մտան և ձիերը ախոռապետին հանձնելով՝ գնացին իրազեկ դարձնելու իրենց վերադարձի մասին:

Մուֆթանց շեյխը նարգիլեն բերանին, բազմած ճպճպացնում էր՝ ղայլանի ջրով պղպջակներ տալով: Տեսնելով հաջուն, կողքի կիսամերկ կանանցը շոյելով՝ սպիտակեղենով[61] մոտեցավ դռանը և Մճոյին տեսնելով՝ անդուր ձայնով հարցրեց՝ Բերի՞ր,-ու շապիկի փեշը մոտեցնելով՝ ոսկիները դատարկել տվեց: Երկու գրպանները դատարկելով՝ շեյխը չգոհացավ.

-Հը՛, սյունաթ[62] էլ արինք, էլի գյավուր մնացիր, քեզ ասի, որ բոլորը բե՛ր:

Ջղայնացած ներս մտնելով և Մճոյի կողմը թեքվելով՝ պահակին հանձնարարեց.

-Վաղը սրան չտեսնեմ:

Հաջի Բաբան, կամացուկ խոնարհելով գլուխը, ասաց.

-Ձեր հրամանը սուրբ փեխանբարի խոսքերն են,-և երկու ձեռքը կրծքին դնելով՝ խոնարհվեց,-գիշերը կկատարեմ:

Մճոն լսեց և լավ հասկացավ: Իրեն միամիտ ձևացնելով՝ մուֆթանց քոշ-

քից[63] /քյոշկ/ դեպի պահակատուն գնալիս Մճոն, ձեռքը գրպանը տանելով, երկարացրեց հաջուն.

-Վերցրու՛, էս երկուսը մնացել էր գրպանումս, երևի քո կսմաթն էր:

Նստեցին: Մճոն, թլպատված[64] լինելով, համարվում էր ազնիվ մուսուլման: Նա էլ, հաջու կնոջ և երեխաների հետ ծալովի նստելով, բոլորեց սեղանը: Հաջի Բաբան մոտ 50-55 տարեկան էր: Երեսունհինգ տարի իր ընտանիքով հավատարիմ ծառայել էր մուֆթանց շեյխին: Նրա երկու երիտասարդ տղաները շեյխի թիկնապահներն էին, կինը՝ աղախինների ավագն ու տան տնտեսության կառավարիչը: Հաջի Բաբան, ընթրելուց հետո, ակամա ձեռքը գրպանը տանելով, զգաց և հիշեց ոսկիների մասին ու գրպանը դոշակի վրա շուռ տվեց: Ոսկիների փայլը կուրացնում էր: Հաշվեց, վաթսուներեք հատ էր, ուրախությունից լցրեց նստած կնոջ գոգը և *շուքր* ալլահին հայտնելով՝ ասաց.«Ալին է բերել, էլի՛ կբերի»: Նրանք իրենց ամբողջ կյանքում գրեթե ոսկի չէին տեսել. ծառայել էին հավատարիմ ճորտի նման, կատարել սրբազան շեյխի պատվիրանները, որ Աստված հատուցի ըստ արժանվույն: «Փառք Ալլահին»,-գոչեց նա, նույնը կրկնեցին կինն ու երեխաները և Ալիի /Մճո/ հետ դուրս եկան:

Ս.Գևորգ եկեղեցու բակում հանդիպեցինք միմյանց: Հաջին, մի քանի րոպե սպասելով, ուզեց շարժվել, գնալ: Մինչ այդ Մկրտիչը կարճ հայտնեց մուֆթանց շեյխի միտքը և հաջի Բաբայի ու էս մի հոգու՝ տնեցոնց վրա ոսկիների գործած ազդեցության մասին: Սառան ասաց.

-Հաջի՛ Բաբա, մի քիչ նստիր խոսենք: Դու խելոք մարդ ես, մինչև Մեքքե, Մեդինե գնացել, սուրբ փեխանբարի[65] գերեզմանը տեսել, եկել ես: Գրել, կարդալ գիտես, ասա՛, Ածոյ մարգարեն[66] անգեն ինսանի վրա ձեռք կբարձրացնի, էն էլ կին, երեխաների: Ղուրանի[67] ո՞ր երեսում էդպես բան գրված կա,-ու լռեց:

Հաջի Բաբան, ներկած շեկ մորուքը տնկած, ապշած լսում էր գյավուր կնոջ համարձակ բառերը:

-Հաջի՛ Բաբա, քո մուֆթի շեյխը հայերից փողերը վերցնում, գիշերով քեզ էր ուղարկում նրանց սպանելու, կամ փոլիսներին հանձնելու: Չէ՛, ալլահը ամեն ինչ տեսնում է. մեզ էլ է տեսնում, որ անմեղ կանանցն ու երեխաներին քո երկու տղաների ու ախոռի *չոլպի* Ախմեդի հետ բերեցիք և էս գերեզմաններին մոտ, էս շենքի հետևը սպանեցիք ու գնացիք:

Հաջի Բաբան քնից արթնացածի պես, ձեռքը խանչալին տանելով, ոտքի կանգնեց: Սառան հանգստացրեց.

-Մի քիչ էլ նստիր: Մեռնողների հոգիները հայտնեցին, որ դու չես սպանել, դու քո տիրոջ կամքն ես կատարել:

-Աստվածը վկա, այդպես է, խանո՛ւմ…

Հաջի՛ Բաբա, ձեր շեյխը մի քանի օրից գնալու է, ձեր էս մոտիկ դրկիցները՝ նույնպես: Էս քուչում դու քո երեխաներովդ ես մնալու: Վաղը, որ Մոսկովը՝ գյավուրները գան, քեզ բռնեն, ի՞նչ կասես նրանց: Մտածի՛ր, հետո խոսի՛ր, մեղք են երեխաներդ: Մեծերին ուղարկիր:

-Ինձ մի՛ վախեցնիր, այ գյավուրի ծնունդ, թող սպանեն, հետո՞ ինչ: Շեյխն է ինձ հրամայել, ես էլ անում եմ:

Սնոտիապաշտությունը այն աստիճանի էր մոլեգնել, որ հավատացյալ Հաջին հավատում էր, թե իր տերը, շեյխ լինելով, բարեխոսելու էր մարգարեին՝ իրենց հոգիները *ճենաթում* ընդունելու համար: Ահա միամիտ կրոնամոլի հավատքը:

-Լավ, հաջի՛ Բաբա, գնա, էլի դու բարի մարդ ես: Վերցրու՛ էս հինգ ոսկին, եթե այգու ետևի փոքր դուռը բաց թողնես, ձեր Ալին քեզ օրը մի ոսկի կբերի, իսկ հիմա *սեն-սաղ-բիզ-սլամաք*,-և ոտքի կանգնելով՝ որպես սիլուետներ /ստվերներ/ շարժվեցինք ամայացած եկեղեցու գավիթից:

-Բաջի՛, էս գիշերվանից բախչի փոքր դռնակը ներսից բաց կանեմ: Ինձ մոտ եկեք էն դռնով, իմ դուռը միք թակեք, մի քար դրեք դռան մոտ, էդքան բան,-ու շտապեց դեպի դարպասը:

Մուֆթանց տնից՝ ուղղահայաց դեպի ներքև եղած ճանապարհը աջ կողմից խիտ թուրքաբնակ էր, ձախ կողմից հայոց ս.Գևորգ եկեղեցին էր՝ հնադարյան գերեզմանոցով: Փողոցը, ավելի դիքանալով, իջնում էր գետեզր և կամրջով միանում շուկայի վերջին ծայրի մանրածախ խանութներին:

Հաջորդ գիշեր Մճոն, այգու գաղտնի դռնից ներս մտնելով, նկատեց դարպասի մոտի եռուզեռը, խույս տալով մոտեցավ և հայտնեց Սառային: Նրանք, հետադարձ կատարելով, շրջանցեցին մուֆթանց ապարանքի պատնեշը և նորից եկեղեցի մտնելով՝ ոգևորված զգեստափոխվեցին՝ հագնելով կապոցում ունեցած շորերը: Ատրճանակները լցնելով՝ փորսող հասան ճանապարհի նեղանց մասը: Սառան մնաց գերեզմանոցի կողմում, իսկ Մճոն արագ կերպով իջավ և բարձրացավ ու հենվեց դիմացի թուրքերի այգու շարունակությունը հանդիսացող պարսպին: Մուֆթանց *խալիսի* գաղթի գիշերն էր: Եկել էին փոլիսներ, ժանդարմներ և այլ անձինք, բերել էին մոտ տաս-տասնհինգ ձի, ջորիներ: Բոլորի վրա բառնում էին արժեքավոր իրերը, իսկ կահկարասուն ոչ մի ուշադրություն չէին դարձնում: Բարձած անասունները շարժվեցին, հաշվեցին.«Հինգ, տաս, տասնհինգ»,-բայց բակը դեռ լիքն էր, նորից հինգ-վեց ջորիներ: Իսկ հիմա, նստած ուղտերի վրա՝ ամրացրեցին մախարաներ: Նստեցին նազելի *կյալինները* /հարսները/ ու կանայք՝ բոլորն էլ մեկը մյուսից ավելի լավ զարդարված: Հինգ ուղտերից և քսանհինգ-քսանվեց ջորիներից բաղկացած քարավանի շարժվելուց հետո փողոցն ամայացավ, չքացան իշխանության պատվիրակները, բարեկամներն ու չարկամները: Դարպասը փակվեց, բայց նկատվում էին մոմերով ու լապտերներով շարժվող մարդկանց ստվերներ: Սառան, պառկած տեղից մի կողքի շարժվելով, նայեց չորս կողմը: Ոչ մի շշուկ: Դիմացի կողմում նույնպես գերեզմանային լռություն էր: Երկուսն էլ ձեռքի շարժումներով հասկացրեցին, որ անհրաժեշտ էր իմանալ, թե արդյո՞ք շեյխը չի գնալու: Ինչ արած, նորից շրջանց դեպի պարսպի գաղտնանցքը՝ դռնակը: Երկուսն էլ անցքով ներս մտան: Սառան կուչ եկավ ծառի կուտակված ճյուղերի մոտ, իսկ Մճոն պահ էր փնտրում՝ մոտենալու հաջի Բաբային: Նկատելով դարպասի բացվելը՝ հաջու երկու տղաները չորս թամբած ձի մո-

տեցրին և խուրջինները ամրացնելով թամբերի տակին՝ շոյելով զբաղեցրին ձիերին: Մճոն նորից հետ գնաց դեպի Սառան: Հույժ շտապողականությամբ երկուսով նույն անցքից դուրս գալով՝ Սառան սեղմեց նրա ձեռքը.

-Մկրտի՛չ, հետևի՛ր ինձ և լսի՛ր, նրանք չորս հոգով են, ձիերով, չկրակե՛ս մինչև ես քեզ չասեմ: Նայիր ձեռքիս շարժմանը, հետ-առաջ, ձախ կամ աջ կրակելիս՝ ձախ ձեռքովդ պահիր աջ ձեռքիդ դաստակը: Մի՛ վախիր, միշտ կրծքին նշան առ:

Համբուրելով Մճոյին՝ մի քանի րոպեից բաժանվեցին.«-*Սպանե՛նք, բայց չսպանվե՛նք»*: Մի քանի րոպեում իրենց դիրքերում էին: Ձիավորները շարժվեցին դարպասից: Դարպասը փակվեց, հեծյալները հանդարտ իջան դարն ի վար քարքարոտ հեթանոսական դարավոր ճանապարհով: Մոտ 200-250 մ ցածրացան դեպի ներքև: Մկրտիչը կենտրոնացած նայում էր մե՛կ մոտեցող ձիավորներին, մե՛կ Սառա մորաքրոջը: Համբերությունը հատնեց, վայրկյանները վերածվեցին ժամերի: Սառան, փորին պառկած շարժվեց, մնացել էր հինգ-վեց քայլ, որ գային ու անցնեին: Մճոն տեղաշարժվեց և ի՞նչ տեսավ, Սառայի ձեռքը, ու նույն պահին լսվեցին չորս կրակոցներ: Մի պահ լռություն տիրեց, նորից կրակոցներ նույն քանակով և նույն ռիթմով: Մճոն նույնպես պարպեց իր ատրճանակը, բայց ձիուն դիպավ, թե ձիավորին՝ թող *փեխանքարը* որոշի: Խրտնած ու վիրավոր ձիերը ճգեցին դեպի ներքև, գլորվելով ընկան գետը: Ափսո՞ս, խեղճ բարի ձիեր:

Այսպիսով, բնաջնջված հայ ժողովրդի սրբազան մասունքներով շնչող ու ապրող, հատուկենտ ողջ մնացած ազնիվ ու անձնվեր ազգասեր Սառան ու Մճոն վերջ տվեցին մոտ 1850-ից Ծապրկորի և մոտակա հայկական գյուղերում իշխող տեր ու տիրակալի՝ մուֆթանց շեյխի դինաստիային:

Պարսպից մագլցելով ներքև՝ Մճոն ու Սառան անցան գերեզմանների արանքով, ապա Ավեխի թաղի և Ծապրկորի ճանապարհների խաչմերուկով բարձրացան, ջրաբեր առվի եզրով ու սարի լանջով հասան Հոխիկյանների տուն, տանիքին սպասեցին: Վերջը որոշեցին Շպնեց Մինասենց /դարբին Աղաջանենց/ տան անշիշ թոնրատան երդիկից իջնել և քնել-հանգստանալ:

Իմ ճակատագիրը[68]

Պայիսի վերջերին-հունիսի սկզբներին էր: Առավոտյան՝ սովորականից շուտ, հորեղբորս կինը դուռը ծեծեց: Մայրս բաց արեց դուռը: Հորեղբորս կինը արտասվալի աչքերով փաթաթվեց մորս և ասաց, որ հորս և հորեղբորս արդեն տարել են և անմիջապես շտապեց իրենց տուն: Նրա հեռանալուց անմիջապես հետո մայրս ինձ ուղարկեց հորեղբորս տուն և պատվիրեց, որ ասեմ նրանց, ետ գան մեզ մոտ՝ միասին լինելու համար: Վազելով ես բարձրացա հորեղբորս տուն և զարմացա: Ցավոք սրտի, ոչ ոք չկար, բոլորին տարել էին՝ հորեղբորս կնոջը, մորն ու հինգ[69] փոքրիկ տղաներին: Դուռը բաց էր, սև շունը՝ Արաբը, վնգստում էր, ինձ նայեց՝ ջարդված ոտքը լպստելով: Վերադարձիս նկատեցի, որ դիմացից երեք-չորս թուրք ինձ ընդառաջ էին գալիս: Իսկույն թեքվեցի և պտույտ գործելով՝ շտապեցի տուն: Իմ գնալ-գալը մոտ 25-30 րոպե հազիվ լիներ: Քույրս և եղբայրս լալիս էին, մայրս, աչքերը հառած, ինձ էր սպասում: Հանկարծ մորս կրծքին արյուն նկատեցի: Հարցիս նա կարճ պատասխան տվեց.

-Միհրա՛ն, եթե առողջ կմնաս, վրեժը կհանես, Հարսնյաց թաղի Միրզա Հասանից:

Այլևս մեր մեջ այդ մասին ոչ մի անգամ խոսք չեղավ: Մինչ մայրս ալյուր էր լցնում պարկի մեջ, ես պահարանից հանեցի ատրճանակը, քսան փամփուշտ և հորս սուր դանակը, ֆեսն ու էլակը /жилетка/: Մայրս իմ բացակայության ժամանակ տակից հագել էր իր տոնական զգեստները և մեզ՝ երեխաներիս շտապ հագցնելուց հետո, փոխադրվեցինք մեր հարևան թուրքի ներքնահարկը՝ մեզ հետ վերցնելով կես պարկ ալյուր և աղ: Մեր հեռանալուց կես ժամ հետո ժանդարմները եկել էին: Դուռը բաց, տունը դատարկ տեսնելով՝ մեր սիրելի հարևանուհուն հարցրել, թե մեզ տարե՞լ են և համոզվելով, որ մենք չկանք, հեռացել: Քանի որ թուրքերին պաշտոնապես կարգադրված էր և խիստ արգելված հայերին հովանավորելը, ուշ երեկոյան՝ մթնելուց հետո, մենք գաղտնաբար դուրս եկանք և տեղափոխվեցինք մի ուրիշ ավելի ապահով տուն: Մայրս անմիջապես թոնիրը վառեց և հաց թխեց: Կեսգիշերին, մի քիչ աղը վերցնելով և հացը շալակելով, ես, փոքրիկ եղբորս, մայրս՝ քրոջս ձեռքը բռնած, այգիների ու տների արանքով կուզեկուզ իջանք գետի ափը և ձորերի միջով սկսեցինք բարձրանալ սարը: Սովորաբար սարի՝ Ս. Գևորգ լեռան գագաթ բարձրանալը 25-30 րոպե էր տևում, բայց հիմա, երբ շտապում էինք, տևեց մոտ երկու ժամ: Խեղճ եղբայրս ու քույրիկս չէին կարող քարքարոտ լեռը բարձրանալ: Մայրս հաճախ վեց տարեկան եղբորս էր շալակում, իսկ ես՝ հացի պարկը: Քույրս, որ ութ-ինը տարեկան էր, հազիվ էր քարշ գալիս մեր ետևից: Հաճախ հացի պարկը թողնելով՝ նրանց շալակած բարձրանում էի:

Առավոտյան՝ լուսադեմին, հասանք Տժիկ սարի բարձունքը՝ հարթ տարածություն, որտեղից տեսանելի էին քաղաքի բոլոր կողմերը: Բարձրանալիս, որպես ուղղեցույց, կորցրել էի իմ նախատեսած ուղին, այդ պատճառով թե-

քությամբ էինք բարձրացել և անցել լեռան հարավային կողմը: Լսվեց մի քանի հրացանազարկ: Ավեղի թաղի թուրքերն էին, որ մեզ նկատել էին ստորոտից: Մենք համոզված էինք, որ նրանք չէին հանդգնում սարը բարձրանալ: Միայն ոստիկանությունն էր վխտում քաղաքում, իսկ զինվորները քաղաքից ճակատ էին գնացել: Մենք, մի կերպ հասնելով սարի գագաթը, սկսեցինք արագացնել մեր քայլերը և, օգտվելով սարերի լանջերի միջև եղած տափակ ու հարթ արահետներից՝ խորացանք: Մենք գիտեինք, որ մեզ հետևելու էին, ուստի ես, փոխանակ առաջ գնալու, փոխեցի ճանապարհս: Բոլոր ուժերս լարած՝ մենք երկու ժամում անցանք ևս մի քանի լեռներ և մոտավորապես կեսօրին՝ հոգնածությունից պատսպարվեցինք թփուտների արանքում ու քնեցինք: Մի քանի անգամ հորս ու հորեղբորս հետ, ցախ բերելու պատրվակով, Ծապրկորի ջրի ական կողմից անցնելով, բախտ էի ունեցել այդ վայրերում՝ սարերի վրա և լանջերին, հանդիպել ծանոթ մարդկանց, որոնք հրացաններով և ատրճանակներով կրակում էին՝ զինավարժությամբ էին[70] զբաղված: Մի քանի անգամ էլ թաղի տղաների հետ էի բարձրացել այստեղ՝ բանջար և սունկ հավաքելու, որոնք թե՛ թարմ, թե՛ չորացրած վիճակում օգտագործում էինք ուտելիք պատրաստելիս:

Խիստ ծարավել էինք, փոքր եղբայրս ջուր էր ուզում, մայրս հանգստացնում էր: Հաց ուտելու պահանջ չէինք զգում: Գիշերը լսվում էր գայլերի ոռնոցը և հատուկենտ կովերի բառաչը, որոնք անտերությունից թափառում էին անտառում և գազաններին կեր դառնում: Այս ամենը սարսափեցնում էր մեզ: Մայրս անընդհատ աղոթում էր Աստծուն և բոլոր սրբերին, աղաչում, որ մեզ պաշտպանեն: Գայլերի ոռնոցը մեզ սթափեցրեց քնից: Սարսափած մայրս՝ քրոջս ու եղբորս գրկախառն պառկած էր: Նստեցի, տոպրակից հանեցի դանակը /խենչալ/ և ատրճանակը, դրի ծոցս՝ սպասելով գայլերին: Մեր բախտից ոչ մի գայլ չերևաց: Մայրս բացատրեց, որ գյուղացիների ոչխարներն ու կովերը, որոնք գտնվում էին սարերում, և որոնց մենք հաճախ հանդիպում էինք, դարձել էին գայլերի թիրախ, իսկ երբ գայլը կուշտ է լինում, չի հարձակվում:

Լուսացավ: Ուսումնասիրելով շրջապատը՝ մեզնից ներքև՝ ձորերի մեջ ու բլուրների վրա, տեսա տեղ-տեղ ընկած մարդկանց ու կենդանիների հին և նոր հոշոտված դիակներ, որոնք Եղեռնի սկզբի օրերին փախած և զոհ դարձած հայերի դիակներն էին: Առավոտյան մայրս մեզ հաց բաժանեց: Ուտում էինք վախվխելով, որ չպակասի: Զգուշությամբ կանաչների միջից մեզ ծանոթ բանջարներ քաշելով՝[71] մայրս քիչ աղոթում էր, ապա ուտում էինք: Այդ ցերեկ, մինչև երեկո մենք մեր ապաստանից տաս-տասնհինգ մետրից ավել չհեռացանք: Աստղերը երևալուն պես, լուսնի աղոտ լույսի տակ սկսեցինք քայլել: Անցնելով խորդուբորդ տեղանքով՝ առավոտյան լուսադեմին՝ պատսպարվելու և հանգստանալու մտանք մեզ հանդիպած անտառային թավուտների մեջ: Իմ գիտենալով և պատկերացմամբ՝ Վանը գտնվում էր հյուսիս-արևելքում, և ինչպես իմացել էի մեծերից՝ ոտքով յոթ-ութ օրվա ճամփա էր: Մեր սար բարձրանալու նպատակը լեռների վրայով Վան կամ ռուսներին հասնելն էր, որոնք այդ ժամանակ շատ մոտ էին և հասել էին Խնուս ու Ալաշկերտ, Վանա լճի

հյուսիսարևմտյան շրջաններ: Երեք օր շարունակեցինք անհայտ ուղիներով շարժվել դեպի հյուսիս-արևելք՝ անընդհատ բարձրանալով սարեր ու ձորեր: Գիշերները գնում էինք, ցերեկները հանգստանում: Հոգնած ու հուսահատ էի, իմ երևակայած Վանա լիճն ու Վանը[72] չէին երևում: Սպառվում էր մեր հացի պաշարը, պարկը գնալով թեթևանում էր: Քույրս ու եղբայրս ուժասպառ տնքում էին: Հիասթափությունը մեզ հուսահատեցրեց:

Չորրորդ օրը նկատեցինք ինչ-որ անտառ. ինձ թվաց, թե ծովի մոտերքում էինք և բոլոր ճիգերը գործադրեցինք մինչև երեկո հասնելու այդտեղ: Երեկո էր: Քնեցինք: Առավոտյան՝ լուսադեմին մարդկային ձայներ լսեցինք: Բարձրանալով ծառը՝ դիտեցի չորս կողմը: Ձայները ավելի լսելի էին: Մթնշաղ էր: Ուշադիր հետևելով՝ տեսա մոտիկ արահետներով կամաց-կամաց եկող եղջյուրավոր անասունների նախիրը և նրան ուղեկցող չորս քրդերի:[73] Ահն ու սարսափը ինձ պատեց և քիչ մնաց, որ վայր ընկնեի ծառից: Հազիվ կարողացա իջնել և մոտենալ մորս: Խղճուկ մայրս վախից ինձ գրկեց, աչքերը փակեց և ինչ-որ աղոթք մրմնջաց: Տավարի /կովեր, գոմեշներ/ նախիրը այնքան մեծ էր ու երկար, որ նրան հետևողները, ձիերի վրա շրջելով, կարող էին մեզ նկատել: Նրանք շարժվում էին դեպի հարավ և անցնելու էին մեր սարերի լանջերով: Բոլորը լավ զինված էին: Մայրս քրոջս ու եղբորս հետ մտավ խիտ թավուտների մեջ: Մենք կուչ եկած նայում էինք՝ թավուտների ճյուղերի տակ պառկած և տերևներով ծածկված: Մայրս՝ մի ձեռքը եղբորս, մյուս ձեռքը՝ քրոջս բերանին դրած՝ ստիպում էր չնայել ու չխոսել: Ես քիչ հեռու էի պառկած՝ ատրճանակը պատրաստ պահած: Համոզվելով, որ քրդերը մեզ չեն նկատել, ես, պահ մտած ծառերի ետևում, արանքից հետևում էի նրանց: Նախիրը անցնում էր մեզանից 100-150 մ հեռավորությամբ՝ սարերի լանջերի վրայով: Նկատեցինք, մի տաս-տասնհինգ զինված ձիավոր, նժույգներին խփելով, սլանալով, անցան առաջ: Նրանք ուսումնասիրում էին անցման ուղին: Քանի որ այս կողմերում տաս-տասնհինգ օր առաջ կռիվ էր տեղի ունեցել փախստական հայերի և զինվորների՝ ասքյարների միջև, որոնց միաժամանակ հրահանգված էր քրդերից խլել թալանված ավարը: Իհարկե այս անասունները հայոց գյուղերի անտեր մնացած, դես-դեն ցրված անասուններն էին, որոնց տիրացել էին քուրդ ցեղապետերը և ուզում էին սարերով՝ գաղտնի ճանապարհներով տանել Սղերդ, Տիարբեքիր: Մոտ երեք ժամ տևեց նրանց հեռանալը: Երեկոյին մոտ քրդերը վերջապես հեռացան՝ նախիրը դեպի Սղերդ-Պաղտատի ուղղությամբ տանելով: Ես իսկույն բարձրացա և ծառի վրայից դիտեցի և համոզվելով, որ մեզ ոչ մի վտանգ չի սպառնում, սկսեցինք կանաչիների արմատներ հավաքել և սնվել: Քնեցինք կաղնու ծառի տակ՝ թփերի վրա:

Հինգերորդ գիշերը շարժվեցինք ավելի խիտ անտառով, ավելի շատ հոգնեցինք և շուտ ուզեցինք քնել: Ես հուսով էի, որ հինգ օր անընդհատ գնալով, պետք է մոտեցած լինեինք Դատվան[74] գյուղին, Վանա լճի եզերքներին: Վերջացել էր մեր պաշարը: Մայրս հացի փշրանքները տվեց ինձ ու եղբորս:

Վեցերորդ օրն էր, հոգնածությունը, քաղցը ու ծարավը մեզ հուսահա-

տության մատնեցին: Առավոտյան շարժվեցինք մեզ համար անհայտ ուղիով: Անտառում կային տանձի, խնձորի, ընկույզի ծառեր, բայց դեռ չէին էլ կոկոնել, ուտում էինք բույսերի արմատներ: Լուսադեմին մեղմ զեփյուռի հետ երկնքից մաղեցին ցողի մանր կաթիլներ և թափվեցին ծառերի ու բույսերի վրա: Նկատեցինք մեկուկեսից երկու մետր բարձրությամբ, լայն խաղողի տերևների նման տերևներով «թավ» կոչվող ծառերի տերևներից ծորացող հյութը: Մայրս ուրախությունից մեզ գրկեց և պատմեց, որ դա գազպայի հյութ է /մանանա/:[75] Մենք սկսեցինք տերևները պոկել ու լիզել դուրեկան և բուրումնալի քաղցրահամ հյութը: Մեր հավաքած կանաչիները գազպայի հյութով պատեցինք և երեկոյան շարժվեցինք: Կեսգիշեր էր: Քույրս ու եղբայրս չէին կարող քայլել, մայրս՝ նույնպես: Նստեցինք մի մեծ ծառի տակ: Հոգնածությունից կծկված, մորս կպած՝ քնեցինք: Հանկարծ թփերի միջից խշշոց լսվեց: Ես ուշադրություն դարձրի, համոզված լինելով, որ դա ո՛չ թուրքեր են, ո՛չ էլ քրդեր: Հանկարծ մարդկային ձայներ լսվեցին: Նայեցի հարազատներիս, լուռ, կամացուկ շարժվեցի՝ հետևելով ձայնին: Ես կասկածեցի, որ գազաններ են: Երբ մոտեցա, տեսա երկու մարդու, որոնք հետևում էին մի ոչխարի: Բռնեցին, նրանք ինձ չնկատեցին: Տեսնելով նրանց՝ լսեցի, որ հայերեն էին խոսում: Համոզված լինելով, որ հայեր են, ուրախությունիցս ճչացի և մոտեցա նրանց: Նրանք զարմանքով դիմավորեցին ինձ և սկսեցին հարցեր տալ: Այդ դարդիման մարդիկ ինձ գրկեցին և չէին ուզում բաց թողնել: Պատմեցի մեր մասին, տեսնելով, որ լավ զինված են, հպարտությամբ ցույց տվեցի իմ ատրճանակը՝ խնդրելով, որ մեզ էլ տանեն հետները: Հրաժարվեցին մերոնցից, որոշելով, որ միայն ինձ կարող են իրենց հետ տանել: Ես էլ հրաժարվեցի նրանց առաջարկից: Նրանք սկսեցին ոչխարը մորթել: Խիստ զայրացած, իսկույն թողնելով նրանց՝ հեռացա մորս մոտ: Մայսր սկսել էր ինձ փնտրել: Մոտեցա մորս, նա ինձ գրկեց և ջերմ համբուրեց՝ փառք տալով Աստծուն, որ գտնվեցի: Քույրս ու եղբայրս մեռելի նման քնած էին: Պատմեցի մեր հանդիպման մասին: Մայրս հառաչանքով ասաց.

-Ճիշտ են ասել, մենք նրանց կխանգարեինք:

Յոթերորդ օրն էր: Ես նորից ուզեցի այդ մարդկանց տեսնել, բայց ինչքան ման եկա, չգտա: Նրանց կերած ոչխարի մնացորդները հավաքելով բերեցի, սկսեցինք լպստել: Ես բարձրացա ծառի վրա և սկսեցի դիտել. ոչ մի տեղ ոչ մի մարդկային շարժում: Ֆիզիկական թուլությունը, մոձավանջը չկոտրեց մեր կամքը: Նորից շարժվեցինք այդ մարդկանց ոտնահետքերով: Անտառը ստվարանում էր, երևում էին լեռներ, անվերջանալի կանաչ սարեր՝ հեռվում ու մոտ: Նստեցինք հանգստանալու, արդեն ցերեկով էլ էինք գնում՝ որոնելով նրանց հետքերը: Ճաշակեցինք մեր մանանայի հյութով քաղցրացրած լպստուն բանջարը: Հակառակ մեր սպասածի՝ երեկոյան հիվանդացանք տենդով: Գիշերը անցկացրինք տենդի մեջ: Ծարավը մեզ պապանձեցրել էր: Տենդը, գլխացավը փոքրիկ քրոջս ու եղբորս վրա ավելի շատ ազդեցին, նրանք քնի մեջ զառանցում էին: Անկախ մեր կամքից՝ շարժվեցինք դեպի ներքևի ձորերը: Ուժասպառ եղբորս շալակելով՝ ոստնում էինք քարերից, բույսերից:

Երեկոյան լուռումունջ կծկվել էինք մորս ծնկներին:

Հանկարծ ինչ-որ ձայներ լսեցինք: Մայրս, քույրս ու եղբայրս պառկեցին անշարժ: Ես պառկած վիճակում նկատեցի, որ ներքևից գալիս էին հինգ-վեց քրդեր: Նրանք բոլորն էլ զինված էին: Կասկածելով, որ մեզ նկատեցին, ատրճանակը բռնած պատրաստվեցի և գետնին պառկած հետևեցի նրանց շարժմանը: Մթության շնորհիվ նրանք մեզ չնկատեցին և գնացին մի շաբաթ առաջ գնացած թալանված անասունների հետքերով: Սպասեցինք, որ նրանք անտեսանելի դառնան և շարժվեցինք մոտակայքում գտնվող անտառի կողմը: Կեսգիշերին ուժասպառ նստեցինք խիտ ծառերի տակ: Ես սկսեցի ջուր ման գալ: Ձորն ի վար իջնելով՝ երևաց լուսնի աղոտ լույսի տակ փայլող առվակի ջուրը: Կուշտ խմեցի, հետո գլխարկս /ֆես/ ջուր լցնելով՝ տարա և հազիվ կեսը հասցրեցի մերոնց: Գիշերը այստեղ անցկացրեցինք: Առավոտյան, շրջապատս ուսումնասիրելիս՝ ներքևում նկատեցի մի ավերակ գյուղ: Ավելի մոտիկից նկատեցի ինձ ծանոթ վայրերը, գետը, վանքը և տները: Սարերի բարձունքից նկատածս մեր քաղաքամերձ Պոռ[76] գյուղի վանքն էր,[77] որտեղ ես մի քանի անգամ եղել էի՝ պապիս գյուղն էր: Ութից-տաս օր առաջ գյուղը՝ շեների առատությամբ, հազարավոր նախիրներով ու ոչխարների հոտերով ծակել էր թուրք բեկերի ու քրդերի աչքն ու սիրտը: Որոշեցի իջնել: Ոչ մի երդիկից ծուխ դուրս չէր գալիս: Ծխում էին մի քանի հրդեհված տների գերանները:

Իմ պապական գյուղում ամեն ինչ եդեմական էր: Մարդիկ նահապետական[78] կյանք էին վարում: Առավոտյան ցուպը ձեռքին տատս ղեկավարում էր յոթանասունհինգ անձից բաղկացած գերդաստանի աշխատանքը.-

Մխո՛, Մուշո՛, դուք տասներկու հոգով, ութ զույգ եզներով դաշտը վարեք: Մկո՛, Համո՛, դուք հարսների հետ խոտը հավաքեք բերեք:

Թոռներից երկուսին՝ նախիրը, երկուսին՝ ոչխարների հոտը արածեցնելու ուղարկելով՝ աղջիկներին տանը գործի դնելուց հետո, մտնում էր տուն՝ ստուգելու: Ամեն օր նախատեսում էր մի պարկ ալյուրը հացի, մի ոչխարը կամ հորթը՝ ճաշի համար: Պանիրն ու յուղը, ցորենն ու գարին և ձմռան պաշարը լրիվ ապահովելով՝ ասում էր.

-Է՛ս էլ ղարիբ ղուրբաթին, է՛ս էլ քյասիպ-քյուսուպին, է՛ս էլ Աստված գիտնա ում:

Փեթակ չունեին. մեղրը ժայռերի ծերպերի, կաղնու ծառի խոռոչներից էին բերում: Մաղով մոտենում էին մեղուների բնին, գազ վառում և մեղուներին փախցնելով՝ մեղրը լցնում փայտե ամանները: Թուրքերը այս գյուղը հանձնեցին քրդերի «արդար դատաստանին», ոչ մի մարդ չազատվեց, դիմադրություն ցույց տվողները իրենց ընտանիքի անդամների հետ այրվեցին սեփական տներում:

Հազիվ էի հասել գետի եզերքին, երբ կատաղած շները հեռվից լսելով և հաչալով՝ սկսեցին վազ տալ դեպի ինձ: Այո՛ կատաղած էին, զրկվելով իրենց տերերից, որոնց դիակները անխնա թափված էին գյուղի չորս կողմը: Հուսախաբ ուժերս լարելով՝ սկսեցի հետ փախչել շների փայ չլինելու համար:

Իմ հաշվարկմներով զգացի, որ երեք օր ճիշտ էինք շարժվել, ապա շփոթ-

վելով և շեղվելով հետ եկել: Այլևս ուժ չունեինք: Քաղցից ու ծարավից հիասթափված և ուժ չունենալով շարունակել սարերով բարձրանալ-իջնելը՝ որոշեցինք վերադառնալ քաղաք և ապաստանել թաղի ծայրամասի հայերի դատարկ տներում՝ գոնե այստեղ ուտելիք ճարելով: Կողմնորոշելով քաղաք վերադառնալու ուղին՝ ութերորդ գիշերը վերջապես հասանք Տժիկ սարը, և գիշերով խարխափելով՝ իջանք Ս.Կարապետ վանքի մոտ գտնվող Ծապրկորի ական մոտ: Այս ակունքից բխող ջրի մի մասը օգտագործում էին քաղաքի արևելյան մասի չորս հայկական թաղամասերի բնակիչները, մյուս մասով ոռոգվում էին արտերը և մեր թաղի այգիները: Արևը դեռ չէր ծագել: Առվի մոտ հանդիպեցինք մեզանից բեթար մի հայի, որը աղերսանքով հաց խնդրեց: Տեսնելով, որ մենք ոչինչ չունենք, թողեց մեզ և հեռանալով՝ անհետացավ:

Լուսադեմ էր: Իններորդ օրն էր: Վերադարձի ճանապարհին մենք՝ չորս հոգով, սոված ու հոգնած՝ կանգնել էինք սարի ստորոտից ցայտող փրփրող ակի ջրերով հովացող երկու մեծ ապառաժ զանգվածների միջև: Սառը զուլալ ջրով լվացվեցինք, ագահաբար խմեցինք: Ես մորս, քրոջս ու եղբորս տարա ջրի ակունքի ներսը և սկսեցի շրջապատը ուսումնասիրել: Առվի հոսանքով գնալով՝ գտա հացի փշրանքներ, ոսկորներ, վարունգի կեղևներ, անմիջապես հավաքելով՝ վազեցի մեր ապաստարանը, փշրանքն ու վարունգի կեղևները եղբորս տվի: Երկու ժամից ուզեցինք շարժվել ձորն ի վար, հանկարծ լսեցինք մարդկային ձայներ, ձիերի խրխինջ: Անմիջապես չորսս միասին ջրի հորձանուտի արանքով կուչ եկանք ժայռի և ակունքի բխող ջրի արանքում: Կեսօրին մոտ ուզեցի դուրս գալ և այդ պահին նկատեցի, որ երկու-երեք թուրք հովիվ, ոչխարների հոտը մոտակա դաշտում արածացնելով, իրենք, նստելով առվի ափին, հաց էին ուտում: Նրանք զինված էին հրացանով ու դաշույնով: Զգուշությամբ մեկնվեցի քարին և արձանացած սպասեցի նրանց շարժվելուն: Բարեբախտաբար, նրանք ուտելիքը ճաշակելուց հետո թափ տվին կապոցը և սուլելով մյուս հովիվներին՝ սկսեցին շարժվել դեպի ներքև: Կեսօրին մոտ եկան տաս-տասներկու ժանդարմ և մեզանից քառասուն-հիսուն մետր հեռավորության վրա նստեցին հանգստանալու: Կապոցներից հանեցին ուտելիք, օղի և սկսեցին ճաշակել: Երեկոյան նրանք հեռացան գնացին՝ թողնելով հավի և հացի ավելցուկը: Ժայթքող ջրի սառը կաթիլները, դղրդացնող ձայնը թաց քարի վրա կծկվածներիս մոտ տենդ առաջացրեցին: Գլխի և ստամոքսի ցավերը մեզ ստիպեցին դուրս գալ՝ մայրս իր ձեռքերի և ոտքերի արանքում սեղմելով քրոջս ու եղբորս: Ես տեղիցս փոխադրվեցի երկրորդ ապառաժի արանքը: Արևամուտին մենք դուրս եկանք: Այդ չարքերից մնացած բարիքը մենք լավ կերանք՝ ոսկորների մի մասը պահելով հետոյի համար:

Ջրի ակից ներքև գտնվում էր Ս.Կարապետ վանքը: Եղբորս ու քրոջս հիվանդության պատճառով, ստիպված եղանք Ս.Կարապետ վանքի քանդված մատուռի ավերակների մեջ մնալ: Այդ նպատակով երեկոյան՝ մութն ընկնելուն պես, շարժվեցինք դեպի ներքև: Ես, հետազոտելով շրջապատս, մտա եկեղեցի: Ոչ ոք չկար: Անմիջապես մերոնց բերեցի: Քանդված տաճարի ետևում այդ գիշեր ապահով քնեցինք: Արթնանալով՝ զգացի, որ քույրս ու

եղբայրս լաց էին լինում ինձ հպված, իսկ մայրս, նրանց թողած, իմ ոտքերս ու ձեռքերս էր բռնել: Զգացի, որ տնքում եմ: Մի օր հետո մայրս ասաց, որ ես զառանցում էի և հայհոյանքներով սպառնում թուրքերին: Լուսադեմին մենք նորից տեղափոխվեցինք ջրի ակունքը և պատսպարվեցինք ներսում եղած լայն խոռոչների մեջ:

Թուրք ժանդարմները հսկում էին մոտ երկու հարյուր մետր հեռավորությամբ գտնվող ճանապարհը, որով քշում տանում էին մոտակա հայ գյուղերի մեծ ու փոքր եղջերավոր անասուններին: Նրանք հաճախ էին գալիս բխող ջրի ակունքի մոտ, լվացվում, խմում, ժամերով նստում հանգստանում, ապա՝ հեռանում գնում: Մենք ամեն րոպե ահ ու սարսափի մեջ էինք. ներսից՝ բխող ջրի հռնդյունը, դրսից՝ թուրքերի երևալը, անհնարին էր դարձնում մեր դրությունը: Մայրս, ավելի խորը սեղմվելով քրոջս ու եղբորս, չէր թողնում, որ դուրս նայեն: Ես զգուշությամբ դիտում էի նրանց շարժումները. ահա երկու թուրք, կոշիկները հանելով և լվացվելով, սկսեցին նամազ[79] անել: Մի փոքրիկ շշուկ՝ և մենք մի ակնթարթում կորած ենք: Այդ երկու լողացողներին, որոնք մեզանից հինգ-վեց մետր ներքև էին, ես կարող էի սպանել, բայց չէ որ նրանք հինգ հոգի էին, բոլորն էլ զինված: Այսպես՝ մահ ու կենաց սարսուռի մեջ, հետևում էինք նրանց շարժումներին: Տաս-տասնհինգ րոպեից լողացողները ջրից դուրս եկան, և բոլորն էլ գնացին: Երեկոյան որոշեցինք ձորերով իջնել և գետի եզերքով գնալ քաղաք և ապաստան գտնել ու պատսպարվել հայոց դատարկ մնացած տներում: Չնայած քաղաքի Ծապրկոր թաղի տները ճանապարհով մոտ երեսուն-քառասուն րոպեից մեկ ժամ հեռավորության վրա էին գտնվում, մենք, մութ գիշերը խարխափելով, ժայռերը մագլցելով և գետեզերքն անցնելով, միայն լուսադեմին հասանք թաղի մերձակա այգիները:

Առավոտյան Ծապրկոր թաղի ծայրամասով շարժվեցինք դեպի մեր թաղ և հասնելով Խանամիրյանների շենքը՝ բոլորս էլ հոգնած, քաղցած և ուժասպառ, տխուր նստեցինք այգում՝ թթի ծառի տակ: Արևը ճառագայթում էր, բայց մռայլ էր: Բարձրացա թթի ծառը և մոռանալով զգուշության մասին՝ սկսեցի թափ տալ ծառի ճյուղերը: Ագահաբար ուտում էինք թութը: Ես ուրախանում, հրճվում էի, որ եղբայրիկս, վազվզելով ու հավաքելով թութը, ուտում էր: Այդ րոպեները մեր կյանքի ամենաքաղցր, ամենաուրախ ու երջանիկ պահերն էին: Բայց, ավա՜ղ: Հանկարծ քույրս ճչաց: Հազիվ էինք սկսել օգտվել ծառի բարիքներից, երբ մեզ շրջապատեցին ժանդարմները: Ես ծառի վրա էի: Նրանցից մեկը, հասնելով, նշան բռնեց՝ ատրճանակը ուղղեց դեպի ինձ: Մայրս գերբնական ուժով իրեն գցեց նրա վրա և երեխաներով փաթաթվեց նրա ոտքերին: Իսկույն ես ճյուղից ճյուղ ներքև իջնելով՝ ցած թռա ծառից: Նայեցի ժանդարմ չավուշին /քոմսեր/, որը իսկույն ճանաչեց մեզ և գլուխը վար կախելով ու հառաչելով՝ հրամայեց տանել հավաքական: Մայրս Տուրան էֆենդիից աղերսանքով հաց խնդրեց: Նա չպատասխանեց:

Մեզ տարան կուլուխի /թաղային ոստիկանության/ ներքնահարկը, որտեղ մեզ նման թշվառներ՝ կանայք, աղջիկներ շատ կային՝ մոտ երկու հարյուր քսան կին ու երեխա, և դուռը փակեցին: Ո՛չ ջուր կար, ո՛չ ուտելիք: Երկու

օր մնացինք այստեղ: Ժանդարմները իրենց ցանկացած ժամին բաց էին անում դուռը, ընտրում, տանում բռնաբարում, խոշտանգում և նորից հետ բերում կանանց: Նույն օրը մեզ մոտ բերեցին ևս հինգ կանանց, որոնց օրական հինգ ոսկով պահել էին «հոգատար» թաղային փոլիսները և փողը վերջանալուց հետո՝ հաշիվը փակել: Բարեբախտաբար, վերջիններս ուտելիք ունեին և մեզ բաժանեցին: Երեկոյան ներխուժեց ժանդարմների մի խումբ և ընտրելով երիտասարդ կանանց ու աղջիկներին՝ տարավ: Դա սովորական էր դառել, և կանայք չէին կարող դիմադրել: Մեզ մոտ կիսաջարդված կարաս էր դրված՝ բնական պահանջները բավարարելու համար, որի չդատարկվելու պատճառով գարշահոտությունը անտանելի էր: Երկրորդ օրվա կեսգիշերին մի քանի-սին էլ բերեցին: Սրանց նոր էին որսացել իրենց տան թաքստոցներից. մեր թաղի հարուստ ընտանիքներից էին: Երեք հոգի էին, նրանք, ժանդարմներին խոստանալով օրը երեք ոսկի, մոտ երկու ամիս մնալով տան թաքստոցում և ոսկու վերջանալուց հետո հայտնվեցին այստեղ:

Երկրորդ օրվա վերջում նեղ լուսամուտից նկատեցինք մի թաբուր /վաշտ/ զինվորների գալը, լսեցինք ձիերի ոտնաձայներ: Հայտնի դարձավ, որ մեզ գիշերվա ընթացքում կամ հաջորդ օրը տանելու էին կենտրոնացման ճամբար՝ Արաբու կամուրջ:[80] Մի քանի կանայք մոտեցան մորս ու հայտնեցին իրենց հնարավոր փախուստի մասին: Պայմանավորվեցինք, որ երեկոյան, երբ ժանդարմները գան կանանց տանելու, ես նրանց հետ դուրս ելնեմ, միջանցքում թաքնվեմ կարասների արանքը և բաց անեմ դուռը: Այդ օրը նրանք ուշ եկան: Լուսադեմին դուռը բացեցին, ասքյարները ներս մտնելով սկսեցին կին, աղջիկներ ընտրել, շտապում էին: Կանանցից մեկը մոտեցավ ինձ և հասկացրեց, որ ես նրանց հետ դուրս գամ, թաքնվեմ դռան հետևում եղած կարասների արանքում և ժանդարմների հեռանալուց հետո, դուռը բաց անեմ.

-Ով որ կկարողանա, թո՛ղ փախչի:

Հինգ-վեց կին, աղջիկ ջոկելով՝ ասքյարները դուրս եկան դռնից: Մայրս ինձ չթողեց, և մթությունից օգտվելով՝ կանանց հետ դուրս սողոսկեց փոքր եղբայրս: Կանայք, եղբորս իրենց հետ տանելով, թաքցրեցին կարասների արանքում: Նրանց հեռանալուց հետո, մթության մեջ խղճուկ աղբերս մոտեցավ դռանը, բայց ձեռքը չհասավ օղակին ամրացրած փայտին: Մթության մեջ մենակ մնալով՝ նա սկսեց լաց լինել և ինձ ձայն տալ: Ներսից հնարավոր չէր դուռը բաց անել: Դրսից, դռան օղակից փայտ անցկացնելով, զոռել-զոռել, փակել էին: Կանայք ու ես, եղբորս դռան ճեղքից մի կերպ կանչելով, հասկացրեցինք, որ մոտենա դռանը ու կախվի փայտից: Գառնուկ եղբայրս լալով կամաց մոտեցավ դռանը, մթության մեջ, ոտքերի մատների ծայրերին կանգնելով, խարխափելով դիպավ օղակում անցկացրած փայտի ծայրին: Ներսից սկսեցին դուռը շարժել, որի շնորհիվ փայտ ամրացնող թոկը թուլացավ և դուռը բացվեց:

Օրերով սոված ու ծարավ, տանջված ու խոշտանգված անհամբեր սպասող կանայք իրար հրելով, ոտնատակ անելով եղբորս, դուրս թափվելով՝ սկսեցին փախչել: Մենք չհետևեցինք նրանց, քանի որ եղբայրս ցավերից լաց էր

լինում: Մինչև ես եղբորս գետնից բարձրացրեցի, գրկեցի, կանանց մեծ մասը դուրս էր եկել: Մեռնողի համար մի պահն էլ էր թանկ: Ու՞ր պիտի փախչեին թշվառականները: Դռնից դուրս գալով՝ մտնում էին թոնրատուն, այնտեղից փակված բակը, որտեղ պահակներն էին վխտում: Փախչողներից չորս-հինգ կին հազիվ անհայտացան, տասնչորս-տասնհինգ հոգի սպանվեց, սվինահար եղավ տեղում, մի քանիսին հաջողվեց մթության շնորհիվ ետ գալ: Կես ժամ հետո զինվորների հսկողությամբ, մտրակների ու սվինների հարվածների ներքո մեզ դուրս բերին դեպի Արաբու կամուրջ, որը մահվան վերջին ճամբարն էր:[81] Իմացանք, որ քաղաքից դուրս են տանում: Մոտ հարյուր մետր էինք հեռացել, երբ մեզ մոտեցավ նախավերջին օրը բերված հարուստ կանանցից մեկը և մորս հայտնեց.

-Մենք փախչելու ենք, թող Միհրանին տանենք մեզ հետ, նրան Արաբու կամուրջում շուտ կսպանեն:

Մայրս չկարողացավ, սիրտ չարեց պատասխանել: Ես մերժեցի՝ ասելով, որ մորիցս չեմ բաժանվի: Կինը, ցավակցական հայացքով նայելով մեզ, ձեռքս բռնելով, գգվանքով ասաց.

-Արի գնա՛նք, Մճոն էլ է մեզ մոտ:

* * *

Մճոն /Սկրտիչը/ մեր թաղի կտրիճ, կռվարար տղաներից էր, չնայած հարուստի տղա էր: Մենք միասին դպրոց էինք գնում և հաճախ կռվի բռնվում Ջոջ[82] գերեզմաններից ներքև՝ գոռների մոտ, թուրքի *լամուկների*[83] հետ: Մճոն՝ Սկրտիչ Կարապետի Աղությանը, մեր թաղի հարուստ վաճառականի տղան էր: Մենք մի թաղի ու մի դպրոցի տղաներ էինք: Նա մի երկու տարով մեծ էր ու փարթամ ինձանից, բայց թույլ էր սովորում: Աղութենց գերդաստանը զոհ գնաց Եղեռնի սկզբի օրերին: Մճոն ու մայրը, ժանդարմներից մեկի աջակցությամբ, մի քանի օր թաքնվել էին սեփական ախոռատանը՝ օրը տաս ոսկի տալով ժանդարմին: Ժանդարմը տասնապատկել էր գումարը՝ ստիպելով, որ միասին գնան փողերը պահած տեղից բերելու: Մճոյի մայրը, ցանկանալով խաբել ժանդարմին, թևը մտցրել էր թոնրի ակը և դատարկ ձեռքը ցույց տալով՝ գոչել էր.«Վա՜յ, տարել են»: Ժանդարմը դաշույնի երկու հարվածով սպանել էր նրան՝ շտապելով Մճոյի կողմը, բայց տղան տեսնելով ուրացող մարդասպանի արարքը՝ փախել էր Հոխիկյանների տան կողմը և անհետացել: Ինչպես նշեցինք, մինչև արհեստավորների կոտորածը մեր ընտանիքը, մոտ մեկ ամիս ժամանակավոր արտոնություն ունենալով, չտեղահանվեց: Մի քանի անգամ գիշերով նա գալիս էր հորեղբորս և մեր տուն: Նա թաքնվում էր թուրքական գերեզմանոցում՝ Ալի աքպար անունով հռչակավոր Շեյխ իմամի[84] գերեզման-դամբարանում: Նրա գիշերային պատմվածքները՝ գոռնափշտիկների, սատանաների ու չարքերի մասին, ստիպում էին մորս խաչակնքվել և աղոթել.*«Թո՛ղ Սուրբ Կարապետի աջն ու խաչը պահպանեն Մճոյին»*: Այդ

ժամանակ նրա մտքով անգամ չէր անցնում, որ իր տղան էլ չէր խուսափելու այդ տարաբախտությունից:

Մճոն ինձ վերածնեց, ոգևորեց:

* * *

Կինը, գթառատ աչքերը հառած մեզ, որպես ցավակից, նորից խնդրեց, որ ես բաժանվեմ մերոնցից և հետևեմ իրեն: Ես նայեցի մորս հուսալքված դեմքին և հրաժարվեցի: Մեր աքսորի ճանապարհը անցնելու էր Ծապրկորի թաղից ուղիղ Սանդի և Ավելմեյդան հայկական թաղերով՝ հասնելով քաղաքից յոթ-ութ կմ դուրս գտնվող «Արաբու կամուրջ» կենտրոնացման ճամբար: Մեր քարավանը մոտ 300 մետր էր գնացել: Օգտվելով գիշերային խավարից և պահակազորի ժանդարմների զբաղվածությունից, որոնք, մեծամասամբ կեղծ հավաստիացումներ տալով, կաշառվում էին վերջին հույսն ունեցող կանանց վերջին դրամներով, որոնց հետ խոսում էր նաև վերոհիշյալ կինը՝ դեղին ոսկիներ խոստանալով: Ես նայեցի այդ տիկնոջը, որը գերագույն հանգստությամբ ժանդարմի թևը ձգելով, ինձ գլխով արեց: Նկատեցի, որ այդ կինը ծլկեց փողոցի վրա գտնվող դռներից մեկով: Քանի որ մեր թաղում էինք և ես լավ էի ծանոթ զիգզագ ճամփեքին, մենք հույժ շտապ օգտվեցինք առիթից: Երեսուն քայլ չանցած՝ ես՝ եղբորս շալակած, մայրս՝ քրոջս թևից ձգելով, աջ բացվող նեղ փողանով իսկույն փախանք ներքև և մտանք Նազլանց տունը, որը մեր թաղի գեղեցիկ և աչքի զարնող շենքերից էր: Մի ժամից, քանի դեռ լույս էր, փոխադրվեցինք ավելի խորը՝ Գարախանչալյանների շենքը, որն ավելի ապահով էր: Այս տանը մնացինք մինչև երեկո, որից հետո նույն գիշերը փոխադրվեցինք հորեղբորս տուն, որը ոչ մի տան հետ կից չէր, այլ միայնակ շենք էր արտի կողքին՝ պտղատու այգիներով և ծառերով շրջապատված: Լուսամուտները ներսից շորերով լավ ծածկեցինք, մայրս անմիջապես ճաշ եփեց, կուշտ կերանք և անկողնում քնեցինք: Հորեղբորանցս երեք հսկա գամփռները կային: Մեզ տեսնելով, վազվզելով եկան սկսեցին փաթաթվել, լպստել: Գիշերը գնացի աղբյուրից ջուր բերելու, որը մեզանից մոտ երկու հարյուր մետր էր հեռու: Պետք է խոստովանեմ, որ հորեղբորս շների շնորհիվ՝ ես ինձ ապահով էի զգում: Նրանց պաշտպանությամբ էի իջնում Լոռոյ աղբյուրից /մեր աղբյուր/ ջուր բերելու:

Երկու օրից կասկածեցինք, որ մեզ կարող են նկատել. մեր ներկայության հետևանքով շների թիվը մեր տան մերձակայքում շատացել[85] էր: Նրանց անսովոր հաչոցներից սկսեցին երևալ ժանդարմներ: Շները ոհմակներով հարձակվում էին այդ փոլիսների, ժանդարմների վրա: Ստիպված, լուսադեմին, ճաշը լցնելով կուժի /փարչ/ մեջ, շների պաշտպանությամբ իջանք ներքև և փոխադրվեցինք մեր տան դեմ առ դեմ, Լոռոյ չռի՝ աղբյուրին կից Սապոնջյանների տունը, որը շատ մեծ էր և պատսպարվեցինք այնտեղ: Ես նախօրոք ուսումնասիրել էի այս շենքը. թուրքերը ամեն ինչ տարել էին, տան դռները

բաց էին: Երկրորդ հարկի սենյակի պահարանում եղած գաղտնի անցքով սողացինք առաստաղի գերանների ու տախտակի արանքը՝ ամբողջ ցերեկը պառկած վիճակում մնալով:

Երեք օր այսպես ապրեցինք. ցերեկները՝ առաստաղում, գիշերները՝ հորեղբորս տանը: Մեր գնալ-գալուն էր հետևում պաշտպան շների ոհմակը, որոնց թիվը քառասուն-հիսունի էր հասնում: Երրորդ երեկոյան հորեղբորս տան դուռը սեղմելիս չբացվեց: Ստուգելով պարզեցինք, որ ներսից էր փակ: Նայեցինք, լուսամուտները նույնպես փակ էին: Դռան ճեղքերից, լուսամուտներից ուշադրությամբ հետևեցինք ձայներին. հանկարծ՝ ծանր հևոց: Մայրս ուրախացավ կասկածելով, որ ներս մտնողները մեզ նման հայ փախստականներ են, կամ մերոնցից փախած եկած ինչ-որ մեկը: Զգուշորեն դուռը թակեցինք, ոչ մի ձայն: Ստիպված դանակի ծայրով մի կերպ փայտից փականքը բարձրացնելով, դուռը բացեցի: Ներս մտնելով՝ դուռը փակեցինք և հևոց լսեցինք: Ճրագի աղոտ լույսի տակ տեսանք անկողնում պառկած մի մարդու, կողքին Արաբո շունն էր: Ի զարմանս մեզ, մայրս իրեն գցեց անկողնում պառկածին. ձեռքերով գրկեցին միմյանց գլուխները: Հորեղբայրս էր: Ինչպիսի՜ ուրախություն համակեց մեզ բոլորիս: Դժբախտ հորեղբայրս, հազիվ անկողնում նստելով, զարմանքով նայում էր մեզ: Մայրս, տեսնելով հորեղբորս ծանր դրությունը, անմիջապես օջախը վառեց, ուտելիք պատրաստեց: Հորեղբայրս անզոր ձեռքերով ինձ գիրկն առավ: Մեզ բոլորիս թվում էր, թե երազ է: Մենք կարծում էինք, թե հորեղբայրս քաղցից հյուծվել և հիվանդացել էր, բայց նա, քիչ հանգստանալով, ցույց տվեց իր վերքը:

Մոտ քսան օր առաջ արհեստավորների մի մասին՝ թվով մոտ երեք հարյուր հայերի, այդ թվում և հորս ու հորեղբորս, բեռնել էին քաղաքի արխիվն ու այլ պաշտոնական իրեր և ժանդարմիայի, զինվորների հսկողությամբ ուղարկել Սղերդ[86]-Դիարբեքիր:[87] Ճանապարհին՝[88] Ղասրիկ /Կասրիկ/[89] գյուղի մոտ, գետի ափին հանգստի պահին, քրդերի մի մեծ խումբ հարձակվել էր պահակախմբի վրա, պահանջելով թույլատրել թալանել: Սկսվել էր կարճատև կռիվ: Ժանդարմները, մոտ երկու-երեք ժամ կռվելով, շատ զոհեր էին տվել: Քրդերը, կողոպտելով ժանդարմներին ու հայերին և թալանելով արժեքավոր բեռները, հեռացել էին, որից օգտվելով, հայերը, փորձել էին իրենց գետը գցելով՝ ապաստանել սարերում: Մի քանիսին հաջողվել էր անցնել հորդառատ գետի մյուս ափը և թաքնվել անտառի թավուտներում: Հորեղբայրս հազիվ ասաց, որ հայրս գետափին՝ ծառի տակ, այդ պահին էր սպանվել: Նա տեսել էր եղբոր՝ հորս սպանվելը, և լսել նրա ձայնը՝ Գրիգո՜ր, փախի՛ր: Շատերին էր հաջողվել անցնել գետի մյուս կողմը և ցրվել անտառում: Մոտ երեք շաբաթ թափառելով սարից սար՝ քաղցած և ուժասպառ, չորս-հինգ հոգով մի կերպ հասել էին մեր քաղաքի լեռները: Նրանք, հանդիպելով սարերում արածող նախիրների, ոչխարների հոտերի և հանկարծակիի բերելով, հարձակվում էին քուրդ հովիվների վրա, խլում զենքերը և աղքատիկ պաշարը: Գիշերով Ավեղի թաղից սարը բարձրանալիս հանդիպել էին թուրք զինվորներին, որոնց նախօրոք հայտնել էին այդ թաղամասով փոխադրվող թալանված անասունների մասին:

Նրանք հսկում էին կիրճերի անցումը: Զինվորները, կարծելով, թե քրդերի էին բռնում, պահանջել էին զենքերը հանձնել, բայց հայերը, հարձակվել էին նրանց վրա և սպանելով ու վիրավորելով, վերցնելով մի քանի հրացան ու փամփուշտներ՝ շտապել էին դեպի լեռները: Բայց դեռ վերև չհասած՝ եկել էին թուրք ձիավորներ և սկսել ներքևից կրակել: Հայերից երկուսը սպանվել էին, մյուսներին հաջողվել էր խորանալ լեռների մեջ և հետքերը կորցնել: Հորեղբայրս, այդ պայքարում, ոտքերի արանքում վիրավորվելով և չկարողանալով շարունակել ճանապարհը, ստիպված հրաժարվել էր միշտ շալակելով փոխադրվելուց և մնացել մենակ: Մի քանի օրվա ընթացքում մահվան դեմ մաքառելով՝ ձորերի արանքով, գետի եզերքով, ցերեկը՝ որպես դիակ, գիշերները՝ մի կերպ, անսպասելիորեն հասել էր տուն և ուժասպառ պառկել բակում: Մեծ Արաբ շունը սկսել էր լիզել վերքը: Նա հանգստանալով մտել էր տուն, դուռը փակել, գնացել իր սենյակը, պառկել անկողնում:

Մայրս, բաց անելով վերքը, որը հոտել, քայքայել էր ոտքը, ճրագի աղոտ լույսի տակ լավ նայելուց հետո, կանչեց ինձ, սկսեցինք լվալ, մաքրել որդերից, ապա ինձ ուղարկեց թրքացած հարևանուհիներից մորքուր Սիրունի տունը: Նա չմերժեց, *միլաւ*[90] տվեց /քսելու հյութ-դեղ/: Մորս պատվերով մի քանի կանաչիների արմատներ քաղեցի, դրանց և ձեթի խառնուրդով միլամ[91] /դեղ/ սարքեց, վերքը մաքրելուց հետո կապելու համար: Երեք օր խնամեցինք հորեղբորս, հույս ունեինք, որ կառողջանա: Այսպես գիշերները հորեղբորս հետ էինք, լուսաբացին՝ շների աջակցությամբ, իջնում էինք և թաքնվում Սապոնջյանի տան առաստաղում: Չորրորդ օրն էր, որ գտել էինք հորեղբորս: Առավոտյան՝ դեռ լույսը չբացված, հորեղբորս բարձի մոտ ջուր և ուտելիք թողնելով, գնացինք մեր ապաստարանը: Չորրորդ, թե հինգերորդ գիշերն էլ հորեղբորս հետ էինք: Աչքերը սևեռելով ինձ՝ նա ձեռքով արեց և ինձ կանչելով՝ ասաց.

-Ես այսօր ցերեկը դուրս եկա տանից, չորս կողմը ման եկա, ուզեցի ձեր կողմը գալ, չկարողացա և նորից հետ եկա:

Ես մոտեցա նրան, հազիվ մի ձեռքը ինձ մեկնեց և անշարժացավ: Փարվեցի կրծքին: Ոչ մի ձայն, նա այլևս չշարժվեց: Մայրս ինձ բարձրացրեց և հեռացնելով՝ դեմքը ծածկեց: Լուռ, մի քանի րոպեից մայրս ասաց՝ մեռավ:

Առավոտ էր: Որոշեցինք ոչ մի տեղ չգնալ և հորեղբորս մարմինը թաղել: Երկուսով դիակը քաշքշելով դուրս բերեցինք: Քլունգն ու բահը վերցրինք՝ բակում փոս փորելու համար: Մեզ շրջապատել էին շները: Հողը հազիվ մի քանի թիզ էինք փորել, երբ հանկարծ շների հաչոց լսվեց: Մեզ մոտեցան չորս ժանդարմներ: Մայրս ինձ ձայնեց.«Շու՛տ, հա՛ց վերցրու»: Ես մտա տուն, փաթաթված ատրճանակը դրի գրպանս և եղած երեք բաղարջները ձեռքիս եկա կանգնեցի մորս կողքին: Քույրս և եղբայրս փաթաթվեցին ինձ: Սկզբում մի քանի ոտքի հարված տալով՝ նրանք մեզ խուզարկեցին: Հիմնականում փող էին ման գալիս: Հորեղբորս մարմինը անթաղ թողնելով՝ մենք հուսահատված հետևեցինք նրանց: Մեզ տարան նույն հավաքակայանը և գիշերը բոլորիս, մոտ հիսուն կին՝ երեխաների հետ, երկու ասքյարի ուղեկցությամբ փոխադրեցին Արաբու կամուրջ՝ մահվան ճամբար: Այլևս փախչելու ոչ մի փորձ անող

չեղավ: Մեզ ուղեկցող զինվորները լավ մարդիկ էին և ցավակցում էին մեզ: Ճանապարհին նրանց միջոցով կարողացանք քիչ ուտելիք ձեռք բերել: Դեպի Արաբու կամուրջ վար իջնող ճանապարհին երևաց ճամբարը, և ահն ու սարսափը պատեց մեզ:

* * *

Հայոց տների մեծամասնությունը շներ էին պահում, և հիմա այդ անտերները ոռնոցներով վայնասուն էին գցել ամբողջ թաղում՝ սպառնալիք ստեղծելով մարդկանց համար: Մի քանի աչքի ընկնող հարուստների տներ կնքված էին, ամեն ինչ մնում էր նախնական վիճակում, միայն մկներն էին ազատություն ստացել և նույնիսկ ցերեկը վխտում էին դեսուդեն: Սառայենք այստեղ հանգրվանելով՝ իրենց շատ ազատ էին զգում: Բայց, ափսոս, այդ անդորրը խախտվեց, երբ մեզ առաջին անգամ բռնեցին, և ինչպես արդեն հիշել եմ, մենք աքսորի ճանապարհից փախանք դեպի Նազլանց տները: Սառան և Մճոն, մինչև Սանդի թաղի վերջը, ոտնկոխ հետևեցին քարավանին և նկատելով, որ փախուստի ոչ մի փորձ կատարող չկա, տխուր-տրտում վերադարձան իրենց բերդը: Իրոք, ամսից ավել այդ տանը ոչ մի կասկածելի բան տեղի չէր ունեցել, բայց ջուրը տեղում հոտել էր: Մի շաբաթ անց Մճոն, հորեղբորս տան կողմը գնալով, նկատեց բաց դուռը և սև շանը՝ խոշտանգված հորեղբորս դիակի մոտ պառկած: Սառան մրմնջալով ասաց.

-Նույնիսկ վերջ տվին իրենց համար ձրի աշխատող արհեստավորներին: Ես ու դու գարնան ձնծաղիկ ենք,-և Մճոյի ձեռքից բռնելով՝ լուսամուտի մոտ երկար բարձին մեկնվեցին ու աչքերը փակելով՝ ինքնամոռացության տվեցին իրենց:

Հինգշաբթի օրը Սառան ու Մճոն գնացին մեր թաղի գոռները: Արևածագին Սառան բազարի տանիքներով մոտեցավ *Ուլու ջամիին*[92] և տեսավ հեռվում կծկված նստած մուհաճիրներին: Հետզհետե խանութները բացվեցին, շուկայում եռուզեռ սկսվեց: *Մինարեից*[93] լսվեց մոլլայի կանչը, որն այդ օրը բացառիկ ոգևորությամբ էր գոռում՝ հավատացյալներին հրավիրելով մզկիթ, լսելու շեյխ Ուլումի բերանով ասված Մուհամմեդի խոսքերը: Բոլոր կողմերից թափվեցին և գալով լցվեցին ջամին: Տանիքները բաժին ընկան քյասիբներին ու մուհաճիրներին: Սառան, աջ ու ձախ շրջվելով, ուզում էր տեսնել իր հին ծանոթներից մեկն ու մեկին, մի բան իմանալ, բայց բացի մի քանի ժանդարմներից, փոլիսներից ու զինծառայողներից, ոչ ոքի չհանդիպելով՝ իջավ չարչինոց, աչքի տակով նայեց խանութպաններին՝ փնտրելով իրենց մտերիմ կերպասավաճառին: Նա իր չադրայով կասկած հարուցեց: Մի քանի լամուկներ հետապնդեցին նրան: Հանդիպելով ժանդարմին ու մատնացույց անելով՝ լակոտները վազ տվեցին և ֆատման քաշելով՝ պատռեցին: *Գյավուր* կինը խաղաղ հանձնվեց և փոխադրվեց մոտակա Ս.Սարգիս եկեղեցու ճամբարը, ապա երկու օր հետո՝ Արաբու կամուրջ:

Մճոն, մինչև առավոտ սպասելով Սառայի վերադարձին, կռահեց, որ նա բռնվել է ու երկրորդ ցերեկը գոռներում անցկացնելուց հետո, բարձրացավ նախկին վայրը: Երկու օրից գիշերով գնաց հաջի Բաբայի կողմը և անցքը փակ լինելու պատճառով՝ դժվարությամբ մագլցեց պատն ի վեր, ապա շրջվելով դեպի այգին՝ հետազոտող հայացքով փնտրեց ու գտավ թոռնիկին գիրկն առած հաջի Բաբային: Ուշադրությամբ ունկնդրելով ու լսողությունը լարելով՝ մոտեցավ ու ծառի ետևից ձայնեց՝ կանչելով հաջի Բաբային.

-Հաջի՛ Բաբա, ե՛ս եմ, ձեր Ալին:

Երեխային կանաչներին դնելով՝ հաջի Բաբան մոտեցավ ծառի կողմն ու կանչեց.

-Արի՛, *օղուլ*, արի:

Սկզբից Մճոն, խույս տալով, ետ էր նահանջում, բայց տեսնելով ու լսելով նրան՝ համարձակությամբ մոտեցավ և՝ սալամալեքմ, ասելով ու պատասխանը ստանալով՝ նստեցին իրար կողքի: Դրսից գնացող եկողներ չկային, ներսում մի քանի հոգի էին՝ կանայք, երեխաներ, ձիապահ չոլախ Մստոն, որն զբաղվում էր կովերի ու ոչխարների հոգսերով: Հաջի Բաբայի ավագ որդին իր տիրոջ՝ շեյխի և նրա երկու որդիների հետ սպանվել էր գաղթի օրը՝ թալանչիների կողմից, իսկ խուրջինով ոսկիները տարել ու մարսել էին քոմսերն ու փոլիսները: Մճոյի բախտը բանեց. երկու ամիս ազատ մուֆթանց բարեբեր այգիներում կերավ, խմեց, ման եկավ, օրը մի քանի անգամ ախոռն էր մտնում քիչ դես-դեն անում, աղբը դուրս հանում: Հաջի Բաբայի խորհրդով ու միջնորդությամբ ընդունվեց եթիմխանե՝ *էսքերյա մեքթեպ*: Հաջի Բաբան ամեն ուրբաթ տնից փարխաջով ընտիր ճաշեր էր ուղարկում նրան:

Արաբու կամուրջ-մահվան ճամբար[94]

Ճամբարը քաղաքից հինգ-վեց կմ հեռավորության վրա էր՝ Բիթլիսից Սղերդ-Դիարբեքիր տանող ճանապարհին: Քաղաքից եկող երեք գետերը միանալով՝ հորձանքով անցնում էին քաղաքի տակով: Քաղաքի սահմանից կամրջով անցնելով՝ ձախ կողմից գետի երկարությամբ պարսպապատված էր մոտ 0,5 քառ. կմ հարթ տարածություն: Ճամբարը շրջապատված էր մի կողմից հորդառատ գետով, մյուս կողմից՝ գլխավոր՝ Սղերդ-Դիարբեքիր տանող ճանապարհով: Լուռ, գլխակորույս անցանք կամուրջը: Մեզ ուղեկցող զինվորները հեռացան: Ճամբարում ընկած էին հարյուրավոր ուռած ու այլանդակված դիակներ, անջատ գլուխներ, հոշոտված մարմիններ: Սարսափելի գարշահոտություն էր: Խեղաթյուրված կանայք և աղջիկներ՝ որի ստինքը կտրած, որի փորը պատռած, լուռ իրենց ցավն ու կսկիծը մրմնջալով՝ հևքով, թախծոտ աչքերը տխուր ու անհույս հառած, նայում ու սպասում էին ուշացող մահվանը: Արաբի կամրջի ճամբարը գեհենային տանջանքների, մահով մահի դեմ պայքարողների կենդանի լուռ գերեզման էր: Ամեն ժամ մեռնողներ. քաղցից, սովից սմքած երեխաների ձայնը չէր լսվում, անհույս ու անօգնական սպասում էին օրհասական մահվան: Այստեղ թույլատրվում էր միայն մեկ-մեկ մոտենալ գետափին՝ ջուր խմելու: Գետն անցնելու հնար չկար: Նախ ջուրը հորդառատ էր, ապա չորս կողմից շրջապատված էինք ասքյարներով, բացի դրանից, գետի մյուս ափը լեռան ստորոտն էր: Այստեղ 400-500 կանայք և երեխաներ կային, բոլորն էլ քաղցած, սոված, հյուծված: Ճամբարի գետեզրյա մասում, մեկ ու կես մետր բարձրությամբ կտրված ծառերի բներում արյունոտ, կիսամեռ կանանց ու երեխաների մարմիններ, տնքոց՝ կիսաբաց աչքերը երկնքին հառած:

Հենց որ մեզ ներս տարան, ճամբարի կանանցից մի քանիսը մոտեցան մեզ և մորս զգուշացրեցին, որ ես կերպարանափոխվեմ և հիվանդ ձևանամ: Անմիջապես մեռածների վրայից հագուստ հանելով՝ ինձ հագցրին կանացի արյունոտ զգեստ և գլուխս կեղտոտ լաթով փաթաթեցին, խորհուրդ տալով եկողների դեպքում՝ քրդեր, բաշիբոզուխներ, պառկել և կիսամեռ ձևանալ: Ճամբարում ինձ հասակակից տղա չկար: Բոլոր առողջ կանանց ուշադրությունը գրավեց իմ հայտնվելը, բոլորը ամեն կերպ աշխատում էին ինձ թաքցրած պահել: Կեսօրին թույլատրվեց մոտենալ գետին ջուր խմելու: Շատերի հետ մայրս ու փոքր եղբայրս գնացին գետի կողմը և ինձ գլխարկով ջուր բերին: Չորս կողմից լսվեցին հեկեկացող աղերսալի ձայներ, մեկնվեցին դողդոջուն ձեռքեր՝ խնդրելով՝ ջու՜ր, ջու՜ր, ջու՜ր: Մայրս, շշկլված ու շփոթված, չգիտեր, թե որին մոտեցնի ջուրը: Մորս ձեռքից վերցրի ջրով գլխարկը և մոտեցրեցի ինձ հառած մահամերձ աչքերին: Պապանձված բերանները, հազիվ մեկ-երկու կում խմելով, ընկնում էին գետնին՝ աչքերը չռած մռայլ երկնքին:

Մահվան ճամբարում կային թուրքերի կողմից փախցրած ու պահված առողջ երիտասարդ կանայք ու աղջիկներ, որոնց բռնել ու բերել էին գաղտ-

նախցերից: Ճանապարհով անցնող թուրքերն ու քրդերը, հաճախ ժանդարմների հետ պայմանավորվելով, գալիս ու փնտրում էին ջահելներին, սիրուններին: Դիմադրողը ստանում էր խանչալի մի քանի հարված: Նրանք խղճմտանքը, գութը կորցրած, ավելի շուտ՝ չունեցող մարդիկ էին: Առաջին օրը վեց կատաղած քրդեր ձիերով ներխուժեցին ճամբար: Կանայք ինձ պահեցին մեռածների տակ: Ներխուժողները սկսեցին ձիերով կոխոտելով ման գալ, սպառնալով պահանջեցին բացել կանանց երեսները, կուրծքը և ընտրություն անել: Շատերը ահից, երկյուղից հլու ենթարկվեցին, բայց կային և դիմադրողներ, որոնք չնայած սրի ու դաշույնի հարվածներին, խփում, չանգռոտում էին: Այսպիսիների վախճանը շուտ էր լինում: Նրանք չարաչար մահվամբ վերջ էին տալիս իրենց կյանքին:

Ցերեկը ես անշարժ էի. աչքի չպետք է զարնվեի: Մի ժամ հետո մի քանի կանայք, մոտենալով ինձ, լուռ զգուշացրին և ոտքերիցս քաշելով՝ հեռացրին գետեզերքը և հեռացան: Քանի որ նորեկները առանձնացված էին, ճամբարի դահիճներից հինգ-վեց հոգի եկան, սկսեցին խուզարկել և մի քանի կանանց առանձնացրին՝ իրենց հետ տանելու: Երեսն ի վար պառկած վիճակում լսում էի ժանդարմների գոռոցը, կանանց աղիողորմ հեկեկոցը: Կանանցից երկուսը, չնայած մտրակների տարափին և դաշույնի հարվածներին, գերադասեցին մեռնել: Քաշքշուկից նրանք կիսամերկ էին և ավելի հրապուրիչ: Թևերից բռնած՝ կանգնեցրին: Մոտեցավ չավուշը /վաշտապետ/, կնուտը ձեռքին, սպառնալով.

-Ով չենթարկվի՝ *կազուխ*:

Նորեկներս չգիտեինք այդ բառի իմաստը: Լսվեց տանջվող ականատեսների ձայները.

Ամա՜ն, աղջկե՛րք, գնացե՜ք, գնացե՜ք:

Բայց նրանք անդրդվելի մնացին: Չավուշը լորձունքոտ բերանով, նորից՝ կազուխ, գոչելով՝ մտրակեց ու մի կողմ քաշվեց: Մոտեցան դահիճները, անողորմ հարվածելով մերկացրին և արնաշաղախ զոհերին մոտեցրեցին վերը հիշածս երկու արշին բարձրությամբ կտրված ծառերին, որոնց կենտրոնում ամրացված, ցցված էին 30,35-ից-40 սմ երկարությամբ սեպեր: Հնարավոր չէ նկարագրել այդ սարսափելի տեսարանը: Արյունարբու ժանդարմները հռհռում էին՝ կամրջի պարիսպների վրայից դիտելով, իսկ ողջ ճամբարն, աչքերն ու ականջները փակած՝ մղկտում էր: Երկու-երեք հոգով, մոտենալով կանանց, մեկ-մեկ բարձրացնում և նստեցնում էին այդ սարսափելի *ղազուխին* սեպին: Քսան-երեսուն րոպե գալարվելով՝ զոհը, նստած վիճակում թեքված, գլուխը կախում էր և կարծես ամաչելով՝ վարսերով ծածկում կուրծքը:

Երեկոյան մի քանի կանայք մորս հետ միասին եկան ինձ մոտ և ինձ շրջապատած՝ գնացինք: Սիրելի եղբայրս փաթաթվեց վզովս և քնեցինք՝ ջինջ աստղերին նայելով: Դիշերը ամրակազմ կանայք, աղջիկները մթի քողի տակ իրար հետ տեսնվում էին և փոխանակում իրենց դառը մտքերը: Մի քանիսը, հավաքվելով մորս մոտ, առաջարկեցին աղջկա տպավորություն ստանալու համար՝ գլխիս ավելացնել կանացի մազեր: Մայրս մերժեց, քանի որ այդ հա-

սակի աղջիկները հաճախ էին ընկնում «ընտրվողների» շարքը: Ես նույնպես դուրս եկա և սկսեցի շրջել: Գետեզերքին մոտենալը արգելված էր: Դիմացից պահակները խախտողներին գնդակահարում էին: Կեսգիշերն անց էր: Լսեցինք լացուկոծի ձայներ: Նոր խումբ էին բերում: Նկատեցինք, որ կամուրջն անցնելիս երկու երեխաների ջուրը գցեցին. հոսանքը նրանց տանում էր: Խեղճ մայրը խելագարվել էր և իր կրծքի երեխային երկու տարեկան տղայի հետ կամրջից շպրտելով ջուրը՝ հարձակվել ժանդարմների վրա: Կնոջը երկու դաշույնի հարվածով կամրջից գետը քցեցին՝ բարբաջելով, թե՝ գնա լակոտներիդ կերակրիր:

Շրջակա գյուղերի թուրքերի տներում ապաստանածներին հետզհետե հավաքում էին, ամեն օր բերում էին նորերին և մեկը մյուսից ավելի զարհուրելի տանջանքների ենթարկում: Վա՜յ դիմադրողին, նրան ցույց էին տալիս դազուխի վրայի զոհերին: Քանի՜-քանիսը՜ վախից ու սարսափից խելագարվեցին: Քանի-քանի մայրեր մանկիկներին գրկած՝ գետում խեղդվեցին: Արյունարբու քրդերի խմբերը, գաղթող կատաղած թուրք աշիրաթապետերը անարգել մտնում էին ճամբար և իրենց խանչալներով վիրավորելով կանանց, բացարձակ իրենց կիրքը հատուցելով և խոշտանգելով, պարծենում էին: Դեռ աչքիս առաջ է մի քուրդ բեկի կողմից առանձնացված մի խումբ կանանց և աղջիկներին մերկացնելը ու գետում լողացնելը, որոնց, գետեզերքի ծառերի արանքում բռնաբարելով, հետո անխնա այլանդակելով, դաշունահարեցին: Մեկը մյուսից զարհուրելի դժոխային տառապանքներ:

Երկու գյուղացի կանայք, դիմադրելով կրած տանջանքներին՝ չենթարկվեցին: Սարսռում եմ, երբ հիշում եմ այդ անիծյալ րոպեները և դողում է ձեռքս, երբ գրում եմ աչքերով տեսածներս: Այդ երկու կանանց նոր ձևով պատժեցին: Պարանով քաշելով և ծռելով երկու բարդենիների ծայրերը՝ կապեցին նրանց ոտքերից և բաց թողեցին. ծառերի ծայրերին կախված մնացին նրանց անջատ մարմնի մասերը:

Լրանում էր մեր ճամբարային, այդ գեհենային տանջալի Արաբու կամրջի օրերի երկրորդ շաբաթը: Կեսօրին ճամբար խուժեցին մոտ երեսուն զինված ձիավորներ: Անխնա կոխրտելով մեռածներին ու կենդանիներին՝ մտրակի հարվածներով սկսեցին առանձնացնել ջահելներին և մերկացնելով կանգնեցնել: Իջնելով ձիերից՝ մերկացրած տասնյակ կանանցից ընտրեցին ավելի լավերին: Դիմադրողները անմիջապես սրի հարվածով գետնին էին փռվում: Ընտրված քառասուն-հիսուն կանանցից հինգ ամենագեղեցիկներին հրամցրին բեկերին: Կանայք՝ լուռ ու մունջ, մոլի, դաժան արյունարբուներին ենթարկվելով, ձեռքերով աչքերը ծածկած, կանգնեցին գիշատիչների դեմ: Բեկերը պահանջեցին, որ կանայք գետի ջրով մեկը մյուսին լողացնեն: Հինգն էլ ստիպված ջուրը մտան: Ամառային շոգ օր էր, նրանք ջրից դուրս գալուց ավելի թարմացած, ավելի գեղեցիկ տեսք ունեցան: Իզուր չէր, որ բեկերը նրանց անվանեցին հուրի-փերիներ, դրախտի հրեշտակներ: Մոտենալով կամրջի մոտ հավաքված բեկերին՝ կանայք մերժեցին ենթարկվել նրանց պահանջին: Քաշքշուկն ու սպառնալիքը իզուր էր: Մերկ կանայք իրենք հար-

ձակվեցին բեկերի վրա: Մինչ այդ լուռ կանայք՝ կատաղած վագրերի նման խփում էին անզոր ձեռքերով, թքում: Ճշմած բեկերը ձեռքերով պաշտպանվում էին: Նրանք քրդերին և ժանդարմներին հրամայեցին կապել կանանց ձեռքերը:

Չնայած չորս օր էր, որ գտնվում էինք ճամբարում, բայց ես լավ չէի նկատել և չգիտեի աներևակայելի դաժանության, սարսափելի «կազուխ»[95] պատժաձևի մասին: Բեկերը հրամայեցին այդ հինգ կանանց կազուխ բարձրացնել և սկսեցին խրախճանքը կանանց հետ: Ես մինչ այդ շատ դաժանություններ էի տեսել, երբ քրդերը և թուրքերը հաճույքի համար երեխայով մոր փորը խանչալով պատռում էին, կտրում էին կնոջ ստինքները, ձեռքերը, բայց սեպի վրա նստեցնելը դեռ չէի տեսել: Մերկ կնոջը տանջելուց հետո չորս հոգով բարձրացրին և նստեցրին սեպին, որը կախված ոտքերի արանքից խրվեց նրա մարմնի մեջ: Զոհերը քսան-երեսուն րոպեից մահացան: Տեղում չորս կազուխ լինելու հետևանքով՝ հինգերորդ կնոջը «ավելի թեթև պատժի» ենթարկեցին: Թոկով երկու ծառերի ծայրերի ճյուղերից ձգելով՝ կապեցին կնոջ ոտքերին և բաց թողեցին: Ծառերի ճյուղերը ճոճվելով բարձրացան, կնոջ մարմինը երկու մասի բաժանվեց և ծառերի ծայրերից կախված մնաց: Մայրս ինձ պատմեց մեռնող կանանց մասին: Քսան-քսանհինգ տարեկան հարսներ էին, որոնց երեխաները սեփական աչքերով տեսան իրենց մայրերի մահը՝ արցունքոտ հայացքները երկնքին հառելով:

* * *

Ամեն օր մեկ կամ երկու անգամ մեծ կամ փոքր խմբերով բերում էին թաքստոցներից բռնածներին, բայց ճամբարում եղածների թիվը չէր ավելանում, մեռնողներն ավելի շատ էին լինում: Քսաներորդ օրն էր, որ գտնվում էինք «Արաբու կամուրջ» կենտրոնացման ճամբարում: Բերեցին քսան-քսանհինգ քլունգ ու բահ և մեզ ստիպեցին թաղել դիակները: Չնայած բահ ու քլունգ վերցնելու ուժ չունեինք՝ բոլորս՝ մեծ ու փոքր, աշխատեցինք փոս փորել և առաջին հերթին թաղել փոքրերին՝ երեխաներին: Ահից ու սովից հյուծված ու կիսամեռ, առանց սփոփանքի, առանց հույսի՝ շարժվում էինք ոնց որ ուրվականներ:

Քույրս հիվանդ էր ու անշարժ, աչքերը հառել էր մորս ու ինձ, անձայն ջուր ու հաց էր աղերսում: Մայրս իր հագուստի փեշով փակում էր նրա դեմքը: Իմ սիրելի փոքր եղբայրը ինձնից չէր հեռանում, անխոս, լուռ, գլուխը կախ՝ սիրուն աչքերը ինձ բևեռած, ձեռքերը ինձ սեղմած: Վեց-յոթ տարեկան էր եղբայրս՝ Մակիչը, իմ ամենասիրելին: Սև սիրուն աչքերով, նիհար, դալար մարմնով, գունատ այտերով, ձայնը՝ քաղցր ու հնչուն: Իր դողդոջուն ձեռքերով բռնելով, փաթաթվելով ինձ՝ չէր թողնում, որ հեռանամ: Քաղցած ու ծարավ էր, բայց ոչ մի անգամ հաց, ջուր չէր ուզում, ինքը փոքր էր, բայց մեծ դժվարություններն ու դժբախտությունները խելոք, լռությամբ էր տանում: Այդքան

տառապանքների մեջ ես նրա լացը չտեսա ու չլսեցի: Նա այնքան բարի էր իր հայացքով, այնքան դուրեկան բոպիկ ոտքերով, բաց գլխով… իմ սիրելի փոքրիկ Մակիչը:

* * *

Քսանմեկերորդ օրվա առավոտյան ճամբարի պահակ զինվորների քանակը ավելացավ: Մեզ մոտեցավ մի կին և հայտնեց, որ շուտով մեզ ուղարկելու՝ տեղափոխելու են: Պարզվեց, որ մեզ տանելու էին հաջորդ օրը: Կարծես թե ընտելացել էինք մեր ճամբարի հետ. գուժը մեզ ավելի սարսափեցրեց: Չէ որ արտաքսվողների մեծ մասը քայլելու ուժ, հնարավորություն չուներ, որը իր կիսամեռ մորը, որը քրոջն ու եղբորը, մայրը իր երեխաներից պիտի հեռանար, գնար դեպի անհայտություն: Կեսօրին հրաման տվեցին փոխադրվել ու հավաքվել գետի մոտ, լվացվել, մաքրվել ու պատրաստվել գիշերվա երթին: Մութն ընկնելուն պես՝ կանանցից մի քանիսը «կեղծ ծամ» Սառայի գլխավորությամբ, շրջելով գիշերային խավարում, ընտրեցին առույգներին և ցանկացողներին ու քաջալերեցին առողջներին կես գիշերին գետն անցնել և փախչել: Սառան ասաց.

-Առավոտյան մեզ տանելու են կամ սպանելու, կամ քաղցած ծեծելով քշելու են Արաբստան, ով կարող է, թո՛ղ գա ինձ հետ փախչի:

Բոլոր մեռնողներն էլ ուզում են գոնե մեկ-երկու ժամ ավել ապրել:

Ճամբարի կանանցից ամենաազդեցիկը՝ Սառան էր, Ճերճիս էֆենդու կինը:[96] Ճամբարում փսփսում էին Սառայի մինչ այդ կատարած քաջագործությունների մասին: Կոտորածին, երբ թուրք ժանդարմները ծեծել էին դուռը, նա [Ճերճիսը] բաց չէր արել: Լուսամուտից տեսել էր, թե ինչ էր կատարվում: Թուրքերը ի վերջո ջարդել էին դուռը: Ներխուժելիս երկուսը սպանվել էին: Կատաղած թուրքերը սկսել էին կրակել նաև լուսամուտից: Կռիվը տևել էր երկու ժամ: Փամփուշտները վերջացել էին: Թուրքերը ներխուժել էին տուն, բռնվել ձեռնամարտի: Երեխաները եկել էին օգնության: Սվիններից մի քանի տեղով վիրավորվելով՝ ընկել էր Ճերճիսը: Սառային թոկերով կապել էին տան այունին, դեռ կենդանի հոր աչքի առաջ սրախողխող էին արել երեխաներին, հետո սպանել, իսկ Սառային կապած թողնելով՝ հեռացել: Թուրքերը այստեղ էին թողել նաև երկու սպանված և մեկ ծանր վիրավոր ասքյարի: Հետ էին վերադարձել չորս-հինգ ժամից: Մինչ նրանց վերադառնալը՝ հարևանները գաղտագողի ներս էին մտել և քանդել նրա կապերը: Սառան համբուրել էր երեխաներին, նայել հերոս ամուսնուն և երդվել՝ կրկնակի վրեժ հանել: Նորից մտնելով տուն և սնդուկներից, պահարաններից վերցնելով ինչ-որ բաներ՝ երկու կապոցով հեռացել էր տնից: Սառան հաճախ ցերեկները որպես դիակ՝ պառկած էր լինում մեռածների մոտ, նրանց հագուստների տակ՝ խուսափելով թշնամու ճանկն ընկնելուց: Շատ անգամներ նրա տված ոսկիներով կարողացանք հաց ձեռք բերել:

Գիշեր էր՝ մութ, խավար: Սառան և մի քանի առողջ կանայք շտապ հայտնեցին փախչողներին՝ մոտենալ գետեզերքին: Մայրս, խաչակնքելով քույրիկիս՝ Նուբարին ու համբուրելով, երեսը ծածկեց, և եղբորս հետ մոտեցանք գետեզերքին՝ նշանակված վայրը: Սառան, մի քանի կանանցով շղթա կազմած, մեկը մյուսին բռնելով ու գետը մտնելով, զգուշացրեց, լռությամբ իրար հետևից բռնած՝ շարժվել առաջ՝ դիմացի ափը: Ուժեղները առջևից՝ սկսեցինք գետն անցնել: Մայրս առաջիս՝ եղբորս շալակած, մեկս մյուսից հաջորդաբար բռնած, շղթա կազմած, անասնական բնազդով իրար ետևից ձգելով ու ձգվելով՝ մոտեցանք ափին: Ես, եղբորս վզիս նստեցնելով և մորս բռնելով, մտանք ջուրը, գնացինք անձայն: Սառան արդեն հասել էր ափը, իսկ մենք դեռ մինչև ծնկներից վեր ջրում էինք: Գնում էինք մեկս մյուսիս քաշելով, հրելով, կարծես գետի մյուս կողմում մեզ ճաշի էին հրավիրել:

Հազիվ էին ցամաք դուրս եկել երեսուն-քառասուն կին, երբ լսվեց հրացանների որոտը: Մենք գետի մեջտեղը դեռ չէինք հասել, երբ շղթան քանդվեց: Թուրքերը, նկատելով գետում տեղի ունեցած շարժումները, կամրջի վրայից սկսեցին կրակել: Պահակները կրակը կենտրոնացրին գետով անցնողների վրա: Շատերը գնդակահարվեցին և գետի հորձանքին զոհ գնացին: Բարեբախտաբար մենք մոտ էինք եզրին: Շուռ եկանք դեպի ետ: Ես եղբորս իջեցրեցի և դեռ ափը չհասած՝ նկատեցի, որ ժանդարմները մեր ափով մոտենում են մեզ: Մայրս մի քանի կանանց հետ անցավ, իսկ ես ու եղբայրս մի երեք տասնյակ թշվառների հետ դեռ ջրում էինք: Թուրքերը սկսեցին կրակել մեզ վրա: Մայրս կորավ, հազիվ ինձ հաջողվեց եղբորս հետ հասնել ափը և բնազդաբար պառկել ջրում՝ ձեռքս խեղճ փոքրիկիս բերանին ու աչքերին դնելով: Մի քանի կանանց, որոնց թվում և մորս, հաջողվեց փորսող հասնել ճամբար և պառկած վիճակում սպասել գալիքին: Ժանդարմները լապտերների լույսի տակ գետի երկու եզրերին մանգաղներով, սվիններով խոցում էին վիրավոր, կիսամեռ ընկածներին: Ես եղբորս հետ պառկած էի գետի ափին, մի մեծ քարի հպված, մի ձեռքս եղբորս աչքերին: Բարեբախտաբար, մենք աննկատ մնացինք. մոտ մի ժամ հետո կրակոցները դադարեցին, միայն լսվում էր կողքներս ընկած վիրավորների սրտաճմլիկ տնքոցները: Թուրքերը, լուցկու լույսի տակ մաքրելով ափը, սվիններով ստուգելով մեռածն ու կենդանին, հեռացան:

Սովորականի նման՝ լուսադեմին թույլատրվեց մոտենալ գետին: Ես եղբորս հետ դեռ ջրում էի: Գետափին կային սպանվածներ և վիրավորներ: Կարգադրված էր սպանվածներին և խեղդվածներին հավաքել և լցնել մոտակա փոսը: Մոտեցող կանանց հսկում էին դիմացի ափին կանգնած զինվորները: Կարգադրությունից օգտվելով՝ բոլորը, որոնց թվում և մայրս, մոտեցան ափին, յուրաքանչյուրը իր հարազատին էր փնտրում: Մի երկու անգամ փորձեցի սողալով դուրս գալ, բայց եղբորս ոտքը ցավում էր, ես հնարավորություն չունեի շալակած տանել: Մեր պառկած տեղը անցման տեղն էր, ափին սպանվածներ և վիրավորներ շատ կային: Դիակներ հավաքող կանայք նկատեցին մեզ, նրանցից մեկը զգուշությամբ եղբորս ոտքից քաշելով՝ մյուսին հայտնեց,

որ ողջ է: Փոքր եղբայրս, տեսնելով մորս՝ վազեց մոտը: Իմանալով, որ ես կենդանի եմ, մայրս մի խումբ կանանց հետ մոտեցավ եզրին: Մի քանի րոպե հետո մայրս մի քանի կանանց օգնությամբ, իմ ոտքից ու ձեռքից ձգելով՝ բերեց փոսի մոտ, որտեղից ես մի ուրիշ խումբ կանանց հետ աննկատ անցա ճամբար ու խառնվեցի ողջերին:

Այսպիսով՝ խափանվեց մեր փախուստի վերջին հույսը: Փախչել, ազատվել հաջողվել էր մոտ քսան հոգու, իսկ այդ գիշերվա սպանվածների ու խեղդվածների թիվը երկու հարյուրից ավելի էր: Այդ գիշեր մեզ մոտ կրակոցների ձայներ լսվեցին: Թուրքերը կարծեցին, թե գիշերը քրդերը հարձակվեցին ճամբարի վրա: Հաջորդ օրը, փախչող կանանց հետապնդող երեք ձիավոր ժանդարմներից ճամբարում հայտնի եղավ, որ Ավելմեյդան թաղում կռվի էին բռնվել, չավուշը սպանվել էր, մյուս երկուսը փախել էին և հայտնել, թե զինված քրդերը կանանց փախցրին: Իրականում՝ Սառան երեք ընկերուհիների հետ, նկատելով ժանդարմների մոտենալը, օգտվելով գիշերային խավարից, կոթնելով պատին, սպասել էր հետապնդող ձիավորի մոտենալուն և ուղիղ կրակոցով վայր գցել չավուշին, մյուսները փախել էին:

Այդ օրը փոփոխություն կատարվեց պահակախմբում, զինվորներին փոխարինեցին նոր եկած ժանդարմները, որոնք խուժեցին ճամբար: Երեկոյան մի երկու իշաբեռ պարկերով հաց մոտեցրին պարսպին: Հացը դարսելով պատի վրա՝ հայտարարեցին, որ ով ուզում է, թող գա փողով վերցնի, գնի: Մեկնվեցին հարյուրավոր հյուծված դողդոջուն ձեռքեր՝ աղերսելով մի կտոր հաց, բայց հացի փոխարեն նրանց թևերին ու գլուխներին շառաչեցին մտրակների հարվածները: Դրամ ունեցողները մոտենում էին պարսպին, փողը վերև գցում, իսկ նրանք մի հաց էին գցում ներքև: Մոտ երկու ժամ տևեց հացի վաճառքը: Հացի մեկ հատը արժեր մի արծաթ՝ *չարեկ* հինգ *դուրուշ*, կամ մեկ *մեճիդյե*՝ քսան դուրուշ: Անկախ փողի արժեքից[97]՝ ոսկի, մեճիտյե, չարեկ, միևնույն էր, գցում էին մեկ հաց, մանրի վերադարձ չկար:

Նախկին և նոր պահակախմբերի միջև վեճ առաջացավ, բայց նորերը հաղթող դուրս եկան և ստիպեցին հներին՝ հեռանալ ճամբարից: Մեզ հայտարարվեց, որ պատրաստվենք: Մի քանի ձիավորներ ճամբար գալով՝ ստիպեցին կիսամեռներին և խեղանդամներին քաշքշելով հորերը լցնել: Երեկոյան ուշ, մտրակների, սվինների հարվածների տակ հավաքեցին պատերի մոտ՝ ճանապարհի ուղղությամբ: Սպանդանոց տարվող անասունների նման սպասում էինք մեր օրհասական ժամին: Մոտ երկու ժամ սպասելուց հետո պարզվեց, որ այդ գիշեր չեն տանելու: Մեզ շարքի բերող ժանդարմները հեռացան և մեզ թույլատրվեց մինչև ծառերին մոտենալ և սպասել: Կեսգիշերին ճամբար բերվեցին մոտ հարյուր բախտակիցներ: Առավոտյան՝ լուսադեմին, մի տասնյակ ժանդարմներ խուժեցին ճամբար՝ իրենց կիրքը, քմահաճույքը լրացնելու: Կեղծ խոստումներով, որին ստիպողաբար մերկացնելով, փող, զարդեղեն փնտրելով, կամ հաց խոստանալով, վերցնում էին ինչ պատահում էր, նույնիսկ հագուստը: Ժանդարմներից մեկը, որին չավուշ Օսման էին կոչում, գլուխը կախ, խղճմտանքով նայում էր ճամբարային տեսարանին: Մոտեցա նրան

և ճանաչեցի, հայրիկիս ծանոթներից էր: Մոտենալով քոմսեր էֆենդուն՝ հաց խնդրեցի: Նա իմացավ ում տղան եմ, գրպանից սև փող հանեց՝ ինձ տալու: Ես չվերցրեցի: Հինգ դուրուշանոցը ցույց տալով, խնդրեցի, որ թույլ տա հաց վերցնեմ: Զգացի նրա ցավակցական հայացքը և վստահորեն ասացի.

-Էֆենդի՛, ես Ղազարի տղան եմ, մայրս, քույրս ու եղբայրս քաղցած են:

Չավուշ Օսմանը ինձ իր մոտ կանչեց: Ես, պարիսպը մագլցելով, վեր բարձրացա: Իրենց հետ խոսելով՝ դուրս եկա ճամբարից: Չորս ժանդարմների հետ գնացինք դեպի պահակակետը՝ կամրջի մյուս կողմը: Կամրջով անցնելիս լսեցի և տեսա սիրելի եղբորս, լսեցի նրա ձայնը, լալիս, վազում էր դես-դեն ու կանչում էր ինձ՝ Միհրա՜ն, Միհրա՜ն: Իսկ ես հացի կտորի հույսով գնում էի քոմսերի հետ: Ես հայտնեցի, որ հիմա հաց կբերեմ: Ժանդարմները մտան պահակատուն, չավուշը ինձ սպասեցրեց դռան մոտ: Այդ պահին նկատեցի, որ քաղաքի կողմից գալիս էին յոթ-ութ ձիավոր ժանդարմներ: Լսեցի փոքրիկ եղբորս աղիողորմ լացն ու կանչը.

-Միհրա՜ն, արի՛, Միհրա՜ն, արի՛:

Ձիավորները կամուրջն անցան և նրանցից մեկը եկավ պահակատուն և մի գրություն ներկայացնելով չավուշին՝ խնդրեց շտապեցնել: Չավուշը կարգադրեց իր ենթականերին դուրս գալ և բոլորը շարժվեցին դեպի ճամբար: Չավուշը մի պահ ինձ նայեց և դառնագին ասաց, որ հաց չունի.

-*Օղլում* /տղաս/, ես ոչինչ անել չեմ կարող,- և սկսեց իջնել՝ շտապելով դեպի պատրաստի թամբած ձիերը:

Ես մնացի մենակ՝ ճանապարհի վրա: Եղբորս լացակումած ձայնը ինձ կանչում էր, ուզում էի ետ գնալ, բայց հնարավոր չէր: Նայեցի նրան: Նա աղիողորմ կանչում էր: Բայց ես ճամբարից դուրս էի, «ազատ»: Ձեռքով արեցի եղբորս, ուզեցի հասկացնել, որ հաց եմ բերելու: Գլխիկոր հեռանալով՝ մտա քարե պատերի արանքը: Չավուշը անցավ կամուրջը, նկատեցի, որ նա ձիու վրա նստած, հայացքով մի քանի անգամ ինձ փնտրեց, բայց չտեսավ: Սիրտս կտրատվում, ճմլվում էր, բայց որոշեցի բարձրանալ, հաց ճարել:

Լուռ բարձրացա Արաբու կամրջից դեպի վեր՝ ուղղություն վերցնելով դեպի Ավելմեյդան հայոց թաղը: Լսեցի եղբորս քաղցր ձայնը: Վերևից նայելով՝ տեսա նրան, մորս կողքին կանգնած՝ մատնացույց էր անում ինձ, ճչում, լալիս, կանչում՝ Միհրա՜ն, Միհրա՜ն: Ֆիզիկապես թույլ, հոգեպես ճնշված լինելով՝ ինչքան էլ որ ուզում էի արագ բարձրանալ, շուտ հասնել, հաց ճարել ու բերել, ոտքերս ինձ դավաճանեցին: Նորից ետ դառա, նայեցի. եղբայրս լալագին՝ ձեռքով-ոտքով ինձ էր կանչում: Ուզեցի փակել աչքերս, ուզեցի վազել: Վերջին անգամ լսեցի սիրելի եղբորս ձայնը.«Միհրա՜ն, Միհրա՜ն», և վերջ:

Տարակուսանքի պահին լսվեցին հրացանի կրակոցներ: Պահակներից ոմանք ինձ նկատել էին: Ես ճանապարհից բարձրացել էի մոտ 250-300 մ: Լսելով հրացանի գնդակների սուլոցները՝ պառկեցի և սողալով մտա մի մեծ ժայռի ետևը: Հրացանազարկերը դադարեցին: Լուռ պառկած էի այդ մեծ ապառաժի հետևում: Հեռու էի, չէի լսում եղբորս ձայնը: Խուսափում էի նայելուց, որ ինձ չտեսնեն և այս հոգետանջության մեջ նիրհեցի: Աչքերս բաց անե-

լով և ինձ մենակ զգալով՝ ահն ու սարսափը ինձ պատեց: Բնազդաբար քիթս ու աչքերս տրորելով և ուշքի գալով՝ անմիջապես վազեցի ներքև՝ դեպի կամուրջը: Մոտ կես ժամ հետո կամրջի տակով նայելով ճամբարին, տեսա դատարկություն, մնացի ապշած: Չէր լսվում եղբորս քաղցր ձայնը, դատարկ էր ճամբարը, միայն կիսամեռածների մարմիններն էին դես-դեն ընկած: Կեսօր էր, ուրեմն ես քնել էի չորս-հինգ ժամ: Սթափվելով և զգալով ավելի դառնացած վիճակս՝ չհամբերեցի, բարձրացա ճանապարհի վրա և որոշեցի կամրջով վազել, հասնել եղբորս, մորս, բայց հնարավոր չեղավ: Ժանդարմները գնում-գալիս էին կամրջի երկու կողմերում: Դժբախտաբար չհաջողվեց: Այդ պահին լսվեց մի քանի հրացանազարկ, և կամրջի մոտերքը հայտնվեցին մի քանի ժանդարմներ: Հազիվ կարողացա խուսափել, պառկած սողալով բարձրացա և ակնթարթորեն պահ մտա՝ կծկվելով այդ անիծյալ ժայռ-քարի ետևում՝ դիտելով կամրջի մոտ գտնվող ժանդարմներին: Հազիվ էին նրանք քսան-քսանհինգ քայլ հեռացել կամրջի մոտից, իմ տեսադաշտը ստուգելով, բարձրացա դեպի Ավելմեյդան թաղի բարձունքը և հասնելով՝ կուչ եկա մեծ բլրաձև ապառաժ քարի ետևում, որոշեցի մինչև մութն ընկնելը սպասել և գիշերով անցնել, գնալ հասնել մերոնց:

Պառկած ժայռի լանջին՝ դիտում էի դատարկ ճամբարը և պահակակետի երեք ժանդարմների շարժումները: Այդ օրերին թուրքական բանակը լքող արաբ զինվորների փախուստը մասսայական բնույթ էր կրում: Փախչողների՝ դասալիքների մեծ մասը, կամրջի վրայով պետք է անցնեին: Պահակակետը հսկում էր կամուրջը, դավաճան դասալիքներին բռնելու համար. հաճախ արյունահեղ ընդհարումներ էին տեղի ունենում: Կծկված ժայռին՝ նայում էի կամրջին: Սղերդի կողմից գալիս էին էշելոններ՝[98] թուրքական քայքայված բանակը համալրելու: Ինձ կամրջով կամ գետով անցնելու ոչ մի հնարավորություն չկար, հետևաբար, որոշեցի երեկոյան, գիշերային խավարում, կամուրջն անցնելու փորձ անել: Ինքս ինձ մեղադրում էի հարազատներիցս բաժանվելու համար, սիրելի եղբորս կարոտը սեղմում էր սիրտս: Մղկտում, լուռ լալիս, հեկեկում և թուլանալով՝ պառկում էի ժայռի ստորոտին, նիրհում, քնում, ինչ-որ աղմուկից արթնանում էի: Աստղերը փայլում էին երկնքում: Քնից սթափվելով՝ նայում, դիտում էի շրջապատս. զորքերի շարժումը շարունակվում էր: Փորձերս ապարդյուն անցան: Հույսս կտրելով կամրջից՝ ստիպված եղա օգտվել գիշերային խավարից, դարն ի վեր բարձրանալով հասա Ավելմեյդան թաղը, ուզեցի ապաստանել հայերի դատարկ տներում, բայց միտքս փոխեցի, քանի որ մեր թաղը ինձ ավելի ծանոթ էր: Մի ամիս առաջ փողոցներում երեխաների, պատանիների, մարդկանց եռուզեռ էր, իսկ հիմա միայն շների հաչոցն ու վնգստոցը, ոչ մի շարժում, ոչ մի ձայն: Գիշերվա մթին մտնում էի դատարկ տները, դես-դեն հաց ման գալիս: Տնից տուն, փողոցից փողոց ման գալով՝ ուղղություն վերցրեցի դեպի մեր թաղը:

Կեսգիշեր էր, գաղտագողի անցա փողոց առ փողոց, նեղ փողաններով մոտեցա Ամերիկյան հյուպատոսարանին, ուզեցի մոտենալ դարպասին և հանկարծ նկատեցի երկու զինվորների, որոնք ծխելով՝ պահակություն էին

անում: Ուշադրությամբ թեքվելով՝ դիմացի փողոցով հասա Ս. Գևորգ եկեղեցուն, որը երկու մեծ ու հեռավոր թաղերի կենտրոնն էր: Մոտեցա եկեղեցուն, ձայներ լսելով հեռացա և շարունակեցի ճանապարհս: Անցնում էի Ս.Գևորգ եկեղեցու գերեզմանների կողքով, հիշեցի պապիս գերեզմանը, երնեկ տվեցի նրան: Հիշեցի հորս ու նրա խոսքերը.«*Կռվելը շնորհք է, ով շուտ խփեց ու փախավ, ողջախություն է*»: Մի քանի րոպե գերեզմանաքարին նստելուց հետո՝ վերկացա և շարունակեցի ճանապարհս՝ դեպի Ծապրկորի թաղը՝ մեր թաղը: Այգու կողմից՝ լուսամուտից մտա Գարաօղլյանների տուն: Չնայած անկողինները փռած էին, բայց դատարկություն էր: Անցա թոնրատուն, օգտվեցի միայն հացից, պուտուկներում եղած ճաշը թթվել էր, բորբոսնել: Պառկել էի փափուկ անկողնում, ուզում էի քնել, բայց չէի կարող, եղբորս ձայնը, եղբորս կանչը ինձ խեղդում էր: Հոգնածությունից քնեցի:

Շների հաչոցն ու վնգստոցն ինձ արթնացրեց: Առավոտ էր, լուսաբաց: Վերկացա, լուսամուտից նայեցի փողոց, ոչ մի անցուդարձ: Արդեն մի օր է, ինչ ես բաժանվել էի իմ հարազատներից: Ինձ տանջում էր սիրելի եղբայրս՝ Մակիչը, նրա քաղցր ձայնը կանչում էր՝ Միհրա՜ն, Միհրա՜ն: Ինձ ճգում էր մեր տունը. չէի պատկերացնում, որ դատարկ էր, ուզում էի գնալ, մտնել, տեսնել, կարոտս առնել: Այգու կողմի լուսամուտից ստուգելով և համոզվելով, որ վտանգ չկա, այգիների միջով անցա դեպի պապոնցս տունը: Անցնում էի լուռումունջ տների տանիքներով, տեսնում այգիների պտուղներով լիքը ծառերը՝ կեռասը թորշմած, ծիրանը հասած, խնձորենին գլուխը խոնարհած: Երբեմնի ինձ հրապուրող ծառերը այդ օրը ինձ երևացին սգի մեջ, լուռ ու թախծոտ լաց էին լինում՝ փսփսալով իրար հետ: Նայում էի սառած աչքերով, հուզվում և ինքնակորույս շարժվում, բնազդաբար գնում, թե ու՞ր, ինքս էլ չգիտեի: Հաճախ էի հանդիպում դիակների՝ գայլերի ու շների կողմից այլանդակված և բզկտված:

Լուսադեմին հասա պապոնցս տուն: Ամեն ինչ տակնուվրա էր արված, բայց փողերի տեղը չէին գտել: Դռները բաց էր, շարժական գույքը տարել էին մոտակա թուրք հարևանները, բայց գաղտնի պահոցի պատը չէին իմացել: Դժբախտ քեռիս իր ունեցած հարստությունը թաքցրել էր թոնրատանը կից հինավուրց մաղարայի մեջ և դուռը շարել էր ու ծեփել: Մոտ մի ամիս առաջ էր, որ լուսամուտից նայում էի դարբին Մամփրեի վառված տանը: Ցերեկը մնացի լուսամուտին կռթնած և երեկոյան, այգիներով անցնելով՝ կես գիշերին հասա հորեղբորս տուն: Դուռը բաց էր: Ոչ մի բանի ձեռք չէր տրված: Շների հաչոցից կասկածելով՝ դուրս եկա բակ և բարձրացա թթի ծառը: Շների ոհմակը ծառը շրջապատեց: Մեր հարևանների շներն էին, որոնք սովածությունից դիակներ էին ուտում և հարձակվում՝ իրենց հետապնդողներին բզկտելու: Շների հաչոցը ինձ սթափեցրեց, ծառի վրայից նկատեցի երկու ժանդարմների, որոնք դեպի վերև էին բարձրանում: Կանչեցի շներին: Հորեղբորս Արաբ շունը կաղալով գլուխը վեր բարձրացնելով՝ կաղկանձեց, մյուսները հարձակվեցին մոտեցող ժանդարմների վրա: Օգտվելով առիթից՝ ակնթարթորեն ծառից իջնելով, վազեցի դեպի վերև և կուչ եկա Գարաքանչալյանների տան անկյունում: Հա-

մոզվելով, որ ո՛չ շները, ո՛չ մարդիկ ինձ չէին նկատել, մոտեցա լուսամուտին և սկսեցի դիտել շների ու ժանդարմների պայքարը:

Երեկոյան գնացի Սարոյենց այգին, այնտեղից բարձրացա ջաղացպան Ասպատուրի այգին: Դարպասը պինդ փակած էր, բակում՝ ծառերի վրա, հավերը կչկչացին: Մոտեցա այգու պարսպին և մագլցելով բարձրացա: Տեսա մի փոքր տղայի կիսամերկ մարմին՝ սևացած, ուռած: Պատից թռնելով՝ մոտեցա նրան ու այս պահին ակամա, ուղղակի հիպնոզացած, կանգնեցի տղայի դիակի մոտ: Նա ընկած էր իրենց տան բակում. գլխի մազերը՝ խուճուճակ, շեկլիկ, դեմքը՝ գերող, այրող, հասակը՝ մոտ վեց տարեկան, աչքերը փակ, մի թևը գլխի տակ՝ պառկած էր: Օ՜հ, ինչքան նման էր իմ եղբորը՝ Մակիչին, ուզեցի գրկել, բայց մարմինը հոտած էր: Նրա մարմինով հրապուրված՝ մի բոպե ինձ թված, թե եղբայրս էր: Ճչալով ընկա վրան, գրկեցի չոր գլուխը, համբուրեցի: Հանկարծ ես ինձ զգացի երազի մեջ. եղբորս գրկած՝ միօրյա բացակայության կարոտն էի առնում: Այս մելամաղձային վիճակում, երեխային կրծքիս սեղմած, հանկարծ մի ձայն լսեցի: Ձեռքերով փորփրեցի գետինը, այլանդակված մարմինը հողով, տերևներով ծածկեցի և քարացած կանգնած լուռ նայեցի: Սարսափած թողեցի «եղբորս» գերեզմանը և երկյուղով հետևեցի ձայնին: Այդ պահին ինձ գրկեց մի անձնավորություն՝ կանացի ձեռքերով մի հուժկու մարդ, առանց մի խոսքի տարավ մոտ հինգ քայլ հեռու գտնվող հարևան տան ներքնահարկը: Սառան էր:

Լվալով ձեռքերս, երեսս ու գլուխս, սիրալիր հարցրեց իմ փախուստի մասին, թե որտեղի՞ց էի եկել: Մենք իրար հեռվից գիտեինք: Նա Արաբու կամրջում մորիցս իմացել էր մեր սարը բարձրանալու և անհույս վերադարձի մասին: Ես պատմեցի նրան և խնդրեցի, որ թույլ տա երեկոյան գնամ երեխային, որ եղբորս շատ նման էր, հողով ծածկեմ: Անունս տալով՝ նա պինդ գրկեց ինձ ու տխուր ասաց, որ գիշերը միասին կթաղենք: Միասին հաց ուտելուց հետո, ինձ քնեցրեց: Նա ուշադիր հետևում էր ամեն մի շշուկի, անընդհատ լուսամուտից լուսամուտ մոտենալով դիտում, հետևում: Ուշ երեկոյան՝ մոտ երեք ժամ քնելով, շշուկներ լսելով արթնացա և սկսեցի խորամանկորեն դիտել նրան: Այս մարդը, որ մի քանի ժամ առաջ ինձ գրկելով բակից տուն բերեց, անդադար գործում էր իր խորհրդավոր մենակության մեջ: Այդ ժամանակվա ընթացքում նա ինձ համար կարել էր թուրքական՝ տաճկական ձևի վարտիք /թումբան, շալվար/ և իշլիկ /պլուզ/, նա փոխեց մինչ այդ հագած ու պահած հորս գլխարկը: Հագցնելով ինձ՝ մայրական սրտով համբուրեց:

Մենք գտնվում էինք այգիներով ու տներով շրջապատված Մռտոյենց[99] Մանուկի մոտ տասներկու սենյակներից բաղկացած տանը: Տան մի մասը երկհարկանի, գաղտնի անցքերով, միջանցքներով յոթ-ութ սենյակներից էր բաղկացած և պատկանում էր ոսկերիչ Գևորգ աղային: Այդ տունը մեր թաղի խորքում, բարձունքին, սարի լանջի մոտ էր գտնվում, զերծ էր թալանչի թուրքերից և ժանդարմների հսկողությունից, քանի որ թաղամասը ոչ մի կասկած չէր հարուցել: Ես նրան տեսա որպես տղամարդ, բայց երեկոյան, երբ նա ինձ տարավ մի ուրիշ սենյակ և ասաց, որ մինչև կեսգիշեր պետք է քնենք, ես նկա-

տեցի, որ նա կին էր: Մենք պառկեցինք միասին մի անկողնում: Նա իմ անունը տվեց և ավելի հպվելով ինձ՝ գրկեց, համբուրեց և ասեց, որ քնեմ: Կարծելով, որ ես քնած էի՝ այս կինը վեր կացավ կեսգիշերին մոտ, նավթի ճրագը վառելով, հագավ կանացի շորեր՝ թուրքական տարազ, ատրճանակը գրպանը դրեց, մի քանի փամփուշտ՝ մյուս գրպանը, ապա կապոցի մեջ դրեց մի գլխարկ, շալվար ու պիջակ, թուրք կնոջ նման չադրայով փաթաթվեց և ուզեց դուրս գալ: Ես չհամբերեցի, վեր թռա տեղիցս: Տեսնելով ինձ՝ հետ եկավ, թե՝ դու քնիր մինչև իմ գալը, ապա մոտեցավ ու հանձնարարեց լուսամուտի մոտ սպասել մինչև իր վերադարձը: Ես հանդգնեցի: Անունս տալով ասաց.

-Ես իջնելու եմ գերեզմանները, այնտեղ մեկին եմ սպասում, ուշացել է:

Հակառակ նրա ցանկության՝ առանց խոսքի հագնվեցի, մոտեցա նրան և պնդեցի, որ միասին ենք գնալու: Ձեռքը թևիս դնելով՝ ահեղ ցասումով զգուշացրեց, որ կարող է կռվի բռնվենք ժանդարմների հետ: Գուշակելով այդ անվրդով հայացքը և վճռականությունը՝ քաջալերվեցի և ուզեցի իր մոտ եղած ատրճանակներից մեկը: Մի պահ շուռ եկավ դեպի ինձ, խորասուզված հայացքով կշռադատելով՝ նա միայն հարցրեց.«Կարո՞ղ ես կրակել»: Ես գլխի շարժումով պատասխանեցի: Ներս գնաց, մեկ-երկու րոպե անհետանալուց հետո՝ բերեց մի փոքր ատրճանակ /Բրավնիկ/ տասնչորս-տասնհինգ փամփուշտով: Ես իր ներկայությամբ յոթ փամփուշտը տեղադրեցի և մնացածը գրպանս լցրեցի: Միասին շարժվեցինք: Ճանապարհին իջնելիս ասաց.

-Եթե ժանդարմներ պատահեն, աշխատիր խուսափել, չերևալ, այս մոտիկ տների փողոցներում նրանց կասկածի տակ չգցենք: Կարելի է հետապնդել մինչև թուրքի գոռները /գերեզմանները/, որովհետև, երկու կողմերից էլ որ նրանք գան, վերջը գոռներով են անցնելու:

Լուսամուտից այգուց այգի իջանք, հասանք գերեզմանների մոտ՝ Սարոյենց տուն: Դիմացը մեծ գերեզմանների դարավոր թթի ծառն էր: Սարոյենց տան աստիճաններով իջնելով՝ անցանք ճանապարհը և մտանք գերեզմանների արանքը: Երկու-երեք հարյուր մետր հեռավորության վրա թուրքերի թաղերն էին, գերեզմաններից ներքև՝ թուրքերի գերեզմանոցը */գոռները/*: Նա շարունակ նայում էր դեպի թուրքերի թաղը: Ես, նրան մորքուր ասելով, ուզեցի իմանալ մեր անելիքը: Համբերությունս հատած հարցրի.-

Մորքու՛ր, ու՞մն ենք սպասում, ի՞նչ ենք անելու:

Նա կարճ պատասխանեց, ձեռքով ցույց տալով.

-Այս կողմից՝ թուրքի թաղից, երկու կին պետք է գա:

Նա ինձ ապսպրեց պառկել քարերի արանքը.

-Դու մտիր այս գերեզմանների արանքը, սպասիր,-իսկ ինքը կուզեկուզ քարերի արանքով հեռացավ ինձնից՝ մոտենալով թուրքի թաղին: Մենք հեռացանք իրարմե մոտ հիսուն քայլ:

Մութ խավար էր, տագնապալի գիշեր: Տիրում էր անդորր, լռություն: Երկնքում աստղերը պեծպծում էին, փայլփլում ու ժպտում, իսկ ներքևում՝ մեզ մոտ, տաղտկալի ու խավար գիշեր էր:

Վայրկյանները, րոպեները անցնում էին, ինձ թվում էր, օրեր էին անց-

նում: Հետևեցի մորաքրոջ շարժումներին, նայեցի մորաքրոջը և նկատեցի. ինձ ձեռքով զգուշացրեց, որ պառկեմ: Նայեցի հակառակ կողմը: Լսվեցին ոտնաձայներ, գաղտագողի նայեցի: Ճանապարհին խավարում երևացին երեք խրտվիլակներ՝ ստվերներ: Զգացի, որ մորքուրը նրանց ավելի շուտ էր նկատել: Նորից պառկեցի գերեզմանաքարերի միջև, սողալով մոտեցա մորքուրին, զգուշորեն նայեցի. մորքուրը չէր երևում: Ես սպասում էի մորաքրոջ հրամանին, որ կրակեմ: Ինձ, մորաքրոջը և շարժվող անձնավորություններին բաժանում էր 100-150մ եռանկյունի հեռավորություն: Ժանդարմներ էին: Ժանդարմները մոտեցան, նրանք իրար հետ խոսելով գնում էին՝ կատարելով գիշերային պահակություն: Ահա նրանք եկան, անցան երկու-երեք քայլ, ինձ շատ հարմար էր նրանց հետևից խփել, բայց ինչքան նայեցի՝ մորքուրը չերևաց: Ժանդարմները մոտ տասը քայլ հեռացել էին, երբ նկատեցի, որ թուրքի թաղից երեք հոգի մոտեցան մորաքրոջ կողմը: Նույնը նկատեցին ժանդարմները և զգուշության համար ձեռքերը մեկնեցին ատրճանակներին: Երևացող երեք ուրվականներից մեկը անմիջապես հետ գնաց, իսկ մյուսները, որոնք նկատել էին ժանդարմներին, նրանցից խուսափելու համար՝ թեքվեցին դեպի գերեզմանները: Լսեցի դեպի մորաքույրը գնացող երկու ժանդարմների գոռոցը.«Ո՞վ է այստեղ, ո՞վ եք»: Ոչ մի պատասխան: Ձեռքերը դեպի ատրճանակը տանելով՝ պոռացին՝ կանգնիր: Մորաքույրը, առանց հապաղելու, մի ակնթարթ իր տեղից կանգնեց, բայց ոչ նախկին շորերով և մոտեցավ իրեն նկատող ու հետապնդող մարդկանց, որոնց ես մոտիկից տեսա: Երկու անձերը անհետացան գերեզմանաքարերի արանքում: Մորքուրը անդրդվելի կանգնեց: Ժանդարմները ատրճանակները ձեռքներին նորից գոռացին: Մորքուրը, մի ակնթարթ կանգնած մնալով, ձեռքը իմ կողմը պարզելով՝ պոռաց՝ անունս տալով.

-Միհրա՛ն, մի վախի՛ր, կրակիր,-և պառկեց:

Երկու ժանդարմները գերեզմանաքարերի վրայով մոտեցան մորաքրոջը, մյուսը՝ մեջտեղինը, իմ կողմից եկավ և կողքիցս ուզում էր անցնել՝ ինձ չնկատելով: Պառկած տեղիցս վեր թռչելով և ծնկաչոք մոտենալով, կրակեցի՝ առաջին փամփուշտը արձակելով նրա մեջքին, նա ընկավ իմ կողքին: Մինչև նրանց ետ դառնալը՝ ես նորից պառկեցի քարերի արանքում: Այդ րոպեին որոտաց մորաքրոջ ատրճանակը: Լսվեց ևս չորս կրակոց՝ ևս երկու զոհ: Կարծես թե ոչինչ չէր պատահել, նրանք երեքով մոտենում էին ինձ: Մորաքույրը, ինձ կանչելով, ասաց.

-Շուտ վազիր դեպի այգին և սպասիր մեզ:

Առանց խոսքի մենք շարժվեցինք դեպի վեր: Ես շարժվեցի դեպի գերեզմանների սգավոր մենավոր թթի ծառը՝ արկածախնդիր մորաքրոջը սպասելու: Հազիվ էի թիկնել ծերացած թթենուն և աչքերս հառել չորս կողմ, երբ հանկարծ նկատեցի երկու կանանց շտապողական մոտենալը: Նրանք կանչեցին՝ Սառա՜, և առանց նրան մոտենալու՝ եկան իմ կողմը: Սառան, բաժանվելով գնաց ժանդարմների կողմը, և առանց ժամանակ կորցնելու մոտենալով սպանվածներին՝ վերցրեց նրանց փամփուշտները և լուցկին վառելով՝ ստու-

գեց դեմքերը: Նա ճանաչեց այն քոմսերին, որն սպանել էր իր ամուսնուն: Մորաքույրը արագորեն մոտեցավ մեզ, և մենք՝ չորսով, նույն ճանապարհով գնացինք մեր իջևանը:

Մորաքույրը և այս երկու կանայք ճամբարից փախել էին երկու օր առաջ: Ինչպես պարզվեց, մորաքույրը՝ ինքը Սառան էր: Արաբու կամրջի ճամբարից, գետի միջով փախչելու ժամանակ պահակների հետ ունեցած ընդհարումից ազատվել էին տասներկու կին, որոնք, կրկին հանդիպելով Ավելմեյդան թաղի գիշերային պահակներին՝ զոհվել էին, նրանցից այս մի քանիսն էին հազիվ-հազ, գերմարդկային ճիգերով փախել ու ապաստանել վերոհիշյալ «ամրոցում»: Ապաստանելով այս դարավոր կառույցում՝ նրանք ուխտել էին՝ ինչքան հնարավոր է արագ վրեժ լուծել: Սառան ոգևորում էր ընկերուհիներին և նրանք երդվում էին իրենց զոհված զավակների արյունով վրեժ լուծել: Սառան կրկնում էր, որ միևնույն է, իրենց սպանելու են, փրկություն չկա, բայց պետք է սպանել, այո՛, սպանել, հետո սպանվել:

Մի օր առաջ Սառան, գիշերը ծպտված կերպով, գնացել էր իրենց վաղեմի ծանոթ հաջի[100] Նուսրութի մոտ, նրան խոստանալով ամեն մի աջակցության համար յուրաքանչյուրից տասը ոսկի: Չնայած հաջին առարկել էր, Սառան նրան, հիսուն ոսկի միանվագ տալով, պայմանավորվել էր երկու օրվա ընթացքում ձեռք բերել թուրքական կանացի հագուստներ և այլ իրեր: Սառան նույն գիշերը վերադարձել էր, իսկ երկրորդ գիշերը երեքով էին գնացել: Հաջի Նուսրութը, ըստ պայմանավորվածության, իրենց դիմավորել էր ախոռատանը: Սառան, նորից քսան ոսկի տալով հաջուն, որ երկրորդ օրը կանանց ուղեկցի մինչև գերեզմանները, վերադարձել էր՝ սպասելով ընկերուհիների հետ գերեզմանոցում հաջորդ գիշերվա հանդիպմանը:

Մենք արդեն տեղավորվել էինք մեր կացարանում, որը ինչպես վերը նշեցի, Մռտեյ Մանուկի հնադարյան տունն էր: Այդ դեպքից հետո մենք գնացինք նույն տունը: Սառան ասաց, որ երկու օր մենք դուրսը չպետք է երևանք: Ինչպես սովորական հայկական օջախ, այդ տան մառանը լիքն էր սննդամթերքով: Ներքնահարկում կար ջրի հոր, որի ջուրը հողե խողովակով գալիս լցվում էր գուռը և այնտեղից հոսելով՝ գնում էր չգիտեմ թե ուր: Կանայք լողացան, ինձ էլ լողացրին: Կարծես ոչինչ չէր պատահել, պատրաստվեցինք քնելու: Խաղաղ, անդորր գիշեր էր, քնեցինք անկողիններում: Սառան անհանգիստ էր, անընդհատ դուրս-ներս էր անում: Համոզվելով, որ մենք քնած ենք, անցավ կողքի սենյակ, լամպը վառեց և սկսեց դեմքը ներկել:

* * *

Հաջորդ օրը Սառա մորաքույրը մեզ քաջալերեց կռվել:[101] Նրա դրույթներն էին. «**Սպանել և հետո սպանվել**»: Խոսակցությունից պարզվեց, որ նա ճշտել և համոզվել էր, որ այդ օրը երեկոյան հյուքյումեթում ինչ-որ խորհրդակ-

ցություն էր տեղի ունենալու, որին մասնակցում էր Վանից գաղթած մի ղայմակամ՝[102] Սուլեյման էֆենդին, որը գոմերում վառել էր տվել Վանա լճի մերձակայքի՝ Դատվան, Կամախ և Պոռ հայոց գյուղերի բնակիչներին՝ կանանց, երեխաներին, ծերերին: Պարտվելով վանեցիներին՝ իր վրեժը լուծեց՝ կանանց ու երեխաներին մորթելով: Շատ երեխաների իր ձեռքով էր մորթել: Եվ Սառան հանկարծ պոռթկաց.«*Նա հայի արյուն խմող է*»: Երեկոյան Սառան սկսեց անցուդարձ անել, խոհում, մտածում էր՝ ինքն իր մեջ ինչ-որ ծրագիր մշակելով: Այդ հանդուգն կինը վախ, երկյուղ չուներ: Ուշ երեկոյան վեր կացավ և վերջապես դառնալով դեպի մեզ՝ ասաց.

-Մարթա՛, բարձրանանք վերևի սենյակ,-իսկ մեզ, զգուշացնելով սպասել մինչև իր վերադարձը, մեզանից բաժանվելով՝ բարձրացավ և դուռը ծածկեց: Նրանք երկուսով գնացին:

Նանեն ու ես, այդպես էի կոչում երրորդ կնոջը, քանի որ նա մորս նման էր,[103] սպասողական վիճակում, մոլորվածի նման, տխրադեմ, լուռ ու անձայն իրար էինք նայում: Այլևս չկարողանալով համբերել՝ ես բարձրացա և սենյակի դուռը բանալով՝ տեսա Սառային՝ հայելու դեմ կանգնած, կերպարանափոխվելով: Նկատեցի հատակին թափված մազերը: Սառան ինձ նկատելով՝ համոզիչ ձայնով ասաց, որ ներքև իջնեմ: Ես մի պահ անհարմար զգացի, շուռ եկա և անցա կից սենյակի լուսամուտի մոտ: Քիչ անց, ոտնաձայն լսելով՝ նորից ներս մտա: Տեսա գեղեցիկ արտաքինով, սիրուն բեղերով, ֆեսը գլխին դրած Սառային՝ փոլիսի կոկիկ հագուստով, սենյակում անցուդարձ անելիս: Զարմանքով լարելով ուշադրությունս՝ հազիվ կարողացա համոզվել, որ փոլիսը Սառան էր: Սառան, ինձ տեսնելով, ժպտաց ու հարցրեց.«Միհրա՛ն, ինձ սազու՞մ է»,-և նորից սկսեց անցուդարձ անել, երկու-երեք անգամ գնաց-եկավ սենյակում և լամպը մարելով՝ դուրս եկավ:

Վերջացած համարելով իր գործը՝ կանչեց Նանեին և ողջագուրվելով՝ ուզեց դուրս գալ: Մինչ նրա կերպարանափոխվելը ես հագել էի իմ նոր շորերը և հետևեցի նրան: Պոռթկալով հայտնեցի, որ ես էլ եմ իր հետ գալու: Նա կտրուկ մերժեց, թե վտանգավոր է, ինքը կարող է ետ չվերադառնալ: Այս խոսքը ինձ շատ վիրավորեց, և ես երեկոյան հայտնեցի, որ անպայման իր հետ կգնամ: Նանեն նույնպես հավաստեց, որ մենակ չգնա: Այս հանդուգն կինը առնական քայլերով սկսեց անցուդարձ անել, մի քանի անգամ մոտենալով հայելուն՝ ինքն իրեն էր դիտում, ուղղում էր ֆեսը, կողքից կախված սուրը, շոյում բեղերը: Սառան դարձավ դեպի կանայք և հուզված ասաց.

-Ես գնում եմ սպանելու և կարող է սպանվեմ, դա իմ փույթը չէ, դուք չմոռանաք մեր ուխտը,-և նորից փաթաթվելով՝ լուռ բաժանվեցինք:

Այս երեք կանայք դեռևս ճամբարում և հավաքման կետերում էին ծանոթացել, և, շնորհիվ Սառայի համոզիչ խոսքերի, նրանք երդվել էին իրենց երեխաների, հարազատների անունով, ուխտել էին սպանել, հետո սպանվել: Ճամբարում էլ բոլորը խոսում էին Վանից[104] եկած ղայմակամի բարբարոսության մասին: Նրա պահանջով ու ներկայությամբ Դատվան,[105] Փափշեն,[106] Պոռ, Կամախ[107] գյուղերի կանանց, երեխաներին ու ծերերին հավաքել, կենտ-

ռոնացրել էին մի տան մեջ և սրախողխող անելով՝ այրել, վառել: Այո՛, նրա անունը սարսափեցնում էր մեզ բոլորիս: Չհագենալով հազարավոր կանանց ու երեխաների արյունը թափելուց, նրան էին հանձնարարել Արաբու կամրջի գաղութի՝ մահվան ճամբարի բնաջնջումը, որը կատարեց մի քանի ժամվա ընթացքում, տեղափոխելով մոտ մեկ կմ հեռավորության վրա՝ մոտակա սարերի արանքում, կենդանի-կենդանի հրելով ձորն ի վար, շատերին կիսամեռ՝ իրար վրա թափված թողնելով: Այո՛, նրա դաժան զոհը դարձան մայրս, քույրս, սիրելի եղբայրս, որը մինչև հիմա կանչում է.«Միհրա՜ն, Միհրա՜ն»:

Սառան, մինչ իմ գալը, երեք բախտակից ընկերուհիների հետ ռիսկի գնալով, դիմել էր հաջի Սուլեյմանի օգնությանը՝ խոստանալով թեկուզ ֆեսով լիքը ոսկի: Սառային հաջողվեց հաջի Սուլեյմանից տեղեկանալ ղայմակամի բնակարանի մասին և այլ մանրամասնություններ: Երեք կանայք իրենք-իրենց քննել, որոշել էին իրենց անելիքը, ինձանից գաղտնի, գուցե և, խնայելով իմ կյանքը, բայց, բարեբախտաբար, ինձ հաջողվեց մասնակցել Սառայի դիվային մտահղացումների իրականացմանը: Վանից եկած ղայմակամը /հրամանատար/ ապրում էր հաջի Սուլեյմանի տանը:

Ես հպարտացա, երբ լսեցի նրա կտրուկ համաձայնությունը.«Լա՛վ, միասին կգնանք»: Անմիջապես հագնելով նոր շորերը՝ պատրաստվեցինք դուրս գալ: Նախքան փողոց դուրս գալը, նա շոշափեց իրեն, հետո դուրս եկանք բակ: Տնից դուրս գալիս, լսելով իմ ոտնաձայները ետ նայեց: «Սառա՛, ես եմ»: Նա խոհեմաբար լռեց, ձեռքը դրեց գլխիս ու ասաց.

Ես պետք է գնամ հաջի Սուլեյմանի մոտ, պետք է անցնենք թուրքական թաղերով:

Տղամարդու նման նա հանեց արծաթյա «Սարկիսով»[108] ժամացույցը և լուսնյակի լույսով նայեց.

-Ժամը ինն է, նրանք *մեջլիսից* դուրս կգան մոտավորապես ժամը ինն անց կես կամ տասին:

Համարձակ քայլերով գերեզմանների ճամփով դեպի ներքև իջնելով՝ հանդիպեցինք կամրջի վրայով անցնող թուրք մուհաճիրներին՝ գաղթականներ, որոնք փոլիսին տեսնելով՝ մոտեցան օգնություն աղերսելու: Սառան զուսպ և անխոս անցավ այդ անջրպետը: Անցանք կամուրջը և Կարմրակի տակի գլխավոր փողոցով գնացինք դեպի *հյուքյումեթ*: Բարձրանալով և հրապարակ՝ *կոկմեյդան* հասնելով՝ թեքվեցինք և մոտեցանք Գոմաց թաղ տանող ճանապարհին: Հետախուզելով մեր շրջապատը՝ նկատեցինք մի այգեպանի, որը ոտքերը քշտած, բոբիկ, բահը՝ ուսին այգին էր ջրում: Մինչ այդ ոչ ոք չհանդիպեց: Մեզ տեսնելով սալամ /ողջույն/ տվեց, նայեց և դողդողալով առվի ջուրը սկսեց շուռ տալ, խղճուկը վախեցավ դիտողությունից, կարծես հանցանք էր գործել: Ուշադրություն չդարձնելով՝ մենք շրջվեցինք ու հետևի նեղ փողանով մոտեցանք այգու անկյունին, որտեղից լավ երևում էր հրապարակի շարժումը՝ երթուգալը: Սառան մի քանի քայլ առաջ շարժվելով՝ կանգնեց, գրպանից մի սիգարեթ հանեց և լուցկին վառելով՝ թեքվեց սիգարեթը վառելու՝ ուշադրությունը բևեռելով հյուքյումեթից դուրս եկող գնացողներին, որոնք հրա-

պարակի կեսից սկսեցին երկու-երեք հոգով շարժվել տարբեր ուղղություններով՝ դեպի իրենց տները:

Ղայմակամը երկու հոգով թեքվեց հաջի Սուլեյմանի տան ճանապարհով: Մենք, խույս տալով, անցանք կողքի նեղ փողոցը և թուրքերի տների կողքով ու բակերով գնացինք հաջի Սուլեյմանի բակը: Սառան ինձ զգուշացրեց թաքնվել ծառի ետևում և զգաստ մնալ: Սառան հանգիստ քայլերով շրջեց տան և այգու շուրջը և ինձ նայելով՝ մատով ցույց տվեց անցնել այգու պատի անկյունը: Ինքը հայաթից դուրս եկավ, անցավ հարևան տան ետևը, թաքնվեց: Տաս րոպեից ուրվագծվեցին երեք ստվերներ: Դեպի մեր կողմը գալիս էին երեք հոգի՝ մեկը ղայմակամն էր, մյուսները անծանոթ զինվորներ էին: Մոտենալով հաջի Սուլեյմանի տանը, ղայմակամը ուղեկցող զինվորներին բարի գիշեր մաղթելով՝ բաժանվեց նրանցից: Երկուսը հետ գնացին: Ղայմակամը արագ-արագ քայլերով շտապեց դեպի տուն՝ Սառային հանդիպելու: Մոտ հարյուր մետր էր հեռու Սառան, որի սիրտը բաբախում էր ինչպես մի հնոց, աչքերը կայծկլտում էին: Նա անմիջապես քայլեց դեպի դարպասը և պոռաց.*«Էֆենդի՛, պուռ»*: Ղայմակամը, տեսնելով փոլիսին՝ Սառային, շփոթվեց՝ կարծելով, թե իր ուղեկիցներն էին, գնաց Սառայի կողմը: Սառան հետադարձ հինգերորդ քայլին դեմ առ դեմ կանգնելով՝ ձայնեց՝ էֆենդի՛, և երեք կրակոցով պսակեց ղայմակամին:

Ես հետևում էի Սառային: Նա առանց ձայնի՝ ինձ ձեռքով կանչեց և գնալու նշան արեց: Ես հետևեցի նրան: Մենք շատ հանգիստ գնացինք ղայմակամի եկած ճամփով, նկատեցինք ղայմակամին ուղեկցողներին, որոնք գնացին իրենց ճանապարհով, իսկ մենք մեր եկած ճամփով թեքվեցինք դեպի Ծապրկորի թաղը և գնացինք մեր տուն: Տուն հասնելով՝ Սառան, նայեց ժամացույցին, երկու ժամ էր տևել մեր բացակայելը. երկու ընկերուհիները խոր քնի մեջ էին: Սառան մտնելով իր սենյակը՝ փոխեց հագուստը, մոտեցավ ինձ, ջերմ համբուրեց: Քնեցինք: Առավոտյան երկու կանանց՝ Մարթային և Զանոյին ուղարկեց հաջի Սուլեյմանի տունը, նրանց սպասելու էինք երեկոյան մթնելիս: Սառայի հետ նստած էինք թախտին: Նա ինչ-որ դեղորայքի, ներկերի փաթեթներով էր զբաղված: Լուսամուտից գաղտագողի նայում էի դուրս՝ դեպի դեմի այգիները, ծառերին, ամեն ծակ ու ծուկ: Ոչ մի շարժում, անդորրություն է տիրում: Հանկարծ ինչ-որ ձայներ լսվեցին, իսկույն մոտեցա Սառային, հայտնեցի: Սառան մի երկու վայրկյան ուշիուշով հետևելով՝ ժպտաց և ասաց, որ ծառերի վրա թառած հավերն են կչկչում կողքի տան բակերում և շուռ գալով դեպի ինձ՝ խնդրեց անմիջապես դրանց վերացնել, քանի որ դրանք վտանգավոր էին, կարող էին գրավել ասքյարների ուշադրությունը:

Ինձ ճգում էր մեր տունը: Մեր լուսամուտից մոտ 150-250 մ հեռավորության վրա՝ ներքևում մեր տունն էր, ուզում էի գնալ տեսնել, խմել մեր տան դիմացի Լոռոյ աղբյուրից: Մի պահ ինձ թվաց, թե ծնողներս տանը սպասում էին, լսում էի սիրելի եղբորս լացակումած ձայնը, որը կանչում էր, հալածում.«Միհրա՜ն, Միհրա՜ն», և այդ պահի ազդեցության ներշնչումով՝ վազքով իջա այգի, պատից ցատկելու պահին մի հուժկու ձեռք թիկունքիս հպվելով հետ քաշեց:

Սառան էր: Նստեցինք մի դարավոր թթենու տակ՝ լուռ ու մունջ: Սառան չթողեց, բացատրելով, թե մեր տունը Լոռոյ աղբյուրի կուլուխի մոտն է, հարևանները թուրքեր են, ինձ կտեսնեն, կճանաչեն, իսկույն կբռնեն: Իրոք, որ այդպես էր, բայց չէ որ ես մանկությանս օրերից խաղացել էի թուրք երեխաների հետ, շատ անգամ մի պնակից էինք կերել: Մեր ծնողները բարիդրացիական, լավ վերաբերմունք ունեին: Կսկծալի /դառը/ մտորումների, հիշողությունների մեջ ընկղմված՝ հիշեցի ծուռ Մժոյին: Չնայած նա բեղով, փոքր մորուս ուներ, բայց միշտ սիրալիր էր մեզ՝ երեխաներիս հետ, մեզ հետ խաղ էր անում, խոսում էր հայերեն, քաղցած լինելիս հաց էր ուզում և գրեթե միշտ սնվում էր հայ հարևանների մոտ: Ես նկատել էի, որ հայերին տներից տանելիս նա դիմադրում էր, կռվում, քարով խփում զաբթիաներին:

Հանկարծ Սառան ժայթքեց և ինձ պինդ գրկելով՝ սեղմեց իրեն ու հորդառատ արցունքներով հեկեկալով խոր վստահությամբ ասաց.

-Վե՛ր կաց, Միհրա՛ն, արցունքն ու կարոտը ոչինչ չեն վճռում: Ձեր երբեմնի «բարի» թուրք դրացիներն են ձեր տունը թալանել, ուրախացել. նրանք միայն մեր հյուրասիրությունն ու փողն են սիրել:

Սառային հայտնեցի մեր տունը գնալու ցանկությունս: Կարոտից մի այնպիսի պահանջ զգացի տեսնելու այդքան մոտիկ և անչափ հեռու մեր տունը. այդ պահին երևակայությունս պատկերացրեց թաղի տղաներին, որոնց մեծ մասը թուրքեր էին, ինչքա՜ն սիրալիր էինք, խաղում էինք, կռվում, վիճում, միասին ուրախանում: Սառան, կռահելով իմ մտքերը, ձեռքը մեկնելով ինձ, քաշեց դեպի իրեն, իր մեղմ գորովալի աչքերով կաշկանդեց ինձ, նստեցրեց կողքին և գլուխս շոյելով՝ ասաց.«Քնի՛ր, հանգստացիր», և նորից կրկնեց.«Սպանի՛ր, որ չսպանվե՛ս»: Այս խոսքերը վաղուց էին թափանցել ուղեղս, իսկ հիմա նրանց ազդեցությամբ, գլուխս Սառայի ծնկին դրած, նիրհեցի: Արթնացա, երեկո էր: Նայեցի կողքերս՝ Սառան չկար, ինքս զինքս մեղադրելով խորը քնելու համար, իսկույն տուն մտա, կամացուկ մոտեցա իր սենյակին, դռան արանքից նկատեցի, որ հայելու դեմ նստած մազերն էր կարգի բերում,[109] քթի տակ բեխեր կպցնում /նա արգելել էր իր սենյակ մտնել/: Վեր կենալով՝ հասակով մեկ կանգնեց հայելու դիմաց՝ հասարակ ասքյարի շորեր հագած, գլխին մի հին ֆես դրած: Կողքի պահարանի դարակից հանեց ատրճանակը, ստուգեց, փամփուշտավորեց և մի քանի հատ փամփուշտ էլ գրպանը դրեց: Շուռ գալով դեպի դուռը՝ ինձ նկատեց, ես սկվեցի: Նկատելով իմ շփոթվածությունը՝ քնքշաբար շոյեց գլուխս, ասելով.«Շա՜տ անհանգիստ ու հետաքրքրասեր տղա ես»:

Մութն ընկել էր, աստղերը փայլատակում էին: Մեր որոշման համաձայն՝ ես պետք է գնայի մեր տան կողմը, իսկ Սառան պետք է դիմավորեր ընկերուհիներին: Բաժանվելիս ինձ հիշեցրեց հավերի մասին: Տնից դուրս եկա և պատից պատ մագլցելով՝ անցա բակից բակ: Հարևան տան բակի ծառերի վրա թառած անտեր, քնաթաթախ հավերին բռնեցի ու տոպրակի մեջ տեղավորելով՝ շալակած, հնարավորին չափ արագորեն բերի և տոպրակը շուռ տվի թոնիրի մեջ ու ծածկեցի բերանը: Մոտեցա Սառային, նա քսակով փող տվեց և

կրկին հանձնարարությունը հիշեցնելով զգուշացրեց.*«Կողմնակի անձանց, մեր թաղի ծանոթներին չհանդիպել»*: Ուրախանալով, որ տուն եմ գնալու՝ ինձ կարգի բերեցի, պայմանավորվեցի վերադառնալ հաջորդ երեկոյան, վերցրի Սառայի տված քսան ոսկին, մթնշաղին դուրս եկա և ուղևորվեցի մեր տան կողմը: Մագնիսական ուժը ինձ ձգում էր դեպի մեր տունը: Հասնելով հորեղբորս տուն՝ ուզեցի ներս մտնել: Դուռը բաց էր, ներս մտա: Անկողիններն ու կահկարասին տարել էին, իրերի մեծ մասը չկար, մնացածը թափթփված էր: Գնացի հորեղբորս դիակի մոտ: Հորեղբորս դիակը տեսնելով՝ մոտեցա. շները բզկտել էին: Արաբ անունով շունը կողքին պառկած՝ ինձ տեսնելով աղիողորմ կլանչեց, գլուխը բարձրացրեց ու լռեց: Տեսարանը զարհուրելի էր: Ես իմ սիրելի հորեղբորը չկարողացա համբուրել: Դիակը որդնել էր: Գնացի մեր տան կողմ, մտա մեր բակը, մեր տան դուռը փակ էր: Նեղ լուսամուտի ճաղերից ներս մտա մեր թուրք հարևանի ներքնահարկը՝ մառանը և մինչ լուսանալը մնացի այնտեղ:

Առավոտյան նկատեցի, որ մեր տանը բնակվել էին, մեր ներքնահարկի թուրք հարևանները՝ Եվա բաջին /Եվա քույրիկ/ և իր երկու տղաները: Եվա բաջին մեզ շատ էր սիրում, մեզ հետ շատ մոտ էր և անբաժան մեր սեղանից. վերջին նեղ օրերին օգնում, նախազգուշացնում էր մեզ: Նկատելով Եվա բաջուն՝ ես թաքստոցից դուրս եկա, վազեցի և գրկեցի նրան: Ինչպիսի՜ սիրով, գգվանքով փաթաթվեց նա իմ վզով և ջերմորեն համբուրեց, ուրախությունից ինձ գրկեց և ներս տարավ: Ձեռքիցս քաշելով մտանք «մեր» տունը, նա անմիջապես ուտելիք բերեց և նայելով դեմքիս՝ զարմացավ, որ ես լավ էի հագնված, թուրքական տարազով էի: Կողքիս նստելով՝ ստիպեց ինձ ուտել: Ճաշելիս ներս մտան Եվայի երկու տղաները: Մեկը զինվորական զգեստով էր, ինձ նկատելով իրենց մոր կողքին, հակառակ իմ կարոտագին սպասումի, կատաղեց և՝ *գյավուր օղլի,* ասելով, խանչալը քաշած՝ հարձակվեց ինձ վրա:

Ես երբեք չէի սպասում այս անակնկալին, որ իմ նախկին խաղընկերը, ում հետ բազում անգամ ճաշել, ման եկել, խաղացել էի, այժմ հանկարծ թշնամացել էր: Չէ որ ինքը՝ Հասանը,[110] մի քանի անգամ, սեփական օժանդակությամբ հորեղբորս կնոջը ուղեկցել էր՝ ուտելիք տանելով հորս և հորեղբորս, շատ անգամներ նրանք մեզ պաշտպանել էին վերջին դեպքերի պատահարներից: Այդ պահին Եվա բաջին բղավելով՝ Միհրա՜ն, ընկավ ինձ վրա, փաթաթվեց ինձ և սպառնալից աչքերով Հասանին նայելով՝ մեկ ձեռքով խփեց հարձակվող տղային, հրեց ինձ և ճանկռոտելով տղայի երեսը՝ ինձ էր պաշտպանում: Մյուս տղան պոռաց ինձ վրա, թե դուրս կորիր: Տեսնելով մոր ու որդու կռիվը՝ մի պահ շփոթվեցի, սթափվելով վեր կացա և դուրս եկա և խույս տալով ծառի ետևը՝ կանգնեցի: Եվա բաջին վազեց իմ ետևից, մի սարսափելի ձայնով բոռաց՝ լալով, անունս տալով և տեսնելով, որ Ահմեդը խանչալը ձեռքին իմ կողմը վազեց, գլխաշորը ձգելով մի փունջ մազեր շպրտեց դուրս, վազեց, այգու ցածր պատից ընկավ ներքև: Տղաները շփոթված վազեցին ետևից: Եվա բաջին, մորս անունը տալով, գոռում էր.«Միհրանին սպանում են»,- մյուս տղան վազեց մոր ետևից, բայց նա փախչում էր՝ մորս անունը տալով, ինձ որոնե-

լով.«… սպանում են»: Ահմեդը, տեսնելով մոր գայթակղիչ կատաղությունը, ինքն էլ վազեց և երկու եղբայրները Եվա բաջուն քաշքշելով բերին հայաթ:

Հավաքվեցին մոտակա հարևանները, բայց Եվան ոչ ոքի չթողեց մոտենալ իրեն և հրմշտելով նորից սկսեց փախնել: Այդ րոպեին ես լսեցի կանանց խոսակցությունը.

-Խեղճը իրենց գյավուրի համար խելագարվել է:

Հարևանների մեջ էր մեր հեռու հարևան, բայց հորս շատ մտերիմ Իսմայիլ աղան: Նա դասաբ էր և մենք միսը նրանից էինք առնում: Ես դեռ քարացած կանգնած էի ընկուզենու ետևում: Բազմությունից ոչ-ոք ինձ վրա ուշադրություն չէր դարձրել, քանի որ ես հարուստ թուրք տղայի շորերով էի: Իսմայիլ աղային տեսնելով՝ հիշեցի հորս և բնազդորեն մոտեցա նրան՝ ասելով՝ աղա: Նա իսկույն ճանաչեց, մոտեցավ ինձ և ցավակցելով ասաց՝ օղու՛լ, գնա այստեղից: Ես գլխակորույս հեռացա դեպի այգիների խիտ ծառերը և պատսպարվեցի թթենու մոտ՝ ավերակ շան բնում: 200 քայլի վրա էր գտնվում մեր տունը: Բազմությունը ավելի շատացավ, երևացին ոստիկաններ, ժանդարմներ: Նրանք փնտրում էին գյավուրին: Եվայի ձեռքերը կապել էին, նա ընկած էր գետնին, մորս անունը տալով գոռում էր, լալիս: Եվայի փոքր տղան շվարած լալիս էր, մոր կողքին կանգնած էր մեծ տղան՝ Ահմեդը:

Գյավուրի հայտնվելը և թուրք կնոջ խելագարվելը ալեկոծեց մոտիկ բնակիչներին: Հավաքված ամբոխի մեջ կային տարբեր հասկացողության տեր մարդիկ, շատերը անիծում էին գյավուրի հայտնաբերվելը, մյուսները ցավակցում էին Եվայի խելագարվելուն, ոստիկանները պահանջում էին ցույց տալ գյավուրի տեղը, այսպես՝ ամեն մեկը մյուսին ահ էր տալիս, հայհոյում, ցավում, ափսոսում կատարվածի մասին: Մի մորուքով մարդ վերևից բղավեց.

-Շան որդի՛ք, ձեզ էլ չի մնա, դուք էլ շուտով կընկնեք հայերի օրին:

Կեսօր էր, ամբոխը ցրվեց, հեռացան ոստիկանները: Ես ինքզինքս ստուգեցի, ոսկիները մոտս էին, ատրճանակը՝ նույնպես: Հիշեցի Սառայի խոսքերը.«*Քանի փամփուշտ կա մուրդ, բռնվելը ամոթ է…*»: Ատրճանակս միշտ կախված էր վզիցս փորիս ներքևը: Հանեցի, ստուգեցի, հաշվեցի փամփուշտները: Բռնելով բռավնիկը՝ նորից եկա մեր տան կողմը: Այս անգամ Եվա բաջին էր ինձ ճգում:

Չորս կողմը վխտում էին Էրզրումից, Վանից ու Ալաշկերտից գաղթած թուրքերն ու փախած արաբ զինվորները: Հաճախ ընդհարումներ էին տեղի ունենում ռազմաճակատը լքողների և ժանդարմիայի միջև: Ցավալի էր արաբ դասալիքների դրությունը: Մի տարի առաջ, երբ արաբ զորքերը իրենց նժույգներով, երկար նիզակներով անցան քաղաքի միջով, թուրքերը «մաշալլա» էին գոռում, իսկ հիմա, փախուստի ճամփան բռնած, մերկ ու քաղցած, զրկված իրենց միակ ձիուց ու նիզակից, սպանվում էին ամենուրեք: Հեռատես թուրքերը կրկնում էին. *«հայերից հեւրո մուսուլման արաբներին, հեւրո քրդերին, իսկ հեւրո…»*

Գլխավոր /կենտրոնական/ կամրջի մոտ տեղի ունեցավ հրացանաձգություն, թաղի ժողովուրդը վազեց այդ կողմ: Նկատելով, որ մեծ ու փոքր վազում

են դեպի կամուրջը, զգուշությամբ շարժվեցի դեպի մեր բակը: Ոչ-ոք չկար, ներսում հևոց լսելով՝ մոտեցա, Եվա բաջին էր. ոտքերն ու ձեռքերը կապած՝ զառանցում էր: Փոքր տղան լալիս էր, բայց վախենում էր մոտենալ: Եվա բաջի կանչելով՝ մոտեցա, գրկեցի նրա դողացող գլուխը, բերանից փրփուր էր դուրս գալիս: Քանդեցի ձեռքերը, ոտքերը, ջուր տվեցի, խմեց, նայեց չորս կողմը, սկսեց գոռալ, գլխաբաց, պատառոտված շորերով, դուրս վազեց՝ իմ անունը տալով:

Ես, սառած այս դրությունից, աննկատ դուրս եկա, շուռ գալով պատի կողքի փոքր լուսամուտից սողացի ներս և ծածուկ սկսեցի հետևել: Եվա բաջին խելագարված, գոռգոռալով կանչում էր.«Զանո *բաջի՛,* Միհրանին սպանու՛մ են…»: Նա էլ գնաց դեպի կամուրջ տանող ճանապարհով: Խուսափելով բռնվելուց՝ իրեն կամրջից ներքև քցեց: Այդ օրը այդտեղ սպանվեց տասներկու արաբ դասալիք զինվոր, և ինքնասպան եղավ մեր Եվա բաջին: Դարձյալ հավաքվեցին թաղի թուրքերը, որոնցից ոմանք դարձյալ անարգում էին իրենց, ոմանք էլ հայհոյում էին պիղծ գյավուրին պաշտպանողներին: Ամբոխի գոռոցներից կուլուխից դարձյալ եկան մի փոլիս, երկու ժանդարմ: Նրանց հետաքրքրում էր իմ որտեղից հայտնվելը: Նրանք կարգադրեցին շենքը շրջապատել և խուզարկել: Լսելով և տեսնելով նրանց գազազած դեմքերը՝ ներքնահարկից փայտե սանդուղքով զգուշությամբ վեր բարձրացա, նկատելով, որ դռներից մեկը բաց էր, իսկ տերերի աղջիկները լուսամուտից դուրս էին նայում, ակնթարթաբար ներս ընկա[111] մյուս սենյակն ու մտա մուսանդարա՝ պահարանի դարակի անկողինների արանքը: Մի քանի րոպեից ներխուժեցին երկու ժանդարմ ու մի քանի գիշատիչ թուրքեր: Գոռալով աղջիկների վրա՝ հարցրեցին, թե ու՞ր է գյավուրը: Նույն վայրկյանին ներս մտավ նրանց մայրը մի քանի հարևանների հետ, նկատելով խուժանների գռեհիկ վերաբերմունքը և երկյուղած աղջիկների լացը, որը՛ ավելով, որը՛ ձեռքով խփելով ու հրելով՝ դուրս վռնդեցին նրանց տնից: Գնացողները կեղծավոր ներողություն խնդրեցին:

Երեկոյան լամպը վառելով՝ «հարգելի» հարևանները հավաքվել էին թոնրատանը, խոսում էին օրվա դեպքի մասին, իսկ ես, օգտվելով առիթից, զգուշորեն դուրս եկա դարակից և գաբանգը՝ դռնակը, բացելով իջա ներքնահարկը: Այս տունը անցյալում պատկանել էր ջուլիակ-շիլաջի հայ Ալմոյաններին, որոնք 1915-ի[112] կոտորածի ժամանակ հույժ շտապ կերպով արտասահման գնալիս հրավիրել էին իրենց հարևանին և տունը հանձնել նրան՝ մինչ վերադարձը պայմանով: Ես նկուղում սովածությունից տառապում էի, բայց դուրս գալու հնարավորություն չունեի: Գիշերը սկսեցի դողալ, ատամներս կրճտացնելով փոքր լուսամուտից նայում էի դուրս: Մեր թթենու ճյուղերը լուսամուտին կռթնած էին: Ինչպիսի հաճույքով էի այդ ճյուղերից թութ քաղում, պոկում, քրոջս ու եղբորս տալիս, ա՜խ, ի՜նչ հաճույք, ի՜նչ ուրախ պահեր էին, ավա՜ղ, հիմա զրկված սիրելի ծնողներիցս, տանջվում էի անհայտության մեջ: Լուսադեմին գաբանգի /դռնակ/ բացվելու ձայնը լսեցի, ցասումից դողացի՝ կարծելով, թե իմացել են իմ տեղը: «Հարգելի» հարևանուհին, նավթի ճրագը ձեռքին, զգուշորեն աստիճաններով ներքև էր իջնում: Ես ակնթարթաբար մտա կող-

քիս շուռ եկած կարասի մեջ և հոգետրոփ սպասեցի վախճանիս: Հարևանուհին մոտեցավ ալյուրի ամբարին՝ տախտակից պատրաստված ալյուրի պահարանին, ալյուր վերցնելով, վերև բարձրացավ: Զգացի, որ իմ մասին կասկած չունեն: Մոտեցա ալյուրին, մի ափ վերցնելով՝ բերանս տարա՝ քաղցս հագեցնելու, բայց հնարավոր չեղավ կուլ տալ: Ծարավից խեղդվում էի: Լեզվիս կպած ալյուրը թևովս սրբելով՝ որոշեցի վեր բարձրանալ, քանի որ քաղցին ու ծարավին հնարավոր չէր դիմանալ: Զգուշորեն գաբանգը[113] բարձրացնելով՝ անշշուկ դուրս եկա թոնրատան անկյունը և կուչ եկա հացի սլայի /սալայի/՝ առաստաղից թոկերով կախված լավաշ հացի պահարանի ետևում: Մութ անկյունից տեսա հարևանուհու երկու աղջիկներին, որոնք տասնմեկ և տասներեք տարեկան էին: Աղջիկները կուժերով ջուր բերեցին մեր տան դիմացի Լոռոյ աղբյուրից և մոր ցուցումով լցնելով խմորի տաշտը՝ քրքջալով հեռացան կից սենյակ: Քաղցածությունս այնքան չէր, որքան ծարավս, այն ուղղակի ինձ խեղդում էր: Բարեբախտաբար, խմորը հունցելուց հետո հարևանուհիս թոնրատնից դուրս եկավ: Ջրի կուժը[114] մագնիսաբար իրեն ձգեց ինձ: Ես, ագահաբար խմելով, ջուրը դեմքիս թափելով, թարմացա, կայտառացա և իսկույն թաքնվելու մասին մտածեցի: Աչքերով չորս կողմը դիտելով՝ նկատեցի օջախի վրայի պուտուկը[115]: Իսկույն մոտեցա խուփը վերցրի և, ձեռքս կոխելով մեջը, մի կտոր միս հանեցի: Հետո զգուշությամբ բարձրացա անձեռնմխելի մուսանդարի՝ անկողինների դարակի վրա, սկսեցի պառկած վիճակում ուտել միսը, հետո քնեցի:

Թոնիրը վառելով՝ չորս հարևանները սկսեցին հաց թխել, որի բուրմունքը ինձ տակն ու վրա էր անում և ավելի գրգռում: Երեկոյան՝ լավաշ հացը թխելուց հետո, պուտուկով փաչան՝ ոչխարի խաշ, իջեցրին թոնիրը, հավաքվեցին սենյակում, և միասին ճաշելուց հետո հյուրերը գնացին: Աղջիկները, մուսանդարից անկողինները հանելով և ճրագը մարելով, պառկեցին քնելու: Օգտվելով նրանց խոր քնից՝ ես զգուշորեն տեղափոխվեցի թոնրատուն: Ագահաբար օգտվեցի թարմ լավաշից, ճաշից և այլ բարիքներից: Երկու լավաշ վերցնելով՝ իջա ներքնահարկը և ծվարեցի կարասների արանքում: Գիշերը չկարողացա քնել: Մարմինս քոր էր զգում, տառապում էի սրտխառնությամբ և ջերմով: Առավոտյան բարձրացա թոնրատուն, մտա մի անկյուն և կանգնած՝ դողում էի: Դուռը բացվեց և մեր խանում հարևանուհին, ներս գալով՝ սկսեց փռված լավաշները հավաքել: Չկարողանալով համբերել՝ ես աղերսալի աչքերով և դողալով դիմեցի նրան: Մի պահ նա զարմացավ՝ չհավատալով աչքերին: Զգալով բարեպաշտ մահմեդականուհու նախապաշարմունքները՝ ձայնեցի.

Մորաքու՛յր, ես Միհրա՛նն եմ, հիվանդ եմ…:

Շփոթված՝ նա մոտեցավ ինձ, գրկեց և անխոս գրկին սեղմելով՝ ասաց.

Սաբիբի՝ պատճառի աչքերը քոռանա:

* * *

Ամսի մի ամիս էր անցել, ինչ բաժանվել էի մորիցս, քրոջիցս և եղբորիցս, երկար տանջանքներից հետո հանդիպեցի հարազատ վերաբերմունքի, կարոտագին զգացմունքների: Հարգելի հարևանուհիս լռությամբ, առանց հարցուփորձի՝ ուտելիք առաջարկեց: Դժբախտաբար ես չկարողացա օգտվել, քանի որ տառապում էի տենդով: Անկողին պատրաստելով՝ նա առաջարկեց ինձ քնել-հանգստանալ: Հազիվ էի քնել, հանկարծ զգացի քնքուշ փայփայանք: Աչքերս բացելով՝ նկատեցի երկու հարազատ քույրերի ջերմ ձեռքերի շփումն ու նրանց արտասվալի աչքերը: Ոչ մի խոսակցություն: Հարևանուհին մոտենալով՝ կարգադրեց աղջիկներին հեռանալ, մոտենալով ինձ՝ զգաց, որ զառանցում եմ, շապիկս բարձրացնելով նկատեցի նրա շրթունքների հպումը.

-Օղու՛լ /տղաս/, դու ծաղիկով[116] հիվանդ ես, դա վտանգավոր է, աղջիկներին կվարակես…:

Ես չէի կարող անտարբեր լինել, չէ որ զգում էի «ծաղիկ» հիվանդության վարակի անխուսափելիությունը: Դիշերվա խավարին լուռումունջ դուրս եկա տնից և գնացի այգի, թթի ծառի տակ պառկեցի: Զառանցանքների տագնապալի անզգայության մեջ էի. պատկերացել էր ծնողներիս հայացքը, աչքերիս առաջն էր սիրելի եղբայրս՝ Մակիչը, որը աղերսալի ձայնով կանչում էր՝ Միհրա՜ն, Միհրա՜ն: Հիասթափված գոյությունիցս՝ գերադասեցի հանձնվել փոլիսներին, կա՛մ կսպանեն, կա՛մ կարող է աքսորեն, գոնե հնարավորություն կունենամ գնալ հասնել մորս, քրոջս, սիրելի եղբորս: Հիասթափված կյանքից, անիծելով բարերար չավուշին,[117] որը լավություն անելով՝ ինձ առաջարկեց իր միջնորդությունը մի կտոր հաց ճարելու համար և պատճառ եղավ հարազատներիցս բաժանվելուն:

Մեր պայմանավորվածության համաձայն՝ ես երեկոյան պետք է գնայի Սառայի մոտ: Զգուշորեն անցնելով լուսամուտի ճաղերից՝ մտա Սապոնջյանների տունը: Մթին ծարավ զգալով՝ բնազդաբար դուրս եկա և մոտեցա մեր աղբյուրին: Ինչպիսի՜ զարմանք… Աղբյուրի մութ ջրի մոտ՝ փարչը ձեռքին կանգնած էր մեր թաղի ամենահարուստ և ազդեցիկ, նույնիսկ մեր թաղի ամենահայասեր մարդը, հորս և հորեղբորս մտերիմ բարեկամ Իսմայիլ աղան: Նա, խուրջինից խիարներ հանելով, սկսեց լվալ աղբյուրի ջրով: Ես վախվխելով մոտեցա, չհամարձակվեցի դիմել, այլ մեղավորի հայացքով աչքերս հառեցի նրան: Ինձ նկատելով, ցավակցելով՝ ասաց.

-Կազար օղլի՛, հեռացիր, քեզ են փնտրում:

-Աղա՛, ու՞ր գնամ:

Նա, մի պահ կանգնած, ապշած նայում էր ինձ և հանկարծ հոգոց հանելով՝ մոտեցավ ինձ: Կազար օղլի՝ ասելով, թևս բռնելով՝ հարցրեց.«Ձերոնք որտե՞ղ են…»: Ես չկարողացա իսկույն պատասխանել: Նա կրկին հարցրեց՝ անունս տալով: Ես գլխովս բացասական նշան արի:

Իսմայիլ աղան ինձ տարավ իր տան կողքին գտնվող հայկական դատարկ տան դռան մոտ, կարգադրեց ներս մտնել և սպասել իրեն: Համոզվելով, որ կարելի է վստահել Իսմայիլ աղային, ես դուռը փակեցի և անցնելով սենյակից սենյակ՝ նայեցի մեր վաղեմի հարևան Ոսկերչյանների բազմանդամ հարուստ գերդաստանի բնակարանը, ուր ոչ մի փոփոխություն չէր կատարվել: Գորգերի վրա անկողինները՝ փռած, օջախի վրա պուտուկով լիքը ճաշը՝ բորբոսնած: Միայն կատուներն էին վխտում իրենց ձագերով, բակում հավերն էին կչկչում, իր բնին կապած շունը սատկած էր: Ինձ զարմանք պատճառեց այս տան անձեռնմխելիությունը: Հետագայում իմացա, որ Իսմայիլ աղան այդ տունը օրինականացրել էր որպես սեփականություն: Ցավերիս և վշտերիս մեջ՝ ակամա մոռացել էի իմ միսիայի, առաքելության մասին՝ Սառայի հանձնարարությունը: Աղան այգու դռան կողմից ներս մտնելով և ինձ նկատելով՝ ասաց.

-Օղու՛լ, այս օրվանից քո անունը Նուրի է: Ես քու հորդ խաթրին քեզ կպահեմ, հանգիստ եղիր:

Մի պահ հետո, ցույց տալով սատկած շանը՝ ասաց.«Զգուշորեն մաքրիր»:

Աղայի սիրալիր վերաբերմունքը ինձ վստահություն ներշնչեց: Քանի որ ծառան ձին բերեց, ես խնդրեցի աղային ներս գալ: Ներս մտնելով՝ գրպանիցս հանեցի քսան ոսկի և աղային հրամցրի: Աղան, աչքերը դեղին ոսկիներին չռելով, ասաց.«*Յաշա՛, յավրում* ապրես ծառաս»: Ոգևորվելով և առիթից օգտվելով՝ հայտնեցի Սառա խանումի խնդրանքը: Իսմայիլ աղան, որպես թուրք, խորամանկ էր և հեռատես: Նա մի պահ մտածելով՝ ասաց.«Որտե՞ղ է նա և ի՞նչ է ուզում»: Սառայի հանձնարարության համաձայն՝ ասացի, որ մի կին ուզում է դիմել իրեն և ավելացրի, որ նա հարուստի կին է: Իսմայիլը հրճվանքից բեղերը ոլորեց և ինձ դառնալով՝ ասաց.

-Օղլու՛մ՝ տղաս, գնա և հրավիրիր:

Նա մոտեցավ ինձ, խուրջինը քցեց իմ թևին և ասաց.«Տա՛ր մեր տուն»,- իսկ ինքը, հետևելով ինձ, եկավ տուն: Նրա երկու տղաները՝ Շահբաղդինը, որ ինձ հասակակից էր և փոքրը՝ Մանդոն, ինձ տեսնելով՝ ուրախացան: Գրկախառնվեցինք: Եկավ Իսմայիլ աղան, մեզ տեսավ իրար փաթաթված, մի պահ կանգնեց և հուզմունքով ասաց.«Նա քաղցած է, հաց բերեք»: Մյուս սենյակից ներս մտավ աղայիս կինը՝ Ֆաթմա խանումը և ինձ չճանաչելով՝ հարցրեց՝ ո՞վ է: Շահբաղդինը, հրճվանքով անուննս տալով, հիշեցրեց իմ ով լինելը: Ֆաթմա խանումը *սունների թախումի* թրքուհիներից էր, նրա ծնողները, եղբայրները Հարսնյաց թաղի մոլի հայատյաց, արյունարբու բաշիբոզուխներից էին: Ես չզարմացա, որ նա հարձակվեց ինձ վրա, ավելով խփեց և պիղծ գյավուր անվանելով՝ հրեց: Այդ պահին ներս մտավ աղան: Երեխաները շշմած մի կողմ քաշվեցին: Խանումը, ավելի կոթով ինձ խփելով, դուրս էր հանում՝ սպառնալով բռնել տալ: Իսմայիլ աղան հարձակվեց կնոջ վրա,[118] խլեց ավելը և անողոքաբար սկսեց խփել կնոջը: Երեխաները սկսեցին լաց լինել: Ես քարացած կանգնած էի դռան մոտ: Աղան, ավելը քցելով պառկած կնոջ վրա, հայացքը ուղղեց ինձ, նայեց տղաներին, կնոջը, թքեց գետնին: Կանչեց ինձ և տղանե-

րին, պատի տակ կանգնեցրեց: Ոտքով հրելով կնոջը՝ կանգնեցրեց ու սպառնալով ասաց.

-Այս երեքն էլ իմ տղերքն են: Վա՜յ քեզ, եթե սրանցից մեկն ու մեկին բան պատահի,-միաժամանակ հիշեցրեց,-եթե դու Հարսան *իշարեթից* ես, պարծենում ես քո եղբայրներով, լա՛վ իմացիր, թե ում կի՛նն ես:

Դառնալով մեզ՝ կանչեց.

-Շահբաղդի՛ն, լսեցի՛ր, Մանդո՛հ, լսեցի՛ր:

Նրանք գլուխները խոնարհեցին: Կանչեց ինձ.

-Քո անունը այսօրվանից կլի՛նի Նուրի,-հրամայական շեշտով կնոջը նայելով՝ ասաց,-լսեցիք:

Ոչ մեկս ձայն չհանեց: Մի պահ լռությունից հետո, հանգիստ տոնով կնոջը ասաց՝ քաղցա՛ծ ենք:

Հինգ հոգով նստեցինք կլոր սեղանի շուրջը, լուռումունջ ճաշեցինք: Աղան ջուր ուզեց: Թռա տեղիցս և փարչով ջուրը բերի, տվի նրան: Նա կլկլացնելով խմեց: Փոքր տղան ուզեց, նրան տվեց: Կինը ձեռքը մեկնեց: Աղան ձեռքը մեկնելով վերցրեց ջրի փարչը և հարցրեց.

-Նուրի՛, խմու՞մ ես:

Ես մեխանիկորեն վերցրի փարչը, բայց զգալով, որ խանումն էլ ուզում էր խմել, ուզեցի փարչն իրեն տալ: Աղան հրամայական ձայնով ասաց.

-Նուրի՛, դու խմի՛ր, հետո տու՛ր խանումին:

Այս անզիջելի վերաբերմունքը Հարսան ցեղի դիցուհիներին անվայել էր: Նա ուզեց վեր կենալ: Աղան ոլորեց իր հաստլիկ բեխերը, ձեռքի բրդուճը սեղանին դրեց, խոժոռ աչքերով կնոջը նայելով ու ձեռքը խանչալին տանելով՝ սաստեց.

-Խմի՛ր, նա էլ մեր տղան է:

Ֆաթմա խանումը լավ էր ճանաչում իր ամուսնուն, որը տասնհինգ տարի առաջ իր ցեղակիցներով ընդհարվել էր Հարսնցոց ցեղի՝ Ֆաթմայի հոր, եղբայրների հետ: Սպանվել էր Ֆաթմայի հայրը և եղբայրներից մեկը, վիրավորվել՝ մեծ եղբայրը: Աղան իր կնոջ հարազատներին վերջին տարիներին էր, որ թույլ էր տվել հաճախել իրենց տուն, այն էլ տարին մեկ անգամ: Իսմայիլ աղան հայտնի էր ոչ միայն որպես Օլոճո ցեղի աշիրաթի պետ, այլ նաև որպես հարուստ աղա, պետական մարմինների հետ կապեր ունեցող, հետևաբար՝ մեծ ազդեցություն ուներ հարևանների շրջապատում: Նա թե՛ հայ, թե՛ թուրք հարևանների համակրանքն էր վայելում: Չնայած գրագետ չէր, բայց իրեն հատուկ դիվանագիտությամբ ճիշտ էր կողմնորոշվում միջազգային հարցերում ու միշտ ասում էր.

-Ալամանները /գերմանացիները/ մեր պոչին յուղ են քսում, բայց մեր գլուխն են ուտելու:

Նա կառավարությանը կապալով սննդամթերք էր մատակարարում: Վերջին իրադարձությունների օրերին, երբ հորս մոտ՝ մեր տանը, հավաքվել էին թաղի խորհրդականները, հայրս ասաց, որ կարելի է վստահել միայն Իսմայիլ աղային:

Իսմայիլ աղայի խոսքը թնդաց և մենք արձանացած նայեցինք անեին՝ մայրիկին: Ֆաթմա խանումը երկյուղելով փարչը ձեռքիցս վերցրեց, չոքեց և խմեց: Աղան աչքերով հետևում էր: Մեկնեց ինձ, ես էլ խմեցի, բայց հովանալու փոխարեն կոկորդս վառվում էր, սիրտս բաբախում: Սուփրեն հավաքելուց հետո, պետք է քնեինք: Եվ ես այս դժվարին պահին գտնվելով նրա ընտանիքում, հայացքս ուղղելով բոլորին՝ ծնկաչոք դիմեցի նրան.

-Աղա՛, ես քո ծառան եմ, իմ պատճառով մի նեղացնի խանումին, երեխաները լաց են լինում, թո՛ղ տուր, ես կգնամ:

Իսմայիլ աղան վեր կացավ, խանումը նույնպես, գնաց մուսանդարանեռից անկողինները բերեց: Աղան ձեռքիցս բռնեց, տարավ կից սենյակը և ասաց.

-Դու՛ օղուլ, այստեղ կքնե՛ս:

Ես գլուխս բարձրացրի, նայեցի աղային, նա խորասուզված էր մտքերի մեջ: Ես դիմեցի աղային՝ գրպանիցս հանելով հինգ ոսկի.

-Սա էլ ա՛ռ, աղա՛, ինձ պետք չեն:

Նա մի պահ նայեց, բայց դեղին ոսկիները տեսնելով՝ ժպտաց, վերցրեց ու ինձ հետ տանելով, խանումին տվեց փողերը, ասելով, որ ես եմ տվել: Փողը ինձ համարձակություն տվեց ավելի ազատ խոսել իմ բարերարի հետ: Աղայիս խնդրեցի, որ ես պետք է գիշերով գնամ և հորեղբորս դիակը թաղեմ: Նա ձայն չհանեց և դուրս եկավ: Խանումը, ոսկիները ձեռքին պահած, նայեց ինձ և ասաց.

-Եթե կարող ես, էլի՛ բեր, քեզ լավ կպահեմ:

Մի քանի րոպեից աղան եկավ մի բահ ձեռքին, և ինձ աչքով կանչելով՝ միասին գնացինք: Ես խնդրեցի աղային մինչև աղբյուրը ինձ առաջնորդել և բաժանվել: Իմանալով իմ մտադրությունը՝ նա ցույց տվեց բահը, ես վերցրի և միասին դուրս եկանք դեպի հորեղբորս այգին, որը մոտ երկու հարյուր մետր հեռավորության վրա էր: Մեր տան կողքով բարձրացանք հորեղբորս ընկած այգին: Ուշ երեկո էր: Հորեղբորս դիակը քայքայված էր: Հորեղբորս Արաբ անունով շունը պառկած էր դիակի կողքին, նա էլ էր հիվանդ: Ինձ տեսնելով՝ շունը հևաց և աչքերով նայեց աղային, մի փոքր հաչեց ու նայեց ինձ: Լսելով իմ կանչը՝ երկու թաթերը քցեց ինձ վրա, ուզեց խածել աղային: Ես շոյեցի և խեղճ շունը հանգստացավ: Աղաս գետինը բահով սկսեց փորել: Ես նայում էի այլանդակված մարմնին: Աղան, ապա ես, փորելով հողը, խորացնում էինք փոսը: Վերևից շան հաչոց լսվեց, լսվեց ատրճանակի մի երկու կրակոց. սարսուռը ինձ բռնեց: Հանկարծ շունը հաչեց և վազեց դեպի վերը: Նկատեցինք, որ վերևից գալիս էին երկու-երեք ժանդարմներ: Աղան շշկլվեց և ինձ ասաց, որ հեռանամ: Բահը ձեռքիցս գցելով՝ խույս տվեցի պատերի կողքի *սումաղ*[119] ծառ-ծաղիկների արանքը և թաքնվեցի:

Աղան, կռահելով վտանգը, շարունակեց փոսը փորել: Շան հաչոցը լսելով՝ ժանդարմները նայեցին մեր կողմը: Ես պառկած վիճակում կանաչների և ծառերի արանքով հեռացա: Արաբի հաչոցի ձայնին մասնակցեցին ուրիշ շներ և վազեվազ մոտեցան դեպի Արաբը: Ես պահ էի մտել թթենու ետևում: Եկան

երկու ժանդարմներ և զարմացան Իսմայիլ աղայի փոքրոգության վրա, բայց աղան, ջղայնանալով նրանց վրա, ասաց, որ դիակը հոտել է, պետք է հողով ծածկել: Ես տեսա, որ Իսմայիլ աղան հանդիմանելով բահը մեկնեց նրանց, ի վերջո միասին դիակը քցեցին փոսը, շանն էլ գնդակահարեցին և հորեղբորս դիակի հետ թաղելով՝ հեռացան: Մի տասը րոպեից չորսով իջան և գնացին դեպի ներքև: Ես հեռվից հետևում էի նրանց ընթացքին:[120] Աղբյուրի մոտ կանգնեցին, ջուր խմեցին, աղան ձեռքերը լվաց, հետո սկսեց լվալ ոտքերը, որպես թե երեկոյան նամազ է անելու: Նրանց[121] գնալուց հետո իսկույն կոշիկները հագավ և հետ եկավ: Մեր տան կողքին ես ձայն տվեցի նրան: Նա ինձ ասաց, որ տուն գնամ, իսկ ինքը ծեծեց մեր տան դուռը, որտեղ, ինչպես սկզբում ասացի, Եվա բաջին էր ապրում: Ես հրաժարվեցի և խնդրեցի աղային, որ պետք է գնամ, քեռիներիս տունը տեսնեմ: Նա համաձայնվեց և հիշեցրեց.

-Նրանք շատ փող ունեին, կարո՞ղ ես գտնել, բերել:

Այգիների միջով, անգամ շներից խուսափելով, գնացի Սառայի մոտ: Ինձ սպասում էին Սառան և երկու առնականացած կանայք, որոնք բախտի դժբախտ բերումով՝ անվեհեր պայքարում էին վրեժի մոլուցքով:

Մեր Ծապրկորի թաղը և Թաղիգլուխը իրար դիմաց էին, բաժանվում էին գետով, բարձրադիրով ու այգի-պարտեզներով: Գիշերը, սողոսկելով տնից տուն, հանկարծ մարդկային ստվերների շարժում նկատեցի դիմացի թաղի Թորոսիկի ջրաղացի վերևում: Անմիջապես գետն ու այգիներն անցնելով՝ բարձրացա թթի ծառն ու նկատեցի երեք արաբ զինվորների: Այդ օրերին արաբ զինվորները հաճախակի էին փախչում՝ լքելով բանակը[122] և սարերի վրայով անցնում դեպի հարավ՝ Սղերդ, Դիարբեքիր քաղաքները: Համոզված լինելով, որ նրանց մոտ պաշտպանություն կգտնեմ, ներս մտա սենյակ: Արաբները ուրախությամբ ընդունեցին ինձ և գիշերվա որսած հավերից հյուրասիրեցին: Մտերմացա արաբ դասալիքների հետ, որոնց բախտակիցներին այդ օրերին տասնյակներով գնդակահարում էին քաղաքի հրապարակում հեռագրասյուներին կապելով, իսկ սպաներին կախաղան բարձրացնում: Արաբ դասալիքները ձգտում էին ատրճանակներ ձեռք բերել: Հաջորդ օրը՝ գիշերով, միասին գետն անցանք, եկանք մեր թաղի *ղուլուխը* և համոզվեցինք, որ հանկարծակի հարձակվելով ժանդարմների վրա՝ կխլենք զենքը: Ամենայն զգուշությամբ ջրանցքի առվի միջով մոտեցանք պահակատանը և կուզեկուզ մոտեցանք ղուլուխի շենքին: Դռան շեմին նիրհում էր պահակը՝ հրացանը պատին հենած: Արաբ զինվորը, մի ակնթարթում պահակի ոտքից ձգելով, առվի մեջ դաշույնով լռեցրեց նրան: Զգուշությամբ ներս մտնելով՝ տեսանք, որ ժանդարմները անկողիններում պառկած էին: Երեք արաբները անշշուկ հարձակվեցին ժանդարմների վրա և դաշունահարեցին: Դասալիքներից ավագը մի երկտող թողեց, հայտնելով, որ կատարվածը՝ երեկվա կախված արաբ զինվորի վրեժն է: Նրանց հագուստներն, ատրճանակները, պահեստի փամփուշտները վերցնելով՝ վերադարձանք մեր նախկին վայրը: Թաղիգլխի հայկական բնակարաններում թուրք գաղթականներ էին տեղավորում: Նկատի ունենալով այդ, արաբները որոշեցին տեղափոխվել ավելի ծայրամասային դատարկ

տները: Հաջորդ գիշերը փոխադրվեցինք կիսավառված մի տուն, որի երկհարկ լինելու պատճառով լուսամուտից տեսանելի էր անցուդարձը: Այդ տունը մթերքով լի էր և ավելի ապահով: Առանց հեռադիտակի տեսնում էինք թալանչիներին և ժանդարմների ու զինվորների խուզարկություններն ու թալանը: Այդպես շարունակվեց մոտ մեկ ամիս: Չգտնելով ոչ մի գյավուրի, զինվորները հեռացան տանիքներից, բակերից՝ խուժանին թողնելով սանրելու համար: Առողջությունս բարելավվում էր, ծաղիկների տեղը փոքր սպիներ էին մնացել, որոնք հետագայում լրիվ անհետացան:

Հաջորդ գիշեր եկա աղայի հարևան տունը, որը մի քանի ոսկով աղան արդեն սեփականացրել էր: Հետևեցի աղայի դուրս գալուն: Առավոտյան աղան դուրս եկավ բակ, ծառան անմիջապես ձին մոտեցրեց, նա նստեց գնաց: Իսմայիլ աղան սպանդանոց ուներ, պետությանը միս և այլ սննդամթերք էր մատակարարում, իշխանության վերադասների հետ շփում ուներ: Մեծ կապալառու էր: Բալատիա, Հյուքյումեթի մուտքերը ազատ էին նրա առաջ: Իսմայիլ աղան հռչակավոր աշիրաթից էր: Տասնհինգ տարի առաջ բախվել էր Հարսնցոց[123] թաղի աշիրաթների գլխավոր Միրզա[124] Հասանի հոր հետ: Արդյունքում՝ երկու կողմից հինգ հոգի սպանվել էին, որոնց թվում՝ Միրզա Հասանի հայրն ու եղբայրն էին: Կռվի նույն օրը փախցրել էին գեղեցկուհի Ֆաթմային: Միրզային՝ կապած ձեռքերով, մի անորոշ տեղ պահելով, փրկագին էին ուզել, որն ստիպված իր գեղեցիկ քրոջը նվիրել էր աղային: Այսպիսով, չնայած հաշտվել էին, բայց վրեժը լուծելու համար մնում էր հարմար առիթ գտնելը: Աղայիս կինը՝ Ֆաթմա խանումը, գեղեցկուհի էր, կրոնամոլ՝ սուննի[125] թրքուհի: Նրա ծնողները ամեն տարի մի քանի հայ պետք է սպանեին և ճաննաթին արժանանալու համար ականջները կտրելով՝ ներկայացնեին մոլլային: Երկար ժամանակ նրանց փոխհարաբերությունները թշնամական էին և միայն վերջին տարիներին էին մեղմացել: Իսմայիլ աղան վեհանձն էր, նա վայելում էր իշխանության վստահությունը, մոլլաների, թուրքերի[126] և հայերի սերն ու հարգանքը: Թուրքերը նրան համարում էին երկու կրոնների երկրպագու[127], քանի որ մեծ տոներին նա հաճախում էր Կարմրակ եկեղեցի:

Արաբ դասալիքներին[128] պատմեցի Սառայի, Զանոյի և Մարթայի մասին, նրանք՝ մաշշալահ, ասելով՝ գովաբանեցին խիզախ երդվյալներին: Երեկոյան մթին ես բաժանվեցի արաբներից՝ պայմանավորվելով նորից հանդիպել: Գիշերվա կեսին, շների ոռմակով շրջապատված, որոնք իմ պահապան ընկերներն էին, ես հասա Ջոջ գերեզմանները և Սարոյենց բաղ-այգիներով գնացի Սառայի և մեր գաղտնարանը: Երկու ընկերուհիները եկել էին հաջի Սուլեյմանի մոտից՝ կանացի հագուստներ, ինչպես նաև կաշառք տված ոսկիներով մեզ հետաքրքրող միջոցառումների մասին նորություններ բերելով: Նրանց պատմել էին, թե երեկ գիշեր դայմակամին ուղղեկցող երկու զինվորները նրան սպանել էին և բռնվել: Մարթա և Զանո մորաքույրները հաջի Սուլեյմանի և նրա ծառաների միջոցով իմացել էին Իսմայիլ աղայի դեմ հաջի Սուլեյմանի կազմակերպած դավադրության մասին: Ես էլ պատմեցի իմ տեսած-լսածներիս մասին: Անդադար Սառան գիտեր Իսմայիլ աղայի մասին,

բայց լրիվ վստահություն չէր տածում: Նա ինձ քաջալերեց, որ հինգ ոսկի էլ էի տվել նրան: Մարթա և Զանո մորաքույրները ինձ հայտնեցին մեր թաղի մի քանի հարուստների փողերի պահված տեղերը, որոնք միմյանց հայտնել էին մահվան ճամբարում: Այսպիսով՝ մեր մեջ խոր վստահություն կնքվեց: Նույն գիշեր ես և մորաքույր Մարթան գնացինք Գարաօղլանյանների վերին տունը և թոնիրը փորփրելով, կժով լիքը ոսկի հանելով՝ վերադարձանք: Բացակայության միջոցին նրանք մի խիզախ որոշում էին կայացրել: Ուսումնասիրել և հետապնդել էին, որ մեր թաղամասի դուլուխի՝ ոստիկանատան պետը առավոտները ժամը ութի կողմ գալիս էր Ջոջ գերեզմանների կողքով, անցնում գոռների՝ թուրքական գերեզմանների միջով, գնում Պալատյան՝ ոստիկանների վարչություն:

Այդ օրը քնեցինք մինչև լուսաբաց: Ինձ արթնացրեց կանանցից մեկը: Սառան չկար, նրանք լավ հագնված էին, պճնված, գեղեցկանալու համար նույնիսկ երեսներին կարմիր ներկ-պուդրի էին քսել: Հայտնելով իրենց մտադրությունը՝ ինձ պատվիրեցին պահ մտնել ճամփի եզրին՝ Ջաղացպանյանների այգում և հետևել իրենց: Տաս րոպեից մենք նշանակված տեղում էինք և սպասում էինք քոմսերի գալուն: Նկատեցի Մարթային, որը դռնից դուրս գալով և նկատելով քոմսերի ու փոլիսի գալը, փողոցի կենտրոնում կանգնած, ձեռքով ու հայացքով խոսեց Սառայի հետ: Այդ պահին կատաղությանս ու զարմանքիս չափ չկար, միթե կարելի էր այդքան անտարբեր լինել, կամավոր հանձնվել արյունարբու թշնամուն: Սառան ձեռքի շարժումով հրավիրեց:

Փոլիսը, որը յոթ-ութ մետր էր հեռու, նկատելով զուգված փառահեղ կնոջը՝ ապշած նայեց ու ծաղրանքով ասաց.

-Այ խանու՛մ, ի՞նչ եք անում այստեղ:

Մորաքույր Զանոն առանց շփոթվելու հայտնեց, որ ուզում է գնալ իր ընկերուհու մոտ, հայացքով նշան արեց Սառային: Փոլիսն ու քոմսերը հափշտակված նրանց գեղեցկությամբ, մանավանդ կրծքի շարան ոսկիներով հրապուրված՝ մոտեցան մորաքույր Զանոյին և երեքով բարձրացան Քամալկանց տան երկրորդ հարկը: Ինքնաբերաբար, զգուշությամբ հետևեցի նրանց: Բարձրանալով Սառայի մոտ և նկատելով նրան բազմած փափուկ բարձերին, ապշած նայելով չորս կողմ, զգուշության համար ատրճանակները հանելով՝ զինվորական խրոխտ ձայնով քոմսերը պոռթկաց.

-Ո՞վ կա ձեզ մոտ:

Սառան հանգիստ ձայնով պատասխանեց.

-Էքպեր էֆենդի՛, ի՞նչ է, չե՞ք հիշում ինձ,-և խնդրեց նստել:

Ակամա, զարմանքից ձեռքը ճակատին տանելով, ըստ երևույթին, վերհիշելով բազում անգամներ միմյանց հյուրասիրությունները, քոմսերը՝ Էքպեր էֆենդին, նորից պոռթկաց.

-Ո՞վքեր կան այստեղ…

Ես այդ պահին սրահի մյուս դռնով, Զանոյի աչքերի ցուցմունքով և շարժումով, լռելյայն անցա մյուս սենյակը: Մորաքույր Զանոն ներս մտնելով, վար խոնարհելով գլուխը՝ հանեց վզի շարան կռամիցաները՝ յուրաքանչյուրը հինգ

ոսկի և փոլիսին տալով, ձեռքերը կրծքին դնելով մոտեցավ դռանը և մեղավորի նման գլուխը կախ կանգնեց: Սառան բարձի տակից քիսայով /դրամապարկ/ ոսկի[129] հանելով՝ շուռ տվեց գորգի վրա: Զաբիթները[130] /սպաները/ կռանալով՝ սկսեցին ոսկիները հավաքել: Որոտաց Զանոյի ատրճանակը, ուղիղ պայթեց երկուսի մեջքերին, երկուսն էլ փռվեցին ոսկիների վրա: Ոսկիները հավաքելով, փողոցից մուտքի դուռը փակելով՝ մենք շտապ տեղափոխվեցինք մեր ապաստարանը:

Որոշ ժամանակ անց՝ մենք որոշեցինք նման ձևով վրեժխնդիր լինել Մուշից եկած սար քոմսերի հետ[131] [Ի.Ա.]: Լուսաբացին վեր կենալով՝ նկատեցի, որ Սառան և մորաքույր Մարթան չկան: Մորաքույր Զանոն, նկատելով իմ շփոթմունքը, հայտնեց, որ նրանք գնացել են Քամալկանց տուն և ճամփի մյուս եզրին սպասելու են սար քոմսերի գալուն: Հակառակ մորաքույր Զանոյի պնդումներին՝ ես անմիջապես հետևեցի նրանց և, ճանապարհն անցնելով, մտա գերեզմանաքարերի արանքը՝ հետևելով մերոնց և քոմսերի գալուն: Սառան դիմացի պատի ետևում՝ Քամալկանց այգում էր լինելու: Վերջապես նկատեցի նեքևից եկող երկու հոգու: Կանայք, որոնք մոտ երկու հարյուր քայլ հեռավորությամբ ներքև՝ ճամփեզրին էին, սկզբում խույս տվեցին: Նրանց մոտենալուց հետո նորից դուրս եկան ճամփի մեջտեղը և սկսեցին շարժվել: Մենք նկատի էինք ունեցել, որ քոմսերը մենակ էր գալու, այդ նկատառումով կանայք սկզբից չուզեցին երևալ, բայց նայելով Սառայի կողմը, որը ձեռքով նշան էր արել՝ գնացին առաջ: Մի հինգ-վեց քայլ շարժվելով՝ վախենալու պատրվակով կանգնեցին: Թուրքերը տեսնելով, որ հայ կանայք էին, մոտեցան նրանց: Կանացի գեղեցկությունը, նրանց զարդարանքը՝ վզերի ոսկյա շարանները տեսնելով՝ ոչ միայն հրապուրվեցին, այլև զարմացան, շշմեցին:

Ոստիկանապետը՝ սար քոմսերը, վերջին օրերին էր նշանակված: Նա սկզբում Տարոնի Մուշ քաղաքի սար քոմսերն էր, իսկ մյուսը շարքային փոլիս էր: Կանայք աղերսանքով դիմեցին նրանց, խնդրելով իրենց չբռնել, ասացին, որ չորս հոգով մի տան մեջ են ապրում և փոխարենը խոստացան տալ իրենց տան հարստությունը: Ոստիկանապետը, ընտրելով գեղեցկուհիներից մեկին, մյուսին ընկերոջը բաժին տալով, գրկեց, որ համբուրի, բայց կանայք խնդրեցին փողոցում ձեռք չտալ, այլ տանել կա՛մ մեր, կա՛մ իրենց տուն՝ խոստանալով լավ պահելու դեպքում մի ֆես ոսկի տալ, և առանց սպասելու քոմսերի պատասխանին՝ խոսող կինը հանեց ոսկիների շարանը և տվեց: Նրան հետևեց մյուս կինը: Թուրքերի սրտերի տրփոցի հետ նաև պլպլացին աչքերը: Համաձայնվելով՝ շարժվեցին կանանց հետ: Անցնելով գերեզմանների գլխավոր փողոցով՝ մտան և նեղ փողանով հասան ջաղացպան Ասպատուրի տան մոտ: Դուռը փակ էր: Կանանցից մեկը մոտեցավ և դռան կոչնակը խփեց: Դա մեր պայմանական ազդանշանն էր: Երկու կրակոց հետևից և երկուսն էլ երևալով, առանց ձայնի ընկան: Սառան պատից թռավ փողոց, մոտեցավ նայեց և նորից յուքանչյուրի գլխին մի գնդակ պարպելով՝ ձեռքով նշան արեց մեզ: Անմիջապես գնացինք մեր ապաստարանը: Տուն հասնելով՝ Սառան կատակելով ասաց.

-Ես տեսա տաք-տաք համբուրվեցիք, դրա համար էլ վերջին երկու գնդակը ուղեղին հասցրի: Դեղեցիկ կին և շողշողուն ոսկիներ:

Երբ երկու կանայք շորերը փոխում էին, տեսա, որ ոսկու շարանները հետ են բերել: Հաց ուտելուց հետո Սառան, որ թուրք զինվորի հագուստով էր, պառկեց մեջքին և ձեռքերը գլխի տակ ծալելով՝ խորասուզվեց մտորումների մեջ: Կանանցից մեկը դիմելով Սառային ասաց.

-Այս դեպքը կասկած կառաջացնի և մեր կողմերը խիստ հսկողության կենթարկեն,-իսկ նա հանգիստ պատասխանեց.

-Միևնույն է, մենք ողջ չենք մնալու: Դրա համար էլ ինչքա՜ն շուտ, ինչքա՜ն շատ, էտքա՜ն լավ:

Երեկոյան, մի փոքր նիրհելուց հետո, անմիջապես տեղափոխվեցինք Եզդանենց Մուշեղի տունը, որը Սերոբ փաշի Զանֆիդայի ֆիդայիներից էր և սպանվել էր 1905-ին Փափշենի կռվում:[132] Այս շենքը հինավուրց կառույց էր՝ երկհարկանի, վեց սենյակներով, երկու թոնրատներով, ներքնահարկում տեղավորված մառաններով, փողոցի կողմից հորդառատ առվով, դեպի գետը տանող գաղտնի անցքով՝ մուղարա, պտղատու ծառերով ու փարթամ այգիներով: Այժմ տունը ամայի էր, քանի որ Մուշեղի սպանության օրերին թուրք խուժանը ներխուժել էր տուն, թալանել և խեղդել ջոջ նանեին, որը ծերության պատճառով չէր կարողացել փախչել: Մյուս եղբայրը՝ Ավագը, 1908-ի *հյուրիհթից* հետո բանտից ազատվելով, նույն փողոցի վրա նոր տուն կառուցեց, որը կոտորածի ժամանակ կուլուխ՝ ոստիկանատուն, դարձրին: Մեր նոր կայանը ստուգելով՝ համոզվեցինք, որ հարմար է:

Երեք երդվյալ կանայք, զրկված հարազատներից, համոզվելով, որ միևնույն է, այսօր կամ վաղը իրենք կսպանվեն, կրկնում էին Սառայի պատվիրանը.«**Սպանի՛ր, որ չսպանվե՛ս**»: Նրանք գիշերը խորհրդակցեցին: Սառան շատ անհանգիստ էր, ես զգացի, որ երեք ընկերուհիներով մտահոգված են միայն ինձանով: Մարթա և Զանո մորաքույրները Սառային պատմեցին Իսմայիլ աղայի նկատմամբ հաջի Սուլեյմանի ունեցած ատելության և հյուքյումեթի խորհրդակցության մասին: Կանայք՝ մորաքույրներս, նախօրոք որոշել էին Իսմայիլ աղայի հետ Սառայի հանդիպումը: Սառան ինձ ասաց, որ երկուսով պետք է գնանք Իսմայիլ աղայի մոտ, իսկ Մարթան Զանոյին պետք է ուղեկցեր հաջի Սուլեյմանի տուն գիշերը պետք է մնար գոռներում՝ սպասելով Զանոյի վերադարձին: Գիշերը խաղաղ քնեցինք: Հաջորդ օրը՝ առավոտյան, Սառան, տեղից վեր կենալով և ինձ կանչելով, հայտնեց, որ երեկոյան երկուսով գնալու ենք Իսմայիլ աղայի մոտ:

Երեկոյան Սառան Զանոյի հետ առանձնացան և զբաղված էին Սառային զուգելով: Ես ու Մարթան նայում էինք լուսամուտից դուրս, տեսնում Թաղիգլխում թուրք մուհաճիրների կողմից իրականացվող թալանը, լսում քրդերի գոռգոռոցները: Սառան և Զանոն դուրս եկան. Զանոն՝ երկու ձեռքերը կրծքին սեղմած, Սառան՝ կերպարանափոխված, երիտասարդ թուրք չավուշի համազգեստով, ֆեսը գլխին: Սառայի մազերը վաղուց էր կտրած, բայց յազմայով ծածկելիս չէր զգացվում:

Ուշ երեկոյան մի փոքր կապոց վերցնելով, ճանապարհը փոխելով, երկուսով բարձրացանք սարի կողմը և առվի եզրով մեր թաղից գնացինք դեպի Ավեխի թաղը: Իջանք թուրքական նեղլիկ փողոցներով, մեկս մյուսիցս 30-40 մ հեռավորությամբ շարժվելով՝ ներքևի կողմից եկանք աղայիս տան կողմը: Գիշերը Սառայի հետ գետեզերքի այգիներով՝ հասանք աղայի շենքը: Թուրքերը վխտում էին, բայց մենք ինքնավստահ, առանց որևէ մեկին ուշադրություն դարձնելու, հասանք դարպասին: Դարպասի դուռը փակ էր: Մի պահ սպասեցինք մինչև շարժվող ստվերները չքացան: Սառայի օգնությամբ ես, մագլցելով պատն ի վեր, իջա Ոսկերչանց բակը: Իսմայիլ աղայի ձին բակում կանգնած էր, ուրեմն ծառան չի գալու: Ես շան բնից հանեցի իմ դրած մախաթը և փականքը շարժելով՝ դարպասի դուռը բացի: Սառան անցավ արտաքնոցը և հետևում էր ինձ: Ներս մտնելով ստուգեցի և շտապ ձեռքով նշան արի Սառային, որ գա: Ամբողջ ընտանիքը քնած էր: Առավոտյան՝ լուսաբացին, աղան շապիկ-փոխանով դուրս եկավ՝ մեր սենյակի միջանցքով բակ գնալու համար: Ես դուռը ծեծեցի և ձայն տվեցի: Աղան իմանալով, որ ես եմ, եկավ դուռը բացեց, բայց տեսնելով կողքիս ժանդարմին՝ շշկլվեց և ուզեց դուռը փակել: Ես դիմեցի Իսմայիլ աղային՝ հայտնելով, որ Սառա խանումը իրեն է սպասում.

-Աղա՛, մի վախնա, սա հայ է, քեզ մոտ է եկել, բան ա ասելու:

Իսմայիլ աղան վախվխելով ընդունեց և ներս թողնելով կարգադրեց տուն գալ և *օդայում* /սենյակ/, սպասել իրեն, իսկ ինքը մտավ իր սենյակը՝ շորերը հագնելու: Մինչ նրա գալը՝ Սառան մառանից ներս եկավ և մենք միասին սպասեցինք աղային: Աղան ներս մտավ, տոնականորեն զգեստավորված՝ մեծ քոլոզով, մետաքսյա չալմայով, հագին թանկագին աբան, կապույտ երիզներով մահուդյա շալվարով և արծաթյա խանչալը գոտում, ատրճանակը կողքին կախած, բեղերը յուղոտած, սրած, Աղության Կարապետ աղայի ոսկենախշ գավազան-կոպալը մի ձեռքին, թանկագին թազբեխը մյուս ձեռքին: Սրանով երևի ուզեցավ ցույց տալ Օլոճոյենց աշիրաթի[133] համբավն ու մեծությունը: Իրոք որ Իսմայիլ աղան գովեստի արժանիք ուներ, նա հարմարվող ցեղապետ էր: Իսմայիլ աղան ծանոթ էր Սառայի ամուսնուն, արժանացել էր նրա հյուրասիրությանը, բայց Սառա խանումի հետ առիթ չէր ունեցել հանդիպելու և խոսելու: Մինչ նրա գալը, Սառան ֆեսը հանեց և կանացի դեմքով դիմավորեց աղային: Թուրքական կեղծ քաղաքավարությամբ բարևելով՝ աղան հրավիրեց բազմել բարձերին և ձեռքը սրտին տանելով՝ ասաց.

-*Դունյա իշիքը* /աշխարհի գործն է/ ա՛յ բաջի,-ու լռեց:

Ապա զարմանքից ապշած՝ աղան նայեց և ասաց.

-*Խեր օլսուն,* ի՞նչ եք ուզում:

Սառան Իսմայիլ աղային ասաց.

-Մենք քաղցած ենք, բեր մի կտոր հաց ուտենք ու խոսենք:

Սառան այս առաջարկությունն արեց նրա համար, որ մենք տեղափոխվեինք այս սենյակից մի ուրիշ տեղ, որ նրա կինը կամ երեխաները իրեն չտեսնեն, խոսակցությունը չլսեն: *Ղայլանը* ուզեց, ես իսկույն մատուցեցի և փամփաքին կպցնելով՝ սեղմեցի ծխախոտի վրա: Նա սկսեց ագահորեն ներս քա-

շել: Սառա խանումը գլխարկը վերցրեց և կանգնած դիմելով Իսմայիլ աղային՝ ասաց.

-Ես քեզ մոտ առաջին և վերջին անգամն եմ լինում: Ես եկել եմ քեզ մոտ մի բան խնդրելու, եթե չմերժես, ահա քեզ այս քսան ոսկին, իսկ եթե օգնես, ավելին կստանաս:

Աղայիս երկու հարկանի տունը՝ չորս սենյակներով և այլ օժանդակ հարմարություններով, չէր հագեցրել նրան և նա մի քանի ոսկի կաշառքով իր շենքին կից Ոսկերչանց տունն էլ էր գրավել՝ ձևակերպելով իր անունով: Լինելով քաղաքի հարուստ ազդեցիկներից, նա լավ հարաբերությունների մեջ էր կրոնական թեմերի շեյխերի, մոլլաների, հաջիների, պետական ղեկավար անձանց հետ: Նա պետությանը սննդամթերք, հատկապես մսեղեն էր մատակարարում: Նա շատ խորամանկ էր, գիտեր գրավել և կարող էր կործանել:

Աղան տարակուսանքի մեջ ասաց.«Ի՞նչ ես ուզում»,-և քարացած նայեց Սառայի դեմքին: Իսմայիլ աղան հմայված էր, նրա հիպնոզացած աչքերը բևեռված էին կնոջ դեմքին, որի կիրթ թուրքերենը զարմացնում էր: Սառան, նկատելով Իսմայիլ աղայի շփոթվածությունը, կանգնեց, մոտեցավ աղային, տղամարդու նման ձեռքը ուսին դնելով, համարձակորեն, առնական տոնով ասաց.

-Իսմայիլ աղա՛, ես քեզ լավ եմ ճանաչում, իմ ով լինելս չհարցնես, ես մի դժբախտ հայ կին եմ, այսօր կամ վաղը, չկամ: Վերցրու այս քսան ոսկին մեր տեսակցության համար:

Սառան, նկատելով թուրքի վավաշոտությունը, որի հայացքը սևեռված էր իրեն, ավելի գրգռելու համար, ձեռքը թևին սեղմելով, ձեռքից բռնեց և նստեցին մութաքաների վրա՝ դեմ դիմաց: Սառան քանդեց զինվորական բաճկոնի օղակները և կրծքի վերևը բացելով՝ երկու ձեռքը տարավ ու վզից ոսկե շարքը հանելով՝ մեկնեց աղային՝ ասելով.

-Վերցրե՛ք, այս իմ կողմից քո խանումին նվեր:

Իսմայիլ աղան չհավատալով իր տեսողությանն ու լսողությանը, կարծելով, թե տեսիլք է, իսկույն կանգնեց, ձեռքը դնչին տանելով սեղմեց, բեղերը ոլորեց, քաշեց և մի քայլ շրջանցելով, աչքերը սևեռեց Սառայի դեմքին ու նրա կիսաբաց կրծքին: Աղան ձեռքը մեկնեց դեղին ոսկիներին, խլելով վերցրեց ոսկու քիսան ու ծանրութեթև անելով՝ գրպանը լցրեց: Իսմայիլ աղան չէր հավատում իր աչքերին: Նա ինքնակորույս վիճակի մեջ էր, ապշած նայում էր և խորասուզված երևակայում, թե արդյո՞ք սա երազ չէ, թե իր հետ կատարվածը արդյո՞ք խաղ չէ: Զգաստանալով ոսկու պարկի ծանրությունից՝ աղան ժպտած ու ծանրորեն բազմեց մութաքաների վրա՝ հանգստանալու աշխատանքի ծանրությունից: Սառան զգալով, որ աղան ամբողջ էությամբ հմայված է իր բաց կրծքով, բռնեց նրա ձեռքը և ասաց.«Դե, վերցրու՛», բայց աղան արձանացել էր, նա չէր լսում ոսկիների ձայնը, չէր տեսնում հինգ ոսկիանոց կրամիցաների շղթան: Սառան, մի ձեռքով մազերը ուղղելով, ֆեսը դրեց գլխին, ապա շորի կոճակները կոճկելով և երկու ձեռքով բռնելով աղայի ձեռքը՝ կրկնեց.«Վերցրու՛, աղա՛»: Սառայի ձեռքի հպումը աղայի մարմնին էլեկտրա-

կան հոսանքի ազդեցություն ունեցավ, իսկ ոսկիները նրան բարձրացրին յոթերորդ երկինք՝ մեծ Մահմեդի՝ Ռասուլ ալլահի դիվանը:[134] Աղան սթափվեց ոսկիների շռինգից, երկու ձեռքով վերցրեց և կարծես թե ծանր բեռ էր կրել, հոգնած ձեռքը տարավ ու ճակատի քրտինքը սրբելով, վախվխելով և զգաստացած Սառային նայելով՝ ասաց.

-Դու մա՞րդ ես, թե՛ սատանա՞: Ի՞նչ ես ուզում ինձանից:

Սառան նորից քնքշորեն շոյեց նրա թևերը և ասաց.

-Ես մի հայ կին եմ, դու հանգիստ կա՛ց, խոստացիր, որ չես մերժի իմ խնդրանքը, և ես քեզ լավ կվարձատրեմ:

Աղան նորից նայեց Սառային.

-Ա՛յ աղջի, դու այստեղացի չես, քո լեզվից է երևում, ի՞նչ տեղ ես ապրում, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում ինձանից:

-Իսմայիլ աղա՛, ինչպես տեսնում ես, ես մի դժբախտ հայ կնոջ մնացորդ եմ: Քե՛զ, թո՛ղ չհետաքրքրի իմ ով լինելը: Ասա՛, խոսք տալի՞ս ես՝ ինձ մի փոքր չափով օգնել:

Իսմայիլ աղան զգաստացավ, վեր կացավ ղայլանը՝ նարգիլեն բերեց, փամփաքին փոխեց, վառեց և սկսեց ծխել: Խորը և ագահորեն ծծելով՝ սենյակը լցրեց ծխով և թրքական հատուկ դիվանագիտությամբ ու սովորությամբ դունչը ցցելով և Սառային նայելով՝ ասաց.

-Այ *կը՛զ* /այ աղջի/, այ հայո՛ւ կնիկ, դու խաղում ես իմ ազգի, իմ պատվի, իմ կյանքի հետ: Ես թու՛րք եմ, մաքուր մուսուլման, ինձնից ողջ քաղաքն է դողում, իսկ դու՛, մի հայ կին, այս խառնաշփոթ օրերին եկել, չգիտեմ ի՞նչ ես ուզում…[135]

-Իսմայիլ աղա՛, դու այդ բոլորը ճիշտ ասացիր, ես քո մասին ավելին գիտեմ, դրա համար էլ եկել եմ քեզ մոտ, ես հայ եմ, միևնույն է, էսօր կամ, վաղը ինձ կսպանեք, համոզված եղիր, որ իմ՝ քեզ մոտ գալս ու գնալս միայն էսօրն է, դու այլևս ինձ չես տեսնի և փնտրես էլ չես գտնի: Հիմա լսի՛ր, քանի ես կենդանի եմ, այս տղան ինձ հետ է լինելու և կմնա ինձ հետ, թող քեզ մոտ էլ գա-գնա: Իմ ունեցած փողերս թողնելու եմ Միհրանին…

Իսմայիլ աղան զգաստանալով *նարգիլեն* մի կողմ դրեց և երկու ձեռքերը շփելով, միացնելով, վեր բարձրացնելով՝ երդվեց.

-Ա՛յս տղան, ի՛մ Նուրին է, ի՛մ տղան է, սա պետք է մնա ինձ մոտ: Ո՞վ կհամարձակվի սրան ձեռք տալ:

Եվ մի պահ մտածելուց հետո, ավելացրեց.

-Ա՛յ *էրմենի կը՛զ,* մենք՝ թուրքերս, ձեր նկատմամբ շատ սուտ երդումներ ենք տվել, մեկ է՝ ինչով որ երդվեմ, դու չես հավատա,-և ձեռքերը պեխերին տանելով, հետո ձեռքը գլխիս դնելով, դեպի վեր նայելով՝ ասաց.

-Ա՛յ, ձեր և մեր ալլահը վկա, ես երդվում եմ իմ նամուսով, իմ հավատով, որ քանի կենդանի եմ, իմ տան մեջ քեզ ձեռք տվող չի լինի, իմ տղայի՝ Նուրիի մազին դիպչող չի լինի…[136]

Քիչ խորհելով, դառնալով Սառային, անվստահ ձայնով ծնկի գալով՝ աղերսեց.

-*Այ խանում, հոջա էյլերեմ* /խնդրում եմ/, արի դարձիր իմ երկրորդ կին,-և աչքերը չռելով Սառային՝ սպասեց պատասխանի: Սառան դառը ժպիտով նայելով աղային՝ ասաց.

-Իսմայիլ աղա՛, իսկապես, որ դու թուրք ես քո ամբողջ էությամբ, քեզ դուր են գալիս կինն ու ոսկին: Քո ասածների կեսին ես հավատում եմ և համաձայն եմ:

Եվ կիսակատակ հեգնանքով ավելացրեց.

-Ինչու՞ չէ, կտրամադրես առաջին հարկի անկյունի սենյակներիցդ մեկը և ինձ Նուրիի միջոցով ուտելիք կուղարկես:

Աղան առարկեց.

-Ա՜յ աղջի, քեզ վայել է իմ սենյակը, հենց հիմիկվանից արի գնանք, էլ ի՞նչ գլուխդ ցավացնում ես: Չսպասելով աղայի պատասխանին՝ Սառան կրկին հարցրեց.

-Իսմայիլ աղա՛, դու համաձա՞յն ես, թե՞ ոչ, խո՛սք տուր, ես գնալու եմ զորանոց,-և գլխարկը ուղղելով՝ կանգնեց շարունակելով կոճակները կոճկել:

Աղան էլ կանգնեց և մեխանիկորեն ձեռքը գրպանը տանելով՝ սկսեց մատներով խաղալ ոսկիների հետ: Իսմայիլ աղան ծանրորեն մոտեցավ Սառային և կրկնեց.

-Ես ձեր և մեր ալլահի անունով երդվում եմ, որ Նուրին իմ տղան է:

Նայելով Սառային, որն ուզում էր դուրս գալ, մոտեցավ և դողդղալով ձեռքից բռնելով՝ ասաց.

-Լա՛վ, ինչ որ ուզում ես, համաձայն եմ,-և հայացքը Սառային հառած և ձեռքը բաց չթողնելով՝ մագնիսացած կանգնեց:

Երեքով միասին դուրս եկանք տնից դեպի բակը, Սառան զգալով աղայի վավաշոտությունը և օգտվելով նրա կաշկանդվածությունից և թուլամորթությունից՝ բակում, խավարում կանգնած, կիսալուրջ հարցրեց.

-Իսմայիլ աղա՛, Իսմայիլ աղա՛, դուք մեծ հեղինակություն ունեք, ինչու՞ չեք մասնակցում ջոջերի ժողովներին: Երեկ երեկոյան Մուշի ղայմակամի հարցն էր դրված, քաղաքի և գավառների բոլոր հայտնի մարդիկ ներկա էին, դուք չկայիք, խոսեց Մանդոի փաշան: Պինպաշին շատ ջղայնացած էր…

Աղան, լսելով այս խոսքերը, մի սառնություն զգաց, շշմեց, զարմանքն ու սարսուռը տիրեց նրան: Բոպեական երկյուղն ու վախը թուլացրեց աղային, քիչ մնաց գիտակցությունը կորցնի, ուժասպառ նստեց ու ձեռքը ճակատին տանելով, կմկմալով ու հեկեկալով՝ ֆսֆսաց.

-Դու որտեղի՞ց գիտես:

-Իսմայիլ աղա՛, չե՞ս տեսնում, ես զինվոր եմ,-կեցվածքն ուղղելով ու ֆեսը շփելով՝ առնական տոնով ասաց Սառան և մի երկու շարժումով ձեռքի կապոցն արձակելով՝ հանեց գոտիով ատրճանակն ու ամրացրեց մեջքին: Նայելով Սառայի դեմքին, կեղծ բեղերին ու նկատելով Սառայի մի գրպանից հանած փոքր ատրճանակի մյուս գրպանը տեղափոխելը, ինչը գովելի խեղկատակություն էր, Իսմայիլ աղան, որ շատ զոռ բաների հետ էր մարտնչել, շփվել, հանկարծ մի պահ շփոթվեց:

Այդ պահին տղաներին զսպելու համար աղայի ննջարանից լսվեց Ֆաթմա խանումի գոռոցը: Երկխոսությունը վերջացավ: Դուռը շրմփացնելով, աղան իր վիթխարի հասակով շարժվեց սենյակի կողմը: Ես իսկույն բաց արի գաբանքը, մենք իջանք ներքև և դեպի բակ նայող բաց լուսամուտով դուրս գալով՝ անհետացանք: Ցերեկը մնացինք ներքևում գտնվող Խանոյենց դատարկ տան գոմում, և մութը ընկնելու պես՝ տեղափոխվեցինք մեր ամրոցը:

* * *

Փոքր գոռների՝ գերեզմանների ներքևում, գետից վերև, հարավային կողմում էր ապրում Ճերճիս էֆենդու ծանոթներից՝ հաջի Սուլեյմանը: Հաջի[137] Սուլեյմանը ծանր հիվանդացել էր, հրավիրել տոքթոր Ճերճիս էֆենդուն, որին հաջողվել էր փրկել նրան մահից: Երախտապարտ Հաջի Սուլեյմանը, բարեկամանալով Ճերճիս էֆենդու հետ, պատերազմի տարիներին գաղտնիքներ էր հայտնում, զգուշացնում, նույնիսկ 1915-ի մարտին խորհուրդ էր տվել հեռանալ Թուրքիայից: Սառայի վաղեմի ծանոթ Հաջի[138] Սուլեյմանը ու Իսմայիլ աղան ախոյաններ էին. արտաքուստ իրար բարեկամ ձևանալով՝ գործում էին երրորդ անձի միջոցով՝ աշխատելով նյութապես սնանկության մատնել միմյանց: Այդ տեսակետից Իսմայիլ աղան ավելի խորամանկ էր: Վերջերս՝ այս աղետալի օրերին, նա, հայերին մի քանի օրով պատսպարելով, բավականին հարստացել էր: Իսմայիլ աղան ավելի ուժեղ էր և իշխանության հետ կապեր ունենալով՝ գործում էր բացարձակ: Տիկին Սառան, ամուսնու և երեխաների դիակները հողին հանձնելուց հետո, դիմել էր հաջի Սուլեյմանին, սակայն մի քանի օր մնալուց հետո, նկատելով նրա կանանց վավաշոտ կասկածները, հեռացել էր՝ հաջի Սուլեյմանին թողնելով ծխախոտի արծաթյա տուփը և երկու ոսկյա բիլազուկներ՝ ապարանջան: Հաջի[139] Սուլեյմանը, հաճույքով ընդունելով իր խանումներին Սառայի նվիրած ընծաները, համոզված էր, որ Սառայի միջոցով հարստություն ձեռք կբերի:[140] Հաջի Սուլեյմանը Սառային ակնարկել էր, որ իր ախոյան Իսմայիլ աղան էլ հայերին պահելու շնորհիվ մեծ օգուտներ է ունենում: Նա հույս ուներ, որ Սառայի, Մարթայի միջնորդությամբ կհասնի իր նպատակին և այդ նկատառումով, սիրաշահելով հայ կանանց իր կեղծ երդումներով, հավատարմություն էր ցույց տալիս: Հաջի Սուլեյմանի հետ վերջին հանդիպումից հետո Մարթայի և Զանոյի մեջ կասկած էր առաջացել: Ճիշտ է, նա, խոստմանը համաձայն՝ ինչքան կարող էր մինչև վերջին ոոպեն գործում էր ու օգնում, բայց բաժանվելիս պահանջել էր վաղը կամ մյուս օրը գալով՝ երկու հարյուր ոսկի բերել: Դա էլ առիթ ծառայեց, որ Սառան հետևություն աներ ու երկմտելով խուսափեր նրանից: Միաժամանակ Սառան գիտեր, որ իր նախկին բարեկամ հաջի Սուլեյմանը կդառնա ամենավտանգավոր թշնամին: Ի՞նչ անել, ուղարկե՞լ փողերը և զրկվել մեկն ու մեկից, թե՞ հրաժարվել նրա ծառայությունից:

Մարթան առաջարկեց, որ ինքը փողը տանի և, ըստ հնարավորության,

խոսք քաշելով՝ իմանա հաջիի մտադրությունների մասին: Սառան և Զանոն առարկեցին, բայց նա կանգնեց, նայեց մեզ, կանացի թուլությամբ փղձկաց, ջերմագին ընկավ Սառայի ու Զանոյի վրա, համբուրեց նրանց, արցունքները սրբելով հագավ թրքուհու շորեր, վերցրեց փողերը, ատրճանակը և ասաց.

-Սառա ջա՛ն, ե՛ս կգնամ, եթե հաջին չմատնի, ես վաղն առավոտյան տանը կլինեմ:

Ողջագուրվելուց հետո Զանոն մնաց, իսկ մենք դուրս եկանք: Իջնելով թուրքերի գերեզմանները՝ Մարթան գնաց հաջի Սուլեյմանի տուն: Ըստ մեր պայմանավորվածության, Զանոն, գոռների թաքստոցում մնալով, պետք է կապ պաշտպաներ մեր մեջ:

Լուսամուտի փայտե ճաղերից ներս սողալով՝ դուռը բացի: Սառան ներս եկավ, բոխչաները մի կողմ դնելով՝ լուռ նստեցինք: Գիշերը մեզ համար ահավոր էր, մեր լուռ, դժնդակ համբերությունը մեզ խեղդում էր: Ամբողջ գիշերը մենք լարված վիճակում սպասեցինք, բայց մերոնցից ոչ մեկը չկար: Սառան ջղաձգությունից մատներն էր կրծում, ինքն իրեն տանջում, բայց ի՞նչ կարող էինք անել, քանի որ տեսնում էինք, թե ինչպես ժանդարմների ու տեղացի խուժանի հետ ընդհարվելով՝ թուրք մուհաճիրների խառնիճաղանջ ամբոխը վխտում էր, սողոսկելով հայոց տներ՝ ապաստանելու և թալանելու համար: Սառան վեր կացավ, լուցկու լույսով զննեց նկուղի ելքն ու մուտքը, պատի միջով իջնող կեղտաջրի անցքը, որը հատակի տակով գնալով՝ լայնանում էր՝ հասնելով այգիների մեջ: Չնայած գարշահոտությանը, Սառան, գրեթե մերկացած, մտնելով անցքը և փորսող գնալով՝ դուրս եկավ: Օգտվելով գետի մոտ լինելուց՝ լողացած եկավ դեպի տուն: Ես, լուսամուտից տեսնելով կիսամերկ կնոջը, շփոթվեցի, բայց նա ձեռքով արեց և ես իսկույն դուռը բացի: Սառան ներս եկավ և նայելով ինձ ասաց.*«Այս անցքը մեզ մի օր պետք կգա»:*

Լուսադեմ էր, Զանոն չերևաց: Սառան ջղայնությունից մատներն էր կրծում: Նա, դառնալով, մոտեցավ ինձ ու կրծքին սեղմելով՝ ասաց.

-Դու՛, քանի դեռ չի լուսացել, անմիջապես գնա՛, գոռների թաքստոցի մոտ կսպասե՛ս, եթե Զանոն չկա, սպասի՛ր Իսմայիլ աղայի գալուն, որը ամպայման, տանից ուղիղ կարճ ճամփով պետք է գա և անցնի ներքև՝ շուկա:

Ճանկով մի քանի ոսկի գրպանս լցնելով՝ հետս եկավ մինչև գաղտնամուտքը.

-Հինգ ոսկի տուր աղային և սպասիր նրան մինչև երեկո: Խանութից վերադառնալիս նա երևի մի խաբար կբերի:

Անմիջապես, ամենայն զգուշությամբ հասնելով գոռների մեր գաղտնարանին՝ ցավոք սրտի տեսա, որ Զանո մորքուրը չկար: Շտապեցի ճամփի եզրը՝ սպասելու աղայի գալուն: Բարեբախտաբար, աղան երևաց առանց ծառայի և այգիների մոտի արահետով անցնելիս ես, աղա կանչելով, դիմեցի նրան: Իսմայիլ աղան ժպտալով ինձ նայեց և խուրջինը ինձ մեկնելով՝ ասաց.

-Օ՜հ, ինչ լավ եղավ, որ եկար, վերցրու խուրջինը՝ միասին գնանք:

Մերժելու ոչ մի հնարավորություն չունեի: Խուրջինը թևիս գցելով՝ գնա-

ցինք գոռների կողքի արահետով, հասանք շուկա: Խանութը բացեց, վերցրեց սպանդանոցի բանալիները, գնացինք մինչև դասաբխանեն՝ սպանդանոց: Իրեն սպասող սպանդներին՝ դասաբներին տալով բանալիները՝ եկավ: Աղայի տղայի պճնավոր հագուստով էի: Աչքի տակով նախանձով ինձ նայելով՝ գաղթական թուրքերը ոչխար էին մորթում: Իսմայիլ աղան, խուրջինը վերցնելով, գնաց խանութի կողմը: Ես հետևեցի նրան: Նա խանութի աշխատակիցներից մեկի հետ գնաց մթերք գնելու: Վերադառնալով, աղան նույն պահին, նույն գաղթական ծառային հանձնարարեց գնումներ կատարել *դասաբխանից* և Նուրիի հետ տուն գնալ իր *ամիոզլու*՝ հորեղբոր որդու ճամփով: Մի երկու քայլ չէինք հեռացել, նկատեցի, որ մի քանի խանութպան թուրքեր հավաքվեցին աղայի շուրջ և ահից զարմացած ու սարսափած դեմքերով, մեկը մորուքը բռնելով, մյուսը՝ երկու ձեռքով երեսը ծածկելով, գլուխները օրորելով՝ նոր դեպքի մասին էին խոսում: Նկատելով աղայի խանութի մոտ հավաքված թուրքերին, որոնք ահաբեկված մեկմեկու հայտնում էին ինչ-որ արտասովոր դեպքի մասին, Իսմայիլ աղան, իսկույն կլանվելով այդ գույժի սարսափով, հրավիրեց նրանց իր խանութի ետևի բակը: Ես հետ եկա և աղայիս մոտենալով ու ափի մեջ դնելով հինգ ոսկի, ասի, որ նա է ուղարկել: Աղան զարհուրած դեմքով ինձ նայեց և ափի մեջ դրածս ոսկիներին: Մի թևիցս բռնելով ու մի երկու քայլ նրանցից հեռացնելով՝ ինձ ցածր ձայնով ասաց.

-Գիշերը հաջի Սուլեյմանին սպանել են, ծառային վիրավորել են ու փախել: Խփողը մի կին է եղել:

Ես իսկույն հետ եկա: Ծառան, գաղթական թուրքերից լինելով, ինձ չէր ճանաչում և հարգանքով էր վերաբերվում: Ճանապարհին գլուխը օրորելով՝ մրթմրթաց.*«Աղաօղլի՛* /աղայի տղա/, էս գիշեր հաջիին սպանել են»: Ես ուշադրություն չդարձնելով՝ հեգնանքով ասացի, որ զարմանալի բան է ասում: Ուղեկցողիս հետ տանը մոտենալով՝ խուրջինը դրեցինք թոնրատանը: Ես ծառայից խույս տվեցի, ձևացնելով, թե մեր տուն եմ գնում և զգուշությամբ թաքնվեցի աղայի տան կից դատարկ սենյակներում: Հետիս թուրքը գնաց խանումի մոտ, իսկ ես դուրս եկա և մտնելով այգի, սպասեցի մինչև նրա գալը:

Երեկոյան բակում սպասում էի աղայի գալուն: Վերջապես աղան եկավ ծառայի հետ: Ծառան ձին ախոռը տարավ, մի երկու կուժ ջուր բերելուց հետո գնաց: Աղան անթարիով դուրս եկավ բակը՝ ծխամորճի մեջ դրած՝ փաթաթած հաստ սիգարետը բերանին: Բարեբախտաբար, այդ բակը և կից սենյակները՝ Ոսկերչանց տունը, նոր էր յուրացվել աղայի կողմից, և երթևեկություն չկար, հետևաբար, ես որոշ չափով ինձ ապահով էի զգում այստեղ: Իսկույն մոտեցա աղային, գրպանումս եղած ոսկիները նրա ափը լցրեցի: Նա, անտարբեր ձեռքիցս բռնելով, ինձ տարավ թթենու մոտ գտնվող քարե նստարանի մոտ և հորանջելով ասաց.

-Օղու՛լ, էս գիշեր հաջի Սուլեյմանին և իր հավատարիմ յոթանասուն տարեկան ծառային սպանել են: Փոլիսներն ասում են, որ դա հարևան մուհաճիրների սև գործն է:

Ծխամորճը թափ տալով, մաքրելով և թևիցս բռնելով՝ գնացինք տուն,

բայց ես թոնրատնից չհեռացա և դիմելով աղային, անվստահ խնդրեցի, որ ես պետք է գնամ: Տագնապալի ժամերով, բոպեներով կաշկանդված՝ մտքերս, ողջ ուշքս ու միտքս Սառայի, Մարթայի ու Զանոյի վիճակն էր: Սրանով տարված՝ բոպե առ բոպե ուզում էի շուտ պոկվել աղայից, բայց նա առաջարկեց սպասել աղախնին, որը սպասարկելու էր ճաշով: Բարեբախտաբար, աղախինը ներս մտավ և անմիջապես ինձ սեղանի մոտ հրավիրելով, լավաշ հացի հետ պղնձյա թեփսիներով ջոջ գլուխ քյուֆթաներ հրամցրեց, և ինքը շտապեց խանումի մոտ: Առանց վայրկյան կորցնելու ուտելիքները տոպրակի մեջ լցնելով, ծառայի բերաց ջիզյարներից մեկը և պահարանից մի քանի կտոր սուջուխ վերցնելով՝ անհետացա կիսախավար այգիներով:

Աստղերը արդեն փայլում էին, երբ ես Սառայի մոտ էի: Մոտեցա նկուղի փոքր լուսամուտին և ներս սողացի: Սառայի ուրախությանն ու հրճվանքին չափ ու սահման չկար: Նա, ինձ տեսնելով, մայրաբար փաթաթվեց ու իր կրծքին սեղմելով՝ լուռ հեկեկաց: Ա՜խ դառը ճակատագիր և ներկայի անհույս վիճակ, ինչե՜ր չէին անցնում մեր հիշողության միջով, ինչպիսի՞ վախճան էինք ունենալու: Սառան ինձ և իմ ահաբեկված դեմքը տեսնելով՝ հարցրեց.«Ի՞նչ է պատահել»: Պատմեցի նրան: Ունկնդրելով ինձ՝ Սառան փշաքաղված վեր թռավ, երկու ձեռքերով ինձ ձգելով, կարծես թե չհավատալով, նորից հարցրեց.«Ուրեմն արդեն…»: Նա հանգիստ լսեց, ինձ գրկեց, համբուրեց ու մտախոհ թևիցս բռնելով՝ նստեցրեց իր կողքին: Մի պահ լռելուց հետո ասաց.

Ուրեմն սրիկան դավաճանեց իր սուտ երդմանը: Ես գիտեի և պարզ էր, չէ՞ որ նա թուրք էր, բայց ի՞նչ պատահեց Մարթային: Զանոն մենակ է, պետք է նրան տեսնել:

Կեսգիշերն անցել էր: Այս անակնկալ դիպվածը ուրախացնում ու տխրեցնում էր Սառային ու ինձ, իսկ Զանոյի ու Մարթայի անհայտ վիճակը մեզ տարակուսանքի էր մատնել: Հաջորդ օրը մինչև երեկո սպասեցինք աղայի տուն գալուն: Երեկոյան ուշ՝ Սառան, ինձ տալով իր վզի ոսկե շարանը, ասաց.

-Գնա՛ աղայի մոտ, գուցե նա՞ պատմի, ոնց է պատահել սպանությունը և փախչողի մասին:

Սենյակից սենյակ անցնելով և աշխատելով խանումից խույս տալ, մտա աղայի օդեն /սենյակ/: Նա բազմել էր բարձերի վրա և թախծոտ դեմքով նարգիլե էր քաշում, իսկ կնոջն ու մեծ տղային ուղարկել էր ազգականներին կանչելու: Ինձ տեսնելով սթափվեց իր խոհերից և ասաց.

-Ու՞ր էիր գնացել:

Ես հեզաբար ասացի.

-Չուզեցի, որ խանումը ինձ տեսնի, գուցե նեղանա՞ր:

Նա աչքերը չռեց վրաս՝ ասելով.

-Դու մեր տղա՛ն ես, ոչ-ոք քեզ իմ տանը չի վշտացնի,-և ձեռքով արեց, որ նստեմ: Օգտվելով նրա սիրալիրությունից՝ նստեցի և գրպանիցս հանելով ոսկու շարանը՝ ասի.«Սառան է տվել»: Վերցնելով թանկարժեք նվերը՝ հաշվեց յոթ կրամիցա, դա մեծ հարստություն էր, դրեց բարձի տակ ու հարցրեց.

-Բա ինքը որտե՞ղ է,-ու մի պահ մտածելուց հետո, ասաց,-գնա՛, շուտ կանչիր նրան, բան ունեմ ասելու:

Ղայլանի՝ նարգիլեի կրակը խառնելով, մի երկու կում ագահորեն ծծելով, ծուխը բերանից քուլա-քուլա բաց թողնելով՝ կանչեց, մոտեցավ *փենջարեին* /լուսամուտ/, և դառնալով ինձ ասաց.

-Հիմա մեր տուն մարդիկ են գալու, դու նրանց մոտ մի երևա, գնա Սառային բեր: Ինձ կսպասեք թոնրատան ետևի սենյակում,-և լսելով ոտնաձայներ՝ ուղղվեց դեպի միջանցքի դուռը, իսկ ես, մյուս դուռը գնալով, հետ եկա՝ ծլկելով ու խցկվելով մուսանդարայում դարսված անկողինների արանքում:

Առավոտյան՝ լուսադեմին, գետի գաղտնանցքով եկավ Զանոն՝ հոգնած, սոված, տխուր ու լուռ: Նա պատմեց, որ երբ Մարթան դուրս էր գալիս հաջի Սուլեյմանի բախչայից, դուրս գալու պահին ծեր պահակը բահով հարվածել էր Մարթային ու փոխարենը ստանալով մեկ գնդակ ուղիղ կրծքին՝ ընկել էր տեղում: Մարթայի գլխի վերքը ուժասպառ էր արել նրան: Արյունաքամ վիճակուն նա հազիվ էր հասել Զոջ գերեզմանները և նահատակվել թթենու տակ: Զրկվելով մորաքույր Մարթայից՝ տխրությամբ անցկացրինք ցերեկը: Անորոշ զգացումներով տարված՝ գայլի ձեռքն ընկած ոչխարի նման սպասում էինք մեր գալիք վախճանին: Երեկո էր: Պարզ տեսնում էինք մեր դիմացի Թաղիգլխի մի քանի տներում վառած լամպերի լույսի ճառագայթումը: Մեզ պատել էր մղձավանջը: Սառան, միանգամից վեր կենալով և զինվորականի նման մի քանի քայլ ետ ու առաջ անելով, թևիցս բռնելով, ձգեց դեպի իրեն և իր հմայիչ ձայնով, բայց ինձ թվաց հրամայական տոնով, գլուխս շոյելով, ասաց.

-Միհրա՛ն, դու պետք է գնաս Իսմայիլ աղայի տունը. ինչքան հնարավոր է ծածուկ հետևես և իմանաս՝ էդ սատկածներին ե՞րբ և որտե՞ղ են թաղելու:

Զանոն թախանձագին խնդրեց Սառային հրաժարվել իր մտահոգացումից, քանի որ դա անհնարին էր և վտանգավոր, բայց Սառայի ցանկությունը միաժամանակ և մեր պահանջն էր, վրեժի ծարավի մոլեգնությամբ տառապողներիս երևակայության դառը հետևանքը: Թողնելով ինձ և մոտենալով Զանոյին՝ նա կրկնեց իր երիցս ասացած բառերը.

-Սպանի՛ր, որ չսպանվես: Միևնույն է, մեզ կսպանեն: Զանո քույրի՛կ, մենք ժամերով ենք ապրում և հնարավոր առիթը չպետք է թողնել,-և բարձին հենված՝ գլուխը երկու ձեռքերի մեջ սեղմեց:

Լի մտորումներով, դառն ու դաժան հիշողություններով կաշկանդված, ամեն ժամ, ամեն րոպե պատրաստ՝ կանգնել մահին դեմ հանդիման, իր հանդուգն բնավորությամբ պատրաստ՝ դիմավորել մահը մի պայմանով՝ սպանե՛լ, հետո սպանվելու գիտակցությամբ: Մորաքույր Զանոն, ձեռքը դնչին դրած, սպասում էր: Սառան հանկարծ սթափվեց և խոսեց.

-Զանո ջա՛ն, մոտ երկու ամիս է, որ մենք երկուսով ապրում ու մեռնում ենք, բայց և այնպես դեռ կենդանի ենք: Մենք ոչ վստահ ենք մեր կասկածոտ ու թեր անելիքին, այն, ինչ մենք կարողանանք անել, այդ է միայն մեզ փարատողը:

Մութն ընկել էր: Զանոն ինձ կանչեց թոնրատուն, ճրագի լույսով զննեց

նոր, ավելի թրքական ճաշակի հագուստներս և վզի երկու շարք կրամիցաները թաշկինակի մեջ դնելով ու մի ափ ոսկի գրպանս լցնելով՝ առաջնորդեց մինչև գաղտնանցքը: Ես, մոմի լույսից օգտվելով, դուրս եկա գետեզր, և քսանհինգ-երեսուն րոպեից հետո աղայի տան թոնրատանն էի: Համոզվելով, որ բոլորը քնած են, գնացի բակը և նկատեցի, որ ծառերին կապված էին չորսհինգ ձիեր: Իսկույն թաքնվելու մտքով ծպտվեցի թոնրատանը, բայց այստեղ նույնպես քնած մարդիկ նկատեցի: Կամացուկ, զգուշությամբ միջանցք գնալով՝ բաց արի դուռը՝ մտնելով նախկին Ոսկերչյանց օդան: Ոչ ոք չկար: Օգտվելով առիթից, բարձրացա մուսանդարի առաստաղին, որը մոտ երկու և կես արշին բարձրություն ուներ: Լուռ ու մունջ տեղավորվեցի: Բարեբախտաբար, մոտ մի ամիս առաջ էլ առիթ էի ունեցել այստեղ մի երկու օրով թաքնվելու և քանի որ ապահով էի զգում ինձ, մի բարձ ու վերմակ հանել էի վերև: Ձիերի և օտար մարդկանց ներկայությունը ինձ ստիպեցին չեզոքանալ և սպասել պատեհ առիթի՝ աղային հանդիպելու համար: Լուսադեմին աղան, ծառան և աղախինը գալով օդա, հյուրասենյակ մտան: Աղան կարգադրեց կահավորել, նույնիսկ իրենց օդայում կախված մեծ լամպը բերել ու կախել առաստաղից: Լսելով լամպը կախելու մասին կարգադրությունը՝ դողը բռնեց ինձ, քանի որ պետք է բարձրանային սանդուղքով: Ծառային և աղախնին օգնում էր և կարգադրում Ֆաթմա խանումը մի քանի կանանց հետ, որոնք նախանձով էին նայում օդայի շնորհալի կահավորանքին՝ զարմանալի աթոռներին, թանկագին սպասքին և այլ արտակարգ հարմարանքներին ու կահ-կարասուն: Ֆաթմա խանումը հրճվում և գոռոզանում էր, լսելով նրանց գովասանքները՝ վերագրելով իրենց վայելուչ տոհմի համապատասխան արժանիքներին: Երեք-չորս ժամ մաքրելով, կահավորելով օդան՝ կարգի բերեցին: Ֆաթմա խանումը կարգադրեց բերել երեք նարգիլե, սինիներ, օշարակի[141] *իբրեհիներ* /արծաթյա, պղնձե մեծ բաժակներ/ և այլ սպասքեղեն, որոնք նախանձ կառաջացնեին Իսմայիլ աղայի ախոյանների սրտում:

Իսմայիլ աղայի հրավիրած հյուրերի թվում կային հակասական թայֆաների ներկայացուցիչներ, կրոնական, պետական գործիչներ, թաղային ներկայացուցիչներ, որոնք[142] պետք է խորհրդակցեին և գտնեին ալլահի և մարգարեի զոհված որդու սպանողին, որի հանելուկը գաղտնիք էր բոլորի համար: Եկողները նաև Իսմայիլ աղայի աշիրաթի՝ ցեղի, տոհմի հայտնի ներկայացուցիչներն էին և հայտնի մոտ բեկերն ու աղաները: Ըստ տեղական սովորության, երեկոյան ժամը վեցին՝ խանութները փակվելուց հետո, խումբ-խումբ հավաքվեցին հյուրերը, որոնք իբրեխի ջրով ձեռքերը թրջելով՝ լվալով,[143] իրար սալամ տալով՝ հրավիրվեցին մեծ օդան: Հետզհետե սենյակը լցվեց մարդկանցով: Կես ժամ չանցած՝ արդեն հավաքվել էին տաս-տասնհինգ հոգի: Խանումը սուփրեն փռեց և սեղանին մատուցեց քաղցրավենիք, քյուֆթա, տոլմա, սուջուխ, փլավ և այլն: Հյուրերին հավաքված համարելով՝ Իսմայիլ աղայի առաջարկությամբ զանազան ճաշատեսակներով, համեմունքներով, օշարակներով, լավաշ հացով ու կուլթուխչի բաղարջով սկսվեց ճաշկերույթը: Ճաշերի և կախովի խորոված՝ ասմաքյաբաբի բուրմունքը ինձ էլ էր գրգռում: Ճաշից հե-

տո ղահֆե մատուցվեց, նարգիլեները մեջտեղ բերելով, սկսեցին մեկը մյուսին մատուցելով՝ հյուրասիրել ու փոխանցելով ծխել: Օրվա դեպքերը վշտացնում էին: Բոլորը մտախոհ էին, վշտացած ու ապշահար իրար էին նայում, կարծես հանցավոր էին՝ համարձակություն չունենալով անցնելու հավաքույթի նպատակին: Ներկաների բաշին՝ գլխավորը Իսմայիլ աղան էր, որը ներկաներին դիմեց հարցադրումով ու հայացքով զննելով ուղղափառներին՝ հարցրեց.

-Ո՞վ է համարձակվել Աստծո մարգարեի վրա ձեռք վերցնել, սա մեզ համար խայտառակություն է, ա՜յ մուսուլմաններ, ում վրա դուք կասկած ունեք:

Վերջապես նրանցից մեկը դայլանի՝ նարգիլեի ծխամորճը կողքինին հրամցնելով, նստած վիճակում, խոր հայացքով տնտղելով շրջապատը՝ թեքվեց, չոքեց՝ հայացքը ներկաներին սևեռելով, զննելով ուղղափառներին, որոնք թազբեհ էին խաղացնում մատներին, մտախոհ, խորին ցավակցությամբ, երկու ձեռքը բարձրացնելով և ճակատին դեմ անելով ասաց.

-Ո՞վ է այդ անիծյալը, որ համարձակվել է Ալլահի և Մահմադ[144] մարգարեի ընտրյալի վրա ձեռք բարձրացնել: Ա՛յ մուսուլմաններ, ինչ խայտառակություն է, այ մաքու՛ր հավատացյալներ, խոսեցե՛ք, ու՞մ վրա եք կասկածում:

Օլոճոնների աշիրաթից[145] խոսեց ատամները թափած, մոտ վաթսուն տարեկան մոլլա[146] Աքպյարը, նախաժամ պայմանավորված լինելով Իսմայիլ աղայի հետ, նա հայտարարեց.

-Իմ կարծիքով, խանումի… արած գործն է: Այն օրվանից, ինչ ողորմած հոգի հաջին իր տուն բերեց էն պիղծ մուրտառ գյավուր կնոջը, փոքր խանումը խռովել գնացել էր իր հոր տուն: Դա ես հաստատում եմ, քանի որ սպանողը կին է եղել և տանից դուրս չի գնացել՝ կարողանալով շուտ թաքնվել…

-Հայր՛ ալլահ,-փնթփնթացին լսողներն ու միմյանց նայեցին: Ջղայնացած վեր թռավ Հարսնցոց թաղի աշիրաթից Մուստաֆա բեկը,[147] ձեռքը խանչալին դնելով ու սեղմելով, գոռաց.

-Ի՞նչ է, դուք ուզում եք իմ տոհմի անունը վարկաբեկել ու խայտառակել, խանումը այն օրը մեր տանն էր: Այդ դժբախտ լուրը լսելով՝ երեկ առավոտ կնոջս ու քրոջս հետ միասին աճապարեցինք հաջու տուն: Ես ինքս հարցրի դեռ չմահացած ծառային և նա ասաց.« *Կինը խնդրեց, որ հաջուն կանչեմ: Հաջին սկսեց այդ կնոջ հետ խոսել, ջղայնացավ և ինչ ասաց, որ բռնեմ նրան: Հենց որ ես մոտեցա, նա ինչ վրա կրակեց, հետո հաջիի*»,-ես հարցրի մեծ խանումին և բոլորին, ոչ մեկը լուրջ բան չասաց: Ծառան ընկած էր այգում: Այգու դուռը բաց էր…

Պատասխանելով մոլլա Աքպյարի զրպարտանքին, կատաղած կանգնելով, իր հսկայական պարթև բոյով, երկար մետաքսով փաթաթված քոլոզով, Մուստաֆա բեկը, ձեռքը դաշույնին տանելով՝ հարձակվեց մոլլա Աքպյարի՝ էքպերի վրա: Բոլոր նստածները իրար խառնվեցին: Երկու-երեք հոգով հազիվ զսպեցին Մուստաֆա բեկին: Նա կատաղել էր, նրա աչքերը կարմրել էին.

Ի՛մ ցեղին, ի՛մ ամու օղլուն /եղբոր աղջկան/[148] դու անպատվե՞ս, *քյաֆ-*

թա՛ր, դեռ մոլլա էլ ես, քեզ ու ձերոնց կատակացնե՛մ շան նման:

Դարձյալ մի քանի հոգի հազիվ զսպեցին նրան, իսկ նա, աչքերը չռած, շարունակում էր սպառնալ մոլլային՝ գոռալով.

-*Քյաֆթա՛ր*, ափսո՛ս, որ դու մոլլա ես…»:

Մոլլայի կողմնակիցները գրգռվեցին՝ լսելով բեկի սպառնալիքները և վիրավորանքները: Ընդհարումն անխուսափելի էր, եթե Իսմայիլ աղայի ազդեցիկ, հեղինակավոր ձայնը չհնչեր.

-Նստեցե՛ք, խնդրեմ, իմ օջախում ոչ ոք չհամարձակվի ձեռքը խանչալին տանի: Ես ձեզ՝ մոլլային և բեկին նայելով, երկուսիդ էլ հավատում եմ: Բայց ես ձեզ կանչել եմ ոչ թե իմ հարկի տակ կռվելու, այլ պարզելու և իմանալու իրողությունը:

Հայացքը դարձնելով դեպի մոլլան, ասաց.

-Ա՛յ կրոնի առաքիչ, մինչև օրս դու լսե՞լ ես կամ տեսե՞լ ես, որ թուրք կինը զենք վերցնի կամ մարդ սպանի, էն էլ իր հաջի մարդուն:

Գլուխները խոնարհելով՝ բոլորը հավանության նշան արին: Մի պահ սպասելուց հետո՝ դառավ Մուստաֆա բեկին.

-Դու՛ Մուստաֆա՛, տասը տարեկան երեխայի նման, ձեռքդ տանում ես խանչալին, աքլորանում, ու՞մ ես զարմացնում, չգիտե՞ս որտեղ ես գտնվում: Ալլահը վկա, չեմ հավատում ականջներիս: Ես զարմացա, որ դու ուղղափառ մոլլային սպառնացիր, անպատվեցիր, դե արի ու ասա, թե ո՞վ է սպանել քո հարազատ հաջի փեսային, չէ որ դու բերանովդ ասացիր, որ ծառայի ասելով մի կին է սպանողը:

Մուսթաֆա բեկը նորից կրկնեց.

-Խանումը մեր տանն էր, մենք խաբար չենք…:

Դուռը ծեծեցին և բացելով՝ ներս եկան թաղի կուլուխի քոմսերն ու երկու փոլիս: Բոլորը շշմեցին՝ բացի Իսմայիլ աղայից, քանի որ ինքն էր հրավիրել: Ոտքի կանգնելով բոլորը ողջունեցին.«*Սալամալեյքում, ալեյքմնսալամ*»,-ասելով՝ նստեցին: Ոստիկանները ուշադրություն չդարձրեցին բարևին, նրանք, հատուկ հարգանք մատուցելով, ողջունեցին կրոնավորներին և մոլլային ու նայելով մյուսներին՝ նկատեցին նրանց բորբոքված լինելը: Իսմայիլ աղան հրավիրեց նստելու՝ ոստիկանապետին իր մութաքան հրամցնելով: Նստեցին Իսմայիլ աղայի կողմից առաջարկված տեղերում: Քոմսեր էֆենդին նստեց աղայի կողքին: Խանումը սուրճ մատուցեց, աղան հրամցրեց նարգիլեն: Իսմայիլ աղան, դիմելով հյուրերին, խնդրեց, որ շարունակեն խոսակցությունը, և դեմքը ուղղելով ու քոմսերի ուշադրությունը գրավելով՝ ասաց.

-Էֆենդի /պարոն/, մեզ բոլորիս մութ է մնում երեկվա դեպքը: Քոմսե՛ր էֆենդի, դուք իշխանությունն եք, ի՞նչ կարող եք հայտնել այդ մասին:

Ամենքն էլ իրենց ուշադրությունը գամեցին քոմսերին: Քոմսերը, մի կողքից մյուս կողքին թեքվելով, բերանը թևով սրբելով, մատներով հաստ բեղերը մաժելով ու սրելով, դիվանագիտորեն տնտղելով, դիմեց նստողներին.

-Ես ուզում եմ իմանալ ձեր կարծիքը, չէ՞ որ դուք մեր քաղաքի պատվարժան անձնավորություններն եք, երևելի մարդիկ: Աչքերը ճփճփացնելով և

ծնկի գալով՝ քոմսերը դիմեց մինչ այդ լուսամուտի մոտ բազմած հյուրին, որն անվերջ նարգիլե ծխելով և մանր աչքերով զննելով նստածներին՝ արհամարհանքով նայում էր մինչ այդ ելույթ ունեցողներին, խոսողներին: Այդ անհիծյալը, ինչ-որ իմամի[149] գերդաստանից էր, տոհմական ծագմամբ մեծ կրոնապետի տղան՝ շեյխ Քյարիմն[150] էր: Իր կրոնական ծագումով, ջերմեռանդ սուննի մուսուլմանի[151] մոլի հավատքով խիստ հայատյած էր, մոլեռանդ մահմեդական: Չնայած անգրագիտությանը, ղուրանից արաբերեն հատվածներ արտասանելով, բոլորի հիացմունքն էր գրավում և վայելում էր թուրք հավատացյալների խոր վստահությունը: Չնայած զառամյալ ծերունի էր, հարստությամբ ամենաուժեղն էր ու ազդեցիկը քաղաքում: Բոլոր շեյխերը, մոլլաները նրա հորդորներով էին գործում: Նույնիսկ հայերի կոտորածը նա համարում էր սուրբ մարգարեի իդեալների իրականացում, բացարձակ քաջալերելով պահանջում այդ՝ ասելով.

-Ով հայի՝ գյավուրի արյուն չի թափել, նա արժանի չէ մարգարեի գալիք դատաստանին:

Այդ անհիծյալ իժի ծնունդը դեռ սուլթան Աբդուլ Համիդի[152] օրոք հայկական ջարդերի ժամանակ քաջալերում էր թուրքերին, քարոզելով, թե հայի արյուն թափողը դրախտի՝ ջենեթի կարժանանա:

Շեյխ Քյարիմը՝ *իմամօղլին*, հագնում էր կրոնավորի լայն հագուստ՝ ոտքից գլուխ սպիտակ, ուներ սպիտակ ձի՝ ճերմակ թամբով: Նա կանգնեց, թևերը քշտեց, նրան հետևեցին ներկա գտնվողները: Դեմքը ուղղելով դեպի հարավ՝ մի քանի բառ արաբերեն մրմնջաց, հետո դառնալով ներկաներին, որոնք հայացքով ու պատկառանքով՝ նստած իրեն էին նայում, շրջվեց Իսմայիլ աղայի ու փոլիսների կողմն ու ասաց.

-Ով հավատացյալներ, ինչու՞ եք վիճում իրար հետ, այդ սպանությունը ուղղափառ իսլամի գործ չէ: Ես կասկածում եմ հաջու գյավուր կնոջը, հենց էսօր նրան կտոր-կտոր պետք է անել:

Շեյխ Քյարիմը մրթմրթաց *Ղուրանի* առաջին տողերը.*«Էյ լահիլլահ յիլալլահ Մահմաթ Ռասուլալլավ»,*-[153] և շարժվեց տեղից: Փոլիսներից մեկը կանգնելով հավաստիացրեց.

-Գյավուր կինը, նրա տանից մի ամսից էլ ավելի շուտ է բռնվել ու վերացվել, իսկ էտ գյավուր կինը նույն օրը անհետացել է, ճիշտ է ասում իմամօղլին:

Նա դեռ ուզում էր խոսել, բայց քոմսերը սպառնալից հայացքով լռեցրեց: Պոռոտախոսները, որոնք դրսում, մինչև Իսմայիլ աղայի տուն գալը, ճոռոմաբանում էին, նախանձվելով հաջու սև գործի հաջողություններին, այս կամ այն անձանց էին մեղադրում, մեղադրում էին փոլիսներին, որ օրը ցերեկով[154] հաջու նման երևելի անձնավորությանն են սպանել, իսկ իրենք տեղեկություն չունեին, այստեղ չարտահայտվեցին, նստել էին ու մրթմրթում: Քոմսերը պնդեց, որ նման հարցեր այստեղ լուծելու իրավունք չունենք: Հիմնական եզրակացության չգալով՝ իմամօղլին, գլխի փաթաթանը ուղղելով, վեր կացավ, ճպռոտ աչքերը մատներով սրբեց և իր անատամ բերանը բաց անելով՝ խոժոռ ձայնով ասաց.

-Բոլորիս հայտնի է, որ սպանողը կին է եղել, եթե գյավուրի պատճառով է եղել, կամ ուրիշ հաշվով, թող հյուքյումեթը /իշխանությունը/ քննի:

Դառնալով Մուստաֆայի կողմը ու ցցելով երկու մատը՝ կմկմալով հարցրեց.

-Դու՛, որ տեղյակ չէիր, քրոջդ ինչու՞ էիր տարել ձեզ մոտ:

Շեյխ Քյարիմը, մի պահ լռելով, նայեց իրեն ուղեկցողներին և *թազբեն* մատներով խաղացնելով, թազբեի հատիկները հաշվելով, *խեր, շառ* անելով՝ շարժվեց՝ ուղղվելով դեպի դուռը: Բոլորը հետևեցին նրան:

Ոչ մի ազգ թուրքի կեղծավորությունը չունի, իսկ երդմնազանցությունը ամենուրեք օդ ու ջրի նման մերվել է դրանց արյանն ու մսին: Ներկաները, քաղաքի բարձր անձնավորությունները լինելով հանդերձ, մեկը մյուսի հանդեպ ոխ ունեին, եթե բացահայտ հնարավոր չէր, սպասում էին հարմար առիթի: Իմամը՝ շեյխ Քյարիմը, առիթ տվեց կողմնորոշվելու: Ոտքի կանգնածների և դեպի դուրս շարժվողների մեծամասնությունից մի քանիսը՝ կուրորեն, մյուսները՝ գիտակցաբար, համոզվեցին, չէ՞ որ իմամը վերջին խոսքի մեջ ակնածանքով արծարծեց կին և պաշտպան մեղադրանքը: Մուստաֆան հուզված, բայց չհամարձակվելով իմամին վիրավորել, ասաց.*«Դուք շառ եք անում»*,-և շարժվեց դեպի դուռը: Դրսում ձիերին նստելիս՝ թեթև վիճաբանություններ եղան: Մուստաֆան կատաղել էր, բայց կողմնակիցներ քիչ ուներ: «Ես ձեզ ցու՛յց կտամ»,-ասելով՝ ուզեց ձին նստել: Քոմսերը, որ մինչ այդ Իսմայիլ աղայի կողմնակիցների հետ էր փսփսում, փոլիսներին կարգադրեց զինաթափ անել Մուստաֆային և շղթա անցկացնելով՝ ձեռքերը կապել: Մուստաֆան՝ ատամները կրճտացնելով, նայեց իմամի կողմը, բայց նա գնացել էր: Բացահայտ ոխի ցասումով սպառնաց քոմսերին, բայց իզուր էր: Նրան տարան: Իսմայիլ աղան քմծիծաղով յուրայիններին ճանապարհ դրեց: Նա հյուրերին ճանապարհ դնելիս, մտքում շատերին գրողի ծոցն ուղարկելով, ծանր հոգոց քաշելով, եկավ օդան և նկատելով գործ անող աղախինին՝ կարգադրեց լամպը հանգցնել և գնալ, իսկ ինքը, ալլահին շուքր հայտնելով, գնաց քնելու:

Անմիջապես ներքև իջնելով՝ մի բարձի երես հանեցի՝ որպես տոպրակ, հուժ շտապ սեղանի բարիքներից մեջը լցնելով, քարշ տվեցի, հոգնած և երկյուղած՝ մի հույս, մի նպատակ ունեի, միայն թե ուտելիքով պարկը տուն՝ մերոնց հասցնեմ: Երկու ժամվա քրտնաջան աշխատանքից հետո ես տափետափ հասա գաղտնամուտքին և մինչև ծնկներս սուզված ջրում, թանկագին տոպրակը քաշքշելով՝ գլխիս վրայով սահեցրի անցքով և խորանալով դեպի վեր սեղմեցի՝ քաշելով այն: Տանջանքներից ուժասպառ վիճակում, մութ մաղարայում այլևս չկարողանալով քաշքշել, տոպրակից մի գաթա վերցնելով, բարձրացա վերև: Կանայք թոնրատանը չէին: Սառան ու Զանոն կասկածել ու անհանգստացել էին իմ ուշացման պատճառով և Սառան, արհամարհելով վտանգը, որոշել էր սողոսկել Իսմայիլ աղայի տուն: Իմ հայտնվելը նրանց երազ թվաց: Նրանք, չհավատալով իրենց աչքերին, բնազդաբար ինձ գրկեցին և իմ միակ բառը՝ մորաքույր, նրանց սթափեցրեց: Սառան ու Զանոն, պարկը վերև բարձրացնելով, ինձ կշտամբեցին այդ ծանրությունը քաշքշելու

համար, որը կարող էր վատ հետևանքներ ունենալ: Թևիցս բռնելով՝ Սառան ինձ նստեցրեց: Ես նրանց պատմեցի ինչ տեսել և լսել էի: Նա ուշադրությամբ լսելով՝ ինձ հարցրեց.

-Օլոճոների կողմնակիցները շա՞տ են Հարսնցոց աշիրաթից:

Ասացի, որ մի քանի անգամ, քանի որ նրանցից յոթ-ութ կատաղածների Իսմայիլ աղայի դրդումով բանակ էին ուղարկել: Առանց հարցի՝ պատասխանեցի.« *Վաղը նամազից հետո...»:*

-Ե՞րբ են թաղելու հաջուն:

-Վաղն առավոտյան՝ նամազից հետո,-պատասխանեցի ես: Այլևս ոչ մի խոսակցություն:

-Դու քնիր: Վաղն առավոտյան ինձ կսպասես գոռների քարանձավի մոտ,-և ինքը գնաց Զանոյի մոտ:

Լավ ուտելուց հետո՝ խորը քնեցինք: Երեկոյան Սառան և Զանոն խոսում էին, ծրագիր կազմում առանց իմ մասնակցության: Նրանք գիտեին գոռների հարավային կողմում գտնվող քարհանքի ներսում կառչելու ապահովության մասին, գոռների մեջտեղում գտնվող դամբարանում պատսպարվելու հնարավորության մասին, ինչպես նաև հյուսիսային կողմում՝ գոռներից պարսպապատված, առանձնացված՝ դարվեշների մենաստանի մասին, որտեղ մուտքը արգելված էր: Մեզ հայտնի էր, որ դերվիշների մենաստանից կարելի էր, անցքով 60-70մ իջնելով ներքև, դուրս գալ գետեզերքին գտնվող ջամիի՝ մզկիթի այգին, կային նաև այլ հնարավորություններ:

Գիշեր էր, մութ խավար, խոր լռություն: Զանոն ու Սառան թոնրատանը ձեթի ճչագի լույսի դեմ շարժվելով, հագուստներ էին հանում-հագնում: Ինքզինքս մեղադրելով, որ քնով եմ տարվել, մոտեցա նրանց: Սառան ջղայնացած էր՝ սարքովի բեղերը չէին ենթարկվում: Ճրագի լույսը աղոտ էր, խավար: Հայելին իր ուզածին պես չէր անդրադարձնում: Վերջապես պատրաստ վիճակում ենք: Սառան, այո՛ Սառան, հոգեկան ինչպիսի՞ վեհությամբ շոյեց գլուխս՝ ներշնչելով մարտնչել: Զանոն, քրջոտ շորեր հագին, ոտաբոբիկ, մաղաքը [155] մի ձեռքին, մյուսին մի կապոց, կանգնած էր լուսամուտի մոտ: Սառան մոտեցավ ինձ, վրայիս իչլեքը /իշլիկը, պլուզ, վերնաշապիկ/ ուղղեց, ֆեսը բարձրացնելով՝ գլխիս մազերը մատներով խառնեց և մի պահ կանգնելուց հետո ոտքը դռփեց գետնին՝ ասելով.

-Դու քարհանքի կողմից կմոտենաս: Միհրա՛ն, հնարավորին չափով դու հեռու կմնաս և կհետևես մեզ:

Լուռ ու մունջ շարժվեցինք, հասնելով գոռները, ստուգեցինք մեր թաքնվելու վայրերը և արևածագին անհետացանք մեր որջերում:

Կեսօրին՝ ժամը տասներկուսին մոտ, հուղարկավորողների թափորը մոտեցավ գոռներին, բայց Սառան դեռ չկար: Վերջապես բերեցին ննջեցյալին, լսվեցին ողբացողների մռունչները, որոնք գերեզմանների ներքևից նաշը թևերին մոտեցան հարթությանը: Խառնիճաղանջ ամբոխը գնում էր դեպի փոսը: Շեյխ Աքպյարի գլխավորությամբ, մոլլաներով և այլ հեռու-մոտիկ բարեկամներով շրջապատված, նաշը իջեցրեցին: Հուղարկավորողների մեջ ես տեսա

յուրայիններով շրջապատված Իսմայիլ աղային: Հարսնցոց կողմից մարդ չկար, բացի Իրզա եղբորից: Մոլլաները նզովում էին սպանողին, անիծում, գովում սրբազան հաջուն… Զանոն, ինչպես նաև մի քանի մուրացկաններ, ճանապարհի եզրերին ինչ-որ բառեր վանկարկելով, ձեռքերը մեկնած՝ ողորմություն էին հայցում: Հոգևորական արարողությունը, հատուկ կանանց՝ լալկանների աղերսանքը, հեռու-մոտիկ ազգականների ողբը, մոլլաների մաղթանքները՝ Սոթոմ-Գոմորի խառնաշփոթն էր ստեղծել: Ես ինքնամոռացության մեջ էի, նայում էի պատանեկան անմեղությամբ: Հետևիցս ինձ թեթև բրդեցին: Սթափվելով տեսա Սառային: Նա զինվորականի զգեստով էր.

-Ա՛յ տղա, ինչ է քարացած նայում ես, շուտ անցի՛ր,-մատնացույց արեց գերեզմանաքարի ետևը,-Զանոն էն տապանաքարի ետևն է, ես կմոտենամ ներքևից: Քանի՞ փամփուշտ ունես:

Ասի՝ տասնհինգ:

-Լա՛վ, աշխատիր քեզ չկորցնել, երբ կլսես իմ կրակոցի ձայնը, դու էլ քո կողմից կրակիր, ես՝ զինվորականների, դու ու Զանոն՝ դագաղի մոտ կանգնածների:

Սառան խրոխտ քայլերով գնաց: Ես շարժվեցի դեպի իմ հենակետը: Նայեցի Զանոյի կողմը, նրան չտեսա, բայց նկատեցի մի մուրացկանի, որը ողորմություն էր հայցում:

Մի քանի հոգի մոտեցան նաշին, հրելով իրենց բզկտող լալկաններին ու մերձավորներին, ուզեցին նաշը վեր բարձրացնել և հյուսիս-հարավ դարձնել: Մոլլաների թույլտվությամբ հաջու ազգականները նաշը բարձրացրեցին, շուռումուռ տվեցին հարավ-հյուսիս ուղղությամբ: Մոլլաների աղմուկ-աղաղակով, մերձավորների լացուկոծով նաշը մոտեցրին գերեզմանափոսին: Բոլոր հուղարկավորողները շրջանակաձև մոտեցել էին իրար: Նայեցի Զանոյի կողմը, նորից մուրացկանին տեսա: Հանկարծ որոտաց ատրճանակը: Սառան էր: Ինքս ինձ կարգի բերելով՝ նայեցի Սառայի կողմը: Իրար ետևից որոտացին ատրճանակի զարկերը՝ նորից հինգ-վեց կրակոց: Սառան էր կրակում իր միանգամայն աննկատ և ապահով թաքստոցից: Նրան հետևեցին Զանոյի կողմի կրակոցները: Կրկնվեց երկրորդը: Զանոն, նկատելով իրենից հեռու զինվորականների՝ փոլիս, քոմսեր և այլ աստիճանավորների թեքվելը դեպի կրակողի կողմը, ձեռքերը ատրճանակներին տանելը, շփոթված շարժվելը այն կողմ, բաց չթողեց ընձեռնված հնարավորությունը և նրանց մեջքին շարեց յոթ գնդակ՝ յոթ կրակոցով: Մենք դասավորվել էինք կազմելով եռանկյունի:

Գոռում-գոչյուն սկսվեց հուղարկավորողների մեջ: Խուճապի մատնված հուղարկավորողները՝ զարհուրած մարդիկ, դիակը քցեցին ու թողնելով՝ դեսուդեն փախան: Իսմայիլ աղան իր մարդկանցով թթի ծառի տակն էր: Պատուհասից այլայլված՝ որը խանչալը հանած, որը՝ ատրճանակը, չգիտեին ում վրա կրակեն: Այդ պահին նկատեցի իմ թաքստոցից վեց-յոթ մետր հեռավորության վրա՝ բահը ձեռքին, Զանոյի վրա թիկունքից հարձակվող մի աժդահա թուրքի, որի ետևից էլ՝ ևս երկու-երեք անձանց: Երկու զինվորականներ՝ ատր-

ճանակները բռնած, Զանոյի կողմը նայելով՝ եկան իմ կողմից: Կրակոցները կրկնվեցին: Երկու զինվորականը ինձնից ութ-տասը քայլ հեռավորության վրա նկատել էին, որ կրակողը մուրացկանն էր: Սառայի վեհամբարձ կրակը հիշելով՝ իմ անհայտ որջից որոտաց ատրճանակս: Նրանք երկուսն էլ ընկան: Սառան ու ես մեր որջերում ապահով էինք, իսկ մուրացկան Զանոն նրանց տեսադաշտում էր: Սառայի կողմից նորից դեպի ամբոխը որոտած ատրճանակը, իմ համազարկերը շփոթության մեջ քցեցին դեսուդեն շարժվողներին: Մի գանոն չավուշ /ժանդարմիայի պետ/ նկատեց կրակող զինվորականին ու երկու հոգով հետապնդեց նրան: Նրանց հետևից գնում էր մուրացկանը՝ փայտը ձեռքին: «*Տուր* /կանգնիր/»,-բղավեց *գանոն չավուշը*՝ ատրճանակը ուղղելով նրան, բայց նույն պահին ընկավ Զանոյի կրակոցից: Նրան հետևող երկու ժանդարմները սարսափած ետ դառան: Կատաղած Սառան, մոռանալով իր կացությունը, տապանաքարի հետևից ուղիղ նշանառումով, երեք կրակոցով վայր գցեց երկուսին էլ: Սառան, նայելով Զանոյին, մատնացույց արեց քարանձավը: Զանոն, մուրացկանի կապոցը ձեռքին, գնաց: Զանոյին հնարավորություն ընձեռնվեց անմիջապես *ֆիսթանը*՝ վերնազգեստը հագնել, գլխի *յազման* գլխաշորը փոխել և հեռանալ գերեզմանաքարերի ու շիրմաքարերի արանքով, մեկուսանալ և որպես ողբացող՝ պատսպարվել քարհանքի մոտերքի շիրմաքարերի ետևում:

Ինչպես մեզ ապսպրել էր Սառան, մենք պետք է խուսափեինք մեկնումեկի աչքին երևալուց: Նա ինձ ասել էր, որ ես իսկույն գնամ աղայի տուն, ավելացնելով, որ գիշերվա կեսին լինեմ մաղարայի մոտերքում, իսկ Սառան ու Զանոն մնալու էին գերեզմանոցում՝ զգուշորեն թաքնվելով քարանձավում: Ես դամբարան-գաղտնատեղիս անցքը փակեցի և մտախոհ պառկեցի: Սառան, հավաքելով օգտագործված փամփուշտները, դերվիշի[156] մենարան կոչվող ապաստարանից իջնելիս կարողացել էր նախապես մի մեծ քարով անցքը փակել և իջել էր գետեզերքը: Օգտվելով գիշերային խավարից՝ Զանոյին հաջողվել էր *Կզլմեջիդ* կոչվող թաղամասով անցնել և բարձրանալ Սանդի թաղը, ապա կից Ծապրկորի թաղի փողաններով՝ նեղլիկ ճամփեքով շրջանցելով՝ հասնել տուն և անակնկալ գրկախառնվել մեր հերոսուհի Սառայի հետ: Իմ թաքստոց-դամբարանը Սառայի տեսադաշտից դուրս էր, և չնայած Զանոյի հորդորներին ու համոզմունքներին՝ նա անհանգիստ էր և նրա գլխում մի հանդուգն միտք էր հղացել: Նա որոշել էր հաջորդ գիշեր մենակ գնալ գոռներ՝ ինձ գտնելու համար: Միայն Զանոյի աղաչանք-պաղատանքը՝ քիչ էլ համբերել, համոզել էին Սառային հետաձգել որոշումը: Օգտվելով թուրքերի ստվարախիտ կանգնած տապանաքարերից, երկու գիշեր, երկու ցերեկ դամբարանում հանգստանալով՝ ես երկրորդ գիշերը աղջամուղջային ճամփեքով հեռացա դեպի տուն և հայտնվեցի Սառայի ու Զանոյի գրկում: Գոռներին կից, պարսպով բաժանված մի երկու հարկանի շենք կար, որը պատկանում էր Սուֆի մուֆթանցը, որի երկու տղաները ապրում էին հայ աղջիկների հետ: Չմոռանամ հիշեցնել, որ այդ շենքի և մեծ գերեզմանների Քուլունք կոչվող բլուրի արանքով՝ ճանապարհով էին երթևեկում Ծապրկորի թաղից շուկա, եկեղեցի-

ներ, դպրոց և ամենուր: Ես, հեռանալով դեպքի վայրից՝ մուֆթանց այգուց, պարսպի ետևից նայում էի նրանց:

Մեր հեռանալուց հետո վայնասունը բռնեց ողջ մնացած հուղարկավորողներին: Նրանք հին մեռելը թողած՝ նորի վրա էին ողբում: Գոռներից մինչև հյուքյումեթ 250-300 մ տարածություն էր, բայց պետք էր իջնել, անցնել կամրջով, հետո բարձրանալ: Կրակոցների ձայնը զարմանք էր հարուցել իշխանության մարմիններում: Ինքը՝ Մանդոհ փաշան, նայելով լուսամուտից, տեսել և լսել էր, կարգադրելով հետևել և իրազեկ դարձնել իրեն այդ պատուհասի մասին: Մոտ մի ժամից ժանդարմներն ու ասքյարները լցվեցին գոռները և վերևում գտնվող մեր ջոջ գերեզմանները: Հուղարկավորողներից ողջ մնացածները, ահով-դողով հավաքվելով թթի ծառի մոտ, նկատեցին, որ թե՛ ներքևից՝ հյուքյումեթից, թե՛ վերևից՝ կուլուխից, շտապ եկան ոստիկաններ և զինվորներ: Լալով ու աղաղակելով, ձեռքով կանչելով՝ աղերսում էին օգնել, փրկել իրենց այս խաթաբալայից: Մի քանիսը թաղումով զբաղվեցին, իսկ զինվորականները սանրեցին և խուզարկեցին հարևան այգիներն ու տները: Բոթը հասել էր բնակչությանը: Չորս կողմից սկսեց հավաքվել ամբոխը: Ոստիկանությունը շփոթված իրար էր անցել, չգիտեին ու՞մ հարցնել, ու՞մ բռնել, բոլորը լացուկոծ էին անում: Սպանված էին հաջի Մուստաֆայի եղբայրը, երկու մոլլա, հինգ զինվորական և չորս քաղաքացի, վիրավորված էր հինգ հոգի: Կես ժամ հետո դեպքի վայր եկավ փաշան՝ իր մերձավորներով: Գոռումգոչյուններից ոչինչ չտեղեկանալով՝ գլխիկոր հետ գնաց: Երեկոյան ոստիկանների կազմած ցուցակով՝ *բալարեան* ոստիկանների գլխավոր վարչություն էին կանչել ականատեսներին, որոնց թվում նաև Իսմայիլ աղային ու մի քանի հայտնի թուրքերի: Բոլորը հաստատել էին, որ զինվորականի և մուրացկանի ձեռքի գործն էր, որոնք անմիջապես չքացել էին: Քննությունը ոչ մի հետևանք չունեցավ, հետևաբար ոչ մի եզրակացության չհանգեցին: Ոստիկանությանը հանձնարարվեց պարզել և զեկուցել փաշային: Կատարված իրողությունից ցնցվել էր ողջ ազգաբնակչությունը: Տեղական իշխանությունները մեր, ինչպես նաև կից թաղամասերում հարցաքննություններ կատարեց: Ինչպես նաև շահագրգռեցին նյութապես, բաշխելով հայկական տներից ցանկացածը, հույս ունենալով բացահայտել այս գաղտնիքը ու քանդել Գորդյան հանգույցը:

* * *

Իսմայիլ աղան ուշ երեկոյան տուն եկավ: Նա իր Շահբաղդին տղային ուղարկեց ինձ կանչելու: Ես ներկայացա իր հագցրած զգեստով: Նա շատ վրդովված էր: Կանչեց կնոջը, համառոտակի պատմեց եղելության մասին, զգուշորեն հասկացրեց, որ նրա եղբայրն էլ էր սպանվել: Կինը ճչաց և ասաց, որ դա նրա արած գործն է.

-Մուստաֆային բռնել տվիր: Ի՞նչ մեղք ուներ նա, ինչու՞ սպանեցիք

եղբորս: Նա ի՞նչ էր արել քեզ,-և սկսեց գլխին խփել, մազերը պոկել:

Իսմայիլ աղան, հորդորելով, չկրցավ հավատացնել իր անմեղությունը, ապա ջղայնանալով խանչալը քաշեց ու հարձակվեց խանումի վրա: Երեխաները լալագին թափվեցին մոր վրա: Նա՝ *հայալլահ*, ասելով, դեն գցեց խանչալը, բարձրացրեց կնոջն ու ասաց.

-Թույլատրում եմ, որ Շահբադդինի ու Նուրիի հետ գնաս եղբորդ տունը: Կասեք, որ վաղը Մուստաֆա բեկը կգա:

Ֆաթմա խանումը իսկույն զգեստավորվեց, և մենք երեքով գնացինք:

Հարսնցոց բեկի տանը սուգ ու շիվան էր. երեկ իշխանությունը Մուստաֆա բեկին էր բռնել, այսօր եղբորն էին սպանել: Ներս մտնելուն պես ֆաթմա խանումը, Իրզա կանչելով, ընկավ եղբոր վրա: Նա երիտասարդ էր՝ քսանհինգ-քսանվեց տարեկան: Եկել էր նրա այրի քույրը: Փաթաթվեցին, լալագին ողջագուրվեցին: Երկուսը միասին մտան կողքի սենյակը՝ պառավ մոր մոտ: Ֆաթմա խանումը, ետ գալով, ասաց, որ վերադառնանք: Շահբադդինը շշկլված ինձ նայեց: Երկուքս էլ մի տարիքի էինք, նա ավելի առույգ էր, բայց վախկոտ: Մոտենալով ինձ՝ ասաց.«Բա էս գիշերով ո՞նց գնանք, ես չեմ գա»:

Մի կերպ համոզեցի և ճամփա ընկանք դեպի տուն: Աղան անընդհատ ղայլան էր ծխում, ջղայնացած էր, մեզ տեսնելով՝ զարմացավ ու հարցրեց.

-Խանումը չեկա՞վ: Լավ, թո՛ղ մի երկու օր մնա, եղբոր հավեսը առնի:

Ուշ գիշեր էր, գնացինք քնելու: Հանկարծ աղան ինձ կանչեց: Ես վարանեցի ու կասկածեցի, թե աղան ինչ-որ նենգություն է անելու և ձեռքս թումբանիս /շալվար/ մեջ տանելով՝ մոտեցա: Նա առանց ինձ նայելու ասաց.

-Կարող ես *յաթաղը* քցել:

Ես իսկույն մոտեցա մուսանդարային, քաշեցի անկողինները և պատրաստեցի: Աղան տղաներին իր մոտ կանչեց, միասին պառկեցին: Ես վերադարձա իմ տեղը:

Սառան բաժանվելիս ինձ զգուշացրել էր, որ կեսգիշերին հանդիպեմ իրենց: Նրան անհանգստացնում էր հաջու հայ կնոջ կարգավիճակում հայտնված Մարթայի անհայտությունը: Մի զգուշացումից հետո, ինձ անմիջապես հետ ուղարկեց՝ ասելով.

-Դու վաղը էս ժամին կգաս:

Ես պառկած էի, հանկարծ առավոտյան՝ լուսադեմին, Իսմայիլ աղան ներս եկավ և ինձ կանչեց.

-Օղու՜լ, դուրսը չերևաս, շառոտ ժամանակ է: Մանավանդ այս քանի օրերը:

Հաջորդ օրը խառնիճաղանջ թաղումն էր:

Թուրք բնակչությունը ահաբեկված էր: Ահընդհատ գալիս էին մուհաճիրները: Ասքյարները, մանավանդ արաբ դասալիքները վխտում էին բոլոր փողոցներում: Ռուսների մոտենալու ահն ու դողը սարսափեցնում էր թուրքերին: Նամանավանդ գաղթականների ասելով՝ ռուսական կողմից կռվողների մեծ մասը հայեր էին:

Ցերեկը իմ թաքստոցից դուրս չեկա, սպասեցի մինչև աղան եկավ: Ես

նրան դիմավորեցի այգում: Նա կանգ առավ, նայեց ինձ ու մի պահ լռությունից հետո հարցրեց.«*Ի՞նչ եղավ էն հայ կինը»:* Ես կռահեցի, որ խոսքը Սառայի մասին է.

-Չգիտեմ, աղա՛, ուզու՞մ էս, գնամ փնտրեմ և եթե տեսնեմ, ի՞նչ հարցնեմ:

Աղան, խորաթափանց ինձ նայելով, ստուգելու իմաստով ասաց.

-Եթե մենակ է, թո՛ղ գա մեզ մոտ:

Նա ուզում էր ինչ-որ բան ավելացնել: Ես իսկույն պատասխանեցի.

-Նա միշտ էլ մենակ է, ձեզ մոտ չի ուզում գալ՝ խանումին չվշտացնելու պատճառով:

Աղան զայրացավ՝ կրկնելով.

-Խանումը ո՞վ է, որ մեզ խանգարի: Շուտ գնա՛, գտիր ու բեր ինձ մոտ: Նրան ասա, որ իր խաթրի համար քեզ էլ լավ կպահեմ,-և խուրջինից սուջուխ և երկու շուկայի հաց տալով՝ կրկնեց,-կասես, որ էսօր անպայման գա, ռուսները մոտենում են, շատ բան ունեմ ասելու,-ու վերկենալով ուղղվեց դեպի տուն:

Հացն ու սուջուխը փաթաթելով նրա տված *փեշտմալի* /մեծ թաշկինակ/ մեջ՝ ես մինչև մթնելը թաքնվեցի հաստ ծառերի արանքում և աստղերի երևալուն պես՝ ծլկեցի վերև: Հասնելով տուն՝ ես, մեր պայմանավորվածության համաձայն, տանիքից անցա թթի ծառի վրա և մագլցեցի: Ծառից իջնելիս այգում ոտնաձայն լսեցի: Խավարում ոչինչ չտեսնելով՝ մնացի տեղումս՝ գրկելով ծառի իրանը: Ճյուղերի արանքում զգուշորեն հենված՝ նայեցի ընկուզենու ծառի մոտ գտնվող գաղտնի անցքի կողմը: Բայց ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ: Սկսեցի իջնել ծառից, հացի կապոցը մեջքիցս քանդեցի և ոտքերիս ծայրերին հենված՝ շարժվեցի դեպի ներքնահարկի լուսամուտը, որտեղից պետք է ներս սողայի: Անունս տալով՝ սպասի՛ր, ինձ, ասաց Զանոն: Գլուխս լուսամուտի երկաթյա ցանցից հանելով՝ շիվարած կանգնեցինք իրար մոտ:

-Քո ուշանալու պատճառով Սառան ներքևի ճանապարհով եկավ քո կողմը: Մենք երեկ հետևում էինք սատկածների թաղմանը՝ Ջոջ գերեզմաններում թաքնված: Բոլորը կատաղած գոռում էին, թե սա գյավուրների արած գործ է: Մենք կասկածեցինք, որ քո աղան, իր անձից վախենալով, քեզ բռնել է տվել: Շու՛տ հասիր Սառային, ես ձեզ կսպասեմ գոռների քարանձավի մոտերքում:

Կապոցը Զանոյին մեկնելով՝ ես բարձրացա այգու պատով և իջա նեղ փողանը /փողոց/: Հաշվի չառնելով ոչ մի երկյուղ՝ ուղիղ կարճ ճանապարհով հասա աղայի բախչան: Սառան իր կազմվածքով լուսամուտի ճաղերից ներս չէր կարող սողալ, մտնել, նա կարող էր գնալ միայն կոյուղու անցքով: Զանոն ինձ ասել էր այդ մասին: Աղայի մոտից գնալիս, չէի կարողացել մեր թաքստոցը մտնել ու մեր պայմանի համաձայն գրել, կամ պայմանական նշան թողնել, որ դուրս եմ եկել: Նեղ կոյուղու անցքի քարը անշարժ էր, հետևաբար, Սառան դեռ չէր եկել, գլխարկս՝ ֆեսս թողնելով քարի մոտ՝ ես շարժվեցի դեպի միճաղանի լուսամուտի կողմը: Ոտնաձայն լսելով՝ ես ձեռքս գրպանս տարա և պատին հենվելով՝ հետևեցի ձայնին: Սառան էր, գաղտագողի մոտենում էր կոյու-

ղուն: Մորքուր՝ գոչելով՝ վազելով մոտեցա: Նա կանգնեց, և մենք առանց ձայնի գրկախառնվեցինք: Նստեցինք կանաչների վրա, ես նրան պատմեցի Իսմայիլ աղայի ասածները: Նա հանգիստ լսեց և ասաց.

-Շատ խորամանկն է, ուզում է իր կյանքն ու հարստությունը ապահովագրել:

Նա հայ կնոջ շորերով էր:

-Լավ, կգնաս իրեն կասես, որ առավոտյան հանդիպենք:

Ես իսկույն լուսամուտից ներս մտա, գնացի բախչայի դուռը բացի: Սառան ներս եկավ: Սառային թողնելով մենակ՝ ես նորից գնացի Զանոյի մոտ: Առավոտյան՝ լույսը չբացված, Զանոյի հետ իջանք Մեծ գերեզմանները, ցածրացանք ներքև, Մուխսի Ամեհդի այգով շուռ եկանք գոռները: Զանոն գնաց քարանձավի կողմը, իսկ ես դեպի աղայի տուն: Առավոտյան՝ աքլորականչի պահին, ես Սառայի մոտ էի: Ցերեկը մենք քնեցինք: Արթնանալով Սառային տեսա լավ հագնված, զուգված ու զարդարված: Միասին բարձրացանք վերևի սենյակը: Ես գնացի աղային իմաց տալու, որ Սառան իրեն է սպասում: Աղայի ձեռքերին ջուր լցնելու ժամանակ ասացի: Նա լվացվեց, հապճեպ խուրջինը թևին գցելով, երեխաներին պատվիրեց ոչ մի տեղ չգնալ: Սենյակից սենյակ անցնելով՝ գնացինք Սառայի մոտ: Սառան բազմոցների վրայից վեր կացավ, ժպտալով բարևեց ու տանտիրուհու ժեստով ասաց.«*Հրամեցե՛ք, նստե՛ք*:»: Իսմայիլ աղան, տեսնելով գեղեցիկ կնոջ վառվռուն, զվարթ դեմքը, հրապուրանքից կաշկանդվեց, աչքերը չռած նայեց ապշած: «*Բույու՛ր, բույուր* /համեցեք/»,-և բարձը բարձի վրա դնելով՝ ձեռքը մեկնեց, Իսմայիլ աղային նստեցրեց, իսկ աղան՝ կախարդված, անզուսպ հայացքով նայում էր նրան՝ չափելով ոտքից գլուխ: Նա ընկել էր ինքնամոռացության մեջ և իրեն պատկերացնում ու զգում էր գեղեցիկ կանանցով շրջապատված յոթերորդ երկնքում՝ դրախտում՝ ջենեթ: Նա ընկել էր երջանկության գիրկը:

-Աղջի՛, *անիսաֆ*, ոնց որ թազա հարս լինես,-ասելով՝ ձեռքը մեկնեց Սառայի վիզը:

-Աղա, սպասի՛ր, երբ կտանես քո սենյակը, էն ժամանակ… Թո՛ղ խանումը գա խոսենք, նա կհամաձայնվի՞, որ մենք միասին լինենք,-և մաժելով ու շոյելով աղայի կեղտոտ գլուխը, ձեռքը շոյելով մինչև ծնոտը հասցրեց ու պեխերը բռնելով, ուղիղ աչքերի մեջ նայելով՝ կանացի քնքշությամբ ասաց,-Իսմայի՛լ աղա, դու լավ մարդ ես, ե՛ս էլ հարուստ կին եմ, բայց դժբախտ:

Աղան երկու ձեռքով բռնեց իր դեմքը շոյող ձեռքը, վայրենացած ուզեց կծել, ուտել և ձգելով դեպի իրեն Սառային՝ ուզեց հոշոտել: Նա, կորցնելով ինքն իրեն, թևերով բռնեց և գոչեց.

-Հենց հիմա գնանք մեր սենյակը, *վալլահի* իմ խանումը քեզ ծառա կդարձնեմ:

Բորբոքված էր Իսմայիլ աղան, նա հևում էր, դողում մի անզոր հայ կնոջ ոտքերի առաջ՝ կնամով վավաշոտությամբ գայթակղված: Նայում էր Սառային, այդ անզոր էակին և վճռել չէր կարող: Իսմայիլ աղան միայն այս երկուերեք ամիսների ընթացքում տասնյակներով հարս ու աղջիկների էր խաբել,

սիրել, բռնաբարել և հանձնել: Նրանք մեկը մյուսից գեղեցիկ էին և իրեն ծանոթ հայտնի մարդկանց ընտանիքներից էին: Ոչ մի կին կամ աղջիկ չէր համարձակվել կոտրել նրա կամքը: Ակամա ձեռքը խանչալին տանելով՝ Իսմայիլ աղան խոժոռեց աչքերը ու սևեռելով Սառայի վրա կանգնեց և ջղայնացած գոռաց.

-Դու մերժու՞մ ես ինձ: Էս հասակիս ոչ ոք ինձ իր կամքը չի հանդգնել թելադրել: Իմ խոսքը մերժողը չի ապրի:[157]

Սառան, նկատելով, որ աղան իր հավասարակշռությունը կորցրեց, բարձրացավ տեղից, կանգնեց նրա դիմաց ու խանչալին տարած աջ ձեռքը բռնելով՝ ասաց.

-Իսմայի՛լ աղա, ես կին եմ, մի թույլ էակ, հայ ու գերի, անզոր ու անպաշտպան: Մեզ անասունի նման կարող եք բանեցնել և ուզածիդ պես գործածել: Մեզ սպանողները մնում են անվրեժ, դեռ ավելին, նրանք պատիվի են արժանանում: Քո առաջարկը իրավունք չունեմ մերժելու,[158] բայց ուզում եմ քո և խանումի սրտովը լինի: Հանգստացիր, թող խանումը գա, դու էլ կխոսես, ես էլ նվերներով կգամ նրա մոտ, կհամոզենք և ամեն ինչ լավ կլինի,-ձեռքից հանելով ոսկե բիլազուկները՝ տվեց աղային,-սա էլ իմ կողմից նվեր խանում քրոջս:

Աղան, զույգ ապարանջանները տեսնելով, սթափվեց, մատներով շուռ ու մուռ տալով՝ տարվեց ոսկու փայլով, սիրալիր նայեց Սառային, նկատեց պարանոցի ոսկե շարանը.

-Օ՜հ, ի՜նչ լավ է սազում քեզ, աղջի՛: Դու դրախտի հրեշտակ ես: Ալլահը վկա, ես քեզ խանումից էլ շատ կսիրեմ:

Աղան ինձ կանչեց, մինչ այդ ես նստած էի անկյունում, և պատվիրեց ուտելիք բերել Սառայի համար և խուրջինը թևին քցելով՝ շարժվեց դեպի դուռը:

-Իսմայի՛լ աղա, մի բան եմ խնդրում, չե՞ս կարող իմանալ, ե՞րբ են Կարմրակ եկեղեցուց հավաքված հայ կանանց ուղարկում:

-Ինչու՞ ես հարցնում, ո՞վ ունես էնտեղ:

Սառան մոտեցավ աղային, նայեց նրա աչքերին և աղերսանքով խնդրեց իմանալ, և եթե հնար կա, օգնել ազատել իր քրոջը՝ Մարթային: Մի պահ խորը մտածելով՝ աղան ասաց.

-Էսօր Նուրին թող կեսօրին գա ինձ մոտ,-և ինքը դուրս եկավ: Աղայի գնալուց հետո ես անցա երեխաների մոտ, նրանք դեռ քնած էին: Աղախինը, հարևանուհի գաղթական կանանցից էր, դեռ չէր եկել: Ես վերցրեցի անհրաժեշտ քանակությամբ ճաշ ու հաց և տարա Սառային: Մենք միասին կերանք: Սառան, դառնալով ինձ, ասաց.

-Լսեցի՞ր, աղան ինչ ասաց, դու մի երկու ժամ հետո գնալու ես նրա մոտ, բայց վախենում եմ, թաղի լամուկները քեզ ճանաչում են: Շորերդ փոխիր, հագիր նրա տղայի իչլիկը,-և մկրատ ուզելով՝ սկսեց գլխիս մազերը խուզել, կարգի բերել:

Ես պատրաստ էի դուրս գալ: Սառան իջավ ներքնահարկ: Պայմանավորվեցինք հանդիպել գիշերը՝ գոռներում: Աղայի համար փարխաջով

/պղնձյա դույլ, աման/ քյուֆթա վերցնելով՝ տանից դուրս գալուց՝ ինձ տեսավ Շահբադդինը: Վազելով մոտս եկավ՝ խնդրելով, որ միասին գնանք: Ես ուզում էի, բայց աղախինը կտրականապես չթողեց՝ ասելով, որ իրենք պետք է գնան խանումին բերելու: Տանից մի քանի քայլ էի հեռացել՝ հանկարծ դեմս կտրեց գիժ Մժոն: Նա գիժ էր մանկությունից, քսաներկու-քսաներեք տարեկան էր, հայասեր էր, մեր թաղի տղաների հետ մտերիմ: Նա սկզբից չճանաչեց ինձ և զարմացավ: Չէ որ նա ուրիշ թաղեցիների ծեծում էր և հաշտվում էր միայն, երբ նրան մի բան էին տալիս: Սովորական հայհոյանքով ասաց.« *Շան լդա, էդ ի՞նչ ես լանում»*,-և ուզեց ձեռքիցս դույլը խլել: Ես չէի կարող ընդդիմանալ նրա ահեղ բազուկներին, բայց և չէի կարող աղայի ճաշը նրան տալ: Նա դարձյալ ձեռքը մեկնեց և ուզեց ձեռքիս կապոցը և փարխաճը խլել: Ես, նայելով նրա դեմքին, լացակումած աղերսեցի.

-Մժո՛ջան, Իսմայիլ աղայի համար եմ տանում:

Լսելով նրա անունը՝ Մժոն խրտնած էշի նման ցատկեց ու զարմանքով ինձ նայեց.

-Բա նա քեզ չի՞ ծեծում:

Ես նրան հինգ դուրուշ արծաթե դրամ տվեցի: Նա ուրախացավ ու վազեց դեպի շուկայի կողմը: Նրա հեռանալուց հետո ես շտապեցի դեպի աղայի *դասաբիանեն* /սպանդանոց/:

Աղան խիստ զբաղված էր առևտրական գործերով: Ինձ տեսնելով փշաքաղվեց, դես-դեն նայեց: Մի քանիսին կտրուկ պատասխանելով՝ մատնացույց արեց, որ նստեմ: Գրպանից հանեց «Սարկիսով» ժամացույցը, նայեց իր զրուցակիցներին ու ասաց, որ տեղ է գնալու: Մոտ կես ժամից մոտեցավ մի չավուշ և հայտնեց, որ գյավուրներին էս երեկոյան տանելու են: Խանութը կիսափակ անելով՝ ինձ թողեց ներսում և չավուշի հետ գնաց: Մարթան լավ ճանաչում էր Իսմայիլ աղային: Նրան տեսնելով չավուշի հետ ճամբար-հավաքակայանում շրջելիս՝ մոտեցել էր աղային և աղերսանքով ուշադրությունը գրավել: Չավուշը, որ կաշառված էր աղայի կողմից, չխանգարելու համար քիչ հեռացել էր նրանցից: Մարթան հարցրել էր իմ մասին: Աղան հպարտությամբ ասել էր.« *Նուրին էլ իր մորքրոջ հետ ողջ առողջ իմ մոտ են»:*

Տաս րոպե տևած խոսակցությունից հետո հասկացրել էր.

Ձեզ էս երեկոյան կփոխադրեն Արաբու կամուրջ: Շուկայից դուրս գալու ճամփին, դու աշխատիր հետ մնալ:

Ես գլխիկոր նստած էի խանութի անկյունում և սրտատրոփ սպասում էի Իսմայիլ աղայի գալուն: Վերջապես դուռը բացվեց և վեց-յոթ հոգով խանութ մտավ աղան: Նա զայրացած էր հավաքակայանում տեսած կանանց ու երեխաների սրտաճմլիկ ողբից ու հևոցներից: Նրանցից մեկը կանչել էր.« *-Է՜յ, Իսմայի՛լ աղա, ինչ չե՞ս ճանաչում»:*

Այդ կինը Խանոյենց Մինաս էֆենդու կինն էր՝ տրորված ու հոշոտված թուրք գազանների կողմից: Քանի՜ քանի՜ անգամ Իսմայիլ աղան նրա եփած ճաշը, ձեռքով թխած գաթան ու քաղցրեղենն էր կերել: Նստելով այգում՝ Մինաս էֆենդու և այլքի հետ՝ նարգիլե ծխել, նարդի խաղացել և երդվել քույր,

եղբայր մնալ: Իսկ հիմա այդ ազնվատոհմ Խանոյանների հարսխանումը տառապում էր իր աչքի առաջ:

-Ես, աչքերս ծածկելով ու ականջներս փակելով, դուրս եկա էդ *զահրումար* ճամբարից: Դա սարսափելի է, Աստծուն, Մարգարեին էլ է դեմ: Ինչո՞վ են մեղավոր էդ անլեզու երեխաներն ու կանայք: Սարսափելի է,-գլուխը օրորելով, մրմնջալով աղան նստեց և դառնալով իր կողքին կանգնածներին՝ ասաց,-Աստված չտեսցնի, նրանց անեծքը մի օր մեր գլխին կգա:

Ոչ ոք չհամարձակվեց աղային մի խոսք ասել, իրար հետ մտմտացին.

-Դա փաշաների գործն է: Մենք ի՞նչ կարող ենք անել:

Ուշադրություն չդարձնելով նրանց փսփսոցներին՝ աղան կանչեց իր տեղակալին և հանձնարարեց զբաղվել նրանց հետ: Խանութի ծառային կանչելով՝ ուղարկեց տան համար ուտելիք գնելու և տուն տանելու: Ինձ աչքով անելով՝ ասաց.*«Օղու՛լ, գնանք»*: Աղան մտախոհ ձեռքիցս բռնեց, ոչ ոքի ուշադրություն չդարձնելով, դուրս եկանք խանութից և շարժվեցինք դեպի տուն: Ճանապարհին ոչ մի խոսք չփոխանակեց ինձ հետ: Լուռումունջ տուն եկանք: Աղախինը, տեսնելով աղայի թթված դեմքը, չհանդգնեց խոսել: Երեխաները, ինձ իրենց հոր հետ տեսնելով, նախանձեցին: Փոքրը եկավ, փաթաթվեց հորը, լացակումած մորը հարցրեց: Լուռ էր աղան, այդ անվրդով, ահռելի թուրքը, որը իր միջավայրում սարսափեցնում էր թե՛ ծանոթներին, թե անծանոթներին, հիմա գլուխը երկու ձեռքով բռնած՝ ինչ-որ բան էր հիշում, մտածում: Նա և՛ շատ բարի, և՛ շատ չար էր՝ ընկղմված իր մտքերի և հուշերի մեջ: Վեր կացավ, մոտեցավ լուսամուտին, բնազդաբար իր տղայի գլուխը շոյելով, նայեց ամայացած հեռու և մոտիկ հայերի տներին, այգիներին, հոգոց հանելով՝ մի քանի անգամ ախ քաշեց: Մոտեցավ մեծ տղան Շահբաղդինը և կարոտագին խնդրեց, որ գնանք մոր ետևից: Աղան շուռ եկավ, նայեց տղաներին, տեսավ ինձ անկյունում կանգնած, կանչեց և պատվիրեց աղախնի հետ գնալ խանումին բերելու: Աղախինը մի ջահել կին էր, նա ակնածանքով նայեց աղային և հարցրեց.

-Բա ի՞նչ տանենք հետներս նվերացու:

-Խանումի շորերից,-և ձեռքը գրպանը տանելով ու հինգ ոսկի հանելով՝ տվեց աղախնին ու ասաց,-էս էլ խանումը թող տա իր հարսներին:

Աղան եկավ նստեց, ինձնից դայլան /նարգիլե/ ուզեց, կանչեց աղախնին, ուտելիք պահանջեց և մեզ երկուսիս կարգադրեց միասին գնալ և վերադառնալ երկու ժամից: Ես խոր մտատանջության մեջ էի, երբ հասանք Մուստաֆա բեկի տուն, չէ որ գնում էինք սուգուշիվան պատահած տուն: Ի՞նչ կլիներ իմ վիճակը, եթե հանկարծ ինձ էնտեղ ճանաչեին, կամ խանումը վրաս զայրանար: Բակը մտնելիս բոխչան մեկնեցի աղախնին և հայտնեցի նրան.

-Ես ներս չեմ գա, էստեղ կսպասեմ, մինչև դուք դուրս գաք, գնանք:

Խանումը անհամբեր սպասում էր մեր գալուն: Նա աղախնի օգնությամբ իսկույն հագնվեց և մոր ու հարսների ուղեկցությամբ բակ իջավ: Բակում հավաքված սգավոր մայրը և հարսները ողջագուրվեցին խանումի հետ: Աղախինը մեկնեց ձեռքը և ոսկիները խանումին տալով՝ հայտնեց, որ աղան է տվել:

Չնայած մոր հրաժարվելուն՝ հարսները վերցրին փողերը, և մենք հեռացանք նրանց բակից: Մի քանի քայլ էինք անցել տնից, երբ խանումը ինձ նկատելով՝ զայրույթից պոռթկաց.

-Գյավուրին է ուղարկել իմ ետևից: Ինչու՞ Շահբաղդինը չի եկել, նա գյավուրներին է սիրում: Նա իմ հորս տունը քանդեց, եղբայրներիս ցիրուցան արեց, գյավուրներին է պահում: Մինչև հիմա լռեցի, այլևս չեմ սպասի, տե՛ս ինչ օյին բերեմ գլխին:

Երեսի չիքլեն դեն տանելով, գյավուր օղլի՝ ասելով՝ կանչեց ինձ, ձեռքիս կապոցը աղախնուն տվեց, աչքերը չռելով, դես-դեն անցորդներին նայելով՝ ուզեց ինձ բռնել տալ: Աղախինը զգուշացրեց նրան.«*Աղան է նրան ուղարկել*»:

Բայց նա, հեռվից անցնող ժանդարմին տեսնելով, ձեռքով նշան արեց: Նկատելով ժանդարմի կանգնելը, միամիտ ձևանալով՝ ես նայեցի խանումի քոսոտած աչքերին: Ընդառաջելով, վազելով մոտեցա ժանդարմին և մատնացույց անելով խանումին՝ ասացի.«*Խանումը չեզ է խնդրում*»:

Չկասկածելով և ինձ վրա ոչ մի ուշադրություն չդարձնելով՝ ժանդարմը շտապեց խանումի կողմը: Ես, զգալով օրհասական վտանգը, առանց հետ դառնալու շտապեցի և արագ փողոցի անկյունով շուռ եկա ու բարձրացա պարիսպը, այգու միջով թեքվեցի հակառակ կողմը, այգուց այգի անցա ցածր պատերով, նորից դուրս եկա փողոց, ինքս ինձ կարգի բերեցի, մաքրեցի, թափ տվի շորերս և չնայած, որ գտնվում էի Հարսնցոց թաղի կենտրոնում, ոչ ոքի՝ անցնող դարձողների վրա ուշադրություն չդարձնելով, բերդի կողքի փողոցով անցնելով, մտա շուկա և անցնելով կամուրջը՝ ուղղություն վերցրի դեպի գոռները:

Դրությունը ավելի բարդացավ: Խանումը ժանդարմին պատմել էր աղայի՝ ինձ՝ գյավուրիս հովանավորելու մասին: Ժանդարմը, խանումից իմանալով իմ մասին և չկարողանալով գտնել ինձ, ուղեկցել էր նրան մինչև մեր թաղի անցման սահմանը՝ Մոլլայի կամուրջը և իմանալով նրա ով լիները՝ խոստացել ամեն տեսակի աջակցություն: Ժանդարմը լավ ծանոթ էր Իսմայիլ աղային, գիտեր նրա համբավը շուկայի առևտրականների և իշխանության մարմինների ասպարեզում: Նա ազատ գործել չէր կարող, ուստի խաչաձև հարցերով և ամեն տեսակ խոստումներով համոզել էր՝ խոստանալով աջակցել խանումին: Ժանդարմից բաժանվելով՝ խանումը աղախնին պատվիրել էր տեսածի և լսածի մասին ոչ մի խոսք չասել Իսմայիլ աղային, խոստանալով նվերներ, եթե իր խոսքով շարժվի:

Գոռները հասնելով՝ գերեզմանների արանքում սպասեցի մինչև աղայիս գալը: Սովորաբար, արևամուտին Իսմայիլ աղան այս ճամփով էր գնում-գալիս: Մինչ նրա գալը, ես տարակուսանքի մեջ էի՝ պատմե՞լ աղային խանումի արարքի մասին, թե ոչ, չէի կենտրոնանում այս հարցի շուրջ: Ուզում էի վազելով գնալ Սառայի մոտ, խորհրդակցել, բայց ուշ էր. աղան երևաց խանութի ծառայի հետ: Մոտեցա աղային, նա ինձ տեսնելով զարմացավ և հարցրեց.

-Ինչու՞ խանումին բերելու չես գնացել:

Ես կտրուկ ասացի, որ խանումին բերել ենք:

Տուն հասնելով՝ ծառան լիքը խուրջինը թևից իջեցրեց ու գնաց: Աղան շտապեց իր սգավոր կնոջ կողմը և դառնալով ինձ զգուշացրեց, որ մի երկու ժամից՝ միասին գնալու ենք: Օգտվելով առիթից, ես առանձնացա մյուս սենյակում և այստեղից էլ գնացի Սառայի մոտ: Նրան պատմեցի պատահածի, տեսածիս ու լսածիս մասին: Նա ուշադրությամբ ունկնդրեց և մի պահ լռելով՝ ասաց.

-Այդ ժանդարմը շատ վտանգավոր է թե՛ մեզ, թե՛ Իսմայիլ աղայի համար: Պետք է զգուշացնել Իսմայիլ աղային և հեռանալ այդ շենքի սահմաններից ու շրջակայքից:

Սառան, տաս ոսկի ինձ տալով, պատվիրեց խուսափել ծանոթ թուրքերից և աղային իրազեկ դարձնել՝ խանումի ու ժանդարմի խոսակցության մասին: Պայմանավորվեցինք գիշերվա կեսին հանդիպել գոռներում: Նա տխուր էր ու մռայլ, գրկեց ինձ, սեղմեց կրծքին, նայեց աչքերիս ու գուրգուրանքով ավելացրեց.«*Մարթային հետևելիս ոչ մի չարի չհանես: Աչքով-ունքով կը հասկացնես: Դե գնա՛»:* Բարձրացա վերևի սենյակը և սպասեցի աղային: Լսեցի աղայի և կնոջ ջղային խոսակցությունը: Խանումի ձայնը փոխվել էր. նա խոսում էր հանդուգն սպառնալիքներով՝ գյավուրներին պաշտպանելու և իր հարազատներին թշնամի լինելու մասին: Աղան կատաղել էր, երեխաները լալիս էին: Աղախինը դուռը բացեց: Ես ահիցս դեպի հակառակ դռան կողմը գնացի: Նա ձեռքով ինձ կանչեց և ցածր ձայնով ինձ զգուշացրեց, որ խանումի աչքերին չերևամ: Սեղանը պատրաստելով՝ գնաց նրանց ճաշի հրավիրելու: Ես թաքնվեցի կից սենյակի կարասների արանքում: Մի քանի րոպեից աղան կնոջ ու երեխաների հետ եկավ, նստեցին ճաշի: Աղան, մի լավաշ վերցնելով, մեջը մի երկու քյուֆթա փաթաթելով, հրամայական տոնով ասաց.«*Հանգիստ կքնեք մինչև իմ գալը*»: Խանումը ջղայնացած հայտնեց.«*Կարող է այս երեկոյան մեր տուն մարդ գա»:* Դեռ խոսքը չվերջացրած՝ աղան գոռաց նրա վրա և նայելով աղախնուն, որը դես-դեն նայելով՝ աչքերով ինձ էր ման գալիս, ասաց.«*Դուռը կփակես և մինչև իմ գալը՝ բաց չանես*»,-ապա աղախնուն պատվիրեց հետևելով իրեն դուռը փակել: Նկատելով աղայի դուրս գալը՝ ես իսկույն շարժվեցի դեպի դուռը և բակում հանդիպեցի աղային: Աղախինը ինձ տեսնելով՝ ժպտաց և զարմացած իմ ակամա հայտնվելուց՝ ասաց.«Ա՜յ *շեյթան*, ու՞ր էիր մտել»:

Երեկո էր, փողոցներում անցուդարձը կանգ էր առել: Հայոց թաղերում պահակախմբերի ու շների ոռմակներ էին վխտում: Աղան լուռ քայլում էր, մի պահ կանգնեց, ինքնիրեն մտածելով, փնթփնթաց.«*Էս ի՞նչ աշխարհ է, կիևն էլ համարձակվի՞ մարդու դեմ էդպես մեծ-մեծ խոսի»*: Նախօրոք պայմանավորվածության համաձայն գնում էինք դեպի Կարմրակ եկեղեցու ճամբարի կողմը՝ սպասելու մինչև մահվան դատապարտված մահկանացուներին դուրս բերելը, որոնց կիսամեռ մարմիններին՝ քաղաքից դուրս վերջ էին տալու: Այլևս գոյություն չունեին հեռավոր ճամփաներ: Դեսից-դենից հայտնաբերված գյավուրներին մի շաբաթի չափ հավաքելով՝ լուռումունջ, առանց որևէ խղճի խայ-

թի, հանձնում էին ժանդարմներին, որոնք, մերկացնելով սրախողխող էին անում և քցում հորերը, իսկ հագուստները չնչին գնով ծախում: Հոգնելով սպասելուց՝ աղան սկսեց շարժվել և ինձ մատնացույց արեց, որ դեպի առաջ գնանք: Միևնույն է, պետք է բերեին մի ճանապարհով: Աղան գոտուց հանեց արծաթյա շղթայով ժամացույցը, նայեց: Կիրակի օր էր: «*Չար օր է*»,-երկմտանքի մեջ ընկավ՝ հետ դառնալ, գնալ տուն: Չէ որ խանումը սպառնալիքներ էր ասել, անվանելով գյավուրներին պաշտպանող, ինչ-որ ժանդարմների հետ գաղտնախոսություն արել: Աղան չէր կարող հանդուրժել, հարկավոր էր փակել խանումի բերանը, չավուշ-ժանդարմի հախիցը գալ, թե չէ՝ փոքրերի ասեկոսներից և մեծերի վրեժխնդրությունից խայտառակ կլիներ քաղաքում: Իսմայիլ աղան, ինքն իրեն դատելով, շտապեց տուն վերադառնալ՝ ավելորդ գլխացավանքից ու խաթայից հեռու մնալու և ինձ կարգադրեց հետ դառնալ: Իմ ուշադրությունը Կարմրակ եկեղեցու կողմն էր: Աղային խնդրեցի քիչ էլ սպասել, նա մերժեց ու բորբոսնոտ պեխերի տակ ինչ-որ բաներ մրթմրթաց: Զգալով աղայի վճռականությունը, լուռ առաջ եկա և դեռ մոտակա կամուրջը չհասած՝ նկատեցի, որ Կարմրակ եկեղեցու ներքևում գտնվող ջրաղացից դուրս բերեցին ճամբարի զոհերին և մտրակների հարվածներով ստիպեցին շարժվել դեպի ներքև: Մոտեցա աղային, կղճահարվածի նման դիմելով նրան, ասացի.

-Աղա՛, վերցրու՛, այս տասնհինգ ոսկին, էն հայ կինն է տվել, մոռացել էի, որ քեզ տայի:

Աղան քնից արթնացողի նման աչքերը շփեց, ոսկիները վերցրեց և ինքն էլ տեսավ մահապարտներին ու չավուշին, որը դաժանորեն խփում էր հյուծվածներին՝ ստիպելով քայլել և շուտ անցնել քաղաքամեջը: Իսմայիլ աղան, մի աչքը իմ կողմը, մյուսով ժանդարմին նայելով, արագ քայլերով առաջ անցավ: Ես մնացի հետևում և մտա խանութների արանքը: Պահակախումբը բաղկացած էր ընդամենը չորս հոգուց՝ երեք ասքյարից և չավուշ ժանդարմից: Տանում էին 65-70 կանանց ու երեխաների: Ոչ մի աղմուկ, ոչ ոք չէր լացում և որևէ մեկից աղերսանք խնդրում: Ես ծպտյալ նայեցի քարավանին՝ փնտրելով Մարթային: Մի քանի քայլ էի հեռու, իսկ աղան կանգնել էր կամրջի մեջտեղում և հենվել էր պատին: Երբ քարավանը մոտեցավ կամրջին, աղան ինձ կանչեց.«*Նուրի՛, արի՛ ինչ մույ*»: Ես երերացի տեղումս ու դուրս չեկա: Չավուշը, լսելով ու տեսնելով աղային, արագ քայլերով մոտեցավ և կամացուկ ձայնով առաջարկեց.«*Որ կնոջն ուզում ես ջոկի՛ր*»: Մահվան դատապարտված քարավանը անցնում էր կամրջով: Աղան աչքերը հառել էր դեպի գետը: Տեսարանը սրտաճմլիկ էր. չէր ուզում նայել, բայց լսվում էին տառապողների դառը հևոցները: Մի կին, յոթ-ութ տարեկան տղային շալակած՝ գնում էր մեջտեղով, նրա կողքից մի ուրիշ կին, տասներու-տասներեք տարեկան մի աղջկա ձեռքից բռնած՝ հազիվ քաշելով տանում էր: Այդ պահին հիշեցի Արաբու կամուրջը, մորս լացը, եղբորս կանչը: Ինձ սթափեցրեց աղայիս ձայնը.«Նուրի՛, Նուրի՛»,-կանչում էր նա: Քարավանի կողքով կամուրջն անցա, մոտեցա աղային, նույն պահին մեզ մոտեցավ և չավուշը: Մութն ընկել էր: Աղան իր

մտքերի խավարում շփոթվել էր, մոռացել իր անելիքը:

-Իսմայի՛լ աղա, ինչու՞ չջոկեցիր ձեր ուզած կնոջը: Էնտեղ մի քանիսը կան, վատ չեն, Ձեզ յոլա կտանեն: Նամանավանդ էն տղային շալակող կինը, որն մինչև էս երեկո ծանր հիվանդ էր ձևացել:

Իսմայիլ աղան շուռ եկավ դեպի չավուշը և իմ անունը տալով ասաց.«Գնա՛, կանչի՛ր նրան»,-և ձեռքը գոտիին տանելով՝ բռնեց ատրճանակի կոթը: Ես խույս տվեցի և մոտենալով երերող քարավանին՝ Մարթա՜, Մարթա՜, կանչեցի: Բոլորի հայացքը իմ կողմը թեքվեց, բոլորը զարմացան: Բարեբախտաբար չավուշը երթը պահող ժանդարմներին առաջ էր ուղարկել, ինքը մնացել վերջում: Ճամբարում ոչ ոք Մարթային իր անունով չէր ճանաչում: Իմ երրորդ կանչին, ինձ մոտեցավ տղային շալակած կինը. նա մի խոսք ասաց՝ Սառա՞ն: Ես հայերեն պատասխանեցի՝ այո՛: Ես քիչ հեռացա նրանցից և հետևեցի ընդհանուր գերեզման-քարավանին, որը դանդաղ շարժվում էր: Մի քանի րոպեից նկատեցի, որ Մարթան մի կնոջ հետ մոտեցավ իմ կողմը: Ես ձեռքով կանչեցի. երկուսն էլ մտան խանութների դռների փեղկերի արանքը: Չավուշն ու աղան խոսելով գալիս էին, նրանք մեզ չնկատեցին: Ես վազելով աղայի ձեռքը բռնեցի և որպեսզի չավուշը չկասկածի, փաթաթվեցի աղային ու ասացի.*«Գնա՛նք, գյավուրները բոլորը լաց են լինում»:* Աղան մի մեջիդյա տվեց չավուշին, նա գոհ հեռացավ:

Իսմայիլ աղան շտապում էր տուն: Նրան անհանգստացնում էին և զայրացնում կնոջ անզուսպ խոսքերը, որպիսիք երբեք չէր լսել իր տասնհինգամյա ամուսնության ընթացքում:[159] Դաղվել էր խանումի ջիգյարը, նրա սրտից արյուն էր կաթում: Նա համոզված էր, որ Իսմայիլ աղայի մատը խառն էր իր Հաջի փեսայի և եղբոր սպանության մեջ: Նա իր ամբողջ հույսը դրել էր իր մեծ եղբոր Մուստաֆա բեկի վրա: Չէ որ նրան էլ իր ամուսնու դավերով բանակ էին տարել: Այս մտքերով տոգորված, ազգակցական արյունի ու վրեժի ոգով վառված՝ խանումը իր կյանքում առաջին անգամ, չնայած իր կրոնական սնոտիապաշտությանը, որպես թուրք կին հանդգնել էր եղբոր թաղման օրը գնալ քաղաքի ղայմագամի մոտ և մի քանի խոսքով հայտնել ամուսնու հայասիրության և սպանություններին ունեցած կասկածելի մասնակցության մասին: Ղայմագամը խոստացել էր միջնորդել ու եղբորը՝ Մուստաֆա բեկին հնարավորության դեպքում քաղաք կանչել: Խանումը խնդրել էր, որ իրենց տեսակցության մասին ոչ ոք չիմանա:

Մարթայի խորհրդով ես մոտեցա աղային և խնդրեցի, որ նա մենակ գնա, իսկ իր լավության փոխարեն Սառան կհատուցի: Սպասեցինք, մինչև որ Իսմայիլ աղան հեռացավ և օգտվելով գիշերային խավարից՝ երեքով թուրքական թաղով, մզկիթի մոտով բարձրացանք և հասանք մեր թաղը, ջոջ գերեզմանները, որտեղից էլ գնացինք գոռներ և հանդիպեցինք Սառային ու Զանոյին: Սառան, լսելով աղայի ու խանումի տարաձայնությունների մասին, ափսոսանք հայտնեց, որ Իսմայիլ աղայի հեղինակությունը կարող է ընկնել: Ինձ հանձնարարեցին գնալ աղայի տուն, բայց չերևալ խանումի աչքերին, հնարավորության դեպքում՝ տեսակցել աղախնի հետ, նրան գրավել մի քանի ոս-

կով և իմանալ, թե ի՞նչ է տեղի ունեցել խանումի ձեռնարկած միջոցառումների պատճառով: Ողջագուրվելուց հետո մենք պայմանավորվեցինք միմյանց հանդիպել մի օրից՝ Ջաղացպանյանների տանը: Կեսգիշեր էր, որ ես սողացի լուսամուտից և մտնելով աղայիս տուն՝ թաքնվեցի մուսանդարայում՝ անկողինների արանքում: Առավոտյան աղախինը, անկողինները հավաքելով, սովորականի նման սկսեց իր ամենօրյա աշխատանքը՝ ճաշ պատրաստեց, տունը մաքրեց և լվացքով զբաղվեց: Նա այդ աշխատանքը կատարում էր աղայի տանը կից Ոսկերչանց թոնրատանը, որը աղան սեփականացրել էր: Ես դեռ թաքնված էի, երբ աղան ներս մտավ, կանչեց աղախնին ու նրա թուշը կճմտելով՝ ասաց, որ հետևի խանումին, տուն այցելողներին և նրանց խոսակցություններին: Աղախինը, տնային գործերը կատարելով, նախաճաշի սուփրան փռեց և խանումին ու երեխաներին հրավիրեց նստելու: Նույն սենյակում էինք. ես՝ պահարանում դարսված անկողինների արանքում, իսկ նրանք, կլոր սեղանի շուրջը ծալոտիկ նստած՝ ուտում էին: Խանումը կանչեց աղախնին և ապսպրեց.

Երբ հյուրեր կգան, ուղարկի օդան՝ հյուրասենյակ հրավիրիր, աշխատիր երեխաները չտեսնեն:

Հաց ուտելուց հետո երեխաներին ուղարկեց դուրս՝ խաղալու, իսկ ինքը շտապեց լողանալ, խինայել ոտքի ու ձեռքի մատները: Աղախնի օգնությամբ դեռ չէր էլ հագնվել, երբ դուռը ծեծեցին: Աղախինը վազ տվեց և դռան անցքից նայելով ու մոտենալով՝ ասաց, որ սիրուն ուսադիրներով[160] մեծ *զաքիթ* է՝ երկու ժանդարմների հետ: Խանումը աչքով արեց նրան, որ գնա, իսկ ինքը շտապ զգեստավորվեց, օծվեց անուշահոտ օծանելիքներով, ներկերով զուգվեց, կարգի բերեց ոսկիներով զարդարված գլխի թասակը[161], կուրծքը զարդարեց ոսկե շարաններով, ձեռքերը՝ ոսկե ապարանջաններով և տոնական զգեստի ֆաթան երեսին քաշելով՝ սպասեց աղախնին: Խանումի սպասած թանկագին հյուրը սար քոմսերն էր՝ բելեդիե քաղաքապետ, որին նաև ղայմագամ էին կոչում: Աղախինը, նրան պատշաճ հարգանքով ընդունելուց հետո, վերադարձավ խանումի մոտ, բարձրացրեց ֆաթան, մատներով ուղղեց ունքերն ու ճակատի մազերը, և միասին գնացին օդան: Աղախինը ժանդարմներին հրավիրեց կից սենյակը, նրանց սինիով քաղցրեղեն, պտուղներ հրամցրեց և խնդրեց սպասել: Աղախինը անընդհատ շարժման մեջ էր. ղայֆա եփեց, սրվակներն ու քաղցրեղենը ղայմագամին մատուցեց և խանումի կարգադրությունները կատարելու համար՝ խոնարհաբար դռան ետևում սպասեց: Մոտ կես ժամից աղախինը ժանդարմներին հայտնեց, որ խանումը իրենց կանչում է: Գնացին աղախնի հետ և հինգ րոպեից միասին վերադարձան:

Ժանդարմները ներս մտան թոնրատուն, որտեղ դեռ սեղանը չէր հավաքված: Նայեցին դես-դեն, աղախնին հարցրեցին, թե.«Էստեղ ո՞վ է քնում»: Նա ասաց, որ միայն ինքն է քնում: Նրանք մոտեցան մուսանդարային, որը բաց էր: Աղախինը շտապեց անկողինը ծածկել ծածկոցով, որի բաց լինելը իր համար ամոթ էր և փեղկերը ծածկեց: Կողքի դուռը բաց անելով՝ մտան կից սենյակը և սկսեցին խուզարկել: Քունջն ու պուճախը լավ ստուգելուց հետո, պա-

հանջեցին ներքևի հարկի դուռը բաց անել: Աղախինը ցույց տվեց հատակի դուռը՝ գաբանքը, որտեղից կարելի էր իջնել ներքև: Դռնակը բարձրացրեցին: Մութ էր, մոմ պահանջեցին: Աղախինը առաջարկեց, թե՝ ավելի լավ է ներքևից, դրսի դռնից ներս մտնել: Նրանք համաձայնվեցին և դռնակը կիսափակ թողնելով՝ դուրս եկան: Ներքնահարկում աղան պահում էր խալիչաներ, կիսադաբաղ կովի, ոչխարի մորթիներ: Բանալին գտնվում էր աղայի սենյակում: Դուրս գալով՝ աղախինը խնդրեց սպասել, մինչև բանալին բերելը՝ և անցավ օդան՝ խանումին դիմելու: Զգալով գալիք վտանգը՝ ես իսկույն դուրս եկա և օգտվելով գաբանքի բաց լինելուց՝ ներքև իջա: Մեր թափթփված իրերը, ջրամանը, Սառայի կապոցները բարձրացրի վերև, մեր հետքերը մաքրեցի, մի դատարկ կարաս գլորեցի լուսամուտի առաջը և շտապ բարձրացա վերև: Մինչև բանալին բերելը ժանդարմները շրջեցին այգում և աղախնի գալու պես՝ մոտեցան դռանը: Ես լուսամուտից տեսա, որ նրանք զայրացան աղախնի վրա՝ ուշանալու համար: Բանալին նրանց տալով՝ նա հեռացավ, բայց ժանդարմները նրան կանչեցին, որ մասնակցի: Նա մերժեց.«Ես կին եմ,-և պատճառաբանեց, թե.-«Իմ ի՞նչ գործն է, խոմ ես տան տերը չեմ»,-ու վերադարձավ խանումի մոտ:

Ժանդարմները դեռ չէին վերջացրել խուզարկությունը, երբ աղայի մոտից եկավ ծառան և լիքը խուրջինը իջեցնելով թոնրատանը՝ բարձր ձայնով աղախնին կանչեց: Ես կարասների ետևում պպզած էի: Ցերեկ էր, դուրս գալու հնարավորություն չկար: Երեխաները փողոցում խաղում էին: Ժանդարմները շենքի չորս կողմում էին և ներսում, կասկածում էի, որ ավելի խստացնեն ստուգումը: Վերջապես աղախինը եկավ: Ծառան դատարկեց խուրջինը և ուզում էր հետ գնալ: Աղախինը մոտեցավ նրան և կամացուկ հասկացրեց տան իրավիճակը: Ծառան շտապելով գնաց: Խանումը կանչեց աղախնին, որը հայտնեց ծառայի գալ ու գնալու մասին: Կայմակամը, իմանալով ծառայի մասին, վեր կացավ տեղից ու խանումի հետ դուրս եկավ այգի: Նրանք աղախնից հարցրեցին ժանդարմների մասին, որը ցույց տվեց նրանց տեղը: Ժանդարմները, մոմի լույսով ստուգելով մառանի պարունակությունը և խանումին տեսնելով՝ առաջարկեցին բանալին: Աղախինը տուն գալով փակեց դռները և մոտեցավ գաբանքին: Մոմը վառելով՝ գլուխը կախեց ներքև և ափսոսանքով հայտնեց, որ տակնուվրա են արել մառանը: Ես, հետևելով դայմակամի ու խանումի սիրալիր խոսակցությանը, ուշադրություն չէի դարձրել աղախնի գալուն: Դռնակը ծածկելու ձայնը լսելով՝ լուսամուտի կողքից շարժվեցի: Ակամա իրար դեմ կանգնեցինք: Աղախինը երկյուղից շփոթվեց և ապշած ինձ նայելով՝ ասաց.«Ա՜յ, գյավու՛ր օղլի, քեզ են փնտրում, իսկ դու լուսամուտից նրանց ես նայում: Որտեղից դուրս եկար, շուտ գնա մտիր թոնիրը: Հիմա կգան հաց ուտելու,-և լուսամուտին մոտենալով ավելացրեց,- օ՜հ, ի՜նչ *ուսուսքին* /սրիկա/ է խանումը, տե՛ս ոնց է կպեր դայմակամին»,-և իսկույն գնաց աղայի սենյակը: Խանումը դայմակամին ճամփա դնելուց հետո եկավ և լաց լինելով ընկավ՝ աղախնի թևերին: Այդ պահին աղախինը, խանումի գլուխը գրկած, աչքերով ինձ էր որոնում, իսկ ես թոնրից լսում էի, տեսնում և կանխազգում կատարվածի հետևանքները…

* * *

Ռազմաճակատից վատ լուրեր էին գալիս. խտացել էր նահանջող զորքերի, վիրավորների, գաղթականների խառնաշփոթ հոսանքը: Թաղիգլուխ թաղամասով անցնող գլխավոր կենտրոնական ճանապարհը գիշեր-ցերեկ լիքն էր բարձած էշերով, ջորիներով, ուղտերով, սայլերով, աղաղակներով, գոռում-գոչուններով: Մենք հաճախ խաղաղ դիտում էինք ու նկատում ամբոխի խառնիճաղանջ վիճակը: Օգտվելով աղայի սեղանից բերած պաշարից՝ տոնական կյանք էինք վարում: Մոտ մի շաբաթ անցել էր իմ և արաբ զինվորների բաժանումից: Սառա և Զանո մորաքույրները գտնում էին, որ հարկավոր էր կապնվել արաբ դասալիք զինվորների հետ: Գիշերը ես իջնելով և գետը անցնելով՝ այգիներով բարձրացա և գնացի նրանց մոտ: Արաբ զինվորները ուրախությամբ ինձ ընդունեցին և ծանոթացրին իրենց նորեկ ընկերներին, որոնցից մեկը բժիշկ սպա էր: Նրանք տեղեկություն չունեին գոռներում կատարված դեպքի մասին և զարմանքով ու գովասանքով ուրախացան: Սառան ինձ հանձնարարել էր ատրճանակի փամփուշտներ ճարել: Արաբները հինգվեց փամփշտակալ՝ մոտ երեսուն փամփուշտ, տվեցին և ճանապարհ դրին ինձ: Կես ժամ հետո ես մերոնց մոտ էի: Ըստ արաբ զինվորների պատմածի՝ ռուսները նահանջել էին Դատվանից մինչև Մուշ,[162] Խնուս[163] քաղաքները: Քաղաքում *աժանները*՝ թռուցիկ թերթիկները, հայտարարում էին թուրք բանակի հաջողությունների մասին, որոնք բազմապատկվում էին նույնիսկ Վան քաղաքի ապստամբների[164] լիովին ոչնչացումով: Սառային այս տեղեկությունները չէին հետաքրքրում, նա մի հանդուգն ծրագիր էր կազմել՝ կրկնելով.«*Միևնույն է, մեզ կսպանեն, սպանի՛ր, որ չսպանվես...*»:

Հաջորդ օրը Սառայի հանձնարարությամբ, վերցնելով մի քսակ ոսկի, երկու ոսկյա ապարանջան և մի արծաթյա գոտի, գիշերով եկա աղայի տուն և թաքնվելով այգու շան բնում՝ սպասեցի աղայի դուրս գալուն: Սառան ինձ հանձնարարեց աղային հայտնել իրենց բռնվելու, անհետանալու և տեղեկանալ գոռներում զոհվածների մասին: Բարեբախտաբար, առավոտյան աղան դուրս եկավ այգու դռնով, չորս քարե աստիճաններով իջավ: Նկատելով, որ մենակ է, ես ձայն տվի.«Աղա՛, եկել եմ ձեզ մոտ»: Աղան չորս դին նայելով՝ ձայնեց. «Ա՛յ Նուրի, որտե՞ղ ես»: Իսկույն դուրս եկա և քսակը մեկնեցի նրան: Նա ծանր ու թեթև անելով՝ հրճվեց և պատվիրեց գնալ տուն և սպասել մինչև իր գալը: Աղայի գնալուց հետո ես նորից մտա շան բունը, ավելով անցքը փակելով, պառկեցի: Մոտ քսան րոպեից աղախինը, բակ դուրս գալով, արտակարգ սկսեց զբաղվել բակի և այգու մաքրությամբ: Ցախավելը ման գալով՝ վերջապես այն նկատեց շան բնի դեմ դրված, զզվանքով թեքվեց, քիթը բռնած վերցրեց և սկսեց ավլել, մաքրել: Ահն ու սարսափը ինձ ալեկոծեցին, երբ նկատեցի աղախնի բերած բարձերն ու գորգը: Նա, այգու կանաչների վրա՝ թթի ծառի տակ, փռելով, ուտելիքի սպասքը և նարգիլեն բերեց, ապա այգու կողմից դեպի փողոց ելքի դուռը փակելով, գնաց: Հետս բերած *քամարը*՝ գոտին,

ապարանջանները շան բնում պահելով՝ ակնթարթորեն դուրս եկա և հույժ շտապ ներս մտա մեծ օդեն՝ հյուրասենյակը և բարձրանալով մուսանդարա պահարանի վերևը՝ առաստաղի տակ կուչ եկա: Այդ պահին խանումը՝ աղայի կինը, թոնրատան *չոլում* /պատի արանքի բաղնիք/ լողանում էր աղախնի օգնությամբ, իսկ օջախի վրայի խորտիկների և ճաշերի բուրմունքը լցվել էր սենյակները:

Ինչպես հիշեցինք՝ Ֆաթմա խանումը, եղբոր սպանվելու գույժը լսելով, գնացել էր հերանցը, լացել, ողբացել, յուրայինների խոսակցություններից պարզել, որ գոռներում հուղարկավորության մասնակից թուրքերի գնդակահարման՝ հրեշավոր արհավիրքի կազմակերպման մեջ կասկածում են Իսմայիլ աղայի մասնակցությունը: Ֆաթմա խանումը մոլեռանդությամբ իրազեկ էր դարձրել աղայի՝ հայերի հետ ունեցած սերտ կապերի մասին, նույնիսկ իմ մասին: Եղբոր՝ Մուստաֆա բեկի առաջարկությամբ Ֆաթմա խանումը պետք է խիստ գաղտնի կապ ստեղծեր թաղի ոստիկանների հետ և հանկարծակիի բերելով՝ վրեժխնդիր լիներ Իսմայիլ աղայից: Ֆաթմա խանումը, երրորդ օրը տուն վերադառնալով, եղբոր՝ Մուստաֆա բեկի հետ անմիջապես հրավիրել էր թաղային կուլուխի /միլ-տան/ քոմսերին և հյուրասիրելով՝ հայտնել իրենց մտադրությունները: Օգտվելով Իսմայիլ աղայի բացակայությունից, որը Սղերդ էր գնացել, ղայմակամն ու խանումը, Մուսթաֆա բեկին բարի ճանապարհ մաղթելով, գիշերել էին միասին: Ֆաթմա խանումը լողանալով և պճնվելով, իրեն ոսկեղենով զարդարելով՝ եկավ բազմեց օդայի թանկարժեք բարձերին: Զգուշության նկատառումով աղախնին հանձնարարեց տղաների հետ իր ազգականին հյուր գնալ: Մոտ երկու ժամից հետո ղայմակամի հետ եկան հյուրերը: Ղայմակամը, խանումի երեսի քողը[165] վերցնելով, հաճույքով շոյեց և հրավիրեց նստել: Ֆաթմա խանումը կանացի հեզությամբ նայելով ղայմակամին՝ մատնացույց արեց այգին: Մոտ մեկ ժամ հյուրասիրվելուց հետո ղայմակամը երկու ժանդարմներին հանձնարարեց մանրամասն խուզարկել տունը: Դատարկ սենյաներում ման գալով, դես-դեն նայելով՝ ժանդարմները թիկնեցին բազմոցներին և նարգիլեն ծխելով՝ հանգիստ նիրհեցին: Վերևից տեսնելով նրանց անասնական անհոգ պառկելը՝ հիշեցի Սառայի խոսքերը.«Սպանի՛ր, որ չսպանվես»: Ինքնաբերաբար ատրճանակը ոտքերիս արանքից հանելով՝ ուզեցի սողալ ներքև, բայց օ՜հ տեր իմ, այդ պահին դեմս կանգնեց Իսմայիլ աղան իր ողջ հասակով… Այո՛, պատահականությունը դրդում էր վերացնել երկուսին էլ, բայց հետևանքները վտանգավոր էին նաև մեզ համար: Աչքերս փակելով սկվեցի տեղումս: Լսվեց աղայի տան դռան կոչնակի ձայնը: Ֆաթմա խանումը՝ լուսամուտից ստուգելով, բացեց դուռը, ծառան խուրջինով գնաց թոնրատուն, գող-գողի հայացքով հետևելով ժանդարմներին, որոնց ներկայությունը կասկած էր հարուցում: Խանումը փութաց շտապ ուղարկել ծառային: Խանումի և ղայմակամի տրամադրությունը ընկավ, նրանք մի քանի բառեր փոխանակեցին, որից հետո հյուրերը հեռացան:

Այդ օրը աղան սովորականից շուտ եկավ, զննելով սենյակները՝ զգաց որոշ տեղաշարժեր, իսկ երեխաների բացակայությունը զարմացրեց՝ շփոթ-

մունք առաջացնելով: Մտնելով իր սենյակը, կանչեց կնոջը: Խանումին մոտենալով և նկատելով նրա տոնական զուքսը, հարցրեց, թե ուր են երեխաները: Խանումը պատասխանեց, որ Մուստաֆային հյուր են գնացել: Իսմայիլ աղան իր տասնհինգամյա ամուսնության ընթացքում, չնայած իր դաժանություններին, երբեք չէր զգացել կնոջ հանդգնությունը: Ֆաթմա խանումը մուսուլմանին հատուկ համեստությամբ դեմքը քողով էր ծածկում՝ դեմքը այլ տղամարդկանցից թաքցնելու համար: Օտար տղամարդու հետ շփվելը նամուսի անհանդուրժելի արատավորում էր: Խանութում ծառան հայտնել էր, որ ղայմակամն ու խանումը միասին խոսում էին: Մի պահ լռելուց հետո աղան շրթունքները կծած՝ շտապել էր տուն: Կասկածանքը փարատելու համար աղան հարցրեց, թե ո՞վ էր եկել մեզ մոտ: Նա ջղայնությունից դողում էր, ատամները կրճտացնելով թափ տալիս կնոջ մարմինը: Ֆաթմա խանումը, կնոջ խորամանկությամբ ժպտալով ասաց.

-Քո բարեկամ ղայմակամը երկու ժանդարմներով եկել և տունը տակնուվրա են արել, խուզարկել և ինձ սպառնացել հայերին հովանավորելու համար: Ես նրանց մեղմացնելու համար հնարավորին չափ հյուրասիրեցի, խնդրեցի սպասել Ձեր գալուն, բայց նրանք իսկույն գնացին:

Եկավ աղախինը տղաների հետ, լամպերը վառեց: Աղան աղախնին և երեխաներին հեռացրեց և դուռը ծածկեց: Աղախինը երեխաներին դուրս ղրկեց խաղալու, իսկ ինքը ներս մտավ թոնրատուն, դուռը փակեց և մոտենալով թոնրին կանչեց ինձ.«Նուրի՛, դուրս արի, քեզ բան պետք է ասեմ»: Ես հայտնվեցի: Նա մոտեցավ ինձ, ցավակցաբար գրկեց: Նա դողում էր, վախից կարկամել էր: Կողքի սենյակից լսվեց աղայի որոտընդոստ ձայնը և կնոջ ճիչը: Աղան սպառնաց.

-Եթե ճիշտ չխոստովանես, վերջ կտամ քո բոլոր հարազատներին, իսկ քեզ կխեղդեմ, սատանայի փայ կանեմ,-նա ավելի կատաղեց, երբ նկատեց չհավաքված սուրճի բաժակներով և քաղցրեղենով հյուրասեղանը,-դու իմ տանը, իմ օջախում սիրեկան պահես, էն էլ ղայմակամին,-ասելով՝ ապտակեց: Խանումը, ղայմակամի անունը լսելով, երկյուղից շփոթվեց, լեզուն կապ ընկավ ու պապանձվեց և չնայած հարվածներին՝ ոչ մի ձայն չհանեց: Աղան գնալով բորբոքվում էր. մի կողմից զգում էր կնոջ դավաճանությունը, մյուս կողմից՝ կնոջ՝ ղայմակամի հետ ունեցած զրույցը մահացու հարված էր հասցնում իր արժանապատվությանը, նույնիսկ իր կյանքին ու դիրքին: Աղախինը տղաներին քնեցնելուց հետո, միամիտ ձևանալով, ուզեց տուն գնալ: Այդ պահին լսվեց Ֆաթմա խանումի աղիողորմ ձայնը, աղախինը շտապեց տղաների սենյակ: Ֆաթմա խանումը, հատակին փռված, հեծկլտում էր, իսկ Իսմայիլ աղան երկարավուն փաթաթված քոլոզը հատակին խփելով, հորջորջելով բղավում էր.«*Դու՛, իմ նամուսի հեւրն ես խաղում, ես քո...*»: Իսմայիլ աղայի վրդովմունքին չափ ու սահման չկար: Հայհոյանքների տարափը թափելով կնոջ գլխին՝ քացիահարեց և դուրս եկավ տղաների մոտ: Կես ժամ չէր անցել, երբ եկավ խանութի ծառան: Դուռը ծեծելով՝ աղային կանչեց՝ ասելով.«*Ղայմակամը երկու ժանդարմ է ուղարկել, քեզ է կանչում*»: Փակված դռնից լսելով

ծառայի խոսքերը՝ աղան մի պահ սթափվեց, թոնրատան դուռը ծեծելով՝ աղախնին կանչեց, որը փարխաջով ջուրը տանելով՝ լցրեց խանումի գլխին: Խանումին ուշքի բերելուց հետո աղան լվացվեց, իրեն տնտղեց, վերցրեց ատրճանակը, կապեց խանչալը, քոլոզը ֆեսով փոխեց, հագավ աբան և աշիրաթապետի դիրքով դուրս եկավ: Աղախնին պատվիրեց, որ խանումին լավ նայի ու ծառայի հետ գնացին: Աղախինը, լսելով խանումի հեծկլտոցները, դարձյալ ներս մտավ, տեսնելով նրա արյունլվա վիճակը, իսկույն թասն ու *գյուգյում* /պղնձե փարչ/ բերելով՝ սկսեց լվալ ու մաքրել խանումի դեմքը, հանելով շորերը՝ պառկեցրեց անկողին և գնաց իրենց տուն: Դռան արանքից լսվում էր խանումի ծանր հևոցն ու մղկտոցը: Քանի օդայում մարդ չկար, ես ավելորդ համարեցի աղայի հետ տեսակցությունը, համոզված լինելով, որ նա անաղուհաց թուրք ազգից է և միջանցքով դուրս եկա բակ՝ այգիների միջով հեռանալու, գնալու նպատակով: Հազիվ էի դռնից երկու աստիճան իջել, լսեցի ծուռ Մժոյի գոռգոռոցը և անծանոթ ձայներ: Մոտ կես ժամից աղայի շենքը շրջապատվեց ժանդարմներով և ասքյարներով: Աղախինը շտապեց ինձ հայտնելու, բայց ինձ չգտնելով՝ բարձրաձայն ասաց.

-Նուրի՛, ի սե՛ր Աստծո, փախի՛ր:

Բայց ես լուսամուտից նկատել էի նրանց մոտենալը և իսկույն հեռացա: Իսկույն հետ գնալով թոնրատուն և մառանի գաբանքը բացելով, զգուշությամբ իջնելով և գաբանքի դռնակը ծածկելով՝ ներքև իջա ներքնահարկ: Թոնրատնից աղտաջուրը կոյուղու միջով գնում-թափվում էր ներքև՝ դեպի Խանոյենց այգիները: Կոյուղու սալիկներից մեկը բարձրացնելով և հասակովս մեկ կոյուղու մեջ պառկելով՝ տանջանքներով սալիկը քաշքշելով և ձգելով փակեցի անցքը, ոտքերս շարժելով՝ սողացի, ձեռքերով ինքզինքս հրելով, վերջապես կիսախեղդ դուրս եկա այգին: Երկնքում աստղերը փայլատակում էին: Ըստ իս՝ մոտ երկու ժամ էր տևել կոյուղու տանջալի անցումը: Սպասեցի մինչև մութն ընկնելը: Երեկոյան մթին ուզեցի դուրս գալ իմ թաքստոցից, բայց լսելով շուրջս վխտացող ասքյարների ոտնաձայները՝ հետ քաշվեցի նեխված կեղտաջրի մեջ և քարերի արանքներից նայեցի ժանդարմներին ու ասքյարներին, որոնք իրենց տեղերն էին գրավում գիշերային պահակության համար:

Այսպիսի ուժեղ միջոցառումները նույնիսկ գերազանցեցին ապրիլի շրջապատումը, քանի որ հիմա նույնիսկ թուրք հարևանների տներն անգամ առնված էին շուրջկալի մեջ: Իմ գոյությունը մոռանալով՝ ես մտածում էի Իսմայիլ աղայի մասին: Չէ որ այս բոլորը նրան կործանելու համար էր և հիմնական պատճառը ես էի: Խղճմտանքս և պատանեկան երևակայությունս ինձ դրդում էին դուրս գալ, հարձակվել և սպանել ամեն մի հանդիպողի և աղային ազատել ղայմակամի ճիրաններից: Կեղտոտ ձեռքերով և կեղտոտ շորերով դուրս եկա, մագլցելով փորսող իջա և գնացի դեպի գետի ափը: Աննկատ անցա ասքյարների պահակատեղին: Ծառերի ու քարերի արանքով անցնելով՝ հեռացա տներից, այգիներից ու փողոցներից: Առվի ջրով հնարավորին չափ մաքրեցի շորերս, լվացվեցի: Պարզ գիշեր էր, աստղերը փայլատակում էին, խոր լռություն էր, միայն առվակի հոսող ջրերից ողբի, հորդող արցունքների

մռայլ ու տխուր ձայներ էին գալիս: Գետում լողանալով, գարշահոտությունից մաքրվելով մոտ կես ժամից արդեն Սառայի մոտ էի: Խույս տալով շրջապատման գոտին՝ պատանեկան անմեղությամբ ձորով բարձրացա դեպի սարը և հասա Ծապրկորի առուն, որը կիսացամաքել էր: Առուն սարի ստորին մասով ուղիղ անցնում էր մեր թաղի վերևով և հասնում մինչև Ավեխի թաղը: Այդ մաքուր զուլալ ջրից օգտվում էին մեր թաղի բոլոր բնակիչները: Վերևից նայելով՝ տեսա մի քանի տեղերում վառվող կրակի փոքր խարույկներ: Ընկալեցի, որ զորքերի պահակակետերն էին: Չնայած վտանգին, ես պետք է գնայի և Սառային իրազեկ դարձնեի աղայի վիճակի և տան շրջապատման մասին: Առվի ուղղությամբ գնալով և հասնելով մեծ գերեզմանների առվակին ու օգտվելով մութ խավարից՝ գնացի դեպի Ջաղացպանյանների տան կողմը: Նկատեցի տանիքներին և փողոցներում եղած ասքյարներին, որոնք ինձնից էլ շատ վախվխելով դես-դեն էին նայում: Չորեքթաթ հասա այգու պարսպին: Մագլցելով բարձրացա պարսպով և իջա այգին: Նկատեցի մոտակա տանիքի վրա շարժվող զինվորներին: Կասկածեցի, որ մեր թաքստոցի հոտն առել են:

Կատվի ճարպկությամբ թուփեթուփ սողալով՝ հասա բակը: Նայեցի, դարպասը բաց էր: Մոտեցա ներքնահարկի փայտե չորսձողանի լուսամուտին: Այդ պահին դարպասի կողմից ձայներ լսեցի, նայեցի նրանց: Ծխախոտի համար լուցկի էին վառում: Օրհասական վիճակում էի. հետ գնալ հնարավոր չէր, անցքից ներս մտնելու համար պետք է շարժեի ու հանեի ճաղերը: Ձայնը կմատներ: Մի ձեռքս մեկնեցի դեպի լուսամուտը, մյուսը դեպի ատրճանակը: Հապաղելու պահ չունեի, ստիպված հրեցի լուսամուտի ճաղերը ու ոտքերով ներս անցա: Նորից ուղղեցի ճաղերը՝ մի անգամ ևս նայելով դեպի դարպասը: Հանգիստ շունչ քաշեցի և իջա մեր վիրապը: Սառան, տեսնելով իմ հագուստի կեղտը և ճանկռոտված ձեռքերս, գուրգուրանքով հարցրեց.«*Ի՞նչ է պատահել*»: Ես դողում էի ոչ թե իմ կյանքի համար, այլ տեղի ունեցող իրադարձություններից: Աղայիս վիճակը ինձ սարսափեցնում էր: Սառան, կարծես թե կռահելով իմ ծանր դրությունը, նստեց և գլուխս իր ծնկին դնելով՝ ասաց.«*Քնի՛ր, հեյրո կիսուես*»: Մի քանի րոպեից գլուխս բարձրացրի և պատմեցի տեսածիս և լսածիս մասին: Սառան վերոհիշյալ իրադարձությունների մասին տեղեկանալով՝ առանց երկմտելու, համոզված ասաց, որ ոչ միայն Իսմայիլ աղայի տունը, այլև ամբողջ թաղը խիստ շուրջկալի մեջ է լինելու: Տիրեց լռություն: Սառան քայլում էր հետ-առաջ: Բոլորս զգում էինք մեր դրության, գալիք ահավոր սարսափների վտանգը: Հանկարծ Սառան դարձավ դեպի մեզ և հանգիստ տոնով խոսեց.«*Միևնո՞յն է, բոլորիս սպանելու են, բայց Իսմայիլ աղային պետք է օգնել*»: Մի պահ մտածելուց հետո ասաց.

-Բացի Սիհրանից ո՞վ կգա ինձ հետ: Կայմակամ Շնքեթին պետք է վերացնել:

Որոշեցինք երեք օր դուրս չգալ:

-Եթե մեր տեղն իմացան, յուրաքանչյուրս մի քանի հոգի պետք է սպանենք, բայց լա՛վ իմացեք, տղային պետք է ապահովել, կռվից դուրս բերել, հետո…:

Երեք ծանր օրերը երեք տարիներ ու դարեր դարձան, սպասում էինք մեր ճակատագրին: Համոզմունքը, ուխտը մեկ էր, որոշումը վերջնական, ոչ ոք չէր առարկում:

Հրամայված էր՝ մինչև գյավուրին բռնելը, աղայի շենքը շուրջկալի մեջ պահել: Բոլոր հարևաններին զգուշացրել էին և խոստացել պարգևատրել: Նույնիսկ կանչել էին ծուռ Մժոյին, որն անգիտակցաբար պատմել էր իր վերաբերմունքի և այն անցքի մասին, որտեղից ես ներս էի մտնում աղայի տուն, նույնիսկ այն տների մասին, որտեղ ես կարող էի թաքնվել: Բացի աղայի տան շուրջկալից, մեր թաղը լցվեց ժանդարմներով ու կանոնավոր զորքով:

Ղայմակամի և խանումի մերձեցումը կրում էր լիրիկական և քաղաքական բնույթ: Խանումը, չափազանցնելով աղայի հայասիրությունը և ներքուստ համոզվելով, թե իր եղբոր սպանվելը նրա կազմակերպած մութ գործն է, վրիժառության տենդով մոլեգնած, ղայմակամին համոզել էր, վստահեցրել, որ ամուսինը օրերով պահել էր հայ կանանց: Խանումը լավ ծանոթ էր մեր ընտանիքին՝ որպես հարևանների, դրան նպաստել էր հաճախակի անցուդարձը՝ հատկապես տոնական օրերին: Խանումը, խոսելով ամուսնու հայասիրության մասին, ղայմակամին պատմել էր ինձ հովանավորելու և իմ միջոցով հայ փախստականների հետ ունեցած կապի մասին: Նա ցույց էր տվել վերջին օրերին աղայից ստացած ոսկե շարքը և պնդել, որ այն ստացվել էր իրենց տանը թաքնվող հայերից: Աղայի տան խուզարկության ժամանակ երևան եկած հայկական թանկարժեք իրերը համոզմունք էին առաջացնում, որ Իսմայիլ աղան իրոք գործում էր իշխանության դեմ և վերջին օրերի դժբախտ դեպքերը շաղկապված էին նրա գործունեության հետ: Փոլիսների, ժանդարմների ու զորքի ներխուժումը կասկած առաջացրեց մեր թաղի հարևանների՝ թրքական բնակիչների մեջ, որոնք, տագնապի մեջ ընկած, երկյուղով սպասում էին ինչ-որ հայերի հարձակման: Փոլիսները, բացի հարցաքննելուց, խուզարկում և ստուգում էին նույնիսկ հարևան թուրքերի տները: Կասկածը վերածվում էր անվստահության, վիրավորանքի, ըմբոստության: Հանդես էին գալիս վեճեր և լինում դիմադրողներ: Խանումի և աղայի սովորույթներն ու համոզմունքները միշտ հակասում էին իրար: Լինելով տարբեր աշիրաթների հետևորդներ՝ նրանք իրենց տոհմական արժանապատվությունը իրարից բարձր էին համարում, նրանցից յուրաքանչյուրն իր արժանիքները գերադասելով, ձգտում էր մյուսին նվաստացնել:

Սակայն բախտի բերմամբ Իսմայիլ աղան, ավելի նրբազգաց և հեռատես լինելով, կարողացավ հաղթել ու նվաստացնել իր հակառակորդներին: Իսմայիլ աղան խորամանկ էր և հեռատես, նա առևտրական կապեր ուներ հայ վաճառականների, և ինչպես հիշել ենք, կապալառու գործարքներ էր կնքել իշխանության հետ: Խանումի և Մուստաֆա բեկի դավադրությունը և զրպարտությունը ղայմակամին համոզելու գործում, ժամանակավոր բնույթ էր կրում: Իսմայիլ աղան, կռահելով կնոջ ու ղայմակամի սիրային կապը և կնոջ դավաճանությունը, ապա համոզվելով, որ նրանք գործում են Մուստաֆա բեկի ցուցումներով, արտաքնապես նրանց նկատմամբ թշնամական վե-

բաբերմունք ցույց չտվեց: Չնայած իր նկատմամբ կիրառվող միջոցառումներին՝ լրտեսություն, ոստիկանության կողմից նրա տան և թաղի պաշարում, հարևանների և խուժանի հսկողություն, Իսմայիլ աղան գործեց անարգելով և արհամարհելով այս թեթևամտությունը՝ մնալով իր վեհության վրա:

* * *

Երրորդ օրվա կեսգիշերին Զանոն դուրս եկավ դրությունը ուսումնասիրելու: Սառան զգուշացրեց շարժման, հետապնդման, դիմադրության մասին.« *Նեղն ընկած դեպքում հիշի՛ր մեր ուխտը՝ սպանիր, հետո սպանվիր»*: Ողջագուրվեցինք և կեսգիշերին նա հեռացավ թուրք գաղթական կնոջ հագուստով: Զանոն պետք է մեր թաղից անցներ ձորով, իջներ գետափ, գետն անցներ, բարձրանար Թաղիգլուխ, խառնվեր եկող գաղթականների խմբերին, որոնց տեղական իշխանությունները ժամանակավորապես բնակեցնում էին հայերի տներում: Զանոյի գնալուց մի օր հետո ինքզինքս որոշում կայացրի, որ գնամ աղայիս տուն: Այդ պահին ծնողներիս «մոռացած»՝ անհանգստանում էի նրա վիճակով: Ես դիմեցի Սառային, նա մի պահ մտածեց և կտրուկ մերժեց:

Իսմայիլ աղան, զգալով իր կնոջ և կայմակամի փոխհարաբերությունների ծանր հետևանքները, նախքան խանութ հասնելը, ծառային ուղարկեց ազգականներին ու մտերիմներին հայտնելու և իր եղբոր միջոցով Մանդոհ փաշային տեղեկացնելու կայմակամ Շևքեթի կեղծ ըմբռնումների և խանումի հետ ունեցած սիրային կապի մասին՝ պահանջելով պաշտոնանկ անել կայմակամին: Այդ ժամանակ Վանից նահանջած Ճևտետ[166] փաշան գտնվում էր Բիթլիսում: Նրանք՝ երկու փաշաները, զբաղված էին պետական անհետաձգելի գործերով: Գաղթականների ստվար խմբերը, ռազմաճակատից նահանջող զորքերը, վիրավորների հոգսերը ցնդեցրել էին նրանց: Հաջորդ օրը Ճևտետ փաշան մեկնելու էր պարսկական սահման:

Նախքան շուկա հասնելը՝ ճանապարհին, հինգ ժանդարմ, Իսմայիլ աղային զինաթափ անելով, նրան տարան մոտակա թաղի կուլուխ և վերցրեցին կալանքի: Կուլուխի պետը, կարդալով կայմակամի փուսուլան, զարմանալով կատարված իրականության վրա և ժանդարմներին ուղարկելով, պատշաճ հարգանքով վերաբերվեց Իսմայիլ աղային: Փոխանակ նկուղը քցելու՝ տարավ ներսի սենյակ և ձեռքը օղակից ազատելով՝ խնդրեց սպասել: Կուլուխի պետը, աղայի պահանջով, կատարվածի մասին իսկույն իրազեկ դարձրեց նրա մերձավորներին:

Մանդոհ փաշան, լսեց Իսմայիլ աղայի եղբոր՝ Ահմեդ բեկի ջղային խոսքերը, որը մեղադրեց կայմակամին և նրա անմիտ միջոցառումները հայկական թաղամասում, որտեղ երեք-չորս ամիս է, ինչ հայի հավ անգամ չէր մնացել, օգտվելով պաշտոնից, գաղտագողի գնացել էր Իսմայիլ աղայի տուն, նրա կնոջը ինչ-ինչ խոստումներ տալով, խաբեբայությամբ, առանց փաշային

իրազեկ դարձնելու՝ կալանքի վերցրել աղային: Նա, իր ֆեսը հատակին քցելով, երդվեց իր տոհմի անունով վրեժ լուծել: Մանդոհ փաշան լավ ճանաչում էր Իսմայիլ աղային, չէ որ նա էր իր վիլայեթի մատակարարման, ռազմաճակատից նահանջողների ու վիրավորների տեղաբաշխողը, պարենը հայթայթողն ու մատակարարողը: Նրա հռչակը վերջին տարիներին աճել էր իր անձնվիրության շնորհիվ, նույնիսկ քաղաքական խնդիրներում նրա կարծիքը դրականորեն էր գնահատվում: Ահմեդ բեկը, փաշայի ատյանում մի երկու քայլ ետ ու առաջ անելով, ըստ թուրքական սովորության, ձեռքը սրտին տանելով, մեծարելով ցույց տվեց իր խոնարհումը, հավատարմությունը: Նա ուզեց գլխաբաց դուրս գալ, որը շատ վիրավորական էր կողմերի համար: Փաշան, գտնվելով երկմտանքի մեջ, բարձրացավ տեղից, վերցրեց Ահմեդ բեկի հատակին ընկած գլխարկը և զայրացած գոչեց.

-Այս խառը ժամանակ իմ *պալատյայի* պետը լրբությա՞մբ է զբաղվում և ու՞մ վրա է ձեռք բարձրացնում: Ահմե՛դ բեկ, եթե ճիշտ են քո ասածները…,-ու լռեց, մոտեցավ, իր ձեռքով ֆեսը հագցրեց և միասին ատյանից դուրս եկան:

Կայմակամը բոլոր հնարավոր միջոցները կիրառեց գտնելու գոնե մի հայ կին, թե տղամարդ, տղա թե աղջիկ, որպես իրեղեն ապացույց իր աչալրջությունն ու հավատարմությունը ցուցաբերելու և նոր տիտղոսների արժանանալու համար: Օգտվելով Իսմայիլ աղայի ձերբակալությունից՝ նրա ախոյաններից տեղեկություններ էր հավաքել և կազմելով *ազրահալ* /արձանագրություն/՝ հուսով էր, որ խանումի թված հայերից գոնե մի քանիսին կբռնի և հաստատված մեղադրանքով կներկայանա փաշային:

Զանոն, Թաղիգլխի ճանապարհին խառնվելով թուրք գաղթականներին, եկավ տեղավորվեց շուկային մոտ՝ Քաղքի թաղում, որտեղ նրան հատկացրեցին բնակարան և երեք օրվա թային՝ սննդաբաժին: Վանի և Էրզրումի անկումից հետո զորքն ու ժողովուրդը հիասթափված էին: Գաղթականները տարբեր գավառների զանազան տարազներով, տարբեր լեզվական ոճերով ու բարբառներով, հյուծված, ցավերի, կարիքի տեր, խայտաբղետ տեսքով գալիս էին, լցվում փողոցները, ունևորները գնում էին ավելի խորքը, աղքատները զբաղված էին մուրացկանությամբ: Չորս-հինգ գաղթական կանայք և նրանց միացած Զանոն, խնդրեցին իրենց տեղափոխել վերև և հնարավորություն տալ օգտվել անտեր մնացած հայոց ունեցվածքից: Երկրորդ օրը Զանոն, գրկելով իրեն «բախտակից» գաղթականուհու երեխային, երեք փոքր երեխաներով և չորս կանանցով բնակարան ստացավ մեծ գերեզմանների մոտ գտնվող Քամալկանց տունը, որի այգին մի պարսպով էր բաժանված Զաղացպանյանների տնից: Այսպիսով Զանոն, վայելելով մուհաճիրի արտոնությունները, ընկերուհիների հետ շրջում էր տնից տուն՝ վերցնելով իրենց անհրաժեշտ տնային իրերը և շուրջկալի զինվորների միջոցով տեղափոխում իրենց բնակարանը: Ասքյարները, օգտվելով կանանց սիրալիր վերաբերմունքից, խոստացան օժանդակել նրանց՝ նյութական հարստություն ձեռք բերելու գործում:

Հաջորդ օրը, թրքուհու երեխայի ձեռքից բռնած, երկու ընկերուհիներով

գնացին Իսմայիլ աղայի տան կողմերը: Ինչքան դուռը ծեծեցին, բացող չեղավ: Դուրս եկած հարևանները հեգնանքով ասացին, որ տան խանումը լրբությամբ մարդուն բռնել է տվել, իսկ ինքը, վերևի դուռը փակելով, ներքևից միայն զաբիթներին է ընդունում: Զանոյին չէր հետաքրքրում այդ կանացի բամբասանքը: Նրան անհրաժեշտ էր իմանալ աղայի վիճակը և շենքի օղակման մասին: Կանացի շողոքորթ լեզվով նա տեղեկացավ Իսմայիլ աղայի կողմնակիցների հանդես գալու մասին, որոնց ազդեցության շնորհիվ՝ կայմակամը ստիպված էր առավոտից շուրջկալը վերացնել: Հարևաններին հանձնարարված էր հետևել աղայի տանը, եկող-գնացողներին և իրազեկ դարձնել իշխանությանը: Զանոն, իր գաղթական ընկերուհիներից ավելի հարուստ լինելով, նրանց հետ գնաց շուկա գնումներ կատարելու: Զանոն հարուստ պճնված թրքուհու արդուզարդով էր: Տղամարդիկ ակնապիշ, կանայք նախանձով էին նայում նրան: Տրապիզոնցի լինելով՝ նա սահուն խոսում էր թուրքերեն: Չնայած Իսմայիլ աղայի խանութը բաց էր, նա բացակայում էր: Կես ոչխար առնելով՝ նա խանութի ծառային խնդրեց օգնել իրենց գնումները փոխադրել: Ծառան, տեսնելով գեղեցիկ խանումներին, հրճվանքով համաձայնվեց և տեղավորելով խուրջինի մեջ՝ ընկերակցեց մինչև նրանց բնակարանը: Զանոն զիգզագ /խաչաձև/ հարցերով հետաքրքրվեց Իսմայիլ աղայով: Ծառան հպարտորեն հայտնեց, որ այսօր փաշան Իսմայիլ աղային հրավիրել է իր մոտ և խանումից հինգ դուրուշ նվեր ստանալով՝ խոստացավ ամեն օր հաճախել և շուկայից բերել անհրաժեշտ մթերքներ: Զանոն խնդրեց շաքար և օճառ բերել:

Առավոտյան մեծ շքախմբով Ճևտետ փաշային Բիթլիսից ճանապարհ դնելով ու վերադառնալով՝ փաշան մեջլիս հրավիրեց, որին մասնակցելու էին քաղաքի հայտնի անձինք, զինվորականներ, կրոնավորներ: Հիմնական հարցը նահանջող բանակին օգնելն ու քաղաքացիներին գաղթեցման նախապատրաստելու խնդիրն էր: Օգտվելով առիթից՝ կայմակամը ներկայացավ իր զեկուցագրով՝ հայտնելով քաղաքի պաշտպանության համար իր կողմից ձեռնարկված մի շարք կարևոր միջոցառումների մասին: Հենց այդ պահին ներս մտավ Իսմայիլ աղան եղբոր և իր մի քանի համախոհների ու շեյխերի հետ: Կուսակալը մինչ այդ չէր նկատել Իսմայիլի բացակայությունը: Ղայմակամի խոսքը մնաց բերանում: Բոլորը *սալամով* ողջունեցին հարգարժան եկողներին և հրավիրեցին բազմել պատվավոր տեղերում: Նստողների հայացքները մեկը մյուսին որոնում և խայթում էին, սակայն բոլորն էլ խորամանկ թուրքեր էին, չէին խոսում և չէին գործում բացահայտ: Կայմակամը, շարունակելով իր ընդհատված զեկուցումը, կուսակալին ներկայացրեց զեկուցագիրը, որն ամբաստանագիր էր Իսմայիլ աղայի և նրա տոհմի նկատմամբ: Փաշան, վերցնելով հինգ-վեց թերթանի զեկույցը, ձեռքի շարժումով լռեցրեց և նստեցրեց կայմակամին: Հանդես եկավ բինբաշին և կուսակալի ուշադրությունը հրավիրեց ներկա տագնապալի վիճակին, ռազմաճակատով զբաղվելու հարցերին, գոնե մթերքի մատակարարման խնդրին: Նա, մոռանալով Իսմայիլ աղայի հետ պատահածի մասին, նրան դիմելով խնդրեց շտապեցնել Դատվանից

Խնուսի և Էրզրումի կողմը մթերքի կարավանները հասցնելու գործը: Կուսակալը, մի կողմ դնելով զեկուցագիրը, լսելով բինբաշու պահանջը, դիմեց Իսմայիլ աղային, որը ձեռքերը կրծքին դնելով՝ խոնարհվեց ու համարձակորեն հայտնեց.*«Երեք կարավան արդեն գնացել է. մեկը՝ Խնուս, երկուսը՝ դեպի Էրզրում, վաղը կգնա չորրորդ կարավանը, Սղերդից այսօր կգա երեք կարավան»*: Ներկաների վրա դա մեծ տպավորություն գործեց, և բոլորը աղաղակեցին.*«Մաշալլա՛, Իսմայի՛լ աղա»*:

Բինբաշին զգացմունքով նայեց աղային և առաջարկեց իր հնարավոր օգնությունը, շտապեցնել՝ Սղերդից եկող կարավանների արագ փոխադրելու գործը: Իսմայիլ աղան գոհունակությամբ ընդունեց և հայտնեց, որ հենց այսօր իր եղբորը կուղարկի կարավանի հետ: Կուսակալն ու բինբաշին, խիստ զբաղված լինելով, այլ հարցերով չզբաղվեցին և ատյանը թողնելով հեռացան: Սար քոմսերը՝ փաշայի տեղակալը, շարունակելով մեջլիսը, ակնարկեց կայմակամի ծայրահեղությունների մասին, բայց Իսմայիլ աղան, գործադրելով իր դիվանագիտությունը, խնդրեց, որ այստեղ չշոշափեն և չքննադատեն կայմակամի գործունեությունը, ասելով, որ թյուրիմացություն է և մասամբ անհրաժեշտություն՝ քաղաքացիների կյանքի ապահովության կապակցությամբ: Ներս մտավ փոստի մյուդիրը՝ ձեռքին մի թերթիկ բռնած, ու դիմեց սար քոմսերին՝ ասելով.

-Ստամբուլից հեռագրով հույժ շտապ պահանջում են փաշային և բինբաշուն կապվել Էնվեր պեյի հետ:

Սար քոմսերը, հեռագիրը վերցնելով, անձայն կարդաց, գունատվեց և շփոթված մի պահ լռելյայն կանգնեց: Չնայած փաշան ոչ մի առաջարկություն չէր արել, նա խորհրդակցությունը փակեց, առաջարկելով ցրվել ու գործել ըստ փաշայի առաջարկության և ֆեսը վերցնելով, շտապեց դեպի ախոռը, ջղայնորեն ձի նստեց և գնաց փաշայի ու հազարապետի կողմը: Հաջորդ օրը պարզվեց, որ փաշային նկատողություն էին արել, իսկ բինբաշուն Ստամբուլ կանչել: Հրամայված էր նահանգում եղած բոլոր զինվորականներին, որոնց թվում նաև ոստիկանության ենթականերին, ուղարկել Խնուս, Էրզրում, և այլ կտրուկ որոշումներ: Բոլորը գլխիկոր հեռացան հյուքյումեթից՝ առանց մտքերի փոխանակության:

Իսմայիլ աղան եղբոր՝ Ահմեդ բեկի հետ եկավ տուն և տեսնելով շրջապատող ժանդարմներին, որոնք չէին սպասում նրա գալուն, կատաղեց և պոռալով ու ապտակելով նրանց, ստիպեց հեռանալ: Ֆաթմա խանումը, լսելով ամուսնու ձայնը ու լուսամուտից տեսնելով տեգրոջը՝ Ահմեդ բեկին, տարակուսանքի մեջ ընկավ և փոխանակ ինքը գնա դուռը բացելու, աղախնին ուղարկեց: Երկու եղբայրներ, մեկը մյուսից ածդահա, մեկը մյուսից գազանացած, ներս մտան: Այդ պահին աղան մռնչում էր ինչպես կառափնարանից փախած վագր, կարծես որս ման գալով՝ կայծկլտացող աչքերը դես-դեն էին նայում: Ձեռքը խանչալին տանելով՝ ոտքով հրեց խանումի սենյակի դուռը: Եղբայրը զգաց նրա բարկության նոպայի հետևանքը, իսկույն եղբոր ձեռքը բռնեց և ինքը առաջինը մտավ սենյակ: Ֆաթմա խանումը, անկողնում կիսա-

բաց պառկած, հևում էր, գալարվում: Բարձի մոտ՝ գորգի վրա ընկած էին դեղերի սրվակներ և շուռ եկած ջրով բաժակը: Ահմեդը մեկ դի կանգնեց: Իսմայիլ աղան, տեսնելով իր սիրած հրեշտակին (այդպես էր կանչում նրան) այդ դրության մեջ, այլայլվեց, մոռացավ մի երկու վայրկյան առաջ ունեցած իր մտադրությունը և սիրալիր զգացմունքներով խելահեղ ընկավ անկողնուն, գրկեց կնոջ գլուխը, բարձրացրեց և զգաց, որ թունավորված է: Ահմեդը դուրս եկավ, կանչեց աղախնին: Իսմայիլ աղան թան, մածուն պահանջեց և մինչ նրանց բերելը, կնոջը շուռ տալով կրծքի վրա և իր երկու մատը կնոջ բերանը տանելով՝ փորձեց փսխում առաջացնել: Թանը բերեցին: Չնայած խանումի դիմադրությանը՝ աղան ստիպելով փարչի կեսը խմեցրեց և կնոջը իր ծնկների վրա առավ: Մի երկու րոպեից կինը սիրտը հետ տվեց: Ամուսինը գուրգուրանքով հիվանդին պառկեցրեց: Նախքան բուժումները սկսելը՝ Ահմեդ բեկը ձիով սլացել էր զինվորական բժշկի մոտ, որը, կես ժամից գալով և ստուգելով, հայտնեց, որ վտանգն արդեն անցել է: Բժիշկը զննեց դեղերի սրվակները, նրանց պարունակությունը և ինքն իրեն քմծիծաղ տալով՝ նայեց հիվանդի՝ մինչ այդ դժգույն դեմքին ու դեղերի մնացորդներն ու սրվակներն Իսմայիլ աղային տալով՝ խնդրեց դուրս տանել, թափել: Այդ պահին, օգտվելով ամուսնու բացակայությունից, ասաց.«*Խանում, չգիտեմ ինչու՞, բայց լավ խաղ խաղացիք*»: Խանումը, զգալով, որ բժիշկը կռահել է, ժպտալով նայեց նրան և աչքերով ու շրթունքների հպումով ստիպեց լռել: Բժշկին, մի բաժակ սև դայֆե հյուրասիրելով, ճամփու դրին:

Երկու եղբայրները կրքոտ խոսում էին: Ահմեդը, որ ավելի տաքարյուն էր, երդվեց սպանել կայմակամ Շևքեթին, բայց Իսմայիլ աղան համոզեց նրան սպասել հարմար առիթի և առաջարկեց իսկույն Սղերդից եկող կարավանների հետ մեկնել Դատվան ու նրանց ճամփու դնել:

Ինքն իրեն հանգստացնելով՝ Իսմայիլ աղան հաջորդ օրը գնաց պալատյան՝ քաղաքի ոստիկանատուն, և տեսակցելով դայմակամին՝ հրավիրեց իրենց տուն, քաղաքավարությամբ հարցնելով, թե եթե իրեն հաճելի է, կարող է հրավիրել նաև քոմսերին: Դայմակամը, մի պահ լռելով, կանգնեց ու ձեռքերը շփելով համաձայնվեց: Հաջորդ օրը աղայի տան խնջույքը խանումի, դայմակամի և ներկաների վրա մեծ տպավորություն գործեց, որից գոհ բաժանվեցին: Այսպիսով աղան մի կամուրջ կապեց իր նոր ոխերիմ թշնամու հետ՝ հետագայում այն օգտագործելու համար:

Երկու օր է, որ Զանոյից ոչ մի տեղեկություն չունենք: Մեր գաղտնանցքից ստուգեցինք և զգացինք, որ շուրջկալը վերացվել է: Ժանդարմիայի զորքերը չէին երևում: Սառան հագավ ասքյարի հնամաշ շորեր, ատրճանակը գրպանը դրեց, ֆեսը գլխին սեղմեց, հրացանը ուսից կախեց ու երեկոյան մթին պատրաստվեց դուրս գալ: Երկու կանայք ընդդիմացան: Նա նստեց և դառնությամբ ասաց.«Դու՛ք սպասեք, ես կես ժամից կվերադառնամ: Քանի մութն է, պետք է ստուգել, իմանալ ագռավներ կա՞ն, թե ոչ»: Ես ըմբոստացա, կտրուկ ասացի, որ պետք է գնամ աղայիս տուն: Սառան մի պահ սպասեց, գրպանից փոքր հայելին հանեց, նայեց ինքն իրեն, մատով ուղղեց նորածիլ արհեստա-

կան բեղերը, ուղղեց ֆեսը և հայացքը մեզ ուղղելով՝ հանգիստ հրամայական տոնով ասաց.«Տեղից չշարժվեք մինչև իմ գալը»,-և դուրս եկավ: Նրա խոսքերը կարծես թե մեզ հիպնոզացրին, և իրոք մենք մոտ տաս րոպե ոչ մի շարժում չարեցինք: Ակամա ես մոտեցա Մարթային և հայտնեցի, որ ես գնալու եմ: Նա լուռ, ձեռքով նստելու նշան արեց:

Սառան, մի պտույտ գործելով, սանդուղքով բարձրացավ վերնահարկ, նախօրոք թուլացրած լուսամուտի ճաղերը հանելով, իջավ տանիքը: Չորս կողմը զննելով՝ թեքված թթենու ծառի վրայով իջավ այգի: Բակի դուռը բաց տեսնելով՝ շարժվեց դեպի փողոց: Չնկատելով ոչ մի ժանդարմի և զինվորի, փարատելով կասկածները՝ ուղղվեց դեպի գերեզմանները: Մինչև առավոտ նա մնաց գերեզմանաքարերի արանքում ու ստուգեց վերևի, ներքևի ուղղություններով փողոցներն ու խաչմերուկները: Ոչ մի երթևեկություն, ոչ մի շարժում չնկատելով՝ արևածագին սկսեց իջնել ներքև՝ թուրքերի գոռները, որտեղ պաշտպանվելու և դիտելու ավելի շատ հնարավորություններ կային: Այստեղ իր տեսադաշտում էր նաև Իսմայիլ աղայի առօրյա սովորական երթևեկության ճամփան: Գրպանից հանելով շղթայակապ «Սարկիսով» ժամացույցը՝ սկսեց մատների արանքում խաղալ և շարժվեց դեպի ներքև: Չնայած իր նախազգուշական միջոցներին, նա չէր նկատել դեպի իր կողմը եկող երկու կանանց, որոնց խոսակցությունը լսելով՝ ակամա հետ դառավ և իսկույն հրացանը թևից իջեցրեց: Հանդիպող երկու ճամփորդների հայացքները իրար քննեցին: Նրանք չհավատացին իրենց աչքերին: Երրորդը ծիծաղեց ընկերուհու շշկլվածության վրա և հրելով ասաց.

-Տե՛ս, սա էլ է փախստական, լքել է ռազմաճակատը: Հարկավոր է բռնել տալ:

Հանդիպումը կարճ տևեց: Զինվորը խույս տվեց և գնաց դեպի Իսմայիլ աղայի երթևեկության ճանապարհի ուղղությամբ: Երկու կանայք միասին գնալով բամբասում էին զինվորին, որ փախել էր բանակից: Երկրորդ թրքուհին, ընկերուհուն հինգ ղուրուշ տալով, խնդրեց, որ իր համար էլ շուկայից գնումներ կատարի և հայտնեց, որ ինքը կհետևի ասքյարին և բռնել կտա: Հենց որ թրքուհին տեսադաշտից անհետացավ, զինվորն ու հետապնդող Զանոն ծլկեցին գոռներում: Մոտ կես ժամ նրանք սպասեցին Իսմայիլ աղայի գալուն: Այդ ժամանակամիջոցին Զանոն պատմեց տեղի ունեցած դեպքերի մասին: Զանոն լրիվ տեղեկացել էր Իսմայիլ աղայի տանը կատարվածին, կնոջ ու կայմակամի արարքներին, նույնիսկ փաշայի հրավիրած խորհրդակցությանն ու միջոցառումներին, անգամ հետևել ու իմացել էր, թե որտեղ էր բնակվում կայմակամը: Նա այս բոլորի մասին պատմեց Սառային: Նրանք իրենց թաքստոցից նկատեցին Իսմայիլ աղային, որը մենակ էր գալիս: Ընդհատելով իրենց զրույցը՝ նրանք շանթահարվածի պես իրար նայեցին: Սառան, զգաստանալով՝ կտրուկ ասաց.«Պետք է խոսել Իսմայիլ աղայի հետ»: Նորից լռություն: Նրանք իրար նայեցին: Մեկը մյուսին զննեցին: Մեկը՝ զինվորի հագուստով էր, որը հետագա կասկածի տեղիք կտար, մյուսը՝ մուհաճիրի տարազով, բայց հանդիպումը որոշված էր: Լռությունը խախտեց Զա-

նոն.*«Դու զինվորական ես: Ավելի լավ է ես գնամ»:* Սառան չպատասխանեց ու չառարկեց: Զանոն, թեքվելով դեպի վերևի ճանապարհը և արագ քայլերով, գրեթե վազելով, կտրեց աղայի ճամփան ու կանգնեց: Իսմայիլ աղան, խորասուզված իր մտքերով, չնկատեց, թե որտեղից դուրս ցցվեց այդ կինը, որն իր դիմաց կանգնելով, ուղիղ աչքերին նայելով, ասաց.

-Իսմայիլ աղա՛, ինձ ուղարկել է Սառա խանումը, նա քեզ է սիրահարվել և իմանալով Ձեր տան վրա եկած փորձանքը՝ ուզում է քեզ տեսնել: Ասա քեզ ինչպե՞ս է հարմար օգնել:

Իսմայիլ աղան, լսելով Սառայի անունը, շփոթվեց և սկսեց նայել կնոջը.

-Դու ո՞վ ես, և որտեղից գիտես իմ և Սառա խանումի մասին:

-Հանգի՛ստ եղիր, աղա՛, ես նրա աղախինն եմ, նա ապրում է հարուստ գաղթական ազատ թրքուհու անվան տակ և միշտ հետաքրքրվում է քեզնով:

Խոսակցությունը ընդհատվեց: Վերևի կողմից՝ մոտ երկու հարյուր քայլ հեռավորությամբ, իջնում էին երեք հոգի՝ մի փոլիս և երկու ժանդարմ: Պարզ բան էր, որ նրանք նկատել էին Իսմայիլ աղային և ճամփի միացման կետում սալամ տալով՝ խոսելու էին՝ իրենց հարգանքը մատուցելով: Զանոն, նկատելով այդ, ասաց.*«Իսմայի՛լ աղա, Սառան խնդրեց, որ երկու-երեք օրով բացակայեք քաղաքից»*,-և ուղղվեց դեպի աղայի եկած ճանապարհով՝ կասկածի չենթարկելով ո՛չ Իսմայիլ աղային, ո՛չ էլ ինքն իրեն:

Պարզվեց, որ մեր թաղում, մի քանի թուրք գաղթականներ էին հաստատվել, իսկ բացի մեր թաղի *կուլուխի* /ոստիկանության բաժին/ մի քանի ժանդարմներից, մեր թաղում ոչ մի ժանդարմ ու ասքյար չէր մնացել: Զանոն և Սառան մեզ մոտ եկան երեկոյան ուշ մթին: Տեսնելով իրար, գրկախառնվեցինք, մի կույտ կծիկ դառանք: Գիշեր-ցերեկ Զանոն իր պրպտումներով, իր կյանքի ու մահվամ գնով, զարտուղի միջոցներով տեղեկացել էր ոչ միայն Իսմայիլ աղայի տան իրավիճակին, երկու ախոյան տոհմերի՝ աշիրաթների նենգություններին, այլև իշխանության ձեռք առած միջոցառումներին: Նա վերջում կտրուկ ասաց.

-Քանի որ իմամի աշիրաթը գլխավորում է Շեֆքեթը, իսկ նրանք սպասում են մոտ օրերին Մուստաֆա բեկի գալուն և հարմար առիթի դեպքում կվերացնեն Իսմայիլ աղային, եղբորը՝ Ահմեդ բեկին և սրանց համախոհներին: Հետևաբար,-Սառայի աչքերին նայելով՝ գոչեց,-անհապաղ, շուտով պետք է կայմակամին վերացնել:

Տիրեց խոր լռություն:

Կայմակամը ապրում էր Թաղիգլխի ներքևի ճանապարհի վրա՝ Աղասիրոնենց Մուշեղի տանը, որի պարտեզն ու այգին հասնում էր մինչև գետաբերանը: Նրանց և մեր տան լուսամուտները իրար դիմաց էին, մեզ բաժանում էր գետը և երկու կողմերի այգիները՝ մոտ երկու հարյուր մետր երկարությամբ[167]: Մուշեղի տղան՝ Հարությունն ու ես դասընկերներ էինք: Նա դպրոցում աչքի էր ընկել իր լավ ձայնով ու երգեցողությամբ: Ամեն առավոտ դուրս գալով իրենց պարտեզից՝ ինձ էր կանչում իր զիլ ձայնով: Մենք իրար հանդիպում էինք Մոլլայի կամուրջն անցնելիս՝ Թաղիգլխի ճանապարհին և միասին դպրոց գնում:

Կտրիճ, առույգ տղա էր Հարթինը: Նրանց տանը ավելի մոտ էր Խանոյ Մինասենց տունը, որը մի կողմից կամուրջի մոտն էր: Այս երկհարկանի, վեց-յոթ սենյակից բաղկացած տունը՝ գետի եզերքով փռված լայնատարած այգիներով, պտղատու ծառերով, գեղեցիկ բակով ու ավազանով, ամենագեղեցիկ շենքն էր: Կոտորածի երրորդ թե չորրորդ օրը այստեղ փոխադրվեց գերմանական կոնսուլը՝ իր ընտանիքով: Շենքը պաշտպանում էր զինվորական պահակախումբը, որի պատասխանատվությունը ընկած էր պալատեայի ռեյս՝ կայմակամ Շեֆքեթի վրա: Իսմայիլ աղան, լսելով վիրավոր զինվորների հայտարարությունը՝ աղաներին մեկուսացնելու և երկու հազար ոսկու մասին պատմությունը՝ փաշային Շեֆքեթի դեմ բողոք էր ներկայացրել: Կային նաև այլ խոր պատճառներ՝ միմյանց ատելու և փոխադարձ վատ վերաբերմունքի համար:

Ինչպես հիշեցինք, Զանոն զգուշացրեց, որ Իսմայիլ աղան երկու-երեք օրով բացակայի քաղաքից: Իսմայիլ աղայի ինքնասիրությունը վիրավորում էր այն, որ մի հայ կին համարձակվել էր նման առաջարկություն անել: Նա երբեք չէր հաշտվի այդ մտքի հետ, եթե ես հաջորդ առավոտյան իրենց տան մուտքի առաջ չհանդիպեի նրան.*«Աղա՛, Սառան խնդրեց, որ դուք պաշտոնական գործերով երեք օրով հեռանաք քաղաքից»*: Նա մի պահ կարկամեց.

-Օղու՛լ, սա ի՞նչ օյին է, քաչալը դեղ գիտի, թող իր գլխին անի: Մի գյավուր կին, էն էլ էսպիսի ժամանակ, ինձ խորհուրդ է տալիս, ավելի շուտ պահանջում է հեռանալ քաղաքից,-և սկսեց կարճ մորուքի հետ խաղալ:

Ներս կանչեց և քաղաքավարությամբ հարցրեց իմ մասին: Ես նույնպես իրեն ասացի.*«Միշտ եմ ֆեր տալը և տեսել եմ, ինչ որ կատարվել է»*: Նա ինքն իրեն մտմտաց և ատամների արանքով ասաց.*«Հայերը հիմար են, բայց ուրիշին բարի խորհուրդ են տալիս*,-հետո ասաց,-եթե հաջողվի, ես այսօր երեկոյան կմեկնեմ Սղերդ»,-իսկ ինձ ապսպրեց չերևալ խանումի աչքին:

Մեր պայմանավորվածության համաձայն՝ երեկոյան մթնշաղին գաղթականների խայտաբղետ հագուստներով ինձ մոտ եկան Սառան, Զանոն և Մարթան: Զանոն, որ նախօրոք ստուգել էր կայմակամի ելումուտը, համոզված կրկնեց, որ նա ամեն առավոտ սրբիչը թևին իջնում է այգի, շրջում, աղբյուրի ջրով լվացվում ու գնում: Աղբյուրը ցածր էր բնակարանից և մոտ հարյուր հիսուն մետր հեռու էր գտնվում: Տների պարիսպները, բարձր ու ցածր լինելով, աստիճանաբար էին անջատված մեկը մյուսից և վերևից մոտ երկու մետր հեռավորությունից աղբյուրը տեսանելի չէր: Գիշերը Զանոն ու Սառան, գետն անցնելով, թաքնվեցին ծառերի ու պատերի տակ: Մարթան ու ես կամրջով անցանք, ճանապարհով բարձրացանք Աղասիրունենց հարևան տունը, որի լուսամուտներից երևում էր կայմակամի տան ելումուտը: Առավոտյան՝ լուսադեմին, մի կիսահագնված ժանդարմ, որը որպես ծառա և պահակ էր աշխատում, երկու հավ ձեռքին՝ դուրս եկավ այգու կողմ և մորթելով՝ վեր բարձրացավ: Տաս րոպեից սրբիչը վզին դուրս եկավ Շեֆքեթը և սկսեց շարժվել դեպի աղբյուրը: Որպես պայմանական նշան՝ ես մի քար գցեցի աղբյուրի կողմ: Զանոն ու Սառան կողմնորոշվեցին: Մարթան ու ես անհամբեր ու ան-

դադար՝ մերթ նայում էինք այգուն, մերթ հետևում տանեցիների շարժումներին, ճանապարհին ու փողոցին: Զանոն երկու անգամ մեխանիկորեն հանեց ատրճանակը և ինքն իրեն զսպելով՝ ծածկեց գոգնոցի տակ: Ոնց որ մեխի վրա կանգնած լինեինք, տրոփում էին մեր սրտերը: Մի ակնթարթի սխալ՝ և կվրիպեր մեր ծրագիրը: Վայրկյանները օրերի չափ երկար էին տևում: Կայմակամը սուլելով իջավ երկրորդ այգին և թեքվեց դեպի աղբյուրը: Նա չնկատեց Սառային, որն երեք քայլ հեռու՝ ծառի ետևում էր, իսկ Զանոն նրա եկած ճամփի պատի անկյունում էր հենված: Սրբիչը աղբյուրի վրայի քարին քցելով՝ կայմակամը սկսեց լվացվել, երկու ձեռքով չոփ անելով: Ջուրը երեսին խփելու ժամանակ՝ անսպասելիորեն Սառայի խանչալը մխվեց նրա կողքին: Վրա հասավ Զանոն. գլխի մազերից բռնելով՝ դանակը խրեց կոկորդը: Կայմակամը սկսեց տեղում գալարվել: Գործողությունը կատարվեց րոպեաբար: Զանոն ու Սառան նայեցին մեր կողմը: Մարթան մեր կողմից ձեռքով նշան արեց և նրանք այգու զիգզագներով բարձրացան դեպի շենքի բակը և երկու րոպեից, մենք չորսով, գյուղացի ճամփորդներին խառնվելով՝ եկանք ու շրջվեցինք դեպի մեր թաղը, անցանք կամուրջը, հասնելով Խանոյ Մինասենց այգիները, անցանք դրանք ու պատսպարվեցինք դատարկ տներից մեկում: Մեր ապաստարանից երևում էր դիմացի շրջապատը, բայց ծառերը խանգարում էին: Մեր բոլորիս ուշադրությունը կենտրոնացած էր կայմակամի վրա, որը թավալվելով ընկավ ներքևի այգում: Քառասուն-հիսուն րոպեից ծառան, դույլը ձեռքին ջրի գնալիս, տեսավ և սկսեց հարահրոցով գոռգոռալ:

Երեկոյան ես գնացի աղայի տուն, իսկ բախտակիցներս գնացին իրենց կացարանը: Առավոտյան տեսա աղախնին: Նա սիրալիր ինձ գգվեց և հայտնեց, որ Շահբաղդինը մի քանի օր է հիվանդ է, և իմանալով իմ «սպանվելու» մասին, լաց է եղել: Նա ուզեց կանչել, բայց ես չթողեցի, քանի որ նա միամտորեն կհայտներ մորը: Աղան տանը չէր, և խանումը իրեն ուղարկելու էր դայմակամի տուն: Այդ պատճառով աղախինը ինձ դառնալով զգուշացրեց, որ դրսում չերևամ:

Երկրորդ օրն էր, որ աղան չկար: Վերադարձել էր Մուստաֆա բեկը: Օգտվելով փեսայի բացակայությունից՝ երկու անգամ եկավ քրոջ՝ Ֆաթմա խանումի մոտ: Երկուսն էլ մի եզրակացության հանգեցին, որ իրենց հարազատների՝ հոր, եղբոր, փեսայի և մյուսների արյունը պետք էր մաքրել Իսմայիլ աղայի արյունով: Քույրը, կսկիծով հիշելով Շեֆքեթին, համաձայնվեց եղբոր առաջարկին: Իսմայիլ աղան Սղերդից գնացել էր Տիարբեքիր: Մի շաբաթից՝ Բաղդատից եկող արաբական հեծելազորի և պաշարներով բեռնված կարավանների ու մի խումբ զաբիթների հետ ներկայացավ հյուքյումեթ փաշային: Մանդոհ փաշան, լսելով զաբիթների զեկույցները, գոչեց.*«Աֆերի՛մ, Իսմայիլ աղա»*,-և ձեռքը ուսին դնելով, մաշալլահ կրկնելով, գովասանքով մատնացույց արեց ներկաներին ու նստեցրեց իր կողքին: Իսմայիլ աղան գոհունակությամբ գնաց տուն: Ֆաթմա խանումը, հիվանդ ձևանալով, ամուսնուն ընդունեց սառը: Աղախինը պատրաստեց ընթրիքի սեղան: Խանումը հրաժարվեց: Շահբաղդինը միամտորեն ասաց.*«Քեռու հետ ժամերով խոսում, ու-*

պում էիր, իսկ պապայիս հետ՝ հիվանդ եմ»: Իսմայիլ աղայի աչքերը կայծկլտեցին.«*Ի՞նչ քեռի, ու՞մ հետ, էլի՞ քո կայկամին էս պուն բերել»*,-ձեռքը խանչալին տանելով՝ ուզեց ցատկել, խողխողել կնոջը, բայց տղան ու աղախինը վրա ընկան՝ հայտնելով, որ Մուստաֆա քեռին էր եկել: Տիրեց խոր լռություն:

Ինչպես վերը նշեցինք, ռուսների նահանջի պատճառով գաղթականները այլևս Սղերդ և Տիարպեքիր չէին ուղարկվում: Նրանց հատկացնում էին հայերի տները: Այսպիսով, քաղաքի ազգաբնակչության թիվը բազմանում էր, իսկ տնտեսական դժվարություններն և անախորժությունները օրըստօրե կրկնապատկվում, աճում էր թալանը, գողությունը, հափշտակումը: Երեք օր է, որ մենք՝ երեքս, անբան նստած, լուսամուտից դիտում էինք դիմացի թաղը: Սառան ձեռքիցս ձգելով՝ նստեցրեց կողքին և հայտնեց, որ այս գիշեր պետք է գնանք արաբ դասալիք ասքյարների մոտ: Զանո մորաքույրը առարկեց, բայց Սառան կտրուկ ասաց.«Պե՛տք է գնանք, քանի որ նրանք կարող են մի խորհուրդ տալ: Ի՞նչ է, երկա՞ր պետք է նստենք»: Գիշերը երկուսով գետն անցնելիս նկատեցինք, որ Թորոսիկի ջրաղացը աշխատում էր, և մի քանի էշեր դռան մոտ էին կապված: Բարձրանալով աստիճանաձև այգիներով՝ Սառային մատնացույց արի նրանց կացարանը և ներքնահարկին մոտենալով՝ փոքր լուսամուտից ներս մտա ու ներկայացա արաբներին, Սառան սպասեց բակում: Նրանք, ուրախությամբ ընդունելով ինձ՝ ուզեցին հարցուփորձ անել: Ես հայտնեցի, որ մորաքույրս գտնվում է ներքևի դռան մոտ: Երկու հոգի բակ իջնելով՝ Սառայի հետ եկան մեզ մոտ: Սառան նրանց հետ ծանոթանալով՝ լրջորեն խոսեց բժշկի հետ և խորհուրդ տվեց դիմել և խնդրել, որ իրեն որպես դոկտոր ծառայելու վերցնեն՝ վիրավորների *խասթախանայում* /հիվանդանոց/: Երկար-բարակ կշռադատելուց հետո համոզվեցին գիշերով միանալ գաղթողների խմբերին, որոնք Թաղիգլուխ թաղով գալիս, հավաքվում էին հրապարակում, դասավորվում: Հաջորդ գիշերը Սառան, գեղջկուհու հագուստով մի կապոց ձեռքին, արաբ բժիշկը զինվորականի հագուստով և թևադիր դոկտորի կոչումով, դուրս եկան տանից, այգիներով անցան քաղաքի սահմաններից դուրս, բարձրացան ճանապարհի վրա և պառկած՝ սպասեցին մուհաճիրների խմբերին: Նույն օրը, խառնվելով մի քանի հարյուր գաղթականների հետ, որոնք՝ սայլերով, էշերով, ջորիներով, շատերը՝ ոտքով, բեռներով, խառնիխուռն, աղմուկ-աղաղակով գալիս էին ճանապարհով, Սառան և արաբ բժիշկը հասան կոքմեյդան՝ հրապարակ: Այստեղ տնօրինող հանձնախումբը, «օգնություն» ցույց տալով, մեծ մասին հարահրոցով հեռացրեց հրապարակից՝ մասամբ, ցանկացողներին տեղավորելով հայոց տներում: Արաբ բժիշկը և Սառան մի քանի ղուրուշ արծաթ վերակացու հանձնախմբի ջոջերի գրպանները սահեցրեցին: Բժշկին, որը ոտքից վիրավոր էր ձևանում, ձեռքի մահակի օգնությամբ հազիվ հասցրեցին մեյդանի ներքևում գտնվող խասթախանեն: Այս հիվանդանոցը երեք ամիս առաջ կառուցել էին հայ կալանավոր արհեստավորները, որոնց ձեռքերը վերջում թոկերով կապած էին տանում աշխատանքի:

Հիվանդանոցում մոտ երկու-երեք օր վերքը բուժելու ժամանակ, արաբ

բժիշկը իր վերաբերմունքով գրավեց և արժանացավ հիվանդ ու վիրավոր զինվորականների և խասթախանեի սպասարկող անձնակազմի, հատկապես դոկտորի ուշադրությանն ու հարգանքին: Վիրավորների թվի կրկնապատկվելու հետևանքով երկրորդ հիվանդանոցը կազմակերպելու կարգադրություն եղավ, որի անձնակազմում նշանակեցին արաբ դոկտորին: Նրա առաջարկությամբ խասթախանեն պետք է մեկուսացված լիներ ազգաբնակչությունից: Ծապրկորի թաղում Եզդանյան Ավագի երկհարկանի տանը, որը ժամանակին վերածվել էր կուլուխի, իսկ դրա անհրաժեշտությունը այժմ այլևս չկար, բացվեց խասթախանեն: Զանո մորաքույրն ու ես գիշերներն էինք հաղորդակցվում արաբ զինվորների հետ: Սառան, որպես թրքուհի գաղթական՝ մուհաճիր, հաճախ այցելում էր արաբ բժշկին ու գործերը միասին կազմակերպում՝ հնարավորին չափ իրազեկ դարձնելով մեզ և համբերությամբ սպասելով գալիքին… Խասթախանեի բացման շնորհիվ իշխանության կողմից արգելվեց թալանչի խուժանի մուտքը թաղամաս, նույնիսկ կուլուխի հսկողության կետը վերացվեց: Խասթախանեն լցվում էր ձիերով, ջորիներով բերված վիրավորներով, հատկապես հրամանատարակազմով՝ *զաբիթներով*: Հիվանդանոցի անձնակազմում, որպես բուժքույր, ակտիվ աշխատում էր Սառան՝ Քյազմ բաջին, որն իր վերաբերմունքով գրավում էր վիրավորների հարգանքն և ուշադրությունը: Այս ծանր ու երկարող օրերը ինձ ու Զանոյին հոգնեցնում և համբերությունից հանում էին: Սառայի և արաբ բժշկի արդի վիճակը մեզ ապահովություն և հանգստություն չէր խոստանում: Մանավանդ կրակոտ, եռանդուն, վրիժառու բնավորությամբ Սառան խաղաղության, հանգստության և համբերության սովոր չէր: Նա սիրում էր հրդեհել և հրդեհի կենտրոնում լինել:

Մոտենում էր աշունը, շատանում էր գաղթականների չուն, վերջացել էին հայերի հետապնդումներն ու կասկածները: Մեր թաղում ավելացել էին մի քանի գաղթական ընտանիքներ: Հետզհետե քաղաքից չվում էին հարուստ ընտանիքները: Քառապատկվել էր սննդամթերքի գինը՝ բացի մսից, քանի որ ոչխարների հոտերը առանց կերի կոտորվում էին: Իսմայիլ աղան, երեք-չորս մարդ վարձելով, օրական երեսուն-քառասուն ոչխար մորթելով, կավուրմա էր շինում և ներքնահարկերում պահում:

Երկու շաբաթից որոշեցինք աղայի հետ տեսնվել: Սառան ինձ զգուշացրեց.*«Աղային կասես, որ մենք անհետացել, երևի բռնվել ենք, որպեսզի աղան մեր գոյության մասին չհարցնի»:* Աղայի տանը ծպտվեցի և թոնրատանը սպասեցի աղախնին: Երեկոյան նա եկավ Շահբաղդինի հետ, լամպը նավթ լցրեց, ընթրիքի համար հաց, ուտելիք վերցրեց, ու գնացին: Ինձ ավելի ազատ զգալով՝ սկսեցի ման գալ: Լուսամուտից նայեցի փողոցին և շրջապատիս: Լսեցի ծուռ Մժոյի կցկտուր երգը: Ուզեցի վազել, գնալ իմ վաղեմի բարեկամի մոտ: Նա ազատ ու անհոգ, բնազդորեն երգում էր հայերեն. կանգնեց լուսամուտի տակ, վերցրեց քարը, շպրտեց աղայի պատուհանին և հայհոյելով անցավ: Որքա՜ն դուրեկան էր նա իր շարժումներով, ինչքա՜ն հարազատ իր խելար ու միամիտ հայհոյանքներով: Լսվեց դռան ճռռոցը: Հազիվ լուսամուտից խույս տվեցի: Երևաց աղան՝ իր հսկա բոյով, առնական, ազդեցիկ տեսքով:

Մի պտույտ գործեց սենյակում, ստուգեց կողքի սենյակի դուռը, մոտեցավ մյուս՝ երրորդ դռանը, զգաց, որ բաց է: Մոտեցավ մոմակալին, վառեց, ձեռքին բռնելով, կասկածելով, մտավ ներսի սենյակը և կամացուկ ձայնով կանչեց.«Նուրի՛, դուրս արի՛, մի վախի՛ր»: Նա այնպես սիրալիր խոսեց, որ ես լցվեցի որդիական զգացմունքով: Չնայած զգուշությանս, անակնկալի էի եկել: Նա ինձ համար ավելի շատ բարի երևաց, քան կար: Հիշեցի նրա և հորս մտերմիկ զրույցները՝ երկկողմանի ու անկեղծ, հյուրասիրությունները: Աչքիս առաջ կենտրոնացավ այն պահը, երբ նա դառն հևոցով, գրեթե լացով ինձ ցույց տվեց հորեղբորս մարմինի մնացորդները, որը հոշոտել էին քաղցած շներն ու գուցե գայլերը: «Նուրի՛, դուրս արի՛, օղլո՛ւմ»: Նրա ձայնը ինձ համար շատ հարազատ հնչեց: Ինձ թվաց, թե նրա բերանով հայրս էր խոսում, և չգիտեմ ինչ ոստյունով՝ թռա ու պարուրվեցի նրա վզովը: Մի վայրկյան նա շփոթվեց, երկյուղից ակամա ձեռքը գոտկատեղին մոտեցրեց, բայց խանչալի փոխարեն մեջքս բռնեց ու սառռեց: «Աղա՛ ես եմ»,-խոսքս նրան վերադգևորեց և ինձ մանկան նման գրկելով՝ նստեց բարձերի վրա: «Նուրի՛ օղլում, որտեղի՞ց դուրսն եկար, ինչու՞ ձայն չհանեցիր, ինձ վախեցրի՛ր»:

Եվ իրոք, նրա սիրտը արագ-արագ խփում էր: Ջուր ուզեց, մյուս սենյակից ջրի կուժը բերեցի, և նա կլկլալեն խմեց ու ինձ նայելով հետզհետե հանգստացավ: Նրա առաջին հարցը եղավ Սառայի ու մյուս կանանց մասին: *«Չգիտեմ, չեմ տեսել, չեմ հանդիպել»*: Նա չհավատած այս խոսքերով կրկնած նախադասություններին, բայց ինձ էլ չստիպեց.«Լա՛վ, հետո կխոսենք»,-և ձեռքիցս բռնելով՝ տարավ իրենց սենյակը: Աղախինը գնացել էր, իսկ կինն ու տղաները պառկած էին անկողնում:

Խանումը, ինձ տեսնելով, փշաքաղվեց, չէ՞ որ նրան հավաստիացրել էին.«*Խփեցինք, գետը քցեցինք*»,-և հանկարծ աղայի ձեռքը բռնած՝ ներս եմ մտնում: Տղաներն, ինձ տեսնելով, շապկանց[168] վազեցին և փաթաթվեցին: Ա՜խ, ինչպիսի՜ կարոտի զգացում կծկեց իմ սիրտը: Նրանք միամտորեն իմ հայկական անունը կանչեցին: Աչքերս անշարժ՝ ես տեսա փոքր եղբորս և լսեցի.«Միհրա՛ն, արի՛»: Իսմայիլ աղան, ինձ նստեցնելով տղաների կողքին, նորից հիշեցրեց.

-*Նուրին իմ տղան է, չեր եղբայրը,*-և խանումին դիմելով՝ ասաց,-եթե դու էլ համաձայն ես, վեր կաց, ուտելիք բեր միասին ընթրենք:

Ֆաթմա խանումը ծանրությամբ բարձրացավ, կանչեց Շահբաղդինին և միասին մտան թոնրատուն, հաց ու ճաշեղեն բերեցին: Հինգով ծալոտիկ նստեցինք կլոր սեղանի շուրջը, կերանք և օշարակն էլ խմեցինք: Ես հավաքեցի սեղանը ու գնացի կողքի սենյակը քնելու:

Ինչպես նշեցինք, քաղաքում անդորր էր տիրում: Ռազմաճակատից *աժանները*՝ թերթիկները, հաղորդում էին թուրքական բանակի հաջողությունների մասին: Սղերդից, Տիարբեքիրից վերադարձած գաղթականներին բնակեցնում էին Ավելմեյդան թաղամասում՝ հայերի անտեր տներում: Զանոն և ես որոշեցինք փոփոխություն մտցնել մեր կենցաղում: Զանոն մորաքրոջը մինչև Թորոսիկի ջրաղացը հետևեցի: Ջրաղացում գաղթական ջրաղացպա-

նը[169] աշխատում էր: Չորս թրքուհիներ՝ իրենց չորս-հինգ լակոտներով, մի-մի պարկ բնաղուն ջրաղացպանին հանձնելով, գիշերը կծկված, իրար հենված նիրհում էին: Երեխաները հատակին փռված նվնվում էին: Ես դռան ետևում կուչ եկա, Զանոն, նկատելով կանանց և երեխաներին, մոտեցավ լացող երեխային, գրկեց և սկսեց գուրգուրել: Ջրաղացի մի անկյունում վառվում էր ձեթի ճրագը, ջրաղացպանը հանգիստ քնած էր, միայն լսվում էր պտտվող քարի չչխկի ձայնը: Համոզվելով, որ ապահովված է, Զանոն՝ երեխան գրկին, մոտեցավ ինձ և մի ձեռքով ինձ իրեն սեղմելով, դառն հեծկլտոցով ասաց.*«Անպայման աղային հանդիպի՛ր»*: Մենք նախօրոք որոշել էինք մեր անելիքը: Զանոն՝ գաղթականներին խառնված, պետք է ջանար բնակվել մեր թաղամասում ու հնարավորության դեպքում կապվեր Սառայի և իմ հետ:

Տխուր-տրտում գետն անցնելով՝ տուն հասա: Լուսամուտից նայում էի ջրաղացի՝ դեպի Թաղիգլուխ տանող ճանապարհին: Ոչ մի անցուդարձ չէր նկատվում: Առավոտյան նշմարվեց չորս էշերի և նրանց ուղեկցող չորս կանանց դանդաղ բարձրանալը դարն ի վեր: Անկախ ինձանից՝ հենվեցի լուսամուտի ճաղերին, որպեսզի տեսադաշտում պահեմ մորաքույր Զանոյին, բայց նույն պահին վայրենացած կատուների մռմռոցից սթափվեցի և հեռացա լուսամուտից: Նրանք անհետացան իմ աչքերից: Ես, ճմլված սրտով, տխուր, նոր զգալով որբությունս, թավալվեցի անկողնու վրա: Երեկոյան՝ մութն ընկնելուն պես, գնացի աղայի տան կողմն ու ըստ իս, ստուգելով չորս կողմս, պատսպարվեցի շան բնում: Աղայի ձին, բակում կապած, խոտ էր ուտում ու փնչացնում: Չնայած գրպանս երկու ափ ոսկի էի լցրել, բայց բնում պահած քամարն ու ապարանջանները հանեցի: Գլուխս դուրս արած՝ սպասեցի աղայի երևալուն: Վերջապես աղան, շապիկ-վարտիքով եկավ՝ փարխաչը ձեռքին, ձիուն ջրեց, մաժմժեց և դարձավ դեպի տուն: Ես բնից դուրս եկա և դիմեցի նրան.«Աղա՛, եկե՛լ եմ քեզ մոտ…»,- լռեցի: «*Լաիլա՞հ-յուլալլա՞հ*»,- մրմնջալով, երկինք նայելով՝ ինձ սիրալիր ասաց,-«Նուրի՛, օղլո՛մ, դու՞ ես»: Ես մոտեցա իրեն, քամարն ու ապարանջանները փարխաչի մեջ դնելով, գլուխս կախ՝ սպասեցի իր խոսքին:

-Նուրի՛, օղլո՛մ, գնա՛ թոնրատուն, խանումը քիչ հիվանդ է, շատ մի՛ երևա, բժիշկ-մժիշկներ գալիս գնում են,-և ձեռքս բռնելով ուղեկցեց, ներս գնացինք. նա՝ իր սենյակը, ես՝ թոնրատուն:

-Աշխատանքի մեկնելիս՝ թոնրատուն մտավ և նորից զգուշացրեց ինձ.«Բացի աղախնից, ոչ ոքի աչքին չերևա՛ս»: Առավոտյան աղախինը գալով՝ սկսեց տան հոգսերով զբաղվել, հոգալ հիվանդ խանումի նազուտուզը: Թոնրատուն մտնելիս՝ ես անկյունից ձայն տվի: Նա, ավելը ձեռքին մոտենալով, զգուշացրեց իսկույն ծլկել և հարցրեց, թե աղան գիտի՞ իմ գալու մասին: Դրական պատասխան ստանալով՝ մեխանիկորեն տեղեկացրեց, որ ինքը միաժամանակ աշխատում է իրեն հատկացված տանը կից՝ Եզդանենց տան նոր գործող զաբիթների խասթախանեում: Ինձ համար շատ հաճելի նորություն, որը մեծ ուրախություն պատճառեց ինձ: Աղախնի մեկնելուց հետո ես թոնրատան գաբանքից իսկույն իջա ներքև՝ մառանը: Ինքս ինձ հարցուփոր-

ձի ենթարկելով՝ եկա այն համոզման, որ Սառայի աչքից, թեկուզ անակնկալորեն, չէր կարող վրիպել ոչ մի բան:

Երեկոյան աղան սովորականից շուտ եկավ և թոնրատուն մտնելով՝ հայացքով և մեղմ ձայնով ինձ կանչեց: Պատասխան չստանալով՝ միջանցքով անցավ օդան: Որպեսզի օգտվելով նրա հեռանալուց՝ ես իսկույն վեր բարձրացա և կանգնեցի միջանցքում: Իսմայիլ աղան, օդայում կանգնած, խոսեց հայերեն.

-Ղազարի՛ տղա Միհրան, արի՛, մի՛ վախենա, դու՛, իմ Նուրի՛ն ես…

Ամեն անգամ հայերեն իմ անվան արտասանությունը լսելիս սիրելի եղբայրս, իր վտիտ դեմքով, տխուր կանգնում էր երևակայությանս մեջ, և հնչում էր նրա լացող, ողբացող կանչը՝ Միհրա՜ն, Միհրա՜ն: Դաժան օրերի առկայությունը սրտումս արճիճ էր լցրել, որը կարելի էր մեղմացնել, լուծել, փարատել միայն վրեժի և մահվան միջոցով: Իսմայիլ աղայի երկու հայերեն արտաբերած բառերի ազդեցությամբ ինձ նվաստացած զգալով, խոնարհաբար մոտենալով աղային՝ գլուխս կախ, լուռ ու մունջ կանգնեցի: Ձեռքս բռնած՝ գնացինք իրենց սենյակ: Խանումը, թիկնած շքեղ բեհեզյա բարձերին, ինձ տեսնելով տարակուսանքով նայեց ամուսնուն՝ ուղղվելով իր տեղում: Աղան *քոլոզն* ու աբան ինձ մեկնեց, *կունդուրաները*՝ կոշիկները, հանեց: Ես իսկույն կարմիր *փափուչները* մոտեցրի: Նա թևիս խփեց, և ես իսկույն մատուցեցի կլկլան ջրի փարչը: Կուշտ խմելով՝ փարչը ինձ տվեց և հրամայողական տոնով ասաց.«Շուտ տղաներին կանչիր»: Իսկույն անցա կողքի սենյակը: Շահբաղդին ու Մանդոհ եղբայրները դեռ քնած չէին: Ինձ տեսնելով իրենց սենյակում՝ երկուսը միասին, անունս կրկնելով, փաթաթվեցին ինձ: Օ՜հ իմ պատանեկության դառնուդաժան օրեր: Տղաներն, ինձնից շուտ հորն ու մոր մոտ մտնելով, հրճվանքով հայտնեցին իմ գալու մասին՝ անունս տալով: Իսմայիլ աղան կանգնելով, ինձ մեջտեղում, երկու տղաներին աջ ու ձախ կանգնեցնելով և հայացքը խանումին սևեռելով՝ ծանրաբարո հայտարարեց.*«Ես ունեմ երեք տղա. Նուրի,-ձեռքով ինձ շոյելով,-Շահբաղդին և Մանդոհ: Լսո՞մ ես, Ֆաթմա՛ խանում, համաձա՞յն ես»*: Իսմայիլ աղայի հայացքը ուղղված էր խանումի աչքերին: Նա դժկամությամբ գլուխը խոնարհելով՝ համաձայնվեց, և մենք՝ երեք տղաներս, ողջագուրվեցինք:

Հաջորդ օրը թաքնվելու կարիք չունեի: Զբաղվեցի տան գործերով, ուշ երեկոյան՝ մթնշաղին, ջուր բերեցի, էշերով բերված մորթիները փռեցի, աղեցի և չորացնելով տարա ներս՝ Ոսկերչանց տանը պահեստավորելու: Մոտենում էր թուրքերի կրոնական մեծ տոնը «*Ղուրբան բայրամը*»:[170] Աղան, ծառայի միջոցով կապույտ թղթով փաթաթված հինգ գրվանկա քաշով երկու կանդ շաքար և մթերք ուղարկելով, խանումին հաղորդեց Մեծ Բայրամին իրենց տանը հյուրընկալվողների մասին: Մեզ հարևան երեք-չորս թուրք ընտանիքներ գաղթել էին, միայն Մժոյենք էին տեղում, այսպիսով՝ ես որոշակի ապահովություն էի զգում, մանավանդ մեր կուլուխը՝ խաստախանեի վերածվելու շնորհիվ:

Ըստ դավանանքի՝ մուսուլմանները, հատկապես սունիները, Ղուրբան Բայրամը դիմավորում են երեսուն ցորեկ ծոմապահությամբ[171] և ուրբաթ օրը՝

առավոտյան, մզկիթի մինարեթից մոլլայի օրհներգն ու ողջույնների ավետիքը լսելով, մատաղն անելով, սկսում են տոնական ճաշկերույթը, որը ըստ օրենքի՝ տևում է երեք օր:

Ղուրբան բայրամից օր առաջ խանումը հանձնարարեց պատրաստել բաղնիք գնալու պարագաները՝ այսինքն լանգանը՝ մեծ պղնձե բաք, և այլ իրեր: Շատ խնդրեցի, որ ինձ չտանի, բայց նա մերժեց: Լանգանի մեջ դարսելով սրբիչն ու հագուստները՝ շալակած գնացինք բաղնիք: Մեծ տղան, տեսնելով հոգնածությունս, բռնեց լանգանի բռնակից և օգնելով՝ վերջապես հասանք բաղնիք: Այդ ժամանակվա թուրքական բաղնիքների կենտրոնում ավազանն էր, որից առաջին հերթին օգտվում էին մեծատան խանումները: Բաղնիքում այնպիսի խառնիճաղանջ գոռգոռոցներ էին, որ խլացնում էին ականջներս: Ջրի համար կռվելը, իրար գզելը, ծեծկվելը և հայհոյելը սովորական երևույթ էր, այդ պատճառով էլ բաղնիք գնացողները խմբով էին գնում և *քիսաջի*՝ լվացող, վարձում: Ֆաթմա խանումը, բաղնիք մտնելով, տղային ուղարկեց *համամչիի*՝ բաղնիքպանի մոտ, որն ափալ-թափալ գալով՝ հատկացրեց ամենալավ օթյակը բոխչայի և հանվելու համար, մաքրել տվեց ավազանը: Ըստ սովորության՝ մենք նախաճաշեցինք: Սկզբում իմ օգնությամբ խանումը, ապա մենք՝ տղաներս մերկացանք: Խանումը ինձ հանձնարարեց ուշադիր հետևել իր զարդերին, որոնց ակնածանքով նայում ու նախանձում էին կանայք: Քիսաջին մոտեցավ և խանումին հրավիրեց լողարան, որին հետևեց փոքր տղան և անմիջապես մտավ ավազանը: Հազիվ էր մայրը մոտեցել ավազանին, երբ Մանդոն միամտորեն կանչեց.«*Շահբաղդի՛ն, էյ Նուրի՝ գյավու՛ր օղլի, եկե՛ք*»,-և սկսեց չփչփացնել ջրում: «Գյավուր» բառը զարմանք պատճառեց տկլոր, սնահավատ կանանց, մանավանդ քիսաջիին, որը շատ լաչառ կին էր երևում: Բարեբախտաբար օթյակը լողարանից հեռու էր և չորս-հինգ աստիճան բարձր: Տեսնելով կանանց չռած աչքերը և կատաղությունը՝ ես մի ակնթարթում հագա թումբանս ու իշլիկը /շալվարն ու վերնաշապիկը/ և բոբիկ փախա: Մերկ, տկլոր կանայք բղավոցներով հետապնդեցին ինձ մինչև դուռը, բայց արդեն ուշ էր: Ես բաղնիքի սահմաններից շատ հեռու էի և խառնվելով շուկայի խառնիճաղանջ մարդկանց՝ մի հինգ րոպեից հասա աղայիս խանութը, որտեղ ծառային տեսնելով՝ հայտնեցի, որ եկել եմ խուրջինը տանելու: Այդ երեկոյան առաջին անգամ լսեցի աղայիս զվարճալի ծիծաղն ու խանումի նկատմամբ կշտամբանքը՝ միամտությամբ ինձ բաղնիք տանելու առթիվ:

Ղուրբան բայրամի վերջին հինգշաբթի օրն էր: Առավոտյան աղան ներսից դուռը բրթեց: Ես իսկույն բաց արի, նա վրդովմունքով ասաց.«Այսուհետև դուռը մի՛ փակիր, մի՛ վախենար, խուրջինը վերցրու՛, գնում ենք բազար»: Հակառակ ցանկությանս՝ սիրալիր ձևով ընդունեցի: Գնացինք սովորական կարճ ճանապարհով՝ գոռների ներքևի կողմով: Աղայի ետևից ես անընդհատ այս ու այն կողմ էի նայում. գոնե մերոնց՝ մեկն ու մեկին տեսնեմ: Ոչ ոքի չհանդիպեցինք: Խանութ հասնելով՝ ես սպասեցի, աղան ծառայի՝ նոքյարի հետ գնումներ կատարելով, մեզ ուղարկեց տուն: Ամբողջ օրը ես աղախնի հետ նախապատրաստվեցի մեծ տոնին, վայելուչ ճաշեր պատրաստեցինք: Ուրբաթ օրը

շնորհավորանքի համար մեծապատիվ հյուրերի էինք սպասում: Երբ վերջապես աղան եկավ, չնայած մեկս մյուսիցս գաղտնի ծոմը[172] կոտրել էինք, նստեցինք հալալ հաց ու ճաշի:

Հինգշաբթի երեկոյան կլոր սեղանի մոտ ծալոտիկ նստած էինք: Աղան, մի գրքույկ ինձ մեկնելով, պահանջեց կարդալ: Գրքի վերնագիրն նայելով՝ ասացի.*«Աղա՛, Մոլլա Նասրեդդինի մասալներն է»: «Լավ-լավ, կարդա՛»*: Եվ ես ընթերցեցի, իսկ նրանք զարմանքով ու նախանձով ինձ նայեցին: Գիշերը հանգիստ քնեցի անկողնում: Առավոտյան կանուխ աղան ինձ արթնացրեց և պատվիրեց ջուր բերել:

Թուրք հավատացյալները մի շաբաթից մինչև մեկ ամիս ցերեկները ծոմ են պահում, երբ ուրբաթ օրը՝ առավոտյան, թնդանոթի որոտը ավետում է մարգարեի հայտնությունը, սկսում են տոնել, զվարճանալ, այնպես, ինչպես քրիստոնյաները Մեծ զատկին:

Առավոտյան, սովորականի նման, կուժը[173] վերցնելով՝ գնացի աղբյուր, լվացվեցի, կուժը ջրով լցրի, երկու ձեռքով բարձրացրի և դրի աղբյուրի պատվանդանի՝ բարձր սադրի[174] վրա, թեքվեցի, որ այն շալակեմ: Երկու ձեռքով կժի կանթը բռնած՝ շարժվեցի դեպի տուն: Այդ մի երեկոյի ու գիշերվա կարճատև հանգիստս ակամա թուլացրին զգուշությունս: Կուժը շալակիս ինչ-որ մի երգ մտմտալով՝ առուն անցնելիս զգացի մի հուժկու հարված: Կուժը մեջքիս ջարդվեց, ջուրը ողողեց ինձ: Երկրորդ հարվածը մեջքիս էր, ես փռվեցի գետնին: Երկրորդ հարվածից հետո, տեսա երկու ժանդարմների, որոնք ոխակալած հետևել էին ինձ: Իսկ ես, կուժը մեջքիս ձգելու պահին, նայում էի մեր տանը, բակին և մի պահ վերանալով՝ մոռացել էի իմ գոյության մասին՝ անակնկալ թակարդը ընկա: Ժանդարմները, ինձ բռնելով, իրար նայելով հպարտանում էին, քանի որ երեք-չորս ամիս անընդհատ թաղային պոլիսները հետևել էին Իսմայիլ աղայի տան և այստեղ պատսպարված հայերին, և նրանց չէր հաջողվել կենդանի ապացույց ձեռք բերել: Ես հիմա նրանց համար ամեն ինչն էի: *«Կա՛ր, գյավո՛ր, վերկա՛ր»*,-ձայնը լսելով՝ գլխարկս վերցրի ու կանգնեցի: Երկու հոգի էին՝ կուլուխի պետ սար քոմսերն ու մի փոլիս: Առանց ինձ հարցնելու՝ քոմսերն ասաց.*«Իսմայիլ աղայի համար էիր ջուրը տանում»*: Ժանդարմներից մեկը, թևիցս ձգելով, մոտեցավ մեր բակի պատի եզրին և ուզեց խփել, բայց մյուսն առարկեց: Փոլիսն, ինձ ոտքով քացի տալով, ուզեց սրի մի հարվածով գործը վերջացնել, բայց քոմսերը չթողեց:

-Սպասի՛ր, սա էն լակոտներիցը չէ, բարձրանանք կուլուխը, Բայրամի նամազից[175] հետո կքննենք: Սրանից շատ լուրջ բաներ կիմանանք Իսմայիլ աղայի և իրենց գյավուրների մասին:

Երեքով բարձրացանք Ջոջ գերեզմաններ, ապա ճանապարհի եզրին գտնվող ժանդարմների թաղային պահակատուն, որը Սարոյենց տունն էր: Հասնելով նախկին կուլուխին՝ Եզդանենց Ավագի երկհարկանի տանը՝ մեր թաղի գլխավոր ճամփի վրա տեսա կուլուխի դռան մոտ շրջող պահակ ասքյարին: Ինձ առաջ հրեցին: Երկու հերոսները իրենց շատ կարևոր գերուն բռնելով՝ բարձրացրեցին յոթ-ութ քարե աստիճաններով: Դռան մոտ կանգնած

պահակը՝ պատին հենած մեծ ինքնաեռը վառելով էր զբաղված: Մեզ տեսնելով՝ հրացանը վերցրեց և սալամ տվեց, ինձ հրելով ներս տարան: Մոտ յոթ հոգի սպասում էին քոմսերի գալուն: Մի քանի րոպեից լսվելու էր թնդանոթի ձայնը:

Այս տանը ես հինգ-վեց տարի առաջ էի եղել. քերականը /այբուբեն/ թևիցս կախ՝ գալիս էինք թաղի տղաներով, տիկին Փնփոյի՝ Փանփուխտ, մոտ դասի և մեկ-երկու ճիպոտ ընդունելով, երեք ժամից փախչում տուն: Տիկին Փամփուխտը Վիլյամ Սարոյանի հորաքույրն էր:[176]

Ժանդարմները հազիվ էին չավուշին զեկուցել իրենց քաջագործության մասին, երբ որոտաց Ղուրբան Բայրամի ավետաբեր թնդանոթի ձայնը: Չավուշը ինձ անկյուն ցույց տվեց: Ձևականորեն նամազը[177] կատարելով՝ փոլիսներից մեկը նրան հրավիրեց կից սենյակը և նայելով ինձ անկյունում կանգնած, մատնացույց անելով՝ դիմեց քոմսերին.

-Քոմսե՛ր էֆենդի, թույլ տուր ես սրան կուրբան անեմ էս օրվան:

Քոմսերը, գոռոզաբար նայելով նրան, կրկնեց իր խոսքը.*«Սրան չեք ճանաչում, թո՛ղ առայժմ մնա, կմտածենք հետո»*: Բոլորը քոմսերի հրավերով մոտեցան սեղանին: Ճաշկերույթը ճոխ էր՝ հիմնական փլավը մեծ ափսեներով, տասնյակ հավեր, գառան խորտիկներ, թուրքական ասլի քյաբաբ: Այս ճաշերի բուրմունքը ախորժակ էր գրգռում: Սեղանին կար օշարակ: Քոմսերը սկսեց մյուսների հետ միասին ճաշակել ոչխարի խորոված ու խաշլաման, փլավն ու խորտիկները: Սկսեցին ուտել և մեկը մյուսի երեսին նայելով՝ առաջարկեցին.*«Քոմսե՛ր էֆենդի, չէի՞ք կամենա մի փոքր օղի խմել: Էսօր իսկական քեֆի օր է»*,-և նրանցից մեկը մի սիրուն փարչ սեղանի տակից հանելով ու չսպասելով ճաշողների այո-ոչին՝ լցրեց բաժակները: Առաջարկեցին քոմսեր Իբրահիմ էֆենդու կենացը: Բոլորը ոտնկայս խմեցին և բեղերը ոլորեցին: Նրանցից մեկը խոստովանեց.«Լավ ճաշ պատրաստել սովորեցի, բայց է՛ս, է՛ս մի բանը,-ցույց տվեց փարչով արաղը,-չկարողացա սովորել»: Ի վերջո բաժակով օղին կոնծելով՝ սկսեցին զառանցանքով երգել: Խորտիկները ճաշակելով ու օղին կոնծելով՝ տրամադրությունները բարձրացրին: Մի քանիսը, միսը լափելով ու ծաղրելով ինձ, սկսեցին ոսկորներով ինձ խփել՝ որպես թիրախի: Բնազդորեն ես սկսեցի օգտվել և ուտել ինձ որպես շան փայ քցած համեղ կտորտանքը: Մի ժամից ավելի ես, անկյունում կանգնած, սպասեցի իմ դատաստանին, իսկ նրանք սկսեցին երգել, պարել, զվարճանալ: Ճաշկերույթի սենյակը պահակակետից բաժանվում էր նախասրահով: Ես, օգտվելով նրանց առատաձեռնությունից, շարունակեցի ոսկորները կրծել, և հանկարծ մի միտք հղացավ: Աղերսագին դիմեցի չավուշին.*«Էֆենդի՛, փորս ցավում է, էֆենդի՛ր»*,-կրկնելով՝ խնդրեցի, որ զուգարան գնամ և կռանալով, փորս բռնած, երկու ձեռքս պորտիս սեղմելով՝ լացակումած աղերսեցի ու զգացնել տվի իմ պահանջը: Փոլիսներից մեկը մատնացույց արեց նախասրահը: Չավուշը, որը լավ խմած էր, նույնպես մատնացույց արեց նախասրահը, որտեղ գտնվում էր արտաքնոցը: Ես իսկույն կռացած վազ տվեցի, խուժեցի ներս և ներսից դուռը փակեցի: Զուգարան մտնելով՝ նայեցի լուսամուտին, որն իմ հասակից ավելի

բարձր էր, նեղ, և երկաթյա ամուր ճաղեր ուներ: Արտաքնոցի լուսամուտից հնարավոր չէր սողալ դուրս: Կոյուղու անցքը նեղ էր, վրայի ծակ սալը բարձրացնել չկարողացա: Դուռը կիսատ բացի, նայեցի դեպի դրսի դուռը: Պահակ զինվորը ինքնաեռի մեջ փայտի կտորներ էր քցում: Ուշադրությունս կենտրոնացրի զինվորի վրա և հետևեցի նրա շարժումներին: Դուռը կիսախուփ անելով՝ նկատեցի, որ պահակը, հրացանը պատին հենեց և վիզը կախելով՝ ինքնաեռի ներքևից սկսեց փու՜հ, փու՜հ անել, ապա չոքեց ու ներքևից ինքնաեռն էր փչում: «Սպանի՛ր, որ չսպանվես»,-սիրելի մորաքույր Սառայի պատվիրանը ինձ օգնեց: Մի ակնթարթում վազեցի դեպի դուռը: Վայրկյանաբար մոտենալով կռացած պահակին՝ ինքնաեռը հրեցի զինվորի վրա, որը ինքնաեռի հետ գլորվեց աստիճաններով ներքև: Ինքս է՛լ ավելի արագ թռչկոտելով նրա վրայով, փախա՝ ցատկելով առուն, որը մոտ երկու արշին հազիվ հեռու լիներ դռնից: Իմ ետևից դեռ գլորվում էին զինվորը և ինքնաեռը: Ուշադրություն չդարձնելով զինվորի բոռբոռոցին՝ ես ուժերիս լարումով վազեցի և երկու հարյուր քայլաչափ հեռավորությունից դուրս եկա ճանապարհից՝ ուղղվելով դեպի գերեզմանները: Վազում էի և նայում չորս կողմս: Լսեցի հրացանի և ատրճանակի կրակոցներ: Գիտեի, որ ետևիցս էին կրակում: Աճապարեցի գոնե գերեզմաններին հասնել: Կրակոցները շատացան: Ես ծովն ընկածի նման ձեռքս փրփուրներին մեկնեցի ու նայեցի Ջաղացպանյանների տան կողմը: Գուցե Սառա՞ն լսի և օգնության հասնի: Մերոնց գալու փոխարեն, հաչոցով ու ոռնոցով ինձ վրա հարձակվեցին շների ոհմակներ: Ի՞նչ անել: Քաղցած և կատաղած շները վերջերս ստիպված հարձակվում էին նույնիսկ զինված մարդկանց վրա: Ուրիշ ուղի չկար, կա՛մ թեքվել հետ դեպի կրակող կատաղած փոլիսները, կա՛մ գնալ ուղիղ դեպի կատաղած շները:

Մեխանիկորեն կատարվեց վերջինը: Մեր թաղի շներն էին. մի քանիսի անունը տվեցի, նրանք, պոչերը թափ տալով, ինձ նայեցին: Ես սրտապնդվեցի և քիչ էլ վազելով հասա գերեզմանները: Շները իմ բախտակիցներն էին, թուրքերը նրանց էլ էին սպանում: Հանկարծ վերևից և գերեզմանների կողմից եկող շների ոհմակները ինձ շրջապատելով կանգնեցին և սկսեցին դիտել դեպի մեր կողմ կրակող և վազող թուրքերին, հաչալով միանգամից վազ տվին ու հարձակվեցին նրանց վրա: Առիթից օգտվելով, հասնելով գերեզմանները, գերեզմանների միջով քարից քար երբեմն սողալով, կուզեկուզ քարերի արանքով աննկատ վազելով՝ դուրս եկա հայոց գերեզմաններից և ինձ շրջապատող մի քանի շների հետ վազեվազ, չորեքթաթ հասա թուրքերի գոռները: Այստեղ ես զգուշորեն մոտեցա ապաստարան գերեզմանին, դամբարանի սալիկը թեքելով՝ անցքով իջա մեր թաքստոցը և զգուշորեն ներս մտնելով՝ անցքը փակեցի: Մոտ երկու ժամ իմ բարեկամ շները պտտվեցին իմ բոլորը, հոտոտում էին ու հաչում: Նրանք հեռացան, երբ ժանդարմներն ու զորքը լցվեցին երկու գերեզմանները: Բարեբախտաբար ես կուշտ էի: Պառկեցի նեղլիկ դամբարանում և մինչև երեկո ոչ մի շարժում չարի: Փոլիսները, հուսահատվելով ինձ որոնելուց, երեկոյան հեռացան: Ես դրանում համոզված էի, քանի որ լսվում էր վխտացող շների կլանչն ու հաչոցի ձայնը: Ինչ գնով էլ որ լիներ, ես պետք է տեսնվեի

աղայիս հետ, չէ որ Սառան ոռպե առ ոռպե այս գիշեր սպասում էր ինձ: Բարեբախտաբար, ժանդարմներին չհաջողվեց ինձ հարցաքննել: Նրանք կարող էին կասկածել միայն Իսմայիլ աղային:

Կամացուկ դամբարանի ելքի քարը շարժելով՝ տեսա աստղերով պճպճած երկինքը: Ոչ մի շշուկ: Դուրս եկա, անցքը փակեցի ու գնացի դեպի աղայի տան կողմը: Հաշվի առնելով աղային սպասող վերահաս վտանգը՝ որոշեցի ինչ գնով էլ լինի՝ իրազեկ դարձնել նրան և գիշերը, գոռներում թափառող շների ոռմակով շրջապատված, թրքական այգիներով եկա աղայի տուն: Չնայած Ղուրբան Բայրամը մահմեդականների ամենանվիրական սուրբ օրն էր, բայց լուռ էր քաղաքը, միայն հյուքյումեթի կողմում, պարիսպների վրա երևացին մի քանի *փոլաթության*՝ տոնակատարության լույսեր. նավթը փոշիով գնդիկ դարձնելով՝ շարում էին ու վառում: Ճանապարհին ինձ ընկերացան իմ բարեկամ երեք շները, որոնք հասնելով շենքի շրջապատը, դեռ վազվզում էին առջևիցս ու ետևիցս: Հիշեցի քոմսերի խոսքերը.«Իսմայիլ աղայի համա՞ր էիր տանում»: Զգուշության համար ճամփաս ծռեցի դեպի Մժոյենց տանիքը, որտեղից կարելի էր դիտել աղայիս շենքի ամբողջ շրջապատը: Հետիս շները խելոք չէին մնում, անընդհատ վազվզում էին դեսուդեն: Քոլո շունը ներքև իջնելով, քիչ պտտվելով սկսեց հաչալ, մյուսները հետևեցին նրան ու վազեցին ներքև, դեպի աղայի այգու կողմի դարպասը: Վերևից նկատեցի, որ երկու ժանդարմ գաղտագողի ման էին գալիս աղայի տան շրջապատում և գրավել էին շների ուշադրությունը: Շների կատաղի հաչոցները ժանդարմներին ստիպեցին ինքնապաշտպանության դիմել, որն ավելի զայրացրեց, գազազեցրեց ու մոտեցրեց շներին: Երբ երկու տարբեր ցեղերի շները խուսփռտվեցին իրար, ես վազեցի դեպի աղայի տան առաջին հարկի լուսամուտը: Ճաղերը անցքերի մեջ շարժելով՝ /ճաղերը ես նախօրոք պատրաստել էի/, ներս մտա: Մժոյենց տան կողմից, փոքր լուսամուտից ներս խցկվելով, սանդուղքին թառած հավերին անհանգստացնելով, իջա միջանցք: Միջանցքում կանգնած, չէի կարող կողմնորոշել իմ անելիքը, թե ի՞նչ անել, ու՞ր գնալ: Կամացուկ անցա աղայի սենյակին կից սենյակը, մտա փարդայի՝ վարագույրի արանքը, դիտում էի շների կռիվներն ու կիսով չափ երևացող սենյակը: Ատրճանակի կրակոցների ձայնը լսելով՝ դեպի լուսամուտները մոտեցան երեք-չորս դեմքեր և սկսեցին դիտել շների հաչոցների և գոռգոռոցների կողմը: Զգալով, որ նրանք պետք է դուրս գան, ես իսկույն խույս տվեցի և մտա պատում եղած պահարանում դարսված անկողինների արանքը: Մուսանդարայում՝ անկողինների արանքը թաքնվելով, հուսացի, որ առավոտյան կհանդիպեմ աղային կամ աղախնին: Դուռը բացվեց, և մի քանի հոգի դուրս թափվեցին՝ վազելով ձայների կողմը: Շները սկսեցին փախչել: Դեպքի վայրում ընկած էր վիրավորված մեկ շուն՝ գզգզված ու արյունլվա ժանդարմիայի հետ: Մյուս ժանդարմի շորերն էլ բզկտված էին:

Իսմայիլ աղան, հասկանալով իրողությունը, խոհեմությամբ հարցեր չտվեց, միայն մի քանի անգամ ատրճանակից օդ կրակեց: Քսան ոռպեից կուլուխից եկան հինգ փոլիս ու զափթիա, որոնց Իսմայիլ աղան հրավիրեց տուն:

Նրանց հետևից ատամները կրճտացնելով՝ Իսմայիլ աղան թքեց ու ջղայնացած նստեց: Հյուրերը ոչինչ չնկատեցին, բայց Ահմեդ բեկը, տեսնելով եղբոր վրդովմունքը, խնդրեց.*«Գարդա՛շմ*, իմ խաթրին, քեզ հանգիստ պահիր»,-և ոտքը սեղմեց: Ուշ երեկո էր: Հյուրասիրվելուց հետո հյուրերը, տաճկական կեղծ քաղաքավարությամբ, խոնարհաբար շնորհակալություն հայտնելով, վիրավորների հետ հեռացան, գնացին: Իսմայիլ աղան եղբորը չթողեց գնալ: Նախքան քնելը՝ նա Ահմեդ բեկի հետ եկավ իմ պահ մտած սենյակը: Աղախինը նրանց ղայֆե և ղայլան մատուցեց: Նրանք իրար պատմեցին իրենց ախոյանների դավադրությունների, միջոցառումների մասին: Ահմեդ բեկը հայտնեց իրեն սպանելու՝ Մուստաֆա բեկի կատարած փորձի մասին: Մի շարք կնճռոտ հարցեր քննելիս եկան այն եզրակացության, որ իրենց դեմ էր գործում պալատեան՝ ոստիկանական վարչությունը: Կեսգիշերին նրանց խորհուրդը վերջացավ: Իսմայիլ աղան գնաց իր սենյակը, իսկ Ահմեդ բեկը, լամպի լույսը ցածրացնելով, սիգարը բերանին, ձեռքերը գլխի տակին դրած, աչքերը առաստաղին հառած, պառկեց: Վերջապես սկսեց խռմփալ:

Կատվի զգուշությամբ ես դուրս եկա պահարանից և իմ ներս մտած դռնից ու լուսամուտից դուրս սողալով՝ գիշերվա լռության մեջ քսան րոպեից եղա մերոնց մոտ: Զանոն իր գաղթականի շուրջկալով տեղեկացել էր իմ բռնվելու, փախուստի և սպանվելու մասին: Ինչպիսի՜ կարոտով ու գգվանքով ինձ փաթաթվեցին, ուրախության արցունքներով համբուրեցին ինձ, սեղմեցին գրկերին: Մենք մեզ երջանիկ էինք համարում: Մի քանի խոսքով պատմեցի կատարվածի մասին, և մենք, գրեթե մի անկողնում կծկված, քնեցինք լուռ ու հանգիստ: Լուսաբացին հետ վերադարձա Իսմայիլ աղայի տուն:

Ինչպես արդեն հիշեցինք՝ երեկ, Ղուրբան Բայրամի միջօրեին, աղայի տուն էին եկել իր եղբայրը՝ Ահմեդ բեկը, և այլ հյուրեր, որոնք ըստ կարգի հյուրասիրվելուց հետո գնացել էին իրենց տները: Իսկ եղբորը չէին թողել, որ գնա: Առավոտյան եկավ աղախինը, նա սենյակը հավաքում և կարգի էր բերում, բայց քանի Ահմեդ բեկը քնած էր, ես չհանդգնեցի հայտնվել աղախնին: Մի քանի րոպեից եկավ Իսմայիլ աղան: Ողջունելով եղբորը սալամով՝ նրանք միասին դուրս եկան բակ, այգի: Օգտվելով առիթից, սենյակի մեջտեղում կանգնած, ողջունելով աղախնին՝ դիտմամբ հարցրեցի աղայի որտեղ լինելը: Աղախինը, անվստահ ինձ նայելով, ցավակցաբար հարցրեց.«Նուրի՛, դու՞ ես»,-և ինքնաբերաբար թևերը պարզած մոտեցավ: Ես խույս տվեցի: Նա զգաստացավ, թևիցս բռնած գնացինք թոնրատուն: *«Նուրի՛, երեկ ի՞նչ պատրահեց քեզ, ու՞ր էիր գնացել»*,-հարցրեց նա: Նրան խաբելու համար ասացի, որ կուժը կոտրվելու պատճառով վախեցա երևալ: Գթասրտությամբ հանգստացնելով ինձ և նկատի ունենալով աղայի մեծահոգությունը՝ նա ասաց.*«Աղան բարի է, նա քեզ չի նեղացնի»*: Դառնալով ինձ և դեմքիս նայելով՝ զգուշացրեց.*«Այսօր հյուրեր են լինելու, սպասի՛ր, ես աղային տեսնեմ»*,-ու թեքվեց դեպի դուրս: Ես իսկույն գնացի մուսանդարայի կողմը: Իսմայիլ աղան եղբոր՝ Ահմադ բեկի հետ սրահը մտնելով՝ կանչեց.«Նուրի՛, արի այստեղ»: Ես իսկույն մոտեցա՝ խոնարհելով գլուխս: Իսմայիլ աղան, մատնացույց անելով

ինձ, հայտնեց.«*Տղան դուրանը ավելի լավ է կարդում, քան մոլլաները*»,-և նրա ականջին փսփսալով՝ հայտնեց, թե ում տղան եմ: Աղախինը մատուցեց նախաճաշը: Ես մյուս դռնից դուրս եկա, անցնելով թոնրատուն, իջա մառանը: Բարեբախտաբար ժանդարմները, կորցնելով իրենց որսը, զբաղված էին իրենց ոտքն ու գլուխը ջարդած ընկերոջ բուժմամբ: Ինձ զարմանք պատճառեց այն, որ իմ բռնվելուց և փախուստից հետո, ոչ մի հետապնդում ժանդարմների կողմից տեղի չունեցավ, որի շնորհիվ ինքզինքս ավելի ապահով զգացի: Բարեբախտաբար մի քանի օրից ժանդարմների այս պահակակետը ևս վերացվեց: Դուրբան Բայրամի տոներից հետո տեղական իշխանությունները, ավարտած համարելով հայերի ջարդը, հետզհետե կրճատեցին թաղերում կազմակերպված՝ ժանդարմների ու ասքյարների լրացուցիչ պահակակետերը: Մեր թաղում մնացել էր նախկին կուլուխը և ավելացել էր խասթախանե կոչվող վիրավորների բուժման մի կետ: Ոստիկանությունը զբաղված էր դասալիք արաբ ասքյարներով, որոնք սոված, կիսամերկ ու հյուծված, գիշեր-ցերեկ սարերով ու ձորերով փախչում էին՝ ապավինելով բնակչությանը: Բնակչությունը անխնա էր վերաբերվում նրանց հետ՝ մատնելով ոստիկանությանը: Այդ օրերին հաճախ էին դատապարտված արաբ զինվորներին հեռագրասյուներին կապում և գնդակահարում:

Օգտվելով աղայի բարեսրտությունից և նրա բարի խորհուրդներից՝ վայելում էի հանգիստ խաղաղ կյանք: Ֆաթմա խանումը լավ էր վերաբերվում: Տաք [ամառային] օրեր էին: Ցերեկները մեծամասամբ տանը՝ մի անկյունում կուչ եկած՝ աղայի պահանջով պարապում էի տղայի՝ Շահբաղդինի հետ, բայց նա էլիֆ, բեն /այբ, բեն/ տառերը ծաղրանքով էր սովորում: Հետո, ինչպես թաղի տղաները, ցալկտոցի կամ այլ խաղերով էին զբաղվում: Գիշերները որսի էի դուրս գալիս, գաղտագողի մտնելով հարուստ հայերի տները՝ թանկարժեք իրեր և ոսկե զարդեր բերում խանումին: Մի անգամ, մի գորգ քարշ տալով բերելուց՝ քիչ մնաց բռնվեի: Բարեբախտաբար ժանդարմները կարծեցին, թե թուրք մուհաճիր էի և փախուստիս չհետապնդեցին: Ամեն առավոտ խանումի ապտեստի /լվացվելու/ ջուրը ես էի բերում, կամ օջախի վրա ջուրը տաքացնելով՝ խանումիս լողացնում, մեծ սրբիչով սրբում, օգնում հագնվել, իսկ երեկոյան, մինչև աղայի գալը, աղայի ղայլանի ջուրը, ծխախոտն ու թամբաքին նորոգում, պատրաստում:

* * *

Իմ բռնվելն ու փախուստը զայրացրել էր մեր թաղի ոստիկանությանը: Որոշ ժամանակ անց՝ մեր թաղի փողոցներն ու փողանները նորից ուժեղ ու խիստ հսկողության տակ առնվեցին: Գիշեր-ցերեկ վխտում էին ժանդարմները, ստուգում ու տակնուվրա էին անում հայերի ամայի տները, մի քանի նկուղներ ջրով լցվեցին, մի քանի կասկածելի տներ վառեցին: Հրամայվեց բոլոր շներին սպանել: Մենք մեր նկուղից լսում էինք հատ-հատ հրացանի կրա-

կոցներ: Երկու օր մենք չկարողացանք դուրս գալու փորձ անել, անխոհեմություն էր, քանի որ լսում էինք թուրքերի ձայները: Երրորդ օրվա գիշերը Սառան որոշեց հետազոտել մեր շրջապատը, բայց Զանոն ու Մարթան չթողեցին՝ առարկելով, թե դու տաքարյուն ես: Ինչպես վերևում հիշեցի, մեզ մոտ էր Սաթենիկը՝ Մոտոյենց ոսկերիչ Գրիգորի աղջիկը, որն իր գեղեցկությամբ վաղուց էր գրավել երիտասարդների ուշադրությունը: Եղեռնի առաջին օրը հաջի Սուլեյմանը, նախօրոք աչք ունենալով նրա վրա, տարավ իրեն երկրորդ կին: Հաջի Սուլեյմանի սպանվելու դեպքից հետո նա Մարթայի հետ եկավ մեզ մոտ: Սաթենիկը նազելի օրիորդ էր, քնքուշ ապրած, ֆիզիկապես և բնավորությամբ թույլ էր և չէր կարող դիմանալ մեր կենցաղային պայմաններին: Մեր նկուղն ու խոնավությունը, սրտաճմլիկ տեսարաններն, աղքատիկ հոգեպահուստով սնվելը ծանր անդրադարձան ճոխության սովոր, քնքուշ ապրած օրիորդի առողջության վրա: Նա կորցրել էր իրեն սիրող հարազատներին, բայց ամենից շատ էր ողբում փոքր եղբորը՝ Գեղամին հիշելիս: Սառայի տված դեղամիջոցները չօգնեցին: Նրա ջերմությունը օրեցօր բարձրանում էր, վերջապես նա անկողին ընկավ:

Չորրորդ օրն էր, որ մենք արտաքին աշխարհից լուր չունեինք, բայց անտարբեր մնալ հնարավոր չէր: Նկատի ունենալով Սաթիկին՝ Մարթան ու Զանոն հանձն առան փոխադրվել: Սառան, տեսնելով Սաթիկի վիճակը, համաձայնվեց միայն Մարթայի հետ, որն ավելի շատ էր շփվել գաղթականների հետ, ուներ փորձ ու ծանոթներ: Կեսգիշերին Մարթան ու Սաթիկը զգեստավորվեցին և գաղթականների տարազով մեր ուղեկցությամբ հասան մինչև բակի նեղ լուսամուտը: Ես հանեցի ճաղերը: Ողջագուրվելուց հետո նրանք դուրս եկան և հեռացան խավար աղջամուղջի մեջ: Ես նորից լուսամուտի ճաղերը տեղում ամրացրի: Մարթան ու Սաթիկը պետք է գնային Ջոջ գերեզմաններ, իջնեին գոռներ, գոռների արանքով անցնելով՝ իջնեին, կամրջի մոտ միանային եկող գաղթականներին, նրանց հետ պատսպարվեին իրենց հատկացվելիք որևէ տանը և շուկայից ձեռք բերեին պաշար՝ Սաթիկի կազդուրվելու համար: Մեր պայմանավորվածության համաձայն՝ երկրորդ, ամենաուշը երրորդ գիշերը գոռներում պետք է հանդիպեինք իրար: Կամուրջն անցնելիս իրենց դիմաց երևացին չորս-հինգ գյուղացիներ, որոնք երկու իշաբեռով շրջվեցին դեպի ջրաղացը՝ ցորենը աղալու: Նույն կողմից գալիս էին երեք-չորս ժանդարմներ: Մարթան, նկատելով ժանդարմներին, որոնք մեր թաղի կուլուխից էին, հետևեց ջրաղաց գնացողներին ու գնաց նրանց հետ: Գյուղացիք քրդեր էին: Օգտվելով շուկայում հացի սղությունից՝ մոտակա գյուղի հայերի տներից էին բերել ցորենը և ջրաղացպանի մասնակցությամբ աղում, ծախում էին: Ջրաղաց մտնելով՝ նրանք մտերմորեն իրար բարևեցին ու էշերին բեռնաթափելով՝ նստեցին զրույցի: Մարթան՝ դռանը կանգնած, հայացքով հետևեց ժանդարմներին և նկատեց, որ նրանք առանց իրենց վրա ուշադրություն դարձնելու՝ անցան, գնացին: Ջրաղացպանը, թոնրից տաք-տաք բաղարջներ հանելով, դարսեց նրանց մոտ: Սկսեցին սոխ, պանիր, հաց ուտելով՝ զրուցել: Մարթան, Սաթիկի թևն ընկած, ուզեց հետ դառնալ: Ջրաղացպանը նկատե-

լով՝ հարցրեց.«Ո՞վ էք, ի՞նչ էք ուզում»: Մարթան քրդերեն չէր հասկանում, թուրքերեն ասաց.

-Էս ջահել կինը ծանր հիվանդ է, չկարողացանք գնալ մերոնց հետ, մինչև առավոտ մնանք ձեզ մոտ, տեսնենք ի՞նչ կլինի: Գուցե մեզ մի տեղ տեղավորե՞ն:

Ջրաղացպան քուրդը գլուխը քորելով հետ գնաց, մի քանի հաց էլ հանեց, քցեց քրդերի կողմը, մի բաղարջ[178] էլ ինքը վերցրեց, մեջը սոխ ու պանիր դնելով և կծելով՝ քրդերին հայտնեց, որ գնում է էշերին դարման տալու: Ներսի դուռը շրխկացնելով՝ դուրս եկավ, ձեռքի մեծ բրդուճը կանանց երկարացնելով՝ կոտրտված թուրքերենով ասաց.«Երևի քաղցած եք»: Հակառակ Մարթայի համառությանը՝ հիվանդին նստած տեղից բարձրացնելով՝ տարավ ներս, անկյունում պարկեր փռեց ու ասաց.«Մինչև առավոտ պառկեք, հանգստացեք»: Կապված թոկի վրա մի քանի փոշոտ, ալրոտ պարկ քցելով՝ գնաց, կժով ջուր ու մի քանի տաք հաց՝ բաղարջ բերեց, տվեց և հեռացավ: Ինչպիսի սրտաճմլիկ բոպեներ էին, հիասթափությամբ, հուսահատությամբ, մրմուռով և թախիծով ծանրացավ Մարթայի սիրտը: Նա գլխիկոր, մռայլ լռությամբ, մի ձեռքը դրած Սաթիկի կրծքին, մյուսով իր աչքերը սեղմած, դառնագին վշտի մեջ ինքն իրեն լաց եղավ, անձայն ու լուռ հեկեկաց: Ուզեց դուրս գալ, նետվել դեպի քրդերը, բայց Սաթիկի տնքոցը նրան սեղմեց տեղում: Ջուր ուզեց, սափորը բերանին մոտեցրեց, մի կում հազիվ խմեց ու լռեց, թուլացավ անձայն: Մայրական սիրով գրկեց Սաթիկի գլուխը, հպվեց, համբուրեց, կամացուկ հարցրեց.«*Սաթի՛կ, քեզ հանգիստ պահի՛ր, մի՛ վախիր*»: Ոչ մի ձայն, նա մեռած էր: Մարթան գրկեց անշունչ մարմինը և աչքերը փակեց, անելիության զգացումը նրան ինքնամոռացության մատնեց: Նա անզգայորեն թուլացած՝ փարվեց Սաթիկին ու ննջեց:

Քրդերը, լուսադեմին վեր կենալով, գնացին իրենց էշերի հետ: Ջրաղացպանը, լուսադեմին քրդերին ճամփա դնելուց հետո, մոտեցավ իրեն հյուրընկալված կանանց, պարկերով ծածկած վարագույրը բացեց և տեսավ երկու կանանց՝ գրկախառնված քնած: Քրդական քաղաքավարությամբ մեջքը շուռ տալով՝ ասաց.«Դե՛, վե՛ր կացեք, առավոտ է»: Պատասխան չստանալով՝ շուռ եկավ, վերցրեց փարչը և ոտքով մի փոքր հրելով՝ կրկնեց.«Վե՛ր կացեք, գնացե՛ք»: Մարթան սթափվելով մեխանիկորեն կանգնեց՝ ուղիղ նայելով քրդի աչքերի մեջ: Քուրդը սարսռեց նրա հայացքից և ձեռքը կրծքին դնելով՝ զգացնել տվեց.

-Շու՛տ գնացեք, ջաղաց եկող-գնացողները որ ձեզ տեսնեն, ես ի՞նչ անեմ,- ու դեմքը երկինք դարձնելով՝ ասաց,-Խուդա, էս շառից ազատի:

Մարթան, ձեռքը կրծքին դնելով, դիմեց քրդին, խնդրեց, ասաց և աղերսեց.«Ի՞նչ անեմ, խեղճ կինը մեռավ, ես ո՞նց թողնեմ-գնամ»: Քուրդ ջրաղացպանը, ձեռքը մորուքին տանելով, ասաց.«*Խաշքամա, բաջի՛, ուզում ես դու գնա, ես գիշերը կթաղեմ, ցորեկով չեմ կարող*»: Մի պահ մտածելով՝ Մարթան Սաթիկին ծածկեց պարկերով և դուրս եկավ, բայց նկատելով ջրաղաց եկողներին՝ իսկույն ներս մտավ ու դիմելով քրդին՝ կտրուկ ասաց.

-Մինչև քրոջս չթաղենք, ես ոչ մի տեղ չե՛մ գնար:

Քուրդը ստիպված Մարթային առաջարկեց բարձրանալ ջրաղացի անկյունում՝ պատի խորքում եղած, պահեստանման անցքի մեջ և սպասել մինչև մթնելը: Մի երկու բաղարջ ու մի փարչ ջուր հետը տանելով՝ Մարթային նստեցրեց և դիմացը ծածկեց:

Մինչ նա՝ քաղաքի բոլոր ջրաղացպանները հայեր էին, որոնց սպանվելու պատճառով վեց ջրաղացներից գործում էին երկուսը, հետևաբար հաճախորդներ շատ կային և սպասում էին իրենց հերթին: Արևածագին քուրդը, որպես սուննի մահմեդական, առանց ուշադրություն դարձնելու հաճախորդների աղմուկին, իր մազե աբան փռեց բակի սալի վրա ու ոտքերը լվալով՝ նամազ արեց: Ներս գալով՝ գոռգոռոցով դասավորել տվեց ցորենի բեռները և բոլորին դուրս արեց՝ մինչև խոստացած ժամկետը: Ջրաղացի երեք քարերը գիշեր-ցերեկ աշխատում էին: Հաճախորդները՝ յուրաքանչյուրն իր հերթին, օգնում էին, պարկերից ցորենը դատարկում, ալյուր լցնում: Ջրաղացպանը պարկից մի կոտ ցորեն վարձք էր վերցնում: Մարթան մինչև երեկո իր բնում անշարժ մնաց, բայց քուրդ ջրաղացպանը, մի քանի անգամ մոտենալով, հանգստացրեց՝ ասելով.«*Խաշքամա սահաթ ոկա՝ հանգիստ եղիր*»: Վերջապես երեկոյան նավթի ճրագը ձեռքին մոտեցավ Մարթային և կանչեց: Ջրաղացի պատի կողքին մի փոս փորեցին և Սաթիկին իր շորերով թաղեցին: Մարթան, զգալով քրդի բարեխիղճ վերաբերմունքը, ուզեց մի ոսկի տալ, բայց նա մերժեց: Մարթան նկատեց ջրաղացպանի աչքերից թափվող արցունքները, լուռ նայեց նրան և վերցրեց իր կապոցը հեռանալու, գնալու համար: Քուրդը նրա ձեռքից բռնեց, ներս տարավ, մի քանի բաղարջ տվեց և ասաց.

-Գնա՛ բարով, ես գիտեմ, որ դու՛ք հայ եք, ինձնից մի՛ վախենա:

Մարթան նորից հայացքն ուղղեց նրան, նկատեց նրա խոր հուզմունքն ու մթին գիշերով անխոս և մռայլ դուրս եկավ: Սաթիկի մահը հոգեպես և ֆիզիկապես ջլատեց Մարթային, և նա ինքնակորույս մոռացավ իր անելիքը: Սիրտը լցված էր, ուզում էր լաց լինել, փղձկալ: Ջրաղացից մոտ հիսուն-վաթսուն քայլ բարձրանալով՝ հասավ առվի կամրջակին, կանգնեց, բնազդորեն հետ նայեց, նկատեց դռան մոտ կանգնած քրդին, որը ծխում էր: Մարթայի հայացքը չէր հեռանում ջրաղացից, քրդից: Սաթիկի կորուստն էր նրան տանջում: Նա անշարժ կանգնեց կամրջակին, անորոշ, չզգալով իր անելիքը, առանց կողմնորոշվելու: Քուրդը, ուշադրությամբ հետևելով Մարթային, նկատելով նրա անշարժանալը, բահը թևին դնելով, հևաց, հոգոց հանեց և ուղղվեց դեպի Մարթան՝ դիմելով.«*Խաշքամա՝ քույրս, ինչու՞ ես կանգնել, որտեղից եկել ես, էնտեղ էլ գնա, էստեղ՝ երեք ճամփի արանքում վտանգավոր է, եթե վախենում ես, գնանք ջաղաց*»: Մարթան, լսելով քրդի անշահախնդիր խորհուրդը, նայեց խավար շրջապատին: Լսվում էր ջրաղացի չխչխկի ձայնը՝ տխուր ու միալար, անզգա ու անարձագանք: Մարթան թեքվեց, առվի զուլալ ջրով լվացվեց, փեշով սրբվեց, ինքն իրեն տնտղեց, նայեց քրդին և ուղղվեց դեպի Մոլլի կամուրջը՝ նախընտրելով Սառային իրազեկ դարձնելու Սաթիկի մահը: Քուրդը վերադարձավ ջրաղաց:

Լուսադեմին Մարթան հայտնվեց մեզ մոտ: Նա լուռ ու մունջ նստեց և միանգամից ձեռքերը դեմքին սեղմելով՝ կսկծալով լաց եղավ: Սառան ու Զանոն շվարած գրկեցին նրան: Նա դառնագին հեծկլտում էր: Մի պահ սպասելով՝ Սառան մի կողմ քաշեց Զանոյին և առնական տոնով ասաց.

-Մարթա՛, մենք կենդանի մեռյալներ ենք, դու ու՞մ համար ես լաց լինում: Թուրքերը լացողին ոտնահարում են, իսկ կռվողին ու դիմադրողին մաշալլահ են գոչում: Դե հանգստացիր, խոսիր,-և ճակատը կնճռոտելով նստեց:

Զանոն փարչով ջուր բերեց: Մարթան ձեռքով մերժեց և նայելով մեզ՝ ասաց.«*Մեր Սաթիկը մահացավ, այս գիշեր նրան թաղեցինք*»: Սառան, կրկնելով թաղեցինք բառը, հարցրեց.«*Ու՞մ հետ*»: Լսելով Մարթայի գիշերային արկածները՝ Սառան կանգնեց և հանդիսավոր կերպով ասաց.«*Վաղը կգնանք մեր սիրելի աղջկա գերեզմանին*»: Զանոն ուզեց առարկել, հաշվի առնելով մեր թաղում գիշեր-ցերեկ վխտացող ժանդարմիան, նույնիսկ նկատի ունեցավ Իսմայիլ աղայի հանդեպ իշխանության կողմից որոշ կասկածները, նրա ախոյանների կողմից հրահրվող բացարձակ զրպարտությունները, Մուստաֆա բեկի անհաշտ քենը, տոհմական վրեժխնդրությունը, որը նրան դրդել էր բացարձակորեն գործել Իսմայիլ աղայի անձի դեմ: Բայց Սառան հանգիստ ասաց.

-Մեր կյանքը այսօր կա, վաղը չկա: Մեր աղջկա գերեզմանին գնալը մեր հոգու պարտքն է, բացի դրանից, ես ուզում եմ տեսնել այդ քուրդ ջրաղացպանին: Հետո կորոշենք մեր անելիքը:

Գիշերը ամենայն զգուշությամբ դուրս եկանք մեր թաքստոցից, գերեզմանների միջով իջանք գոռները, այնտեղից մեկս մյուսիցս տաս-տասներկու քայլ հեռավորությամբ իջանք նեղ արահետով՝ հասնելով Մոլլի կամուրջ: Սառան Մարթային ուղարկեց ջրաղաց՝ նախ ուսումնասիրելու և նախապես քրդին տեղեկացնելու համար, իսկ մենք, գետափ իջնելով, սպասեցինք նրա զգուշացմանը: Մեր ուշադրությունը կենտրոնացած էր ջրաղացի դռանը, որտեղից Մարթան քրդի հետ դուրս եկավ և ձեռքով նշան արեց կամրջի կողմը: Քուրդը, խավարում աչքերը հառած, սպասում էր մեր գալուն: Մարթայի ասելով, նա դողում էր երկյուղից, բայց բահը ձեռքին՝ ուշադիր նայում էր դես-դեն և ի զարմանս նրա, մենք, իսկույն գետն անցնելով, դուրս եկանք ջրաղացի դռան մոտ: Նա մեզ անմիջապես ներս տարավ, փորձեց հարցնել ովքե՞ր ենք, մեզ նայում էր որպես հանցագործների՝ բարի, խղճուկ, այլայլված հայացքով: Սառան, թուրքերեն քրդին դիմելով, հայտնեց, որ մենք եկել ենք մեր աղջկա գերեզմանը տեսնելու և իսկույն կգնանք ու նավթի ճրագը վերցնելով՝ անցանք պատի ետևը: Սառան ճրագը դրեց թմբին, անխոս ու ծնկաչոք փարվեց գերեզմանին: Նույնը արեցին Մարթան ու Զանոն: Անձայն, հոգեկան խոր ապրումներով, Սառան կանգնեց և լաց լինելով Մարթային ու Զանոյին ասաց.

-Մեր հարազատներին, տեսա՛նք, սպանեցին մեր աչքի առաջ, ոչ մեկին չվիճակվեց նրանց թաղել: Թող այս անմխիթար գերեզմանը լինի մեզ սրբատեղի…

Նա ուզեց խոսել, բայց նայելով քրդին, որն մի քանի քայլ հեռու՝ բահին

հենված, մտահոգված խրտվիլակի տպավորություն էր թողնում, ակամա զգուշացավ և շարժվեց: Քուրդը մոտեցավ գերեզմանին, վերցրեց ճրագը և շրջվեց դեպի դուռը: Նախօրոք Սառայի նախատեսածի համաձայն՝ ես, հեռու ծառի ետևում թաքնված, հետևում էի ճանապարհներին, պահակություն անում: Մենք չէինք ուզում, որ քուրդը ինձ տեսնի: Քուրդը ջրաղաց մտնելիս անսպասելի բռնեց Սառայի ձեռքից և ներս քաշեց: Ճրագը մոմակալին դնելով, Սառային աղոտ լույսով զննելով՝ հարցրեց.

-Քուրդ՛, դու ու՞մ հարսն ես: Ես Մոտկանցի եմ, շատ հայ բարեկամներ ունեի: Աստվա՛ծ սիրես, ճիշտ ասա, ինձնից մի վախիր:

-Ես Պոլսո կողմերիցն եմ, իմ ամուսինը զինվորական բժիշկ էր, այստեղ երկու տարի է, որ բնակվում եմ»,-կարճ պատասխանեց Սառան:

-*Փաքի*, լա՜վ, բա էս մեռած աղջիկն ու՞մ աղջիկն էր:

Սառան հայտնեց, որ ինքը չգիտի.«Թո՛ղ Մարթան ասի»,-և Մարթան համառոտ հասկացրեց նրա ով լինելը: Քուրդը, որը չէր սպասում այդ բառերին ու խոսքերին, կարծես զգաստացավ և Մարթային նայելով՝ խորհրդավոր կմկմաց.«*Մուրոյենց Գրիգորի աղջիկը չէ՞, որ հաճի Սուլեյմանը պարել էր*»,-և ձեռքը դնչին տանելով՝ լռեց:

Այգաբացը մոտենում էր: Ես Թաղիգլխի կողմից ձայներ լսեցի, մի քանի քայլ բարձրացա և նկատեցի վերևից էշերով ու ջորիներով եկող գյուղացիներին ու գաղթականներին: Անմիջապես երկու անգամ քար նետեցի դեպի ջրաղացի դուռը: Զանոն նկատեց և Սառային ու Մարթային հասկացրեց: Սառան երեք ոսկի բռնած՝ ձեռքը քրդին երկարացրեց՝ ասելով.«*Դու սաղ ալամաթ*՝ ողջ եղիր, մենք գնում ենք»,-և շտապեց դուրս գալ: Քուրդը չընդդիմացավ դուրս գալուն, բայց դրամը չվերցրեց՝ ասելով.«*Հայերը ինչ շատ լավություն են արել, փողը չեզ կարող է պետք գա*»,-և դռան ետևից բահը թևին դնելով, շտապելով՝ առաջ անցավ: Հասնելով առվի կամրջակին՝ կանգնեց ու հետևեց ճանապարհների անցուդարձին և լսելով վերևի ճամփի կողմից եկող ոտնաձայները՝ արագ վերև բարձրացավ, մոտենալով, մի քանիսի հետ խոսելով և շտապ հետ վերադառնալով, մոտեցավ մերոնց ու հայտնեց.«*Վերևի ճամփով չգնաք, Մշո, Բուլանիխ, Մուրկանի*[179] *քոչվոր քրդերն են, իրենց աշիրաթով գալիս են Սղերդ գնալու համար: Դուք քրդերեն չգիտեք*»,-ու լռեց: Մենք լավ գիտեինք, որ քրդերը թալանի համար ոչ ոքի չէին խնայի, նրանք նույնիսկ եղած առիթի դեպքում՝ թուրք մուհաճիրներին էին կողոպտում, դիմադրողին սպանում: Ուստի ստիպված էինք դեպի մեր թաղը բարձրանալ, բայց կամրջով անցնելը, այն էլ երեք-չորս հոգով՝ վտանգավոր էր, քանի որ Խանոյ Մինասենց բակում զինվորական պահակախումբ կար: Երեք կանայք, հուսահատված ու մոլորված, կանգնած էին կամրջակի մոտ: Ես նորից նայեցի վերին ճամփով մոտեցող խառնիճաղանջ ամբոխին և զգալով վտանգը՝ հետ դառա: Չէի ուզում, որ քուրդը ինձ նկատեր, բայց ուրիշ ելք չկար. հետևելով քրդի շարժումներին՝ պատի տակով մոտեցա: Մերոնց ուշադրությունը գրավելով՝ ես ձեռքի շարժումով հասկացրի, որ վերևի ճամփով անկարելի է գնալ և մատով ցույց տվի, որ անցնենք գետը, բայց լուսաբաց էր ու մեզ կնկատեին թուրք պահակները: Այս

օրհասական պահին քուրդը, բահը թևին, քրդերեն երգ մրմնջալով, շարժվեց առվի ուղղությամբ դեպի կամուրջը: Օգտվելով նրա հեռանալուց՝ ես մոտեցա մերոնց: Քուրդը, հասնելով կամրջի մոտ, կանգնեց, բահը իջեցրեց, սկսեց առվի եզերքները մաքրել: Մարթայի առաջարկով մենք նորից հետ գնացինք: Հազիվ էինք հասել ջրաղացի դուռը, նկատեցինք, որ վերևի կողմից մոտ տաս բարձված ջորիներով հինգ-վեց զինված քրդեր գալիս էին դեպի ջրաղաց: Քուրդը, լսելով նրանց ձայները, մոտեցավ նրանց: Սալամ տվեց, սալամ առավ և միասին շարժվեցին դեպի ջրաղաց: Մինչ նրանց գալը՝ Մարթան մեզ տարավ ջրաղացի քունջը /անկյուն/ և միասին կծկված ծածկվեցինք՝ սպասելով մեր ճակատագրին: Սառան փսփսալով զգուշացրեց մեզ.

-Եթե մեզ բռնեն, հայություն չա՛նեք, սպանե՛նք, հետո սպանվե՛նք:

Մինչև ջորիների բեռնաթափելը, մեզ ծանոթ քուրդը ներս մտավ և ճրագը վերցնելով՝ էսկողմ, էնկողմ նայեց ու մոտենալով մեր ապաստարանին՝ կամացուկ ասաց.«*Մի վախի՛, չշարժվեք մինչև իմ գալը*»: Քուրդը, մոտենալով իր համագյուղացիներին, նրանց գլխավորին, որն ձիով էր ման գալիս, հրավիրեց ներս՝ իր քողիկը: Աշիրաթապետը ծալապատիկ նստեց ջրաղացպանի աղքատիկ կարպետին ու թեքվեց միակ մութֆային: Մյուս քրդերը, բեռնաթափելուց հետո, մի ոչխար մորթեցին, փորոտիկը մաքրեցին, թոնիրը վառեցին և ամբողջ ոչխարը կախեցին թոնիրը՝ խորովվելու: Աշխուժացել էր քուրդ ջրաղացպանը, սրա, նրա հալն /վիճակն/ էր հարցնում: Մեկը մյուսին գովում էին «*գյավուր ֆլահ*»՝ հայերին սպանելու, առևանգելու և այլ քաջագործությունների համար: Լուսաբացին՝ աղոթրան, քուրդը դուրս եկավ բակ, առվակի ջրով ոտքերն ու ձեռքերը լվաց և քուրդ բեկին հրավիրեց նամազի:[180] Աղոթքից հետո ջրաղացպանն ու բեկը միասին, իսկ մյուսները՝ առանձին, սկսեցին նախաճաշել: Քրդերը ջրաղացպանին տվեցին պանիր, ժաժիկ: Մոտ երկու ժամ տևեց նրանց նախաճաշն ու զրույցը: Քուրդ բեկը պառկեց քնելու, մեկը մնաց ջրաղացպանին օգնելու, մյուսները գնացին շուկա, քաղաք ման գալու:

Մենք մեր մութ անկյունից դիտում էինք նրանց շարժումները և մեզ ապահով զգացինք, քանի որ քուրդը մեր մասին ոչ մի խոսք չասաց: Եռանդուն ջրաղացպանը աշխատում էր, նա կուժը տվեց աշխատող քրդին և ուղարկեց աղբյուր, ապա, մոտենալով բեկին, նայեց նրան, մի ալրոտ պարկի մեջ հաց, պանիր և մի մեծ կտոր խորոված ոչխարի մսից փաթաթելով, մի փարչ ջրով մոտեցավ, մեզ տվեց՝ կրկնելով.«*Մի՛ք վախենա*»,-ու գնաց իր գործին:

Ջրաղացի հաճախորդների թիվը ավելանում էր, լինում էին վեճեր, գոռոցներ, նույնիսկ հայհոյանքներ, բայց հաղթողը ջրաղացպանն էր: Նա նույնիսկ չէր զիջում պաշտոնյա անձանց միջնորդությանը: Ալյուրավաճառ թուրք խաները[181] խնդրելով էին դիմում և օրըստօրե բարձր արժեքով էին գնում ալյուրը: Նա շատ լավ գիտեր ում հետ ինչպես վարվել և չնայած ջրաղացպան էր, բայց խանչալը միշտ գոտկին կապած էր կատարում իր գործն ու հանդգնողի քիթն ու մռութը ջարդելով՝ հետ ուղարկում: Նա հիմնականում կատարում էր քուրդ բեկերի ու շեյխերի պահանջները և կապված էր նրանց հետ: Այսպիսով՝ նա, որպես ջրաղացպան՝ մեծ համբավ ուներ. տնօրինում էր գավառներում թալա-

նող քրդերի ալրի պաշարները, հաշտարար դեր էր կատարում:

Կեսօրն անցել էր, քուրդ ու թուրք հաճախորդների թիվն ավելանում էր: Պտտվում էին ջրաղացի երեք քարերը, բացի մեկից՝ կորկոտ ու ձավար ծեծող սանդ քարից, որը մեզ մոտ էր կանգնած: Վեճ էր գնում կորկոտ ու ձավար ծեծող հաճախորդների հետ, բայց ջրաղացպանը անդրդվելի էր: Կոպտելով նրանց և ցույց տալով սանդ քարը՝ ասում էր.*«Փչացե՛լ է, գիշերը կսարքե՛մ, վաղը կգա՛ք»:* Մենք տանջվում էինք մեր փոքր խուցի մեջ: Անակնկալներով լի մեր երկրորդ օրվա րոպեները ժամեր էին դառել: Մահվան դատապարտվածի նման սպասում էինք դահիճին, բայց մեզ ոչ-ոք չէր խանգարում: Դատողություններ էինք անում ջրաղացպանի և նրա թուրք ու քուրդ զրուցակիցների մասին. համոզված էինք, որ հաճախորդների մեծ մասը մոտակա հայոց գյուղերի թալանած ցորենն էր բերել աղալու: Չէ որ ոչ մի քուրդ ու թուրք ցորեն ցանող չկար մեր նահանգում: Վերջապես երեկոյան ջրաղացում սկսեցին երևալ հատուկենտ մարդիկ՝ իրենց ավարներով: Վառվեց միակ ճրագը, ջրաղացպանը մեր կողմ գալով՝ հազաց, մի պահ կանգնեց ու հեռացավ: Մենք մի փոքր տեղաշարժ կատարեցինք: Ծակ մտած մկան նման հետևում էինք վայրագ կատուներին: Համոզվեցինք, որ հաճախորդները գնացել էին: Ուզեցինք դուրս գալ: Հազիվ Զանոն մի քայլ էր արել, երբ նկատեց դռան արանքում ձիով կանգնած մեկին, որը, հաստ ծխախոտը բերանին ներս մտնելով՝ կանչեց ջրաղացպանին: Զանոն իսկույն մտավ սանդ քարի ետևը: Նստեցինք՝ հենվելով պատին: Ջրաղացպանին կանչողը վերցնելով ճրագը՝ մոտեցավ ցորենի բեռներին /պարկերին/, որոնք երկրորդ հերթին էին դարսված, ջղայնացած ճրագը դրեց բեռների վրա և հայհոյանքով դուրս եկավ ու կանգնեց դռանը: Մի քանի րոպեից ջրաղացպանը եկավ բահը թևին և նրանք միասին ներս մտան: Նկատելով ճրագի տեղից տեղափոխվելը՝ ջրաղացպանը սարսուռ զգաց և դառնալով արյունռուշտ բեկին՝ որը ոտքից գլուխ զինված էր ու զգալով նրա ջղայնացած լինելը՝ ասաց.*«Վաղը առավոտյան ձեր աղուն պատրաստ կլինի, կարող էք տանել»*: Քուրդ բեկը, որը ներկայանում էր Մոտկանի քուրդ աշիրաթի պետ, մեծ աջակցություն էր ցույց տվել Մշո, Սասունի մինչև անգամ Բիթլիսի շրջանում գտնվող հայոց գյուղերի կոտորածին՝ տիրանալով գյուղերից թալանված ունեցվածքին, մանր և մեծ եղջերավոր անասուններին: Նրա տրամադրության տակ կար լավ զինված հեծելազոր, և նրանք իրենց ավարը փոխադրում էին դեպի Սղերդ, Բաղդատ: Բեկը իր թալանածի հետ տանում էր ընտրած հայ աղջիկներ: Այդ պատճառ էր դարձել իշխանության հետ ընդհարվելու համար, բայց բեկը իր հիմնական թանկարժեք ավարը փոխադրում էր սարերի վրայով, իսկ ճանապարհներով տանում էր թալանածի փոքր մասը:

Քուրդ բեկը զայրացած էր ջրաղացպանի վրա: Նա կարող էր նրան նույնիսկ շանսատակ անել առանց հատուցման ու պատասխանատվության վախի: Ջրաղացպանը լավ էր ճանաչում նրան և խոնարհաբար ասաց.*«Բե՛կ, եթե ուզում եք, հենց հիմի էլ կարող եք հինգ-վեց ջորի բառնալ, մնացածը առավոտը պատրաստ կլինի»*: Ջրաղացպանի խոսքերը անակնկալի բերեցին քուրդ ցեղապետին և նա, ջրաղացից դուրս գալով, կանչեց վերևի ճամ-

փին սպասող ջորեպաններին: Կես ժամում նրանք ութ պարկ բարձեցին ջորիներին և շարժվեցին, բայց բեկը նստեց դռան մոտի քարին և իր թիկնապահին ձեռքով նշան արեց: Նա խուրջինը բերեց, նստեցին հաց ուտելու: Ջրաղացպանը ներս հրավիրեց, բայց նա մերժեց, քանի որ դրսում ծառերի տակ ավելի մաքուր ու դուրեկան էր: Նա չթողեց, որ ջրաղացպանը ոչխար մորթի, բայց հրավիրեց նրան հաց ուտելուն մասնակցելու: Նրանց ճաշակելիքը համեստ էր. հաց, պանիր, մի կտոր միս ու սոխ: Մենք մեր ծուղակում անհամբեր սպասում էինք ջրաղացպանին, բայց նկատեցինք, որ նրանք նստած զրուցում էին: Վերջապես թիկնապահը վեր կացավ, թամբեց ձիերը և մոտեցրեց: Ցեղապետ բեկը վեր կացավ, ջրաղացպանը խուրջինը վերցրեց, մտավ ներս, պատի պահարանից մի քանի հաց դրեց մեջը և մոտենալով բեկին՝ ասաց, որ ինքը ուտելու լավ բան չունի ու ձիու գլուխը շոյելով՝ օգնեց բեկին նստել: Նրանց ուղեկցելուց հետո ճրագը ձեռքին ներս մտավ: Նկատվում էր ջրաղացպանի ֆիզիկական և հոգեկան խոր հոգնածությունը, բայց նա մեծ կամքի տեր մարդ էր: Նա ստուգեց, դասավորեց իր աշխատանքը և մի-մի անգամ էլ դուրս ու ներս գնալ-գալով՝ դուռը ծածկեց և մոտենալով՝ մեզ կանչեց.*«Է՜հ,-հառաչեց նա,- տեսնում եք իմ հալը /վիճակը/, ի՞նչ անեմ, ուրիշ փեշակ չունեմ, պետք է յոլա գնամ...»*: Նորից դուրս գնալով՝ փայտ, վառելիք բերեց և խնդրեց, որ օգնենք, թոնիրը վառենք, իսկ ինքը, մի ոչխարի կոտոշներից քաշելով, խանչալը հանեց և մենակ, ոտքը մեջքին սեղմելով, մորթեց ու մարմինը ներս բերեց: Զանոն ու Մարթան թոնիրը վառել էին, ծուխը ներս էր լցվել, բայց ջրաղացպանը չէր ուզում դուռը բացել: Մեզ ուշադրություն չդարձնելով՝ պատի տակ դրված պղինձը վերցրեց, ոչխարի ճիգարը քցեց մեջը, դրեց թոնրին և շարունակեց ոչխարի փորոտիքը հանել, մաքրելը: Վերջացնելով իր գործը՝ արնոտ ձեռքերը լվաց, վերցրեց խմորի պնակը և ալյուր լցնելով՝ կանանց առաջարկեց հունցել:

Մենք մինչև այդ րոպեն լուռ էինք և զարմացած՝ նրա եռանդի ու քրտնաջան շարժումների վրա: Այդ մարդը գրեթե անքուն, գիշեր-ցերեկ աշխատում էր, դադար չուներ, հիմա էլ շարունակում էր զբաղվել ուտելիք պատրաստելով ու հաց թխելով: Հունցը պատրաստ էր: Սկսեցին գնդել ու շարեցին թոնրի մոտ: Ջրաղացպանը նայեց կանանց, նկատեց ու զգաց, որ նրանք հաց թխել չեն կարող և մոտենալով թոնրին խմորի գնդերը իր մազոտ, կոպիտ ձեռքերում տափակացրեց, հապճեփ փակցրեց թոնրի կողերին, հետո բերեց ոչխարը, կասկարից[182] կախեց թոնիրը և բերանը կիսով փակելուց հետո եկավ նստեց իր կարպետին, թեքվեց իր փոշոտված անկողնուն ու հրավիրեց մեզ նստելու: Քանի որ նա ինձ չէր տեսել, ես չներկայացա: Կանայք մոտեցան և սպասեցին քրդի խոսելուն, բայց նա լուռ էր: Մարթան, որ ավելի հասակով էր, խոսեց.*«Քո՛րդ ախպեր, մենք քեզ շատ նեղություն պատճառեցինք, թո՛ղ Աստված քեզ հատուցի, գիշեր է, ուզում ենք գնալ»*: Նա, առանց նայելու, տնքալով ասաց.*«Մի քիչ էլ սպասեք, թող հացը պատրաստ լինի, կերե՛ք, գնացեք»*: Նա շատ հոգնած էր, թուլացած, խոսում էր աչքերը փակ՝ կնճռոտելով ճակատը, բռունցքն ինքն իրեն սեղմելով: Նրա մարմնի բոլոր մկանները անհանգիստ

էին: Մեր ուշադրության կենտրոնում էր նրա դեմքը, թե ինչպիսի միմիկաներով էին շարժվում նրա շրթունքները, ունքերը: Նրա աչքերը մեկ կծկվում էին, մեկ փոս ընկնում: Մոտենում էր կեսգիշերը: Դրսում լռություն էր և ամայություն: Մեզ մոտ ջրաղացի չխչխիկները համաչափ չխկչխկում էին և նրանց ձայնից ջրաղացպանը հասկանում էր, թե որի ցորենը վերջացավ: Նա գլուխը բարձրացրեց, կարծես խոր քնից արթնացավ, կանգնեց, գնաց դեպի երկրորդ աղացը և երկու պարկ ցորեն լցնելով ամբարը՝ իջավ ու թիակով ալյուրը սկսեց լցնել հարմարեցված պարկի մեջ: Զգալով եփվող հացի ու մսի հոտը՝ նա թիակը ձեռքին կանչեց.«*Քուրո՛, քուրո՛, թոնրի բերանը բացեք, հացն ու միսը եթե կարող եք հանեք*»: Կանայք անմիջապես կլանվեցին այդ դժվարին, բայց շատ դուրեկան գործով: Ջրաղացպանը, ստուգելով մյուս աղացները, եկավ, հացի սեղանը պատից իջեցրեց: Կանայք բերեցին կարմրած ջիգարի պղինձը, տաք բաղարջները դրեցին սեղանին, քուրդն էլ խանչալով կիսեց խորոված ոչխարի կեսը և սեղանին դնելով՝ ասաց.«*Դե կերե՛ք, վաղուց էապես տաք-տաք բան չեք կերել*»: Սառան, համոզվելով քուրդի անկեղծության մեջ, ասաց.«*Մենք բոլորս էլ անտեր կանայք ենք, մեր բախտը բերեց, որ քեզ նման բարի մարդու հանդիպեցինք, քանի գիշեր է, մենք պետք է հեռանանք*»: Քուրդը չառարկեց, իր խորհրդավոր աչքերը սևեռելով նրանց վրա, ասաց.

-Ո՞նց պիտի գնաք և ու՞ր, կամրջով անցնել հնարավոր չէ: Վերևի ճամփեքը զբաղեցրել են մեր քրդերը: Վերջին օրերս մի հայ տղա է բռնվել ու փախել: Ծապրկորի բոլոր ճամփեքը լիքն են ժանդարմիայով, շատ վտանգավոր ժամանակ է: Ափսոս, որ քրդերեն չգիտեք, որ ես ձեզ տանեմ և իմ ծանոթ քրդերի միջով անցկացնեմ,-ու լռեց:

Կանայք վեր կացան, վերցրեցին իրենց փոքր կապոցները և շարժվեցին դեպի դուռը: Սառան բռով լիքը ոսկին երկարացրեց քրդին: Նա հրաժարվեց փողից: Մարթան հանդգնեց հարցնել.«*Էն պղայի մասին, որ խոսեցիր, ի՞նչ եղավ*»: Քուրդը դժկամորեն մրմնջաց.«*Ի՞նչ եղավ, ասում են՝ փախչելիս գերեզմաններում շների հետ խփել են*»: Մի պահ լռությունից հետո, Մարթան, կարդալով քրդի վշտալի հայացքը, ասաց.

-Քու՛րդ ախպեր, էն տղան ողջ է, չես նեղանա, եթե նա դուրս գա:

Քրդի աչքերը կայծակեցին, նա ուղղվեց իր հասակով մեկ և ասաց.«*Նրա մասին շատ բան են պատմել, թո՛ղ գա ինչ մուր, ես նրան մի կերպ կպահեմ*»,-ու երդվեց Մուհամմեդ փեխանբարով և բոլոր Աստվածներով: Լսելով քրդին՝ Մարթան, իմ անունը տալով, կանչեց: Ես իսկույն ներկայացա: Նրանք թափ տվեցին իմ վրայի ալրի փոշին: Քուրդը ճրագի լույսով նայեց երեսիս և ասաց.«*Դու Իսմայիլ աղայի պահած տղա՞ն ես*»,-ու լռեց: Ես մերժեցի քրդի թախանձագին խնդրանքը: Սառան շտապեցրեց մեր դուրս գալը: Ամպամած գիշեր էր, բացի ջրաղացի ու գետի ջրերի ձայնից, ոչ մի շշուկ չկար: Քրդին վերջին անգամ մնաս բարով ասելով՝ բաժանվեցինք և անցնելով ջրաղացի հետևը, կանայք իրենց շորերը քշտելով, վեր բարձրացնելով՝ անցանք գետի մյուս ափը և սկսեցինք ճանգռտելով, մագլցելով ձորնիվեր բարձրանալ: Հասանք Ալմոյենց տները և որոշեցինք գնալ գոռները:

Պատահարներն ու անակնկալները մեր գլխից անպակաս էին: Դեռ գոռներ չհասած՝ նկատեցինք երկու ժանդարմի, որոնք մի կնոջ բրդելով՝ դարնիվար, իջնում էին ձորի ուղղությամբ: Մենք անտարբեր լինել չէինք կարող: Սառան կողմնորոշեց մեզ, և մենք հինգ-վեց քայլ հեռավորությամբ՝ թմբերին հենվեցինք: Նրանք մոտենում էին: Նկատեցինք գզգզված ու արյունոտ շորերով կնոջը: Նա հազիվ էր քայլում: Լսելի եղավ ժանդարմի վերջին խոսքը.« *Վուր կիտսըն՝ խփիր, թող գնա*»: Մեր աչքի առաջ տեսանք՝ կինը անձայն ընկավ դաշույնի երկու հարվածից: Սառան գայթակղված կանգնեց նրանց դիմաց: Ժանդարմը իր դաշույնի արյունն էր մաքրում՝ քսելով գալարվող զոհի շորերին: Սուրաց երկու գնդակ: Ժանդարմը, դաշույնը ձեռքին, թավալվեց գետնին: Մյուսը, որ գանոն չավուշի համազգեստով էր, չընկալելով պատուհասը, բնազդորեն ինքնապաշտպանության դիմեց, ձեռքը տարավ կողքին, բայց արդեն ուշ էր: Զանոն ետևից՝ երկու քայլ հեռավորությունից, երկու գնդակ պարպեց գլխին ու մեջքին: Այս անակնկալը մեր վիշտը կարծես որոշ չափով թեթևացրեց: Մթին ստուգելով՝ հագուստներից իմացանք, որ գեղջուկ կին էր, անհայտ կորածներից: Գոռներում մենք ապաստանեցինք քարանձավում: Այս գիշերվա պատահարը մեզ համար ավելի բարդ վիճակ ստեղծեց: Պարզ բան էր, որ ոստիկանությունը մեր թաղում պահակային հսկողությունը ավելի կուժեղացներ: Դեպքը կատարվել էր գերեզմանների ու գոռների սահմաններում, հետևաբար գոռների քարանձավում մեր մնալը վտանգավոր էր, ուստի որոշեցինք, քանի դեռ մութ էր, տեղափոխվել վերև, բայց Սառան կտրուկ հրաժարվեց, բացատրելով.

-Ատրճանակի ձայնը անպայման լսվել է թաղային պահակակետերում, և նրանք անշուշտ վխտում են ճանապարհների վրա և նեղ փողոցներում[183]:

Մնում էր մի ելք. չորսով գնացինք Իսմայիլ աղայի նկուղը՝ հաջորդ օրը մի ուրիշ վայր փոխադրվելու պայմանով: Անմիջապես կուզեկուզ՝ ձեռքերի թաթերի վրա գոռներից անցանք Սուլեյման խանի այգիների միջով, հասանք ծուռ Մժոյենց տանիքը: Ես իսկույն լուսամուտից ներս մտա, ներսից այգու կողմի դուռը բացի: Մերոնք զգուշությամբ սրտատրոփ եկան: Անմիջապես նկուղի գաբանքը՝ դռնակը բացի, և երեքն էլ իրար ետևից ներքև իջան: Իսկ ես, գաբանքն ու դրսի դուռը փակելուց հետո, դանակով սողնակը բացի ու մտա թոնրատան կողքի մառանը, որտեղ պատերի կողքին շարված էին դարերից մնացած ալյուրով, կորկոտով, ցորենով հողե կարասներ: Հին կարասների մի մասը դատարկ էր: Մառանը լուսամուտ չուներ, միայն առաստաղի փոքր երդիկից էր աղոտ կերպով լուսավորվում: Կանանց նկուղը համեմատաբար ավելի նախանձելի էր, քան իմ մառանը, քանի որ այստեղ ազատ վխտում էին մկները և ճտճստում: Երկու օր մենք այս պայմաններում մնացինք: Ես գիշերները գնում էի մերոնց մոտ: Մենք մեր կյանքից արդեն բեզարել, հոգնել էինք, բայց էշ նահատակ դառնալ չէինք ուզում: Նկատի ունեինք տեղափոխվել Եզդանենց տների ներքևում գտնվող հինավուրց մի շենք, որը ստորերկրյա անցքով հասնում էր գետաբերանին՝ Թորոսիկի ջրաղացի մոտ, բայց այս տանը ուտելու բան չկար: Սառան ու Զանոն որոշեցին գիշերը տեղափոխվել:

Հնարավորին չափ իրենց հետ վերցրեցին կորկոտ[184], ճավար, հաց, աղ և իրենց փոքրիկ բոխչաները բռնած՝ երեքով դուրս եկանք: Նկուղում մնաց Մարթան: Անցանք այգիներով, մեր տան կողքով, իջանք ձորը, գետի եզերքով հասնելով շենքի ստորոտը՝ նորից ձորակի արանքով բարձրացանք այդ՝ դեռ կոտորածից առաջ կիսավեր շենքի բակը, որը ո՛չ դուռ ուներ, ո՛չ լուսամուտ, ներս մտանք:

Ինչպես նշել եմ, այս շենքը պատկանում էր ջանֆիդայեցի Եզդանենց Մուշեղին, որը Սերոբ փաշայի զինակիցներից էր: 1905 կամ 06 թթ.սուլթան Համիդի հրամանով, որպես ապստամբ հպատակ, թուրքերը կոտորեցին նրանց: Ողջ ընտանիքից ազատվել էր միայն երեք տարեկան Մուշեղը: Այդ ժամանակվանից էլ այդ շենքում ո՛չ հայերը, ո՛չ էլ թուրքերը չէին ցանկանում բնակվել: Շենքը ավերակ բերդի տպավորություն էր ստեղծում: Մեզ հետ բերած նավթի ճրագը վառելով՝ ուսումնասիրեցինք անցքերը, ելքն ու մուտքը, բայց ստորգետնյա ճանապարհը չգտանք: Լուսաբացին, զգուշությամբ նայեցինք դեպի վերև՝ այգու, պարտեզի կողմը, ոչ մի կասկածանքի առիթ չկար: Վերևի այգուց մի փողան այն կողմ՝ կուլուխն էր: Ապրելու համար այստեղ ավելի ապահով էր, բայց կենսական միջոցները մեծ դժվարություններ կառաջացնեին: Վերևի կողմ գնալ հնարավոր չէր, իսկ քիչ ներքև կային մի քանի տներ, որոնք փողոցի վրա էին գտնվում, և որոնց դռները ոստիկանությունը կնիքել էր: Սառան ու Զանոն որոշեցին մնալ, և հաջորդ գիշեր ես վերադարձա Մարթայի մոտ: Մարթան, լսելով ինձ, ցույց տվեց իր բացասական տրամադրությունը.«*Ճի՛շտ է,*-ասաց,-*ապահով տեղ է, գնանք քնենք, մեռնենք, կամ սպասենք, թե երբ կգան մեզ մորթելու»:* Հաջորդ գիշեր Մարթայի հետ ավելի շատ պաշար և մի փոքր գորգ վերցնելով՝ հազար ու մի դժվարությամբ հասանք այդ նզովյալ տունը: Հինավուրց կառույցի պատերում կային պահարաններ: Սկսեցինք ստուգել, և իրոք առաջին հարկի պահարանի սալիկի տակից բացվում էր անցքը: Մարթան՝ հագուստները հագին, վերցրեց ճրագը և սկսեց իջնել: Հինգ-վեց աստիճանից հետո անցքը լայնանում էր, հասնելով դեպի գետը՝ մինչև Թորոսիկի ջրաղացի դիմացի գետեզրի ժայռ քարերի արանքը: Երևացին լույսն ու ջուրը:

Գիշերը աշխատանքի անցանք: Ամենայն զգուշությամբ, Զանոյի ու Մարթայի ուսերի վրայով, ես բարձրացա այգու կողմից հարևան շենքի լուսամուտին: Դանակով ճաղերը տեղահան անելով՝ ներս սողացի: Ի զարմանս ինձ՝ ամեն ինչ կարգին, տեղն ու տեղն էր. հատակին՝ գորգի վրա փռված էին անկողինները, թոնրատանը ճաշի պարագաները, առաստաղից կախված լավաշ հացը և բոլոր տնային իրերն ու գույքը գտնվում էին իրենց նախկին վիճակում: Օդաների կահկարասին նույնպես անձեռնմխելի էր մնացել: Ես, մոտենալով լուսամուտին, կարճ ասացի, որ այստեղ ամեն ինչ կա: Սառան, լսելով ինձ, ասաց.«Լուսամուտի ներքևի ճաղերը թուլացրու»,-և նույնպես Մարթայի ու Զանոյի ուսերի վրայով բարձրացավ ու մեծ տանջանքներով լուսամուտից ներս մտավ: Լուսամուտը շորով ծածկեցինք: Սառան վառեց կախովի լամպը: Սնդուկներն ու պահարանները լեփլեցուն էին: Մառանում՝ յուղ, պա-

նիր, չոր մրգեր, կարասներում՝ ալյուր, կորկոտ, ձավար և այլ մթերքներ: Անմիջապես երկուսով, լուսամուտի ներքևի երկու ճաղերը թուլացնելով, իջեցրինք չորս վերմակ, երկու բարձ: Սնդուկից Սառան վերցրեց սպիտակեղեն, թոնրատնից մեծ և փոքր երկու պղինձ, գդալ, աղ, յուղն ամբողջությամբ: Սավանի մեջ կապով ալյուր, կորկոտ, ձավար լցրեց, պանիրը փչացել էր, լվացքի պարանով բոլորը ներքև իջեցրեցինք: Լամպը մարեցինք, Սառայից հետո ես իջա, և մրջյունի աշխատասիրությամբ, յուրաքանչյուրս մեզանից մեծ ու ծանր բեռով, ահով, սարսափով շարժվեցինք դեպի մեր նոր կացարանը և բարեհաջող հասանք ու տեղավորվեցինք: Օգտվելով մեր բակում հոսող առվի ջրից՝ կանայք լողացան, լվացք արեցին: Մի քանի օր զբաղվեցինք մեր տնտեսության կազմակերպությամբ:

Մոտենում էր աշունը: Երեք օր էր, որ դրսից կտրվել էինք: Համբերությունները հատել էր, հո ծալապատիկ չպետք է նստեինք: Սառան չէր մոռացել քուրդ ցեղապետին, որն տասնյակ հայ գյուղերի կոտորածի «հերոսն» էր ու թալանչին: Գիշեր էր, կիսաքուն պառկած էինք իրար կողքի: Հանկարծ Սառան վեր կացավ և մեզ հայտնեց, որ ինքը գնալու է ջրաղացպան քրդի մոտ և շուտ կվերադառնա, իսկ ինձ պատվիրեց հանդիպել Իսմայիլ աղային և նրան հայտնել, որ իմ՝ ջրաղացում թաքնվելու ժամանակ, քուրդ ցեղապետը թշնամաբար էր խոսել նրա մասին: Երկուսով անցքով իջանք, միասին գետի եզերքով չփչփալով՝ Խանոյենց այգիների մոտից բաժանվեցինք, ես՝ դեպի աղայիս տունը, նա՝ ջրաղաց:

Ջրաղացպանի համար անսպասելի էր հայ կնոջ հայտնությունը, բայց Սառան, նրա թևից ձգելով, նստեցրեց իր կողքին.

-Քու՛րդ աղբեր, ես անպայման պետք է տեսնվեմ ցեղապետ բեկի հայ կանանց հետ: Կարո՞ղ ես ասել, նրանք որտեղ են իջևանել:

-Ա՜յ քուրո, հո գժվել չես, նրա շարժական քոշքը Թաղիգլուխ չհասած՝ Դաստալոշիր կոչվող սարի լանջին է: Դու էնտեղ չես կարող հասնել,-և այլ համոզիչ խոսքերով ստիպում էր հրաժարվել այդ մտքից,-միևնույն է, դու ոչ առ ողջ կարող ես մտնել նրա օդան, եթե նույնիսկ գիշերով էլ գնաս, նրան շրջապատող քրդերի ձեռքից չես ազատվի:

-Ա՜յ քուրդ ախպեր, դու հայերի տերտերների նման սաղմոս[185] մի կարդա գլխիս: Ես մեռած և հարություն առած կին եմ: Դու մինչև վաղը կեսօրին քրդի կանանց շորեր պիտի ճարես: Փողի մասին չենք խոսի, ես կմնամ էստեղ, մինչև դու դասավորես:

Քուրդը նորից ուզեց խոսել, համոզել, բայց հայ կնոջ կամակորությունը հաղթականորեն քրդին ենթարկեց իրեն.

-Քու՛րդ ախպեր, ես քեզ մոտ եկել եմ որպես բարեկամ, երեք օր առաջ մենք միասին աղ ու հաց կերանք: Արի՛, չհարամենք: Լավ իմացի՛ր, ես հայ կին եմ, բայց…,-հագուստի փեշը դեն տանելով՝ ցույց տվեց ատրճանակն ու խանչալը:

Քուրդը ուզեց ցույց տալ իր արիությունը և ձեռքը խանչալին տանելով ու ձախ գրպանից ատրճանակը հանելով, սպառնալով՝ ասաց.

-Ի՞նչ է, դու ինձ վախեցնում ե՞ս: Աստվա՛ծ, դու շառից պահես: Աղջի՛, դու հո խաթաբալա չես: Ձեզ պահեցի, կերակրեցի, հիմա էլ իմ գլխի հետ ես խաղու՞մ»:

-Աղբերացու՛, հանգիստ եղի՛ր և լավ իմացի՛ր, եթե հայ կինը ձեռքը զենք է վերցրել, դա իր նպատակն ունի: Քեզ թո՛ղ զարմանալի չթվա, լա՛վ իմացիր, ով որ մեզ վրա զենք բարձրացնի, նա առաջինը կմեռնի, իսկ ես ու մերոնք մեռած ենք ու մեռած…

Քրդի գլխից կարծես շոգի էր բխում, քոլոզը հանեց, երեսը սրբեց, կուժը վերցրեց, կլկլալով ջուրը խմեց: Սառան, որպես հավասար տղամարդ, կուժը նրա ձեռքից վերցնելով, կուշտ խմեց և դառնալով քրդին՝ ասաց.

-Հիմա մենք հալալ քույր-եղբայր ենք: Դե՛, պառկի՛ր, քնի՛ր մինչև առավոտը, ես էլ կգնամ իմ տեղս,-կատակով ավելացրեց,-ու ինձնից չվախենաս:

Քուրդը մի քանի րոպե աղացները ստուգելով՝ ծեծվող կորկոտի սանդի վրա ջուր լցրեց, թիակով խառնեց, մյուս աղացների ամբարները ցորեն լցրեց, ալյուրը դեն քաշեց և նայեց հայ կնոջը, որ անհոգ մեկնվել էր, ու գնաց քնելու:

Լուսադեմին՝ հո, բո, չո, գոռգոռոցներով շարժվեց ցաք ու ցրիվ թուրք գաղթականությունը: Քյասիբ-քյուսուբ քրդերի խմբերը, իրենց նախիրներով ու հոտերով, ճանապարհի նեղության պատճառով իրար հրմշտում էին, միշտ զոռբաներն էին առաջ ընկնում: Ջրաղացպանը մոտեցավ, առանց հարցնելու, բակում տեսավ տասնհինգ-քսան հոգի, որոնք իրենց էշերից ու ջորիներից բեռները թափել ու վիճում էին իրար հետ: Ջրաղացպանը, մարդասիրություն ցուցաբերելով, առաջնություն տվեց երեք-չորս քուրդ կանանց և նրանց կարգադրեց իրենց բեռները ներս տանել, իսկ թուրք կանանց վրա ուշադրություն չդարձրեց: Աղունները ներս բերելուց հետո, ըստ քրդական սովորության, սոխ ու պանիր բերին ջրաղացպանին հյուրասիրելու: Քրդերի սովորություններում կինը բաց ճակատով ազատ ու համարձակ ման էր գալիս: Ջրաղացպանը մի քանի բաղարջ բերեց, քրդերը՝ իրենց սաջի վրա եփած լավաշը, և սկսեցին միասին ճաշակել: Մեր բարերար քուրդը, շռայլ խոստումներով քրդուհիներին առաջարկեց իր կնոջ ու աղջիկների համար շորեր բերել.*«Ով շուտ բերի, նրա աղուն պատրաստ կլինի, դեռ մի բան էլ նվեր կտամ, միայն թե կնոջս սրտովը լինի»*: Հացկերույթը վերջացնելով՝ կանայք դուրս եկան և ցրվեցին՝ ամեն մեկը իր *յուվան*: Չորս քրդուհիների փոխարեն եկան յոթ-ութ քրդուհիներ՝ բերելով իրենց կարած ասեղնագործած հագուստները, սկսած գլխի շիրմայից, դնչակապից, մեզարից[186], սրտանոցից, անթարիից, կտավե՝ շիլա, նախշուն գուլպաներից, ասեղնագործ թումբանից ու շապիկից: Ջրաղացպանը նազ ու տուզով սկսեց ընտրել: Չորս ձեռք վերցրեց և բոլորին արծաթե փողով լիառատ վարձատրելով՝ խոստացավ հաջորդ օրը աղունները հանձնել: Բոլորը գոհ հեռացան իրարից: Երեկոյան երկու ձիավոր քրդեր եկան ջրաղացպանի մոտ և ցեղապետի անունից պահանջելով մնացած աղուն՝ հեռացան: Ջրաղացպանը, ձեռքը սրտին դնելով հայտնեց.*«Աչքիս վրա, պատրաստ է, կարող եք տանել»*:

Աշխատանքային եռուզեռի մեջ էր ջրաղացպանը: Խառնիճաղանջ ձայներով քուրդ ամբոխը շտապում էր: Բակում տեղ չկար, յուրաքանչյուրն ուզում էր, որ ինքը շուտ վերջացնի-գնա, և այսպիսով նրանց գոռգոռոցներն ու էշերի զռռոցները խայտաբղետ տպավորություն էին թողնում: Արևամտին քուրդ ցեղապետի կողմից դարձյալ եկան երկու քուրդ: Նրանք իսկույն բարձան աղուները և ուզեցին մեկնել, բայց ջրաղացպանը, մեկին ներս կանչելով, հարցրեց.«*Մեյի՛դ, բեկը երեկ շատ ջղայնացած էր, ի՞նչ է պատահել»:* Քուրդը հորանջելով պատասխանեց.

-Մի շան որդի թուրք չորս ժանդարմիայով բեկից պահանջել էր մեր թալանի կեսը հանձնել հյուքյումեթին: Հալա /դեռ/ ուզում են, որ մեր քրդերից երկու-երեք հարյուր հոգի գնան կռվելու: Բեկը մերժեց և մեզ հրամայեց մինչև վաղը դուրս գալ քաղքի սենորից /սահման/: Թուրքի և ժանդարմի գնալուց հետո բեկը հիսուն ոչխար ուղարկեց էն կեղտոտ թուրքին, բայց նա փաշայի անունից պահանջեց հանձնել կովերի ու ոչխարների կեսը: Խոսքը մեր մեջ, բեկը հանձնարարեց էսօր կամ վաղը գիշերը էդ շանը սատկացնել: Ասում են, որ նա էս վերևումն է ապրում և սալախների /մսավաճառների/ ջոջն է ու հյուքյումեթի մարդն է, անունն էլ Իսմայիլ աղա:

Չնայած Սառան այս խոսակցությունը ականջները լարած լսեց, բայց ոչինչ չհասկացավ: Միայն «Իսմայիլ աղա» բառը նրան անհանգստացրեց:

Մինչև մութն ընկնելը՝ քրդերը բակից չքվեցին, որը՝ գոհ, որը՝ դժգոհ, մի քանիսը նույնիսկ սպառնալիքներով ջրաղացպանին ստիպեցին շտապ կատարել իրենց պահանջները: Ջրաղացպանը դուռը փակեց, ճրագը վառելով՝ կանչեց Սառային: Նրանք նստեցին սադրի վրա: Բերեց շորերը և ցույց տալով՝ ասաց.«Վերցրու»: Սառան ընտրեց իր ցանկացածները և տոպրակի մեջ տեղավորելով, մատը շրթունքներին տանելով՝ հիշեցրեց, որ գլխի թասկալ[187] չկա: Քուրդը քմծիծաղով ասաց.«*Քո ընչի՞ն է պետք*»: «*Հալա՛լ աղջիկ, ինչ դա անհրաժեշտ է»:* «*Լավ*,-ասաց քուրդը,-*իմ սնդուկում կա, բայց հիշատակ է, եթե կիսուպանաս հետ բերել, կտամ*»: Սնդուկը դրված էր սադրի անկյունում: Նա սնդուկի կողպեքը բացեց.«*Ջոկի՛ր, քեզ ինչ պետք է, վերցրու*»: Սառան, քրքրելով սնդուկը, վերցրեց արծաթազարդ թասկալը, փյուսկյուլներով գլխաշորը և մի զույգ սոլ /չուստ/: Սնդուկում կային քրդական տարազի տղամարդու ընտիր հագուստներ և այլ իրեր: Սառան առանց ամաչելու և քաշվելու թասակը գլխին փորձեց: Քուրդը, աչքի տակով նայելով, ժպտաց: *«Էս քսան-երեսուն ոսկի արժե: Վերցրու էսքանը*,-մի բուռ ոսկի տալով՝ ասաց,-*հա էլի կվճարեմ, ապահով եղիր»*: Քուրդը չվերցրեց, բայց Սառան ձեռքինը պարպեց սնդուկի շորերին և դառնալով քրդին՝ լրջորեն հարցրեց.«*Էն մարդու հետ էդ Իսմայիլ աղայի մասին էիք խոսում»: «Քուրո՛, քրդերը շատ քենով մարդիկ են»*,-և կարճ պատմեց նրանց մտադրությունների մասին: Գիշերվա աղջամուղջին Սառան հեռացավ ջրաղացից և երկու ժամից նա մերոնց մոտ էր:

Ես աղայի տանը ծպտյալ սպասում էի աղախնի երևալուն: Բարեբախտաբար այդ օրը նա լվացքով էր զբաղված: Օգտվելով առիթից, որ նա թոնրատանը մենակ էր, ես մոտեցա նրան:

-Նուրի՛,-ասաց նա,-էս քանի օր է աղան շատ դիլխոր /տխուր/ է: Հիմա էլ քրդերի հետ է կռվել: Վաղը գնալու է Տիարբեքիր: Խանումի եղբայրը երդվել է քենը հանել: Երեք օր առաջ գերեզմանների ներքևը երկու ժանդարմ են սպանել: Ասում են գյավուրներ կան էս թաղում,-և զգուշացրեց, որ հանկարծ դրսում չերևամ:

Ես, միամիտ ձևանալով, օգնեցի նրան օջախը վառել, ջուրը թափել և այլ մանր գործեր անել: Հենց որ դուռը թակեցին, ես նորից անհետացա:

Կեսգիշերին մենք չորսով միասին նստած էինք: Մեր նոր կացարանը առայժմ ապահով էր և կասկածելու հարկ չկար: Նստած խոսում էինք, մեր բերած տեղեկություններն էինք կշռադատում: Սառան վեր կացավ, գնաց կից սենյակը: Մենք դեռ զրուցում էինք, երբ հանկարծ մեր դեմ կանգնեց հոյակապ հագուստով մի քրդուհի: Մի պահ մենք շշմեցինք: Մարթան ձեռքը բարձի տակ տարավ, ես՝ գրպանս: Զանոն լուսամուտից նայում էր: Նա մեզ երկուսիս լռության նշան արեց՝ մատը քթին դնելով: Մենք ծիծաղեցինք, Զանոն շրջվեց մեր կողմ և քրդուհուն տեսնելով ու մեր ծիծաղը լսելով՝ զարմացավ, նրան տեսիլք էր թվացել: Մի քանի անգամ աչքերը թարթելով՝ զարմացած հայացքով պապանձվեց, ապա զգաստացավ և փաթաթվեց Սառային: Առանց մեզ հարցնելու՝ նա հրամայական տոնով ազդարարեց.

-Վճռված է, ես գնում եմ Թաղիգլուխ՝ մինչև Դաստալոշիր, քուրդ ցեղապետի դենայի կողմերը: Նրան մեջտեղից պետք է հանել,-դառնալով ինձ՝ ասաց,-դու կգաս ինձ հետ մինչև Թուզխազյանների տան կամրջի մոտ և կվերադառնաս հետ:

Վիճելն ավելորդ էր: Վերցրեց մի փոքր բարձ, փաթաթեց, կապկպեց, բալուլ դարձրեց, ողջագուրվեց մեզ հետ, և նավթի պատրույգի լույսով, միասին ստորգետնյա անցքով իջանք մինչև գետը, անցանք Թորոսիկի ջրաղացի փայտե կամրջով, ձորի միջով բարձրացանք մինչև ճանապարհը: Մի քանի րոպե կամրջի տակ հանգստանալով՝ սպասեցինք մինչև իշաբեռերով անցորդները հեռացան: Սկզբում ես բարձրացա ճամփի վրա, նայեցի դես-դեն, ապա Սառան՝ երեխան շալակին, գլուխը հին շորով փաթաթած: Թևս բռնելով և համբուրելով՝ ասաց.*«Գնա՛ և աղջիկներին ասա՛, հաջող է»*: Նա առույգ և հպարտ քայլվածքով գնաց: Մոտ երկու հարյուր քայլ հետո թեքվեց դեպի վերևի ձորն ու անհետացավ իմ աչքից: Տաս րոպեից ես սկսեցի ետ վերադառնալ: Մոտ երկու ժամից ես մերոնց մոտ էի, և մենք նախանձեցինք այդ հանդուգն կնոջ վճռականությանն ու աներկյուղությանը: Երեք անգործ էակներս միասին մեղադրեցինք մեկս մեկիս՝ մեր թուլության, անշնորհքության համար, բայց քննադատությամբ գործը չէր լինի, ընդհակառակը՝ շեղում էինք մտքերը: Քաջասիրտ Մարթան այլևս չհամբերեց և կտրուկ ասաց.*«Ես չեմ կարող ձեռքերս ծալած նստել»*,-և քրքրելով Սառայի բերած բոխչան՝ իսկույն հագավ քրդուհու անթարին, գլուխը սև շորով փաթաթեց և ինձ ասաց, որ այսօր երեկոյան գնամ ջրաղացպանի մոտ՝ հետևանքների մասին տեղեկանալու: Նա նույն ճամփով գնաց Սառայի կողմը:

Դեպքերն ու արկածները ինքնաբերաբար չեն լինում: Քենն ու ոխը դրդում

են մարդկանց պայքարելու և անձնուրաց գրոհով նետվելու դեպի մահը, հագուրդ տալու սրտում բույն դրած վրեժխնդրությանը, միայն թե կամք ունենալ, չընկճվել ու չվհատվել: Մեր նշանաբանն ու մեր ուխտը մեզ ոգեշնչում էր մենամարտի բռնվել թեկուզ մեզանից գերազանց ուժերի հետ, միայն թե անփառունակ չմեռնել:

Առավոտ էր, կիսաքակտ լուսամուտից ներթափանցեց արևի շողը: Զանոն, ատամները կրճտացնելով, գալարվում էր ինքն իր կաշվի մեջ: Զաքարիայի պապանձում[188] ոչ մի խոսք չփոխանակեցինք: Դժվարին պահեր էին: Մեր մտքերն ու երևակայությունը կենտրոնացած էին Դաստալոշիրի բլրակին: Սառան կամրջակի մոտ էր: Քրդերն, իրենց քոշքն ու քենան[189] հավաքելով, չվում էին. ենթադրություններ, հուզող մտքեր, բայց Մարթայի վիճակը մեզ պարզ չէր: *«Ա՜խ,*-գոչելով՝ հանկարծ պոռթկաց Զանոն,*-գոնե իրար տեսնեին, մեկզմեկու իմաց տային»*,-ու սկսեց դառն հեկեկալ: Ես մոտեցա, փաթաթվեցի Զանոյին: Նա գլուխս գրկեց՝ կրծքին սեղմելով: Նրա արցունքները հատ-հատ ընկնում էին իմ դալար վզին, ջերմացնում՝ շանթահար անելով սիրտս ու հոգիս: Ինչպիսի դառնությամբ և զգացմունքներով է մահվան դատապարտվածը սպասում դահիճի զարկին, այդպես էլ մենք էինք սպասում երեկոյին, բայց այդ ցերեկը շատ երկար տևեց: Մութը փախել էր, անհամբերությունը տանջում էր, խելացնորի դարձնում: Երեկո էր: Մի քանի անգամ ուզեցի դուրս գալ, բայց Զանոն չթողեց:

Գիշերային աղջամուղջին Զանոյի հետ մեր թաքստոցից դուրս եկանք և սովորական ճամփով սայթակելով, ընկնելով ու վեր կենալով՝ հասանք Մոլլի կամրջի մոտ: Զանոն թաքնվեց գետեզերքում, ես գնացի ջրաղաց: Նկատեցի, որ բակում մի քանի էշեր կային, դուռը բաց էր, մարդկային շարժում չկար: Փորսող, ծնկաչոք մոտեցա դռանը: Ոչ մի ձայն: Նույնիսկ չխչխիկների ձայներ չկային: Մութ էր, ճրագը չէր վառվում: Մի տեսակ հիասթափությունը ինձ կլանեց: Ի՞նչ անել, ներս գնալ՝ վտանգավոր էր, չէ որ էդ բակի էշերը տեր ունեին: Մի պահ մնացի անորոշ վիճակում: Խելքս փչեց, բարձրացա ջրաղացի տանիքը: Նկատեցի, որ ջրաղաց աշխատեցնող բոտերը փակ էին: Չմտածելով հետևանքների մասին՝ երկու ձեռքով քաշեցի բոտի դռնակը: Ջուրը ուժգնորեն շառաչեց դեպի բոտի ներսը, լսվեց ջրաղացի չխկչխկոցի ձայնը: Ակամա զգուշանալով՝ ես նորից իմ ամբողջ մարմնով ընկա դռնակի վրա, ջրի հոսանքը փակվեց: Ես, մտնելով առուն, հոսանքն ի վեր բարձրացա մինչև մոտակա կամրջակի տակը: Այնտեղից գաղտագողի ստուգելով ու մարդկային շարժումներ չտեսնելով՝ նորից իջա ներքև: Համոզված լինելով, որ ջրաղացում մարդ չկա՝ անցա, մտա անկյուն և մի պարկով ծածկվեցի: Համբերությունս հատնեց, դուրս եկա, գնացի դեպի Զանոն, չէ որ նա ինձ էր սպասում: Ուրիշ ելք չկար. ես կոյուղու անցքով Զանոյին բարձրացրեցի Իսմայիլ աղայի նկուղը, և նորից վերադարձա ջրաղաց: Բարեբախտաբար դրությունը անփոփոխ էր: Արևածագին լսվեց ձիերի դոփյուն և մարդկանց ձայներ: Ջրաղացպանը, երկու քրդի հետ ներս մտնելով, ճրագը վառեց: Նրանք տաք-տաք խոսում էին՝ հայհոյելով գյավուր կնոջը: Ջրաղացպանը, բահը ուսին առած, բարձրացավ

դեպի տանիքը, բաց թողեց բոթի ջրերը: Քարերը սկսեցին պտտվել, չխչխիկները միապաղաղ երգեցին:

Այդ օրը ջրաղաց հաճախողների խոսակցությունը գյավուր կնոջ և ցեղապետ Սեիդի ու նրա արբանյակի զոհվելու մասին էր: Ես, քրդերեն կիսատպռատ հասկանալով, պարզեցի, որ այդ գիշեր քրդերը քոչել էին, մնացել էին ցեղապետը իր քուրդ կնոջ, երեխաների ու թիկնապահ քրդերի հետ:

Առավոտյան նախաճաշելով՝ նրանք նստեցին ձիերը և իջան ճանապարհի կողմը: Կամուրջ դեռ չհասած՝ դարից, բարձունքից իջնելիս մի կին կրակեց ցեղապետ Սեիդի վրա: Հեծյալն ու ձին ընկան, իսկ կինը շպրտեց ատրճանակը դեպի ձիավորները: Թիկնապահները, շշկռվելով ու շփոթվելով մինչև ուշքի եկան, գյավուր կինը մոտեցավ ու երկրորդ ատրճանակով կրակեց երկուսին էլ: Վազելով դեպի չորրոդ ձիավորը ու տեսնելով, որ նա կին է, նրա վրա չկրակեց: Ատրճանակի կրակոցների և քրդուհու գոռգոռոցների ձայնը լսելով՝ մոտակայքից եկան քրդեր, կամրջից ներքև գտնվող կուլուխից՝ ոստիկաններ, ժանդարմներ:

Սառան, լսելով ատրճանակի ձայներ, վեր խոյացավ և ուզեց շարժվել դեպի դեպքի վայրը, որն իրենից մոտ երկու հարյուր մետր հեռու էր: Մարթան, նկատելով Սառային, ձեռքով զգուշացրեց, որ չմոտենա, մատնացույց արեց, որ հեռանա: Սառան, խառնվելով թուրք ու քուրդ ամբոխին գնաց քաղաքի կողմը: Մարթան, հնարավորություն չունենալով փախչել, կանգնեց ցեղապետի ոռնացող ու ողբացող կնոջ կողքին: Ձիերով և ոտքով մոտեցան քրդեր ու թուրքեր: Մարթան կանգնեց ձեռքերը մեզարի /գոգնոցի/ տակ: Քրդուհին ոռնոցով ցույց տվեց, որ այս գյավուր կինը սպանեց շեյխին: Չորս կողմից շրջապատված Մարթան նայեց իրեն մոտեցողներին. որը՝ խանչալը ձեռքին, որը՝ ատրճանակը, ուզում էին կտոր-կտոր անել նրան: Մարթան խույս տալով պտտվում էր քրդուհու կողքին: Երբ փոլիսներն ու քրդերը մոտեցան մոտ տաս քայլ հեռավորությամբ, հերոսուհին բարձրացնելով ձեռքերը՝ պարպեց երկու ատրճանակները: Նույն վայրկյանին լսվեցին պատասխան կրակոցներ: Լուռ ընկավ մեր սիրելի Մարթան՝ քրդուհուն գրկած, երկուսն էլ գնդակահարված:

Ջրաղացպանը առավոտյան, լսելով իրենց ցեղապետի պատուհասի մասին, անտարբեր մնալ չկարողացավ և գնաց յուրայինների մոտ: Նրան պարզ էր, որ իր մոտ եկող հայ կինն էր կատարել այդ չարանենգ սպանությունները, բայց նա բոլորովին այլափոխվեց ու զարմացավ, երբ տեսավ, որ սպանված գյավուրը ուրիշ կին էր: Համոզվելու համար՝ նա նույնիսկ մասնակցեց թաղմանը, գյավուր կնոջ դիակը քաշեց, գցեց փոսն ու հողով ծածկեց: Ոչ մի նմանություն չկար ո՛չ հագուստի, ո՛չ դեմքի, նույնիսկ սպանվողն ավելի տարիքով էր: Հաջորդ օրը, սպանվածներին թաղելուց հետո, քրդերի մեջ երկպառակություն ծագեց: Քուրդ ջրաղացպանը մասնակցեց զոհված քրդերի թաղմանը, տեսավ աշիրաթի ցեղակիցների երկպառակությունը, որոնք, օգտվելով իրենց գլխավորի սատկելուց, թալանը բգկտելով՝ իրար մեջ էին բաժանում: Քնած չէին նաև իշխանության վերակացուները՝ Իսմայիլ աղայի գլխավորությամբ, որոնք, առիթից օգտվելով, բռնագրավեցին մանր և խոշոր եղջերավոր անասունները:

Մինչև երեկո ես կուչ եկած սպասեցի հաճախորդների հեռանալուն: Ես արդեն իրազեկ էի գրեթե բոլոր մանրամասնություններին, քանի որ բոլոր թուրք և քուրդ հաճախորդները մեկը մյուսին պատմում էին այդ անսովոր դեպքի մասին: Առիթ էի փնտրում, առանց ջրաղացպանին երևալու, դուրս սողոսկելու համար: Բարեբախտաբար ջրաղացպանը, ճրագը վառելուց հետո, բահը վերցրեց ու դուրս եկավ: Ես զգուշորեն հետևեցի նրա հեռանալուն: Նա բարձրացավ և շարժվեց առվի երկայնքով: Սաղրի մոտ՝ սնդուկի վրա, փայտե պնակում հաց ու պանիր կար, այնտեղ էր նաև ջրաղացպանի տոնական երկար քոլոզը: Անմիջապես քոլոզի վրայից քանդեցի փյուսքյուլներով փաթաթանը, հինգ-վեց բաղարջ ու մի կտոր պանիր վերցնելով՝ կապեցի շորի մեջ և իսկույն գետն անցնելով՝ շտապեցի Զանոյին գտնելու: Կապոցը թողեցի կոյուղու անցքի մոտ և թաթերիս վրա սկսեցի սողալ, հառաջանալ: Զանոն նկուղ չէր իջել և լսելով իմ սողալու ձայնը, անունս տալով՝ ասեց, որ հետ գնանք: Մենք իսկույն իջանք և գետեզերքով ուղղվեցինք դեպի մեր ապաստարանը: Գետի ափից մենք նկատեցինք քրդին, որը բահը թևին, մեղմ սուլելով՝ դանդաղորեն գնում էր առուն ի վեր, մաքրում էր քարերը, ուղղելով առվի քանդված մասերը: Երկուսով բարեհաջող հասանք մեր իջևանը:

Սառան, գլխակորույս ամբոխին խառնվելով, Թաղիգլխին մոտենալով, տեսավ ջորիներով գնացող մի քանի խղճուկ թուրք գաղթականների: Մոտենալով մեկին՝ խնդրեց, որ իրեն նստեցնեն ջորուն: Թուրքը, նայելով շքեղ հագնված քրդուհուն, զարմացավ, որ նա թուրքերեն էր խոսում: Սառան կարճ ասաց.

-Ես թրքուհի եմ, ինձ քրդերը փախցրել են, վերցրու այս ոսկիները, տուր ինձ մի ջորի, ես շուտ փախչեմ, գնամ հասնեմ մերոնց:

Թուրքը անմիջապես վերցրեց ջորու վրայի փասա փուսեն և օգնեց կնոջը նստել: Այսպիսով, փարատելով բոլոր տեսակի կասկածները, Սառան եկավ մինչև շուկա, ականատես եղավ թուրքերի տեղ-տեղ հավաքված փոքրաթիվ խմբերին, որոնք տարբեր մեկնաբանություններով պատմում էին առավոտյան Դաստալոշիրում կատարված դեպքի մասին: Խուսափելով որևէ մեկի հետ խոսելուց՝ նա մտրակեց ջորուն, հասավ և անցավ Արաբու կամուրջը: Նայեց ճամբարին, տեսավ չդատապարտված կանանց ու երեխաների թշվառ վիճակը, որոնք մահամերձ սպասում էին դահիճներին: Մինչև ուշ երեկո ճանապարհի երկարությամբ թափառելով՝ մթնշաղին եկավ մեզ ծանոթ քուրդ ջրաղացպանի մոտ իջևանելու: Քուրդը խոր զարմանքով ճանաչեց իր ծանոթ հայուհուն: Ջորին ծառին կապելով՝ ներս գնացին: Երկուսն էլ խորաթափանց հայացքներով ուզում էին մեկը մյուսի մտքերը կարդալ, խորանալ, թափանցել հոգեկան աշխարհը, բայց բացարձակապես կաշկանդված էին, զսպված, ներքաշված իրենց կաշվի մեջ: Անխոս իրար նայելով՝ հպարտ էին հաղթանակի վերապահությամբ: Զգացվում էր երկուսի սրտերի տրոփյունը: Կարծես թե ինչ-որ խոր կարոտ ճնշում էր նրանց հոգեկան վիճակը, սակայն ասում են, ջուրն ընկնողը փրփուրներին է ձեռք մեկնում: Երկուսն էլ ջանում էին հասկանալ միմյանց: Քուրդը՝ ներկա դժնդակ պայմաններում հայ կնոջ սխրագոր-

ծությունները, նրա անձնուրաց կամքի տոկունությունը, իսկ կինը՝ իր ազգի նկատմամբ խոր ատելությամբ լցված արյունարբու քրդի անօրինակ, անշահախնդիր վերաբերմունքը, անգամ օժանդակությունը, չափից դուրս վստահությունն ու հավատարմությունը: Այսպես լուռ, տխուր, հազար ու մի դատողություններով կաշկանդված՝ նստել էին միմյանց դիմաց. քուրդը՝ ձեռքը խանչալին դրած, գլուխը դեպի վեր պահած, հայ կինը մտորումներում՝ ձեռքը ճակատին դրած, դառնությամբ ներքև էր նայում:

Ջրաղացի չխչխիկի ձայնի փոփոխվելն ու խափանվելը զգաստացրեց քրդին: Նա վեր կացավ և երկու պարկ ցորեն դատարկելով ամբարը՝ կանոնավորեց քարի աշխատանքը, դանդաղ մոտեցավ և ջրի փարչը վերցնելով՝ սկսեց խմել: Ծայրահեղ համբերությունը վախկոտության ու վհատության նշան է, բայց Սառան երկչոտ կին չէր: Նա սպասում էր հարմար առիթի: Հետևելով քրդի բոլոր շարժումներին, նայելով նրա դեմքի միմիկաներին՝ կարդում էր նրա միտքը, խորանում նրա հոգեկան աշխարհի մեջ: Այսպիսով՝ նա պարզ ու որոշակիորեն ընկալեց ջրաղացպանի հուզմունքն ու ապրումները: Հավաստիանալով դեպի նա ունեցած վստահության մեջ՝ դիմեց նրան.«*Քերվա՛*/բարեկամ/, վերցրա քո կնոջ թասակը, ես քրդերեն չգիտեմ, էս շորերն էլ ինձ պետք չեն»,-և կապոցը բացելով՝ ուզեց վերնազգեստը փոխել: Ջրաղացպանը, դյութված, արձանի նման կանգնած, աչքերը հառեց նրան, ուզում էր մի բան ասել, բայց պատժված երեխայի նման անշարժ քարացած, նայում էր մի կետի: Ուշ երեկո էր, դուրսը մթնել էր: Հապաղել չէր կարելի: Սառան շտապում էր բոպեներ առաջ դուրս գալ մեզ մոտ հասնելու համար: Ուշանալն անհանդուրժելի էր, չէ որ մենք սրտատրոփ սպասում էինք՝ ցանկանալով իմանալ նրա ճակատագիրը: Եթե այս գիշեր չտեսնվեինք, ստիպված էինք հետապնդել նրան, որը կարող էր վտանգավոր հետևանքներ ունենալ: Նախապաշարմունքներին հակառակ, կանացի ամոթխածությունը հաշվի չառնելով, քրդական հագուստները փոխելով, Սառան իր կապոցից հանեց ու հագավ իր շորերից և ձեռքը քրդի թևին դնելով՝ խոսեց,-«Ես գնում եմ մերոնց մոտ»: Թևի հպումից քուրդը քնածի նման ցնցվեց, և նրանց հայացքները ճրագի աղոտ լույսով իրար հանդիպեցին: Սառան նկատեց քրդի աչքերից հոսող կլոր-կլոր արցունքները, որոնք թափվում էին նրա մազոտ դեմքին: Երկու ձեռքով իր դեմքը շփելով՝ քուրդը նստեցրեց Սառային, խոր ակնածանքով նայելով նրան՝ ասաց.

-Դու գիտե՞ս ինչ պատահեց այս առավոտյան: Մի հայ կին մենակ սպանեց ցեղապետ Սեիդին, նրա կնոջը և երկու համքարներին: Հինգ հոգի էլ ծանր վիրավորվել են,-և մի պահ լսելով՝ ավելացրեց,-էդ կինն էլ նրանց հետ սպանվեց:

Սառան առանց քաշվելու կարճ ասաց.*«Ես բոլորը գիտեմ»*,-և նորից վեր կենալով՝ շարժվեց դեպի դուռը: Քուրդը մի քանի հաց ու պանիր բերեց, ուզեց Սառայի ձեռքի կապոցը վերցնել, տեղավորել, բայց Սառան թույլ չտվեց և ուտելիքը վերցնելով՝ կողքի թեքվեց ու դրեց փաթոցը: Քրդի աչքից չվրիպեց կապոցում եղած ատրճանակը, բայց նա, չնկատելու տալով, լռեց: Կեսգիշերին Սառան մեզ մոտ էր:

Առավոտ էր, ծալապատիկ նստած ենք իրար մոտ: Զանոն և ես տեղյակ չէինք երեկվա դեպքերին: Սառան խորասուզված էր իր մտքերով: Զանոն մի *քասայի*՝ հողե պնակի, մեջ լցնելով՝ բերեց նախաճաշը՝ կորկոտից եփած շուրվան, հաց ու պանիր: Ասաց, որ ուտենք ու խոսենք: Սկսեցինք ուտել: Սառան գդալը բերանին մոտեցնելիս հանկարծ հրաբխի նման ժայթքեց, կսկծալով լաց եղավ և հիշելով Մարթային՝ ասաց.

-Ավա՜ղ նա այլևս չկա, բայց ես նախանձում եմ նրա անօրինակ հերոսական մահին,-և արցունքները սրբելով պատմեց կատարվածի մասին: Մենք մեր դարդ ու ցավի մեջ պարփակված՝ պառկեցինք նիրհելու, կանայք ինձ իրենց մեջտեղն առան: Երեկոյան Սառան ինձ պատվիրեց աղայիս տուն գնալ և իմանալ նրա մտադրությունները: Հնարավորության դեպքում ամենաուշը մի երկու օրից վերադառնալ: Գիշերը ես լուսամուտի անցքով ներս սողացի և պահ մտա կորկոտի ու ճավարի բղողների[190] /կարաս/[191] արանքում: Սովորականի նման աղախինը ներս գալով՝ զբաղվեց տունը մաքրելով ու ճաշ պատրաստելով: Ես նրան ձայն տվի, երբ նա հատակն էր ավլում: Նա ինձ լսելով անմիջապես դուռը փակեց, և ես, աննկատ դուրս գալով, կանգնեցի սենյակի մեջտեղում: Գրկելով ինձ՝ համբուրեց և զգուշացրեց, որ դուրս չգամ: Շարունակելով իր աշխատանքը՝ նա պատմեց իր ծանրաբեռնված վիճակի մասին: Ուներ երկու հասած աղջիկներ տասնչորս և տասնվեց տարեկան, ամուսինը զոհված էր: Որպես մուհաճիր՝ նրան հատկացրել էին կտավագործ-շիլաջի Թորոսենց շենքը, որը կից էր Եզդանենց Ավագի տանը, որտեղ մեր թաղի կուլուխն էր: Ըստ նրա պատմածի՝ Խնուսից գաղթելիս իր մեծահարուստ ազգականը Իսմայիլ աղային խնդրել էր հնարավոր օժանդակություն ցույց տալ: Ճանոթանալու օրվանից մուհաճիր կինը ստանձնել էր աղայի խնամակալությունը և անցել էր ծառայության՝ որպես աղախին: Կենսագրությունը համառոտ պատմելով ինձ՝ միաժամանակ պատմեց, որ մեր թաղի կուլուխը այսօրվանից վերացել է, իսկ այդ շենքում վիրավոր զաբիթներ են բերել, որոնց խնամքը հանձնարարված էր իրեն, այսպիսով կրկնակի աշխատանքով նա պահում էր իր գոյությունը: Լսելով կուլուխի վերջնական լիկվիդացման մասին՝ ես ակամա հարց տվի.«Եթե այդպես է, ապա ինչու՞ դուրս չգամ»: Նա համոզիչ կերպով հայտնեց, որ աղայի տանը գաղտնի հետևում են: Աղախինը զբաղված էր իր տնային աշխատանքով, երբ ես հեռացա նրանից և անցնելով կողքի սենյակը՝ մտա մուսանդարան ու թաքնվեցի անկողինների ծալքերում:

Իսմայիլ աղան, նկատի ունենալով վերջին դեպքերը և երկյուղելով իր ախոյաններից՝ փոխել էր իր ճանապարհը և այլևս գոռներ տանող արահետով չէր գնում-գալիս: Նա գնում էր ձիով ծառայի ուղեկցությամբ: Աղախնի միջոցով Իսմայիլ աղան իմացել էր իմ գալու մասին: Երեկոյան թոնրատուն անցնելով՝ նա կանչեց ինձ և հարց ու զրույցից հետո հայտնեց իր մտադրությունը. մի քանի գաղթական որբ լամուկների հետ ինձ էլ տեղավորել նոր կազմակերպված եթիմխանեում, որը գտնվում էր Թաղիգլխում՝ Շողիկյանների տանը: Կանչելով աղախնին՝ հանձնարարեց հաջորդ օրը պատրաստել հարմար հագուստ:

Ես իսկույն նույն գիշեր գնացի մերոնց մոտ՝ ինձ հետ տանելով մի կտոր օճառ: Հաշվի առնելով մի շարք վտանգավոր հանգամանքներ՝ ու այն, որ ես լավ էի տիրապետում թուրքերենին, գիտեի խոսել և կարդալ, հուսալով նվազագույն չափով ապահովել ինձ՝ Սառան համաձայնվեց աղայի առաջարկի հետ: Կասկածներից խուսափելու համար՝ ես նույն գիշեր վերադարձա աղայի տուն և թաքնվեցի: Կեսօրից հետո, երբ աղախինը վերջացնում էր թոնրատան գործերը, ես թույլ ձայնով կանչեցի նրան և հայտնեցի, որ դեմ չեմ աղայի առաջարկին: Երեկոյան աղախինը եկավ ինձ մոտ և բերելով շորեր՝ շալվար, պլուզ՝ հայտնեց, որ աղայի ծառան վաղը մեր հարևան մուհաճիրների հինգ-վեց տղաների հետ մեզ տանելու էր *էսքերյա մեքքեպ* /զինվորական դպրոց/՝ վերանվանյալ որբանոց: Չնայած ես մինչև ուշ երեկո սպասեցի աղային, նա չերևաց: Փոխարենը աղախինը մի քանի անգամ եկավ-գնաց:

Հաջորդ առավոտ աղախինը սովորականից շուտ եկավ և ինձ իմաց տալով՝ զգուշացրեց այգու դռնով դուրս գալ փողոց, իջնել Խանոյենց տանիքն ու սպասել աղայի ծառային և մյուս լամուկներին: Իմ թեր կարծիքներին հակառակ՝ նկատեցի աղային ու ծառային, որ ձիերով ներքևից բարձրանում էին: Մոտենալով ճամփի եզրի Չռ-չռ աղբյուրին՝ նրանք իջան ձիերից: Ծառան սկսեց կանչել մոտիկ տներում իջևանած գաղթականներին: Մի քանի րոպեից հավաքվեցին ինձանից մեծ ու փոքր վեց տղաներ՝ մեկս մյուսիս անծանոթ: Աղայի կարգադրությամբ ծառան մեզ տարավ հանձնելու *էսքերյա մեքքեպ:*

Մեզ ընդունեց որբանոցի վերակացուն: Թեթև հարցաքննելով՝ մեզ տարան երկրորդ հարկ ու խառնեցին այնտեղ գտնվող պատանիներին, որոնք Նոյի տարվանից անլվա, կեղտոտ ցնցոտիներով, հյուծված դեմքերով, ամեն տեսակ վերքերով, ոջիլներով տառապում էին դես-դեն թողնված:

Կեսօրին կանչեցին ճաշի: Միմյանց բրդելով ու հրելով՝ վազեցին ու հերթով նստեցին. ուժեղները գրավեցին խոհանոցի կողմը: Մեծ *քասաներով* /հողե պնակ/ բերեցին մսով ճաշը: Չորս հոգու համար մի պնակ: Սկսվեց Սոդոմ-Գոմորի[192] վայնասուն: Ուժեղները ձեռքով փախցրեցին ամանում եղած մսի կտորը և կոխելով ծոցերը՝ սկսեցին ագահաբար լափել ճաշը: Թույլերը գդալ անգամ չունեին: Քաղցը դրդում էր նրանց ուտել ձեռքով: Վերակացուն ճիպոտը ձեռքին՝ կարգ ու կանոն էր պաշտպանում, պոռալով շրմփացնում սրա-նրա գլխին, թևին: Մինչև հայ-հույ, պղնձի ճաշը վերջացավ, սկսեցին մատներով լիզել ափսեները: Ճիշտն ասած՝ օրը երեք անգամ կերակրում էին մսով տաք ճաշով ու հացով:

Խոհանոցում աշխատողները գաղթական կանայք էին: Դրսի դռան և դարպասի մոտ կանգնած էին պահակներ, իսկ ներսում կարգ ու կանոնը պահպանում էին երկու անգրագետ թուրք, որոնք հայհոյելով, շրջում էին ճիպոտները ձեռքերին:

Պատանիների թիվը հասնում էր վաթսունհինգից յոթանասունի, որոնք տասներեքից տասնվեց տարեկան էին և ունեին երկրորդից չորրորդ դասարանի կրթություն: Անգրագետներին առանձնացրին: Անկողինները բերվել էին հայոց տներից և փռվել հատակին: Արդեն տասներորդ օրն էր, ինչ բացվել

էր *էսքերյա մեքքեպը*, բայց ոչ մի պարապմունք դեռ չէին ունեցել: Հաջորդ օրը առավոտյան օնբաշին՝ չավուշը հայտարարեց, որ նախաճաշից հետո շարք կանգնենք՝ դիմավորելու մյուդիրին և մոլլային: Կես ժամից ներս մտավ քոմսերը մի քանի փոլիսների և ժանդարմների հետ ու սկսեց «կարգի» բերել մեզ, ապա երկու վիրավոր թուրք սպաների հանձնարարեցին պարապել մեզ հետ և շտապեցին գնալ: Զաբիթ էֆենդիները մեզ հարցաքննեցին կրթության աստիճանն իմանալու համար և բաժանեցին երկու խմբի: Ես անցա մեծահասակ գրագետների խումբը և գեղագրությանս շնորհիվ ինձ *քյաթիպ* /քարտուղար/ և մեծերի տասնապետ նշանակեցին: Մեզ դասավանդում էին թուրքերեն, պատմություն և կրոն: Կրոնի դասերը պարապում էր մոլլան, որը շատ խիստ ու պահանջկոտ էր: Դասագրքեր ու տետրեր գրեթե չունեինք: Սովորում էինք մտքով, գրատախտակի օգնությամբ:

Մեկ շաբաթվա ընթացքում մենք ծանոթացանք իրար: Երկրորդ օրը ինձ մոտեցան երեք տղաներ և առանձնանալով ինձ հայտնեցին, որ իրենք էլ հայեր են: Բացի այս երեքից այստեղ ես գտա իմ մոտիկ ընկերներից երկուսին՝ Աղասիրունենց Հարությունին և Աղութենց Մճոյին /Մկրտիչին/: Աշխատում էինք ծածուկ մնալ և համոզված էինք, որ մեզ չեն ճանաճի: Այսպիսով մենք միացանք ուժեղ թուրք տղաների հետ՝ կազմելով մի ամուր բջիջ:

Երկրորդ շաբաթվա ուրբաթ օրը մոլլայի պահանջով մեզ տարան թոնրատուն և ուսուցիչների ու ժանդարմների ներկայությամբ մերկացրած շարք կանգնեցրեցին: Մենք՝ հայ տղաներս, իսկույն կռահեցինք մոլլաների դիտավորությունը և աչքով-ունքով իրար զգուշացրեցինք գալիք վտանգի մասին: Սկսվեց ստուգումը: Մոլլան նայում էր, թե ով է թլպատված և պահանջում արտասանել «*Լայիլլա-յուլալլահ-Մուհամմեդ ռասուլ ալլահ*»՝ Ղուրանի[193] առաջին տողը: Շարք կանգնողները հերթով մոտենում էին մոլլաներին, ապա ստուգվելուց հետո դարձյալ կանգնում իրենց տեղը: Նկատեցինք, որ Մճոն ճարպկությամբ իր տեղը փոխեց ստուգվողի հետ: Շարունակելով ստուգումը՝ մոլլան ապտակեց իմ խմբի ամենամեծ լամուկին և հայտնեց, որ նա գյավուր է: Տղան, լսելով մոլլայի վիրավորական խոսքը, չհամբերեց և. *«Գյավուրը դու՛ ես»*,- ասելով, բղավելով՝ կանչեց իր ընկերներին, որոնք նույնպես մերկ կանգնած էին: Սկսեցին գոռգոռալով վիճել: Ստուգվողը այն աստիճան էր կատաղած, որ ուզում էր հարձակվել մոլլայի վրա: Ընկերների և ժանդարմների միջնորդությամբ աղմուկը հանդարտվեց, ապա համոզվեցին, որ գյավուր չէր, այլ Մանազկերտից հայտնի մարդու տղա: Հորն ու եղբորը սպանել էին հայերը: Օգտվելով տեղի ունեցած դալմաղալից՝ հայ տղաները իրենց տեղերը աննկատ փոխեցին ստուգվածների հետ:

Մնացել էին յոթ-ութ հոգի, որոնցից երեքը հայ տղաներ էին: Նրանք երկյուղից գլուխները կախել էին, և մեր սուլոցներին ու հրմշտոցներին ուշադրություն չէին դարձնում: Մեր ուշադրությունը կենտրոնացած էր այդ տղաների վրա: Բայց նրանք ոչխարի հեզությամբ սպասում էին դասաբին: Մոտեցած չորս հոգուց երկուսը՝ թուրք, երկուսը՝ հայ էին: Ի՜նչ սրտաճմլիկ պահեր էինք ապրում մենք՝ հայ տղաներս: Նրանց թուլամորթությունը, դեմքերի խղճուկ

արտահայտությունը մատնության նշաններ էին տալիս: Ինձ հետևիցս կճմտեցին: Նայեցի, մերոնք էին, լուռ ակնարկեցին տղաներին, որոնք իբրև գառներ իրենց մատուցեցին մատաղի սեղանին: Երկու մոլլաներն էլ հաստատեցին, որ տղաները գյավուրներ են և քացիներով շպրտեցին ժանդարմների կողմը: Նրանք, գոռոզանալով հայտնագործած գյուտից և գոհանալով սեփական գիտակցությունից և ճարպկությունից, մնացած չորսին թեթևակի զննելով, թույլատրեցին մեզ հագուստները հագնել: Հայերս տագնապի մեջ էինք: Մտահոգված երկու տղաների բախտով՝ ոչ մի հնարավորություն չունեինք նրանց ազատելու: Շրջապատված էինք շենքի չորս բոլորը ձգվող պարսպով ու զաբթիաներով: Թուրք լակոտները զզվանքով և ատելությամբ էին խոսում հայ տղաների առկայության մասին: Կրքերը էլ ավելի էին բորբոքում մոլլաներն ու ժանդարմները: Երկու հակադիր տրամադրություններ. մենք և նրանք՝ ազգատյաց ոխի, վրեժի, ատելության զգացմունքներով պաշարված:

Մեր բոլորիս ուշադրությունը գրավեցին երկու անմեղ զոհերը: Այս ահավոր պահին լսեցինք ժանդարմների ձայնը, մեզ կանչեցին: Բոլորս էլ իրար ետևից սրտատրոփ դուրս եկանք և գնացինք այգի: Մինչև մեր գալը, արյունռուշտ մոլուցքով փրփրած մոլլաներն ու ժանդարմները ծեծել էին խղճուկներին և կիսամեռ քցել գետնին: Սարսափելի տեսարան էր: Լռելյայն մղկտում էինք՝ լսելով տղաների տնքոցները: Լսվեց մոլլայի ձայնը, որը խրախուսելով հայտնեց հարամզադաների կեղծիքի, խարդախության մասին, որոնք մտել էին Մահմեդի սրբազան օջախը պղծելու և կեղտոտելու, ինչի համար Ալլահը պահանջում է շանսատակ անել: Մյուս մոլլան, նայելով մեզ, շաղակրատեց Մուհամմեդի սրբությունը և դիմելով մեզ՝ հիշեց.*«Դուք եթիմ* /որբ/ *եք դառել այս պիղծ լամուկների՝ հայերի պատճառով: Նրանք միացել են անհավատ ռուսներին և սպանում են մեր սուրբ հավատացյալներին»*: Ժանդարմները մոտեցան, նրանցից մեկը, սուրը մերկացնելով, ուզեց խողխողել տղաներին, բայց մոլլան չթողեց և մեզ դիմելով՝ ասաց.*«Դուք պետք է թափեք սրանց արյունը, որ բարձյալ փեխանբարը /մարգարեն/ ձեր հայրերի հոգիները արժանացնի դրախտի լույսին»:* Մոտեցան յոթ-ութ լամուկներ, որոնց հետ էր նաև քիչ առաջ կասկածանքների ենթարկվողը: Նա ասաց.*«Ես կսպանեմ սրանց: Իմ հորը գյավուրները խփեցին»*,-և ժանդարմի ձեռքից խանչալը վերցնելով՝ մոտեցավ զոհին: Առվակի մոտ երեք-չորս հոգով բռնեցին մատաղացուի ոտքերն ու ձեռքերը: Լամուկը մի ձեռքով բռնեց խարտյաշ մազերից, մյուսով սկսեց կտրել վիզը: Հոսեց անմեղ արյունը: Ժանդարմներն ու մոլլաները հրճվեցին՝ *աֆերիմ* /ապրես/, գոչելով: Երկրորդ զոհը սպասում էր իր վախճանին: Դահիճի մի ձեռքում տեսնելով արյունոտ սուրը, մյուսում բախտակից ընկերոջ գլուխը՝ նա ճչաց և ուզեց փախչել. ժանդարմի ոտքի հարվածով գետնին տապալվեց, ապա նույնպես գլխատվեց: Երկուսի մարմինները թաղեցին այգում փորված մի փոսում:

Երեկոյան՝ ընթրիքից հետո, ամենայն զգուշությամբ, թուրքերից մեկուսանալով՝ որոշեցինք հեռանալ: Աղութենց Մկրտիչը /Մճո/ երդվեց գիշերը դանակահարել թուրք տղային, բայց մենք ստիպեցինք համբերել: Հաջորդ օրը՝

նախաճաշին, մի կտոր հացի պատճառով վիճեցին: Մճոն չհամբերելով՝ գյավուր օղլի, անվանեց լամուկին և քասայով տաք ճաշը շուռ տվեց գլխին: Երկուսի կողմնակիցների միջև տուրուդմփոց սկսվեց: Վերակացուների և պահակ ժանդարմների միջնորդությամբ հազիվ զսպվեցին: Պարապմունքի ժամին մյուդիր էֆենդին, մոլլան և մյուս դասատուն, իմանալով լեզվակռվի մասին, զայրացան և որոշեցին պատժել Մճոյին՝ զրկելով ճաշից: Հանդուգն Մճոն չընկճվեց և բացահայտ հայտնեց.*«Ես նրան կսպանեմ, նա հայ գյավուր է: Նա դիտմամբ կտրեց գյավուրների գլուխը, որպեսզի իրեն չկասկածեն»*:

Այս անակնկալ կռիվը մեր դպրոցի սաներին երկու հակառակորդ խմբերի բաժանեց: Մճոյի խորհրդով հայ տղաները միացան լամուկի խմբին, բայց գործում էինք Մճոյի օգտին: Որոշվեց, որ երեք թուրք տղաներ կեսգիշերին թաքնվեն այգում գտնվող արտաքնոցի մոտերքում և Մճոյի երևալուն պես՝ դանակահարեն նրան: Այդ գործը հանձն առան թուրք լամուկը, Աղասիրունենց տղա Հարթինը և մի ուրիշ թուրք տղա: Մճոյին հայտնի էին մեր խմբի ղեկավարի մտադրությունները: Հետևաբար նա, գիտակցաբար մի հոգու հետ դուրս գալով սենյակից, գնաց այգում գտնվող արտաքնոցը: Նա նախօրոք մերոնցից երկու հոգու դարանակալել էր այգում: Լամուկը, նկատելով իր ախոյանի դուրս գալը, երեք հոգով հետապնդեց նրան: Մճոն սպասում էր նրանց գալուն: Նա հազալով այդ մասին զգացնել տվեց յուրայիններին, ապա շուռ եկավ դեպի արտաքնոցի դուռը: Մճոյի՝ արտաքնոցում մենակ գտնվելու առիթից օգտվելով, լամուկը դանակը ձեռքին հարձակվեց նրա վրա: Մճոն զգալով խույս տվեց և մեկ աստիճան ցած թռնելով՝ իջավ արտաքնոց և անմիջապես շուռ եկավ: Հարթինը, որն ուղեկցում էր թուրք խմբավարին, տեսնելով նրա ձեռքի դանակը, չհամբերեց և ուժեղ ձեռքով խփեց նրա ծոծրակին՝ վար քցելով արտաքնոցի հատակին: Վերցնելով լամուկի ձեռքից ընկած դանակը՝ ջղաձգորեն երեք-չորս անգամ խոցեց նրան, ապա դանակը փորի մեջ թողնելով, հետը եկած մյուս թուրք լամուկին ապտակելով և Մճոյի հետ շշնջալով՝ անցավ այգի: Մեր երկու տղաների օգնությամբ պատը բարձրանալով հեռացավ: Մեր տղաների աննկատ ներս գնալուց հետո Մճոն և մյուս թուրք տղան սկսեցին աղմկել՝ օգնություն կանչելով:

Առավոտյան ոստիկանության անցկացրած քննությունը պարզեց, որ այդ գյավուրի արած գործ էր: Հայ տղաներիս վիճակը ավելի բարդացավ: Ոստիկանությունը որոշել էր հաջորդ օրը ուղարկել հատուկ մարդիկ՝ ստուգումներ անցկացնելու, թաքնված, ծլկված գյավուրներին ի հայտ բերելու և կասկածյալներին մեկուսացնելու համար: Այդ օրը պարապմունք տեղի չունեցավ: Մեր գաղտնի խորհրդով որոշեցինք գիշերը փախչել հեռանալ: Ճաշից հետո ժանդարմների թիվը որբանոցում ավելացավ ևս երկուսով: Այսպիսով այգում նշանակվեցին պահակներ, հսկողության տակ էր նաև դրսի՝ դեպի փողոց բացվող դուռը: Խոհանոցի աշխատողները կանայք էին, երբեմն մեր տղաները օգնում էին նրանց. փայտ ջարդում, այգուց ջուր բերում և այլն:

Մճոն երկու պառակտված խմբերին հաշտեցրեց՝ մեղադրելով, թե դուք մինչև հիմա թուրքն ու գյավուրը չէք ճանաչում: Նրան հաջողվեց շահել մեծա-

մասնության վստահությունը, նամանավանդ, նրանով, որ մենակ՝ դանակը ձեռքին, համարձակվել էր վազել փախչող գյավուրի ետևից, բայց պահակները չէին թողել:

Մճոն ու ես մեր երկու բախտակիցների հետ ծանոթացել էինք այստեղ՝ մեքթեպում: Նրանք էլ մեզ նման շատ արկածների հերոսներ էին: Փախուստի ծրագիրը մշակելիս որոշեցինք հավաքվել իմ առաջարկած ապաստարանում, քանի որ այն մեկուսացված էր և հեռու չար աչքերից: Փախչողներս, ում բախտը ինչպես կտնօրիներ, պետք է հավաքվեինք այդտեղ, բացի ինձանից, մյուսները, իմ անունը տալով, կունենային Սառայի հովանավորությունը: Մինչև կեսգիշեր մերոնք մեկ-մեկ գնացին արտաքնոց և ծլկեցին այգում՝ սպասելով հարմար առիթի: Մճոն, ինձ զգուշացնելով, մի լամուկի հետ գնաց արտաքնոց և վերադառնալով հայտնեց, որ հայ տղաները գնացել են: Կեսգիշերն անցել էր, բոլորը քնած էին: Երկուսով հետևում էինք պահակներին, նրանք էլ, իրենց հերթին, հետևում էին արտաքնոց գնացողներին: Ուշանում ենք, փախուստն անհետաձգելի է և անհնարին: Դեռ լույսը չբացված՝ ես, հանած թումբանս ձեռքս բռնած, տնքտնքալով իջա աստիճաններով և խնդրեցի պահակին, որ թողնի արտաքնոց գնամ: Նա ջղայնացավ և չուզեց թողնել: Ես, իբր թե փորիս ցավից, ուզեցի պպզել հենց իր մոտ: Նա հրեց ինձ և ես ուղղվեցի դեպի այգի: Այդ միջոցին դրսի դուռը ծեծեցին: Պահակը հրացանը ձեռքին մոտեցավ և դուռը բացեց: Նկատեցի մի մարդու, որ իշաբեռներով փայտ էր բերել: Ինձ հետևում էր Մճոն: Ես իսկույն թումբանս հագա, ֆեսս գլխիս դրի և հետևեցի պահակին: Նույն րոպեին տեսա Մճոյին. նա մի ակնթարթում կացնով հարվածեց պահակի գլխին և մենք երկուսով դռնից դուրս եկանք, ուժերիս ներածի չափով վազեցինք ներքևի ճամփով, անցանք կաղամբի արտով և հասանք Թաղիգլխի և ներքև՝ դեպի մեր թաղ տանող ճանապարհները հատող ճամփեզրը: Ջրաղացի կողմից եկող երկու զինվորների նկատելով՝ երկուսով ծլկվեցինք տների արանքում: Նրանց անցնելուց հետո իջանք դեպի մեր թաղ՝ ջրաղաց: Մճոն պնդեց, որ անցնենք կամրջով: Ես նրան հայտնեցի, որ Խանոյենց բակի պահակները մեզ կտեսնեն և գրեթե ստիպելով նրան՝ գնացինք ջրաղաց՝ ապավինելու քրդի ողորմածությանը: Իմիջիայլոց, մեքթեպում եղած օրերին բոլորս էլ իրար պատմում էինք մեր գլխին եկածները, հետևաբար, Մճոն, չնայած իր համառությանը, մի կերպ համաձայնեց ընդունել քրդի հովանավորությունը՝ ասելով.« *Շան հետ բարեկամացիր, բայց փայտը ձեռքիդ պահիր*»: Ջրաղացի դուռը բաց էր, նավթի ճրագը վառ: Քուրդը քնած էր, միայն աղացի մի քարն էր չխկչխկում: Ես, Մճոյի ձեռքից քաշելով, տարա մեր թաքստոց անկյունը և նրան նստեցնելով՝ եկա դուռը փակելու: Ըստ սովորության՝ քուրդը հագուստները հագին մեկնվել, պառկել էր կարպետին և խռմփում էր: Դռան ձայնից քուրդը արթնացավ և ինձ տեսնելով՝ զարմացավ: Մի պահ քնած աչքերը ծիծփացրեց, իր կոշտ ձեռքերով տրորեց և ձեռքիցս բռնելով ու իր կողքին նստեցնելով՝ հարցրեց.« *Ի՞նչ խեր-խաբար հարսներից*»: Հայտնեցի, որ ես մոտ տաս օր է, ինչ նրանցից տեղեկություն չունեմ և թե որտեղից եմ գալիս, ապա աղերսանքով խնդրեցի, որ մինչև երեկո մնամ իր մոտ: Նա ոչինչ

չխոսեց, մի բաղարջ տալով՝ լուռ մատնացույց արեց անկյունը: Մենք երկուսով, ալրի պարկերով ծածկված, կծկվեցինք մեր թաքստոցում, տեսնում էինք ջրաղացի հաճախորդներին, որոնց թիվը համեմատաբար սակավացել էր, քուրդն էլ հաճախ էր պառկում և վեր կենում: Երեկոյին մոտ քուրդը վառեց թոնիրը, խմորի պնակը մոտեցրեց, բայց տրամադրությունը ընկած էր: Մի հասակով թուրք հաճախորդ սպասում էր իր կես պարկ ալյուրին: Քուրդը հաց թխեց:

Երեկոյան, ճրագը վառելուց հետո, քուրդը դուռը փակեց: Կարծելով, թե քնած եմ, մոտեցավ և վերցրեց վրաներիս ալրի պարկը: Տեսնելով երկու հոգի՝ մնաց շշմած և քոլոզի տակից գլուխը քորելով՝ լուռ կանգնեց: Մենք վերկացանք տեղերից, սկսեցինք թափ տալ մեր կարմիր ֆեսերի վրա նստած սպիտակ փոշին ու անձայն հետևեցինք քրդին: Մոտենալով սադրին՝ նա ախ քաշելով նստեց և մեզ ձեռքով իր կողքին նստեցրեց: Ծանր հառաչանքով հարցրեց.«*Ուրեմն դուք ոչ մի խաբար չունեք էն կանանցից*»: Մճոն, տեղյակ լինելով կանանց արկածներին, ձեռքս սեղմելով, հայերեն ասաց.«*Էս մարդը ինչոր բան գիտի նրանց մասին՝ ատրամի տակ է պահում*»: Քուրդը, կարծես թե հասկանալով, աչքերը չռեց Մճոյի վրա: Մճոն ինձնից լավ գիտեր քրդերեն, և դա զարմացրեց ջրաղացպանին: Նա իմացավ, որ Մճոն Աղութենց Կարապետ աղայի տղան էր և գլխով արեց.«*Ես ճանաչում էի նրան, նա կտորեղենի մեծ խանութներ ուներ*»,-ու լռեց: Քուրդը վեր կացավ, բերեց երկու պարկ, ինչքան պանիր ու թխած հաց ուներ, լցրեց այդ պարկերի մեջ և մի քանի անգամ դուրս ու ներս անելով՝ ասաց.

-Դուք կարող եք գնալ կամրջով, Խանոյենց տան զաբիթն ու ասքյարները երեկ գնացին, եթե էն կանանց կտեսնեք, ասեք, որ Ծապրկոր թաղի կուլուխը վերացել է, տեղը վիրավորների խաստախանա /հիվանդանոց/ է լինելու:

Մճոյի սրտին կպավ բարի քրդի խորհուրդը, նա սկսեց խնդրել.

-Մեր երկու ընկերները այս գիշեր նույնպես փախել են էսքյարյա մեքթեպից և անհետացել, եթե նրանց մասին մի բան իմանաս, մի երկու օրից քեզ քսան ոսկի կբերեմ:

Ջրաղացպանը հեգնանքով հիշեցրեց.«*Քո հայրը շատ հարուստ էր, քսանը քիչ է, երեսունը կբերես*»: Նախքան մեր դուրս գալը, քուրդը բահը ուսին դրեց և բարձրանալով՝ ջրաղացի բոտերի ջուրը փակեց: Աղացի քարերը կանգնեցին և լռեցին: Նա, շարժվելով դեպի կամուրջը, մեզ ձեռքով կանչեց: Նա գնում էր արագ՝ քրդերեն մեղեդիներ մրմնջալով: Խանոյ Մինասենց դարն անցնելով՝ հասանք Իսմայիլ աղայի տան սահմանը. նա կանգնեց և Մճոյին իրեն մոտենալու նշան արեց.

-Կուռ է ֆլա /հայի տղա/, դու էս թաղեցի ես, ճանաչու՞մ ես էս տան տիրոջը: Սա էնքան էլ վատ մարդ չէ, բայց դե թուրք է, ուտող-ուրացող: Բայց էլի բոլոր թուրքերից լավ է, փողով կարող է աչք փակել, սիրտն էլ ծակել, համա էս մյուս դրկիցներից զգույշ եղիր:

Խոսելով և մեր առջևից գնալով՝ հասանք Լոռոյ աղբյուրը: Բահը թևից իջեցնելով՝ քուրդը մի կուշտ ջուր խմեց: Ես աղբյուրին կից իմ սիրելի հայրա-

կան տունը ցույց տվեցի նրան: Նա թևիս խփելով՝ կրկնեց.*«Դե շուտ գնացեք»*: Քրդից բաժանվելով՝ մենք շեղվեցինք ճանապարհից, իջանք ձոր և այգիների միջով հասանք մեր օթևան-ապաստարանը:

* * *

Ստախոհ Սառան մենակ դիմավորեց մեզ: Երկու օր առաջ Զանոն հանձն էր առել տեղեկանալ իմ որպիսությանը և Շողիկյանների շենքի շուրջը շրջելիս, կասկածանքի ենթարկվելով, բռնվել էր և փոխադրվել Կարմրակ եկեղեցու ճամբար: Բարեբախտաբար չէին խուզարկել: Այս գույժը Սառան իմացել էր այսօր առավոտյան՝ ճանապարհին հանդիպելով աշխատանքի գնացող Իսմայիլ աղայից: Ըստ աղայի խոսքերի՝ հայ կնոջ շրջելը մեքթեպի շենքի բոլորը և ձերբակալությունը կասկած էր հարուցել ոստիկանության շրջանակներում, որի արդյունքում եթիմխանեի երեխաներին խիստ ստուգումների էին ենթարկել՝ նրանց մեջ հայ երեխաներ բացահայտելու նպատակով:

Սառան, լսելով եթիմխանեում կատարվածի մասին և համոզվելով, որ Իսմայիլ աղան իրավացի էր, մի քանի րոպե խորհելով՝ ասաց.

-Ես առանց Զանոյի մնալ չեմ կարող: Վաղը մի կերպ կգնամ շուկա, կբարձրանամ Կարմրակ երեղեցի և կհանձնվեմ թուրք պահակներին:

Մճոն ուզեց առարկել, բայց Սառան հանգստացրեց նրան՝ կրկնելով.

-Կա՛մ կմեռնենք, կա՛մ մի կերպ կպրծնենք, բայց միասին:

Լուսադեմին հաց կերանք, խոսեցինք մեր անելիքների մասին, որոշեցինք գիշերը տեղափոխվել գոռներ, Մճոյին ծանոթացնելու մեր թաքստոցին, որտեղից Սառան ու ես գնալու էինք Կարմրակի ճամբար: Դեռ մութ էր, երբ երեքով արդեն գոռներում էինք: Բաժանվելիս ողջագուրվեցինք. Մճոն վերադարձավ: Ըստ մեր եթիմխանեի պայմանավորվածության՝ նա նզովյալ շենքում պետք է սպասեր Հարթինին և մյուս տղաներին:

Առավոտյան, հասնելով Կարմրակ եկեղեցու դարպասին, ֆեսս ծոցս դրեցի: Սառան՝ կապոցը ձեռքին, ես՝ շորի մեջ փաթաթված մի քանի հացով, ներկայացանք պահակ ժանդարմին: Մեզ ներս տարան առանց հարցաքննության և առանց խուզարկության: Ժանդարմի հարցին Սառան կարճ պատասխանեց.*«Զզվել ենք մեր կյանքից, ինչ ուզում եք արեք»:* Մեր դպրոցն ու եկեղեցին փոխակերպվել էր մահվան ճամբարի: Ժանդարմը մեզ չուղեկցեց. մենք ինքներս մտանք մահասարսուռ կայան: Եկեղեցում և դպրոցի չորս դասարաններում տառապում էին մեր բախտակիցները՝ սոված, հյուծված, հուսալքված: Ըստ սովորության՝ բոլորի ուշադրությունը հառնեց դեպի մեզ: Անցնելով սենյակից սենյակ՝ փնտրեցինք Զանոյին: Զանոն չկար: Սառային թողնելով սենյակում՝ գնացի եկեղեցու գավիթը:

Արևի ճառագայթները լուսարձակում էին տաճարի փոքրիկ կլոր լուսանցքից, ներս թափանցելով որպես ծիածանի գոտի՝ փայլատակում դժոխք դարձած եկեղեցում: Ակամա նայեցի սյան վրայի նկարին՝ «Քրիստոսը էշի

վրա Երուսաղեմ մտնելիս»: Զարհուրեցի այդ ծաղրանկարից, մոտեցա, քարշ տալով գցեցի հատակին: Թուրքերը բոլոր սրբապատկերները և քանդակները պղծել և ոչնչացրել էին, մահապարտներիս երկրպագելու և օգնություն հայցելու համար թողնելով այդ այլանդակ, անճոռնի էշի պատկերովը: Լսեցի անունս, ձայնը արձագանքեց եկեղեցու պատերից: Ահա Զանոյի գրկում եմ: Ինչպիսի կարոտով և հուզմունքով իրար փաթաթվեցինք: Այդ երջանկության մի պահը դժգույն օրերի սփոփանք էր: «*Մորաքույր, քեզ էինք փնտրում*» ասելով՝ գնացինք Սառայի մոտ: Մեր ունեցած հացի պաշարը նշխարքի նման բաժանեցինք մեր բախտակիցներին:

Ծարավը ավելի սարսափելի էր, քան քաղցը: Մանավանդ երեք տղաների սմքած շրթունքների աղերսալի հառաչանքը՝ Ջու՜ր, ջու՜ր, Սառային դրդեց անձնազոհության գնով անգամ ջուր ճարելու: Նա մայրական քնքշությամբ տղաներին նստեցրեց կողքին, սեփական փեշով սրբեց նրանց աչքերի չորացած ճպուռները և խոստացավ ջուր ճարել:

Զանոն, մի քանի օր ճամբարում գտնվելով, ծանոթացել էր թե՛ թշվառ բախտակիցների, թե՛ պահակ ժանդարմների հետ: Իրար հետ խորհրդակցելով՝ Սառան իրեն կարգի բերեց և ջուր խնդրելու պատրվակով՝ գնաց ժանդարմների պահակակետ: Պահակները նախաճաշում էին: Սառան համարձակ մոտեցավ և մաքուր թուրքերենով բարի ախորժակ մաղթելով՝ ջուր խնդրեց: Պահակները, տեսնելով գեղեցիկ կնոջը, ցնցվեցին: Օնբաշին, փարչից ջուր լցնելով, մատուցեց Սառային և առաջարկեց նստել, ապա մի կտոր միս հացի մեջ փաթաթելով՝ տվեց նրան: Սառան առանց մերժելու վերցրեց և սկսեց ուտել: Խոսակցությունից հայտնի դարձավ, որ հաջորդ գիշեր մեզ տեղահանելու են և ուղարկելու Արաբու կամուրջ: Օնբաշին, ընկերներին նայելով, խոստացավ Սառային չուղարկել՝ պահելով տեղում: Սառան, նկատելով թուրքերի վավաշոտությունը, ծիծաղելով բորբոքեց նրանց սանձարձակ կիրքը և ասաց.

-Դուք երեք հոգի եք, ես օնբաշու համար եմ, ձեզ համար էլ երկու սիրուն կին կբերեմ, եթե խոստանաք նրանց էլ պահել:

Պահակները, զարմանալով հայ կնոջ համարձակ առաջարկության վրա, արտաքուստ խոստացան:

Սառայի ուշանալը կասկած առաջացրեց մեր մեջ: Զանոյի հետ բակ դուրս եկանք հետազոտելու: Սառան, պահակների հետ քրքջալով, եկավ դեպի մեր կողմ: Մենք աննկատ հետ գնացինք մեր տեղը: Զանոն անմիջապես ինձ պառկեցրեց և մի լաթով ծածկեց: Չորսով ներս մտան, Սառան կանչեց Զանոյին, ապա մյուս կնոջը: Միասին շուռ եկան դեպի միջանցք և տասնհինգ-քսան րոպեից մեզ մոտ վերադարձան մի կուժ լիքը ջրով:

Ոչ մեկին չսարսափեցրեց Արաբու ճամբար ուղարկելու գուժը: Օրհասական մահը անվերջ տառապանքներից գերադասելի էր: Ամբողջ ցերեկ Զանոն ու Սառան խրախուսում էին հուսահատված կանանց ու տղաներին՝ փախչել և պատսպարվել հայոց տներում՝ ապավինելով մոտակա օրերին ռուսների գալուն: Ներշնչումը ոգևորեց շատերին. փոքր հույսը դարձավ մեծ ապավեն:

Դե ի՞նչ արած՝ ծովն ընկնողը ձեռքը փրփուրներին էլ է մեկնում: Սառան ու Զանոն ազատ գնում-գալիս էին պահակների մոտ:

Երեկոյան չավուշը, մի փայտ ձեռքին, պահակների ուղեկցությամբ շրջեց սենյակներում և եկեղեցու քունջն ու պուճախը զննելով, բոլորիս հավաքելով եկեղեցու սրահում՝ ստիպեց թաղել հինգ դիակ, ապա մի անկյունում հավաքել տվեց հյուծված, անշարժ կիսամեռածներին և դուռը մեր վրա շրխկացնելով՝ գնաց: Սառան իր հորդորներով շարունակ քաջալերում էր: Երեկոյան նա ընչազուրկ աքսորյալներին հաղորդեց իր վերջին պատգամը.« *Նախքան սպանվելդ սպանի՛ր, հեպո մեռի՛ր*»: Կանանցից շատերը հափշտակված լսում էին և արիանում, իսկ ոմանք հուսահատված անիծում էին իրենց բախտը: Ըստ մեր տեղեկությունների՝ քարավանը շարժվելու էր գիշերը՝ ժամը տասներկուսից հետո, զինվորների ուղեկցությամբ, հետևաբար միտք չուներ հապաղելը, հարկավոր էր շտապել մինչև ասքյարների գալը:

Երեկո էր, փորձեցինք ճաշի պատրաստություն տեսնել: Զանոն, պահակներին ոսկի տալով, խնդրել էր էդ երեկոյի համար մթերք բերել՝ ասելով.« *Մի օր կուշտ փորով քեֆ անենք*»: Շուկան երկու հարյուր քայլ հեռավորությամբ էր գտնվում: Օնբաշին երկու պահակներին հանձնարարեց գնալ շուկա: Մի ժամից ամեն ինչ պատրաստ էր: Կանայք երեքով սկսեցին գիշերային ընթրիք-ճաշկերույթի պատրաստությունը: Քանի-քանի անգամ պահակները կճմտում ու համբուրում էին երկու կանանց, բայց նրանք սրտի խոր ատելությամբ հանդուրժում էին: Պայմանավորվելով և որոշելով մեր անելիքը՝ Սառան դուրս եկավ և դիմեց պահակատան ժանդարմներին.« *Խաշլաման և փլավը պատրաստ են*»,-ապա զբաղվեց սեղանի պատրաստությամբ, շարելով բաժակները և դրեց օղիով փարչը /նրա խնդրանքով բերել էին մի փարչ օղի/: Չավուշի պահանջով այնտեղ գնացին նաև Զանոն և նրա ընկերուհին:

Սկսվեց զավեշտի երեկոն: Սառայի պարանոցի ոսկեշարքը գժվացրեց չավուշին՝ շարժելով մյուսների նախանձը: Զանոն, մի կողմ թեքելով իր հովանավորյալին, ցույց տվեց վզի ոսկիները՝ խոստանալով քարավանը ուղարկելուց հետո դրանք տալ նրան: Գնալով կերուխումը աշխուժացավ: Ժանդարմները երևակայում էին, թե հայտնվել էին երկնքի *ճանաթում* /դրախտ/. չէ՞ որ գյավուրի արյուն թափողը արժանանալու էր Մուհամմեդ մարգարեի նշած ուխտին՝ հայտնվելով փերիներով շրջապատված արքայության մեջ:

Խնջույքի ընթացքում Զանոն ու ընկերուհին մի քանի անգամ աննկատ ուտելիք բերեցին մեզ և ասացին, որ պատրաստ սպասենք իրենց: Սառան, ծոցագրպանից հանելով ժամացույցը, նայեց և զգացնել տվեց կանանց: Թուրք ժանդարմները այնքան էին լկտիացել, որ անասնական հակումով միայն ձգտում էին բավարարել իրենց վավաշոտ պահանջմունքը, հղփանալով քաշքշում էին կանանց՝ իրենց կրքերին գոհացում տալու համար: Մատուցելով իր ձեռքով լցրած բաժակները՝ Սառան դուրեկան ձայնով համոզեց, որ զույգերը իրարից առանձնանան և հանելով վերնազգեստը՝ հենվեց չավուշի թևին: Բոլորը միասին խմեցին և առանձնացան կողքի սենյակներում:

Այդ պահից ճամբարում եղածներիս սպասում էր մի զարհուրելի տեսա-

բան: Սառան եկավ արյունլվա շորերով և կանչեց.«*Ով կարող է թո՛ղ փախչի: Թուրքերը ոչ մեկին չեն խնայի*»: Նույն պահին մոտեցավ Զանոն: Կրկնելով Սառայի խոսքերը՝ ավելացրեց.«*Դարպասի դուռը բաց է: Շուտ արեք, փախեք*»: Սառան իսկույն հանեց և դեն գցեց արյունոտ շորերը և զգեստափոխվեց: Շտապեցինք դեպի դուռը: Զանոն, իր ընկերուհուն չտեսնելով, նորից ներս մտավ, բայց ավաղ, նա ծանր վիրավոր, ընկած էր ժանդարմի կողքին: Ձեռքի դանակը խրելով վիրավոր կնոջ կոկորդը՝ շտապ վազելով հասավ մեզ: Կայան-ճամբարից շփոթված ամբոխի փախուստը գիշերային խավարում խառնիճաղանջ տեսարան էր ներկայացնում: Ինքհահոսի ենթարկվելով՝ մարդիկ գնացին պատահական ճանապարհներով: Անցնելու բոլոր ճանապարհները շուկայի միջով էին, հետևաբար փախչողները չէին կարող վրիպել պահակների աչքերից: Աղջամուղջի մեջ նկատելով փախչողների ստվերները՝ պահակները սկսեցին աղմկել իրենց սուլիչներով, մահակներով և կամաներով խփել իրենց պատահած հիվանդ և թույլ հայերին: Մենք երեքով անցանք շուկայի կամուրջը և սալախանայի /սպանդանոց/ հետևի նեղլիկ ճամփով հասանք գոռների եզրին: Լսվեցին ատրճանակի և հրացանի հատուկենտ կրակոցներ: Հասել էին կարավանն ուղեկցող զինվորները: Նրանց չավուշը, ճանապարհին իմանալով ճամբարում կատարված ըմբոստության մասին, կարգադրեց տեղում ոչնչացնել պատահած փախստականներին:

Գոռներ հասնելով՝ որոշեցինք մնալ քարանձավում: Սակայն Սառան, հիշելով Մճոյի և մյուս տղաների մասին, որոշեց, որ մեկն ու մեկս պետք է գնանք նզովյալ տունը: Մոտավորապես մի ժամից ես ապաստարանում Մճոյի հետ էի: Երկու գիշեր տանջալի պրպտումներից հետո մեր պայմանական շվոց-նշանաբանի օգնությամբ Թորոսիկենց ջրաղացի մոտ Մճոն գտել էր Աղասիրունենց Հարթինին: Մեքթեպից փախած մյուս տղաներից տեղեկություն չունեցանք:

Հաջորդ գիշեր բոլորս էլ հավաքվեցինք նույն տեղում: Երկու օր մենք դուրս չեկանք մեր վիրապից: Հարթինը խոր համոզմամբ վստահեցրեց, որ իր հոր բարեկամ թուրքերից մեկը կընդունի իրեն: Հարթինը ուզում էր մտնել նրա խնամակալության տակ: Նա թե՛ տարիքով, թե ֆիզիկապես մեծ էր և ուժեղ, բայց վախկոտ էր ու թուլամորթ: Նա ուղղակի խնդրեց, որ մենք համաձայնվենք, որ նա գնա: Այդ իսկ պատճառով նա պատմեց այդ թուրքի վերաբերմունքի մասին, թե ինչպես էր իրեն երկու ամսից ավել իր մոտ պահել: Մեր նպատակն էր կյանք ապահովել մեկմեկու, ուստի երրորդ գիշերը Մճոն ու ես ճանապարհ դրեցինք Հարթինին՝ ուղեկցելով մինչև գոռներ, որտեղից նա պետք է գնար Քաղքի թաղ, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ ապրող այդ թուրքի տուն: Բաժանվելով մեզանից՝ Հարթինը խոստացավ չորս-հինգ օրից մեզ տեղեկացնել իր վիճակի մասին: Նա ջարդված կոպալ էր գցելու մեր ապաստարանի բակը:

Իրադարձությունները գնալով բարդանում էին: Դաստալոշիրի, էսքերյա մեքթեպի ու Կարմրակի ճամբարի դեպքերը կատաղեցրել էին տեղական իշխանության մարմիններին, որոնք դիմեցին ավելի խիստ միջոցառումների:

Փաշան հրամայեց գյավուրներ պահողներին՝ երեք օրում գյավուրներին հանձնել իշխանությանը: Այս կարգադրությունը աժանսներով /թռուցիկ-թերթիկ/ տարածվեց ողջ քաղաքի հեռու և մոտ թաղերի բնակչության մեջ: Թերթիկների բովանդակությունը ավելի սոսկալի դարձրեց և ուռճացրեց ժողովրդական ասեկոսները, ըստ որոնց՝ լուն դարձել էր ուղտ. տասնապատկվել էր կենդանի հայերի և զոհված թուրքերի քանակը: Որոշ թաղերում հանդես եկան կեղծ կամավորական օժանդակ խմբեր, որոնք շրջելով թաղերում՝ մտնում էին տները, խուզարկում և վերցնելով արժեքավոր իրերը՝ հեռանում: Այս առումով մեր թաղը, որն ընդհանրապես զերծ էր թուրքերից, լցվեց ամբոխով, որը թալանում, առնում-փախնում, տանում էր ամեն ինչ՝ ոչ միայն շալակած, այլ ջորիների և էշերի վրա բարձած: Չնայած ոստիկանության ցուցաբերած դիմադրությանը՝ ուրիշի հաշվին սնվող մակաբույծների հոսքը չէր դադարում: Կողոպուտը շարունակվեց երեք օր ու գիշեր: Իշխանությունը ստիպված էր զորք ուղարկել: Զորքի միջամտությամբ ժանդարմները մի կերպ կասեցրեցին կողոպուտը: Այդ ժխորից հետո մեր թաղը դարձավ ամենաապահով և կասկածանքներից հեռու վայրը:

* * *

Ինչպես վերը նշեցի, աղայի տանը ծառայող թրքուհի աղախինը ապրում էր կուլուխի՝ ներկայիս հիվանդանոցի կողքի տանը և խնամում վիրավորներին: Մճոն ու ես որոշեցինք նրան հանդիպել: Դիշերը այգիով բարձրանալով՝ հետևեցինք նրա դռանը, բայց ոչ մի շարժում, մուտք ու ելք չկար: Մճոն, բարձրանալով թթենու ճյուղերի վրա, ուշադիր նայեց. սենյակում վառվում էր ձեռքի լապտերը, բայց մարդ չկար: Առանց Մճոյին զգուշացնելու՝ ես մոտեցա դռանը և կոչնակը թակեցի: Դուռը բացվեց, մեր հայացքները իրար սևեռվեցին: Նա, անակնկալի գալով, դուրս եկավ շեմից, ապա թևս բռնելով՝ հարցրեց.«*Նուրի՛, էս ժամին էստեղ ի՞նչ գործ ունես*»,-թևիցս ձգելով տարավ ցախանոց: Ես նրանից հաց խնդրեցի՝ ասելով.«*Մի քանի օր է քաղցած ենք*»: «*Մի քիչ սպասիր*»,-ասելով՝ գնաց ուղիղ կուլուխ-հիվանդանոց և բերեց շորի մեջ փաթաթած մի քանի ասքյարյա թային /զինվորական հացեր/ և մի քանի կտոր շաքար: Բերածը ինձ տալով և անկախ իրենից ձեռքը գլխիս դնելով՝ շոյում էր ինձ: Դիմելով նրան՝ խնդրեցի.

-Խանո՛ւմ բաջի, վերցրու էս փողերը և ինձ համար ուտելիք բերել տուր: Վաղը կգամ տանելու:

Կինը նայեց երեսիս, ապա ձեռքիս սպիտակ քսան *ղուրուշնոց մեջիդյաներին*: Դողացող ձեռքը մեկնելով՝ վերցրեց մեկը և ափս փակելով՝ առաջարկեց այսօր մնալ իր մոտ: Հրաժարվեցի և բերած ուտելիքի կապոցը վերցնելով՝ պատրաստվեցի հեռանալ: Նա կանգնեցրեց ինձ և տուն մտնելով՝ բերեց ամանով մեծ գլուխ իշլի քյուֆթաներ /լցովի կոլոլակ/.«*Էս էլ տա՛ր, կուտես, կպրծնի՝ էլի կգա՛ս*»,-և զգուշացրեց, որ բացի ցերեկներից այս կողմերում

գիշերները երթևեկություն չկա: Մի ձեռքով պղնձով քյուֆթան, մյուսով՝ հացը դժվար էր տանել, քանի որ մեր օթևանը հասնելու համար մագլցելու էի պատերով, սողոսկելու զառիվայր անցումներով: Ակամա մնացի կանգնած: Սպասեցի, որ Խանում բաջին հեռանա, որ հայտնվի Մճոն ու միասին տանենք, բայց կինը նայում էր ինձ, թե ինչպե՞ս, ի՞նչ ձևով և ո՞ր կողմով կգնամ: Զգալով, որ նա հետևում էր ինձ, խնդրեցի՝ ներս գնացեք: Կռահելով միտքս՝ անշշուկ ներս գնաց և դուռը փակեց: Մճոն ցատկելով իջավ ծառից և մենք տաստասնիհնգ րոպեից Սառայի ու Զանոյի հետ ճաշակեցինք հրաշալի համովհոտով քյուֆթաները:

* * *

1915-ի աշուն. ոստիկանությունը վալիին զեկուցեց, որ մինչ օրս կասկածելի թաղերում հայերի ու նրանց շների վերջը տված է: Մանդոն փաշան, գոհունակությամբ լսելով այդ կարևոր հայտարարությունը, կարգադրեց.

-Վաղը բոլոր մզկիթներում ու ջամիներում պաշտոնապես փառաբանել ալլահի սուրբ մարգարեին և շնորհակալություն հայտնել այն ազնիվ մուսուլմաններին, որոնք օգնեցին մաքրել մեր երկիրը՝ վաթանը պիղծ գյավուրներից:

Այս հայտարարությունը տպագիր աժանսներով տարածեցին բնակչության լայն խավերի մեջ:

Նորից տխուր մտատանջություններ, քաղաքի բնակչությունը կիսով չափ գաղթել էր: Գաղթականների թիվը ստվարանում էր և իսկույն չքանում: Ավելացել էին հիվանդանոցները, որոնք լիքն էին վիրավորներով:

Հաջորդ օրը կեսգիշերին, քյուֆթայի պղինձը վերցրած, Սառան մոտեցավ ինձ.«*Հագնվիր, միասին ենք գնալու*»: Զանոն ու Մկրտիչն ընդդիմացան, բայց Սառան հանգիստ կերպով ապացուցեց, որ.«*Երբ չի գործում ոստիկանությունը, վախենալու կարիք չկա, իսկ եթե բան պատահի... ես երդվել եմ*»,-և ցույց տվեց շապկի օձիքի թալիսմանը: Մճոն պոլոզանալով թե.«*Մենք էլ ենք երդվել*»,-և ուզեց խոսել: Սառան շուռ եկավ և ձեռքով նրան շոյելով՝ ասաց.«*Յուրաքանչյուրս մեր դերերն ունենք, սպասենք առիթի*»: Զանոյին զգուշացրեց՝ տղաներին չթողնել ինքնուրույն գործողությունների դիմել: «*Իմ մասին վաղը կամ մյուս օրը կիմանաք*,-ինձ մատնացույց անելով և ձեռքիցս բռնելով՝ շարունակեց,-*քո միջոցով*»: Դուրս եկանք և ուղղվեցինք դիպի կուլուխ՝ Իսմայիլ աղայի աղախնի տունը: Աղախինը, լսելով դռան ծեծելու ձայնը, բաց արեց: Տեսնելով մեզ՝ մի սարսուռ անցավ նրա մարմնով: Ինձ թևիցս ներս քաշելով՝ հարցրեց.«*Ո՞վ է այդ կինը*»: Մինչ իմ պատասխանելը, Սառան ներս մտավ, լապտերի լույսով նայեց տան չորս կողմը և դառնալով աղախնին՝ հայտնեց, որ ինքը ցանկություն ունի ծառայելու հիվանդանոցում: Որպեսզի աղախինը փարատեր իր կասկածները, Սառան ինձ խնդրեց ծանո-

թացնելու ժամանակ իրեն ներկայացնել որպես նոր եկած մուհաճիր և ասել, որ իրենց ամուսինները մոտ բարեկամներ էին: «*Մնացածը ես կիմանամ*»,-ասաց նա: Մի քանի բոպեից տիրող լռությունը խախտելու համար՝ նա խոսեց.«*Երեկ ես լսեցի Իսմայիլ աղայի մասին, ուզում էի նրան տեսնել: Նուրին ճամփին հանդիպելով, իմանալով ու հասկանալով, որ ես ուզում եմ ծառայել՝ բուժելով վիրավոր հիվանդ զաբիթներին, ինչ բերեց քեզ մոտ և ճիշտ արեց*»: Արշալույսը բացվում էր, ես դուրս եկա տանից՝ արթնացող երեխաների աչքին չերևալու համար: Աղախինը հետևեց ինձ.«*Ո՞վ է այս կինը, ինչու՞ բերիր, ես վախենում եմ դրանից*»: «*Խանում՛ բաջի, մի վախենա, նա քեզ կպատմի, ինչ որ պետք է: Դե ես հիմա գնում եմ, երեկոյան կանցնեմ ֆեզ մոտ, կիսոսենք*»:

Երկու-երեք օրը մի անգամ՝ ցերեկվա ժամը տասներկուսի կողմ, գալիս էր զինվորական բժիշկ կոչեցյալը՝ վիրաբուժությունից բոբիկ մի զաբիթ, բացխուփ անելով վերքերը՝ հարցնում, խոսում էր հիվանդների հետ և մեկ ժամից թողնում գնում: Սառան, ուսումնասիրելով կուլուխի շրջապատը և համոզվելով, որ փոլիսներ ու ժանդարմներ չկան, հակառակ աղախնի ցանկության՝ կեսօրվա մոտերքը միասին գնացին հիվանդների մոտ: Սառան, աներկյուղ ներս մտնելով ու սպիտակ շորով գլուխը կապելով, մոտեցավ թախտերի վրա պառկած տնքացողներին: Նրանց զինվորական աստիճանի որոշիչ ապացույցը համազգեստներն էին: Փութաջանորեն մաքրելով, կարգի բերելով հիվանդանոցի «ննջարան» կոչված երկու մեծ սենյակները և բոլորի հայացքներն ու ուշադրությունը գրավելով, մոտեցավ լուսամուտի մոտ պառկածին: Վերմակը մի կողմ քաշելով՝ բացեց հիվանդի վիրավոր ոտքը, աղախնից տաք ջուր պահանջեց և սկսեց մաքրել նեխված վերքը: Սեղանի վրայի դեղորայքը ստուգելով՝ մի սրվակի սպիրտային հեղուկով մաժեց վարակը տարածված ազդրից վեր, կապեց և սկսեց հերթականությամբ վիրակապել: Հինգերորդին էր հասել, երբ թեյնիկը ձեռքին ներս մտնելով՝ աղախինը հայտնեց դոկտոր էֆենդու գալը: Սառան, չնայած հիվանդների վերքերը կապելով էր զբաղված, բայց նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր բժիշկ զաբիթի վրա: Նա զգուշանում էր, որ իրեն չճանաչեն, և նրա՝ բժշկի, ով լինելով էր հետաքրքրված: Ինքն իր մատը կծելով՝ փու՜հ, կեղտոտ էր, զզվելով ու ծամածռելով քիթ-մռութը, մտածեց՝ հանկարծ Ճերճիսի ծանոթ շներից լինեն, ի՞նչ կլինի մեր վերջը: Ներս գալով, բժիշկը, ձեռքի կապոցը սրահի սեղանին դնելով, անցավ սենյակը, ողջունեց հիվանդներին և ինչպես միշտ՝ մոտեցավ մեծ զաբիթի մահճին: Բացելով վերքը՝ զարմացավ զաբիթի ցուցաբերած դիմադրությունից.«*Ձեռք մի տու՛ր, ես հիմա հազիվ եմ հանգստացել*»: Սառան, հրճվանքով գլուխը հիվանդից բարձրացնելով, ձեռքերը մինչև արմունկները քշտած, մոտեցավ և կիսաեվրոպական ու ասիական ձևով ձեռքով բարևի նշան անելով՝ ասաց.

-Ես էլ ուզում եմ աշխատել, օգնել ձեզ: Ես դեղորայք պատրաստել սովորելու համար երեք տարի ֆրանցս ու իգլիշների մոտ սովորել եմ: Եթե դեմ չլինեք, ես մեր մուհաճիրներից մի քանի կանանց կբերեմ, որ զաբիթների վերքերը մաքրեն, օգնեն: Դուք մենակ եք, համ էլ՝ էստեղ-էնտեղ հնարավոր չէ:

Դոկտորը դեռ իր՝ մաշալլահ, ասելը չէր վերջացրել, երբ մեծ զաբիթը, թեք-

վելով նրանց ասաց.*«Իմ անունից հրամայեցեք, որ այս քույրիկը մնա այստեղ՝ մեզ մոտ»:* Զինվորական բժիշկն ու ինքնակոչ բուժքույրը անցան նախասրահը և վերցնելով կապոցը՝ բացին: Սառան, կարդալով դեղերի անունները, դասավորեց սեղանին և բժշկին դառնալով ասաց.*«Էս դեղերը վերքերի համար օգտակար չեն»*,-և մի թուղթ վերցնելով՝ թուրքերեն գրեց՝ քաղաքի պալատյայի պետին, դեղատան վարիչին, ապա լատինական տառերով թվեց դեղորայքների անունների մի երկար ցուցակ: Բժիշկը, նայելով նրա գեղագրությանը և երկու լեզուներով վարժ գրելուն, ակամա հարցրեց.*«Դուք բժի՞շկ եք»:* Նա պատասխանեց.*«Ես բուժքույր եմ սովորել, չեզ առաջուց ասացի»*: Երբ նրանք խոսում ու գրում էին, գլխավոր զաբիթի կողքերից սեղանին մոտեցել էին մի խումբ վիրավոր սպաներ՝ իրենց հենափայտերին կռթնած: Սառան, նամակ-ցուցակը բժշկի ձեռքից վերցնելով, քաղաքավարության խորին ակնածանքով ներկայացրեց գլխավոր զաբիթին և խնդրեց.*«Պե՛յմ, լավ կլինի, որ դուք ստորագրեք, դուք մեծ հեղինակություն եք»:* Մեծ զաբիթը զինվորական կրթությունը ստացել էր գերմանացիների մոտ, հետևաբար լատինական տառերը նրան ծանոթ էին, բայց բովանդակությունը՝ ոչ: Թերթիկը մեկնելով բժշկին՝ խնդրեց լատիներենի կողքին գրել թուրքերեն թարգմանությունը և գլխով հավանություն տվեց: Բժիշկ զաբիթը, շուռումուռ տալով թղթի կտորը՝ չգիտեր ինչ անել: Նրա խելքի բանը չէր, բայց մեծ զաբիթի մոտ ստորանալ չէր ուզում: Սառան, որ իր երկու ոտքով ընկել էր մեծ թակարդի ցանցի մեջ, վերցրեց թուղթն ու գրիչը և լրացնելով տվեց բժշկին, նա էլ իր հերթին գլխավոր զաբիթին, որը բառ առ բառ զննելով ստորագրեց, գրպանից հանած մի կնիքի նման բանով կնիքեց և հետ տվեց: Այդ բժիշկ կոչեցյալը միաժամանակ կատարում էր նաև մատակարարման վերակացուի դերը: Ժամը երկուսին նա ձին նստելով՝ գնաց: Երկու ժամից երկու ասքյար զույգ ջորիներով մթերք բերեցին և աղախնին հանձնելով վերադարձան:

Ամբողջ օրը Սառան զբաղված էր հիվանդներին խնամելով և նրանց հոգսերով էր տարված: Նույնիսկ հենակների փոխարեն վիրավորներին իր վրա հենած էր դուրսուներս անում՝ գրավելով նրանց ուշադրությունը: Այսպես շարունակվեց չորս-հինգ օր: Նա քնում էր աղախնի բնակարանին կից սենյակում՝ խուսափելով նրա երեխաների հետ զրուցելուց: Աղախինը մի քանի անգամ ինձնից փորձեց իմանալ նրա ով լինելը, ես կտրուկ հրաժարվեցի պատասխանելուց՝ կրկնելով, որ չգիտեմ: Չորրորդ գիշերը ես աղախնի մոտ էի: Նա խոսեց խորհրդավոր կնոջ դրական, լավ աշխատանքի, հիվանդների աչքի լույսը դառնալու մասին, նույնիսկ կանացի նախանձի մղումների մասին: Աղախինը ինձ հարցում արեց, թե նա գիտե՞ իմ հայ լինելս: Ես բացասական պատասխան տվեցի և իր խորհրդին դիմելով՝ հարցրի.*«Չգնա՞մ իրեն տեսնեմ»*,-ու հոնքերիս տակով նրա դեմքին նայելով՝ սկսեցի ինձ մատուցված ճաշը ուտել:

-Նուրի՛, ես զարմանում եմ էդ կնոջ վրա, ոչ մի բանից ո՛չ զզվում, ո՛չ ամաչում է և ո՛չ էլ վախենում: Երեկ ինքը, շատերի շապիկն ու վարտիքը հանելով, բոլոր սպիտակեղենը լվաց, մաքրեց, էսօր անկողինները թափ տվեց: Ծանր

հիվանդների կողքին նստում կերակրում է, մեջքն ու ոտքերը շփում, մաժում: Ինձ վրա էլ խեթ աչքով է նայում և դեռ ակնարկում, որ իր նման պետք է վարվեմ: Քիչ առաջ եկավ, մթերք էին ստացել: Էսօր լավ ճաշ տվեցինք: Ուզում ես գնա տես, տեսնենք ի՞նչ կին է դա:

Կես ժամ Սառայի հետ խոսելուց հետո, նա խորհուրդ տվեց աղախնին դիմել քիչ շաքար ու յուղ ստանալու համար և միասին եկանք՝ իրար հետ թուրքերեն խոսելով: Ես մնացի աղախնի մոտ, իսկ նա ֆանարը ձեռքին շարժվեց դեպի հիվանդանոց: Աղախինը իմ բացակայությամբ հոգացել էր և երկու փոքր տոպրակներում բրինձ, շաքար և մի պուլիկ հալած յուղ էր տեղավորել: Ինձ ցույց տվեց: Ես վերցրեցի, խուրջինի ձևով կապեցի իրար, թևիս անցկացրի ու գնացի մեր անիծյալ կայանը:

Դեղատան համար գրած գրությունը ձեռքից ձեռք էր անցել: Դեղերի բացթողումը սահմանափակ էր: Ի վերջո, գլխավոր բժիշկը, տեսնելով ցուցակը, հետաքրքրվել էր նրա հեղինակով և հինգերորդ օրվա ցերեկը երեք ուրիշ բժիշկ կոչեցյալների հետ այցելության եկել Սառայի հիվանդներին: Խոսելով դեղ ու դարմանի մասին՝ գլխավոր բժիշկ զաբիթը տեղի հիվանդների և իր կողմից շնորհակալություն հայտնեց այդ ազնիվ բուժքրոջը՝ վերաբերմունքի, օգնության, ծառայության համար: Հյուրերը գլխավոր զաբիթի և մի քանի թեթև վիրավորների հետ առանձնացան նախասրահում: Աղախինն ու Սառան թեթև հյուրասեղան էին պատրաստել: Մատուցեցին փլավն ու կզարթման: Սկսեցին ճաշել և խոսել կռվի, գաղթի, հիվանդների վիճակի և այլ հարցերի մասին: Գլխավոր բժիշկը, տեսնելով մինչև արմունկները քշտած սպիտակ խալաթով, սպիտակ լաչակով[194] ժպտերես բուժքրոջը, օշարակ մատուցելիս խոնարհվեց նրա առաջ՝ ասելով.«*Խանո՛ւմ, նեղություն միք քաշի*»,-և փարչը[195] ձեռքից վերցնելով՝ առաջին բաժակը լցրեց գլխավոր զաբիթին: Հերթականությամբ սկսեցին խմել: Ճաշկերույթը կարճ տևեց: Գլխավոր բժիշկը, նկատելով Սառայի *ալա-ֆրանկա* քաղաքավարությունը,[196] որն իրեն շատ էր դուր գալիս, խնդրելով դիմեց նրան.«*Ձեր անունը իանում, ինչպե՞ս են կոչում ձեզ*»: Սառան չշփոթվեց.«*Հորս կողմից... կըզի՝ Էլինե, ամուսնուս կողմից... օղլու կին՝ Էլինե իանում*»: «*Էլինե՛ իանում, ես ձեզ վաղը կփոխադրեմ կշլայի իաստրահանեն: Այնտեղ ես ձեզ կօգնեմ, դուք էլ մեզ*»: Լռությունն ու տխրությունը տիրեց շրջապատողներին, և բոլորը միաբերան առարկեցին և խանումին խնդրեցին մնալ իրենց մոտ: Վիրավորները, հենակներով գետնին դոփելով ու Սառային նայելով, խնդրում էին չգնալ: Գլխավոր բժիշկը իր հետ բերած դեղերի կապոցը հանձնեց Էլինե խանումին, և անելիք չունենալով՝ ձիերը նստեցին ու հեռացան:

Նույն գիշերը Մճոն ու ես հանդիպում ունեցանք Սառայի հետ: Օգտվելով նրանից, որ թաղում բացակայում էր ոստիկանությունը՝ գնացինք Սառայենց տուն: Նա սնդուկից և պահարաններից մի քանի դեղ հանեց և մեզ ցույց տվեց իրենց խնայողությունների, փողերի տեղը, որից հետո մտանք Մճոյենց տուն: Մճոն, ձեռքը մեկնելով լուսամուտի շեմի անցքը, դուրս քաշեց մի տոպրակ, ձեռքը խոթելով երեք ափ ոսկի հանեց և նույն ձևով իջեցրեց տեղը: Իջանք

գոմը, ինձ ու Սառային ցույց տվեց պահարանում իրենց հարստության տեղը: Հետո բարձրացանք Շպնեց Աղաջանի և Հոխիկյանների տները: Նրանց խնայողությունների տեղերը մեկս մյուսիս ցույց տալով՝ մտանք կից տունը: Սոլկար Մանուկի ներքնահարկի երկու անկյունները փորեցինք, ոչինչ չնկատեցինք, բայց համառ Մճոն, կացնի բերանը ավելի պատի կողմը խփելով, դեմ առավ սնդուկին: Հողը ուշադրությամբ կոկելով և ծանր կարասները գլորելով՝ հետքերը ծածկեցինք: Նույն գիշերը Սառան եկավ մեզ հետ, գրկախառնվեց Զանոյի հետ, խոսեց իր մտադրությունների մասին, իր հետ վերցրած դեղերի բովանդակության և մոտավոր օրերի անելիքների մասին: Առավոտյան աղջամուղջին երեքովս ողջագուրվեցինք Զանոյի հետ և ծանրացած սրտով բաժանվեցինք: Սառան խնդրել էր աղախնին իր ծառայության, հայտնության մասին ոչինչ չհայտնել Իսմայիլ աղային: Այս արտահայտությունը աղախնին կասկածի մեջ էր թողել: Այս առումով նա որոշել էր հարցնել և պարզել, թե ով էր Սառան՝ բացահայտելով նրա ծպտյալ դեմքը, բայց Սառայի բացարձակ համարձակությունը, վերջին օրվա ցուցաբերած վերաբերմունքը, գլխավոր բժշկի գովասանքն ու հրավերը սանձահարեցին նրան: Աղախինը իր զավակների համար գիշեր-ցերեկ ծանր աշխատանք էր կատարում, տանջվում թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես: Նա, որպես մուհաճիր, չուներ ո՛չ մի կողմնապահ, ո՛չ մի պաշտպան: Սառան մեզ զգուշացրեց, որ իր գնալուց հետո հետզհետե կրճատենք աղախնի մոտ մեր գնալ-գալը՝ ավելացնելով.« *Նա շատ մեծ հոգու տեր կին է»:*

Երկու օրից զաբիթ բժշկի հետ մի ասքյար եկավ: Մի երկու ժամ դես-դեն գործ անելուց հետո Սառան գնաց աղախնի հետ, երեխաներին ջերմագին համբուրեց, ողջագուրվեց աղախնի հետ և խնդրեց ոչ ոքի չհայտնել իր գալ-գնալու մասին: Բաժանվելիս հինգ ոսկի թողեց աղախնի բարձի տակ և անցնելով իր սենյակը՝ վերցրեց իր փոքրիկ կապոցը: Միասին գնացին հիվանդների մոտ: Նա աղախնին պատվիրեց հարազատորեն մոտենալ դժբախտ վիրավորներին, նրանց օգնել ամեն ինչում և զինվորի նման շեմի վրայից՝ ողջ մնաք, ասելով՝ դուրս եկավ փողոց, որտեղ սպասում էր թամբած ձին: Հիվանդ վիրավորները, որը՝ հենակների, որը՝ պատերին կռթնելով և գետնի վրա քարշ տալով, դուրս էին եկել փողոց՝ բարի ճանապարհ մաղթելու: Մեր Սառան, հագնելով տոնական ֆաթման, բարձրացավ և հմուտ ձիավորի նման սանձը բռնելով՝ շոյեց ձիու վիզն ու գլուխը: Նորից ձեռքի թաշկինակով՝ մնաք բարով, անելով՝ սլացավ առաջ, հասավ իրենց խաչմերուկը՝ փողոցի հատման վայրը, մի րոպե կանգնեց: Նրա մտքերը շաղ էին գալիս, նա որոշել էր կատարել մի հանդուգն միսիա, բայց այդ րոպեին իրենց դռան շեմին կանգնած՝ իր հարազատ զավակների ու ամուսնու արյունոտ գերեզմանի մոտ, չէր կարող իր գլուխը խոնարհել, գուցե վերջին անգամ: Նա մի երկու անգամ հետ առաջ շուռ տվեց և նկատելով, որ հետ է մնացել, մտրակեց ձիուն:

Նրանք գնացին, հեռացան մեր թաղից: Իջան Սանդի թաղի ճանապարհով, թուրքական թաղամասով, Հինգխորան և Ս. Սարգիս եկեղեցիների մոտով, հպարտ ու ծիծաղելով քաղաքավարի թուրքերենով ակնարկներ անելով,

անցան շուկայի միջով, հասան Կարմրակ եկեղեցու մոտ: Սառան զաբիթ բժշկին խնդրեց գնալ կասաբխանայի միջով և ասքյարին մատնացույց անելով կամրջի կողմը՝ թեքվեցին այն կողմ: Հակառակ նրա սպասածի՝ Իսմայիլ աղան տեղում չէր: Սառան, հեծյալ ընկերոջը ժպտալով, մտրակեց ձիուն՝ շուտ դուրս գալու համար: Կամրջի մոտով անցնելիս նա նայեց Կարմրակի օրհնված և անիծված ճամփին, հիշեց մեր փախուստը, մեր զոհերը և մտրակելով ձիուն, առաջ անցնելով հասան *հյուքյումեթ* և *կոք մեյդան* տանող քաղաքի ամենալավ, բայց ամենակարճ ճամփին: Ձիերը դարն ի վեր բարձրացան համաքայլ ընթացքով: Մի հասարակ դատող մարդ այդ րոպեին կկարդար Սառայի ցրվածությունը, կմատներ նրան՝ լսելով սրտի բաբախը և կրծքի ծանր հևոցները: Սա անզուսպ կնոջ անօրինակ մարտիրոսության, նրա ուժերին ու սեռին անհամապատասխան ու չիրականացվող գործողության սկիզբն էր: Ապավեն այս գործում չկար, չկար անգամ փոքր հույս, նեցուկ՝ ունենալ որևէ ապավեն: Այս դատողություններով խորասուզված Սառային կողքից բռնեց դոկտոր զաբիթը և զգուշացրեց: Սառան աչքերը բացեց: Տեսարանը փոխվեց. մտրակը ձեռքին դեմքը շփեց, զգաստացավ և դոփելով ձիուն ուղեկցի ականջին փսփսաց.«*Կանացի հիվանդության նոպաներ էին, անցան*»: Ձիերը կանգնեցրին, զինվորը շտապեց ասպանդակները բռնելու: Արդեն հասել էին վերջին երեք-չորս ամսվա ընթացքում կառուցված դղլայ[197] հիվանդանոցի մոտը, որը գտնվում էր Գոմաց թաղ տանող ճամփի եզրին, նախկին Ս. Սիմոն եկեղեցու մոտ: Սպասարկող անձնակազմը մոտեցավ: Դրանցից ավագը՝ չավուշը, դիմելով բժիշկ զաբիթին ասաց.«*Ինչու՞ ուշացաք: Գլխավոր դոկտոր էֆենդին ձեզ է սպասում*»: Ամենայն քաղաքավարությամբ իր ընդունարանում ընդունելուց, մի քանի րոպե խոսելուց և հանգստանալուց հետո, դոկտորը վեր կենալով հայտնեց, որ վիրավորների կարավան են բերել և անհրաժեշտ է իր ներկայությունը: Էլինե խանումն առաջարկեց իր մասնակցությունը և միջանցքի դուռը փակելով՝ դոկտորին խնդրեց շուռ գալ: Շրջազգեստը փոխեց, բժիշկը մատնացույց արեց խալաթը: Վերցրեց հագավ, կապեց սպիտակ լաչակը, և դուրս եկան միջանցք: Խղճուկ, վիրավոր ասքյարները հատակին պառկած կամ նստած վիճակում տնքալով սպասում էին դեղ ու դարմանի:[198] Շրջայց կատարելով՝ մտան ընդհանուր թախտի վրա քցած անկողիններով երկրորդ սենյակը, որը հատկացված էր զաբիթներին: Սրանք որոշ առավելություններից էին օգտվում: Թուրք սանիտարները, կիսալուսինը թևերին, օգնում, տեղաշարժ էին անում: Տեսնելով գլխավոր բժշկին՝ ամեն կողմից կարեկցանք էին հայցում, լսվեցին բողոքներ, պահանջներ: Կեսօր էր, սկսեցին մատուցել չոր բան ու *թայինը*՝ ճիշտ է մսալի էր, բայց կեղտոտ ամաններով: Առաջին օրվա ծանոթությունը լավ տպավորություն չթողեց թե՛ բժշկի, թե՛ բուժքրոջ վրա և նրանք մտախոհ անցան սենյակից սենյակ: Մի երկու ժամից հեռացան առանձնասենյակ: Սառայի անսպասելի հարցը ուշքի բերեց բժշկին: Նա գլուխը ձեռքերի մեջ ոչ թե նիրհում էր, այլ մտածում մի ելքի մասին, թե ինչպես թեթևացնել այդ թշվառների վիճակը:

-Դոկտո՛ր էֆենդի, ձեր տրամադրության տակ ինչքա՞ն դեղերի ռեզերվ

ունեք, իսկ եթե բինտ չկա, կարելի է փոխարինել սպիտակ կտորով: Ինձ տրամադրեք չորս-հինգ ասքյար, ես վաղը զաբիթների խաները լրիվ մաքրեմ, վիրակապեմ և անցնենք բուժմանը:

Բժշկական անձնակազմը բաղկացած էր համազգեստ կրող գլխավոր բժշկից, որը մոտ հիսունհինգ տարեկան էր և երկու բուժակ-ֆելդշերներից, իսկ տաս-տասներկու ասքյարները կատարում էին նրանց կարգադրությունները: Երեկոյան բժշկապետը կանչեց չավուշին և հանձնարարեց վաղը հինգվեց զինվորների հետ կատարել խանում բժշկուհու կարգադրությունները՝ առանց բացառության: Հրահանգումից հետո խոհանոցից մատուցեցին ինքնաեռով չայը և համեղ ուտելիքներ: Կերան, խմեցին և յուրաքանչյուրը հեռացավ իրեն հատկացված սենյակաբաժինը: Լուսադեմին կանչելով չավուշին՝ Սառան կարգադրեց նախ բակը մաքրել և անցնելով հիվանդների սենյակները, մաքրելով ու կարգի բերելով՝ թույլատրեց նախաճաշը սկսել զաբիթների հին սենյակից, ապա ամանները /պղնձե ափսեներ/ տաք ջրով լվանալուց հետո՝ շարունակել բաժանել ըստ պահանջի: Նախաճաշից հետո նույն կարգով սկսեց հիվանդների ստուգումը: Տաք ջրով պղինձն ու շերեփն իր հետ ման ածելով անկյունից անկյուն, սենյակից սենյակ՝ նա լվաց, մաքրեց բոլոր չորս սրահների հիվանդների վերքերը, հնարավոր դեղերը քսելով կապեց և իր ժպիտով թեթևացրեց նրանց ցավերը:

Աշխատանքից հետո, նա հոգնած, մռայլ դեմքով մտնում էր իր առանձնասենյակը և պառկում: Բացի գլխավոր բժշկից ոչ ոք իրավունք չուներ նրա դռանը մոտենալ: Օրըստօրե նա արժանանում էր բուժանձնակազմի և հիվանդների համակրանքին: Նա իր ձեռքը վերցրեց աղքատիկ դեղատունը, որտեղ զբաղվում էր զանազան կանաչների արմատներից դեղորայքներ, սպեղանի, միլամ պատրաստելով: Սառան հիվանդների աստվածուհին էր և գլխավոր բժշկի ու բուժանձնակազմի հպարտությունը: Ի միջի այլոց, Սառայի ուշադրությունից չէին վրիպում առանձին չարկամների խոսակցությունները, բայց նա այդպիսիների նկատմամբ ավելի համառ էր, պահանջկոտ, ուշադիր և իր սիրալիր վերաբերմունքով վանում էր նմանների չար, կասկածելի հայացքները: Մի անգամ երեկոյան, նկատելով իր միսը ծամող մի քանի զաբիթների նեղ խորհրդակցությունը, մոտենալով նրանց ու նստելով կողքերին՝ հետաքրքրվեց նրանց ընտանիքների վիճակով և հոգոց հանելով ասաց.*«Դուք տղամարդ եք, ռազմի դաշտում վիրավորված, իսկ ես կին՝ զրկված իմ երեխաներից, որոնք գերված են թշնամու կողմից, բայց վաթանի սերը ինձ դադար չի տալիս: Ձեր ամեն մեկի վերքը նայելով հիշում, կարեկցում եմ հարազատներիս: Դե, լավ է լռենք, ցավերս իրար միք տա»*,-և արցունքը սրբելով՝ հեռացավ՝ թողնելով վիրավոր զաբիթներին իրենց ալեկոծված մտքերի ու մտորումների մեջ:

* * *

Ո՞ ամիս էր, որ Սառայից ոչ մի լուր չունեինք: Զանոն հիվանդ էր: Սկրտիչն ու ես, գիշերային ուրվականներ դառած, շրջում էինք թաղն ի վեր: Մի շաբաթ առաջ Խանամիրյանների այգում մենք բռնեցինք ու տարանք մի անտեր ոչխար: Մի քանի օր լավ կերանք ու ժրացանք, բայց Զանո մորաքրոջ առողջությունը գնալով վատանում էր: Մեր դեղամիջոցները՝ ուռենու տերևը քրտնացնելու համար, կծու, սպիտակ կոճը, զարդաչուն՝ արմատները,[199] չէին օգնում նրա հազին: Մճոն, չգիտեմ երբ և որտեղ էր լսել, որ առողջ ու անտեսանելի դառնալու համար պետք էր ագռավի, սև կատվի ու աքլորի ջիգյարը, սրտիկն, աչքերը հանել ու տաք-տաք կուլ տալ: Սկզբում բռնեցինք ագռավին: Մարդկային լեշեր ուտող ագռավները կուտակվել էին մեր թաղի ծայրամասում՝ բարդիների վրա: Մի թելի ծայրին մի կտոր միս կախելով, մեջը ասեղը խրելով՝ կախեցինք ծառի ճյուղից: Հիմար ագռավը միանգամից կուլ տալով սկսեց գլուխը տանել-բերել, նույն րոպեին թելի ծայրից ճգելով՝ ագռավը հայտնվեց Մճոյի ձեռքում: Անմիջապես քաշեցինք թևերի փետուրները, պոչը: Մի ոտքից թել կապած՝ նա ման էր գալիս մեզ մոտ: Երկրորդ օրը դիմացի բակերում, որոնք, գրեթե ձորում լինելով, իրենց գոյությունը պահել էին թուրքերից, նկատեցինք աքլորին: Զանոյի խորհրդով վերցրեցինք մի պարկ, մի կծիկ թել ու գիշերը գետն անցնելով՝ բարձրացանք և մոտեցանք հավերի բակին:

Հազիվ էինք մի երկուսին բռնել, երբ հավերի կչկչոցից հարևան տնից դուրս եկավ ցնցոտիներով մի մարդ և վախվխելով նայելով ու ձեռքի հրացանը ուղղելով մեզ վրա՝ հարցրեց՝ ո՞վ եք: Մճոն, աներկյուղ մոտենալով նրան և ինձ էլ կանչելով, ասաց.*«Արի՛, մի՛ վախեցիր»*,-և ներս մտանք: Երեք արաբ ասքյարներ, մի կերպ ողջ մնացած թվով հազարների հասնող արաբական զորքից, բախտի բերմամբ մտել էին այդ կիսավեր տունը և իրենց օրապահիկը հայթայթում էին գիշերային խավարում խղճուկ գաղթականներին թալանելով: Նրանք իսկույն իմացան մեր հայ լինելը, ինչպես և մենք՝ իրենց դասալիք փախստական արաբ զինվորներ լինելը: Այդպիսիք ենթակա էին տեղն ու տեղը գնդակահարման: Նրանք վատ էին խոսում թուրքերեն: Մճոն, սև աքլորը պահած, մնացած հավերը պարկով տվեց նրանց, բայց նրանք հրաժարվեցին, և ցույց տալով օջախը, հասկացրին, որ վառել չեն կարող: Ես ու Մճոն իրար նայելով՝ առաջարկեցինք նրանց Թորոսիկի ջրաղացը, որը հեռու էր և ապահով: Նրանք լիովին վստահելով մեզ՝ հագան իրենց հին լաթերը, վերցրեցին հրացաններն ու փամփուշտները և հետևեցին մեզ: Մի քանի րոպեից մենք ջրաղացում էինք: Նրանք նայեցին և ստուգեցին չորս կողմից մեկուսացված ամայի ջրաղացը, որը ոչ ոքի ուշադրության արժանի չէր: Մի քանի անգամ ձեռքերը սրտին ու ճակատին դնելով՝ գոհ եղան մեզնից: Մենք բաժանվեցինք իրարից: Նրանք դիտեցին մեր գետն անցնելն ու ձորերով անհետանալը:

Աքլորն ու ագռավը ճարեցինք, մնում էր կատուն, էն էլ՝ սև: Զանոյի աղեր-

սանքը, որ հեռու մնանք և հրաժարվենք այդ մոգական առասպելից, չազդեց: Մի քանի օր, հենց որ գիշերը մոտենում էր, մենք ձեռնամուխ էինք լինում այդ անպիտան կատվի որսին: Ճիշտ է թուրքերը շուն չէին պահում, բայց կատուն նրանց տան զարդն էր: Ստիպված եղանք դարանակալել մոտակա թուրքերի տանիքներում և հետևել կատուների երևալուն: Վերջապես չորրոդ օրը Իսմայիլ աղայի տան վերևում, Մճոյենց բակում լսեցինք մի քանի կատուների մռմռոցն ու գզվռտոցը: Բարեբախտաբար դրանցից երկուսն էլ սև էին: Նրանց աչքերը փայլատակում էին գիշերային խավարում: Իսկույն գործի դրեցինք ծառի դալար ճյուղերի չաթալներից մեր նախօրոք պատրաստած պարսատիկները: Մի քանի քարե անձայն գնդակներից կատուները սկսեցին գալարվել: Երկու կողմից վազեցինք և երկու կատվին էլ պարկը քցելով՝ հաղթանակով հասանք մեր վայրը:

Զանոն, ինքնազգացողությունը կորցրած, զառանցում էր: Նա ձեռքից գնում էր, Սառայի տեղը չգիտեինք, սև թռչունները, հատակին իրարից հեռու կապած, տնքտնքում էին: Ագռավը, գլուխը կախ, սատկում էր, սև կատուն, վզին թոկը պինդ կապած, նիհարել էր, նույնպես սատկելու նշաններ էր ցույց տալիս: Որոշեցինք դիմել աղախնի և ջրաղացպանի օգնությանը: Ես ուղղվեցի կուլուխի կողմը, իսկ Մճոն՝ դեպի ջրաղացպանը: Աղախինը ինձ սիրալիր ընդունեց և պատմեց Սառայի հաջողությունների մասին, որ նրան ամբողջ ղշլան սիրում և հարգում է: Ես առիթ էի փնտրում Սառային տեղեկացնելու մեր ընկերոջ հիվանդության մասին, բայց թե ինչպե՞ս ձևակերպել, չէի կարող: Հարցրի Իսմայիլ աղայի մասին:

-Հը՜մմ, շատ խորամանկն է, նրա թշնամիները մեկ-մեկ դուրս են գալիս մեջտեղից: Միայն Մուստաֆա բեկն է, որ մնացել է: Նրա ատամներն էլ երևի շուտով քաշի: Ֆաթմա խանումը շատ է խեղճացել, լեզուն իրեն է քաշել,-և մի շարք այլ տեղեկություններ՝ հարևանների չվելու և նոր մուհաճիրների գալու մասին:

Հայտնեցի, որ ես ուզում եմ տեսնել աղային: Նա հրճվեց և ձեռքը ուսիս դնելով՝ ասաց.

-Շատ լավ կլինի, մի քանի անգամ աղան հիշել է քեզ, նա քեզ լավ կպահի, հենց վաղը արի: Ես նրան կասեմ քո ողջ լինելու մասին:

-Խանո՛ւմ բաջի, էն բժիշկ կնկան ուզում եմ տեսնել:

Կտրուկ ասաց.

-Դա հնարավոր չէ, բայց փուսուլա /երկտող/ գրիր, ես անձամբ կտամ:

Ես հոգով և սրտով բավարարված էի, բայց հարկավոր էր Մճոյի հետ խորհրդակցել: Վեր կացա գնալու, նա ինձ չթողեց: Վազելով գնաց կուլուխի հիվանդանոցի խոհանոցը և մի պղինձ խաշլամա բերելով՝ դատարկեցինք շորի մեջ: Կապոցը ձեռքիս շտապեցի նզովյալ տունը: Զանոն ծանր շնչում էր, Մճոն չկար: Բացի աքլորից, երկու սև սատանաների աչքերի բիբերը ինձ կաշկանդում էին: Որոշեցի գնալ Մճոյի ետևից և իսկույն ձորով իջա գետը: Այդ պահին հիշեցի արաբ ասքյարներին, որոնք գետի մյուս ափին՝ երկու հարյուր մետր հեռավորությամբ էին: Մեխանիկորեն գետն անցա և ձայն տվեցի: Եր-

կուսն էին մնացել. մեկը անցյալ գիշեր՝ որսի պահին, զոհվել էր: Քաղցած էին, մեզանից բեթար հալ ու կացության մեջ: Խիղճս շարժվեց և ցույց տալով մեր տեղը՝ թևիցը քաշեցի, թե գնանք: Հոժարությամբ վերցրեցին հրացանները և շարժվեցինք նույն ճորով՝ մեզ մոտ: Խորխորատներով նրանց իջեցրի, ձեթի ճրագի աղոտ լույսը տեսնելով և՝ փա՜ռք քեզ Մահմեդ փեխանբար, ասելով՝ նստեցին: Անկողնում պառկածի հևոցը լսելով՝ արաբ զինվորը վեր կացավ տեղից և մոտեցավ հիվանդին: Տեսնելով, որ կին է, ինձ դառավ ու հարցրեց.*«Քո մա՞յրն է»*,-և ջուր ուզեց: Լվացվելուց հետո սրբիչը թաթախեց ջրի մեջ և ճակատին դրեց: Ինչպիսի ուրախություն պատեց ինձ, երբ տեսա, որ Զանոյի աչքերը բացվեցին և նա ջուր ուզեց: Ես փարչը մոտեցրի նրա բերանին, բայց արաբը ձեռքիցս վերցրեց, նայեց կողքերը, պնակը վերցնելով ողողեց և ումպ-ումպ խմեցրեց: Առավոտյան կողմ էր, ես անհանգստանում էի, Մճոն ուշացել էր և այդ սրտաճմլիկ պահին լսվեցին նրա ոտնաձայները: Որպեսզի նա հանկարծակիի չգար, ես երկրորդ մուտքի մոտ դիմավորեցի և հայտնեցի մեր հյուրերի մասին: Մճոն մի քանի բաղարջ էր բերել հետը, ես՝ խաշլամա: Նստեցինք հաց ուտելու և կերանք ախորժակով ու մեծ բավականությամբ: Մեր միանման բախտը մեզ հարազատներ էր դարձրել: Բայց մենք նկատեցինք, որ արաբները մեր կերածի կեսի չափ կերան: Մճոն հացն ու միսը հրամցրեց նրանց: Նրանք հրաժարվեցին, պատճառաբանելով, որ միանգամից շատ ուտելը կվնասի ստամոքսին: Սև սատանաներին տեսնելով՝ հարցրին, թե ինչի համար եք պահում: Մճոն հայտնեց մեր միտքը և նրանք ծիծաղեցին մեր միամտության վրա: Զանոյի տաքությունը իջել էր: Նա, անկողնում թիկնած, մեզ էր նայում: Արաբը երկու խոսքով մեզ համոզեց. առաջին հերթին կատվին բաց թողինք, գնաց, երեկոյան ագռավը հայաթից էն կողմ քցեցինք, իսկ աքլորից արաբը արգանակ պատրաստեց Զանոյի համար: Նրանք եղբայրաբար սկսեցին խնամել Զանոյին: Մճոն պատմեց, որ ջրաղացպանը այլևս այնքան ծանրաբեռնված չէր. քրդերը քոչել էին, ինչպես նաև թուրքական հարուստ խավը: Նա պատմել էր, թե ձեր հայ տղեն գիտե, որ Իսմայիլ աղայի մեծ դուշմաններից մեկին ու իր տղաներին ավազակները խփել էին և փողերը տարել: Պարզ էր, որ խոսքը Մուֆթանց շեյխի մասին էր:

Նստեցինք երկտող գրելու: Մեր նպատակն էր՝ հայտնել Զանոյի հիվանդության մասին, բայց Զանոն կտրուկ մերժեց, թե նա տաքարյուն կին է, ծայրահեղությունների կդիմի: Նամակ գրելը մեզ համար պրոբլեմ դարձավ: Զանոն դեմ էր, Մճոն, թե.«*Ի՞նչ գրենք, հանկարծ թուղթը բռնվի*»: Եվ այսպես որոշեցինք չգրել: Երեկոյան ես ու Մճոն աղախնի մոտ եղանք, նրան տվինք մեզ հետ բերած բաղարջներից մեկը և խնդրեցինք բժշկուհուն հայտնել, որ մենք բոլորս էլ լավ ենք: Այսպիսով կապ հաստատեցինք Սառայի հետ: Ցերեկները տամա էինք խաղում, գիշերները բաղի հավերն էինք որսում: Զանոն մի քիչ կազդուրվեց, մեր վիճակը որոշ չափով բարելավվեց:

Սառան ուժերի ներածի չափով, իր ունեցած բժշկական գիտելիքներով աշխատում և գործում էր հանուն հիվանդ վիրավոր մարդկանց: Նա այնպես էր տարվել իր պարտականություններով, որ կարծես մոռացել էր, որ ծառա-

յում էր իր թշնամիներին: Նա քույրի հոգատարությամբ մաքրում էր նեխած, թարախակալված վերքերը, իր ձեռքով սպեղանի քսում, անկախ հիվանդի ով լինելուց, նրա կոչումից, նրա բարձր ու ցածր աստիճանից: Բայց, ինչպես ասում են, թշնամին գործում էր, նենգավորները կարողացան թափանցել և խաթարել: Մի երեկո, հոգնած վերադառնալով, սովորականի նման նստեց գլխավոր բժշկի սեղանին կռթնած: Հանկարծ նկատեց, որ ինչ-որ թուղթ գլխավորը վերցրեց և սեղանի դարակը քցելով՝ փակեց: Գլխավոր բժշկի միամիտ հայացքը և զգուշությունը մատնեց նրան, այդ ակնթարթը չվրիպեց Սառայից: Կասկածը փարատելու համար՝ Սառան քաղաքավարությամբ հարցրեց, թե որևէ շտապ գործեր չկա՞ն և ժպտալով ու բարի գիշեր մաղթելով՝ գնաց քնելու: Քանի որ նրանց կացարանները մի միջնորմով էին բաժանված, մեկը մյուսի ներս-դուրս գնալ-գալը իմանում էին: Կես ժամից գլխավոր բժշկի *ղշլայից* ձիով դուրս գալը դուր չեկավ Սառային և դրսի դուռը փակելով՝ նա մոտեցավ պահարանին: Մկրատի ծայրով բացեց փականքը և վերցրեց գրությունն ու կարդաց. *«Գերմանական հյուպատոսության կողմից հույժ գաղտնի տվյալների փաստերով. Ձեզ մոտ բուժքույր աշխատողը հայ է, առաջարկվում է խիստ հսկողության տակ պահել: Մենք շուտով կպարզենք նրա ով լինելը: Ստորագրություն, սեր քոմսեր...»*:[200] Նամակը նույնությամբ տեղը դրեց: Սառան սպասարկում էր մոտ հարյուր հիսուն հիվանդների, որոնցից քառասունութիցհիսուն հոգին՝ մի սրահում զինվորական բարձր կոչումներ ունեցողներ էին, կրթված ու գրագետ: Հատկապես նա իր ուշադրությունը կենտրոնացրել էր աստիճանավորների վրա, քանի որ իրենք իրենց երիտթուրքեր[201] էին համարում: Օգտվելով գլխավոր բժշկի բացակայությունից՝ նա վեր կացավ, գնաց հիվանդանոցի դեղատուն, ստուգեց, սրվակից սրվակ դեղեր լցրեց: Իր սեփական դեղից պատրաստեց միևնույն սրվակի մեջ, չշփոթելու համար տառերով նշան դրեց և եկավ քնելու: Ուշ գիշեր էր, երբ գլխավոր բժիշկը եկավ և իսկույն անցավ իր կացարանն ու քնեց: Առավոտյան, սովորականի նման շուտ վեր կենալով՝ Սառան անցավ ինքն իր հորինած, ստեղծած պարտականությունների կատարմանը՝ նույն հայացքով, նույն ժպտերես դեմքով: Բայց նա ուշիմորեն հետևում էր գլխավոր բժշկի շարժումներին, նրա մոտ գնացող-եկողներին՝ առանց մեկն ու մեկի ուշադրությունը գրավելու:

Կեսօրին երկու փոլիս եկան, տեսնվեցին գլխավոր բժշկի հետ, խոսեցին և ուշադիր հետևեցին Սառայի գործերին ու շարժումներին: Գլխավոր բժիշկը, գոհացնելով նրանց, ճամփու դրեց: Անցան իրենց ճաշասենյակը՝ ըստ սովորականի ճաշելու: Գլխավոր բժշկի ախորժակը փախել էր, իսկ Սառան այսօր ավելի կատակներ էր անում, սիրալիր բրդուճներ մատուցում, ստիպում ուտել: Երեկոյան թեյին գլխավոր բժիշկը խիստ թմրած ու դիլխոր էր: Սառան մոտեցավ, կանգնեց կողքին, բռնեց նրա զարկերակը և ափսոսանքով ասաց. *«Դուք հիվանդ եք, պետք է հանգստանաք»*: Թուրք բժշկի մոտ որոշ մարդասիրական զգացմունքներ երևան եկան: Պառկելով տեղում, մի բաժակ թեյ վերցնելով Սառայից՝ նա դժվարությամբ արտասանեց. *«Յավոք սրտի, մենք պետք է շուտով բաժանվենք»*,-և մի կում անելով՝ բաժակը սեղանին դրեց: *«Պեյը՛մ*,-ա-

սաց մեղմորեն Սառան,-*չէի՞ք ուզեևար, ես էլ Ձեզ հետ գայի»*: Մի պահ լռելուց հետո՝ բժիշկը ասաց.*«Դա ինձնից կախված չէ, և դժբախտաբար անկարելի է»: «Պեյը՛մ, հայտնի չէ՞, ե՞րբ ենք բաժանվելու»: «Չգիտեմ, չգիտեմ, երբ հրամայեն այդ անիծյալները»*,-և գլուխը կոխեց վերմակի տակ:

Սառան առտուն կանուխ մտավ դեղատուն, իր հետ բերած բոխչան վերցրեց, հագնվեց, կապնվեց, ատրճանակը ստուգեց, պատրաստի վիճակում դրեց ֆատման, դեղատան դուռը կիսափակ թողնելով գնաց ախոռատուն՝ կարգադրեց իր և գլխավոր բժշկի համար ձիեր թամբել: Իսկույն դեղատուն մտնելով՝ վերցրեց նախօրոք պատրաստած երկու սրվակները, մտավ զաբիթների սրահը: Մեկ առ մեկ քնաթաթախ մարդկանց արթնացնելով, սրվակը թափ տալով, մեկ-մեկ *ֆինճան* /փոքր բաժակ/ դարման խմեցնելով և գրպանից մի-մի կտոր *փինի* շաքար տալով հիվանդներին՝ հասավ իրեն աչքի ընկնող աչքատյաց զաբիթին, որը թիկունքից թեթև վիրավոր էր: Հենելով բարձին՝ նստեցրեց, իր ձեռքով մինչև վերջ խմեցնելով դեղը և փուխր շաքարի կտորը բերանը սեղմելով՝ շարունակեց իր առաքելությունը: Շշերը դատարկելուց հետո, դուռը ծածկելով դուրս եկավ: Սրվակներն ու բաժակը գցելով մոտակա աղբակույտին՝ ջարդեց և ձեռքով ախոռապանին անելով՝ ձիերը ուզեց: Ներս մտնելով իր կացարանը՝ հագավ ֆաթան, անցավ գլխավոր բժշկի մոտ: Նա դեռ քնած էր և ծանր էր շնչում: Պինչը բռնելով՝ փոքր սրվակը դատարկեց բերանը, ծածկոցով ծածկեց ու սրվակը սեղանին թողնելով՝ դուրս եկավ: Ձին պատրաստ էր: Ասքյարին ուղարկեց դարպասի դուռը բաց անելու, իսկ ինքը նժույգին նստելով՝ մտրակեց՝ ուղղվելով դեպի կոք մեյդան: Սառան գլխավոր բժկի հետ հրաժեշտի պահին մի երկտող թողեց.*«Հարգելի՛ բժիշկ, Դուք խոհեմ, մարդասեր, բարի և ձեր գործին նվիրված մարդ էիք: Ձեզ մոտ աշխատելով և հիվանդներին բուժելով՝ մեծ միսիթարություն և սփոփանք իմ վերքերին: Սակայն Ձեր գիշատիչները վարանեցին ձեր սիրտն ու հոգին և իմ նվիրված, անշնազոհ աշխատանքը քամուն տալով՝ կամեցան ինձ, որպես մի անսասան կնոջ, խայտառակ մահով պատժել: Ես կատարեցի արժանի հատուցում: Ես Ձեզ ոչ միայն հարգում էի, այլև սիրում էի որպես հոր, և դուք արժանի էիք: Ձեմ ափսոսում դավաճան հորս սպանելուս համար, քանի որ այդ պահանջում էր ներկա իրադրությունը: Խոնարհելով գլուխս՝ հավերժ գնաս բարով... .Էլինե»:*

Կանխազգացումները Սառային չօգնեցին ազատվել: Ներքին գործերի իշխանությունը ապացուցված փաստերով համոզվելով, որ ստացված տեղեկությունները ճշմարիտ էին, որոշել էր այս գիշեր անակնկալի բերել և վերցնել սատանային իր գահից: Սակայն քոմսերի ուշանալու պատճառով առավոտյան երկու պոլիս և չորս ժանդարմ եկան կշլայ հիվանդանոց՝ ակամա, «փառավոր պայմաններում» Սառային ձերբակալելու: Կոք մեյդան չհասած՝ ձիով Գոմաց ճամփի խաչմերուկ բարձրանալիս, Սառան նկատեց փոլիսներին ու ժանդարմներին: Կարևորություն չդարձնելով՝ դիտավորությամբ մտրակեց ձիուն: Ոստիկանությունը կասկածելով հարցրեց և առաջարկեց ցած իջնել ձիուց: Սառան ձիու կողքին բրդելով ուզեց առաջ անցնել: Երկու ժանդարմնե-

ը՝ ատրճանակները ձեռքերին պահանջեցին կանգնել: Սառան՝ կորե՛ք ասելով, ուզեց օղակից դուրս գալ և մտրակեց ձիուն: Ոստիկաններից երկուսը կրակեցին ձիուն, որը մի երկու քայլից վայր ընկավ: Սառան շփոթվեց: Անմիջապես վեր կենալով՝ ատրճանակը պարպեց դիմացի երկու ժանդարմների վրա: Նրանք տապալվեցին իր կողքին: Ոստիկանները, անակնկալի գալով ու շփոթվելով, պառկեցին և նշան բռնելով պահանջեցին՝ *թեսլիմ օլ* /հանձնվիր/: Սառան անխուսափելիորեն երկրորդ անգամ կրակեց նրանց վրա: Լսվեցին պատասխան կրակոցները: Չորս վիրավոր դեռ տնքում էին գետնին: Սառան վիրավոր թևով ընկած վիճակում վերցրեց գետնին ընկած ժանդարմի ատրճանակը, նորից կրակեց փոլիսների վրա և ուժասպառ ընկավ կողքին: Թևից և կողքից վիրավոր Սառան ընկավ դահիճների ձեռքը:

Խիստ կարգադրված էր.*«Կասկածելի կնոջը բռնել, ողջ-առողջ, նույնիսկ պարվավոր կերպով ներկայացնել պալատյայի քոմսերին»*: Կոք մեյդանում գտնվող զինվորական վրաններից, լսելով ատրճանակի ձայներ, խուճապահար զինվորներն ու սպաները շտապեցին դեպքի վայրը: Սարսափելի տեսարանը տարակուսանքի մեջ թողեց զինվորականներին: Որոշեցին անմիջապես հայտնել ոստիկանությանը և զինվորներով շրջափակելով՝ սպասեցին նրանց գալուն: Մոտակա թուրք թաղերից հավաքվեց ամբոխը: Ուզեցին հարձակվել մեջտեղում նստած վիրավոր կնոջ վրա, կտոր-կտոր անել, բայց զինվորների կուռ շրջափակումը թույլ չտվեց ոչ ոքի մոտենալ: Մի քանի րոպեից եկավ ոստիկանությունը և բարձրաստիճան զինվորական սպաներ: Որոշեցին կնոջը վերցնել և քննության ենթարկել: Այս խառնիճաղանջ դրության պահին եկան հիվանդանոցի սպասարկողներից և հայտնեցին զաբիթների թունավորման մասին: Կատաղության և ջղայնության նոպաներով լցվեցին բոլոր ներկաները: Բոլորը միաբերան բոռում, գոչում էին՝ սատկացնել գյավուրին, բայց պահակությունը թույլ չտվեց: Պահակների խիտ ցանցով շրջապատված Սառային սայլի վրա քցելով՝ փոխադրեցին բալատեան՝ գլխավոր ոստիկանությունը: Ամբողջ քաղաքով, նույնիսկ զինվորական շրջաններում տարածվեց այս անսովոր, նույնիսկ անհավատալի դեպքի պատմությունը: Այնպիսի իրարանցում տեղի ունեցավ շուկայում, որ բոլորը, խանութները փակելով, գնացին կոք մեյդան և հիվանդանոց՝ սպանվածների և մեռնողների դիակները տեսնելու: Հարց էին տալիս մեկմեկու, թե ո՞վ է կատարել այդ ոճրագործությունը, և բոլորի պատասխանը նույնն էր.*«Էն գյավուր կինը, որին բերին պալատեան»*: Հարցաքննությունն երկար չտևեց: Սառան իր ով լինելը ոչ մի տանջանքից հետո չհայտնեց: Քոմսերի այն հարցին, թե.*«Ինչու՞ թունավորեցիր վիրավորներին»*, Սառան կտրուկ պատասխանեց.

-Չե՛ր, իմ սրտում լցրած, կուտակած թույնը ես ձեզ վերադարձրի: Ափսոսում եմ միայն բժշկին, բայց դա էլ անհրաժեշտություն էր:

Որոշվեց գյավուրին հանձնել ժողովրդի դատաստանին՝ հաջորդ օրը, ցերեկվա ժամը տասներկուսին, կոք մեյդանում:

* * *

Իսմայիլ աղան երեկոյան տուն եկավ ցնդած: Աղախինը հարևան թուրքերից իմացել էր որոշ բաներ: Ճաշի նստելիս նա հանկարծ բացականչեց.«*Մաշալա՜հ, մի անտեր կին և այսքան մեծ իրադարձություն*»: Նա, առանձնանալով թոնրատանը, կանչեց աղախնին և հարցրեց.

-Դու էս վերջերս չե՞ս տեսել էն գեղեցիկ հայ կնոջը: Հիշու՞մ ես նա մի երկու անգամ Նուրիի հետ մեզ մոտ եկավ:

Աղախինը բացասական պատասխան տվեց:

-Ինձ թվում է, այս ամբողջ *դալմաղալը* նրա արած գործն է:

Իսմայիլ աղան նայել, տեսել էր անկյունում քցած ջարդված կնոջը, բայց չէր հաջողացրել դեմքը տեսնել: Դառնալով աղախնին՝ ասաց.

-Ես տեսել ու լսել էի հայ ֆիդայիների քաջությունների մասին, համա էսպիսի՜ բան, որ էսօր աչքովս տեսա, պատմելու, լսելու բան չէ:

* * *

Ինք վերջապես որոշեցինք նամակ գրել Սառային: Արաբների շնորհիվ Զանոյի առողջությունը լավանում էր: Մեր և արաբների միջև վստահությունը ավելի ուժեղացավ: Գիշերը ես ու Մճոն երկտողը տարանք՝ աղախնի միջոցով Սառային հանձնելու: Նա մի կողմ կանչելով մեզ, պատմեց Սառայի հետ կապված երեկվա դեպքերի մասին և հաստատեց Իսմայիլ աղայի խոսքերով: «*Խանում ավլա*, բա չգիտե՞ս, որտե՞ղն է հիմա այդ կինը»: Նա կարճ պատասխանեց.

-Ես չգիտեմ ուր է, բայց Իսմայիլ աղան ասաց, որ վաղը նրան կոք մեյդանում քարկոծելով կսպանեն:

Անմիջապես հետ եկանք, նստեցինք խորհրդակցելու: Զանոն երերաց ու անկողնում վայր ընկավ: Արաբները, լսելով մեր պատմությունը, հայտնեցին իրենց օգնության ու մասնակցության մասին: Ես պարզ ասացի, որ Սառան ծանր վիրավորված է և նրան փախցնել հնարավոր չէ: Մճոն ու ես արաբներին պատմեցինք Սառայի հետ կապված ամեն ինչ, նրա շնորհիվ կատարած գործերի, վրիժառության մասին: Ինչպիսի՜ մեծ ոգևորությամբ էին մեզ լսում, նամանավանդ Զանոյի ու մեր մեծ սրտի տեր, սիրելի մորաքույր Մարթայի մասին: Մճոն կտրուկ որոշեց, որ վաղը ինքը կգնա կոք մեյդան: Զանոյի աղաչանքին ու պաղատանքին, այն փաստարկումներին, թե անօգուտ է և վտանգավոր, Մճոն լացով պատասխանեց.«*Ես անտարբեր մնալ չեմ կարող: Նա ինչ կանչում է: Ես պետք է գնամ»:* Արաբները ոգևորվեցին: Մճոյի համառությունն ու սրտոտությունը նրանց հրավիրեց մարտադաշտ նետվելու: Զանոն, նայելով արաբներին, ասաց. «*Թշվառնե՜ր, ձեր կյանքը վտանգված է: Ձեզ տեղն ու տեղը կգնդակահարեն*»: Մճոն և ես մոտեցանք նրանց և թևերին խփելով՝

խնդրեցինք չխառնվել մեր գործերին, բայց նրանք իրենց քրջերից հանեցին ատրճանակներն ու փամփուշտները, երդվեցին իրենց մարգարեի անունով, որ պետք է գնան, տեսնեն այդ քաջարի կնոջը և մեզ երկու խոսքով ասացին.

-Միևնույն է, մենք ողջ չենք մնալու և մեր երեխաներին չենք տեսնելու: Մեր բոլորիս բախտն էլ ձեր բախտից է: Ձեզ բացահայտ են կոտորում, իսկ մեզ նենգությամբ, գաղտնի:

Արաբներից մեկը մի կտոր թուղթ ուզեց, իրենց լեզվով սահուն կերպով գրեց մի կարճ երկտող, ներքևում հասցեն՝ Հալեպ քաղաք, յուրայիններին և հանձնեց Զանոյին՝ խնդրելով.*«Եթե բախտը Ձեզ ժպտա, էս թուղթը կուղարկեք»*: Մճոն բերեց Սառայի զինվորական զգեստները: Նրանք ուրախացան և հիացան այդ գյուտով: Իսկույն հագան մեկը՝ զաբիթի, մյուսը՝ զինվորի համազգեստը: Իրենց՝ մինչ այդ վիճակի հետ համեմատած, նրանք անճանաչելի էին դարձել: Լույսը չբացված՝ նրանք Մճոյի ուղեկցությամբ ձորով իջան գետն ի վար, անցան Թորոսիկի կամուրջը. զինվորը՝ հրացանով, սպան՝ ատրճանակով զինված, Մճոն՝ հնարավորին չափ թրքական շորերով: Գետից անջատված առվի ուղղությամբ թմբերով գնալով՝ հասան ջրաղացը: Մճոն նրանց կանգնեցրեց կամրջակի մոտ, իջավ քուրդ ջրաղացպանի մոտ և համարձակ պատմեց իր լսածների և Սառայի բռնվելու մասին: Ջրաղացպանը ատամները կրճտացնելով ասաց.*«Ես լսել էի, բայց չգիտեի, որ այդ կինը ֆեր բարեկամն է եղել»*: Շատ խնդրեց, նույնիսկ բռնելով ներս քաշեց տղային, բայց համառ Մճոն հրաժարվեց և արաբ ասքյարների նամակը քրդին տալով՝ ասաց.*«Քո վզին մեղք, եթե այս թուղթը չուղարկես իր հասցեով»*: Արաբները անհանգիստ սպասում էին Մճոյին, բայց նա ուշանում էր: Ստիպված իրենք էլ եկան ու մտան ջրաղաց և տեսան, թե ինչպես քուրդը, Մճոյի ձեռքից ճգելով, աղերսում է հրաժարվել իրենց մտադրությունից: Տեսնելով, որ անհնարին է Մճոյին իր մտքից հետ պահել, նայելով Մկրտիչի արցունքոտ աչքերին և անիծելով բախտը՝ ասաց.

-Գնացե՛ք, բայց իզուր չմեռնե՛ք,-ու դառն հեկեկալով՝ նստեց ջրաղացի ներսում, իր սովորական սադրին՝ աչքերը հառած գնացողներին:

Առավոտվանից «Կոք մեյդան» կոչված հրապարակը լցվեց ամբոխով, որը զզվելի հայհոյանքներով պահանջում էր իրեն հանձնել գյավուրին: Այդտեղ էին կրոնավորները, առևտրականները, զինվորականներն ու ոստիկանական ջոկատները: Լավայի նման շարժվում էր ամբոխը: Բոլորը բորբոքված էին երեկվա դեպքից: Ոմանք աստվածացնում էին քաջակորով գյավուր կնոջ անհավատալի գործնեությունը և կատարածը, ոմանք վերագրում *շեյթանի* /սատանա/ գործին ու խուսափում այդ դևի կատարած դերից՝ մեղադրելով ոստիկանությանը ապաշնորհության մեջ: Լսվեցին ձայներ, մի ջորու վրա կապված՝ բերեցին կիսամեռ արնաքամ եղած գյավուրին: Խելագար ամբոխը տեղաշարժ կատարեց: Սկսվեց իրարանցումը և պահակ զինվորականներին սեղմելով՝ հարձակվեցին պահակախմբով բերվող կիսաշունչ դիակի վրա: Սառային կապեցին հեռագրասյունին: Պալատյայի քոմսերը և ամբոխին խրախուսող մոլլան մոտեցան ու պատմեցին գյավուր կնոջ կատարած

զարհուրելի սպանությունների մասին և, որպես ոճրագործի, թողեցին հավաքվածների դատաստանին: Մոլլան, մի երկու խոսք ասելով,[202] իր պիղծ բերանով թքեց Սառայի վրա ու հետ քաշվեց: Ոստիկանապետը, ատրճանակը բարձրացնելով, դիմեց ամբոխին.*«Առաջինը ես կխփեմ հյուքյումեթի անունից»*,-և երեք գնդակ ուղղեց Սառայի կախված գլխին: Նա դեռ չէր վերջացրել խոսքը, երբ Մճոն՝ իմ սիրելի ընկերը, իր սուրբ ձեռքով կրակեց ոստիկանապետի և մոլլայի վրա: Պարպելով ատրճանակը՝ մոտեցավ Սառային, գրկեց նրա կապված ոտքերը, երկրորդ ատրճանակով գետնին պառկեցրեց իրեն մոտեցողներին ու նորից փաթաթվեց Սառային: Զինվորների ու ժանդարմների տասնյակ գնդակներով խոցված՝ ընկավ իրեն պաշտամունք դառած Սառայի ոտքերի տակ: Արաբները մինչ այդ դիտողի դերում էին: Տեսնելով Մկրտիչի անձնուրաց մահը և ամբոխի խայտաբղետ շարժումները՝ մոտեցան զոհվածներին և բարձրաձայն ասացին.*«Դուք անհավատներ եք: Երեկ հայերին էիք սպանում, այսօր ուղղափառ արաբներին: Էս ֆեզ համար քիչ է, նոր մեծ դատաստանը հեսդ կգա»*,-և ատրճանակը ուղղելով զինվորականների վրա՝ իրենք էլ նահատակվեցին՝ զոհ գնալով մի քանի օրվա մարդասիրությանը և խղճմտանքին:

Այսպես, անտանելի կերպով զրկվեցինք մեր սիրելի Սառայից, մեր քաջակորով, սրտոտ անձնուրաց ընկերոջից՝ մեր հարազատ Մկրտիչից: Զանոն, լսելով մեր բախտակիցների մահվան մասին, արտաքուստ ցույց չտվեց իր տխրությունը, միայն դառը կսկիծով ասաց.

-Նրանք գործեցին թշնամուն դեմ առ դեմ, մահացան՝ իրենց վրեժը լուծած, իսկ ես այստեղ չգիտեմ անելիքս ու վերջս,-և գլուխն ու դեմքը ծածկեց:

Երեք օրից իմ միակ բարեկամը, իմ կարեկիցն ու խորհրդատուն մահացավ: Ես մենակ, իմ ձեռքերով նզովյալ տան թոնրատանը փորեցի իմ սիրելի մորը փոխարինող մորաքույր Զանոյի գերեզմանը: Ամեն ինչով նրան էի պարտական: Վերջին հրաժեշտը տվի և մի ափ հող լցնելով գրպանս՝ լուսադեմին հեռացա այդ շենքի սահմաններից:

Դժբախտաբար կրկին որբացա: Ծնողներիս, հարազատներիս մոռացած՝ տանջվում էի Սառայի, Զանոյի, Մկրտչի կորստով: Չնայած նրանք գնացին փառաբանված մահով, կրկնակի ու քառակի անգամ լացացնելով թշնամուն, իմ հոգում, իմ սրտում թողնելով նրանց՝ ինձ ոխակալություն, տոկունություն ներշնչողներին արժանանալու, երախտիքի ու պարտքը հատուցելու զգացում:

* * *

Անցել էր մի քանի օր: Նկատեցի մեր և մյուս հայկական թաղերում ոստիկանության ակտիվությունը: Քաղցած գաղթականությունը և տեղական խուժանը մթերք հայթայթելու համար շրջում ու լցվում էր հայոց տները, բայց տանում էին ամեն ինչ, ինչքան կարող էին: Հանկարծ մի արժեքավոր պա-

տառ գտնելու դեպքում՝ նրանք վիճում էին իրար հետ, անգամ խոշտանգում իրար՝ հասցնելով մարմնական վնասվածքներ:

Աշուն էր: Ես մենակ տառապում էի՝ գիշերները ուրվականի նման թափառելով տնից տուն: Ցերեկները պառկում-քնում էի և հազար ու մի երևակայություններով ու նախապաշարումներով ինքնամոռացության մեջ ընկղմված՝ նախանձում էի ամեն մի թփի շարժմանը, մկների, առնետների ազատ վազվզոցին ու ճստճստոցին: Փոխադրվեցի Մճոյի գերեզման-դամբարանը: Գիշերվա մթնշաղին աչքիս առաջ գալիս ու գնում էին այլանդակ դեմքերով գոռնափշտիկներ, որոնք ինձ ջղայանցնում ու գայթակղեցնում էին այն աստիճան, որ ես, անկախ ինձանից, դուրս էի գալիս գերեզմանափոսից և վազելով քարկոծում նրանց: Այս չարաբախտ տեսիլքները գնալով կրկնապատկվում էին և ես, ինչքան էլ ինքս ինձ ներշնչում էի, թե իմ թույլ էության, երկյուղածության հետքերն էին դրանք, այնքան ֆիզիկապես գլորվում էի այդ ֆանտաստիկ կյանքի ու կենցաղի մեջ: Այս դրությունից դուրս գալու համար որոշեցի փոխադրվել մի ուրիշ վայր: Մի գիշեր կուժը ձեռքիս իջա ջուր վերցնելու: Լուսնյակ գիշեր էր: Կռացած, փարչը ջրի մեջ սեղմելու պահին տեսա մի գզգզված մազերով հրեշի, որն աչքերն հառած ինձ էր նայում: Սաստիկ վախից կուժը քցեցի և ճչալով, գետն անցնելով՝ դիմացի թուրքերի թաղը վազեցի: Իմ ձայնից հարևան տների տանիքներին քնող թուրքերը վեր թռան և փախչող ուրվականին՝ շեյթանին տեսնելով, քարերով ու փայտերով հալածելով՝ ինձ բռնեցին: Այո, ես ինքս ինձ մատնեցի: Մի լավ ծեծ ուտելուց հետո, ինձ առավոտյան հանձնեցին ժանդարմներին, որոնք իմ այլանդակ դեմքը տեսնելով՝ մի քանի հարված տալուց հետո, տարան Ս.Սարգիս եկեղեցու ճամբարհավաքակայանը: Դամբարանում մնալով՝ ես խիստ հյուծվել էի, թեփոտվել, կոշտացել էր մարմինս, մազերիս մեծ մասը թափվել էր: Ճամբար-կայանում եղած բախտակիցներս՝ տարբեր թաղերից, գյուղերից կանայք ու աղջիկներ էին, որոնց թուրքերը մի որոշ ժամանակ պահելուց հետո, հանձնել էին իշխանություններին: Եկեղեցու դուռ-դարպասը բացվում էր փողոցի վրա, իսկ շենքի ետևում այգին էր՝ բարձր պարսպով շրջապատված: Եկեղեցին գտնվում էր թուրքական թաղամասում: Երկրորդ օրը առավոտյան, լուսաբացին ժանդարմները, մեզ դուրս բերելով, շուկայի միջով մահվան Արաբու կամուրջ տեղափոխեցին: Բոլորս, հաշտված մեր բախտի հետ, գլուխներս կախ գնացինք: Շուկայի բազալների՝ խանութների մեջտեղի նեղ փողոցով անցնելիս ժանդարմների միջնորդությամբ թույլատրվեց ուտելիք գնել: Կանանցից վերցնում էին արծաթ, ոսկի դրամներ, մնացորդը՝ գրպանում: Վերցրեցինք հաց, պանիր, ժաժիկ: Ճիշտն ասած՝ թուրքերը ցավակցում էին մեզ: Անցնելով հացի երեք միմյանց մոտիկ փռերից ու կամրջից՝ մոտեցանք պալատյայի մոտ գտնվող ցորենի մեյդանին: Ձեռքումս մի ոսկի պահած՝ ես աննկատելիորեն մտա ոստիկանության խոհանոց-ճաշարանը: Տարբեր համեղ ճաշերի հոտն ու բույրը տարածվել էր չորս կողմը: Խոհանոցի օջախների վրա հերթով շարված պղինձներում եփվում էին անուշահամ ճաշերը: Ոչ ոքի չնկատելով՝ ես, պղինձներից մեկի բերանը բացելով ու շերեփը խփելով, եռացրած ջրից հանեցի իշլի

քյուֆթաներն ու սուջուխների հետ լցրի կախված *փեշկիրի՝* սրբիչի մեջ և դուրս եկա: Քարավանը հեռացել էր տասներկուսից-տանհինգ քայլի չափ: Հանգամանքներից օգտվելով՝ ես վազեցի դիմացի կողմը՝ խանութի արանքի նեղլիկ ճամփով դեպի չարչնոցի ու սոլկարնոցի տանիքների կողմը: Դեռ չէի հասել տանիքներին, չգիտեմ ինչպես, որտեղից, ժանդարմները ինձ նկատելով, վազեցին հետևիցս ու պոռացին՝ կանգնել: Ես ուշադրություն չդարձրի նրանց կանչին և հարթ տանիքների վրայով վազելով՝ հասա Ուլի ջամու մինարեթի ստորոտին: Ժանդարմների ձայներից, հրահրոցներից՝ տարբեր անկյուններից, տեղերից դուրս եկան թուրքեր, գնալով շատացան և սկսեցին չորս կողմից հետապնդել ինձ: Ձեռքիս փաթոցի մի մասը թափելով, մնացածը ծոցս լցնելով՝ ճարահատյալ աստիճաններով իջա մզկիթի բակը և վազեցի դեպի մզկիթ:

Այդ պահին հիշեցի, որ մզկիթում թուրքերը սպանություն չեն կատարում, քանի որ գյավուրի արյունը կամ դիակը կպղծի Աստծո տաճարը: Մզկիթ մտնելով՝ ոչ մի նկար, տաճարային զարդ, քանդակ և այլ սրբություններ չտեսա: Բակում նամազ անող ոտաբոբիկ հավատացյալները և կատաղած ամբոխը հայհոյանքներով մոտեցան դռանը: Ես, մզկիթում դես-դեն նայելով, դուրս փախչելու անցք էի որոնում, բայց եղած փոքր լուսամուտները իմ հասակից բարձր էին: Երբ ես մոտեցել էի այն բարձունքին, որտեղ դրված էին մի քանի գրքեր՝ ապրշումի գույնզգույն շորերով ծածկված, այդ օրհասական պահին լսեցի մոլլայի ձայնը.*«Գյավուր օղլի, դուրս արի և գնա՛ այստեղից, երդվում եմ փեխանբարի անունով, քեզ այստեղ ոչ ոք չի՛ բռնելու»*,-և դառնալով ամբոխին, ապա ժանդարմներին ու գոռալով նրանց վրա՝ առաջարկեց բոլորին հեռացնել մզկիթի բակից դուրս: Ես ներսը՝ բեմի վրա կանգնած էի, բայց դռնից տեսա, թե ինչպես ժանդարմները գոռգոռոցներով, հրմշտելով դուրս էին հանում կատաղած խուժանին: Նորից ինձ դիմելով, շեմից ներս մտնելով և դուրս գալու պահին՝ մոլլան ասաց ու հայտնեց.*«Բակում ոչ ոք չկա, շուտ դուրս արի իմ եւրևից, ես քեզ կտրանեմ»*,-ու շարժվեց: Բեմից դուրս վազելով՝ ես բնազդորեն, թե գիտակցաբար, նախքան դռնից դուրս գալը, տեսա մոլլային և դռան կողքերի ժանդարմներին: Մոլլան՝ նրանց մոտենալով, կարգադրեց ժանդարմներին հեռանալ դարպասից և ինքն էլ աստիճաններով բարձրացավ նրանց կողմ՝ դեպի դարպասն ու ինձ կանչելով երդվեց, որ դռան մոտ ոչ ոք չկա: Թերևս, ճիշտ ասաց մոլլան: Ես մեխանիկորեն հետևեցի նրա ձայնին, բայց հազիվ էի մոտեցել դարպասի աստիճաններին, երբ լսեցի ամբոխից որոտացող խռպոտ բացականչությունները՝ գյավուրը գալիս է: Զգոնությունս ինձ դրդեց, և ես, նույն ակնթարթում հետ վազելով, մոտեցա նամազի ավազանին և նկատելով մի նեղլիկ, բայց հաստ դուռ՝ եղնիկի նման թռա երեք-չորս աստիճաններով, ներսից սողնակով փակեցի դուռը և ծուռ ու մուռ աստիճաններով սկսեցի վեր բարձրանալ: Անկախ ինձանից, ինքս ինձ տեսա մինարեի բարձունքում՝ կլոր սրահ հիշեցնող մոլլայի աղոթարանում: Մինարեի աշտարակում ինձ տեսնելով՝ թուրքերը բորբոքվեցին: Ներքևի խանութների հարթ տանիքների վրա կուտակված խառնիճաղանջ ամբոխը ինձ տեսնելով մինարեի

աշտարակի վերևում, նույնպես բորբոքվեց, բայց բարձրանալու, ինձ բռնելու ոչ մի հնարավորություն չկար. միակ դուռը մզկիթի բակի միջից էր, որն ես սողնակով փակել էի: Ես աշտարակի կլոր միջանցքով ման էի գալիս մինարեի շուրջը: Թուրքերի, նամանավանդ կրոնամոլ հայատյացների կատաղությանը չափ չկար: Նրանք պահանջեցին ժանդարմներին՝ կրակել ինձ վրա: Այդ պահին ես լսեցի ներքևի փակ դռանը կպնող հարվածները: Մոլեգնած կրոնամոլները ձեռքով, ոտքով դուռը ջարդելու հնարավորություն չունեցան: Ժանդարմները դուռը ջարդելու համար մոլլայից թույլտվություն պահանջեցին: Ներքևից դեպի ինձ սուրացին ատրճանակի մի քանի գնդակներ: Մոլլաների ու շեյխերի կողմից արգելվեցին կրակոցները: Այդ պահին ես լսեցի դռանը կպնող կացնի հարվածները: Հանկարծ հիշեցի, որ եթե մզկիթի մեջ հայի, գյավուրի արյուն թափվի, Մահմեդի սրբատեղը և աղոթարանը կկեղտոտվեն և կհարամեն, ստիպված պիտի քանդեն ու նորից կառուցեն: Այս միտքը իրենց մոլլայից էլ լսեցի, երբ նրանք կրակողներին արգելեցին.

-Գյավուրի արյունը մարգարեի լուսատեղից հեռու թափեցեք:

Դռան ճռռոցը լսելով ու զգալով, որ պիտի բարձրանան վերև և ինձ բռնեն, ճչալով ու աղաղակելով հայտնեցի.*«Եթե վերև բարձրանաք, ես մինարեից ներքև կթռնեմ»*: Բարձրացա շրջանցող պատին և նորից պոռալով ասացի.*«Թողե՛ք ինձ դուրս գամ դռնից, ինձ ողջ չե՛ք բռնի»*,-և պատրաստվեցի թռնելու: Մինարեի շուրջը, ձեռքերս բարձրացրած, պատի վրայով քայլեցի, ուզում էի թռնել մեռնել և կենդանի չհանձնվել այդ կատաղած ամբոխին: Մոլլաները, մի շարք հեղինակավոր թուրքեր, ինչպես և փոլիսները, տեսնելով ինձ և լսելով իմ վճռական հայտարարությունը, հանուն մզկիթի պաշտպանության, սկսեցին ներքևից բացականչել.

-Գյավու՛ր օղլի, չքցես քեզ, քեզ չե՛նք բռնի, իջի՛ր, գնա՛,-և այլ աղաչանքներ:

Սկսեցին գործել ժանդարմները, մոլլաները, մոլլի եռանդուն թուրքերը, որոնք գոռալով, բոռալով հետ էին վանում ինձ քարկոծողներին և ատրճանակով կրակողներին: Մինարեի ներքևի դռնից մինչև վերևի դուռը հասնելու համար, անհրաժեշտ էր բարձրանալ պտուտակաձև դասավորված քառասունհինգից հիսուն աստիճաններով: Արդեն դուռը տեղահան անելով՝ սկսել էին վերև բարձրանալ: Մինարեի ներսից լսելով ձայներ՝ պատից իջա միջնորմ և դուռը ծածկելով մեջքս դեմ արի: Այդ պահին դռան հետևից լսեցի մոլլայի համոզիչ ձայնը.

-Գյավու՛ր օղլի, արի՛ ինձ հետ, ես քեզ դուրս կտանեմ, մի՛ վախենա:

Լսելով մոլլայի ձայնը՝ ես, երկյուղի բովով սարսափած, թողի դուռը և անցնելով դռնից քիչ էն կողմ՝ բնազդաբար բարձրացա պարսպի վրա: Ներքևից լսվեց ամբոխի գոռում-գոչյունը.*«Քեզ չենք բռնի իջի՛ր, գնա՛»*,-և այլ հավաստիացումներ: Աչքերս հառած դռանը՝ ես սպասում էի մոլլային: Փոքրիկ դռնակը բացվեց և երևաց մոլլայի սպիտակ փաթաթանով ահռելի գլուխը՝ ցցված ցանցառ դեղնավուն մորուքով: Տեսնելով ինձ պարսպի վրա՝ նա, երկու ձեռքերը բարձրացնելով և միացնելով ճակատին, երդվեց փեխանբարի անու-

նով.«*Քեզ ոչ ոք չի բռնելու, ցած իջիր և իմ եւրևից արի*»,-ու սկսեց իջնել, ցածրանալ սանդուղքներով: Ես, գիտակցաբար թե ակամա, հետևեցի մոլլային: Նա, պատերից բռնելով, դանդաղորեն իջնում էր պտուտակաձև աստիճաններով: Հասնելով ներքև, դռան շեմին կանգնած՝ նա խնդրեց բոլոր հավատացյալներին հեռանալ բակից և թույլ տալ անհավատին դուրս գալ ջամիից ու չապականել փեխանբարի սրբությունը: Բակում ևս երկու մոլլաներ ժանդարմների մասնակցությամբ դուրս էին քշում գրգռված վայրագ թուրք ամբոխին, որը հետ ու առաջ նայելով՝ դժվարությամբ էր ենթարկվում ոստիկաններին: Վերջապես բակում մնացին երեք մոլլաներ, իսկ վերևը՝ դարպասի մոտ, ոստիկանները դուռը պաշտպանում էին ներխուժողներից: Մինարեն բարձրացող մոլլան մյուսներից ավելի հեղինակավոր էր: Նա, դեռ դռան մոտ կանգնած, սպասում էր ամբոխի հեռանալուն: Դռնից մի երկու քայլ առաջ գնալով՝ նայեց, ստուգեց, որ բակը դատարկվել է, երկու մոլլաներին կարգադրեց հեռանալ և դառնալով իմ կողմը՝ կանչեց.«*Գյավու՛ր օղլի, ոչ ոք չկա՛, արի գևանք*»: Ես, մինարեի դռնից դուրս գալով, նկատեցի, որ երկու մոլլա մտան ջամի և ներսից դուռը փակեցին, իսկ գլխավոր մոլլան, ինձ կանչելով ասաց. «Հետևիր ինձ»,-և շարժվեց դեպի դուռը: Ժանդարմներին հեռացնելով՝ ինքը կանգնեց դռների արանքում և սպասեց իմ գալուն: Ես, հետապնդելով մոլլային, գիտեի և հետևում էի մյուս երկու մոլլաներին, որոնք թաքնվելով, ուզում էին հանկարծակիի բերել և բռնել ինձ: Ես երկու քայլ հառաջացա բակում, տեսա մոլլային, որն ինձ ձեռքով կանչելով՝ հայտնում էր.«Ոչ ոք չկա»,-կարծելով, թե ես վազելու եմ դեպի իրեն, դուռը բացեց: Թուրքերը ինձ տեսնելով սկսեցին գոռգոռալ, սակայն մոլլան և ժանդարմները ներխուժել չթողեցին և դուռը նորից փակեցին: Նույն պահին նկատեցի ջամիի դռան բացվել-փակվելը լինելը, ուրեմն մոլլաներն էլ հետևում էին ինձ՝ բռնելու համար: Մինարեի դռան մոտ՝ երկու աստիճան ներքև, գտնվում էր *ապդեստի*[203] լվացման ջրավազանը, որտեղ թուրք հավատացյալները, նախքան ջամի մտնելը, պարտադիր կարգով ոտքերն ու ձեռքերն էին լվանում: Կռացած նայեցի հոսող ջրի անցքին՝ *ուլուղին* /կանալ, կոյուղի/ և նկատեցի, որ բավականին լայն անցքից ջուրը թափվում էր գետը: Անմիջապես մտա ավազանը և պառկելով ջրի մեջ սողացի դեպի դուրս և մոտ մեկ մետր բարձրությունից իջա գետը: Բարեբախտաբար գետի կողմում ոչ ոք չկար: Ես, թրջված կատվի նման շտապ գետն անցնելով, սկսեցի ճանգռտելով մագլցել հակառակ կողմի դարն ի վեր և հասնելով ճանապարհին՝ դիտեցի չորս կողմս: Այդ պահին դիմացից ինձ նկատեցին մինարեթի կողքի տանիքների վրա գտնվողները և սկսեցին պոռալով մատնացույց անել ինձ: Ուժերիս ներածի չափով վազեցի Հինգ խորան եկեղեցու և նրանից մի փողոցի լայնքով հեռու գտնվող մի ուրիշ ջամիի արանքով: Հասնելով վերևի հատող ուղիղ ճամփին ու քսան քայլ առաջ գնալով՝ նկատեցի դիմացից եկող մի խումբ մարդկանց: Կասկածելով, ես մեխանիկորեն թեքվեցի դեպի ձախ և մտա մի բակ: Զգալով, որ ինձ ոչ ոք չնկատեց, միաժամանակ համոզված լինելով այդ թաղի թուրքերի հայատյացության մեջ, դուրս եկա բակից: Պատի տակով հասա Սանդի թաղ տանող ճանապարհի մի հա-

ռուստ թուրքի տանը կից աղբյուրին: Աղբյուրը գտնվում էր հիշյալ շենքի կամարի տակ: Ջրի գուռը մոտ երկու մետր լայնությամբ և նույն չափ բարձր էր: Օգտվելով առիթից, որ ոչ ոք ինձ չէր նկատել, բարձրացա ջրի գուռի վերևը և կծկվեցի հետևի փոսում: Ինչքան ուրախացա, երբ այդ անսպասելի հարմարությունը ինքնաբերաբար գտնվեց: Շնչասպառ, թրջված շորերով կծիկ դառած՝ կուչ եկա: Ինձ խանգարում էր աղբյուրի երկու անցքերից ցայտող և գուռի մեջ թափվող ջրի ձայնը: Ինձ ապահով զգալով՝ ծոցիցս հանեցի թրջված ու լխճված քյուֆթայի ու սուճուխի /պատրաստում էին աղիքի մեջ լցոնելով միս ու կորկոտ/ մնացորդը և մեծ ախորժակով սկսեցի ուտել:

* * *

Երկար ժամանակ է չէի տեսնվել Իսմայիլ աղայի հետ: Վստահ էի, որ նա չէր վռնդի ինձ, բայց զգալով մարմնիս քորը, դուրս տված պզուկները, վերքերը՝ այս վիճակում խուսափում էի նրա աչքին երևալ: Մի օր գոռներում, մի երկու օր նզովյալ տանը մնալուց հետո զգացի, որ հիվանդ եմ: Զառանցանքներով անախորժ երևակայությունների մեջ խորասուզված՝ խելացնորի նման փախուստի դիմեցի: Ինչպիսի սարսափելի տեսիլքներ էին. այլանդակ կերպարանքներով մարդիկ, կանայք, քրդեր ու ժանդարմներ՝ կացիններով, բահերով, սրերով զինված, ծաղրելով ինձ բրդում էին դեպի *ջհանամը*՝ դժոխքը և քահ-քահ ծիծաղում ինձ վրա: Գիշեր էր, վախենում էի աչքերս բաց անել, ձեռքերով խարխափեցի, տրորեցի դեմքս, կծեցի ձեռքս, ցավից զգաստացա և վերցնելով ատրճանակս՝ վազեցի դուրս, նայեցի երկնքին: Աստղերը պեծպծում էին երկնքում: Անորոշ քայլերով, ինքնաբերաբար իջա և հասա գետին: Շորերս հանելով՝ մտա ջուրը, լողացա, սթափվեցի և հագնվելով՝ գնացի աղախնի՝ Խանում բաջու մոտ:

Ինձ տեսնելով այդպիսի այլանդակված վիճակում՝ սկզբում չճանաչեց: Հայտնեցի.« *Նուրի՜ն եմ, հիվանդացե՜լ եմ*»: Շվարած նայելով ինձ՝ մեղքաց և ինձ տարավ իրենց ներքնահարկը: Ինքը դուրս գալով, մոտ տասնհինգ բոպեից մի բարձ ու ծածկոց բերելով՝ ինձ պառկեցրեց, քիչ հետո ուտելիք և թեյ բերեց: Երեք օր ես մնացի նրա նկուղում: Նա հաճախ էր գալիս ինձ մոտ և լավ կերակրում: Երրորդ օրը շապիկս բարձրացներով՝ ասաց.*«Դու ջրծաղիկ*[204] *էիր հանել, պառապում էիր մալարիայով:*[205] *Հիմա պաքություն անցել է և վերքերը լավանում են»*: Նա իմ մոտից գնալիս դուռը փակում էր վրաս: Երրորդ օրը մկրատը ձեռքին ներս մտավ և կողքիս նստելով՝ մազերս կարգի բերեց ու ցույց տալով իր հետ բերած շորերը՝ ասաց.*«Նուրի՛, հագիր պեսևեմ, վրայովդ լավ կլինի»*: Այս անշահախնդիր օգնության, վերաբերմունքի համար երախտապարտ լինելու նպատակով խնդրեցի, որ թույլ տա գնամ: Նա գլուխս շոյելով մերժեց և ջերմաստիճանը նայելով ասաց.*«Դեռ պաքություն ունես, մի երկու օր էլ մնա»:* Ես ինչո՞վ կարող էի փոխհատուցել այս ազնիվ կնոջը իր վերաբերմունքի, զոհողության համար: Որոշեցի բերել մի քանի ոսկի

և նվիրել: Այս նկատառումով չորրոդ գիշերը, առանց նրան տեղեկացնելու, փոքր լուսամուտի ճաղերը թուլացնելով, դուրս եկա: Ուշադրությամբ զննելով ճանապարհս՝ հասա Մճոյենց /Աղութենց/ տունը և գրպանս ոսկիներով լիքը լցնելով՝ վերադարձա և նույն անցքով ներս մտա: Ցավոք սրտի, իմ բացակայությանս ժամանակ Խանում բաջին եկել էր նկուղ և ինձ չտեսնելով՝ անկողինս հավաքել, մի կողմ էր դրել ու դուռը առանց փակելու՝ գնացել: Իմ անխոհեմ անհեռատեսությունը, ըստ իս, ապերախտություն էր: Ես ինձ մեղադրեցի նրան խաբելու և չհնազանդվելու մեջ: Դռան արանքից հետևեցի աղախնին, ուզեցի տեսնել, ներողություն խնդրել: Լուսադեմին, երկու թեյնիկ ձեռքին, նա շարժվեց կուլուխի կողմը: Ձայնեցի նրան, նա կանգ առավ, ձեռքի իրերը գետնին դնելով՝ մոտեցավ դռանը և ներս մտավ: Նա, ինձ տեսնելով, հրճվեց և ուրախությունից քիչ մնաց համբուրեր: Ես խոնարհվեցի, ներողություն խնդրեցի և ձեռքումս պահած ոսկիները քցեցի նրա գոգնոցի գրպանը: Զարմանքով նայելով ինձ՝ ասաց.«*Սա ի՞նչ բան է, որտեղի՞ց, ինչու՞ գնացիր, բա որ բռնվեիր, հիմա՛ր տղա: Վերցրու՛, քեզ պետք կգա»*: Ես մերժեցի: Տիրեց երկարատև լռություն: *«Խանո՛ւմ բաջի, ուզում եմ Իսմայիլ աղայի մոտ գնալ»*: Նա համոզեց, որ իմ հիվանդությունը վարակիչ է.«*Մի քանի օր էլ սպասիր»*: Հետո ավելացրեց.«*Հնարավորին չափով կխոսեմ քո մասին, կիմանամ նրա միտքը, հետո քեզ կասեմ*»: Լավ սնունդը, մաքուր հագուստն ու խնամքը ինձ լավ կազդուրեցին: Խանում բաջին, չափազանցնելով և որոշ բաներ կրճատելով, պատմեց ծպտյալ բուժքրոջ հայ լինելու, մոտ հիսուն-վաթսուն հոգու թունավորելու, փոլիսների ու ժանդարմների սպանության մասին և դեպքերի նկատառումով ինձ զգուշացրեց՝ ոչ մի տեղ չգնալ, չերևալ: Իմիջիայլոց, այդ հարցում նա չմեղադրեց գյավուր կնոջը և միամտորեն շեշտեց.

-Էդ վիրավոր երիտթուրքերն իմ միսն էլ էին ուտում: Գլխավոր բժիշկը գիտեր այդ մասին,-ու լռեց: Այդ պահին ես հիշեցի գլխավոր բժշկի մասին գրած Սառայի երկտողը:

Մի շաբաթ հետո ես գնացի Իսմայիլ աղայի տուն և աղախնի միջոցով տեսակցություն խնդրեցի: Երեկոյան տուն գալով՝ աղան ճաշելուց հետո թոնրատուն եկավ: Նա, չորս կողմ նայելով, ինձ չտեսնելով, կանչեց.«Նուրի՛, արի՛»: Ես միջանցքի դռնով դուրս եկա և վազեցի ու փաթաթվեցի նրա ոտքերին: Նա ինձ բարձրացրեց և գլուխս շոյելով նստեցրեց իր կողքին.«*Նուրի՛ օղուլմ* /տղաս/, *ինչքա՜ն ժամանակ է չկայիր*»: Ես պատմեցի մի քանի մանր դեպքերի, ճամբարում լինելուս մասին: Նա հիշեցրեց Ուլի ջամիի դեպքը և հարցրեց՝ դու չէ՞իր: Ես հայտնեցի՝ ես էի:

-Մաշալա, մաշալա, բայց բա էտքան մարդկանց միջից ո՞նց փախար: Նուրի՛, ճամբարում ու՞մ տեսար, էն գեղեցիկ կինը ի՞նչ եղավ:

-Ճամբարում կանանց ու տղաների հետ ճան էինք խաղում: Էն կնոջից տեղեկություն չունեմ,-և գրպանիցս մի բուռ ոսկի հանելով՝ ասացի,-խաղով տարել եմ:[206]

Աղայի աչքին ոսկիները փայլ տվեցին, բայց նա չվերցրեց.«Նստի՛ր, Նուրի՛»,-և վեր կենալով գնաց իր սենյակի կողմը, տղայի վեգերից /ճան/[207] երկու

հատ բերեց, դուռը փակեց և ինձ առաջարկեց խաղալ: Ձեռքիս ոսկիները գորգի վրա լցնելով՝ սկսեցինք խաղալ: Հա՛ կրում-կրվում էինք: Նա սկսեց ջղայնանալ, որ վեգերը չէին ենթարկվում իրեն, հայհոյում էր: Արդեն ուշ երեկո էր, խանումը դուռը ծեծելով կանչեց: Ես, օգտվելով առիթից, գորգի վրայից հավաքեցի ոսկիները, ասի.*«Աղա՛, քցիր առանց մնացորդի»*: Նա դողդողալով ճաները քցեց: Իր բախտը բանեց, տարավ: Հաշվեց, երեսունչորս հատ էր, որից տասնմեկը իր կրվածն էր: Աղան ուրախացավ և հայտնեց՝ վաղն էլ կխաղանք: Այսպիսով ես ավելի մոտիկից կապվեցի Իսմայիլ աղայի հետ: Հաջորդ օրը առավոտյան աղան աղախնին կարգադրեց լավ սնել ինձ և հետևել, որ ոչ ոքի աչքին չերևամ՝ հիշեցնելով.*«Եթիմ* /որբ/ *պղա է, մեղք է»*: Հաջորդ օրը աղան իր տղային՝ Շահբաղդինին հետը շուկա տարավ: Թերզիխանեյում /դերձակնոց/ աղան ընտիր հագուստներ կարել տվեց նրա և նրանից երկու տարի մեծ տղայի չափսերով: Երկու օր աղան, ուշ գալու պատճառով, հնարավորություն չուներ ինձ տեսնելու: Երրորդ օրը՝ երեկոյան կողմ, աղախնի միջոցով հայտնել էր, որ իրեն թոնրատանը սպասեմ: Երեկոյան մի կապոց ձեռքին եկավ և դռան սողնակը քաշելով՝ ինձ կանչեց.*«Հը՞, Նուրի՛, քեզ համար եմ բերել, հագիր տեսնեմ քո չափսո՞վն է»*: Բերել էր մի զույգ շապիկ-վարտիք, երկու թումբան /շալվար/, երկու իշլիկ /վերնաշապիկ/՝ տարբեր կտորներից, և մեկ ֆես: Տեսնելով, որ իմ հագով էր, ասաց.

-Պունբարաք օլսուն /շնորհավոր լինի/ օղլում:

Ես խոնարհաբար ձեռքը համբուրեցի: Ղայլանը ուզեց, ծխախոտն ու թամբաքին մի կրակով վառելով, սկսեց ծխել և բարձերին թիկնելով՝ կանչեց ինձ.*«Նուրի՛, արի՛ խաղանք»*: Հինգ-վեց ոսկի գորգին դնելով՝ սկսեցինք խաղալ: Նա կրվեց: Քիսայից մի քանի հատ էլ հանեց: Խաղը շարունակեցինք մոտ մեկ ժամ: Նորից կրվեց: Գնաց իր սենյակից քիսայով լիքը ոսկի բերեց: Կողմերս, կրելով և կրվելով, տաքացանք: Աղան ջղայնանում էր, կրկին կրվեց: Գորգի վրա՝ իմ առաջ կուտակված ոսկիները փայլատակում էին օջախում վառվող բոցերի լույսից և շլացնում աղայի ագահ աչքերը: Ես սպասում էի, որ նա մի քանի հատ ինձանից պարտքով կվերցնի և խաղը կշարունակենք, սակայն նա վեր կացավ, գնաց նորից բերելու: Օգտվելով նրա բացակայությունից՝ անմիջապես իմ առջևում կիտված ոսկիներից երկու բուռ լցրի ֆեսիս մեջ: Խարխանթազով օջախի կրակը բարձրացնելով՝ սեղմեցի փոշու մեջ և նստեցի տեղս: Աղան եկավ մի ոսկիներով լիքը քիսա ձեռքին և նստեց տեղը: Նկատելով իմ ոսկու կույտի պակասելը՝ ջղայնացած պոռաց վրաս.*«Ու՞ր են փողերը»*: Առաջին անգամն էի ես տեսնում ու լսում նախատինք ու հայհոյանք: Զգալով նրա զայրույթը՝ ես խոստացա բերել, բայց նա չհանգստացավ և բռնակալի հայացքով կրկնեց.*«Այս րոպեիս բե՛ր, թե չէ՝ կսպրկացնեմ»*: Ես խարխանթազը վերցրի և մոտենալով՝ օջախից հանեցի կիսավառված ֆեսով ոսկիները, փոշով ու կրակով լցրի հատակին: Աղան, իմ կատարած հիմարությունից ապշած, խարխանթազը ձեռքիցս վերցնելով, առանձրացրեց ոսկիները և ցույց տալով ինձ ասաց՝ տես փչացել են: Նա ճիշտ էր ասում, ոսկիների մի մասի գույնը փոխվել էր: Ես պատժվածի նման կանգնած մնացի, կորցրի

համարձակությունս, չէ՞ որ քիչ առաջ ընկերների նման էինք վերաբերվում մեկս մյուսիս, վիճում, առարկում, իսկ հիմա ես, որպես հանցագործ, սպասում էի դատաստանիս: Լսեցի աղայիս ձայնը՝ նստի՛ր խաղանք: Վերակենդանության սարսուռ անցավ մարմնովս: Տեսնելով իմ շփոթվածությունը՝ բռնեց ձեռքիցս և կողքին նստեցնելով, վեգերը ձեռքս տալով՝ սկսեցինք խաղալ: Ես, տարակուսանքի մեջ ընկնելով, ցանկանում էի վերջ տալ և հաճույք պատճառել աղային: Հինգ րոպեում կրվեցի, սակայն աղան դրանով չբավարարվեց և գունատված ոսկիները հաշվելով՝ պահանջեց փոխել: Խոստացա հաջորդ օրը լիացնել նրան: Մոտ երկու շաբաթ՝ երեկոները, խաղընկեր դառնալով աղային՝ շատ ապահով էի զգում ինձ, բայց կտրված էի դրսից, ցերեկը մեկուսացած վիճակում: Աղախինն էր մեկ-մեկ գալիս՝ գոյությանս մասին իմանալու և իսկույն գնում՝ աշխատելով կասկած չհարուցել:

Երեկոները՝ սենյակից թոնրատուն աղայի հաճախակի գալն ու ժամերով ուշանալը, խանումին ստիպել էր գաղտնի հետևել: Վերջին օրերին նա իր եղբորը՝ Մուստաֆա բեկին տղայի միջոցով կանչել էր և տեղեկացրել իր մտքերը: Բարեբախտաբար աղախինը նույն ժամին ինձ իսկույն իրազեկ դարձրեց նրա գալու և նրանց գաղտնի խոսակցության մասին: Կորցնելով իմ հետքերը՝ ես իսկույն նկուղի կոյուղու անցքով իջա, դուրս եկա այգու անցքի մոտ և սպասեցի մթնելուն: Դժբախտաբար մոռացել էի, թոնրատան մուսանդարայում թողածս աղայի բերած նոր հագուստներից մի քանիսի մասին: Մուստաֆան խանումի և աղախնի հետ եկավ թոնրատուն: Քունջն ու պուճախը խուզարկելով, նույնիսկ կարասներն ու պահարանները ստուգելով՝ տեսան նոր հագուստները: Խանումի հարցին աղախինը հանգիստ պատասխանեց. *«Աղան է բերել Շահբաղդինի համար, մեծ չափսի պատճառով ինչ տվեց պահելու: Քեզ մոռացել է հայտնել»*: Խանումը նույնպես եղբորը հիշեցրեց տղաների համար ամուսնու բերած նոր հագուստների մասին, բայց Մուստաֆա բեկը չհամոզվեց: Նա բոլոր սենյակները պրպտելուց հետո, մոմ պահանջելով, իջավ նկուղը, շատ փնտրեց, բայց չգտնելով՝ ձեռնունայն դուրս եկավ: Աղախինը, նոր բերած վիրավորներով զբաղվելու կապակցությամբ խանումից թույլտվություն խնդրելով, շտապեց կուլուխ: Սակայն դուրս գալով տնից՝ անմիջապես գնաց շուկա և իրազեկ դարձրեց Իսմայիլ աղային: Խանումն ու եղբայրը որոշ հետքեր գտնելով՝ որոշեցին գաղտնի հետապնդել: Նույնիսկ կանչեցին հարևաններին և պահանջեցին գիշեր-ցերեկ հետևել գյավուր տղային: Մուստաֆա բեկը, հինգ դուրուշ տալով գիժ Մժոյին, ստիպեց խոստանալ մի երկու օրում գտնել ու բռնել ինձ:

Կոյուղուց դուրս գալով՝ գիշերը գնացի նզովյալ տունը, բայց հագուստներս կեղտոտ էին և դուրս գալ չէի կարող: Օգտվելով աղախնի բարեհոգությունից՝ հաջորդ գիշերը եղա նրա մոտ և խնդրեցի բերել աղայի բերած նոր հագուստները: Նա, պատմելով դրության մասին, զգացնել տվեց, որ դա անհնարին է և առաջարկեց ինձ մի օր մնալ իր ներքնահարկում՝ մինչև շորերիս լվանալն ու չորացնելը: Ես ենթարկվեցի:

Աղախնի խորաթափանց հայացքն ու լռությունը ինձ կաշկանդեց, և

գլուխս կախ, հանցավորի նման նրա ձեռքից վերցնելով մաքրված հագուստս՝ իսկույն հագա: Այդ պահին շշուկներ լսվեցին: Աղախինը շուռ եկավ դեպի դուռը: Ես մի ակնթարթում գնացի դեպի լուսամուտը: Երկու վիրավոր զաբիթներ, հիասթափված և բուժվելու հույսը կորցրած, իրար կռթնած, հենակներով իջնելով դարն ի վար, տեսան հարուստ բուսականությունը, այգին ու հրապուրված վարդերի բուրմունքով՝ մտան, փարվեցին կանաչների և ծաղիկների վրա: Աղախինը նրանց մոտենալով զարմանքով հարցրեց.«Ինչու՞ եք դուրս եկել»: *«Փրկելու տրամադրություն չունենք, ուզում ենք գնալ»*,-և երկու մեճիդյա /արծաթյա դրամ՝ մոտ հինգ ռուբլի/ տալով աղախնին՝ խնդրեցին ձի կամ ջորի ճարել՝ մինչև քաղաքի կենտրոնը փոխադրվելու համար: Սեխանիկորեն փողը վերցնելով՝ աղախինը շուռ եկավ դեպի դուռը, կողպեքով փակեց և բանալին ձեռքին՝ անցավ դեպի տուն: Քսան-քսանհինգ րոպեից բոխչան ձեռքին տնից դուրս գալով՝ մոտեցավ զաբիթներին, թևանցուկ բարձրացրեց, և սկսեցին այգիների զառիվայրերով ներքև իջնել: Բորբոքված վերքերով քայլելու հնարավորություն չունենալով՝ նրանք նորից պառկեցին կանաչների վրա՝ սպասելով քույրի վերադարձին: Աղախինը, թեքվելով ճամփից, եկավ ինձ մոտ: Բոխչայից հանեց ուտելիքներով լիքը մի կաթսա ու ինձ տալով՝ զգուշացրեց՝ մինչև Իսմայիլ աղայի տնից իր վերադառնալը, դուրս չգալ: Նա աճապարելով հասավ Իսմայիլ աղայի դռան շեմին, հայտնեց երկու զաբիթների վիճակի ու տրամադրությունների մասին: Իսմայիլ աղան մի պահ մտածեց և իր կարճ մորուքը շփելով՝ աղախնին կարգադրեց, մինչև իր գալը, զաբիթներին բերել տուն: Աղախինը առարկեց, դժգոհությամբ ասաց, որ նրանք ոտքով դժվարանում են քայլել: Աղախինը զբաղված էր տան սովորական գործերով, երբ ծառան իր կոշտ, գամփա ձայնով կանչեց նրան և հայտնեց Իսմայիլ աղայի կարգադրությունը՝ տղայի հետ գնալ և զաբիթներին բերել: Ծառան իր հետ բերել էր մի համբալ:[208] Աղախինը շտապեց խանումին իրազեկ դարձնելու և համաձայնության գալով՝ տղայի՝ Շահբադդինի հետ գնացին: Զաբիթները, լսելով աղախնին, զարմացան, նրանց անհավատալի թվաց Իսմայիլ աղայի հրավերը, բայց երբ համբալն[209] իր մեծ կողովով առաջացավ և ձեռքերը կրծքին դնելով՝ խոնարհաբար խնդրեց տեղավորվել, կասկածը փարատվեց, ու դա համարեցին ազգասիրության պարտքի հատուցում: Զաբիթներից մեկին նստեցրին կողովում, մյուսին շալակելով, թևերից բռնելով տարան: Աղախինը անմիջապես անկողիններ պատրաստեց, երկուսին էլ հանգիստ պառկեցրին:

Ֆաթմա խանումը անհամբեր հարմար առիթի էր սպասում զաբիթներին տեսնելու համար: Նրա երևակայության մեջ բոլոր զաբիթները երիտասարդ, վայելուչ տեսքով մարդիկ էին՝ գրավիչ և դուրեկան: Աղախինը խանումին մոտենալով ասաց.*«Պառկեցրի այգու մուտի սենյակում, բայց քաղցած են»*: Աղախինը մատուցարանը վերցրած, որի վրա դրել էր ճաշեր, հաց ու օշարակ, խանումի հետ գնաց հիվանդատես: Նախասրահով անցնելիս ֆաթմա խանումին գրավեցին զաբիթների փայլուն համազգեստները, վերարկուներն ու մյուս զգեստները, որոնք նրանց զինվորական բարձր աստիճանի ապացույցն

էին: Աղախինը, սենյակ մտնելով, զաբիթներին զգուշացրեց Ֆաթմա խանումի այցելության մասին: Նրանք, անակնկալի գալով, անմիջապես նստեցին ու հենվելով բարձերին՝ աչքերը հառեցին դռանը: Աղախինը ներս հրավիրեց խանումին: Խանումը պճնված էր արդի ամենաշքեղ հագուստով: Նա, ցույց տալով իր բարձրաստիճան դիրքը, մոտեցավ հիվանդներին և երեսի քողը բարձրացնելով՝ ժպիտով հարցրեց նրանց առողջությունը, ինչի՞ կարիք ունեն և մատնացույց անելով աղախնին՝ նստեց աթոռին: Զաբիթները երկար ժամանակ սափրված չէին: Արտաքինով տհաճ, ֆիզիկապես ու հոգեպես թույլ զաբիթները հանկարծ տեսան փայլող արեգակի նման շողեր արձակող կնոջ հմայիչ դեմքն ու ժպիտը, կարեկցանքն ու առաջարկությունները.*«Ներեցեք, խանո՛ւմ, հիմա մենք մեզ շատ լավ ենք զգում, շնորհակալություն»*: Խանումը ձեռքով աղախնին նշան արեց, որ կերակրի, և ինքը, ներողություն խնդրելով, դուրս եկավ: Դրսում ծառան ու համբալը սպասում էին խանումին: Տեսնելով նրանց կարգադրեց, որ աղան մի վարսավիր ուղարկի: Ճաշելուց հետո զաբիթները սափրվեցին և հենակներով ման եկան կից այգում: Զարմանքը պատեց հարևան թուրքերին: Խանումի երկրորդ այցելությունը բեկանեց, վերակենդանացրեց վիրավորներին, իսկ նրանց կարճատև խոսակցությունը արտասովոր հմայքով շղթայեց կողմերին՝ արթնացնելով թերևս անհայտ, անորոշ, բայց խոր հույզեր: Խանումը կարոտով, խոր հառաչանքով աղախնին բացեց իր սիրտը.*«Զաբիթը ինչքա՜ն ջահել, սիրուն տղամարդ է և որքան նման է կայմակամին»*: Զսպանակի նման սեղմված, գամված սիրտը ցնցվեց, պոռթկաց ու խանումը ձեռքերով երեսը ծածկելով՝ սկսեց ողբալ, լաց լինել: Շիվարած աղախինը չգիտեր, թե ինչո՞վ կարող էր հանգստացնել իր նազելի խանումին: Նա, մի բաժակ օշարակ մատուցելով, խնդրեց.*«Խմի՛ր, ազի՛զ խանում»*: Բայց նա ձեռքով մերժելով՝ կրքոտ ձայնով ասաց.*«Ես, բեկի աղջիկ, բեկի քույր լինելով, գերվել եմ էս լակոտների հոր կողմից: Ես երեսուներկու տարեկան, նա հիսուներկու: Նրան թույլատրվում է ամեն ինչ, իսկ ես մի գյավուր հայ կնոջ չափ էլ իրավունք չունեմ նրա ցանկությունը մերժելու»*: Աղախինը նրա ձեռքից ձգելով՝ լվացվելու համար մոտեցրեց *լանգանին* /թաս/ և ջուր լցրեց ձեռքերին: Խանումը լվացվեց, սթափվեց ու դիմելով աղախնին՝ հեգնանքով ասաց.*«Ես շատ դժբախտ եմ»:*

Երեկոյան աղան սովորականից շուտ եկավ, այցելեց վիրավորներին, որոնք շատ գոհ էին ցուցաբերած հայրենասիրությունից: Նրանք, մի բաց նամակ տալով աղային, խնդրեցին հայտնել փաշային և զինվորական դիվանապետին՝ *դիվանքաշուն*, իրենց դրության մասին: Իսմայիլ աղան ընթրեց զաբիթների հետ: Նրանք մտքեր փոխանակեցին ներկա և ապագա դրության մասին և մաղթանքներով բաժանվեցին: Աղան, սենյակ մտնելով, կնոջը գոհունակություն հայտնեց ցուցաբերած վերաբերմունքի առթիվ և գնաց քնելու:

Ուշ գիշերին աղախինն եկավ ինձ մոտ: Ես նրա կցկտուր խոսքերից գուշակեցի իմ հանդեպ կազմակերպած միջոցառումների մասին:

Խնամքը, սնունդը, խանումի հետ զվարճալի ժամանցները նպաստեցին վիրավոր զաբիթների թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես կազդուրվելուն: Երկրորդ

օրը՝ նախնական պայմանավորվածության համաձայն, քրոջն այցելության եկավ Մուստաֆա բեկը: Նա ծանոթացավ վիրավոր զաբիթների հետ: Իսմայիլ աղային նսեմացնելու նպատակով՝ անհիմն խոսքերով ջանաց ապացուցել և մեղադրել աղային՝ պատմելով գյավուրներին պաշտպանելու և նրանց հովանավորելու մասին: Իսմայիլ աղան, վիրավոր զաբիթների երկտող նամակը փաշային և զինվորական բարձր աստիճանավորին ներկայացնելով, խոնարհաբար հայտնեց, որ իր ազգասիրության պարտքն է համարում վիրավորների մասին հոգալն ու նրանց խնամակալելը և ընդունելով նրանց գովասանքը՝ ոգևորված դուրս եկավ փաշատայրայից /փաշայի ընդունարան/: Ֆաթմա խանումի հաճախակի այցելությունները երիտասարդ զաբիթի մոտ կարեկցանքի, սիրո վերածվեցին, սերը խանդ առաջացրեց, խանդը նախանձ և ատելություն Իսմայիլ աղայի նկատմամբ: Մանավանդ փեսայի նկատմամբ ներքուստ վրեժով լցված Մուստաֆա բեկի հաճախակի այցելությունները՝ բամբասանքը վերածեցին ըմբոստության և հանուն խանումի՝ կողմերը որոշեցին Իսմայիլ աղային աննկատ կերպով մեջտեղից վերացնել: Վիրավոր զաբիթներից կրտսերին ութ օր հետո ուղարկեցին Սղերդ, իսկ ավագ զաբիթը Մուստաֆա բեկի հետ պայմանավորվեց խանումի և երեխաների հետ գաղթել քաղաքից և հարմար առիթի դեպքում վերջ տալ Իսմայիլ աղայի կյանքին: Ընտանեկան այս սարսափելի իրավիճակին և իրադարձություններին տեղյակ էր աղախինը, բայց չէր համարձակվում աղային հայտնել: Երբ քաղաքային ոստիկանությանը գրավոր կարգադրությամբ առաջարկվեց հինգ օրվա ընթացքում գաղթեցնել մի շարք ընտանիքներ, որոնց թվում և Իսմայիլ աղային, վերջինս կտրուկ մերժեց: Խանումի փաղաքշանքները չազդեցին անդրդվելի ամուսնու վրա: Կինը հանդգնելով թույլտվություն պահանջեց մենակ հեռանալու համար: Լսելով կնոջ կամակոր և հանդուգն խոսքերը՝ աղան գայթակղվեց զայրույթով, մի քանի հարված տեղալով կնոջ վրա, ջղայնացած դուրս եկավ այգի: Հանդիպեց զաբիթին, որը, նկատելով նրա դեմքի զայրացած արտահայտությունը, կեղծ քաղաքավարությամբ ասաց.«*Իսմայի՛լ աղա, կնոջ նկատմամբ այդքան կոպիտ չեն լինում*»: Մինչ այդ պահը Իսմայիլ աղան զաբիթի նկատմամբ համակրանք էր տածում ու հարգանքով էր վերաբերվում նրան: Լսելով նրա տմարդ խոսքերը իր ընտանեկան գործերին միջամտելու, խառնվելու կապակցությամբ՝ աղան այնպես զայրացավ, որ առաջարկեց անմիջապես հեռանալ իր տնից և դուռը զայրույթով շրխկացնելով՝ խանումին բերեց ներսի սենյակը՝ իրենց ննջարանը, և կարգադրեց դուրս չգալ: Հույսս կտրել էի աղայի տուն գնալուց, քանի որ խանումի եղբայրը և ոստիկանները հարևան թուրքերին և ինձ հավատարիմ կարծեցյալ ծուռ Մժոյին նախազգուշացրել էին հետևել և բռնել ինձ: Մոտ երկու շաբաթ անմարդաբնակ տներում թափառելով՝ հիասթափվեցի և ընկա անորոշության, ինքնամոռացության մեջ:

* * *

Ձմռան սկիզբն էր, ցուրտ: Մենակ էի ու տխուր, ոչ մի կենդանի արարած չկար, ո՛չ շուն, ո՛չ կատու: Նոր էր ձյուն տեղացել: Ինքնամեկուսացումը ինձ ինքնամոռացության հասցրեց: Առանց որևէ զգուշության՝ անզգայաբար գնացի մեր տան կողմը: Հանկարծ մի ձայն ինձ շշմեցրեց: Դեմ առ դեմ՝ ճամփի վրա, տեսա ձիերով մի փոլիսի ու ժանդարմի: Ես սթափվեցի, կանգնեցի նրանց դիմաց և ինքնապաշտպանության զգացումով ձեռքս կոխեցի գրպանս: Հակառակ իմ կարծիքին՝ ժանդարմները բարեսիրտ և գթառատ գտնվեցին: Նրանք ինձ հետ խղճմտանքով վարվեցին, հարց ու փորձ արին, հավատացրին, որ չեն սպանի և տարան կուլուխի պահակատունը: Այստեղ իրենցից մի հոգի կար, որն ինձ ուտելիք տվեց: Մոտ քսան րոպեից ինձ տարան և հանձնեցին Կարմրակ եկեղեցու ճամբար-հավաքակայանը: Այստեղ կային քառասունհինգ-հիսուն կին և յոթ-ութ պատանի տղա ու աղջիկ, որոնք կյանքից հիասթափված, րոպե առ րոպե սպասում էին ճակատագրական մահվանը: Երկրորդ առավոտյան մեզ դուրս բերեցին շուկայի միջով «Արաբու կամուրջ» մահվան ճամբար տանելու համար: Օգտվելով ժանդարմների թույլ հսկողությունից և բախտակից կանանց խրախուսանքից՝ ես ծպտվեցի խանութների մոտ կիտված կողովների արանքում: Երբ քարավանը հեռացավ մոտ հարյուր քայլ, ես խույս տվեցի և խանութների արանքներից վազեցի անասունների սպանդանոց և դռան տակի բացվածքից ներս սողալով՝ մտա և թաքնվեցի անկյունում կիտված ոչխարների մորթիների տակ: Չնայած սպանդանոցը՝ *սալահանեն* պատկանում էր իմ աղային, դրանից օգտվում էին նաև մյուս մսագործներն ու մսավաճառները՝ *կասաբները:* Առավոտյան դուռը բացվեց, ոչխարների հետ ներս մտան երեք հոգի և սկսեցին ոչխարներին մորթել, մաքրել ու փոխադրել խանութները՝ վաճառելու: Ես թաղված էի մորթիների տակ: Մորթված ոչխարների մորթիները շպրտում էին իրար վրա: Փակվեց իմ տեսանելիությունը: Սպանդանոցի գարշահոտությունն ու վրայիս ծանրությունը ինձ ստիպեցին շարժվել, արանք բաց անել՝ շնչելու և նայելու համար: Կեսօրին մոտ էր, նորից ոչխարներ բերեցին: Եվ հանկարծ լսեցի աղայիս ձայնը, գոռգոռոցը: Նորից դուռը փակելով գնացին: Օգտվելով մենակությունից՝ մի կերպ ճամբռելով մորթիների արանքից գլուխս դուրս հանեցի, ազատ շնչեցի և սպասեցի երեկոյին ու մթնելուն:

Դուռը բացվեց, ծառայի հետ ներս մտավ Իսմայիլ աղան: Հաշվեցին ոչխարները, քառասուն հատ էր: Ծառան մի ոչխարից կտրեց մի մեծ կտոր, տեղավորեց խուրջինի մեջ և դուրս եկավ: Աղան գնալ-գալով սպասում էր դռան մոտ: Անկախ ինձանից, ես ճչացի՝ աղա՛, աղա՛: Նա զարմացած դես-դեն նայեց, պարզ է, ինձ տեսնել չէր կարող: Լավ մարդ էր Իսմայիլ աղան, ամբողջ հոգովս սիրում էի նրան: Ես նորից կանչեցի՝ աղա՛, ես եմ: Նա ապշած սկսեց իր շուրջը դիտել և հանկարծ կանչեց.« *Նուրի՛, դու՞ ես, արի՛ մուրս*»: Ես անմիջապես դուրս եկա մորթիների տակից և ուզեցի փաթաթվել նրա ոտքերին: Այդ

պահին նկատեցի, որ ոտքից գլուխ արյունոտված եմ և մեղավորի նման աչքերս պատին հառեցի, ապա նայեցի աղայիս: Ինձ լավ զննելով գլուխը տարուբերեց ու մի ծանր ախ քաշելով ասաց.«*Օղուլ, սպասի՛ր մինչև մթնի*,-և ցույց տվեց կես ոչխարի կտորը,-*կբերե՛ս տուն*»: Մի քսան րոպեից նորից ոչխարներ բերեցին, սպանդանոցը փակեցին: Մոտ հինգ րոպեից լսեցի աղայիս ձայնը՝ տանը կսպասեմ: Ոտքից գլուխ արյունոտ, կեղտոտ դուրս եկա: Վերցրի միսը, դռան բացվածքից դուրս եկա: Միսը գետնի վրայով քարշ տվի և շալակելով ուղղվեցի թուրքական թաղով դեպի վեր: Հասա Ս. Հինգխորան եկեղեցու և կից ջամիի /մզկիթ/ արանքով անցնող ճամփի մեջտեղը: Հանկարծ մարդկանց ձայներ լսեցի, որոնք կարծելով թե գող էր անցել, հետևեցին ինձ: Ստիպված միսը բաց թողի և մտա մզկիթի բակը ու կծկվեցի մի մութ անկյունում: Մի քանի րոպեից ձայները կտրվեցին: Ես զգուշությամբ դուրս եկա, միսը չկար, տարել էին: Շարունակեցի վազել և հասա թուրքական գոռները /գերեզմաններ/: Աստղերը արդեն փայլում էին, մութ էր, բայց ճանապարհը ինձ ծանոթ և հարազատ էր: Այդ վիճակում չզգալով ո՛չ ցուրտ, ո՛չ գարշահոտություն, ինչպիսի՞ հրճվանքով, կարոտով ու սիրով էի վազում դեպի աղայի տունը, դեպի մեր տունը, կարծես մորս գիրկն էի վազում:

Հասնելով տան մոտ՝ կանգ առա: Նայեցի, աղայի թոնրատան լույսը վառվում էր: Այդ պահին ինձ բնազդորեն ձգում էր մեր տունը, որն ընդամենը երկու հարյուր հիսունից երեքհարյուր քայլ էր հեռու աղայի տնից: Մի երկու հարյուր քայլ՝ ու կհասնեմ մեր աղբյուրին, որից հիսուն քայլի չափ հեռու՝ մեր տունն էր: Ինչպիսի՞ կարոտ, ինչպիսի՞ զգացմունքների մեջ էի ես՝ տասնչորս տարեկան պատանիս, այդ պահերին: Հանկարծ դեմս կանգնեց աղաս: Հոգնելով ինձ սպասելուց՝ նա մոտեցել էր աղբյուրին, լվացվել ու խմել սուրբ ջրից: Նորից եմ կրկնում, նա իր ամբողջ էությամբ, սրտով ու հոգով լավ, բարի մարդ էր: Նրա դեմքի ծալոտիքների մեջ ես տեսնում և զգում էի ցավակցություն, դրա հետ միասին ամենայն բարիք: Մեղավորի նման նայելով աղայիս՝ ուշանալուս և միսը կորցնելու համար ուզեցի հայցել նրա ներողամտությունը, բայց նա կարծես թե գուշակեց պատահածը և վեհանձնորեն նայելով ինձ՝ զգուշացնելու իմաստով՝ հայտնեց.

-Վերևի հարևանները արդեն գաղթել են, նրանց տները դատարկ են,-մի պահ լռելուց հետո ավելացրեց,-առայժմ մեր տան կողմը մի երևա:

Նա ինձ մեկնեց մի տոպրակ ու ասաց.«*Վաղը երեկոյան էլի այս անկյունում կսպասես ինձ*»: Ես շարժվեցի դեպի Մժոյենց տուն, որի դռները չնայած փակ էին, բայց ինձ համար անցման ուղի էին ծառայում լուսամուտները: Այդ գիշերն ու հաջորդ ցերեկը ես տառապեցի ծարավի և կեղտի մեջ: Գաղտագողի լուսամուտից նայում էի աղայիս բակին, այգուն: Տեսա այն զաբիթին, որը գրեթե առողջ ման էր գալիս այգում, խանումի հետ զբոսնում, կատակներ անում ու խաղում աղայիս տղաների հետ: Այս երևույթը ինձ վրա շատ վատ տպավորություն թողեց, զզվանք և չար նախանձ առաջացրեց: Խանումը ցերեկվա ժամերին այգում իրեն ազատ և համարձակ էր զգում, քան տանը, քանի որ այդ ժամերին աղախինը զբաղված էր լինում: Այսպես երրորդ օրն էր,

ինչ ես իմ թաքստոցից դիտում էի աղայիս այգում՝ խանումիս և զաբիթ էֆենդու զվարճախոսությունները: Նրանց հրապուրանքը իմ մեջ առաջացրեց զզվանքի և ատելության նոպաներ: Նրանց գուրգուրանքի պահին փողոցի դռնից այգի եկավ Մուստաֆա բեկը՝ խանումիս եղբայրը, որը սիրալիր սեղմեց զաբիթի ձեռքը և միասին նստելով խալու /գորգ/ վրա՝ սկսեցին խոսել: Խանումը տուն գնաց, և մոտ քսան րոպեից աղախինը ուտելիք բերեց, վերջում՝ դայֆե: Ուտել-խմելուց հետո նրանք պայմանավորվեցին հաջորդ երեկոյան դավադրությամբ վերջ տալ Իսմայիլ աղայի կյանքին: Չնայած այդ մտքերը երեքով կազմեցին, բայց աղախինը, որ հաճախ էր անցուդարձ անում, կռահեց նրանց մտադրությունները: Հաջորդ օրը զաբիթը ներկայացավ զինվորական բաժին՝ խնդրելով իրեն փոխադրել Սղերդ-Դիարբեքիր: Պատահմամբ նույն ատյանում հանդիպեց Իսմայիլ աղային, որին առաջարկեցին շտապ կարգով պարեն հասցնել Խնուսից, Էրզրումից նահանջող զորքերի համար: Աղան անակնկալի հանդիպեց, բայց իրեն չկորցրեց: Զինվորական ատյանից իմացավ զաբիթի մտադրությունները, որը պահանջել էր չորս ջորի՝ Իսմայիլ աղայի ընտանիքը փոխադրելու համար, և այս կերպով աղայի՝ իրեն մատուցած բարյացակամությանը, երախտապարտ լինելու համար: Իսմայիլ աղան, ուշադրություն չդարձնելով զաբիթի վրա, ատյանից դուրս գալով, անմիջապես շտապեց ղշլաղ, որտեղ նախօրոք պատրաստած պարենամթերքով տաս ջորու և երկու ասքյարի հետ շարժվեց Դատվանի ուղղությամբ: Քաղաքի սահմաններից քարավանը դուրս ճանապարհելուց հետո, նա վերադարձավ ձիով և վերևի կողմից՝ հայոց թաղով անցնելով, ուշ երեկոյան ուղղվեց դեպի տուն: Եկավ կանգնեց հիվանդանոցի մոտ, ապա ձին մտրակելով՝ շարժվեց աղախնի տան կողմը: Աղախինը իր տեսածի ու լսածի մասին իրազեկ դարձրեց աղային: Աղան, որոշ հանձնարարություններ տալով, նրան հայտնեց իմ մասին և առաջարկեց հնարավորին չափ օգնել ու խնամել ինձ: Իսմայիլ աղային դեռ լրիվ հայտնի չէին զաբիթի նենգությունները ու կապը Մուստաֆա բեկի հետ: Նա լոկ ենթադրություններ էր անում, կասկածում: Աղայի համոզմունքներին դեմ էր այն, որ իր կինը կարող էր իրեն դավաճանել ինչ-որ տկլոր սպայի հետ, որն աղայի հաշվով՝ իր եղունգն էլ չարժեր: Բայց ավելի շուտ նրան հետաքրքրեց վերջին օրերս Մուստաֆա բեկի՝ իրենց տուն շուտշուտ հաճախելը և զաբիթի հետ գաղտնի մտադրությունները:

Այս հոգեկան դառը մտահայեցողություններով պարփակված ու մտախոհ, նա, ձիու սանձից բռնած, իջավ դարն ի վար, լուռ ու մոլոր եկավ տուն: Ձիու սանձը այգում ծառին կապեց, ինքը դանդաղ աստիճաններով բարձրացավ: Այդ պահին նա լսեց ձայներ և իրենց սենյակի դռան ճռռոցի ձայնը: Շտապ ներս մտավ, անցավ սենյակից սենյակ և, ի զարմանս իրեն, տեսավ մի քանի կապոցներ: Դրանք անմիջապես շուռումուռ տալուց երևացին իրենց ամենաթանկ արդուզարդերը: Բոցավառվեցին Իսմայիլ աղայի աչքերը: Նա չհավատաց իր տեսածին և ձեռքերով սկսեց շոշափել, զննել: Այդ պահին մյուս սենյակից ներս վազեցին նրա երկու տղաները և ուզեցին հորը փաթաթվել: Նա ձեռքով հրեց նրանց և հարցրեց.«*Ո՞վ է եկել ֆեզ մոտ...*»: Մեծ տղան՝

Շահբաղդինը միամտաբար ասաց՝ Բոյուք ամին /մեծ քեռին/: Թողնելով կապոցները՝ նա շուռ եկավ դեպի իրենց ննջարանը: Ֆաթմա խանումը լուսամուտից նայում էր եղբոր հեռանալուն: Նա լավ գիտեր, որ եթե ամուսինը հանդիպի, նրանցից մեկը կսպանվի և ցավում էր եղբոր համար: Դռան ձայնից խանումը շուռ եկավ լուսամուտից և դողալով փռվեց ամուսնու ոտքերին: Իսմայիլ աղայի ամբողջ կատաղությունը փոխվեց կարեկցանքի և ձեռքը խանչալին սեղմած՝ գամված մնաց տեղում: Այդ միջոցին տղաները ներս մտան. տեսնելով իրենց մորը՝ հատակին փռված, ու հոր զարհուրելի դեմքը՝ լացով ընկան մոր վրա: Իսմայիլ աղան իր հարազատներից ժառանգներ չուներ, նա շատ էր սիրում իր որդիներին, հույսը դրել էր մեծ տղայի վրա, որին հաճախ էր պատմում իր քաջագործությունների մասին և նզովելով կնոջ ազգականներին՝ նրանց համարում վայրենի ու աննամուս մարդիկ: Մեծ տղան, զգալով հոր զայրույթի պատճառը, միամտորեն ասաց.«*Հա՛յր, մաման մեղավոր չէր, ամին ու զաբիթը ստիպեցին մեզ պատրաստվել գաղթելու համար*»: Հայրը ջղաձգորեն հարցրեց.«Նրանք այսօր ձեզ մո՞տ էին»: Փոքր տղան մատով ցույց տալով սենյակը ասաց.«*Այնտեղ քեռներ են կապել*»: Իսմայիլ աղան, մի ակնթարթում կնոջ մեջքը կոխ տալով, մտավ կից սենյակը և, ի զարմանս իրեն, նկատեց գորգերի և այլ իրերի կապոցները: Սենյակից դուրս գալով՝ նա ուզեց հետևել կապողներին, բայց ոչ ոքի չհանդիպելով՝ գլուխը կախ ներս մտավ իր սենյակը, որտեղ կինը պառկած հևում էր, իսկ երեխաները, մոր վրա ընկած, լալիս էին: Այդ ահռելի մարդը, որից սարսափում էին իր բոլոր ախոյանները, արյունով վրիժառու հակառակորդներն ու նույնիսկ իշխանավորները, որի ներկայությունը զարզանդ, ահ ու սարսափ էր առաջացնում իր թշնամիների մեջ, ակամա դառնորեն հեկեկաց ու թուլացած վեր ընկավ բարձերի վրա: Երեխաները, թողնելով մորը, փաթաթվեցին հորը և լալագին պաղատեցին, որ մամային չծեծի: Գազանացած մարդը դիվային աչքերը բևեռեց կնոջ ու երեխաների վրա. այդ հայացքը լի էր արյունռուշտ վրիժառությամբ: Վեր կենալով՝ Իսմայիլ աղան ինքն իրեն մրմնջաց՝ նզովյալ լինի սատանան: Կնոջ թևից քաշելով՝ երեխաների հետ գնացին ներսի սենյակը և մի քանի րոպեից լապտերը հանգցրին:

Այդ երեկոյան, չնայած լարված ուշադրությանս, այգում ոչ ոքի չնկատեցի: Օգտվելով գիշերային լռությունից՝ ամենայն զգուշությամբ շարժվեցի դեպի աղախնի տան կողմը: Եզդանենց Ավագի տան, որը վերածվել էր վիրավորների բուժկետի, լույսերը վառվում էին: Լսվում էին վիրավորներին փոխադրող սայլերի և մարդկանց ձայները: Ես, անկտուր ցախանոցը մտնելով, լսողությունս ու տեսողությունս կենտրոնացրի աղախնի տան ու վիրավորների կողմը՝ ջանալավ գտնել աղախնին: Կեսգիշերին մոտ աղախինը եկավ, դռանը մոտենալիս ես ձայն տվի.«*Խանում մաջի, ես եմ*»: Նա ինձ ձեռքով նշան արեց, որ շարժվեմ և ձեռքի թեյնիկները ներս տանելով, միասին իջանք ներքնահարկը: Մոմի լույսով ինձ նայելով՝ զարմանքով հարցրեց.«*Ի՞նչ է պատահել, ուրից գլուխ արյունուր ես*»: Համառոտ պատմեցի փախուստիս և Իսմայիլ աղային հանդիպելու մասին: Լույսը մարեց և ասաց, որ սպասեմ իր գալուն: Կես ժա-

մից Խանում բաջին եկավ և բերեց մի թեյնիկ տաք ջուր և ուտելիք: Նա վերնաշապիկս հանեց և սկսեց իր ձեռքով գլուխս լվալ: Արյունը մազերիս վրա չորացել էր: Խեղճ կինը մի քանի անգամ տրորեց գլուխս, և վերջապես լվացվելուց հետո, բերած ուտելիքները ինձ տալով, կարգադրեց դուրս չգալ մինչև իր գալը: Ես հանգստացած՝ լավ քնեցի: Հաջորդ օրը՝ կեսօրին, նա նորից ուտելիք և մի փարչ ջուր բերեց: Այդ ջանասեր կինը գիշեր-ցերեկ դադար չուներ: Նա խնամում էր զինվորներին և ծառայում էր աղայիս տանը՝ որպես աղախին: Բավականաչափ գրագետ և զարգացած կին էր, բայց արտաքուստ իրեն այլ կերպ էր ցուցադրում: Երրորդ օրն էր, որ ես այդ կացարանում միայնակ նստած կամ պառկած էի: Խանում բաջին կցկտուր տեղեկություններ էր տալիս Իսմայիլ աղայի և ռուսների մոտենալու մասին: Նա զգուշությամբ հայտնեց Իսմայիլ աղայի՝ կնոջ եղբոր՝ Մուստաֆա բեկի հետ ընդհարվելու մասին և կասկածով ասաց զաբիթի խառնակությունների մասին: Չորրոդ օրը Խանում բաջին ինձ համար հագուստներ բերեց, չգիտեմ որտեղից էր ճարել: Ես բավականաչափ կազդուրվել էի և ուզում էի Իսմայիլ աղային հանդիպել: Հազիվ էի իմ մտադրությունը հայտնել, երբ Խանում բաջին հայտնեց, որ աղան իմ մասին հետաքրքրվել է՝ ասելով, թե ի՞նչ եղավ էդ տղան: Ուշ երեկո էր: Խանում բաջուն ասացի, որ գնալու եմ աղայի տան կողմը: Նա ինձ զգուշացրեց, որ Մուստաֆա բեկն ու զաբիթը հետևում են՝ աղայի կյանքին վերջ տալու համար: Իմ մեջ աղայիս նկատմամբ առաջացել էր որդիական սեր: Լսելով աղախնի խոսքերը, չնայած, որ ես այդ զգում էի, ավելի շատ գրգռվեցի: Ես խնդրեցի Խանում բաջուն, որ չնեղանա գնալուս համար: Նա թափանցող հայացքով նայեց, զննեց ինձ վերևից ներքև և գլուխս շոյելով հեռացավ: Մի քանի քայլ էի արել, երբ հետ նայեցի: Խանում բաջին իր արցունքոտ աչքերն էր սրբում:

Բաժանվելով Խանում բաջուց՝ գնացի նզովյալ տունը: Հետս վերցրել էի մի տուփ լուցկի: Երբեմն հերոսներն անգամ զարհուրում են, մինչ ես՝ բազմաչարչար պատանիս, մտա այս մութ, խավար գեհենային տունը, որտեղ երկուերեք ամիս առաջ Սառայի, Մճոյի, Զանոյի ու Մարթայի հետ էինք: Հիմա նրանք չկան, թոնրատանն էր միայն կիսաթաղված մորաքույր Զանոն: Լուցկու լույսով պատի արանքից հանեցի փոքր ատրճանակը տասնչորս փամփուշտներով և մոտ քսանհինգ ոսկի ու տխուր-տրտում գնացի աղայիս տան կողմը: Մժոյենց տանն էի, լուսամուտից պարզ երևում էր աղայիս տունը, տան ելումուտը: Առավոտ շուտ աղայիս տուն մի ձիավոր սուրհանդակ եկավ և մի քանի րոպեից՝ երկու ձիով գնացին: Մոտ կես ժամից եկավ Խանում բաջին: Ա՜խ ինչքան էի ուզում գնալ, փաթաթվել այդ հրաշագործ կնոջը, բայց դա մատնություն կլիներ, կասկած կառաջանար ինչպես աղայի, այնպես էլ խանումի մոտ հատկապես: Խանում բաջին, մի քանի լաթ թափ տալուց հետո, ներս գնաց, դուռը փակեց: Կեսօրվա կողմ զաբիթը գաղտագողի մոտեցավ աղայի տան այգու կողմի դռանը: Շոշափեց, դուռը չբացվեց: Ծխախոտ վառեց և ծառին թիկնելով՝ դես-դեն նայեց: Նրան հայտնի էր երեկվա՝ Մուստաֆա բեկի և Իսմայիլ աղայի ընդհարման մասին: Նա զարմացած էր, թե ինչպե՞ս աղային հաջողվել էր ազատվել մահից: Դեպքը տեղի էր ունեցել գոռնե-

րի ճամփով՝ աղայի տուն գալու ժամանակ: Մուստաֆա բեկը համոզված էր, որ նա միշտ ուշ երեկոյան այդ ճանապարհով էր տուն գալիս: Ճանապարհը մի նեղ արահետ էր, որը, ձորի վրայով անցնելով մոտ երեք հարյուր քայլ, հասնում էր տանը կից այգիներին: Վերևում հայոց անմարդաբնակ թաղն էր, իսկ ներքևում՝ թուրքերի տները, որոնց բնակիչներից շատերը նույնպես գաղթել էին: Մուստաֆա բեկը ընտրել էր արահետի մեջտեղը և թաքնվել ծառերի ետևում, իսկ զաբիթը մոտ հիսուն քայլ հեռավորության վրա էր սպասում: Վրիժառությամբ լի Մուստաֆա բեկը, նկատելով Իսմայիլ աղային, ծառերի արանքից դուրս էր եկել: Հայհոյելով ու մերկացնելով խանչալը, պատրաստվել էր հարձակման: Իսմայիլ աղան, լսելով ձայնը, օգտվել էր հանգամանքից և հեռավորությունից: Նա չէր շփոթվել և գոտկատեղից ատրճանակը հանելով՝ կրակել էր, բայց վրիպել: Զաբիթը, նկատելով Մուստաֆա բեկի փախուստը, ինքն էլ էր փախել: Իսմայիլ աղան իրեն չէր կորցրել և չէր հետապնդել, այլ շարունակելով ճանապարհը՝ գնացել էր տուն: Կրակոցների ձայնից կես ժամ հետո դեպքի վայր, ապա Իսմայիլ աղայի տուն էին եկել թաղային պահակատան ժանդարմները: Նրանց հարցին Իսմայիլ աղան պատասխանել էր.«*Մուստաֆա բեկին տեսա, մյուսն ո՞վ էր չիմացա*»: Ֆաթմա խանումը իրազեկ էր այդ դավադրությանը և համոզված էր եղբոր հաղթանակի մեջ: Նա տեսել էր աղայի՝ զայրացած դեմքով ներս մտնելն ու տղաներին հարցնելը, թե իրենց տանն ո՞վ է եղել: Տղաները միամտորեն ասել էին, որ ամին եկավ ու գնաց: Խորամանկ աղան կնոջը ոչ մի խոսք չէր ասել: Ժանդարմներին հյուրասիրելուց հետո, նա չավուշին խնդրել էր մի ժանդարմ ուղարկել՝ այդ գիշեր իր տունը հսկելու:

Ես իմ թաքստոցից նկատեցի աղայի, ինչպես նաև ժանդարմների գալն ու գնալը: Ինձ անհանգստացրեց գիշերային պահակի երևալը, որն ամբողջ գիշեր աղայի տան չորս կողմն էր մաս գալիս և հետևում էր ամեն մի շշուկի ու ձայնի: Հետևաբար ես վերագրեցի նրան, թե ինձ են որոնում: Առավոտյան նույն չավուշը եկավ աղայի տուն և, ժանդարմի հետ նախաճաշելուց հետո, Իսմայիլ աղայի հետ գնացին երեկոյան պատահած դեպքի ճանապարհով:

Երկու օրից ես, այգում թաքնված, սպասում էի աղային: Նա այն դեպքից հետո միշտ իր խանութի ծառայի հետ էր երթևեկում: Ծառան, հասնելով այգի, խուրջինը իջեցրեց աղայի ձիու վրայից, և ինքը հեծնելով գնաց: Օգտվելով առիթից, որ աղան մենակ էր, ձայնեցի: Նա խուրջինը ձեռքից վայր դրավ ու կանչեց.«*Նուրի՛, արի՛: Նուրի՛ օղուլ, հիմա մեր կողմերը շատ մի՛ երևար*,-և մտահոգված, մռայլ դեմքով կրկնեց,-*մի քանի օրից կգաս ինձ մոտ*»: Աղային սիրաշահելու համար, ձեռքս գրպանս տանելով, մոտիս ոսկիները նրան տվի.«*Վերցրու՛, աղա՛ ջան, ինձ պետք չեն*»: Նա առանց խոսքի վերցրեց և մենք հեռացանք իրարից, նա՝ դեպի տուն, ես՝ դեպի վերև:

Մի քանի օր առաջ ես Խանում բաջուց կցկտուր իմացել ու տեղեկացել էի տեղի ունեցած դավադրությունների մասին: Իմ մեջ խոր ատելություն էր առաջացել զաբիթի և Մուստաֆա բեկի նկատմամբ: Ինձ թվում էր, թե նրանք հորս էին սպանում: Մոռանալով գոյությունս՝ ուղղվեցի դեպի գոռներ, անցա այգի-

ների միջով: Չնայած դեռ լույս էր, բայց ոչ մի մարդկային շարժում չկար: Գերեզմանային լռություն էր: Ամբողջ գիշեր ես հետևեցի Մուստաֆա բեկի և զաբիթի գալուն, բայց, ավաղ, սպասելս ապարդյուն անցավ: Առավոտյան տեսա, որ մի ձիավոր եկավ: Այգու պատի ետևից, որը ճամփից երկու-երեք քայլ հեռավորությամբ էր, անհամբեր սպասեցի ձիավորի մոտենալուն: Մոտեցավ ու անցավ, ա՜խ, ափսոս աղայի ծառան էր: Հիասթափված գնացի այգու խորքը, սկսեցի նիրհել: Նորից ձայներ: Գաղտագողի մոտեցա պատին: Աղան էր անցնում իր ծառայի ու ժանդարմի ուղեկցությամբ: Անցավ մոտ մի ժամ: Ես գամվել էի տեղումս: Պայծառ եղանակ էր, արևը շողում էր, բայց ինչոր սատանայական տամար ինձ ճնշում, ստիպում էր սպասել-սպասել: Ինչպիսի հիշողություններ՝ սիրելի ծնողներիս դեմքերը, փոքրիկ եղբորս կանչն ինձ արթնացրեց, տակնուվրա արեց իմ տառապյալ հոգին ու մարմինը: Հիշեցի Սառային.«*Միևնո՞ւյն է, մեզ կսպանե՞ն...*»: Ոգևորված շարժվեցի տեղիցս և հանկարծ այդ պահին նկատեցի, որ գոռների նեղ արահետով մի զինվորական էր գալիս: Նա չիք[210] էր հագած, համազգեստ, ֆեսի սև փյուսքյուլը երերում էր: Ես կանգնած էի խարխուլ պատին հենված: Սիգարետը ծխելով մոտեցավ, արդեն հիսուն քայլ էր ինձանից հեռու: Ճանաչեցի, զաբիթն էր, մի դող անցավ մարմնովս: Նա ավելի մոտեցավ, քառասուն քայլ, երեսուն քայլ և արդեն մի քանի քայլ էր մնում, որ անցներ: Բնազդաբար ճչացի՝ էֆենդի: Նա ձայնից շշկլված՝ կանգնեց դեմ դիմաց և ահա այդ րոպեին որոտաց իմ բրանվիկը՝[211] ուղիղ կրծքին, դեմքին: Նա տապալվեց, թավալվեց և գլորվեց ձորն ի վար՝ դեպի գետը:

Այս տողերը գրելուս միաժամանակ մի հավ պետք է մորթեի, բայց խղճահարվեցի ու հրաժարվեցի:

Մեխանիկորեն պարպեցի յոթ գնդակ՝ յոթ փամփուշտ: Դատարկված ատրճանակի փողը դեռ մխում էր: Ափսոսացի գնդակներին, քանի որ մոտս այլևս չկար: Առանց շտապելու՝ այգիներով բարձրացա գոռներից վերև գտնվող այն թուրք մուֆթիի տունը, որոնք Սաթենիկին առևանգելով՝ հետո լքել էին հիվանդ վիճակում: Այս հսկայական, երկհարկանի, հարուստ տանը ոչ ոք չկար: Գաղթել էին և դարպասն ու դռները պինդ փակել, բայց ոչ ինձ համար, քանի որ ես ոստոստելով բարձրանում և փականքները բացում էի: Այս բնակարանը ամենաապահովն էր մինչ այդ եղածներից: Երկրորդ հարկի պատուհաններից ես ազատ տեսնում էի գոռները իր երեք ճամփաներով, աղայի տունը և վերևի ճամփեքը: Այստեղ կար ուտելիքի հսկայական պաշար և մի քանի հավ, որոնք օգտվում էին պարկով դրված գարուց և հոսող աղբյուրի ջրից: Սկսեցի խուզարկող ժանդարմների նման սենյակից սենյակ անցնելով, պահարանները ստուգել: Նրանք մեծ հարստության տեր էին: Շենքի հարմար դիրքը, որը մոտ էր մեր թաղին, ստիպել էր շատ հայերի իրենց արդուզարդով դիմել նրանց: Մեկ-երկու օր ապաստանելով այս տանը՝ նրանք հանձնվել էին ընդհանուր դատաստանին: Պահարանում կային հին ու նոր զենքեր. այնալու, սուրմալու, փշտոց կոչվող հրացաններ[212], արծաթազոծ սրեր, խանչալներ և այլ իրեր, որոնք ինձ համար պիտանի չէին: Մառանը ստուգելուց հետո դուրս

եկա դարպասի կողմի մեծ բակը: Ինձ շատ անհանգստացրեցին բակում բեռնելու համար պատրաստ դրված, կապված տաս-տասներկու հակերն ու մի աքլորը: Դարպասը դրսի կողմից էր փակված: Ես երկմտանքի մեջ ընկա. այգու կողմի բակում առողջ հավեր, փողոցի կողմում կապված հակեր: Շարունակելով իմ հետազոտությունը՝ մտա խոհանոց: Ոչ մի թարմ ուտելիք, մի քանի անլվա ճաշի ամաններ: Լուռ ու մունջ պրպտում էի: Հանկարծ ինչ-որ ձայներ լսեցի: Ճիշտն ասած՝ մի տեսակ սարսափ զգացի, ակամա ձեռքս գրպանս տարա և գողի նման հենվեցի պատին՝ սրելով ականջներս: Այդ ահավոր պահին նկատեցի, որ երկու կատուներ կռվում էին, իսկ երրորդը՝ լուսամուտին, մլավում էր, մռռում: Վախս, երկյուղս ծիծաղի վերածվեց, և ես ամաչեցի երկչոտությունիցս: Տարակուսանքի մեջ էի, բակում կապված հակերը ինձ անհանգստացնում էին, մինչդեռ այստեղ ամենաապահով և հարմար ապաստարանն էր: Երեկո էր, մտազբաղ բարձրացա երկրորդ հարկ, դեպի փողոց նայող լուսամուտով փառահեղ սենյակը և մուֆթու բարձի վրա թիկնելով քնեցի:

Լուսադեմին նորից սկսեցի իմ որոնումները. լսել էի, որ նրանք մեծ խազինա /գանձ/ ունեին, բայց իմ պրպտումները ոչ մի արդյունք չտվին: Լուսամուտներից տեսա հատ ու կենտ մարդկանց գնալ-գալը, ժանդարմների, փոլիսների շարժումները, նույնիսկ նկատեցի Իսմայիլ աղային, որն, իր մերձավորներով շրջապատված, ուսումնասիրում էր երեկվա դեպքի տեղը և իրենց հաստ ու երկար քոլոզները շարժելով՝ գնում-գալիս էին: Աքլորի կանչը ինձ ինքնամոռացությունից սթափեցրեց: Արևը մայր էր մտնում: Նորից մտա խոհանոց, մառան, որտեղ չոր մրգեղենի, ընկույզի, չամիչի մնացորդներ կային: Ես սնվեցի և կասկածի տեղիք չթողնելու համար կեղևները արտաքնոցը լցրի: Նորից մուֆթու կահավորված սենյակում նիրհեցի: Կեսգիշերին վեր կացա, ուզեցի գալ Խանում բաջուն տեսնելու: Նա ամպայման իմացած կլիներ, թե ինչ եզրակացության էին հանգել Իսմայիլ աղան և իշխանությունները անցած օրվա դեպքի վերաբերյալ: Բայց չհաջողվեց: Այգու կողմի լուսամուտից դուրս գալու պահին ձայներ լսեցի: Նորից բարձրացա երկրորդ հարկ և, ի զարմանս ինձ, տեսա դարպասի բացվելը, չորս ջորիների և երկու մարդու բակ մտնելը: Հանգիստ կերպով անասունների վզից գարու տոպրակները անցկացնելով՝ երկուսով շարժվեցին դեպի տուն: Մտնելով նեքևի հարկի սրահը՝ լույսը վառեցին, իրենց հետ բերած ուտելիքը միասին կերան: Մեկը, որը ջորեպանն էր, դուրս եկավ բակ, իսկ մյուսը, որը մուֆթու տղան էր, բարձրացավ վերև, հոր՝ մուֆթու սենյակում լամպը վառեց, գոտու տակ խրած խանչալն ու ատրճանակը դրեց պատի պահարանը, ինքը մտավ կից սենյակն ու լույսը մարելուց հետո պառկեց քնելու: Մոռացա ասել, որ նրանց ճաշելու պահին ես, ոչ մի հետք չթողնելով, անմիջապես թաքնվեցի մուֆթու սենյակի մուսանդարայում, որտեղ անկողին և հագուստ էր թափված մնացել:

Իմ պատանեկան գլխում հազար ու մի հիշողություն իրար ետևից եկան ու անցան: Ահա մեր թաղը, Օրիորդաց դպրոցը, ահա մեր մուֆթու տղան պառկած, դռան ճեղքից երևում է: Աչքիս առաջ պառկած Համիդը՝ մուֆթու տղան, ցնցվեց հենց այն պահին, երբ հիշեցի, թե ինչպես աղջիկների՝ դպրոցից տուն

գնալու ժամանակ, Համիդը իր ընկերների հետ, նրանց ճամփան կտրելով, բռնացավ: Այո՛, հիշեցի Սաթոյի երեսի քողը պատռելիս: Այո՛, ահա այն Համիդը, որ դեռ խաղաղ ժամանակ պատուհաս էր մեր թաղեցիների համար: Աքլորը կանչեց, լսվեցին ջորեպանի ու ջորիների ձայներն ու շարժումները: Համիդը ծուլորեն վեր կացավ, ներքնաշորերով շարժվեց արտաքնոց, լվացարան: Ես տեսա նրա դիվային դեմքը: Հիշեցի մեր սիրելի Սաթենիկի պատմածները: Քանի-քանի հայերի էր նա խոստացել փրկել, բայց ոսկիները ստանալուց հետո գերեզմանների մոտ իր ձեռքով սպանել ու ծիծաղել: Անկախ ինձանից մի գերբնական ուժ ինձ դուրս հրեց: Պահարանից դուրս թռա փափուկ գորգի վրա, իսկույն վերցրի սպիտակ, փայլուն ատրճանակը ու ոռպեաբար անցա դռան ետևը: Ատրճանակն անծանոթ էր, Սմիթ ֆասոն[213] էին կոչում: Ավելի մեծ էր, քան նագանն[214] ու պրավնիկը: Վայրկյաններն անցնում էին, ես շոշափում էի, ուզում էի ծանոթանալ նրա գործածության ձևին: Հանկարծ մի սխալ, մի փոքր վրիպում և ես կորած էի: Իմ մեջ ինչ որ վախ, երկչոտություն առաջացավ: Ահա այդ պահին երևաց Սառան.«Սպանի՛ր, որ չսպանվես»: Վերակենդանացա, ոգևորված դռան ետևից դուրս եկա, ուշադիր նայեցի ատրճանակին, փականքը մատով շուռ տվի և նորից դռան ետևը մտա: Համիդը լվացվեց և մեծ փեշկիրը /սրբիչ/ գլխին փաթաթած՝ սանդուղքով բարձրացավ երկրորդ հարկ: Դռան արանքից անհամբեր սպասում էի ու հետևում: Մտավ իր սենյակը, հագավ շալվարը, շուռ եկավ աբան վերցնելու: Երկու ձեռքով բռնած անփորձ ատրճանակի առաջին երկու կրակոցները ստիպեցին Համիդին երեսն ի վայր պառկել: Երրորդ կրակոցից հետո, որը ուղղված էր գլխին, հանգիստ քնեց: Ես անմեղաբար նայեցի պառկած Համիդին: Նա ոչ մի ձայն չհանեց, նույնիսկ ա՜խ չքաշեց: Ինձ թվաց թե նա ողջ էր: Նայեցի ատրճանակին, մատներս փողին դիպցնելով զգացի տաքանալը: Մի քայլ մոտեցա, ուզեցի նորից կրակել, սակայն թուլացած գլխից հոսող արյունը ինձ հանգստացրեց: Անմիջապես թանկագին «նվեր» ատրճանակը ծոցս դնելով՝ շուռ եկա, որ աստիճաններով իջնեմ: Տեսնեմ ի՞նչ, աճապարելով ներքևից վերև էր գալիս ջորեպանը: Խույս տվեցի, մտա դռան ետևը: Ջորեպանը աչքիս խղճուկ մարդ երևաց: Համիդ էֆենդուն արյունաշաղախ ընկած տեսնելով՝ նա՝ ասան ալլահ, պոռալով, գլխակորույս վազեց ներքև ու ջորիները թոկով իրար կապեց: Ջորիներից մեկի վրա նստած՝ դուրս գնաց բակից ու առանց հետ նայելու փախավ: Չնայած մուֆթու տունը իր դիրքով, բոլոր հարմարություններով ինձ համար շատ լավ էր ու հարմար, սակայն Համիդ էֆենդին ինձ խանգարեց: Ես նույն առավոտ, բարձրանալով հայոց գերեզմանները և օգտվելով վերևի անմարդաբնակ տներից, թաքնվեցի Խանամիրյանների տանը, որն այդ թաղի ամենամեծ շենքն էր: Լուսամուտները նայում էին փողոցի կողմը, որոնցից երևում էր թաղի մեծ մասը՝ իր ճանապարհներով: Համիդ էֆենդու անհետանալը ոչ մի հետևանք չունեցավ: Ոչ ոք չիմացավ այդ մասին, պատմությունը շատ խաղաղ վերջ ունեցավ: Ըստ երևույթին ջորեպանը, տեղացի չլինելով ու վախենալով, ոչ ոքի չէր հայտնել այդ մասին: Իսկ նրա հայրը՝ մուֆթանց շեյխը, մինչև օրս սպասում է նրա գալուն:

Ինչպես ասացի, վերևի իմ այժմյան ապաստարանը իր դիրքով ավելի ապահով էր, կասկածանքներից հեռու, քանի որ այդ տանը հինգ-վեց օր առաջ ապրում էին Վանից գաղթած հարուստ թուրքեր, որոնք դարձյալ գաղթել էին: Ամբողջ օրը լուսամուտից լուսամուտ, սենյակից սենյակ մաև գալով՝ քաղց զգացի: Այդ հսկայական տան մեջ ոչ մի ուտելու բան չկար: Գլուխս պտտվում էր, զգացի, որ ջերմություն ունեմ: Ես շատ էի վախենում հիվանդանալուց, քանի որ տաքություն ունենալուց, ըստ մորս ասածի, զառանցում էի: Ստիպված ինչքան հնարավոր էր փաթաթվեցի ու պառկեցի: Ապա ինքզինքս ապահովագրելու համար մի կուժ ջուր մոտս դրի, դուռը փակեցի և փաթաթանների մեջ կծկված՝ լուսամուտի մոտ պառկեցի այնպիսի սարսափելի տեսիլքներով, երազներով, որ հավասար էր խելագարության: Իմ աչքին երևացին մանկության օրերին կամ մահվան ճամբարներում պատմած դժոխքների դևերը, սատանաները, գոռնափշտիկները /ուրվականներ/, հազար ու մի տեսակի այլանդակ պատկերներ: Այս բոլորն ահով-դողով սարսափեցրեց ինձ: Ամենից շատ վախենում էի գիժ կանանց ծաղրուծանակից: Նրանք շուրջս կրակ էին վառում, ականջներիս զուռնա փչում, անկողնով վերցնում, ջրհորը քցում: Գոռնափշտիկները իրենց գերեզմաններն էին բրդում, ահռելի աչքերով վրաս հարձակվում: Այն աստիճան տանջվեցի, որ, ըստ երևույթին, ուղեղիս հոգնածությունից ինքնամոռացության մեջ թմրեցի: Կեսգիշեր էր, զգացի ինչ-որ մի ծանրություն, բայց չկարողացա շարժվել: Աչքերս բաց չարեցի, վախեցա: Այդ պահին ծաղրուծանակով ինձ մոտեցավ Համիդ էֆենդին, ճիշտ այն առաջվա դրությամբ՝ լոթի հագնված, խանչալը ձեռքին, ատամները սեղմած: Աչքերը ինձ վրա հառած՝ հարձակվեց վրաս, գոռաց.«Դու՞ էիր մեր տուն մտած գյավուրը»,-և խանչալը քաշելով ուզեց խփել: Ես երկյուղած վեր թռա, զգացի, որ երազ էր, բայց ահը սիրտս բռնեց: Ուզեցի վազել դեպի դուռը, չկարողացա, դողում էի: Ակամա նայեցի դեպի լուսամուտը: Իսկույն բացեցի պատուհանը, տեսա երկնքի աստղերը, կիսափայլ լուսինը և այդ պահին՝ ինչ-որ մարդկային ձայներ: Անմիջապես սթափվեցի, դեն գցեցի փաթաթանները, լարեցի լսողությունս, մոտեցա դռանը, բաց արեցի: Լռություն էր: Մոտեցա լուսամուտին, լսեցի և նկատեցի՝ երեք զինվորականներ հրելով, հայհոյելով տանում էին մի կնոջ, երկու երեխաների: Մի քանի րոպե առաջ ինձ հետապնդող դժոխային ահռելի տեսիլքները չքացան գլխիցս, մի այնպիսի վիշտ, խոր ցավ զգացի, որ գերազանցեց մինչ այդ՝ օրվա պատահած արհավիրքներին: Անմիջապես ինքզինքս ստուգեցի, ձեռքերովս շփեցի քիթս ու բերանս, շտապ դուրս եկա փողոց և հետևեցի նրանց: Բավականաչափ հեռու էին ինձանից: Ուզում էի վազել, բայց ոտքերիս ձայնը կարող էր խանգարել: Նրանք, լսելով դրանք, կտեսնեին ինձ, բայց ի՞նչ փույթ: Ես անկախ ինձանից հնարավորին չափ գաղտագողի շտապում էի: Արդեն մոտ էի, լսվում էին ձայները, բայց չէի հասկանում, թե ինչ էին խոսում: Իմ հոգում, սրտում մի այնպիսի պատկերացում ու տպավորություն էր ստեղծվել, որ այդ անակնկալ դեպքի մասնակիցը Խանում բաջին է: Չէ՞ որ այդ օրերին մենակ նա էր իմ ծնողների ծարավը հագեցնում: Ես բարոյապես և ֆիզիկապես պարտք էի նրան, նա թաղի թուրքերից էր բամ-

բասում, անառակ կանանց, բարձրաստիճան զինվորականների հետ շփվում, և վերջապես ինչպես իմ աղայի կինը՝ Ֆաթմա խանումն էր ասում.«Նա էլ է հայասեր»: Մոտ հինգ-վեց հարյուր քայլ հետապնդելով նրանց՝ հասա, մոտ տասը-տասներկու քայլ հեռավորությամբ էին և ըստ սովորության՝ ձեռքս գրպանիս անցքը տանելով՝ մեխանիկորեն ուզեցի ատրճանակը հանել, բայց ինչքան հիասթափվեցի, երբ ձեռքս պարապ դուրս եկավ գրպանիցս: Գործող ատրճանակն ոտքերիս արանքումը չէր, դատարկն էր, իսկ նոր, փայլուն, լիքը ատրճանակս գիշերային զառանցանքներիս մեջ ծոցիցս փաթաթանների հետ ընկել էր անկողնու մեջ: Բարեբախտաբար այդ անձնավորությունները, հասնելով Սանդի թաղը, կնոջը երկու երեխաների հետ ուղեկցեցին իրենց տուն, իսկ իրենք բարի գիշեր ասելով՝ շարունակեցին իրենց ճամփան: Իմ անմտության պատճառով վերադարձիս նկատեցի երեք ժանդարմների, որոնք նույնպես այդ զինվորականներին էին հետևում: Ես խույս տվեցի նրանցից: Ինձ տեսնելով կասկածեցին, բոռացին, որ կանգնեմ: Օգտվելով մթից և թուրքական նեղ, ծուռումուռ ճամփեքից՝ հազիվ կարողացա նրանցից պոկվել, բայց նրանք չգիտեին, որ ես հայ էի:

* * *

Բիթլիսը գտնվում էր բարձր սարերի արանքում, չնայած բարեխառն կլիմային, առատ ձյունով ձմեռն այստեղ շուտ էր սկսվում:[215] Հատկապես հայերը ձմռան օրերին էին կատարում նշանդրեքներն և հարսանիքները: Անանցանելի ճանապարհների պատճառով հարսանիքի օրը դահուկներով և ձիերով լցված սահնակներով էին փոխադրում հարսին ու փեսային, իսկ եթե ունևոր էին՝ հարսանքավորներին նույնպես: Հարսնատնից մինչև եկեղեցի գնում էին երգ ու տաղով, գովնդի[216] պարելով՝ զույգ զուռնաջիների երաժշտության և դհոլների դղրդյունների ներքո: Քավորը համարվում էր հարսանիքի տերն ու տնօրենը, նրա պահանջն ու կարգադրությունները պարտադիր էին: Հայերը տոնախմբություններին, հարսանիքներին հաճախ հյուրընկալում էին ծանոթ մտերիմ թուքերին, որոնք իրենց շատ հպարտ և վեհանձնորեն էին պահում՝ հարգելով հայկական ընտանիքի ավանդույթները՝ ադաթները: Մասնակցում էին պարերին և սազանդարներին փեշքեշներ տալիս: Հաճախ էր պատահում, որ հայի խաչքավորը թուրք էր լինում, որը ցմահ հավատարմությամբ էր կատարում իր պարտք ու կոչումը, բարեկամանում: Հաճախ կղերական, եկեղեցական տոներին եկեղեցիներ էին գալիս թուրքեր, նույնիսկ պաշտոնյաներ: Չնայած որ նրանք չէին խաչակնքում, բայց մոմեր վառում էին, երկրպագում, հրճվում էին պատարագի արարողությունով: Նրանք բարի դրացիական, ես կասեի շատ դեպքերում՝ եղբայրական անկեղծ վերաբերմունք էին ցուցաբերում: Կանայք փոքր խմբերով հավաքվում էին դրսում և հատկապես Ջատիկի տոներին նախանձում էին հայ կանանցը:

* * *

Անակնկալները մեկը մյուսի ետևից ինձ ավելի խիստ մեկուսացման ու շրջափակման մեջ դրեցին: Չէի կարող երևալ ոչ միայն Իսմայիլ աղայի, նույնիսկ Խանում բաջու աչքին, որի գութին ու խնամքին այնքան պարտական էի ես, բայց չէի կարող հատուցել: Կարմիր ոսկիներն անգամ նրան չէին հրապուրում ու հետաքրքրում: Չնայած իր բարի վերաբերմունքին՝ զգում էի կասկած, երկյուղ, տխուր տրամադրություն: Մռայլ էր: Տխուր մենակեցության մեջ հանկարծ հիշեցի Եվա բաջուն, չէ որ նա էլ ինձ շատ լավ ընդունեց, նույնիսկ գրկեց, համբուրեց, բայց և իմ պատճառով խելագարվեց: Հետևաբար այս մուհաճիր Խանում բաջուն ինչու՞ պատճառ լինեմ: Չէ՞ որ նա էլ երկու երեխա ունի /աղջիկը տասնհինգ, տղան տասներկու տարեկան էր/: Նա գիշեր-ցերեկ տանջվում, վիրավոր զինվորների և աղայի կեղտն էր մաքրում՝ նրանց զզվելի մուհնաթը տանելով:

Անցավ մոտ երկու շաբաթ: Ձմեռը իր բարակ սավանը փռեց, սկսեց ցրտել: Այս հանգամանքը դժվարացրեց իմ՝ տնից տուն փոխադրվելը, թե՛ սնդամթերք հայթայթելու, թե՛ ժամանակ մեռցնելու, անցկացնելու նպատակով: Ամենավտանգավորն այն էր, որ ես ինքզինքս մատնում էի, քանի որ քայլելիս ձյան վրա մնում էին ոտնահետքերս: Քաղաքում շներին սպանել-վերջացրել էին, նրանց փոխարեն գիշերները գայլերի ոհմակներն էին ոռնում և ազատ վազվզում թաղն ի վեր-վար: Այս քաղցած գայլերից ես ավելի շատ էի վախենում, քան ժանդարմներից: Ձյան նստելուց հետո, ստիպված գիշերները դուրսը ման գալ չէի կարող: Մեկուսացված մարդը երկար մենակ մնալ չի կարող: Որոշեցի հանդիպել աղային: Համոզված էի, որ նա դեռ չի գաղթել: Ցուրտ էր, ձյունը տեղում էր խոշոր փաթիլներով: Ոտքից գլուխ, ինչքան հնարավոր էր հագնվեցի: Նույնիսկ կոշիկներիս վրա հաստ գուլպաներ հագա: Գունդուկծիկ դարձած սկսեցի շարժվել: Անցնելով ամեն մի տուն, այգի, փողոց, փողոց՝ հետևեցի հետքերիս: Տեսա ոչ թե ոտնահետքեր, այլ ձյան վրա բարակ բացված ինչ-որ առվի փոսի նման երկար հետք: Մոտենալով Խանում բաջու տանը կից տներին՝ սիրտս բաբախեց, ուզեցի արագացնել քայլերս, վազել, բայց հնարավոր չէր: Չափից դուրս շատ հագուստներս խանգարեցին: Իջա մի բակ, կոշիկներիս վրայից հանեցի երեք զույգ գուլպաները, վրայիցս՝ երկու բաճկոն, մեջքիցս քանդեցի մեկ խաս-դումաշ գոտիներից մեկը: Ես զբաղված էի հագուստներս հանելու և տեղավորելու գործով, երբ հանկարծ ձայներ լսեցի: Ապուշի նման դես-դեն նայեցի: Դեպի հետ գնալու հնարավորություն, անգամ միտք էլ չկար: Կասկածեցի իմ թողած ոտնահետքերին: Մի պահ ինքս ինձ զսպեցի, լարեցի լսողությունս ու տեսողությունս: Ոչ ոքի չնկատեցի: Մի երկու րոպեից՝ նորից ձայներ: Վերցնելով հանած շորերս՝ վազեցի, տան կիսաբաց լուսամուտից հագուստներս ներս շպրտեցի և ինքս էլ իջա այդ սենյակը: Նայեցի դիմացի լուսամուտից, երևացին կուլուխի շենքը, Խանում բաջու բնակարանը և լուսամուտի տակի փողոցով երկու զինվորներ, որոնք երկու-ե-

րեք ձիերով վիրավորներ էին տանում, փոխադրում հիվանդանոց: Այդ սարսափը ինձ ուրախություն պատճառեց: Ես մինչև երեկո հանգիստ նիրհեցի:

Լուսամուտի գոգը նստած՝ նայեցի, բացի կուլուխից ո՛չ մի ճրագ, ո՛չ մի լույս: Քաղցած էի, բայց խմելու ավելի խիստ պահանջ զգացի: Դուռը բաց անե՞լ, դուրս գա՞լ, ջրի փոխարեն ձյուն վերցնե՞լ: Հիշեցի մորս խրատը՝ կհազաս: Հրաժարվեցի, քանի որ հազը կարող էր ինձ մատնել: Կրկնակի հագած շալվարներից հանեցի խունչաները[217], գործված բարակ գոտի, կապեցի իրար: Ստուգեցի լուսամուտի ճաղերը: Հանած հագուստները մի փաթաթան դարձնելով՝ լուսամուտից զգուշությամբ ներքև քցեցի: Պատրաստած թոկը կապելով լուսամուտի երկաթյա ձողերին, թոկը բռնած՝ սահելով ցած իջա: Անմիջապես վերցրի կապոցը և կտրելով անցա փողանը, գնացի տանիքի վրայով, այնտեղի փոքր բարձրությունից դեպի Խանում բաջու տան կողմը ներքև թռա: Կուլուխի յոթ-ութ լուսամուտների աղոտ լույսը զգացրեց, որ այն կողմը եռուզեռի մեջ էր: Մոտեցա Խանում բաջու տանը: Ահա դուռը: Անհամբեր սպասեցի աղախնի երևալուն, բայց նրանց տան լույսը չէր վառվում: Լսվեց աքլորների կանչը: Ուրախացա, որ Խանում բաջին դուրս կգա, գոնե կտեսնեմ, չէ որ ես մարդակարոտ էի, իսկ ինձ համար Խանում բաջին ներկա պահին ամեն ինչ էր: Սրտատրոփ սպասեցի իմ սիրելի Խանում բաջուն: Հանկարծ լսվեցին կոշտ ու կոպիտ ոտնաձայներ: Թրմփացնելով երկու հոգի եկան դեպի Խանում բաջու տան կողմը: Շնչասպառ՝ հազիվ պատսպարվեցի ցախանոցում: Այդ կիսազինվորականները եկան, ծեծեցին Խանում բաջու դուռը և տեսնելով, որ տանը մարդ չկա, դժգոհ հետ գնացին: Իմ վրա փարվեց տխրությունն ու հիասթափությունը: Հուսահատված և զրկված այդ միակ բարի կնոջ մխիթարությունից՝ լաց եղա: Միակ հույսս ու ապավենս աղայիս տունն էր, նրան տեսնելը: Սթափվելով արցունքներս սրբեցի և արհամարհելով բռնվելու ահը՝ զինվորների գնալուց մի քանի րոպե հետո դուրս եկա, ուժերիս ներածի չափով դարն ի վար խորդուբորդ ճանապարհով վազեցի և առանց մի պատուհասի հասա Լոռոյ աղբյուրը: Նայեցի մեր սիրելի տանը, շրթուրքներս կծելով, մղկտալով հասա աղայի տուն, բարձրացա այգին և կանգ առա: Տեսա թոնրատան վառ լույսերը: Մոտեցա թոնրատան երդիքին, որտեղից պարզ երևաց ներսը: Ի՜նչ զարմանք: Այստեղ էին աղախինը իր երեխաների հետ և խանութի ծառան: Ինչքա՜ն միամիտ էի ես, որ չկռահեցի, որ թոնրում հաց էին թխում: Չէ որ լավաշի բուրմունքը ես շուտ էի զգացել:

Մոտեցա այգու դռանը, փակ էր, մատով կոչնակը բարձրացնելով՝ բացի և զգուշությամբ ներս մտա: Մի մեծ խմորոտ տաշտ դրված էր թոնրատան դռան մոտ, մյուսը շուռ էին տալիս ալրոտ փարտայի՝ հացի սավանի վրա: Ծառան ու տղան գունդ էին անում, աղջիկը գրդնակում էր, իսկ աղախինը՝ մուխանդան ձեռքին, եփում: Ծառայի ներկայությունից խուսափելով՝ ես կից սենյակում, որտեղ տաք լավաշներն էին դարսված ու փռված, քաղցս հագեցրի և անհամբեր սպասեցի աղային կամ աղախնին: Արդեն առավոտ էր, լսեցի հավերի կչկչոցը: Թառերից թռան և դուրս վազեցին: Խմորը վերջացավ: Ծառան ու աղախինը մոտեցան մեծ պուտուկին և երկուսով կանթերը բռնած՝ իջեցրին

թոնիրը: Քիչ անց աղան եկավ, ծառային ապսպրեց, որ մի քանի լավաշ վերցնի և պատրաստվեն գնալու: Մի երկու խոսք աղախնի հետ փոխանակելով՝ շարժվեց դեպի կից սենյակը, մի հայացք քցեց դարսված լավաշներին և ուզեց այգի դուրս գալ: Ուրախությունից ես ճչացի՝ աղա՛, և փարվեցի ոտներին: *«Այ ալլահ բու նե իաբար*,-ասելով ու թևից բռնելով՝ գոչեց,-*ա՛յ շեյթան, դու որտեղի՞ց դուրս եկար»*: *«Աղա՛ ջան, Նուրի՛ն եմ»*,-ու կարոտագին նայեցի նրա դեմքին: Մի պահ լռելուց հետո հուզմունքով ասաց.*«Օղու՛լ, կապասե՛ս ինչ այստեղ երեկոյան»*,-և գլուխս շոյելով դուրս եկավ: Ծառան ձիով սպասում էր աղային: Գործերը վերջացրած աղախինը պատրաստվում էր գնալու: Նա սպասում էր խանումին: Այս բարեհաջող դրությունն ինձ ոգևորեց: Իսկույն մոտենալով դռանը՝ կանչեցի՝ Խանում բաջի: Լսելով իմ ձայնը, նրանք երեքով շփոթվեցին ու տարակուսանքի մեջ ընկան: Նրանց պատեց ինչ-որ մի երկյուղ: Խանում բաջին մոտեցավ իր երեխաներին, գրկեցին իրար: Վհատվեցի, քիչ մնաց ինձ կորցնեի: Սխալվեցի, երեխաների մոտ ես նրան չպետք է դիմեի: Այդ պահին ես էլ զգացի իմ կորուստը: Չէ որ Խանում բաջին ինձ գաղտնի էր օգնում, մինչդեռ երեխաները հիմա կարող էին ինձ մատնել, արեցի և այլ անմիտ հետևություններ: Անորոշ րոպեներից հետո Ֆաթմա խանումը ներս մտավ: Ես իսկույն հեռացա, դուրս եկա այգի և պահ մտա շան բնում: Մոտ քսան րոպեից մի կապոց հացով Խանում բաջին երեխաների հետ դուրս եկավ, խանումը հետևից դուռը փակեց: Երեքով այգու դարպասից դուրս եկան: Ես հիասթափվեցի մեղադրելով ինքս ինձ և խորհեցի.«Չէ՞ որ թուրք են, երևի փոշմանել է, կամ վախենում է, իմ պատճառով կարող է փորձանքի մեջ ընկնել»: Այս մտատանջություններով շան բնում կուչ եկած՝ չզգացի ո՛չ ցուրտ, ո՛չ ահ, ո՛չ սարսափ: Եվ հանկարծ դարպասը բացվեց և Խանում բաջին, այգում կանգնած, աչքերը հառած՝ դես-դեն նայեց: Շուռ գալով էս կողմ էն կողմ՝ կամացուկ ձայնեց՝ Նուրի՛, Նուրի՛: Մի ակնթարթում դուրս թռա և փաթաթվեցի…

Ի՜նչ քաղցրություն, ինչպիսի՜ երանելություն, հնարավոր չէ պատկերացնել: Մինչև հիմա զգում եմ նրա սրտի բաբախը, անձայն լացն ու կսկիծը, բայց ափսո՜ս չեմ կարող հատուցել, երախտապարտ եմ: *«Օղու՛լ, քե՛զ պահիր, ես հիմա շատ եմ շրապում: Վաղն առավոտյան կտեսնվենք»*,-ասաց, համբուրեց և շտապելով գնաց երեխաներին հասնելու: Ճարահատված կծկվեցի շան բնում, ցրտից ու քաղցածությունից դողում էի: Աղայիս տղաները դուրս եկան այգի, ձնագնդիկ էին խաղում: Ուզում էի դուրս գալ, փաթաթվել մանկության ընկերոջս: Մենք մի թաղի միևնույն փողոցում էին մեծացել, կշտամբել մեկս մեկիս, կռվել, ծեծկվել, հաշտվել: Օձի նման գալարվելով տեղումս՝ նախանձով նայում էի, լսում նրանց քրքիջը: Փոքր եղբայրը հաճախ միամտաբար ինձ կյավուր էր կանչում, այդ հանգամանքը ինձ ստիպեց թաքնվել նրանցից, և ես ստիպված մինչև նրանց անհետանալը, լուռ մնացի տեղումս:

Վերջապես երեկոյան աղան ձիով եկավ: Ծառան խուրջինը ներս տանելուց հետո գնաց: Սրտաճմլիկ ձայնով կանչեցի՝ աղա՜: Նա մի պահ դես-դեն նայեց.

-Բիսմիլլահ իահման ի իհահիմ,-արտասանելով՝ ասաց,-Նուրի՛, արի՛:

Նկատի ունենալով, որ ես և հագուստս շան կեղկեղանքով էինք կեղտոտված, մանավանդ, որ մուսուլմանները շուն չեն սիրում, մեղավորի նման դուրս եկա և կծկված սպասեցի: « *Նուրի՛ օղլում, գնանք տուն»*,-ասելով՝ մի խոր հոգոց՝ ա՜խ, քաշեց: Ես լռելյայն հետևեցի նրան: Տղաներն ուրախ վազեցին դեպի ինձ: Փոքր տղան իսկույն վազեց կից սենյակը և մորը հաղորդեց գյավուրի գալու մասին: Ինձ տեսնելով՝ խանումը խոժոռ հայացքով նայեց և ուզեց ինչոր բան ասել, բայց աղայի կտրուկ խոսքը նրան զսպեց: Աղան, իր ապան ու քոլոզը /կիսավերարկուն ու գլխարկը/ կնոջը տալով, ինձ աչքով իշմար արեց: Ես ջուր բերեցի իբրեղով, նա լվացվեց և միասին գնացինք խոհանոց: Շատ էի սոված, թե ճաշերի համն ու բուրմունքն էր ինձ գրգռում, շրթուրքներս լիզելով պատին դեմ եղած սպասեցի: Խանումը սովորականից ավելի շատ էր ժպտում: Տղաները ցածրիկ, կլոր սեղանը բերին, մայրը՝ ճաշերն ու օշարակը, և բոլորը ծալապատիկ նստեցին ճաշելու: Մի կում օշարակ խմելուց հետո աղան, գլուխն իմ կողմը թեքելով, ասաց.« *Նուրի՛, արի մեզ մոտ նստիր, այսուհետև դու միշտ մեզ հետ կլինես»*: Ցուցամատը շարժելով զգուշացրեց.

-Սրանից հետո ոչ ոք չհամարձակվի Նուրիին գյավուր ասել:

Ես գնացի լվացվելու և վրայիս կեղտոտ հագուստները հանելով՝ նստեցի սեղանի շուրջը: Հաջորդ օրը Խանում բաջին եկավ, ինձ տեսնելով տանը՝ զարմացավ և ժպտալով՝ որպիսությունս հարցրեց: Այսպես սկսվեց ճգնաժամային, բայց խաղաղ կյանքս, բայց երկնքի փակ դռների արանքում: Ձմռանը սաստիկ ձյուն եկավ: Ցրտին, սառնամանիքին գաղթում էին՝ անիծելով թե՛ իշխանությանը, թե՛ *սաբիք* /պատճառ/ լինողներին: Իսմայիլ աղան, օգտվելով առիթից, հայկական գյուղերից թալանած, բերած անասունները գաղթողներից էժան գնով առնում էր և մորթելով՝ ղաուրմա սարքում: Նա մի փոր հացով վարձել էր հինգ սովածների և օրական երեսուն-քառասուն ոչխար էր մորթել տալիս: Այս խնդրում ու գործում տնօրինողը ես էի. ղաուրման թիթեղյա բակերի և կարասների մեջ էի լցնում, աղով սփռում մորթիները ու տեղավորում: Իմ ակտիվությունը ուրախացնում էր աղային, իսկ Ֆաթմա խանումը չնայած ինձ նայում էր, որպես գերու, սրտանց գոհ էր, քանի որ պարբերաբար՝ երկու-երեք օր ընդմիջումներով, նրան գոհացնում էի դեղին լիրաներով,[218] ոսկյա-արծաթյա զարդերով: Այս կինը այնքան կաշկանդվեց իմ նվերներից, որ մի անգամ մի ոսկյա-արծաթյա քամար /գոտի/ և գլխի հարսնական՝ երեք շարք ոսկիներով չալմա /գլխանոց/ նվիրելուց հետո գրկեց ինձ՝ գյավուրիս ու համբուրեց մի քանի անգամ: Ցերեկը մինչև ուշ երեկո զբաղվում էի ղավուրմայով, գիշերները խանումիս պահանջով ոսկեղենի և թանկարժեք իրերի որսի գնում: Այսպիսով ես արժանացա խանումիս գնահատանքներին և «սիրելի Նուրի» արտահայտությամբ գովասանքին: Ֆաթմա խանումի պահանջով աղախինը ինձ լոգացրեց: Հագնվում էի մաքուր, ճաշում էինք միասին:

Անցել էր մոտ մեկ ամիս: Ես չորս-հինգ բանվորների հետ զբաղված էի ղաուրմա եփելով, հանկարծ աղայի փոքր տղան ասաց՝ է՛յ, արի՛: Ես զբաղված լինելով՝ ուշադրություն չդարձրի: Նա ջղայնացած պոռած.*« Գյավուր,*

քեզ հետ չե՞մ»: Կողքիս գաղթական բանվորներն ինձ նայեցին: Կասկածի տեղիք չտալու համար իսկույն վազեցի խանումի սենյակը և ի՜նչ տեսա. Մուստաֆա բեկը՝ խանումի եղբայրը, հյուրասենյակի մութաֆաների՝ բարձերի վրա նստած, քրոջ ներկայությամբ բոխչան էր քրքրում և հիանում թանկարժեք զարդերով և իրերով: Ֆաթմա խանումը, ինձ տեսնելով, մոտ կանչեց և հանձնարարեց, որ երեկոյան այդ բոխչան տանեմ բեկի տուն: Մուստաֆա բեկը քթի տակով, խոժոռ աչքերով ինձ դիտեց և ղայլանը կլկլացնելով նայեց քրոջն ու բոխչային: Ես լուռ դուրս եկա: Տարակուսանքի մեջ էի, որ կողքիս բանվորները լսեցին «գյավուր» բառը: Ինքզինքս սփոփելու համար՝ միջանցքով աննկատ գնացի թոնրատուն՝ խոհանոց: Բարեբախտաբար Խանում բաջին այստեղ էր: Նկատելով իմ շփոթվածությունը և մի պահ լռելով՝ հուզմունքով ասաց.*«Սպասի՛ր այստեղ մինչև երեկո»*: Նա ամեն ինչ լսել էր և հասկանում էր ինձ: Խոր զգացմունքով ինձ նախազգուշացրեց թե՛ բանվորների, թե՛ Մուստաֆա բեկի տուն գնալու վատ հետևանքների մասին: Չքացավ իմ կարճատև հանգիստ կյանքը: Զգում էի՝ իմ հիմնական, անձնական թշնամին Ֆաթմա խանումն էր, որին չէի կարողացել գրավել իմ շռայլ նվերներով: Խանում բաջին նորից եկավ, մռայլ էր, տխուր, բայց զսպված: Նա հայտնեց, որ Մուստաֆա բեկը գնացել է և խանումը ինձ է կանչում: Ես սպասեցի Խանում բաջու խորհրդին՝ ի՞նչ անել: Մթագնած ոստերներին՝ վերացած, անորոշ վիճակում, վերհիշեցի սիրելի եղբորս, մորս, որոնք անօգնական սևեռուն հայացքով ինձ էին նայում: Հանկարծ երևակայությանս մեջ ծագած տեսարանը փոխվեց. դեմս ցցվեց Սառան՝ հանդուգն կեցվածքով, ազդեցիկ հրամայական հայացքով: Այդ պահերին նա ակնթարթաբար վերափոխվում էր մեր՝ միասին ունեցած արկածների կերպարանափոխումներով և նայելով աչքերիս՝ լուռ սրսկում ինձ իր հորդորը: Անձայն լսեցի նրա խորհուրդը՝ սպանի՛ր, որ չսպանվես, խոսքերը, և նա անհետացավ: Այս դառն ու քաղցր հիշողություններով մոլեգնած տագնապալի վայրկյանները իրար ետևից հաջորդեցին միմյանց: Ինքզինքս զսպելով՝ գնացի Ֆաթմա խանումի մոտ: Փարիսեցու[219] քաղաքավարությամբ ինձ իր սենյակը տարավ և ցույց տալով բոխչան՝ ասաց.

-Անմիջապես կտանե՛ս Մուստաֆա բեկի տուն և շու՛տ կվերադառնաս,-զգուշացրեց,-աղային այս մասին ոչինչ չհայտնես:

Խանումիս խնդրեցի, որ թույլ տա անցնեմ գիշերելուս խուցը և հագնվեմ: Նա չմերժեց: Անմիջապես շորափոխվեցի, վերցրի ատրճանակս, որը մոտ մեկ ամիս է, ինչ վզիցս կախ չէի տալիս, շտապ վերցրի բոխճան ու դուրս եկա: Խանումը լուսամուտից նորից կրկնեց.*«Նուրի՛, մինչև Իսմայիլ աղայի գալը էստեղ կլինես»*: Դարն ի վար վազեցի՝ ոչ մի պատահար հաշվի չառնելով, ուզում էի կատարել խանումի խոսքը, ըստ իս, հաճոյանալու համար: Անցա Մոլլի կամուրջը, մոտեցա ջրաղացին, կանգ առա: Ինչ-որ մի կարեկցանք, ներքին պահանջ ինձ ստիպեց տեսնել քուրդ ջրաղացպանին: Սատանայի պես նա էլ դուրս եկավ բահը թևին: Մի պահ երերացի, միգուցե, բոխչան տեսնելով, քուրդը խլի՞: Արագացնելով քայլերս՝ Թաղիգլուխ կոչվող ճամփով բարձրացա, նեղ ճամփեքով հասա կոք մեյդան /հրապարակ/: Հրապարակի ձախ կողմում

հյուքյումեթն էր, աջ կողմում՝ զինվորական և ոստիկանության շենքերը, իսկ ուղիղ հարավային կողմում, բերդի հետևը, գետի եզրին Հարսնցոց թաղն էր, ուր պիտի գնայի: Այս կողմերը, խիստ թրքաբնակ լինելով, ավելի շատ երթևեկության էին ենթարկվում: Ես բավականին կոկիկ էի հագնված՝ փյուսքյուլով կարմիր ֆես, կունդուրաներ /կոշիկներ/, նոր տաճկական տարազ: Քայլվածքս հպարտ էր: Շվշվացնելով հասա տան դարպասին և մեքենայաբար կանգ առա: Այս թաղում սուննի հարուստ հայատյած թուրքեր էին բնակվում: Ճիշտ է շատերը քոչել, գաղթել էին, բայց մնացողներ էլ շատ կային: Մոտեցա դռանը, փակ էր: Կոչնակը թակեցի, դուռը բացեցին: Ներս մտա: Սալահատակով մեծ բակում գամվեցի տեղումս: Ինձ առաջնորդող ինոը-տաս տարեկան լամուկը /թուրքի տղա/, ժպտալով ու ձեռքիցս ձգելով, քաշեց, մոտեցանք իրենց բնակարանին և միասին ներս մտանք: Ես կանգ առա, նա իսկույն ներս մտավ, և ինչպես նրան հայտնել էի ես, ուրախացած ասաց, որ հորաքույրը բոխչա՝ կապոց է ուղարկել: Իսկույն երեք երիտասարդ կանայք վազելով եկան: Ես, Ֆաթմա խանումից սալամ իրենց ասելով, բոխչան հանձնեցի: Նրանք, քրքջալով, կապոցը ձեռքիցս վերցնելով, մտան իրենց օդան /սենյակ/: Ես ուզեցի շուռ գալ, բայց կողքիս տղան, ձեռքս քաշելով չթողեց՝ ասելով.« *Սպասի՛ր, հիմա մեծ հարսը քեզ բաղշես* /նվեր/ *կբերի*»: Այդ պահին սենյակի դուռը բացվեց, և իր ածդահա հասակով դեմս ցցվեց Մուստաֆա բեկը:

-Հը՛, գյավու՛ր օղլի, ի՞նքդ եկար,-և հոր հոգի հայհոյելով՝ ուղղվեց դեպի ինձ:

Անմիջապես ես բակ դուրս եկա, նա՝ իմ ետևից: Ցույց տալով դիմացի գոմի դուռը՝ հայհոյելով ասաց՝ նե՛րս մտիր: Ես մեխանիկորեն վազեցի դեպի դուռը, հրելով բացի և ներս մտա: Եղջերավոր անասուններով մի մեծ գոմ էր: Դուռը ինքն իրեն փակվեց: Նայեցի աջ, ձախ: Կովերը, ոչխարները կանգնած որոճում էին, հորանջում: Ակամա կանգնեցի տեղումս քարացած: Հանկարծ այդ պահին տեսա մորս, դեմս կանգնած, հայացքը ինձ ուղղված, կուրծքը բաց, արյունը հոսում էր: Էն էր, ուզում էի թռչել ու գրկել սիրելի մայրիկիս: Հանկարծ դուռը բացվեց, և բեկը քմծիծաղով գոչեց.

-*Գյավու՛ր օղլի, յաթ* /պիղծ տղա պառկիր/:

Խանչալը քաշելով, քշտած արմունկին քսելով՝ դռան արանքից քայլեց դեպի ինձ: Բակից լսեցի երեխաների ուրախ քրքիջը.« *Աբա գյավուրի քյասաջաղ*» /պապան գյավուրին մորթելու է/: Երբ Մուստաֆա բեկը դռնից դեպի ինձ շարժվեց, դուռը ինքնաբերաբար դրվեց: Մի երկու րոպե առաջ մորս տեսիլքը հիշեցրեց նրա սուրբ պատգամը և ինձ միանգամայն վերափոխեց, վախս վերածվեց աներկյուղության: Խանչալը թևին քսելով՝ բիրտ հայհոյանքներով ու ծանր քայլերով մոտեցավ ինձ: Ես ակամա, աչքերս նրան հառած, ետ-ետ գնացի: Նա կատաղեց, որոտաց նրա ահռելի ձայնը՝ գյավուր յաթ: Առանց աչքս թարթելու՝ նրա արյունոտ աչքերին նայեցի: Նա մոտենում էր: Ետ-ետ գնալով՝ մեջքս կպավ գոմի սյուներից մեկին, կանգնեցի: Ընդամենը չորս-հինգ քայլ էր ինձնից հեռու: Բորբոքվելով իմ չենթարկվելուց՝ խանչալը բռնած ձեռքը բարձրացրեց և հարձակվեց: Այդ ամեհի պահին, գրպանիցս ձեռքս քաշե-

լով, որոտաց ատրճանակս: Չորս գնդակ՝ առջևումս կանգնած ախոյանիս կրծքին, վզին, գլխին: Բակից լսվեցին երեխաների ուրախ ծափահարություն-ները և բացականչությունները.« *Գյավուրի վուրդը, էօլդուրդի*» /խփեց, սատ-կացրեց/:

Վերակենդանացած, առանց այլայլումների ուզեցի շարժվել դեպի դուռը, բայց երկարահասակ բեկը անձայն և անշարժ պառկել էր մեջքի վրա՝ փակե-լով ճանապարհը: Իմ մեջ միտք հղացավ.«Եթե բակ դուրս գամ, փախչել չեմ կարող»: Պառկած անասունների վրա թռչկոտելով՝ մոտեցա միակ լուսամու-տին, որը ծածկված էր մոմաթղթով, առանց դժվարության պատռեցի և դուրս թռա այգի: Ամպամած ցուրտ երեկո էր: Նայեցի երկնքին, չորս կողմս, ելքի ճանապարհ փնտրեցի: Չորս կողմը պարիսպներ էին: Մագլցելով բարձրացա և նայելով իջա պարսպից: Պարտեզից պարտեզ ու այգի՝ ուղղությունս վերց-րեցի բերդի կողմը: Ետ ու առաջ նայելով՝ այգիներից անցա անծանոթ հանդի-պակաց ճամփեն և ինքզինքս կարգի բերելով՝ արագ-արագ շարժվեցի դեպի շուկայի կողմը: Պատահեցին մի քանի անցորդներ, որոնք գլուխները կախ տուն էին վերադառնում: Ես աշխատեցի հայացքս հեռու պահել և ինչքան հնարավոր էր աննկատ անցնել ու հասնել մինչև շուկա: Այդտեղ արդեն հետ-քերս չէին կարողանա գտնել: Հապճեպ քայլերով ուղիղ ճանապարհով շարժ-վեցի առաջ: Այլ ուղի ընտրել չէի կարող և ամենից հարմարը մեր թաղն էր, որտեղ, որին ապավինելու էի՝ սպասելով հետագա արկածներին: Թեքվեցի դեպի աջ, դեպի մեր թաղ՝ ջաղացի առվի կամրջակին հասնելով՝ անկախ ինձ-նից կանգնեցի: Առուն սառած էր, հետևաբար ջաղացը չէր աշխատում: Առանց հապաղելու՝ ձյան միակ ոտնատեղով իջա ներքև և օգտվելով ջաղա-ցի դռան կիսաբաց լինելուց՝ կողքի պառկած սողացի ներս ու կանգնեցի դռան ետևում: Բարեբախտաբար ոչ ոքի ուշադրություն չգրավեցի: Ոչ մեկը չնկա-տեց գլխավոր ճանապարհից թեքվելս ու ջաղաց մտնելս: Այս հանգամանքը ինձ շատ հանգստացրեց: Ջաղացում ոչ ոք չկար: Օգտվելով քյուրդ ջաղաց-պանի բացակայությունից՝ մոտեցա թոնիրին, որը ծածկված էր թորվանչուլով /թոնրի ծածկոց/: Երեկո էր, ջաղացում խավար էր տիրում: Հանեցի կոշիկներս և ոտքերս թոնիրը կախելով՝ ուզեցի տաքանալ, բայց բարկ, ուժեղ տաք լինե-լու պատճառով վեր քաշեցի: Ոտքերս ինչ-որ բանի հանդիպեցին: Ձեռքովս շոշափեցի և նկատեցի, որ պուտուկ էր[220] /հողե[221] կաթսա/: Խարխափելով մո-տեցա սնդուկին, որի վրա շարված էին բաղարջները: Դեռ տաք էին: Օ՜հ, առանց տիրոջ թույլտվության, ինչպիսի՜ ախորժակով ինքնակամ խժռեցի հացերից մեկը և պառկեցի թոնրի կողքը՝ աչքերս դռանը հառած: Հաճախ դռանը մոտենալով՝ հետևում էի ջաղացպանի գալուն: Անդորր էր, տիրում էր լռություն: Վերջապես նիրհեցի: Աքլորի կանչը ինձ արթնացրեց: Իսկույն վեր կացա և դռանը մոտեցա: Առատ ձյուն էր եկել և ծածկել մինչև կամրջակը տանող ոտնահետքերը: Հետևաբար դուրս գալու և գնալու ոչ մի հնարավո-րություն չկար, քանի որ ոտնահետքերս ինձ կմատնեին: Պառկեցի թոնրի կող-քը և նորից խորասուզվեցի քնով: Կողքիս հրեցին, արթնացա և, ի զարմանս ինձ, տեսա քյուրդ ջաղացպանին: « *Կուռ է քյար է* /էշի տղա/, *էս որտեղի՞ց*

դուրս եկար»,-և ձեռքի կապոցը քցելով մի կողմ՝ մոտեցավ դռանը, փակեց ու լուռ նստելով տրեխները հանեց, մեջքի գոտին արձակեց, ատրճանակն ու դաշույնը մի կողմ քցեց և մոտեցավ թոնրին: Ես, մեղավորի նման մի կողմ կանգնած, սպասեցի հարցերի: Ձեռքով ինձ նշան արեց, ես մոտեցա: Թոնրի բերանը բաց անելով՝ պուտուկը հանեց, ոտքից գլուխ տնտղելով՝ աչքով արեց, որ նստեմ: Վեր կենալով բերեց երկու կասա /հողե ճաշաման/, երկու գդալ և երկու բաղարջ: Ճաշը լցնելով՝ բոթեց իմ կողմը.« *Կե՛ր, հեյրո կիսոսենք*»: Տարաբախտները ծառի ստվերին էլ էին ապավինում, բայց ներկա հոգեկան ապրումներիս հետ համեմատած՝ ապաստան ջաղացում քրդի հյուրասիրությունը, անգամ հոգատարությունն ու պաշտպանությունը ամոքում էին որբուկիս, սիրտ տալիս՝ ապահով զգալու: Ուտելուց հետո նա հենց թոնրի կողքին պառկեց ու մի քանի րոպե հետո սկսեց խռմփացնել: Ըստ երևույթին՝ նա հիվանդ էր, քանի որ զառանցում էր և անհասկանալի բաներ մրթմրթում: Ջուր ուզեց, ես իբրեխով բերեցի, նա դեն շպրտեց և ցուցամատով ցույց տվեց: Հողե ամանով տվեցի: Խմեց, փաթաթվեց ու նորից սուս-փուս պառկեց: Ազատ զգալով ինձ՝ ման եկա, ջաղացի քունջն ու պուճաղը ստուգեցի և այն եզրակացության եկա, որ եթե փախչելու կարիք զգացվի, ամենալավ միջոցը ներսից իջնելը և ներքևի ջրատարով դուրս գալն էր, ապա գետն անցնելն ու բարձրանալով՝ վերևում եղած դատարկ տներում թաքնվելը: Ես հավերի և անկյունում կապված երկու ոչխարների մոտ էի, երբ լսեցի քյուրտի ձայնը.« *Կոռո վարո ավ բդամա*» /տղա՛, արի ջուր տուր/: Ես ջրի կուժը և պղնձե թասը բերի, նա խմեց, լվացվեց, տակի շորերը փոխեց: Քրտինքոտ վարտիքն ու շապիկը կախեց թոնիրը չորանալու, մի քիչ ջուր խմեց և անկողնում պառկեց քնելու: Հաջորդ առավոտ նա վեր կացավ, դռան արանքից նայեց դուրս և անխոս եկավ թոնրի մոտը:

Հունվարի կեսերն էր: Ձյունն ու բուքը փակել էին նեղ ճանապարհները: Հատկապես մեր թաղում հատուկենտ երթևեկություն էր լինում: Ջաղացից մեր տեսադաշտում էր երկու թաղեր միացնող Մոլլի կամուրջը, որը երթևեկության միակ ուղին էր: Երեկոյան կողմ նկատեցի, որ մի քանի ջորիներով վիրավորներ տեղափոխեցին Խանում բաջու բուժկետը, մի քանի րոպեից ծառայի հետ անցավ Իսմայիլ աղան: Գիշերը մեզ մոտ վառվում էր նավթի ճրագը, նրա աղոտ լույսը դրսից չէր նշմարվում, քանի որ ջաղացը լուսամուտներ չուներ, իսկ անկյունում գտնվող միակ փոքր լուսամուտը, որն ես հետո նկատեցի, փակված էր մոմակալած թղթով: Ուշ երեկո էր, ես պպզած էի դռան մոտ: Լսեցի քրդի կանչը, մոտեցա: Ձեռքով ցույց տալով փայտի դեզը՝ ասաց՝ բե՛ր: Թոնիրը վառեցինք, ճաշը տաքացրեցինք և լուռումունջ կերանք: Փչելով՝ ճրագը մարեց և մեկ բառ արտասանեց՝ քնիր: Հինգ օր շարունակվեց մեր միապաղաղ կյանքը: Վեցերորդ օրը՝ աքլորականչին, նա վերկացավ, թիակը վերցրեց և ձյունը դես-դեն տանելով՝ ճամփա բացեց մինչև կամրջակը: Մրսել էր, թոնրի մոտ մի քիչ տաքացավ, հագավ իր տոնական հագուստները՝ մեծ փյուսքյուլավոր քոլոզը, շարֆով աբբան ու նախշուն շալվարը, կապեց արծաթապատ դաշույնը, մեծ ատրճանակը խոթեց գոտու տակ, իսկ փոքրը ստուգեց և դրեց

գրպանը: Բեղերն ու փոքր մորուքը կարգի բերելով՝ շուռ եկավ դեպի ինձ ու զգուշացրեց.*«Դուրս չգա՛ս»*,-և դուռը դրսից փակելով՝ գնաց: Ես մենակ չէի, զբաղվեցի ոչխարներին՝ խոտ ու ջուր, հավերին՝ կուտ տալով: Համենայնդեպս կենդանի էակներ էին: Երեք օր քուրդը չեկավ: Նրա բացակայությունից օգտվելով՝ ես զգուշորեն ստուգեցի նրա սնդուկը, պատի պահարանը, ոչ մի հետաքրքիր, արժեք ներկայացնող բան չտեսա, բացի հին ու նոր քրդական հագուստներից: Դուռը փակ լինելու հետևանքով՝ զրկված էի դիտելուց: Մոտեցրի երեք աստիճան ունեցող փոքր սանդուղքը, բարձրացա լուսամուտին, պատռեցի մոմակալած թուղթը և լուսանցքից ազատ տեսա կամուրջը, ճանապարհը, որը մեր թաղի անցուդարձի միակ ուղին էր: Աղայիս ծառան ձիու սանձից բռնած՝ աղայիս տանում էր շուկա: Մի քիչ հետո մի քանի ժանդարմներ եկան, գնացին, կեսօրին մոտ դեպի վերև՝ հիվանդանոց չորս-հինգ ջորիներով վիրավորներ տարան: Ինձ թվաց, թե քուրդն էլ էր գաղթել, այլապես երրորդ օրն է, որ չի գալիս: Համենայն դեպս, մինչև գարնանամուտ նրա լրիվ բացակայությունը ինձ ձեռնտու էր, քանի պաշար ունեի և դրսից ոչ մի վտանգ չէր սպառնում:

Չորրորդ օրը՝ առավոտյան, դռան չրխկոցը լսելով, ջրատարի գաբանքը /փոքրիկ դռնակի կափարիչը/ բացի և իջա ջաղացի չարխի /պտուտակ/ վրա: Մոտ երկու րոպեից դուռը բացվեց, և ես լսեցի մարդկային ձայներ, բայց ովքե՞ր էին, որոշել չկարողացա: Ցախ ջարդելու ձայնն ինձ հանգստացրեց: Ջաղացի ջրատար առուն սառցակալած էր, ինչպես նաև փայտե պտուտակը, որն ինձ նստելու հնարավորություն չէր տա, բայց իմ մասին ոչ մի խոսք: Նույնիսկ իմացա ոչխարներից մեկին մորթելու տանելը: Երեկո էր, ճրագը վառեցին: Լսեցի քրդի ոտնաձայնը, եկավ, անցավ ոչխարների կողմը դարսված խոտի կույտի մոտ և կամացուկ ասաց.*« Կուռռ մնա տեղդ»*: Նա կարծում էր, որ ես թաքնվել էի խոտերի արանքում, բայց երբ ոչխարներին սկսեց խոտ տալ, զգաց, որ այդտեղ չեմ: Կամաց մրմնջաց.*«Ասրված իմ, ի՞նչ եղավ, որտեղի՞ց գնաց»:* Մոտ մի ժամից լույսը մարեցին, ձայները կտրվեցին: Սառույցի վրա լավ մրսել էի, դողում էի, գետն անցնելու և վերև բարձրանալու ուժ չունեի: Ստիպված կափարիչը, որ մի փոքր տախտակ էր, շարժեցի, բարձրացրի և վեր բարձրացա, անցա ոչխարների արանքն ու պառկեցի, բայց քնել չկարողացա: Ոչխարները որոճում էին: Ես, նրանց գրկելով, սառած ոտքերս նրանց արանքում տաքացրի: Դողս անցավ: Մտածեցի ի՞նչ անել. մի կերպ դուրս գալ դռնից, փախչել, հետո ու՞ր գնալ: Կասկածում էի, որ այդ չորս-հինգ օրվա ընթացքում քուրդը լսած կլիներ Մուստաֆա բեկի մասին, հետևաբար՝ նա ինձ չէր ների: Փորձեցի շարժվել, ավա՜ղ, նրանցից մեկը ծխախոտ էր ծխում, ուրեմն արթուն մարդ կար: Կծկվեցի տեղումս: Փախչելու հույսս կտրվեց, հպվելով ոչխարներին սսկվեցի: Լուսաբացին ջրաղացպանը վեր կացավ, օջախը վառեց, պղինձը ողողելով, ոչխարի միսը մեջը բոթելով, սկսեց խաշլամա եփել: Կես ժամից երեք հոգով հավաքվեցին պղնձի շուրջը: Իրենց հետ ունեցած խուրջիններից քարթու հացեր հանելով՝ սկսեցին ձեռքերով պոկել ու հոշոտել կիսաեփ ոչխարի մսի կտորները: Վերջապես նրանք վեր կացան ու խուրջինները վերցնելով դուրս եկան:

Ջաղացպանը դռնից հետ եկավ, արագ քայլերով մոտեցավ խոտի դեզին, մի գիրգ խոտ բերեց և քցեց ոչխարներին: Ի՜նչ զարմանք, ինչպիսի՜ ժպիտ, ի՜նչ ուրախություն: Դա երևաց նրա հայացքից: Ինձ նկատելով ոչխարների արանքում՝ նա անձայն թեքվեց, ձեռքով շոյեց ինձ և լուռ հեռացավ: Նրա գուրգուրանքը, չորացած աչքերից գլորվող հատիկ-հատիկ արցունքները, խորաթափանց հայացքը ինձ՝ պատանուս շշմեցրին, և ես լցվեցի երախտապարտության խոր զգացմունքով, իմ ներկա վիճակում կարեկցեցի նրան: Այո՜, նա խոր վշտի տեր էր: Այդ րոպեին նա ինձ համար պաշտելի մի կուռք էր, իսկ ես անզոր էի ըստ պատշաճի հատուցել նրան: Դուռը փակեց, գնացին: Ինչպիսի՜ մտորումներով էի ես կաշկանդված: Զգալով անճարությունս՝ ինքզինքս մեղադրեցի նրա զոհողությունների համար: Չէ որ հայտնաբերվելս բարի քրդին մահով էր սպառնում: Մոտեցա դռանը, ուզեցի դիտել կամրջի վրայով երթևեկողներին, բայց դռան ճեղքից հնարավոր չէր, քանի որ կամուրջն ավելի բարձր էր: Ստիպված հավերի թառերի աստիճանին բարձրանալով՝ փոքր լուսամուտից նայում էի դեպի մեր թաղը տանող բարձունքի ճամփին, որտեղից երևում էին հիվանդանոց եկող-գնացողները, իմ աղայի ու նրա ծառայի, փոլիսների ու ժանդարմների գնալն ու գալը: Ցյունը առատ թափվում էր ու ծածկում անցորդների ոտնահետքերը: Լսեցի աքաղաղի ծուղրուղուն, սթափվեցի և ցած իջա: Արդեն երեկո էր: Թոնիրը սառն էր: Մրսել էի: Նորից գնացի ոչխարների արանքը և խորը քնեցի: Չգիտեմ գիշերվա որ ժամին էր եկել քուրդը: Լսելով նրա դողդոջուն ձայնը՝ վեր թռա տեղիցս և աղոտ ճրագի լույսի ներքո ահով ու պատկառանքով նայեցի ձեռքին ճրագը բռնած քրդի կարկամած դեմքին: Ձեռքով նշան արեց, ես հետևեցի նրան: Ցախով թոնիրը վառեցինք, նա իր ոջլոտ շապիկը թափ տվեց, հագնվեց, լվացվեցինք և նստեցինք թոնրի մոտ: Անսպասելիորեն հարց տվեց.«*Տղա՛, դու որտեղի՞ց եկար այստեղ*»: Ես շփոթվեցի, երկյուղով լցվեցի: Նկատելով, որ դժվարանում եմ պատասխանել, նա հոգոց հանեց և հառաչանքով ասաց.

-Ոստիկանությունը հետևում է քեզ գտնելու համար: Անցյալ օրը Մուստաֆա բեկին թաղեցին: Ռուսները մոտեցել են քաղաքին: Բոլորիս հրամայված է գաղթել:

Քրդից լսելով այս կարճ ու կտրուկ տեղեկությունները՝ ավելի ապահով զգացի ինձ, հանգստացա և համոզվեցի, որ նա իմ նկատմամբ բարեսիրտ է: Ակամա նրան հարցրեցի.«*Խալո՛/քեռի/, դու չե՞ս գաղթելու*»: Նա շվարած աչքերով ինձ նայեց և հազիվ արտասանեց՝ առայժմ ո՛չ: Իմ վիճակն ավելի վատացավ: Պետք էր հեռանալ ջաղացից և քրդին անախորժություններ չպատճառել.«*Խալո՛ ջան, այս գիշեր ես կգնամ*»: Նա մի ծանր հոգոց հանեց և կտրուկ ասաց.

-Դու ոչ մի տեղ չունես գնալու, սպասի՛ր մի քանի օր, ռուսները մոտեցել են:

Նա բացեց դուռը և նայեց, դրսում սաստիկ ձյուն էր գալիս: Անց ու դարձ չկար: Քուրդը դուռը ծածկեց, ներս եկավ, անխոս մոտեցավ, բռնեց երկու հավին և մեկ աքլորին, երեքին էլ մորթեց: Թոնիրը վառեցինք և հավերը փետրա-

հանելով՝ եփեցինք ու սկսեցինք ուտել: Երեկո էր: Քուրդը հագնվեց, զինվեց իր կամայով /դաշույն/ ու ատրճանակով, ինձ ապսպրեց ոչ մի տեղ չգնալ մինչև իր վերադառնալը: Դուռը դրսից փակեց ու գնաց: Նույնիսկ խաղաղ օրերին փետրվար ամսվա սառնամանիքին մեր թաղի միակ անցուղի կամրջով անցուդարձը պակասում էր: Դարձյալ դռան վրայի լուսամուտի լուսանցքից նայեցի: Աղան իր ծառայի հետ, ձին քարշ տալով, անցավ կամուրջը, տուն էին գնում: Ուզում էի վազել, հասնել նրան, բայց քրդի նախազգուշացումը… Աչքերս փակեցի մինչև նրանց անհետանալը, մոտեցա թոնրին՝ սառած մարմինս տաքացնելու: Ինչ-որ ձայներ լսելով՝ նորից բարձրացա: Նշմարվում էր, որ մի քանի ասքյարների ուղեկցությամբ մոտ տասը ջորիներով վիրավորներ էին տանում: Նորից վերադարձա և քրդի խորհուրդը հաշվի առնելով՝ պառկեցի տաք թոնրի կողքին և քնեցի: Արթնանալով սպասեցի աքլորականչին, բայց ավաղ, խեղճին կերել էինք: Նորից լուսամուտի ճեղքից նայեցի, պարզկա օր էր: Վերևից բեռնված մի քարավան էր իջնում: Կազդուրված վիրավորներին էին տեղափոխում, շատերն էլ հենակներով, ձեռնափայտերի օգնությամբ, հևալով հազիվհազ գնում էին քարավանի հետևից: Այդ օրը աչքիս տեսադաշտում գտնվող կամուրջն ու ճանապարհը անընդհատ եռուզեռի մեջ էին. զինվորների ու ժանդարմների երթևեկությունը քառապատկվել էր: Երեկոյան երթևեկությունը վերջացավ: Ես նորից պառկեցի թոնրի շուրջը: Լսվեց դռան բացվելու ձայնը: Վախի մի սարսուռ անցավ մարմնովս: Ինքնապաշտպանության զգացումով ատրճանակը ձեռքիս տեղիցս վեր թռա: Նայեցի ներս մտնողներին: Այդ անակնկալ պահին ինձ թված, որ քուրդը դավաճանել է ինձ, բայց որքան ես զարմացա, երբ քուրդը նկատելով իմ դեմքը, ձեռքով արեց ինձ, դուռը փակեց և ժպտալով մոտեցավ.«*Տղա՛, դու կրակել գիտե՞ս*»: Իմ վարմունքը ինձ ամոթահար արեց: Մեղավորի նման, գլուխս կախ արած, սպասեցի դատաստանիս: Քուրդը սկսեց խոսել.

-Ռուսը մոտեցել է, մի քանի օրից քաղաքին կհասնի: Բոլորը գաղթել են: Իսմայիլ աղան էլ է պատրաստվում գաղթելու: Ես նրան ծախեցի էս երեք պարկ ալյուրը: Առավոտյան կգան տանելու: Տղա դու շատ կտրիճ ես:

Մի փոքր ընթրելուց հետո քնեցինք: Առավոտյան աղայի ծառան երկու ջորիներով եկավ: Ալյուրը միասին տարան: Ինձ զարմացրեց աղայի գաղթելը: Չէ որ նա որոշել էր չգաղթել: Քուրդը մինչև երեկո չվերադարձավ: Ամբողջ օրը մենակ գալարվեցի մտահոգումներիս մեջ, անհանգստանում էի Խանում բաջու համար, փափագում նրան տեսնել: Որոշեցի գնալ Խանում բաջուն տեսնելու:

Կեսգիշեր էր, փորձեցի դուռը բանալ, չստացվեց: Ստիպված կափարիչը վերցնելով՝ իջա ջրատարով, դուրս եկա, գետի սառույցներով անցնելով՝ բարձրացա վերև, որտեղ դատարկ հայոց տներն էին: Ինձ կարգի բերելով՝ արագարագ սկսեցի բարձրանալ ճանապարհով: Անկախ ինձանից կանգնեցի աղայիս տան այգու դարպասի մոտ: Այգում յոթ-ութ ջորի կար: Աղայիս տեսնելու ինչ-որ պահանջ զգացի, բայց ջորիների խրխնջոցը ինձ սթափեցրեց, և ես անմիջապես շտապեցի՝ շարունակելով ճամփաս դեպի Խանում բաջու

տունը: Նախկին կուլուխում /ոստիկանատուն/, ներկայիս հիվանդանոցում լույսերը վառվում էին: Կանգնեցի միակ բարեկամիս տան դռան մոտ, մի պահ սպասեցի և շուռ գալով եկա ու լուսամուտից մտա ներքնատունը: Լուսադեմին լսեցի դռան բացվելու ձայնը: Մի անսովոր հրճվանք համակեց ինձ: Խանում բաջին թեյնիկը ձեռքին անցնում էր: Երկյուղալի ձայնեցի՝ Խանու՛մ բաջի: Նա կանգնեց, բայց ինձ թված, թե նա դողաց: Նորից կանչեցի.*«Խանու՛մ բաջի, ե՛ս եմ, Նուրի՛ն եմ»*: Նա, մատը բերանը տանելով, չորս կողմը նայեց և դուռը բացելով՝ ներս եկավ: Ես բնազդաբար նրա ոտքերին փաթաթվեցի: Գլուխս շոյելով՝ ինձ բարձրացրեց: Ես զգացի նրա բերանի հպումը ծոծրակիս.*«Ես ամեն ինչ գիտեմ, Նուրի՛, մի վախիր: Կմնաս այստեղ մինչև իմ վերադառնալը»*: Դուրս գալով՝ մի քանի րոպեից ինձ ուտելիք բերեց, դրսից դուռը փակեց ու գնաց, ուշ երեկոյան եկավ.

-Նուրի՛, ես Իսմայիլ աղային տեղեկացրի քո մասին, նա չհավատաց՝ պնդելով, թե սպանված ես, այդ մասին ոստիկանապետը զեկուցագրով է հայտնել,-և ավելացրեց,-նա խնդրեց ինձ՝ եթե իրոք կենդանի է, թո՛ղ գա ինձ մոտ: Նուրի՛, լսո՞ւմ ես ինչ եմ ասում: Իսմայիլ աղան պատրաստվել էր գաղթելու, բայց հետաձգեց, սպասում է քեզ տեսնելուն:

Խանում բաջին շտապ գնաց հիվանդ-վիրավորների մոտ և մոտ երկու ժամից վերադարձավ: Ապահով լինելով, որ մեր թաղում բացակայում էին ոստիկաններն ու ժանդարմները, նա ինձ հրավիրեց վերև՝ իրենց սենյակ: Միասին ընթրեցինք: Նա ուներ երկու աղջիկ և մի տղա, որոնք բավականին գեղեցիկ և առույգ էին: Նրանք ինձ ցավակցում էին, գորովալից աչքերով նայում: Իսմայիլ աղային տեսնելու խիստ պահանջ էի զգում, բայց վախենում էի Ֆաթմա խանումից: Պարզ էր, նա ինձ ատամներով կխեղդեր: Ակամա վեր կացա և մտազբաղ քայլեցի սենյակում: Ուզեցի մտքերս վանել Իսմայիլ աղայից, բայց ինչ-որ ներքին հոգեկան ապրումներ ինձ հիշեցրեցին, և ես պատկերացրեցի սիրելի հորս ու Իսմայիլ աղայի երբեմնի անցած խոսակցությունները, մտերմությունը: Խանում բաջին և երեք երեխաները մի տեսակ երկչոտ անվճռականությամբ ինձ էին նայում: Մոտեցա Խանում բաջուն, խոնարհվեցի և հանդգնելով ասացի.*«Ես հիմա՞ գնամ աղայի մոտ»*: Չորսի աչքերն էլ լուռ ու տխուր սևեռված էին ինձ վրա: Երբ մոտեցա դռանը, Խանում բաջիս հեկեկալով ասաց.*« Օղու՛լ, իսանումն ու Շահբաղդինը քեզ...»*: Ես դուրս եկա, չլսեցի նրա վերջին խոսքը և ուղղվեցի աղայիս տան կողմը: Մեր թաղում ոչ մի շարժում չկար, բացի հիվանդանոցից, որի աղոտ լույսը թափանցում էր լուսամուտներից: Ես պատսպարվեցի Մժոյենց տանը, որտեղից պարզ երևում էր աղայի այգին, ձիերն ու ջորիները, նրանց առաջ թափված խոտը:

Լուսաբացին երկու ջորեպան դուրս եկան բակ և սկսեցին զբաղվել ջորիներին թամբելով: Քիչ անց երևաց աղայի ծառան՝ հակը շալակին: Ես իմ թաքստոցից պարզ տեսնում էի դիմացի թաղի գլխավոր ճանապարհը, ինչպես նաև շարժվող սայլերով փոխադրվող վիրավորներին: Վերջապես երևաց Իսմայիլ աղան: Կարոտագին զգացումով դուրս նետվեցի և ուզեցի ձայն տալ: Ջորեպանների և ծառայի ներկայությունը ինձ խոհեմության դրդեց: Ագահա-

բար տեսողությունս կենտրոնացրի աղայի վրա: Նրանք մի քանի անգամ ելումուտ արին: Նորից կապված հակեր դուրս բերելով՝ պատրաստվեցին բառնալու: Ինչպիսի ուրախություն ինձ համակեց, երբ տեսա Խանում բաջուն, որը մոտենալով աղային՝ ինչ-որ բան փսփսաց նրա հետ: Կարծես մոգական գավազանի հարվածով՝ նա մի պահ քարացած կանգնեց: Սթափվելով՝ կարճ մորուքն ու բեղերը մաժեց: Խանում բաջու հեռանալուց հետո Իսմայիլ աղան հետախուզող հայացքով դես-դեն նայեց և հանկարծ՝ Նուրի՛, Նուրի՛, կանչելով, պարսպով բարձրացավ, անցավ Մժոյենց տան կողմը և նորից իմ անունը տալով՝ կանգնեց Մժոյենց բակում: Մի քանի րոպեից նա հիասթափված հետ գնաց, այդ պահին ես կանչեցի.*«Աղա՛, ես երեկոյան կգամ»*: Նա շիվարածի պես դես-դեն նայեց, ինչ-որ բան փսփսաց, նորից ետ դարձավ ու քնքշաբար ասաց.*«Օղու՛լ, Նուրի՛, մի՛ վախիր, արի»*: Անընդհատ հետապնդվող՝ իմ փախստականի կյանքը ինձ զգուշացնում էր, զգուշություն թելադրում: Դեմս կանգնած էր աղան, ներքևում՝ ջորեպանները, փողոցում երթևեկում էին ժանդարմները: Երդվյալ թշնամիս՝ խանումը, վրեժխնդիր լինելու համար ատամներով ու եղունգներով կհոշոտեր ինձ: Ինչքա՜ն թախանձագին էր աղայիս ձայնը, ինչքա՜ն դուրեկան, հուզող ու ցնցող: Ուզեցի դուրս գալ, փաթաթվել ոտքերին, բայց հիշեցի հորս խոսքերը.*«Թուրքը մնում է թուրք»*: Եվ հազիվ պատասխանեցի.*«Աղա՛, ես երեկոյան քեզ կսպասեմ այգում»*: Նա քոլոզը հանեց, գլուխը քորեց և շարժվեց դեպի տուն:

Ժանդարմները փողոցներում վխտում էին, բռնի կերպով ստիպում գաղթել: Խանութները փակ էին, հացի փուռերը չէին աշխատում, գաղթականները կիսաքաղց էին: Նրանց հրամայված էր թային ստանալ Սղերդի ճանապարհին: Գլխավոր ճանապարհով սայլերով, ձիերով անընդհատ վիրավորներ էին տեղափոխում: Ռուսները մոտեցել էին Դատվանին, Վանա լճին:

Չնայած որ ես Իսմայիլ աղային վստահում էի և ճիշտ է, որ նա բարի էր իմ նկատմամբ, բայց խանումը երբեք ու երբեք ինձ ներել ու տանել չէր կարողանա: Դա հնարավոր չէր: Աղան ծառայի հետ նորից դուրս եկավ և կարգադրեց կապոցները ներս տանել, իսկ ջորեպաններին անմիջապես գնալ՝ թողնելով մեկ ջորի: Ֆաթմա խանումը, տեսնելով հակերի ներս բերելը, զարմացած դուրս եկավ և ամուսնուն դիմելով հարցրեց.*«Ի՞նչ եք անում, բոլորը գաղթել են, մենք մենակ ենք մնացել: Գոնե երեխաներիդ խղճայիր, գյավուրները բոլորիս կմորթեն ու կսպանեն»*: Նա ամուսնուն լալագին խնդրում էր գաղթել հեռանալ, բայց աղան մնաց անդրդվելի և պոռալով ջորեպանների վրա՝ հրամայեց անմիջապես հեռանալ: Աղան ծառային կանչեց, ափսոսանքով նայեց նրա շփոթված դեմքին ու տխրադեմ ասաց.*«Դու էլ գնա, եթե ողջ մնանք, կտեսնվենք»*: Քիսան հանելով դատարկեց,[222] եղած փողերը լցրեց նրա ափի մեջ, ջորին հանձնելով ու թևին քնքշորեն խփելով՝ տխուր ասաց.*«Գնա՛, իմ բարի՛ Ալի, Աստված քեզ հետ»:* Խանում բաջին, մոտենալով Ֆաթմա խանումին, որը հեկեկում էր, թևանցուկ ներս տարավ:

Հեռվից լսվում էր թնդանոթների ձայնը, ռումբերի պայթյունը: Այդ ցերեկ ծառան մի քանի կուժ ջուր բերեց: Դռները ներսի կողմից ամրացրին, սովորա-

կանից ավելի շատ խմոր արեցին, մեծ պղնձով խաշ /փաչա/ պատրաստեցին: Ես, աչքերս չռած, Մժոյենց տնից հետևում էի Խանում բաջու դուրս գալուն: Չէ որ նա երեկոյան գնալու էր վիրավորներին հոգալու, բայց նա չկար: Երեկոյան դուռը բացվեց, աղան ծառայի հետ դուրս եկավ: Ափսոսանքով նայեց նրա շփոթված դեմքին: Ծառային ճանապարհելուց հետո նա, խորասուզված մտքերի մեջ, սկսեց ման գալ այգում: Դես-դեն նայեց: Ստուգելով և համոզվելով, որ փողոցում անցորդ չկա, նա բարձրացավ այգու վերևի տների կողմը և ձայնեց.«*Նուրի՛, Նուրի՛, Միհրա՛ն, Միհրա՛ն, որտե՞ղ ես, արի*»: Ես վաղուց էի սպասում նրան, չկանխամտածված վազեցի և բնազդաբար փաթաթվեցի նրան: «*Օղուլ* /տղաս/, *գնա՛նք տուն*»: Ես մի պահ կանգ առա, նայեցի նրա դեմքին և մեղապարտի խոստովանությամբ ասացի.«*Աղա՛, Ֆաթմա իանումը հնչ...*»: Նա, ձեռքը բերանիս սեղմելով, լռեցրեց և մի ծանր հոգոց հանելով՝ ասաց.«*Խանումը քո մազին չի՛ կպչի*»: Այդ պահին դուրս եկավ Խանում բաջին: Նա, ինձ աղայի կողքին տեսնելով, ժպտաց, բայց նրա ժպիտը իսկույն ևեթ փոխվեց զարմանքի և ահի: Նա, իր խմորոտ մատը շրթունքին տանելով, ինձ հառեց իր շփոթված հայացքը: Այդ պահին իրար հետևից մի քանի ռումբ պայթեց մեր շրջակայքում: Անկանոն փախչում էին ասքյարները: Ռմբակոծությունը գնալով ուժեղացավ: Ահն ու սարսուռը պատեց աղային: Նա դողալով, թևով ինձ հրեց՝ ասելով՝ գնա՛նք տուն: Խանում բաջին, մոտենալով աղային, նրա ականջին փսփսաց.«*Աղա՛, Ֆաթմա իանումը հիվանդ է, եթե սրան տեսնի, սիրտը կպայթի*»: Հացթուխ պառավը, մի քանի լավաշ և հինգ ղուրուշ ստանալով աղայից, շտապելով դուրս եկավ: Մտնելով թոնրատուն՝ ես ամենայն զգուշությամբ թաքնվեցի: Խանումի պատվերի համաձայն Խանում բաջին աղայի երկու տղաներին /Շահբաղդին և Մանդոհ/ սկսեց լողացնել: Աղան դռների սողնակներն էր ամրացնում: Խանում բաջին, վերջացնելով իր գործը, շտապում էր գնալ: Նա երերալով գնաց խանումի սենյակը, մի բոպեից կապոցը ձեռքին դուրս եկավ, մոտեցավ ինձ ու կամացուկ շշնջաց.«*Նուրի՛, գիշերը արի մեզ մոտ*»: Նա դեռ չէր վերջացրել իր խոսքը, երբ աղան, ձեռքին մի փոքր կապոց բռնած, ներս մտավ.«*Խանո՛ւմ եվլա, Նուրիին լողացրա և այս շորերը հագցրա*»: Բոլոր դռները ամուր փակված էին: Խանում բաջին, մոտենալով ինձ, ձեռքիցս քարշ տալով տարավ լողարան՝ չոլը, անմիջապես հագուստներս հանեց և սկսեց արագ-արագ լողացնել: Չնայած այդ պահին մեր մտքերում եղած ապրումների դառնություններին, մինչև հիմա զգում եմ նրա ձեռքերի շոյանքը, շարժումը, նրա հպումները: Աներևակայելի զգացմունքներով պաշարված՝ ես երազում էի և հանկարծ լսեցի նրա ձայնը.«*Նուրի՛, շուտ հագնվիր*»: Մարմինս շփելով՝ չորացնելիս գլխիս զգացի նրա շրթունքների հպումը: Աղան ներս մտավ մի փայտ և մի արշին սպիտակ կտոր ձեռքին և ինձ տալով ասաց.

-Մի երեսին խաչ նկարիր, մյուս կողմում գրիր՝ ես հայ եմ:

Խանում բաջին գնալիս հայացքով ինձ զգուշացրեց խանումից հեռու մնալ: Աղան նորից եկավ ինձ մոտ, նա տխուր էր, մտախոհ: Նա նայեց դրոշակին և հարցրեց.«*Ի՞նչ լեզվով ես գրել*»: Ասացի ֆրանսերեն՝ je armenie[223] /ես

հայ եմ/: Մոտ տաս լավաշ և մի ափ աղ կապելով մի շորի մեջ՝ առանձնացրեցինք: Աղան, մոտենալով ինձ, կեղծ սիրով շոյեց գլուխս և ասաց.

-Գնա՛նք հաց ուտելու, որից հետո դու կգնաս և Թաղիգլխի ճանապարհին կսպասես ռուսներին և ցույց տալով աղն ու հացը՝ կհրավիրես մեր տուն, կպատմես մեր մասին:

Ուշ երեկո էր: Բոլոր լուսամուտները ծածկված էին հաստ վարագույրներով և սինիներով, դռները ամրացված և փակված էին լրացուցիչ սողնակներով: Ելումուտ անել կարելի էր միայն թոնրատան միջոցով: Լսվում էին թնդանոթների զարկերը, դղրդյունները, հրացանների կրակոցները, ռումբերի պայթյունները: Սիրտս տրոփում էր, ազատության տենչով ոգևորված՝ ուզում էի դուրս գալ, վազել ընդառաջ: Եվ այդ պահին ներսի սենյակի դուռը բացվեց, դուրս եկավ աղան խանումի և երկու տղաների հետ: Լուռ, ծալապատիկ նստեցին սեղանի շուրջը ընթրելու: Խանումին տեսնելով՝ փշաքաղվեցի, կորցրի հավասարակշռությունս և մի տեսակ դող, սարսուռ զգացի: Պատրաստվեցի փախչել, բայց ինչպե՞ս: Լուսամուտը, որը մոտ էր ինձ, փակված էր: Դրսի դռան կողմը գնալ հնարավոր չէր, քանի որ պետք է իրենց մոտով անցնեի, դուռն էլ պինդ փակված էր: Զգուշության համար լամպի լույսը թույլ էր վառված: Նրանք ինձ չնկատեցին, քանի որ ես պատի և պահարանի արանքում էի: Աղան վեր կացավ, մի երկու քայլ հետ-դարձ անելով, մոտեցավ խանումին և հևալով ասաց.

-Մեր հույսը, փրկությունը գյավուր տղան է: Քեզ հանգիստ պահիր, ո՛չ մի ձայն, ո՛չ մի խոսք:

Խանումը և երեխաները իրենց ապշած հայացքները ուղղեցին աղային: Խանումը զարմանքով և ահով հազիվ հարցրեց.«*Չէ՞ որ նրան սատկացրել են*»: Աղան, թեքվելով դեպի երեխաները, ձեռքով շոյեց նրանց գլուխները և կնոջ աչքերին նայելով՝ ասաց.«*Սրանց բախտից նա կենդանի է և այստեղ է*»: Խանումը այլայլվեց և երկու ձեռքով դեմքը ծածկելով՝ հեկեկաց: Աղան նորից զգուշացրեց.«*Ոչ մեկը չգայրանա՛, պետք է ուրախ լինե՛ք, գյավուր տղան հիմա մեզ պետք է*»: Աղան, ճակատը շփելով, մոտեցավ իմ կողմը և կանչեց.«*Նուրի՛ տղաս, արի՛*»: Ես դողալով մոտեցա: Նա, ձեռքիցս բռնելով, բերեց և միասին նստեցինք սեղանի շուրջը: Խանումը ջղային մոլեգնությամբ ձեռքերն էր ծալմլում և ատամները կրճտացնում: Երեխաները ինձ տեսնելով՝ թողեցին մորը, և մենք գրկախառնվեցինք: Աղան իր ձեռքով մի բաժակ շարապ լցրեց և մոտեցրեց խանումի բերանին: Թիկունքը շոյելով՝ խմեցրեց: Աղայի պահանջով սկսեցինք ճաշակել, և ահա անսպասելիորեն դուռը ծեծեցին: Սովորաբար ես պետք է վեր կենայի դուռը բացելու, բայց աղան, ձեռքը թևիս դնելով, ինքը կանգնեց, շոշափեց գոտու տակ խրած ատրճանակը և հարցրեց՝ ովքե՞ր եք: Եվ լսելով ծանոթ ձայներ՝ մեծ տղային մատնացույց արեց, որ դուռը բացի: Ներս մտան երեք ժանդարմ և մի փոլիս, որոնք մինչ այդ հերթափոխի էին գտնվել կուլուխնում: Փոլիսը ջղայնացած ասաց.«*Իսմայի՛լ աղա, ինչու՞ չգաղթեցիր: Դե շուտ արա՛, գոնե դու արի մեզ հետ, ներքևում մեզ ֆիերով սպասում են*»: Աղան կտրուկ մերժեց.«*Ես չեմ գնում*»: Փոլիսը՝

ոստիկան, մի հայացքով տնտղեց երեք տղաներիս ու գոռաց.

-Իսմայի՛լ աղա, չէ՞ որ դու երկու տղա ունեիր,-և ապտակելով կանգնած տղային՝ գոռաց,-գյավուրին պահում էիր էս օրվա համա՞ր:

Ապտակից տղան ճչաց և վայր ընկավ: Աղան ձեռքը տարավ դեպի ատրճանակը, ժանդարմները նետվեցին դեպի աղան: Տեսնելով իր որդու ծեծն ու հատակին ընկնելը՝ խանումը նույն պահին ճչաց և մատնացույց անելով ինձ՝ հայտնեց.

-Գյավուրը սա է, նա իմ տղան է,-և գրկեց տղային:

Այդ թոհուբոհի մեջ ժանդարմի քացին ինձ նստած տեղից շուռ տվեց սեղանի մյուս կողմը: Բոլորը կատաղած ինձ նայեցին: Մեկը մեջքիցս քաշելով, ատրճանակը հանելով, թքելով և հայհոյելով՝ հրամայեց դուրս գալ: Օգտվելով առիթից՝ փոլիսը պոռում էր Իսմայիլ աղայի վրա: Երկու ժանդարմներ դրսում էին և շտապեցնում էին գնալ: Ես փռված էի հատակին: Իսմայիլ աղան պաշտոնապես ավելի բարձր կոչում ուներ: Չտանելով փոլիսի արհամարհանքը՝ գոռալով գոտուց քաշեց ատրճանակը և ձեռքը թափ տալով ու հայհոյելով՝ հարձակվեց նրա վրա: Դրսում կանգնած ժանդարմները ներս եկան և աղային խնդրեցին հանդարտվել՝ ասելով.*«Գյավուր լակոտի համար չարժի վրդովվել»*: Ես արդեն ոտքի էի կանգնած, երբ անսպասելիորեն ինձ վրա հարձակվեց խանումը: Չանգռելով դեմքս, գլխարկս դեն շպրտելով՝ գոռաց վրաս.*«Կեղտո՛տ գյավուր, շուտ շորերդ հանի՛ր»*,-և քաշքշելով ու ապտակելով ինձ՝ մերկացրեց: Թողնելով միակ շապիկս, թքելով ու գլխիս բամփելով՝ ոտքով հրեց: Աղան և տղաները քարացած նայում էին, դրսում կանգնած ժանդարմները՝ շտապում: Փոլիսը դրսում կանգնած ժանդարմներին կարգադրեց շտապ իջնել ներքև և ձիերը մոտեցնել կամրջին: Դառնալով Իսմայիլ աղային՝ ներողություն խնդրեց և հրելով ինձ՝ առաջ անցավ: Փոլիսն՝ առջևից, ժանդարմն՝ ետևից, ատրճանակը բռնած՝ ինձ հրելով, դուրս եկանք տնից: Խանումը քանի-քանի անգամ բամփեց գլխիս և թքելով անեծքներ թափեց:

Աղայիս տունը գտնվում էր Ծապրկորի թաղի ներքևում՝ Լոռոյ աղբյուրի մոտ: Փոլիսին սպասող ձիերին հասնելու համար անհրաժեշտ էր նեղլիկ զառիվայրով իջնել, անցնել Մոլլայի կամրջով և հասնել մոտ երկու հարյուր մետր հեռավորությամբ գտնվող գլխավոր ճանապարհին: Փետրվարի ցուրտ գիշեր էր: Երեսունհինգից քառասուն սմ հաստություն ունեցող ձյունը պարզ գիշերը սառցակալել էր: Աղայենց տնից դուրս գալիս լսեցի աղայիս ձայնը, շուռ եկա նայեցի: Ժանդարմի ետևից գալիս էր աղան՝ ատրճանակը ձեռքին: Ժանդարմը, ինձ հրելով, շտապում էր հասնել փոլիսին, որը շտապում էր ներքև: Աղայիս տան կամարի տակից դուրս գալով՝ ժանդարմը նկատեց, որ փոլիսը բավականին հեռացել էր: Նա ատրճանակով գլխիս խփեց և ուզեց հրել մի կողմ և կրակել: Աղաս երեք-չորս մետր հեռավորությամբ ճամփի վրա, կանգնած էր: Կռահելով ժանդարմի միտքը՝ նա գոռալով շարժվեց ներքև.*«Չէ որ ես փոլիսին ասացի, իմ տան սահմաններում չխփե՛լ»*,-և ձեռքը երկարացնելով շարունակեց,-*կամրջի մոտ»*,-ու վերադարձավ տուն: Ժանդարմը, լսելով աղայի ահարկու ձայնը, նորից հրեց ինձ դարն ի վար: Ես վար ընկա ու ձյունի

արահետի՝ ոտքի ճամփի երկարությամբ փռվեցի: Ժանդարմը վազքի իներցիայով իմ վրայով սլացավ դեպի ներքև: Օգտվելով առիթից՝ ես իսկույն վեր կացա, ձյան վրայով վազեցի աջակողմյան տանիքներով՝ դեպի խանոյ Մինասի այգու կողմը: Փախչելիս ես իմ ետևից լսեցի փոլիսի և ժանդարմի կրակոցները, բայց արդեն ուշ էր. նախ նրանք ցածր էին, ապա գիշերվա մթությունն ու սպիտակ շապիկս ինձ անտեսանելի դարձրեցին: Տանիքից թռնելով այգին՝ մինչև ծնկներիս վերևը խրվեցի ձյան մեջ: Պարզ լուսնյակ գիշեր էր: Տկլոր, բոբիկ ոտքերով ձյան միջով գնացի, հասա մի թթի ծառի մոտ: Հենվելով ծառին՝ նայեցի չորս կողմս: Մի քանի րոպեից, համոզվելով, որ հետապնդողներ չկան, սկսեցի բարձրանալ մեր տան կողմը: Մեր բակում քիչ սպասելով՝ զգացի, որ ցրտից, թացությունից ձեռքերս ու ոտքերս մրսեցին և մրմռացին: Ստիպված նորից ուղղվեցի դեպի աղայի տան կողմը: Մի քանի անգամ փայտով, քարով դռները ծեծեցի, բայց ոչ մի ձայն: Շրջանցելով աղայի տունը՝ բարձրացա վերև, որտեղ մի ցածրիկ լուսամուտ կար, որը միշտ բաց էր: Այդտեղից ելումուտ էին անում հավերը: Մի քանի անգամ ես այդ անցքից օգտվել էի: Կանգնեցի լուսամուտի մոտ, բայց ինչքան չարչարվեցի մագլցել դեպի վեր, չստացվեց: Սառած ոտքերս ու ձեռքերս ինձ դավաճանեցին: Հիշեցի Խանում բաջիին, բայց ինչպե՞ս գնալ: Նախ բավականաչափ հեռու էր, երկրորդը՝ վիրավոր զաբիթները զինված էին և երրորդը՝ կռվող ասքյարները նահանջում, փախչում էին վերևի ճամփով:

Գնացի հարևան թուրքի՝ Մժոյենց տուն: Բարեբախտաբար բակում մի մեծ նախնադարյան եռավոտ աթոռ էր քցած: Մի կերպ քաշելով բերեցի, նրա օգնությամբ բարձրացա և լուսամուտից ներս մտա: Հավերի թառի աստիճանով իջա ներքև, սողնակն ու փականքը բացելով՝ ներս մտա: Այստեղ շարված կարասները լիքն էին պաշարներով՝ կորկոտ, ձավար, ալյուր, թթու և այլն: Այստեղից կարելի էր գնալ աղայի սենյակների նախասրահը և թոնրատուն: Դանակի և գամի[224] միջոցով մի կերպ դուռը բացելով՝ ներս մտա: Դռների ճեղքերից ստուգելով՝ նկատեցի, որ միայն մեջտեղի սենյակում վառված լույս կար: Կամացուկ փորձեցի դուռը բացել, բայց չստացվեց: Նորից նայեցի փականքի մի անցքից, բացի աղոտ լույսից ոչինչ չերևաց: Ստիպված կանչեցի.*«Աղա՛, աղա՛, ես եկել եմ»*: Նկատեցի աղայի շարժումը, նորից կանչեցի.*«Աղա՛, ե՛ս եմ, Նուրին եմ: Բաց արա՛, դուռը, հագուստներս փվեք հագնեմ, մրսում եմ»*: Աղան կանգնեց, վերցրեց ատրճանակը, ուղղեց դեպի դուռը և գոռաց.*«Տղա՛ս, գնա առավոտյան կգաս»*: Եվ շուռ գալով կնոջ կողմը, որն երեխաների հետ անկողնում պառկած էր, ոտքով հարվածեց խանումին և վախից դողալով ասաց.*«Ինչու՞ հանեցիր շորերը: Նա գոռնափշտիկ է դառել, եկել»*: Այս խոսքերը լսելով՝ երեխաները սարսափեցին, ահ ու դողով վերմակի տակ կծկվեցին: *«Աղա՛, աղա՛, ես Նուրին եմ, առողջ եմ, մրսում եմ, հագուստներս փվեք, ես կգնամ»*,-բայց նա համառեց և շփոթված, երկու ձեռքով գլուխը բռնած, հենվեց թախտի բարձերին: Դևերի, դժոխքի, չարքերի մասին կրոնական նախապաշարումները, անգրագետ դարվեշներից լսած հեքիաթները մտքով ու հոգով կուրացրել էին հետամնաց իսլամ ժողովրդին, որը հավատում

էր մեռածների հայտնությանը, որոնք գոռնափշտիկ /ուրվական/ դառնալով վրեժխնդիր էին լինում իրենց հակառակորդներից: Այդ մոլի համոզմունքը դարերից ժառանգած հետադեմ թուրքերի առհավատչյան էր: Համոզվելով, որ դուռը բաց չեն անելու, ստիպված գործի դրեցի դանակն ու մախաթը և կիսով չափ բաց արի դուռը: Աղան սարսափած շուռ եկավ դեպի ինձ: Նա ամբողջ մարմնով դողում էր: Երկյուղից թուլացած ձեռքից վայր ընկավ ատրճանակը: *«Աղա՛ ջան, ես ողջ եմ, փախել եմ, նրանք ևս փախան»:* Մոտեցա վառարանին տաքանալու և այդ պահին աղան նկատեց իմ սրունքի արյունը: Անկախ իրենից բարձրաձայն գոչեց.« *Նուրի՛, դու կենդանի ես*»,-և ոտքով հրելով անկողնում փաթաթված կնոջն ու երեխաներին՝ եկավ գրկեց ինձ: Ես չէի նկատել սրունքիս արյունը, ցավ էլ չէի զգացել, այն գոյացել էր տանիքից թռնելիս:

-Փա՛ռք ալլահի՛ն, քեզ ուղարկել է մեզ փրկելու համար:

Խանումն ու տղաները, անկողնում նստած, ապշած ինձ էին նայում: Աղան, թոնրատան բանալին ինձ տալով, ասաց.« *Տղա՛, գնա հագնվիր*»: Քսան րոպեից ես ներկայացա իմ նոր հագուստներով՝ գլխիս արախչի /մշեցիների ու սասունցիների ձեռագործ գլխարկ/:[225] Սոբայի՝ թիթեղյա վառարանի մոտ կանգնած՝ տաքանում էի: Աղան մոտեցավ ինձ, թևիցս բռնած գնացինք թոնրատուն: Սկսեց փաղաքշել, գովել, հիշեցրեց հորս և իր բարեկամությունը ու ծանր հոգոց հանելով՝ ասաց.

-Օղու՛լ /տղաս/, ռուսները հայերի հետ արդեն քաղաք են մտնում:[226] Նամարդություն չանես, շուտ գնա և նրանց փաշային պատմիր իմ մասին: Չէ որ ես քեզ հարազատ տղայիս նման սիրել եմ ու պահել:

Վերցրի հացի կապոցն ու դրոշակը, դուրս եկա, նույն ճամփով վազեցի դեպի ներքև: Դեռ կամրջին չհասած՝ նկատեցի դիմացից դեպի իմ կողմ եկող խուճապահար նահանջող ասքյարներին, որոնք հասնելով կամրջին ու խտանալով, փախչում էին՝ մեկը մյուսին հրելով: Հետ գնալու հնարավորություն չունեի: Դրոշակը խրելով ձյան մեջ՝ հանեցի գլխարկս և շարժվեցի դեպի կամուրջը: Ահա գլխավոր ճանապարհով հառաջացող ռուսները գնդացիրի դիպուկ համազարկերով ու կրակոցներով սկսեցին մաղել դեպի կամուրջ փախչող թուրք զինվորներին: Ես բնազդորեն հենվեցի մոտ գտնվող հաստ կաղնու ծառին: Կամուրջն ու տանող-բերող ճանապարհը ծածկվեց վիրավոր ու սպանված զինվորներով: Կրակոցը դադարելուց հետո շարժվեցի առաջ: Կոխրճելով կամուրջը ծածկող վիրավոր ու սպանված մարմինները, վիրավորների տնքոցները ու դիակները զզվեցրեցին և միաժամանակ ուրախացրեցին ինձ, ուժերիս ներածի չափ վազեցի դեպի Թաղիգլուխ կոչվող գլխավոր ճանապարհը, որը կամրջից հեռու էր ընդամենը երկու հարյուրից երկու հարյուր հիսուն մետր: Վերջապես հասա, կանգնեցի, բաց արի հացը ու դրոշակը բարձր պահած՝ սպասեցի: 1916-ի փետրվարի 20-ին՝[227] առավոտյան ժամը վեցին, տեսա դեպի ինձ արշավող ձիավորներ և լսեցի նրանց՝ ուռա՜ն, ուռա՜ն, և ինձ համար անսովոր երգի ձայնը: Թափահարելով դրոշակը՝ վազեցի ընդառաջ և ամբողջ ուժով ձայնեցի՝ ես հայ եմ: Մոտ հարյուր մետր հեռավորությունից մոտեցան: Ես կանգնեցի ճամփի մեջտեղը: Մի ձիավոր՝ փափախը գլխին, սուրը

մերկացրած, հրահանգում էր՝ առա՜ջ, առա՜ջ: Նա գեղեցիկ տղամարդ էր՝ կարմիր բաշլուղով և սև յափունջիով: Դրոշակը շպրտելով և երկու ձեռքս տարածելով՝ նորից վազեցի ընդառաջ ու պոռացի.

-Ես հա՜յ եմ, ես հա՜յ եմ:

Առաջացող ձիավորները հազիվ զսպեցին ձիերին և գեղեցիկ ձիավորի[228] ցուցումով կանգնեցին ինձ մոտ և նրանցից մեկը թուրքերեն հարցրեց.

-Ա՛յ շան տղա, որ հայ ես, ինչու՞ հայերեն չես խոսում:

Իրոք, հայ լինելս ես մեխանիկորեն թաքցրել էի, թուրքերեն էի գոչել, ուստի դա զարմացրել էր նրանց: Այդ պահին մի ուրիշ զինվոր, սուրը մերկացրած, մոտեցավ և բարձրաձայն հարցրեց.

-Դու որ հայ ես, «Հայր մեր»-ը գիտե՞ս:

Ես ժպտալով պատասխանեցի.«*Իհարկե, «Հայր մեր»-ն էլ գիտեմ, «Փառք ի բարձունս»-ն էլ*»: Ինչպիսի՜ ուրախություն համակեց զինվորներին, ինձ անմիջապես վեր բարձրացրին ձիու վրա, և մենք մոտեցանք գեղեցիկ ձիավորին.«*Քա՛ջ զորավար,*[229] *հա՛յ է, հա՛յ*»:

-Այո,՛ քաջե՛ր, հոս՝ Բիթլիս քաղաքը, ինչպես Խնուսի և Մշու գավառների բնակչության մեծամասնությունը, հայեր էին:

Նա գլուխը խոնարհեց և, ինձ դեպի իրեն ձգելով, հարցրեց.«*Տղա՛ս, ծնողներիցդ ովքե՞ր կան*»: Պատասխանեցի՝ ոչ ոք: Նա տխուր նայեց ինձ ու ծանր հոգոց հանելով՝ լռեց.

-Տղա՛ս, դու կարո՞ղ ես հյուքյումեթի ճանապարհը ցույց տալ:

Ասացի՝ այո: Դառնալով մեզ շրջապատող զինվորներին՝ կարգադրեց յոթ հոգով անմիջապես հյուքյումեթ գնալ:[230] Յոթ հոգի ձիերից իջան, ու իմ առաջնորդությամբ բարձրացանք դեպի հյուքյումեթ տանող նեղլիկ փողոցով: Անցնելով զինվորական ակումբի առջևով, որը վերածվել էր հիվանդանոցի՝ նկատեցինք անպաշտպան վիրավորներին, որոնք, մեզ տեսնելով, ներս փախան: Մենք ուշադրություն չդարձրինք նրանց վրա և շտապեցինք դեպի վեր: Անցանք ճամփան, մոտեցանք հյուքյումեթի կամարակապ դարպասին: Երկու ասքյար պահպանում էին մուտքը: Մեր անսպասելի հայտնվելը նրանց շփոթեցրեց: Ինձ հետ եկած կամավոր զինվորներից մեկը, որը սպա էր, մաուզերը[231] դեմ անելով, գոչեց՝ թեսլիմ /հանձնվեք/: Նրանք զենքերը քցեցին և ձեռքերը բարձրացրեցին: Հրամանատարը կարգադրեց անձայն վերջացնել և հասնել մեզ: Առաջանալով նկատեցինք, որ դիմացի դարպասը բացվեց, և երկու ձիավոր անցան: Մինչև մեր մոտենալը՝ դարպասը փակվեց: Այստեղ յոթը թամբած, պատրաստ ձիերով սպասում էին երկու զինվոր, որոնք նույնպես դաշունահար եղան: Իմ ցուցումով հինգ հոգով բարձրացանք փաշա տայրասի /փաշայի աշխատասենյակ/: Կամավորներից երկուսը մնացին ներքևում: Լսվում էր հեռախոսի զրնգոցը: Կամավորները ոտքի ուժեղ հարվածով դուռը բացին և հինգ հոգով, ատրճանակները բռնած, ներս խուժեցին ու պոռացին՝ *թեսլիմ*: Նրանցից երկուսը փորձեցին դիմադրել, և մինչև ձեռքերը ատրճանակներին տանելը, գանգերին հասած հարվածներով գետնին տապալվեցին: Սեղանի մոտ նստածներից երկուսը, որ մինչ այդ զբաղված

էին զանգահարելով, հանձնեցին զենքերը և մի կողմ կանգնեցին: Հինգերորդը, որ փաշայի տեղակալն էր, ձեռքը գզրոցին տարավ, բայց ատրճանակը հանել չհասցրեց: Դաշույնի հարվածով նա զրկվեց մատներից: Երեք գերիներին, որոնցից երկուսը բարձրաստիճան սպաներ էին և վիրավոր փաշա կոչեցյալին վերցնելով՝ դուրս եկանք, նստեցինք թամբած ձիերին, գերիները ոտքով՝ իջանք Կարմրակ եկեղեցի: Ճամբարի այն դասարանում, ուր մի քանի ամիս առաջ դժբախտ հայ կանանց ու երեխաներին էին հավաքում, բանտարկվեցին վերոհիշյալ չորս գերիները՝ արժանանալով նույն բախտին:

Երկու ժամից մենք գտնվում էինք Կոք մեյդան հրապարակում, որտեղից ռադիոյի միջոցով հաղորդվեց Բիթլիս քաղաքի գրավման մասին: Զինվորները զբաղված էին նախաճաշով: Կամավորները սիրալիր ինձ հրավիրեցին իրենց մոտ: Տեղատարափ ձեռքեր մեկնվեցին դեպի ինձ՝ գրկելու համար, բայց մեր հրամանատարը հայտնեց, որ պետք է զորավարին ներկայանանք: Մի քանի րոպեից գեներալի մոտ էինք: Մեր հրամանատարը մեզ սպասեցրեց բակում, ինքը գնաց զեկուցելու: Բակում գտնվող կամավորներն ու կազակ զինվորները հարց ու փորձի համար մոտեցան ինձ, և այդ պահին մի սպա դուրս գալով՝ հրամայեց՝ տղային բերեք: Ձիու վրայից ինձ գրկելով՝ ներս տարան:

-Մոտիկ արի՛, տղա՛ս, քովս նստի՛ր, ի՞նչ ճարպիկն ես եղել: Քո շնորհիվ է, որ այդ իժի ծնունդներին գերել ենք,-և ինձ հրամցնելով անսովոր բուխանկա հացն ու մսեղեն կոնցենտրատը՝ ասաց,-կերե՛ք, հետո կխոսենք:

Ցավակցելով՝ մի քանի սիրալիր հարցեր տվեցին: Ես տխուր պատասխանեցի և պատմեցի ծնողներիս, հարազատներիս, ազգականներիս սպանվելու մասին՝ հայտնելով, որ ես ազատվեցի Իսմայիլ աղայի շնորհիվ: Զորավարը[232] և բոլոր սպաները խոր կարեկցանքով նայում էին ինձ: Այդ պահին մեկը գլխարկս վերցնելով և բերանին մոտեցնելով՝ ասաց.*«Տեսե՛ք, սա մեր սասունցիների ու մշեցիների արախչին է»*: Եվ բոլորը, ձեռքից ձեռք տանելով, հիացան պապական նուրբ ասեղնագործ գլխարկով: Զորավարի ցուցմունքով ինձ տարան մյուս սենյակը: Պարզվեց, որ կարգադրված էր ինձ լավ հագցնել: Զինվորներից մեկը՝ ոտքիս, մյուսը՝ մարմնիս չափերը վերցրեցին: Այդ օրը ես մնացի կամավորների մոտ: Ճիշտն ասած, ինձ տանջում էր աղայիս բախտը, բայց համոզված էի, որ մեր թաղ զորքեր չէին գնա, քանի որ մարդաբնակ չէր: Հաջորդ օրը հայտնեցին մի ինչ-որ հայ դավաճանի մասին, որին բերել էին հրապարակային հարցաքննության և դատաստանի: Կամավորների հետ գնացինք հրապարակ: Խոսում էին նրա կեղծ հայ դառնալու, այլևայլ բաների մասին: Մի հայ սպա ինձ հարցրեց.*«Սա ասում է, որ ինքը բիթլիսցի է: Դու ճանաչու՞մ ես»*: Մոտեցա, նա շնչասպառ փռված էր գետնին, նրա երդումներին ոչ ոք չհավատաց, քանի որ քրդական տարազով էր: Նա, ցավից աչքերը փակած, տնքում էր: Կամավորները ինձ կշտամբեցին: Ուշադրությամբ նայեցի նրա դեմքին և անկախ ինձանից ճչացի.*«Սա այն քուրդն է»*,-և ամբողջ մարմնով ընկա նրա վրա: Ինձ բարձրացրին, և ես մի երկու խոսքով պատմեցի ջաղացպան քրդի մասին: Այդ պահին ինձ համար ամենահարազատը այդ

քուրդն էր. քանի-քանի անգամ նա ինձ փրկել, պաշտպանել էր, իսկ հիմա ենթարկվելու էր ճակատագրական մահվան: Խեղճ քրդին հազիվ նստեցրին, և ես քրդերեն հարցրի.«*Խալո՛, ինչ ճանաչում ես*»: Նա ապշած ինձ նայեց, չէ որ ես նրա հետ քրդերեն չէի խոսել: «*Տղա՛, դու ազատվե՞լ ես*»,-ասելով՝ ուշաթափվեց: Զինվորները նրան ուշքի բերեցին: Նա ագահաբար նայում էր ինձ: Նրա թևերից բռնելով՝ ոտքի կանգնեցրին: Ուշքի գալով՝ նա գրկեց, փաթաթվեց ինձ և գլուխս համբուրելով՝ ասաց.«*Փա՛ռք Աստծո, դու ազատվել ես*»: Միասին գնացինք շտաբ: Պարզվեց, որ քիչ առաջվա դավաճանը, իմ բարեբար քուրդը՝ Համբեցի[233] Սարգիսն է: Նա զինվորագրվեց կամավորական ջոկատ: Հաջորդ օրն արդեն ես հագած էի ճտքավոր կոշիկներ, գեղեցիկ արխալուխ: Փափախը դրած, դաշույնով, ատրճանակով զինված ու զուգված՝ իմ խնամակալ սպայի հետ գնացինք զորավարի մոտ: Մինչ այդ իմ ուղեկցությամբ մենք դուրս եկանք մարդաորսի: Կամավորներին հիացմունք պատճառեց իմ վրիժառությունը: Ինձ նոր տարազով ներկայացրեցին զորավարին: Նա հայրաբար գրկեց ինձ, համբուրեց ու քաջալերեց: Միաժամանակ ասաց.

-Խեղճ քյասիպ-քյուսուպներին ձեռք չտա՛ք:

Այդ օրվանից մոտ մի ամիս մնացի Անդրանիկ փաշայի հայկական կամավորական գնդում: Նա էր նաև կազակների զորահրամանատարը՝ գեներալ Անդրանիկը:[234] Հաջորդ օրը նախաճաշելիս խոսեցին հերոսների մասին, գոհունակությամբ նշեցին զոհված հեղափոխականների, ֆիդայիների և հերոսամարտերի մասին: Սերոբ փաշայի[235] քաջագործությունների մասին պատմելու ժամանակ ես ասացի, որ գիտեմ նրա գերեզմանի տեղը: Անդրանիկ զորավարը ինձ իր մոտ կանչեց և հարցրեց.

-Որտե՞ղ է Սերոբ փաշայի գերեզմանը:

-Ս.Կարմրակ եկեղեցու գերեզմանոցում թաղված է գլուխը, վրան մարմարյա գեղեցիկ արձան է դրված:

Նա անմիջապես կանգնեց և թևով ինձ իրեն սեղմելով՝ գոչեց.

-Հրամայե՛ք քաջերին, գնում ենք քաջի գերեզմանը տեսնելու:[236] Երբ մենք դուրս եկանք տնից, կամավորական գունդը արդեն կազմ-պատրաստ էր: Բոլորը միաբերան գոչեցին՝ բարև քաջին:[237] Փաշան, զինվորական պատիվ տալով, պատասխանեց՝ բարև քաջաց: Ձին մոտեցրին, նա հրաժարվեց, և իմ ուղեկցությամբ իր շքախմբով եկանք Կարմրակ եկեղեցի և ուղղվեցինք դեպի գերեզմանը: Մոտ հարյուր քայլ հեռավորությունից ցույց տվեցի արձանը: Զորավարը վրայից քցեց յափնջին, գլխարկը ձեռքին ծնկեց և չոքեչոք շարժվեց դեպի գերեզմանը: Ես արձանի մոտ էի կանգնած: Նա մոտեցավ, գրկեց արձանը, հեկեկաց և մոտ մի րոպե լռելուց հետո ճառ ասաց: Գովեց նրա քաջագործությունները և դառնալով զինվորներին՝ ասաց.

-Խոնարհվում եմ, երդվում եմ քո սուրբ հիշատակը վառ պահել:

Արձագանքի նման լսվեց զինվոր կամավորների հուժկու միաձայն կոչը՝ երդվու՛մ ենք, երդվում ենք… Հրաժեշտի պահին նա տխուր, ընկճված ձայնով ասաց.

-Ավա՜ղ, գլուխդ՝ Բաղեշ, մարմինդ՝ ի Մուշ:

Այդ օրը՝ կեսօրին, ես մոտեցա և խնդրեցի թույլատրել գնալ աղայիս տեսնելու: Զորավար Անդրանիկը կարգադրեց ուղեկցել ինձ և ապահովել այդ թուրքի ու նրա ընտանիքի անձեռնմխելիությունը: Յոթ կամավորներով մոտեցանք տանը: Հակառակ իմ սպասածին՝ պինդ փակված դռները ճխնահան էին արված: Ներս մտանք, ձայներ լսվեցին: Ես շտապեցի աղայի սենյակը: Տղաները կծկված էին անկողնում, ինքը աղան, գլխիկոր հիվանդ ձևանալով, պառկած էր: Ինձ տեսնելով, երկու ձեռքը պարզած, դիմեց ինձ.« *Օղու՛լ՝ տղաս, Աստծոյ սիրուն, խանումին ազատիր, ռուսները տարել են թոնրատուն*»: Նա երեխայի նման հեկեկաց: Կամավորների հետ անմիջապես անցանք թոնրատուն, այստեղ կազակներ կային, մտանք մյուս սենյակը: Լսվեց սպայի զգաստ բառը և հեշտանքով տարված զինվորները խանումին թողնելով՝ սկսեցին իրենց կարգի բերել և պատվի կանգնեցին: Ես մի պահ նայեցի խանումի այլանդակ դրությանը, որը կիսամերկ ընկած էր գորգի վրա: Իմ մեջ ոչ մի կարեկցանք, գութ, ցավակցություն չարթնացավ: Այդ րոպեի նրա ցավալի վիճակին նայելով՝ ընդհակառակը հիշեցի նրա զազրելի արարքները, այն հայ կանանց, աղջիկների նկատմամբ նրա կատարած դաժանությունները, որոնք ապավինելու հույսով տալիս էին փողերն ու զարդերը, իսկ խանումը անմեղ զոհերին բռնաբարելու և խոշտանգելու համար հանձնում էր իր եղբորը: Նա ինձ հետ էլ շատ դաժան էր վարվել: Կազակները հեռացան սենյակից: Սպայի ցուցումով երկու կամավոր վեր բարձրացրին խանումին: Նա ուշքի գալով՝ նայեց մեզ: Ես մոտեցա նրան և հայտնեցի, որ այլևս չվախենա: Նա լսեց ծանոթ ձայնը, սթափվեց, մռայլ հայացքով նայեց, փնտրեց ինչ-որ մեկին: Գնացինք աղայի մոտ: Ներս մտանք, տղաները ապշած ինձ նայեցին: Փոքրը՝ Մանդոն, ասաց.*«Դրան տես, գյավուրին տես, հագուստներին, խանչալին»*,- բայց հոր՝ աղայի ապտակը երեխային լռեցրեց: Աղան, լսելով Անդրանիկ փաշայի կողմից եղած անձեռնմխելիության մասին գրությունը և կարգադրությունները, երկու ձեռքը կրծքին դնելով, խոնարհվեց և դառնալով դեպի ինձ՝ ասաց.

-Օղլու՛մ, ես քեզ երեկն էի սպասում, որ չեկար, կարծեցինք թե կամուրջն անցնելիս խփել էին:

Համոզվելով, որ ապահովված է, երախտապարտության զգացումով անունս տալով, ասաց.« *Պարոններին տար Խանում բաջիի տունը*,-նայելով զինվորներին՝ շարունակեց,-*ինքը ջահել կին է, իսկ աղջկերքը՝ սիրուն հրեշտակներ*»: Գնացինք Խանում բաջու մոտ: Բազում անգամներ նրա ցուցաբերած հոգատարությունը, խնամքը, վերաբերմունքը այդ պահին իմ մեջ երախտապարտության այնպիսի զգացում հարուցեցին, որ ես ակամա մոտեցա սպային և աղերսանքով դիմեցի նրան, աղաչեցի, որ իմ Խանում բաջու նկատմամբ վատություն չանեն.« *Նա իմ նեղ օրերին մայրություն է արել, օգնել, պահել, փախցրել է ինձ*»: Դուռը թակեցի, նա մոտեցավ լուսամուտին, նայեց մեզ: « *Խանու՛մ բաջի, մի՛ վախիր, դուռը բաց, ես այստեղն եմ*»: Քիչ ուշացումով դուռը բացվեց. դուրս եկան եվրոպական զգեստներով և հայերեն բացականչություններով: Խանում բաջին, ինձ գրկելով ու համբուրելով, ասաց.« *Փա՛ռք*

Աստծո, դու ազատվեցիր»: Աղջիկները փաթաթվեցին կամավորների վզով և համբուրեցին: Զարմանալի մի տեսարան: Մայրը ինձ թողեց, գրկախառնվեց սպայի հետ.« *Մենք հայ ենք, հայ*»: Ուրախություն, լաց ու արցունք, գգվանք, սեր ու բերկրանք, զարմա՞նք, թե՞ երազ է սա: Բազում տանջանքներից, զրկանքներից, մահվան ճիրաններից հրաշքով ազատվածներս չէինք հավատում այդ իրականությանը: Խանում բաջին ինձ դառնալով հարցրեց.« *Նուրի՛, քո հայերեն անունդ ասա՛*»: Ես ասացի՝ Միհրան: Մայրն ու աղջիկները գրկախառնվեցին ինձ, մենք երանելիության մեջ էինք: Համառոտ հարց ու զրույցից պարզվեց, որ նրանք Պոլսո կողմերից էին: Մի ալբանացի հրամանատար, նրանց որպես իր կին ու երեխաներ խնամքի տակ էր վերցրել, իսկ Էրզրումից բաժանվել էին իրարից: Նրանք գաղթական թուրքերի հետ եկել էին Բիթլիս:

Վերադարձին հանդիպեցինք աղային, որը զարմանքով լսեց Խանում բաջու ով լինելու մասին և կեղծ սրտով բարեմաղթեց նրան.« *Հալալ լինի՛ քեզ, ղոչաղ կին ես եղել*»: Այդ օրը՝ երեկոյան, մենք եղանք Անդրանիկ զորավարի մոտ: Նա սիրալիր ընդունեց տիկնոջն ու երեխաներին, հայրաբար համբուրելով, ըստ նրանց պահանջի խոստացավ հաջորդ օրը ուղարկել Էրզրում:[238] Մինչև մարտ ամսվա կեսերը, ամեն օր թաղեթաղ ման գալով, որսում էինք պահ մտած թուրքերին, ըստ մեր հայեցողության դատաստան տեսնում, իսկ քյասիպ-քյուսուպ գերիներին հանձնում կենտրոնացման կետեր: Մարտի տասնվեցին մոտ հիսուն կանանց ու երեխաների հետ հատուկ քարավանով գնացինք Վան: Երկու շաբաթից Խոյի /Պարսկաստան/ վրայով տեղափոխվեցինք Երևան: Ես իմ հանգրվանը գտա Դիլիջանի համար երեք որբանոցում,[239] որտեղ մնացի մինչև 1918-ի աշունը:

Резюме

Существуют многочисленные научные работы, посвященные геноциду армян в Западной Армении в 1915 г. Все исследования подобного рода основаны на официальных источниках и документах. Они представляют масштабы этой страшной трагедии начала прошлого века.

Публикация серии воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида — дополнение к этой картине.

Подготавливаемая к изданию серия воспоминаний непосредственных свидетелей и жертв геноцида 1915 г., открытая воспоминаниями Каджуни Торосовича Карагезяна “По пути в Тер Зор”, дополнена еще двумя воспоминаниями, читая которые представляешь, каким ужасом и страхом были объяты чудом спасшиеся и какой незаживающей раной остались эти воспоминания в невинных душах свидетелей самого большого злодеяния, начала 20-ого века, сотворенного против всего человечества.

В 2006 г. были изданы воспоминания Айрапета Айрапетовича Тонояна “Из прошлого”, которые ценны тем, что он и его семья пережили три резни, первую в Муше (Западная Армения), две другие в Восточной Армении в 1918 и 1920 гг.. В данной книге издаются воспоминания Миграна Казаровича Казаряна “Трагедия из биографии. Турция 1915г.”, где автор на историческом фоне событий 1914-16гг. описывает взятие русскими войсками города Битлиса, во время которого во главе казачьих войск и армянского народного ополчения стал генерал Андраник (Андраник паша).

Однако самой ужасной частью воспоминаний М.К.Казаряна мы считаем описания концлагеря, где содержались депортированные армяне города Битлиса и окружающих его сел до полного истребления в одном из ближайших ущелий Битлисских гор, и то, каким неимоверным страданиям и насилию подвергались женщины и дети в этом лагере под названием “Арабу камурдж”.

Summary

There are many scientific works that are devoted to the Genocide of Armenians in Western Armenia, in 1915. All the investigations of this kind are based on official sources and documentations. They present the scales of this terrible tragedy in the beginning of the previous century.

The publication of series of recollections of direct witnesses and victims is an addition to that picture.

A series of recollections of direct witnesses and survivors of the Genocide in 1915 is prepared for the publication. The recollections of Kadzun Karagyozyan became known through "On the Way to Der Zore", has been completed by two other recollections. Reading these lines one can visualize how horror-stricken were the innocent people who survived by a miracle and what incurable wounds has left in the souls of the witnesses of the heinous crime of the 20th century committed against the whole humanity.

In 2006 were published Hayrapet Tonoyan's recollections - "From the Past" which are priceless from the point of view that he and his family survived three massacres, first in Mush (Western Armenia), and two others in the Eastern Armenia in 1918 and 1920. In the given book are published the bitter recollections of Mihran Ghazaryan - "Tragedy from the biography. Turkey in 1915" in which the author depicts on the background of the historic events (1914-1916), the capture of the town Bitlis during which Andranik (Andranik Pasha) was the head of Kazak Army and the Armenian National Volunteer Corps.

However, the most outrageous part of Ghazaryan's recollections we consider the depiction of the Concentration Camp where the deported Armenians of the town Bitlis were kept and the extermination of the population of the neighboring villages at the adjoining caves of Bitlis Mountains. And what unimaginable violence and tortures were subjected the women and children in that camp named "Arabu Kamurg".

Resumé

Il existe plusieurs recherches scientifiques consacrées à la génocide des Arméniens de l'Arménie Occidentale en 1915.Toutes ces études sont basées sur les sources et les documents officiels. Elles représentent les échelles de cette terrible tragédie du débuts de l'ancien siècle. La publication des séries de mémoires des témoins et des victimes immédiats de la génocide est un complément à ce tableau. La série des mémoires des témoins et des victimes immédiats de la génocide du 1915 qu'on a préparée à la publication commence par les mémoires de Kadjouni Kharagozian «En passant au Ter-Zor». Elle se complète encore avec deux mémoires. En lisant ces mémoires on comprend par quel effroi et quelle peur étaient saisis ces gens qui s'étaient sauvés par miracle et que ces mémoires sont restées comme une bléssure inguérissable dans les âmes innocentes des témoins du plus grand crime du 20-ième siècle contre toute l'humanité. En 2006 ont été publiées les mémoires d'Hayrapet Tonoyan «Du passé», qui sont en valeur parce que l'auteur et sa famille ont survécu aux trois massacres, la première à Mouche /l'Arménie Occidentale/, les deux autres en Arménie Orientale en 1918 et 1920.

Dans ce livre nous publions les mémoires de Mihran Ghazarian, «La tragédie d'une biographie. La Turquie 1915». L'auteur décrit la prise de la ville Bitlis par l'armée russe sur le fond historique des événements des 1914-1916, pendant laquelle le général Andranik /Andranik pacha/ était à la tête de l`armée et de la levée en masse arménienne. Cependant nous considérons comme la partie la plus effrayante des mémoires de M. Ghazarian la description du camp de concentration ou` étaient aux arrêts les Arméniens déportés de la ville Bitlis et de ses alentours jusqu' à l'extermination complète dans un des cols proches des montagnes de Bitlis, ainsi que les souffrances et la violation incroyables que les femmes et les enfants ont subies dans ce camp sous le nom "Arabou kamourdj".

Համառոտագրություններ և հապավումներ

Արլ. - Արևելյան
Արմ. - Արևմտյան
ԵՀ - Երևանի համալսարանի
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԺՀԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան
հ. - հատոր,
հատ. - հատորով
ՀԱԲ - Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան
ՀՍՀ - Հայկական Սովետական հանրագիտարան
հզ. - հազար
ՀՀԳԽ - Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն
ՀՀՀ - Հայկական հարց հանրագիտարան
հս. - հյուսիս
հվ. - հարավ
ՀՏԲ - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան
ՀՑԹԻ - Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
օսմ. - օսմանյան
БСЭ - Большая Советская Энциклопедия
гос. - государственное
Ер. - Ереван
Изд. - издательство
М. - Москва
Ред. - редакция

Ծանոթագրություններ

1. Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց, Երկեր չորս հատորով, հ. Ա, ՀԳԱԱ ՑԹԻ, Հայագիտական բարեգործական ընկերություն, ԵՊՀ հայոց պատմության ամբիոն, «Հայագիտակ», 1996, էջ 150:

2. Նյութերը պահվում են Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանում /ԿԱԹ/, ֆոնդ # 511, ք. Գյումրի, Ջիվանու փողոց, թիվ 50:

3. Բիթլիս, Բաղեշ, քաղաք Արմ. Հայաստանի Բիթլիսի նահանգի, գավառի և գավառակի կենտրոն, Վանա լճից շուրջ 20կմ հվ-արմ., Բիթլիս գետի ձորահովտում, վերջինիս՝ Խոցերով և Համեղջուր վտակների միախառնման տեղում: Եղել է Մեծ Հայքի Աղձնիք և Տուրուբերան նահանգների կազմում: XVI դ. Բիթլիսը գրավել են օսմ. թուրքերը: Հիմնականում հայաբնակ Բիթլիսը խիստ տուժել է XVII-XVIIIդդ. քուրդ բեկերի ներքին երկպառակություններից, մշտական ընդհարումներից: XVIII դ. սկզբի սովը զգալիորեն ամայացրել է քաղաքը: Հայ բնակչության զանգվածային արտագաղթի հետևանքով XIX դ. սկզբին Բ-ում արդեն գերիշխում էր մահմեդ. տարրը /հիմնականում՝ քրդեր/: Այդ ամենով հանդերձ, ընդհուպ մինչև 1915-ի Մեծ եղեռնը, Բ. Արմ. Հայաստանի հայաշատ քաղաքներից էր, կարևորագույն առևտր. և արհեստագործական կենտրոն: Ըստ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրության, 1880-ին Բ-ում բնակվում էր 10724 հայ /1532 տուն/: Համաձայն թուրք. պաշտոն. տվյալների, XXդ. սկզբին քաղաքի հայ բնակչությունը կազմում էր 2200 տուն՝ մոտ 14-15 հզ. մարդ 40 հզ-ից: Ապրում էին նաև մեծ մասամբ հայացած ասորիներ /հակոբիկյաններ/: 1895-ի հայկական կոտորածների ժամանակ Բիթլիսում զոհվել է շուրջ 1000 հայ: 1915-ի հուլիսին, Մեծ եղեռնի ժամանակ, Բ-ի հայ բնակչությունը հիմնովին բնաջնջվել է: Ջարդն իրականացրել է թուրք. կանոնավոր բանակը՝ Վանի նահանգապետ, արյունարբու Ջևդեթի անմիջական ղեկավարությամբ: Փրկված 300-400 կանանց ու երեխաների մեծ մասը բռնությամբ մահմեդականացվել է: Սակավաթիվ վերապրածները հիմնականում ապաստանել են Արլ. Հայաստանում: 1935-ի թուրք. մարդահամարի համաձայն Բ. ուներ 9994 բնակիչ: 1878-80-ին տեղի առաջնորդարանի և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով Բ-ի գավառակի հայերի թիվը ավելի քան 14 հզ. էր /բնակչության 60%-ը/: Քրդական շատ գյուղերում դեռ հանդիպում էին եկեղեցիներ, վանքերի ավերակներ, անգամ պահպանվել էին հայկ. անվանումները /Աղիջուր, Արծվիք, Գոմս, Գոտնի, Գորջան, Եզնև, Երեցթաղ, Խաչուկան, Կշտոնիք, Կութ, Ջագոնիս, Ճոկուս, Մորք, Նիստ, Նորշեն, Շատախ, Սառնուս, Սիմեկ, Վերվան, Քարուկան/: ՀՀՀ, ՀՀԳԽ, Եր. 1996, էջ 84, նույնը ռուսերեն՝ Армянский вопрос, энциклопедия, Глав. Ред. армянской энциклопедии, Ер., 1991, с. 81. Ա.Տևկանցը բերում է Բաղեշի մասին տվյալներ, ըստ որի՝ քաղաքն ուներ 8896 բնակիչ, հայեր էին 5964-ը: Բաղեշի մեջ էր մտնում Մոտկան գավառը իր 7670 բնակիչներով, հայեր՝ 4950 և քրդեր՝ 2720: Ամփոփելով Բաղեշի սանջակի թվերը՝ հեղինակը ասում է, որ այնտեղ կային 127 գյուղեր, հայկական՝ 67, քրդական՝ 60: Բաղեշի սանջակում ապրում էին 31113 բնակիչներ, հայեր էին 20473-ը և քրդեր՝ 10640-ը: Հ.Մ.Պողոսյան, Սասունի պատմություն /1750-1918/, Եր., Հայաստան, 1985, էջ 109:

4. Բիթլիս, Աբիբիթլիս, Ապի-Բիթլիզ, Բադլիս, Բալալեզա, Բալալեյսա, Բաղաղեշ, Բաղեշ, Բեդլիս, Բիթլիս, Բիդլիս, Շահաստան Բաղեշ, Պիթլիս, Սալնաձոր, Սալնոձոր-քաղաք /բերդաքաղաք/ Արմ. Հայաստանում, Վանա լճի հր-արմ. կողմում, լճափից 18-20 կմ հեռ., ծովի մակեր. մոտ 1500-1600 մ բարձր.վրա: Համապատասխանում է պատմական Աղձնիք աշխարհի Սալնոձոր գավառի գլխավոր բերդին, որի անունով հնում

կոչվել է նաև Սալնաձոր կամ Սալնոձոր: Որպես Բաղեշ բերդ՝ առաջին անգամ հիշատակում է Սեբեոսը /7-րդ դ./: Ոմանք Բաղեշը նույնացնում են Փ.Բյուզանդի կողմից Աղձնիքում հիշատակված Բառեջ ավանի հետ: Հետագայում բերդի շրջապատում կառուցվում է համանուն քաղաք, իսկ բերդը դառնում է քաղաքի միջնաբերդը: Որպես քաղաք /Շահաստան քաղաք/՝ առաջինը հիշատակված է Թ.Արծրունու կողմից: Կոչվել է նաև Բաղաղեշ: Հունական աղբյուրներում վկայված է Բալալեզա, Բալալեյս ձևերով: Արաբների, ապա սելջուկ-թուրքերի տիրապետության ժամանակներից սկսած՝ կոչվել է նաև Բիթլիս: Արաբ. աղբյուրներում վկայված է Բաղլիս, Բեղլիս, իսկ թուրք. աղբյուրներում՝ Բիդլիս, Բիթլիս ձևերով: Ըստ ոմանց՝ Բիթլիսը խեթական աղբյուրներում հիշատակված Փալեշնան է: Նոր ժամանակների գերմանացի ուսումնասիրող Մ. Ռիմշնայդերը Բիթլիսը նույնացնում է ուրարտական Ալզի քաղաքի հետ, որ ավելի ճիշտ երկրամաս է և իրավացիորեն նույնացվում է Աղձնիքին: ՀՏԲ, Հ. 1, Եր., 1986, էջ 685-686, տե՛ս էջ 583:

5. Բիթլիսը կառուցված է Գարգառ լեռան մոտ, բարձրաբերձ լեռների մեջ, մոտ 10 կմ երկար օձապտույտ ձգված զառիթափ ձորալանջերին, դեպի վեր տարածելով իր քարաշեն տները: Քաղաքից հս-արմ. տարածվում են Դուաբ լեռան անտառապատ փեշերը: ՀՏԲ, հ.1, էջ 685-686:

6. Բիթլիսն ուներ հարուստ բուսականություն, փողոցները զարդարված էին ուռենիների և կաղամախիների խիտ շարքերով: Ճոխացած էր խաղողի այգիներով, որ ընկած էին ձորահատակին, և պտղատու պարտեզներով, որ շրջափակում էին առանձնատները: Բիթլիսում աճում էին Հայկական լեռնաշխարհի համարյա բոլոր պտուղները: ՀՏԲ, հ.1, էջ 686:

7. Նրա միջով հոսում է համանուն գետը՝ իր Ավեխու կամ Ամպաջուր, Խոսրովու կամ Խոցերու ջուր հիմնական և այլ մանր վտակներով: Քաղաքի մոտ ընկած երեք գյուղերից հոսող գետակները, որ Բիթլիս գետի հիմնական վտակներն են, իրենց ձորակներով գալիս են հանգուցվում քաղաքի կենտրոնական ամֆիթատրոնի հատակին: ՀՏԲ, հ.1, էջ 685-686:

8. Բաղեշ բերդը կառուցվել է Սեպուհ /Քարալեռ/ կոչված ապառաժոտ բարձր լեռան ձորաբերանին՝ հյուսիս-հարավ ձգված քարանձավի վրա: Բերդի կառուցման ժամանակի և կառուցողի մասին ստույգ տեղեկություններ չկան: Ըստ մի ավանդության՝ բերդը կառուցվել է Ա. Մակեդոնացու հրամանով՝ նրա Լաիս կամ Լիս զորավարի կողմից: Այդ կիսաավանդական պատմության համաձայն՝ Մակեդոնացին, արշավանքից վերադառնալով, չի կարողանում գրավել բերդը և զայրացած նրան անվանում Բադ Լիս /«բադ» պարսկ. նշանակում է «չար», այսինքն՝ Չար Լիս/, որից առաջանում է բերդի Բիթլիս անունը: Ս.Ծոցիկյանը բերդի կառուցողներ է համարում Արշակունի Խոսրով և Տրդատ թագավորներին: Մի այլ ավանդություն Բաղեշ անունը առաջացած է համարում «պաղ էշ» բառակապակցության ձևափոխությունից: Ուրիշներն այն բխեցնում են Բդեշխ /կառուցողի մականունը/ բառից: ՀՏԲ, հ.1, էջ 573, տե՛ս էջ 685-686:

9. Անմատչելի ու անառիկ բերդ էր, ուներ բարձր պարիսպներ ու ատամնաշար աշտարակներ: Ներս թափանցելու համար ուներ իրար հաջորդող երեք շարժական կամուրջներ և մի ժայռափոր ճանապարհ, որ պտտվելով լեռան շուրջը՝ իջնում էր մինչև ստորոտը: Բարձրապարիսպ բերդի շուրջը հետագայում ընկած էր համեմատաբար ուշ կառուցված քաղաքային շուկան: 1849-ին թուրքերը գրավել են քաղաքը և ավերել բերդը: 20-րդ դ. սկզբին մնում էին բերդի միայն պարիսպները, յոթ տուն, երեք ռմբաձիգ մեքենաներ և երկու դուռ: Հարավային կամարակապ ավերակ դռան վրա կար արաբերեն արձանագրություն, բերդի շինության թվականի հիշատակմամբ /195 թ, որը համապատասխանում է քրիստոնեական 1368-ին/: Ենթադրվում է, որ սա պետք

է լինի բերդի ոչ թե հիմնադրման, այլ նորոգման թվականը: ՀՏԲ, հ. 1, էջ 573:

10. Հայերը բնակվում էին Ավեր մեյդան /Ավելմեյդան/, Գոմաց, Թաղիգլուխ, Ծապրկորի թաղերում, ունեին չորս եկեղեցի՝ Ս. Գևորգ, Կարմրակ Ս.Նշան /Ս.Կիրակոս/, Հինգխորան, Ս. Սարգիս: Նշանավոր էին Բ-ի վանքերը՝ Ամրդոլու կամ Ամրդոլվո, Ավեխու, Գոմաց, Խնդրակատար Ս.Աստվածածին, Ծապրկորու, Ս.Կարապետ: ՀՀՀ, էջ 84: Վանքերի և եկեղեցիների մասին ավելի մանրամասն կարդում ենք ՀՏԲ-ում.*«Այստեղ կային չորս եկեղեցի և չորս վանք, որոնցից 3-ը՝ քաղաքի շրջակայքում: Նշանավոր եկեղեցին քաղաքի հյուսիս-արևելյան կողմում ընկած Կարմրակ ս. Նշան /հնում՝ ս. Կիրակոս/ գմբեթավոր եկեղեցին էր, որ պատկանում էր քաղաքում գտնվող Ամրդոլու /Ամրդոլվո/ ս. Հովհաննես հռչակավոր վանքին: Մյուս եկեղեցիները՝ ս. Գևորգ, ս. Սարգիս և ս. Պողոս-Պետրոս առաքյալի հինգ խորան եկեղեցիներն են, որոնք համապատասխանաբար պատկանել են Բիթլիսի շրջակայքում գտնվող Խնդրակատար ս. Աստվածածին, Ավեխու ս. Աստվածածին և Գոմաց /Տարրաբանակ/ ս. Աստվածածին վանքերին /մենաստաններին/: Բիթլիսի մոտերքում էր գտնվում նաև Ծապրկորու ս. Կարապետի վանքը: Բիթլիսում կային նաև մզկիթներ /թվով 15/, որոնցից երկուսը հնում եղել են եկեղեցիներ»*, հ.1, էջ 686:

11. XXդ. սկզբին գործում էին յոթ հայկ. վարժարաններ /չորսը՝ արական, երեքը՝ իգական/: Ավեր մեյդան թաղում ամերիկացի միսիոներները բացել էին քոլեջ, ուր ուսանում էին բողոքականությանը հարած հայերի երեխաները,ՀՀՀ, էջ 84: Տե՛ս ՀՏԲ, հ. 1, էջ 686:

12 .Գրականության մեջ հանդիպում է նաև *եայղուբ, եաղուբ* ձևով: Վ.Հ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, 1956, էջ 568, 679: Ռուսերեն «яхонт»՝ հնացած հակինթն է: Ա.Ս.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 1410: Թուրքերեն՝«yakut»: Турецко-русский словарь, с. 906.

13. Հովնան եպիսկոպոսի մասին Մ.Չամչյանի «Հայոց պատմություն» աշխատության երրորդ հատորում ասված է, որ նա հանդիսացել է Էջմիածնի կաթողիկոսության թեկնածու: 1763-ին մահացավ Էջմիածնի Հակոբ Շամախեցի կաթողիկոսը, որին փոխարինեց և տասնյոթ տարի պաշտոնավարեց Սիմեոն Երեվանցին: Ըստ Մ. Չամչյանի՝Հ.Շամախեցի կաթողիկոսի մահից հետո սկսվեց պայքարը կաթողիկոսական աթոռի համար և *«ոմանք ասէին ընտրել զՅոնան վարդապետ Ամդեցի՝ զառաջնորդն Վանից սուրբ Կարապետին»:* …Հովնան Ամդեցի վարդապետը այն ժամանակ Մշո ս. Կարապետ վանքի վանահայրն էր և նրան ոմանք պահանջեցին ընտրել Էջմիածնի կաթողիկոսին… Հովնան եպիսկոպոսի մասին եղած տեղեկություններն ասում են, որ նա Ամիդի դաշտի Կպնե գյուղից էր, որ ընկնում էր հարավային Սասունի մեջ: Պահպանված այլ տեղեկությունների համաձայն՝ նա ծնվել էր Մշո դաշտի Կեմիկ գյուղում. որն է այս տեղեկություններից ճիշտը՝ դժվար է ասել: Հաստատ է սակայն, որ նա իր կրթությունը ստացել է Բաղեշի Ամրդոլու դպրոցում, որն այդ ժամանակ Արևմտյան Հայաստանի ամենահռչակված ուսումնական հաստատությունն էր: Հ.Մ.Պողոսյան, նշվ.աշխ., էջ 7-8,14:

14. Մզկիթ/արաբ. *մասջիդ*-երկրպագության տեղ/,մահմեդական պաշտամունքային կառույց: VII-VIII դդ. կազմավորվել է հատակագծում ուղղանկյուն, սյունասրահներով շրջափակված բակով և բազմասյուն աղոթասրահով մզկիթի տիպը, որի դեպի Մեքքա ուղղված պատին եղել են մեկ կամ մի քանի միհրաբներ /Օմայանների մզկիթը Դամասկոսում, 705-715/: Սկսած X դ.տարածում է գտել բակի առանցքով տեղադրված այվաներով մզկիթի տիպը: Տարբեր երկրներում, տեղական շինարարական ավանդույթների ազդեցությամբ, մշակվել են մզկիթի տարբեր տիպեր: Հյուսիսային Աֆրիկայի մզկիթներին բնորոշ են դեպի բակ դուրս եկող բազմաթիվ նավերով խորը աղոթասրահը,

արտեսոնադո-առաստաղները, շքաքարեզարդ գմբեթները /Կուտուոբիա՝ Մառակեշում,1153/: Իրանում, Կենտրոնական և Միջին Ասիայում կառուցվել են բակի շուրջը այվաններով, գլխավոր ճակատում շենքի ընդհանուր ծավալից դուրս եկող մոնումենտալ շքամուտքով /Կալյան՝ Բուխարայում, XIդ., վերակառուցվել է XV-XVI դդ./, իսկ Թուրքիայում՝ կենտրոնակազմ, կիսագմբեթներով, կամ փոքր գմբեթներով շրջապատված, մեծ գմբեթով ծածկված /Սուլեյմանիե՝ Ստամբուլում, 1557, ճարտարապետ Սինան/ մզկիթները: Դրանք զարդարվել են արհեստական մարմարի, քարի, փայտի փորագրություններով, աղյուսի և քարի ձևավոր շարվածքով, ջնարակած խեցեղենով, խճազարդերով, որմնազարդերով: Ժամանակակից մզկիթները կառուցվում են նորագույն շինարարական նյութերով, հիմնականում պահպանելով ավանդական հատակագծումը: ՀՍՀ, հ. 7, Եր., 1981, էջ 515: Տե՛ս Ա.Ռ.Գայաեան, Իսլամ և Ավետարան. բարեկարգյալ հայեցակետ, Հավատք և կյանք Բարեկարգյալ առաքելություն, Հայաստան, Գյումրի, «Էլդորադո», 2006:

15. «1908-ի հուլիսի 23-ին երիտթուրքերի գաղտնի կազմակերպությունը, ապստամբելով Սալոնիկում և Մակեդոնիայի այլ քաղաքներում, իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Պահանջ ներկայացվեց սուլթան Աբդուլ Համիդին՝1876-ի թուրքական առաջին սահմանադրությունը վերականգնելու համար: Աբդուլ Համիդը ստիպված զիջեց և հուլիսի 24-ին հատուկ հռչակագիր հրապարակվեց Սահմանադրության վերականգնման մասին»: Ավետիս Փափազյան, Թանզիմաթի «բարեՆորոգումները» օսմանյան օրենսգրքերի մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Եր., 2001, էջ 151: Տե՛ս Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 273-292: Վերժինե Սվազլյան, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, ՀՀ ԳԱԱ ՑԹԻ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2003:

16. «Դյուստյուր»-ի հատորներից դուրս են մնացել բազմաթիվ բերաթներ ու թաքրիրներ, որոնք զանազան հարցերով ուղղված են եղել համայնքների առաջնորդներին, ինչպես օրինակ 1850-ի «Օսմանյան Բողոքական հպատակներին շնորհված ֆերմանը», 1852-ի հայ կաթոլիկ պատրիարքությունը հաստատող պերաթը…Ավետիս Փափազյան, նշվ. աշխ.,էջ145: Դյուստյուր /օրինագիրք տաճկաց/՝ մեկնաբանում է Սեյլանը: Նշվ. աշխ., էջ 95:

17. Վաճառաշահ քաղաք էր: Գտնվելով Էրզրումից Մոսուլ տանող ճանապարհի վրա՝ նրա դերը հնում էլ, որպես առևտրական կենտրոնի, մեծ է եղել: Բացի Հայկական լեռնաշխարհից դեպի Միջագետք տանող այս հիմնական ուղուց, Բիթլիսում նաև հանգուցվում էին դեպի Վան, Մուշ, Կարին, Սղերդ, Դիարբեքիր, Խիզան և նրա վրայով Պարսկաստան տանող ճանապարհները: Ուներ հարուստ շուկա: 20-րդ դ. սկզբին այստեղ հաշվվում էին մոտ 1000 մեծ ու փոքր կրպակներ և խանութներ: Մեկ-երկու դար առաջ ունեցել է երկու շուկա՝ շուրջ 1200 խանութներով: Հայերի հիմնական զբաղմունքները արհեստներն ու առևտուրն էին: Բիթլիսը նաև ոսկերչության հանրահայտ կենտրոն էր: Զարգացած էին նաև երկրագործությունը, կաշեգործությունը, կոշկակարությունը, թանկարժեք մորթիներից մուշտակներ կարելու արհեստը, մանածագործությունը, ներկարարությունը: Արտահանվող ապրանքների մեջ հռչակված էր Բիթլիսի կարմիր շիլա կտավը: Արտահանվում էին նաև օճառ և գյուղատնտեսական արտադրանքներ: ՀՏԲ, հ. 1, էջ 686:

18. *«Դարբին՝ երկաթագործ, բուն և հինն իմաստն է «վարպետ, արհեստաւոր», ինչպէս ցոյց է տալիս դարբին պղնձոյ «պղնձագործ», որից դարբնել, դարբնութիւն, դարբնոց: Հնդեվրոպական նախալեզվի dhabhro-նախաձևից, -ին մասնիկով»*: Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 636:

19. Ավետիս Փափազյանը գրում է.«*Թանզիմաթի* /արաբ. «թանզիմ» բառի հոգնակի ձևն է, նշանակում է բարեփոխել, կարգադրել, խմբագրել/ շրջանում հրապարակված օրենքները, կանոնադրությունները, հրամանագրերը, և ընդհանրապես, սուլթանական կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին շնորհված պաշտոնական գրությունները լույս են տեսել *«Դյուստյուր»* /Օրենսգիրք/ խորագիրը կրող մատենաշարում, արաբատառ թուրքերենով: 1911-ին «Օրենքներ հրատարակող վարչությունը» հրատարակեց «Դյուստյուր»-ի երկրորդ, մշակված խմբագրությունը… 1908-ի Սահմանադրության վերականգնման վերաբերյալ սուլթան Աբդուլ Համիդի հռչակագիրը ընդգրկված է 1911-ին լույս տեսած «Դյուստյուր»-ի առաջին հատորի սկզբում: Ավետիս Փափազյան, նշվ. աշխ., էջ 144-145,151: Рубен Сафрастян, Армянские либералы и конституционное движение в Османской империи: 1867-1876гг., Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, НАН РА Институт Востоковедения, Ер., 2001, с. 125-143.

20. Որդան կարմիր, Կարմրորդ, կոկցիղների ենթակարգի տարբեր ընտանիքների միջատներ, որոնց էգերը օգտագործվում են կարմիր ներկի՝ կարմինի ստացման համար: Առավել արժեքավոր են հայկական, մեքսիկական, լեհական որդան կարմիրները: [Նախկին-Ի. Ա.] ՀՍՍՀ տարածված են կարմինակ որդերի երեք տեսակ, որոնցից ներկի ստացման համար օգտագործվել է միայն առաջինը՝ բուն հայկական /արարատյան/ Որդան կարմիրը: Սա ներկատու միջատներից ամենախոշորն է: Լավ է արտահայտված սեռական երկձևությունը: Էգերն անթև են, օվալաձև,4-12 մմ երկարությամբ, ունեն երկու պարզ աչք: Արուները 2-3 մմ են… Զարգացման բոլոր փուլերում էգերն ու արուները ունեն կարմիր գույն, ներկ պատրաստելու համար հնուց ի վեր օգտագործվել են էգերը: Որդան կարմիրը հավաքում են բեղմնավորման համար հողի երես դուրս գալիս: Ըստ պատմական աբյուրների՝ Որդան կարմիրը տարածված է եղել Արաքսի միջին շրջանի, հատկապես Արարատյան դաշտի, ինչպես նաև Ուրմիա լճի և Էրզրումի նահանգի աղուտներում: Կան որդանների նաև առանձին օգտակար տեսակներ, որոնցից ստացվում են արժեքավոր նյութեր՝ շելլակ, կարմիր ներկ: ՀՍՀ, հ.8, Եր., 1982, էջ 642-643, 644:

21. Շրէշտ-բույս eremurus և սոսինձ, որը պատրաստում են այս բույսի արմատներից: Иосиф А. Орбели, назв. раб., с. 168:

22. Մյուդիրը շեյխի և բեկերի հետ անձամբ ընդառաջ ելալով, ուրախության երգերով, թմբուկներով ընդունում է [Միր-Սատոյին-Ի.Ա.] իբրև «քաջ հայերի իշխան», հյուրասիրում յուր ապարանին մեջ, ճաշ պատրաստում, մսեղեն, բուսեղեն ընտիր կերակուրներ, Բաղեշի օղի, Խարբերդի անարատ գինի և այլն հանում սեղան: Սեյլան /Արշակ Մատոյան/, Սասուն, Երևանի պետական համալսարան, ԵՊՀ հրատ., Եր., 1990, էջ 62:

23. Թաշիանե, տե՛ս Ի.Է.Ավագյան, Ծննդավայրիցս դեպի Տեր Զոր /Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները/ «Էլդորադո» հրատ., Գյումրի 2004, էջ 6:

24. Բիթլիսը ջրառատ քաղաք էր: Ուներ հասարակական և տնային բաղնիքներ, որոնց թիվը հասնում էր 600-ի: ՀՏԲ, հ. 1, էջ 686:

25. Վիլայեթ-երկիր, երկրամաս, նահանգ: Աղբյուրներում և վավերագրերում գործածվում է փոփոխակի իմաստով: Երբեմն «վիլայեթ» անվան տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն՝ ընդարձակ նահանգ, իսկ երբեմն՝ նույնիսկ մեծ գավառ: Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ-97», Երևան 2000, էջ 154:

26. Բնագրում Մ.Ղազարյանը, գրում է.«*…լինելով հինգ վիլայեթներից մեկը»*: Անդրադառնալով Կ.Պոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների՝

Հայաստանի ռեֆորմների վերաբերյալ հիշատակագրերին /մարտ-ապրիլ 1895թ./ կնկատենք, որ առանձին կետերից առաջինն է.« *Վիլայեթների թվի պակասեցնելը: Քանի որ ռեֆորմներ պետք է մտցնել Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սվազի, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Դիարբեքիրի վեց նահանգներում, պետք է աշխատել, այդ վիլայեթների թիվը պակասեցնել...1875-ից 10 տարի առաջ Էրզրումի վիլայեթը /շրջան/ բաղկացած էր հետևյալ գավառներից՝ Չըլդըր, Կարս, Էրզրում /այժմյան վիլայեթը/, նույնպես Վան, որ պարունակում էր իր մեջ Հեքքեարի, Բիթլիս և Մուշ: Այդ վիլայեթը, 1877-78թթ. պատերազմից հետո հետզհետե բաժանվեց հինգ վիլայեթների. Էրզրումի, Վանի, Հեքքեարիի և Մուշի: Այնուհետև Հեքքեարիի գավառը նորից միացվեց Վանի վիլայեթին, իսկ Մուշի գավառը՝ նոր կազմված Բիթլիսի վիլայեթին: Դրանից հետո էր, որ Մամուրեթ-ուլ-Ազիզի սանջակը դարձավ վիլայեթ, որի հետ միացվեցին մի քանի հարևան հողեր: Այնինչ, Դերսիմի վիլայեթը կրկին դարձավ սանջակ»:* Հ.Գ.Ազատյան, Բախտորոշ պայմանագրեր, Եր., Տիգրան Մեծ, 2002, էջ 58-59: Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 201-212:

27. Բիթլիսի, Բաղեշի նահանգ, համանուն կենտրոնով թուրքական վարչամիավոր Արմ. Հայաստանում: Ստեղծվել է 1879-80-ին՝ Վանի, Դիարբեքիրի նահանգներից առանձնացված տարածքներից: Ընդգրկել է Վանա լճի արմ. ափամերձ շրջանները, Արածանի, Տիգրիս և Արլ. Տիգրիս կամ Ջերմ գետերի ավազանները: ՀՀՀ, էջ 85: 1909-ին ուներ չորս գավառ՝ Կենտրոնական կամ Բիթլիսի /Խլաթ /Ախլաթ/, Բիթլիս, Մոտկան, Խիզան գավառակներով/, Մուշի /Մանազկերտ, Բուլանըխ, Վանդո, Մուշ, Սասուն գավառակներով/, Գենջի /Ճապաղջուր, Գենջ, Խուլի գավառակներով/ և Սղերդի /Սղերդ, Խարզան, Շիրվան, Բարվար, Էրուն գավառակներով/: Տարած. XXդ. սկզբին՝ 27100 քառ կմ.: Բիթլիսի Ն-ի տարածքը XVIդ. ընկել է թուրք. տիրապետության տակ, որից հետո ներթափանցած քրդ. ցեղերը, թուրքերը, կովկասյան լեռնականները տասնյակ հայկ. գյուղերից բռնությամբ դուրս են մղել բնակիչներին՝ աստիճանաբար հաստատվելով նրանց բնակավայրերում: Չնայած դրան, XIXդ. վերջին քառորդին հայերը կազմում էին Բիթլիս ն-ի բնակչության ավելի քան 60%-ը: Մուշի, Բաղեշի /Բիթլիս/ և Սղերդի առաջնորդարանների տվյալներով՝ 1878-ին Բ. ն-ի տարածքում /առանց Գենջի գավառի/ ապրում էին 200հզ. հայ, 120հզ. քուրդ և թուրք, 8հզ. ասորի, 2,8հզ. եզդի, 1000 չերքեզ: Ըստ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրության, 1880-ին Բ. ն-ի հայերի թիվը հասել է 250հզ-ի: 1894-96-ի հայկ. կոտորածների ժամանակ զոհվել են Բ. ն-ի տասնյակ հազարավոր հայեր /միայն Սասունում՝ մոտ 10հզ./, շատերը բռնությամբ մահմեդականացվել են, մեծ չափեր է ընդունել արտագաղթը: Առաջին համաշխ. պատերազմի նախօրեին հայերը Բ.ն-ի ամենաստվար հատվածն էին: Ըստ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների՝ 1912-ին նահանգի /առանց Սղերդի հվ-ի/ ապրող 382 հզ. բնակիչներից հայեր էին 180 հզ-ը /47,1%/, թուրքեր՝ 40 հզ-ը /10,5%/, չերքեզներ՝ 10 հզ-ը /2,6%/, քրդեր՝ 77 հզ-ը, դմլիկներ /զազաներ/՝ 55 հզ-ը, եզդիներ՝ 5 հզ-ը, ասորիներ՝ 15հզ-ը: Այս տեղեկություններով՝ 1914-ին Բ. ն-ում կար 210 հզ. հայ /ապրում էին հիմնականում Մուշի և Բիթլիսի գավառակներում/: Առանձնապես հայաշատ էին Մուշի /60%/, Բուլանըխի /65%/, Խլաթի /50%/, Սասունի /55%/ գավառակները: 1915-ին Մեծ եղեռնի ժամանակ, Բ. ն-ի հայերը ենթարկվել են զանգվածային կոտորածների: Սակավաթիվ փրկվածները հիմնականում ապաստանել են Արլ. Հայաստանում: Ըստ 1927-ի թուրքական մարդահամարի տվյալների՝ Բ. ն-ի տարածքում ապրում էր 550 հայ: Ներկայումս Բ.ն-ը տրոհվել է Բիթլիսի, Մուշի, Սղերդի, Բինգյոլի իլերի: ՀՀՀ, էջ 84-85:

28. Կամավորական առաջին ջոկատները ռազմաճակատ մեկնեցին 1914-ի նոյեմբ.: 1-ին ջոկատը Անդրանիկի գլխավորությամբ կռվում էր Խոյ-Դիլման-Վան,

2-րդը՝ Դրոյի գլխավորությամբ՝ Իգդիր-Բայազետ—Բերկրի-Վան, 3-րդը՝ Համազասպ Սրվանձտյանի գլխավորությամբ՝ Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բաղեշ, 4-րդը՝ Սարիղամիշ-Էրզրում ուղղություններով: 1-ին ջոկատը 1915-ի ապրիլին հաղթական մարտեր մղեց Սալմաստ գավառի կենտրոն Դիլման քաղաքի մատույցներում՝ Վանի ուղղությամբ, և ռուս. զորքերի հետ գլխովին ջախջախեց Խալիլ բեյի 12 հզ. բանակը: Այդ հաղթանակով կանխվեց թուրքերի ներխուժումը Անդրկովկաս: Անդրանիկի ջոկատը, հետապնդելով Խալիլ բեյին, անցավ թուրք-պարսկական սահմանը, նոր հարված հասցրեց թուրքերին Խանասորի լեռնանցքում և մտավ Բաշկալե՝ խափանելով Վանի վրա գրոհող Ջևդեթ բեյի զորամասին օգնության հասնելու թուրք. ծրագիրը: 1915-ի մայիսի 17-ին Արարատյան գունդը Վարդանի հրամանատարությամբ՝ գեն. Նիկոլաևի զորախմբի կազմում առաջինը մտավ Վան: Արարատյան ջոկատը կազմվել է 1915-ին հայ կամավորական 2-րդ, 3-րդ, 4-րդ խմբերի միավորումով /2800 մարտիկ, որից 2300՝ հետևակ, 500-ը՝ հեծյալ/: Վանի ազատագրումից հետո հայկ. կամավոր. չորս ջոկատները գեն. Տրուխինի զորաբանակի կազմում համառ մարտեր մղեցին Վանա լճի հվ. մասում և հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, շարժվեցին Մուշի և Բաղեշի ուղղությամբ: 1915-ի հունիսի 15-ին Արարատյան ջոկատին էր միացել հայ կամավորների 1-ին խումբը՝ Անդրանիկի հրամանատարությամբ: Հայ կամավորները հունիսի 18-ին միացյալ ուժերով գրավել են Ջիվանի բարձունքները, հունիսի 29-ին՝ Սորբը, հուլիսի 7-ին՝ Ուրտափն ու Դատվանը: 1915-ի հուլիսի 9-ին թուրք. 3-րդ բանակի աջ թևում ստեղծված հարվածային զորախումբը /մոտ 11 դիվիզիա/ հարձակման անցավ ռուս. Կովկաս. 4-րդ կորպուսի դեմ՝ Կոփ-Մանազկերտ-Ալաշկերտ-Կաղզվան ուղղությամբ, ճեղքեց ռուսների պաշտպանությունը, առաջ շարժվեց՝ ստեղծելով Վանի շրջապատման լուրջ վտանգ հս.-արմ.-ից: Ռուսական զորքերը նահանջեցին: Թուրքերի հարձակման ժամանակ 4-րդ կորպուսի հետ նահանջեց նաև Արարատյան ջոկատը, որի 1-ին և 2-րդ խմբերը Վանա լճի հս. ափով հասան մինչև Իգդիր, 3-րդը և 4-րդը հվ. ափով՝ Դիլման /Իրան/: Արարատյան ջոկատը մասնակցել է 1915-ի Ալաշկերտի օպերացիային, այնուհետև կազմալուծվել: Այդ օրհասական պահերին օգնության հասան կամավորները, որոնք Վասպուրականի նահանգի 200 հզ. գաղթականներին հասցրին ռուս. թուրք. սահմանը: 1915-16-ին կամավոր. ջոկատները շոշափելի ծառայություն մատուցեցին ռուս. Կովկաս. բանակին՝ Արմ. Հայաստանի մեծ մասը ազատագրելիս: 1915-ի դեկտ. գլխ. հրամանատարությունը ցրեց կամավոր. ջոկատները և դրանց հիման վրա ռուս. զորամասերի կազմում ստեղծեց հայկ. հրաձգ. գումարտակներ: Այս քաղաքականությունը խիստ դժգոհություն առաջ բերեց հայ կամավորների շարքերում: Այդուհանդերձ նորաստեղծ հայկ. գումարտակները, որոնք հավատում էին ռուս. զենքի հաղթանակին, գործուն մասնակցություն ունեցան 1916-17-ին Արմ. Հայաստանում և Իրանում մղված մարտերին: ՀՀՀ, էջ 52-53, 227-229: Տե՛ս Արամ Հայկազ, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիւ Եորք, Միացեալ նահանգներ, 1957, էջ 378: Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, հ.6, էջ 546-553:

29. Էնվեր /Enver/ փաշա /1881-1922/, թուրք պետական և ռազմական գործիչ, հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ԿԿ անդամ: 1908-ի երիտթուրքական հեղաշրջման կազմակերպիչներից և իրականացնողներից: 1913-ին նշանակվել է Թուրքիայի ռազմ. նախարար, միաժամանակ՝ գլխ. սպայակույտի պետ: Գերմանիայի կողմում Թուրքիան առաջին աշխարհամարտի /1914-1918/ մեջ ներքաշելու հիմն. նախաձեռնողը: Պատերազմի սկզբին գլխավորել է Կովկասյան ճակատում գործող թուրք. զորքերը, որոնք Սարիղամիշի օպերացիայի /1914-ի դեկտ.-1915-ի հունվ./ ժամանակ

ջախջախվել են: Դրանից հետո երիտթուրք. «եռապետությունը» /Թալեաթ, Էնվեր, Ջեմալ/ արագացրել է հայերի տեղահանության և ցեղասպանության ծրագրի իրագործումը: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո. ապաստանել է Գերմանիայում: Կապեր է հաստատել Խորհրդ. Ռուսաստանի ղեկավար շրջանների հետ, փորձել ստանալ նրանց աջակցությունը՝ խոստանալով իր միջնորդությունը խորհրդա-գերմ. տնտ. հարաբերությունների զարգացման գործում: Փայփայել է Այսրկովկասի և Միջին Ասիայի մահմեդականներից «Կանաչ բանակ» ստեղծելու և իբրև «փրկիչ» Թուրքիա վերադառնալու ծրագրեր: 1919-ին հեռակա կարգով մահվան է դատապարտվել /տես Երիտթուրքերի դատավարություն 1919-1920/՝ իբրև պատերազմի հանցագործ և հայերի ցեղասպանության կազմակերպիչ: 1921-ի անցել է Միջին Ասիա, գլխավորել բասմաչների գործողությունները: Սպանվել է բասմաչների և Խորհրդ. զորքերի միջև բախումների ժամանակ: ՀՀՀ, էջ 134, 125: Տե՛ս Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Եր., «ԿՓՀ»,1990: Генрих Фирбюхер, Что скрыло кайзеровское правительство от немецких подданных, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, изд. АН Армении, Ер., 1991, с. 44-45;

30. Թալեաթ /Talaat/, Թալաաթ, Մեհմեդ փաշա /1874-1921/, թուրք պետական գործիչ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից: 1908-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո ընտրվել է մեջլիսի պատգամավոր, հետագայում եղել է Թուքիայի ներքին գործերի և հեռագրության նախարար: Բալկանյան պատերազմների /1912-13/ ժամանակ ծառայել է բանակում: 1913-ի հունվ. 23-ին պետ. հեղաշրջման գլխ. կազմակերպիչներից: Հեղաշրջումից հետո՝ դարձյալ ներքին գործերի նախարար և միաժամանակ՝ երիտթուրք. կուսակցության ԿԿ նախագահ: Օսմ. կայսրության ոչ թուրք ժողովուրդների ձուլման և բռնի թրքացման կողմնակից: Եղել է հայերի տեղահանումը և ցեղասպանությունը կազմակերպող «եռապետության» /Թալեաթ, Էնվեր, Ջեմալ/ անդամ: Իր հուշերում /լույս են տեսել 1946-ին/ խոստովանել է հայերի բռնի տեղահանման և բնաջնջման փաստը, սակայն դա բացատրել է թուրքերի «ազգային շահերի» պաշտպանությամբ և «Ռուսաստանին սահմանակից վիլայեթներում Հայկական պետության ստեղծմանը» խոչընդոտելու ձգտումով: 1918-ի հոկտ. 7-ին Թալեաթը ընդունել է երիտթուրքերի քաղաքականության ձախողումը, հրաժարվել իշխանությունից և փախել Գերմանիա: Հեռակա կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանության ու ցեղասպանության կազմակերպիչ: Թալեաթին Բեռլինում սպանել է ժող. վրիժառու Ս. Թեհլերյանը, ՀՀՀ, էջ 137-138, էջ 125: Տե՛ս Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ.:

31. Տե՛ս Արամ Անտոնեան, Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալէաթ փաշա, Պաշտօնական հեռագիրներ, տպարան «ՊԱՀԱԿ»-ի, Պօսթընն, 1921, վերահրատ., Եր., Արևիկ, 1990: Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ.: Գաբրիէլ Լազեան, Հայաստան և հայ դատը, Հայեռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Եր., Ադանա, 1991: Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները, թարգմ., Ենովք Արմեն, Եր., Լույս, 1990: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, Գիրք 1., Հայկական հարցը 1908-14 թվերին,Եր., Հայաստան, 2001: Գ.Ա.Գալոյան, Պատմության քառուղիներում, Ազատագրված ժողովրդի վերածնունդը, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1982, էջ 183-184: Ավետիս Փափազյան, Ժամանակագրություն, Հայկական հարցը և Մեծ եղեռնը /1876-2000 թթ./, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ-97», Եր., 2000, Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի

դատավարության փաստաթղթերի, ՀՍՍՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1989: Ռուբեն Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Եր., Հայաստան, 1990: Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ: Հայկական եղեռնը Հունգարական ամսագրի մեկնաբանությամբ, «Սովետական հայաստան» ամսագիր, թիվ 7 /484/, 1986 թ., Եր., էջ 20- 21, 23-24: С.Врацян, Армения между большевистским молотом и турецкой наковальней, Ер., 1992, с.21-32; Генрих Фирбюхер, назв. раб.; М.А. Гасратян, Курды Турции в новейшее время, Ер., Айастан, 1990; Рем Казанджян, К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921г., Страны и народы Ближнего и Среднего Востока, XX, Ер., 2001, с. 106-108; Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов Московских архивов, назв. сборник, XXI, Ер., 2002, с. 109-110.

32. Զորահավաք՝ *սեֆերբիրլիք*: Համաձայն Սալոնիկի համագումարի որոշման՝ օրենք ընդունվեց, որ թուրքական բանակ զորակոչվում էին 20-30 տարեկան երիտասարդները՝ անկախ կրոնական պատկանելության, բայց ինչպես նկատել է Ռենե Պինոնը՝ *«կամայական օրենք մը», որը նպատակ ուներ «հայ ժողովուրդն առանց հայ տղամարդու»* թողնել, որպեսզի հնարավոր լիներ *«զայն ջարդել առանց դիմադրութեան հանդիպելու՝ 18-48 տարեկան հայերը կը զորակոչուեին: Ասոնցմէ կազմուեցան տարապարհակ աշխատանքի բանակներ, որոնք ենթակայ էին ամեն տեսակ չարչարանքի եւ տառապանքի, ատելութեան եւ վարկաբեկումի...»*: Ընդհանուր զորահավաքը հայտարարվեց 1914-ի հուլիսի 21-ին: Յուրաքանչյուր ոք պարտավոր էր ներկայանալ զինվորական մարմնին: Կ.Սասունին գրում է. *«Երկու զորահավաք էր տեղի ունենում մեկ անվան տակ: Փաստորեն թիւրք կառավարութիւնը հայ բոլոր տղամարդիկը... իր ափին մէջ կառներ եւ կը կալանավորեր զինուորական պարտականութիւն կոչուած բանտին մէջ»*: Այսինքն, զենք կրող հայերի 90%-ը *«հավաքուած եւ շղթայի տակ էր առնուած»*, որից հետո միայն սկսվեց զանգվածային հարձակումը կռվելու անընդունակ հայ բնակչության վրա: Որ զորահավաքը նշանակում էր բնաջնջում, վկայում է նաև այն, որ զորակոչված հայերի միայն փոքր մասին ռազմաճակատ տարան, այն էլ կռվի ամենածանր տեղամասերում, թուրք զինվորների հսկողության տակ, երբ դիմացից հակառակորդն էր խփում, իսկ թիկունքից՝ թուրքը: Բաղեշից ստացված մի հանրագրում կարդում ենք, որ զորակոչում են նաեւ հիվանդներին ու տկարներին եւ ուղարկում են ռազմաճակատ: *«Ամենք սիստեմատիկորեն ջարդուեցան, ճակատէն զնդակ չստացողը, թուրք զինուորներու կը յանձնուեին, որ բանակէն կես ժամ հեռացնելով կը ջարդեին»:* Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 409-410: Տե՛ս Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 305-310: Տե՛ս Շահնազար Քեօթահեան, Յուշեր ու նիշեր անձեր ու անցքեր նախաեղեռնէն մինչեւ ներկայս, Լոս Անճելը, 1990, էջ 75-76: Ի.Է.Ավագյան, Հուշեր անցյալից, Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, Գյումրի, Էլդորադո, 2006, էջ 42:

33. *Էֆենդի՝* տեր: Մեծ ածական է, մեծ մարդու կողմից, եթե տրվի /հուն./, Սեյլան, Սասուն, էջ 93, տողատակ 2:

34. Ըստ սևագիր ձեռագրի՝ Ճերճիս էֆենդին 35 տարեկան էր, իսկ ըստ մաքրագիր ձեռագրի՝ 30-32 տարեկան:

35. Նիկողայոս Ադոնցը գրում է. *«Արևմուտքն էր տվել հայերին գիր և գրականություն և ստեղծել հոծ մտավորականություն ազգային ինքնագիտակցությամբ: Նրա համակրությունը փարում էր քրիստոնեական լուսավորության կենտրոնին, հրաշափառ Բյուզանդիոնին: Եկեղեցականությունն էր այս հոսանքի ոգին իր երբեմնական տատանումներով հանդերձ»,* նշվ. աշխ., էջ 149:

36. Ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի՝ սեիդ-մահմեդական հոգևորական, իմաստուն: Սեիդները սերված էին համարվում Ալիից: Նշվ. աշխ., էջ 154:

37. *Ֆիրման՝* թագավորական հրովարտակ, Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 155:

38. Սկսած մանկությունից՝ Սասունի բնակիչները սովորում էին զենքի գործածությունը: Տոն օրերին նրանք կազմակերպում էին փորձնական խաղեր, որի ժամանակ երիտասարդությունը խմբեր կազմած՝ մահակներով և վահաններով «հարձակվում» էին իրար վրա: Խաղերի համար պատրաստված այդ վահանները պատած էին հաստ կաշվով և կոչվում էին *մարբալ*: Սասունի գյուղերում.«*քաջության մեջ հետ չէ մնում և սասունցի կինը, որը գիտե ոչ միայն մահակով կռվել, այլև երբեմն նաև հրացան գործածել»*,-գրում է Ա.Քալանթարը: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 118-119:

39. Հավանաբար Մ.Ղազարյանը ի նկատի ունի կուսակցությունները:

40. Վռամյան Արշակ /Դերձակյան Օնիկ/, Վահապ, Վարազ /1870, Կ.Պոլիս-1915, Վան/, ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՀԴ կուսակցության անդամ: Նախնական կրթ. ստացել է Կ.Պոլսում, ապա ավարտել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը /1889/: Մասնակցել է օսմ. բանկը գրավելու /տես «Բանկ Օտոմանի» միջադեպ 1896/ նախապատրաստական աշխատանքներին, ձեռբակալվել է, սակայն կարողացել է փախչել: 1897-ին Բուլղարիայում և Ռումինիայում զբաղվել է քարոզչական աշխատանքով: 1898-ին անցել է Ժնև, ուր ստանձնել է ՀՀԴ Արմ. բյուրոյի գործավարությունը, միաժամանակ աշխատակցել «Դրոշակին» /1899-ին նաև խմբագիրը/ և հաճախել համալսարանական դասախոսությունների: Գործուն մասնակցություն է ունեցել Ամերիկայում ՀՀԴ կազմակերպությունների ստեղծմանը և «Հայրենիք» թերթի հիմնադրմանը: 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո Կ.Պոլսում ընտրվել է օսմ. խորհրդարանի երեսփոխան: 1915-ի ապրիլին դարձել է դավադրության զոհ, ՀՀՀ, էջ 437, 77:

41. Ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի՝ Վալի՝ Իրանի ծայրամասային 4 վիլայեթներից /Արաբիստան, Լուրիստան, Վրաստան և Քրդստան/ մեկի կառավարիչն է: Վալիները պատկանում էին տվյալ վիլայեթի տիրակալների տոհմին և ունեին ինքնավարության իրավունք: Համարվում էր, որ այդպիսի վիլայեթի եկամուտը չէր մտնում Իրանի պետական գանձարան: Վալին պարտավոր էր կառավարությանը ցուցաբերել ռազմական աջակցություն և շահին ուղարկել *բառիաանե*: Վրաստանի վալին Իրանից, որպես ռոճիկ, ստանում էր այնտեղ հավաքվող հարկերից: Այդպիսով՝ ենթադրվում էր, որ վրաց վալին Իրանի պաշտոնյա էր: Նշվ. աշխ., էջ 154:

42. Բնագրում Մ.Ղազարյանը օգտագործում է «սնանկ» բառը:

43. Բիթլիսի ռուսական հյուպատոսի վկայությամբ՝ թուրքերը Եղեռնի նախապատրաստությանը ձեռնամուխ էին եղել մինչև աշխարհամարտի սկսվելը: Նա գրում է, թե իշխանությունները «*շարունակում են զենք ու զինվորական հանդերձանք ուղարկել զանազան քաղաքներ»:* Մեկ օրում Բիթլիս ուղարկվեց 38 արկղ զենք: Սղերդում մահմեդականների հին մակնիշի հրացանները փոխարինվում էին նորերով: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 472:

44. Մոլլա Իդրիսը՝ բիթլիսեցի մի քուրդ, որը տեղի բնակիչ էր և լավ ծանոթ էր տեղական պայմաններին, գործուն մասնակցություն բերեց սուլթան Սելիմի ռազմական գործողություններին… պաշտպանում էր քրդական մանր ցեղապետերի շահերը… Նա իր իշխանության տակ միավորեց մի մեծ նահանգ՝ Մծբինից մինչև Դերսիմ, անվանեց այն Դիարբեքիր և բաժանեց 19 սանջակների՝«դրոշների» կամ ռազմաֆեոդալական միավորների: Այս սանջակներից ութը ժառանգելու իրավունքով

տվեցին քուրդ բեյերին: Այս քուրդ առաջնորդները որոշ հողատարածություններ ստացան նաև Տիգրիսի ակունքներում՝ որպես մասնավոր սեփականություն կամ *հյուքյումեթ*: …Նա նաև որոշ քրդական ցեղեր տեղափոխեց Էրզրումի նահանգ՝ դրանով հիմք դնելով Հայաստանի այդ մասում քրդական էթնիկական տարրի հաստատմանը: Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 133:

45. Գյավուրներ /եզապաշտ, հեթանոս/՝ մեկնաբանում է Սեյլանը իր «Սասուն» աշխատությունում, էջ 83:

46. Այս տվյալները բերված են ըստ ձեռագիր մաքրագրի: Ըստ սևագիր տետր թիվ 1-ի՝ այրվածների թիվը 72-ն էր, որից՝ 35-ը կին, 16-ը՝ երեխա, 21-ը՝ տղամարդ: Ըստ սևագիր տետր թիվ 4-ի՝ այրվածների թիվը 71-ն էր, որից 22-ը՝ տղամարդ, 31-ը՝ կին, մնացածը՝ երեխա:

47. Մաքրագիր ձեռագրի տվյալ տեղում հուշագիրը օգտագործում է «զոհվեցին» բառը:

48. Յուզբաշի-զինվորական հայրուրակային գնդի հրամանատար, Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 153:

49. Արևելյան նահանգներում կատարյալ անիշխանություն էր, մահմեդական մոլեռանդության վայրագությունների համար միանգամայն բարենպաստ միջավայր: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 19: Թուրքերն էլ ջանում էին ջնջել քարտեզներից Արմանիստան անունը՝ փոխարինելով այն Քրդստանով: …Ռուս գործակալները, զինվորական գրողները և ճանապարհորդները ձգտում էին արհամարհել հայերի նշանակությունը՝ խոսելով քրդերի թվական գերակշռության մասին: Նրանց գրքերում և հոդվածներում Հայաստանը դադարել էր հայերի երկիր կոչվելուց. այն անվանվում էր Քրդստան: Էրզրումի շրջանը կոչվում էր Հյուսիսային, իսկ Բիթլիսը /Վանը/՝ Հարավային Քրդստան: Նրանցից մի քանիսն այնքան հեռու էին գնացել, որ պնդում էին, թե քրդերն են Հայաստանի իսկական բնիկները, և որ Հայաստանը միշտ էլ եղել է քրդերի երկիրը: Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 132:

50. Գէորգ Մեսրոպը իր «Հայաստան, Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակէտներով» աշխատությունում գրում է.«*Թուրք կառավարութիւնը 1880-ական թուականներէն սկսեալ Հայաբնակ նահանգներուն համար աշխատած է իբր թէ կանոնաւոր վիճակագրութիւններ պատրաստել եւ ջանացել է ցոյց տալ թէ, Հայերը անհամեմատ փոքրամասնութիւն մը կը կազմեն իրենց բնակած վայրերուն մէջ... Եթէ թուրք կառավարութեան վիճակագրութիւնները ճիշտ չեն, գէթ Հայոց նկատմամբ, նոյն բանը չենք կրնար ըսել Հայոց Պատրիարքարանի վիճակագրութիւններու համար: Հայոց Պատրիարքարանը մէկն է այնպիսի հաստատութիւններէն, որ ունին իրենց սեփական միջոցները քիչ շատ կանոնաւոր վիճակագրութիւններ կազմելու համար... Հայոց Պատրիարքարանը առաջին անգամ կանոնաւոր վիճակագրութիւն մը կազմած է 1882-ին: Անկէց առաջ հատակագրոր ծանօթութիւններ կ'երեւին թէեւ ասդին անդին, բայց 1878-ին Հայկական Հարցի առիթով Պատրիարքարանն ստիպուած կ'զգայ ճիշդ թիւեր հաւաքել, մանաւանդ, որ 1880-ին՝ թուրք կառավարութեան դիտումնաւոր կերպով կարգադրած վիճակագրութիւնն ալ նոր ստիպում մը կուտար»*, Կ.Պոլիս, 1919, էջ 51-68: Ըստ Գէորգ Մեսրոպի՝ Հայոց պատրիարքարանի հայտնած տվյալներով հայոց թիվը «*Պիթլիսի վիլայէթ*»-ում մոտ 250000 էր: Նշվ. աշխ., էջ 64: Ըստ «Յուշամատեան Մեծ Եղեռնի» աշխատության՝ «*Տարագրութիւններ Հայկական Նահանգներու մէջ*» պարունակվող տեղեկությունների Բիթլիսի հայերի տարագրությունը տեղի է ունեցել«*1 Յուլիս 1915-Բաղէշ»,* էջ 195: Ըստ նույն աղբյուրի՝ պատերազմից առաջ Բիթլիս քաղաքում բնակվել է «*Պիթլիսի վիլայէթ, Պիթլիս ք. 40000*» հայ, որոնք էլ տեղահանվել են, պատերազմից

հետո փոխադրված հայերի թվային տվյալներ այս աղբյուրը չի պարունակում: «Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-65», /պատր.՝ Գերսամ Ահարոնեան/, Բեյրութ, տպ. Ատլաս, 1965, էջ 215:

51. «Վիջտան» թերթի խմբագիր Խալիդ բեյը սպառնացել էր.«*Հայե՛ր, չգիտեք, չեք երևակայում, թե ձեզ համար ինչեր է պատրաստվում, ինչ դժբախտություններ են գալու ձեր գլխին, չգիտեք, թե ձեզնից ով որ լեռան գագաթը, որ անապատներն է նետվելու, մահ եք փնտրելու ու գտնել չեք կարողանալու*»: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 309:

52. Ականատեսների կողմից բազում հիշատակություններ կան, որտեղ ոճրագործները այս ձևով կտտանքների էին ենթարկել հայ հղի կանանց: Տե՛ս Վերժինե Սվազլյան, նշվ. աշխ., էջ 81-85: Ի.Է.Ավագյան, Հուշեր անցյալից, Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, էջ 14:

53. Խարբերդցի Գարեգին Թուրուջիկյանը նշում է.«*Ով որ յոթ գյավուր սպանի,*- ասել է շեյխ Արըֆը,-*ջեննեթ կերթա*»: Նույն փաստի մասին Մալաթիացի Մարի Վարդանյանը վկայել է.«Մահմեդական թուրքերն ասում էին.«*Ով գյավուր մը սպանի, ամոր հոգին դրախտ կերթա»:*Վերժինե Սվազլյան, նշվ. աշխ., էջ 85:

54. Մուհաջիրներ՝ գաղթականներ, Ազատ Համբարյան, Սուլթանական կառավարության ազգային քաղաքականությունը Արևմտյան հայաստանի մահմեդական բնակչության նկատմամբ /1898-1908 թթ./, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., Զանգակ-97, 2002, էջ 53:

55. Թուրքիոյ բաժանման հարցը երկար թղթակցութիւններու նիւթ կը դառնայ Ս. Փեթրսպուրկի, Փարիզի եւ Լոնտոնի կառավարութիւններուն միջեւ: Ի վերջոյ Մեծն Բրիտանիոյ արտակարգ լիազօր Սըր Մարկ Սայքս եւ Ֆրանսայի ներկայացուցիչ Փիքօ կ՝այցելեն Ս.Փեթրսպուրկ եւ Սազանովի հետ կը համաձայնին ընդունիլ պատրաստուած նախագիծը: 1916 Ապրիլ 13/26-ին Սազանով յուշագրով կը յայտնէ բանակցութիւններու եզրակացութիւնները ֆրանսական դեսպան պ. Փալէոլոկիւն.«*1. Ռուսաստան իրեն կը կցէ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիթլիսի շրջանները՝ մինչեւ ապագային որոշուելիք կէտ մը Սեւ ծովի եզերքը, Տրապիզոնէն արեւմուտք: 2. Քիւրտիստանի այն շրջանը, որ կ՝իյնայ Վանէն ու Պիթլիսէն հարաւ, Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ճէզիրէ-Իպն-Օմարի ու Ամասիայի վրայ իշխող լեռնագագաթներու գծի ու Մերգեւերի մարզի միջեւ՝ կը զիջուի Ռուսաստանին եւ որ ասոր փոխարէն Ֆրանսայի սեփականութիւն կը ճանչնայ այն հողամասերը, որոնք կ՝իյնան Ալատաղի, Կեսարիոյ, Աղ-Տաղի, Երլտրզ Տաղի, Զարայի, Ակնոյ ու Խարբերդի միջեւ...*»: Գաբրիէլ Լազեան, նշվ. աշխ., էջ 191-193:

56. Ավազակներից ոչ պակաս չարիք էին գործում ժանդարմները՝ ծեծում էին, խոշտանգում, կեղեքում, ձրի կերակրվում: Այս արարքների դեմ ոչ մի գանգատ չէր հանգեցնում մեղավորին պատժելուն: Եվ ժանդարմները քաջալերված իրենց անպատժելիությունից, գործում են սանձարձակ: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 37:

57. Քունջ ու պուճախ՝ ժողովրդական, բարբառային՝ անկյուն: Ռուս-հայերեն բառարան, էջ 573, 716: Էդ. աղայան, նշվ. աշխ.,հ. 2, էջ 1581:

58. Կորանը մուսուլմանների սուրբ գիրքն է և հավատի աղբյուրը, որն արաբներն անվանում են «Ալ-Կորան ալ- Քարիմ»: «Կորան» նշանակում է «այն, ինչը կարդում են, արտասանում են»: Կորանն ամբողջությամբ աստվածային հայտնություն է՝ իրագործված նաբի՝ մարգարե Մուհամմեդի միջոցով: Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. 1, Արաբները VII դարից մինչև 1516 թ., ՀՀ

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Զանգակ-97, Եր., 2003, էջ 34: Միհրան Ղազարյանի հուշերում Կորանը հանդիպում է Ղուրան ձևով: Նշենք նաև այն, որ այս բառը արևմտահայերենում հանդիպում է նաև գուրան ձևով: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 78: Իսլամը հայտնության կրոն է: Աստված խոսել է իր մարգարեների հետ և նրանց տվել իր գրքերը: Ասում են, թե նրա գրքերի թիվը հասնում է մոտ 104-ի: Ղուրանում կան շատ տեղեկություններ Տորահից /Մովսես/ սկսած մինչև Սուհիվը /մարգարեների գրքերի թերթերը/, Զաբուրից /Դավթի սաղմոսներից/, Ինջիլից /Հիսուսի ավետարանից/, մինչև Մուհամմեդի Ղուրանը: Ենթադրում են, թե Ադամը, Նոյը, Աբրահամը և մյուս մարգարեներն ունեին իրենց սուրբ գրքերը, որոնք անհետացել էին այդ ժամանակվանից ի վեր: Երբ Աստված տալիս էր մի նոր գիրք իր մեծ մարգարեներից մեկին, նա փոխում էր նախորդները: Ներկա ժամանակաշրջանի միայն Ղուրանն է պատշաճ Մուհամմեդի գալուց հետո միայն, նրա հրամաններն ուժ ունեին հավատացյալների վրա: Ահարոն Կայայան, Իսլամի իմացություն, Ավետարանական հեռանկարներ «Հավատք եվ կեանք», Եր., «Փյունիկ», 1996, էջ 62-63:

59. Մ.Ղազարյանը հավանաբար փոխաբերական իմաստով է արտահայտվում կամ ի նկատի ունի Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը /1721-1723 թթ./:

60. Հնարավոր է նաև Նեսբի ձևը, քանի որ բնագրում տառը անընթեռնելի է:

61. Հավանաբար հուշագիրը ի նկատի ունի շապիկ-վարտիքը:

62. Հարություն Ալբոյաջյանի հուշերից. *«...Երբ ծնողներիս սպանեցին, հետո ինչ ու ինչ նման անչափահաս երեխաներին հավաքեցին տարին Ջեմալ փաշայի թուրքական որբանոցը՝ թուրքացրին: Իմ ազգանունս «535» էր, իսկ անունս Շուքրի էր: Հայ ընկերս ալ Էնվեր դարձավ: Մեզ այնունեթ ըրին՝ թլպատեցին...»*: Վերժինե Սվազլյան, նշվ. աշխ., էջ 87: Ահարոն Կայայանը նշում է, որ գոյություն ունեցող մուսուլմանական այլ սովորույթներից է թլպատումը, որը չի պարտադրել Ղուրանը: Նշվ. աշխ., էջ 134:

63. *Քյոշկ*՝ապարանք, Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 123:

64. Բնագրում հեղինակը օգտագործում է «մկրտված» բառը:

65. Մուսուլմանների համար Մուհամմեդը բածրագույն անհատականություն է, ըստ Ղուրանի՝ նա մի հասարակ մահկանացու էր /18:110/: Որոշ գրողներ հաստատում են, որ առաջին բանը, որ Աստված ստեղծեց՝ դա Մուհամմեդի լույսն էր, հետո նա ստեղծեց մնացած բաները, որոնք նույնպես Մուհամմեդի համար էին: Նա եղավ կատարյալ մի մարդ, որի օրինակին պետք է հետևեին ամեն ինչում, նույնիսկ, երբ խոսքը վերաբերում էր ուտելուն, մազերի խնամքին, մորուքին, ամուսնությանը, ամուսինների վարքին, թշնամիների և բարեկամների հարաբերություններին, կուլտի փառաբանությանը: Թվում է, թե նրանք , ովքեր ընդօրինակում են Մուհամմեդին, միշտ չէ, որ հասնում են նրա կյանքի բարոյական և հոգևոր մակարդակին: Այնպես, ինչպես Ալլահի անունն է մշտապես իր ծառաների շուրթերին, նույն ձևով էլ հավատացյալները կարտասանեն մարգարեի անունը շուկաներում, նեղ նրբանցքներում, մզկիթներում, մինարեթների բարձունքից: Նավաստիները դա կերգեն ողջ նավարկության ընթացքում, բեռնակիրները կարտասանեն բեռների ծանրության տակ հառաչելով, մուրացկանները դա կշշնջան ողորմության համար ձեռքը պարզելով: Սա նույն հավատացյալի ճիչն է, երբ նա հարձակվում է պատերազմի ժամանակ, կամ երբ օրորում է երեխային: Ամենուր դա հիվանդի բարձն է, մահացողի վերջին խոսքը՝ հոգևվարքի ժամանակ: Դա գրվել է պատերին և սրտերի մեջ, ինչպես եղել է Աստծո թագավորության ամբողջ հավիտենության ժամանակ: Լավագույն անունն է՝ երեխային տալու համար, լավագույնը՝ երդվելու կամ անհրաժեշտ վեճին վերջ տալու համար: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 68-69:

66. Ղուրանը հիշատակում է մոտ 28 մարգարեների, որոնց մեծամասնությունը Աստվածաշնչից են: Մեծ մարգարեներից յուրաքանչյուրը կարող էր կանխագուշակել հաջորդի գալուստը: Նրանցից ամենավերջինն ու ամենամեծը անկասկած Մուհամմեդն էր՝ մարգարեների դրոշմը /սուրահ 33-40/: Ուրիշ ոչ մի մարգարե չի հայտնվի դատաստանից առաջ: Մարգարեները ոչ թե աստվածային, այլ «հրաշք» մարդիկ էին, որոնք չպետք է երկրպագվեին: Ղուրանը ակնարկում է բոլոր մարգարեների մեղքերի մասին, բացառությամբ՝ Հիսուսի: Ղուրանը պարունակում է պատմություններ Աբրահամի, Հովսեփի,Մովսեսի, Զաքարիայի, Հովհաննես Մկրտչի, Հիսուսի կյանքից: Այս պատմությունների մի մասը համապատասխանում են Աստվածաշնչի պատմություններին, իսկ մյուս մասը ոչ: Աստվածաշնչի մարգարեների վերաբերյալ մուսուլմանների գիտելիքները կատարյալ չեն և որոշ տեղերում ամբողջապես ձևափոխված են: Ըստ Ղուրանի՝ Հիսուսը հայտարարել է Ահմադ /61:6/ անունով քարոզիչի հայտնության մասին: Մահմեդականները կարծում էին, թե սա իրենց իսկական մարգարեի հայտնության կանխագուշակումն է, քանի որ երկու բառերն էլ ունեն արաբական ծագում և նույն իմաստը: Մուսուլմանները ունեին Քրիստոսի հրամանին ենթարկվելու համոզմունք այն դեպքում, երբ քրիստոնյաները չէին ուզում հավատալ, որ Ահմադը Մուհամմեդն է: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 66-68:

67. Ղուրանը ոչ թե Մուհամմեդի, այլ Աստծո խոսքն ու զրույցն է: Այն գրվել է ի սկզբանե երկինքների կողմից պաշտպանված տախտակների վրա, և Գաբրիել հրեշտակի միջոցով, 22 տարվա ընթացքում հանձնվել է Մուհամմեդին: Մուհամմեդը ստացավ միայն խոսքերը, որոնք նա կրկնեց: Իսկ գրքերը գրվեցին նրանց կողմից, ովքեր ունկնդրել էին մարգարեին: Նրանք հավաքեցին դրանք մի ժողովածուի մեջ, որը քիչ ավելի մեծ էր, քան նոր Կտակարանը: Մուհամմեդի մահից հետո մի քանի տարի տիրեց կատարյալ խառնաշփոթություն, ինչ որ պետք է գրի առնվեր այդ գրքում: Վերջապես Օթմանի օրոք /644-656/ մի հաստատված տեքստ պետական հովանավորություն ստացավ, իսկ մյուս ձեռագրերը հանվեցին: Ղուրանը անփոփոխ է: Հետևաբար, այն չեն կարող թարգմանել այնպես, ինչպես թարգմանում են մյուս գրքերը: Ըստ մուսուլմանների՝ Ղուրանը միակ հրաշքն է, որ իրենց մարգարեն իրագործեց, քանի որ նա չկարողացավ գործել այլ հրաշքներ: Հավատացյալները Ղուրանին մեծ հարգանքով են վերաբերվում, այն փաթաթում են շորով և երբեք ոտքի չեն կանգնում դրա առջև, որպեսզի իրենց հորիզոնական դիրքով չգերազանցեն նրան: Իսլամում ոչ մի գիրք չի տարածվել այնպես, ինչպես Ղուրանը: Միայն հոգեպես ամենամաքուրն իրավունք ունի շոշափելու գիրքը: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 62-66:

68. Ըստ Միհրան Ղազարյանի դստեր՝ Ջուլիետտա Ղազարյանի գրած կենսագրության.«Միհրան Ղազարի Ղազարյանը ծնվել է 1902 կամ 1903 թ. /ստույգ ծննդյան թիվը ինքն էլ չէր հիշում/ Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքում: Հայրը եղել է արհեստավոր ու հարգված անձնավորություն: 1914-ին, եղերական իրադարձությունները դեռ չսկսված, շատ ուրիշ հայ տղամարդկանց հետ նրան նույնպես զորակոչում են թուրքական բանակ և այլևս փոքրիկ Միհրանը հորը չի տեսնում: 1915-ի ապրիլյան այդ դաժան օրերին նրա աչքի առջև զոհվում են մայրը, քույրը ու եղբայրը: Շատ որբ երեխաների նման՝ նա էլ է հայտնվում Դիլիջանի որբանոցում, որտեղից նրան որդեգրում է բիթլիսեցի մի հայ կին, որը կորցրել էր իր զավակներին և ամբողջ իր տոհմին: Ամբողջ կյանքում Միհրանը և նրա ընտանիքը պաշտում էին Նանեին, ով ոչ միայն մայր եղավ բիթլիսեցի որբի համար, այլև հրաշալի տատ՝ իր թոռների համար: Միհրանի դպրոցը եղավ ինքնակրթությունը, բնատուր շնորհն ու աշխատասիրությունը: 1933-ին նա ապրում էր Կիրովական քաղաքում, որտեղ Ակումբի և Կինոյի տան տնօրենն էր, մինչև 1941-ի Հայրենական պատերազմի սկիզբը: Շատերի նման նա էլ

մեկնեց ռազմաճակատ ու դարձավ Հայրենական Մեծ պատերազմի վետերան: 1946-ին Ղազարյանը ընտանիքի հետ տեղափոխվում է Երևան և մինչև խոր ծերություն աշխատում է տնտեսական ոլորտի տարբեր ձեռնարկություններում: Այս չափազանց աշխատասեր, բարի ու հմուտ մարդը մեծ խանդավառությամբ ընդունեց Հայաստանի անկախացումը: Չնայած իր զառամյալ տարիքին, նա գրեթե ամեն օր օպերային թատրոնի հրապարակում էր ու ոգևորված հավատում էր, որ վերջապես կտեսնի, ինչպես ինքն էր ասում՝ «գազան թուրքի» պարտությունը, և մի օր էլ իր Բիթլիսը կազատվի: Այդ հույսով և հավատով էլ 1994-ի ցուրտ ձմռանը նա խաղաղ ավանդեց հոգին»: Մեր ձեռքի տակ են Մ.Ղազարյանի ստացած պարգևները, դիպլոմը, ՀՍՍՀ Երևանի ցինկապատման գործարանի կողմից «Աշխատանքային արիության համար» պատվոգիրը, Ն.Կ.Կրուպսկայայի ծննդյան 105-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյի հրավիրատոմսը, որին մասնակցել է նա, Նանեի և Միհրանի լուսանկարները, թոշակի անցնելու կապակցությամբ Չարենցավանի գործիքաշինական գործարանի կոլեկտիվի կողմից հանձնված ռուսերեն լեզվով շնորհակալագիրը.«Уважаемый Мигран Казарович! Коллектив Чаренцаванского инструментального завода, провожая вас на заслуженный отдых, ото всей души желает вам самых наилучших благ, хорошего здоровья, активно участвовать в общественной жизни! Счастливого вам отдыха! Коллектив ЧИЗА»: Ստորև բերում ենք պարգևների ցուցակը. Медаль "За доблестный труд. В ознаменование 100-летия со дня рождения В.И.Ленина, 1870-1970гг.", медаль "30 лет победы в Великой Отечественной войне, 1945-1975гг." Медаль "60 лет Вооруженных сил СССР, 1918-1978гг.", медаль "70 лет Вооруженных сил СССР, 1918-1988".

69. Սևագրում՝ վեց:

70. Վերապրողի հայտնած տեղեկությունները ընդհանրական են նաև Արևմտյան Հայաստանի մյուս հայաբնակ քաղաքների և շրջանների համար, այս մասին է նշում նաև Քաջունի Ղարագյոզյանը իր հիշողություններում«Շապին Գարահիսարը և Զորավար Անդրանիկը» վերնագրով անավարտ մի փոքր ձեռագիր հատվածում.*«Բերդի թաղում էին գտնվում հնչակյան, դաշնակցական կուսակցությունների ակումբները: Քաղաքի այլ մասերում էլ կային զուտ հայկական թաղեր, բայց Բերդի թաղը համարվում էր ազգային բոլոր տեսակի ազատ գործունեության վայր՝ կենտրոնատեղի: Բերդ բարձրանալու միակ ճանապարհը այդ թաղից էր: Մեծահասակ դպրոցական տղաները այդտեղ էին բարձրանում ու խաղեր էին կազմակերպում: Մեծահասակներն ու երիտասարդները այնտեղ զենքի գաղտնի վարժություններ էին անում: Այսպիսով, բերդը համարվում էր հայոց մենաշնորհը: Հայերը հպարտանում էին այդ բանով»:* ԿԱԹ, ֆոնդ թիվ 509: Տե՛ս Ի.Է.Ավագյան, Ծննդավայրիցս դեպի Տեր-Զոր, Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները, Գյումրի, Էլդորադո, 2004, էջ 56, տողատակ 2:

71. Ըստ Արմատական բառարանի.*«Բանջար՝* Մորթմանը համեմատում է թրք. panjar «ճակնդեղ» բառի հետ: Պատկանեանը համեմատում է թրք. banjar «մոլոշ, բանջարեղէն, բոյս», Յ.քհ.Հիւնքեարպ էյէնտեանը ստուգաբանում է panjar «ճակնդեղ» բառից փոխ առնուած և ընդհանրացած: Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 409: Տե՛ս Ի.Է.Ավագյան, Ծննդավայրիցս դեպի Տեր-Զոր, Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները, էջ 14: Ի.Է.Ավագյան, Հուշեր անցյալից, Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, էջ 17, 46:

72. Վան քաղաք Արմ. Հայաստանում, Վանա լճի արլ. ափին, Պարսկաստան տանող առևտրական ճանապարհին: Վանի թագավորության մայրաքաղաքն էր, հիմնել է Սարդուրի I-ը /Ք.ա. 835- 825/: Օսմանյան կայսրությանն է անցել XVIդ. առաջին կեսին՝ դառնալով համանուն էյալեթի /հետագայում վիլայեթ/ կենտրոնը: Վան քաղաքը

բաղկացած էր երկու մասից՝ բուն քաղաք կամ Քաղաքամեջ և Այգեստան, որն իր հերթին բաժանվում էր Հայկավանք, Շամիրամ, Սուրբ Հակոբ, Կլոր դար, Նորաշեն, Արարք, Հայնկույսներ թաղերի: Թաղամաս էր համարվում նաև Ակոբի /թուրք. Ակքյոփրյու/ գյուղը: Վանի նահանգը կազմավորվել է Թուրքիայի և Պարսկաստանի միջև 1555-ի Հայաստանի բաժանման մասին պայմանագրից հետո: XXդ. սկզբին Վ. ն-ի տարածքը 39300կմ քառ. էր/այլ տվյալներով՝ 316000կմ քառ./: 1913-ին բաղկացած էր երկու գավառից՝Վանի և Հաքյարիի: XIXդ. վերջին քառորդին այն Արմ. Հայաստանի առավել հայաշատ նահանգներից էր: 1878-80-ին հայերի թիվը 250հզ. էր /ըստ Վանի առաջնորդարանի՝ 300հզ./, ամբողջ բնակչության 55-60%: 1894-96-ին կոտորվեցին 20հզ., բռնի մահմեդականացվեցին 30հզ., գաղթեցին 20հզ. հայեր: Կ.Պոյսի պատրիարքարանի տվյալներով՝ 1912-ին Վ. ն-ի հայության թիվը 197հզ. էր: 1914-ին 445հզ. բնակիչներից հայեր էին 200հզ. /45%/, քրդեր և եզդիներ 130հզ. /29,5%/, ասորիներ 80հզ. /18%/, թուրքեր 33հզ. /7%/, հրեաներ, կովկասյան լեռնականներ, գնչուներ 2,3-3հզ. /0,5%: Հայ բնակչությունը կենտրոնացած էր Վանի գավառում /185հզ./:1914-ի վիճակագրության տվյալներով՝ Վան քաղաքը ուներ 22470 հայ և 15000 թուրք բնակիչ /ըստ Վանի առաջնորդարանի՝ 34000 հայ, 31000 թուրք/: Հայերը գերազանցապես զբաղվել են արհեստներով և առևտրով /արհեստավորների թիվն անցնում էր 3800-ից/: Հռչակված էին Վ-ի ոսկերիչները, զինագործները, շալագործները, կտավագործները, դարբինները: XXդ. սկզբին Վանում կային 12 եկեղեցիներ՝ տասը՝ գործող /Էջմիածին կամ Ս.Նշան, Ս.Պողոս-Պետրոս, Ս.Տիրամայր, Ս.Վարդան, Ծիրանավոր, Հայկավանից Ս.Աստվածածին, Արարուց Ս.Աստվածածին, Տիրակառույց Ս.Աստվածածին, Հայնկույսներու Ս.Աստվածածին, Ս.Հակոբ/: 1914-ին Վ-ի ութ ազգ. ուս. հաստատությունները՝ Կենտրոնական, Երամյան վարժարաններ, Արարուց /երկսեռ/, Հայկավանքի, Ս. Հակոբի, Նորաշենի, Հայնկույսների /արական/ թաղային, Սանդխտյան օրիորդաց դպրոցներ, ունեին 259 ուսուցիչ և 4500 աշակերտ: Դպրոցներ ունեին նաև բողոքականները /Քաղաքամեջում, կից՝ եկեղեցիով/, Այգեստանում հաստատված ամերիկ, գերմանական և դոմինիկյան միսսիաները: Վանի հայերի մոտ 55%-ը /ավելի քան 12000 մարդ/ գրագետ էր: Այգեստանում էին գտնվում նաև անգլիական, պարսկական, ռուսական և ֆրանսիական հյուպատոսարանները: Երբեմնի բազմամարդ քաղաքը 1935-ի թուրք. մարդահամարի տվյալներով ուներ 9362 թուրք և քուրդ բն.: ՀՀՀ, էջ 426-427, 428-430, 430-431:

73. Արևմտյան Հայաստանում քրդերը բնակվում էին գերազանցապես Վանի, Բիթլիսի ու Դիարբեքիրի վիլայեթներում: Այդ նահանգների որոշ շրջաններում նրանք կազմում էին բնակչության նույնիսկ մեծամասնությունը: Խարբերդի և Էրզրումի վիլայեթներում քրդերի թիվը համեմատաբար քիչ էր, Սվազի վիլայեթում՝ ավելի քիչ, հասնելով հազիվ 29000-ի: Քրդերի ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղերում, իսկ քաղաքներում՝ խիստ աննշան տոկոսը: Գյուղերում նրանք զբաղվում էին անասնապահությամբ ու երկրագործությամբ, իսկ քաղաքներում՝ պաշտոնավարությամբ, մյուլթեզիմությամբ կամ թահսիլդարությամբ, օրամշակությամբ: Ազատ Համբարյան, նշվ. աշխ., էջ 51: 1597-ին Բիթլիսի կառավարիչներից մեկը՝ Շարաֆեդդինը, գրեց քրդական հարստությունների պատմությունը: Նրա գիրքը հրատարակեց ակադեմիկոս Վելիամինով-Զերնովը 1860-62թթ. Ս.Պետերբուրգում, «Շարաֆ-Նամե» վերնագրով: …Բացառությամբ Թեմուրից սերող՝ Վանի և Բիթլիսի իշխող տների, մնացած բոլոր քրդական ցեղերը, որոնք գտնվում են Եփրատի վերոհիշյալ շրջանում և Տիգրիսի ակունքներում, իրենց ծագումը կապում են XVդ. վերջ- XVIդ. սկզբի թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանի հետ: Ինչ վերաբերում է Վանի և Բիթլիսի իշխող տոհմերին, պետք է նշել, որ նրանց քրդական ծագումը վիճելի է, և Շարաֆեդդին-

պատմիչն ավելի շատ հիմքեր ուներ հայկական, քան արաբական կամ քրդական արյուն փնտրելու իր նախնիների երակներում: Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 133-134:

74. Դատվան, Ալթայթուանա, Դադվան, Թայութվանա, Տադվան, Տատվան, Ցորկանք, Ցորկոնք-Գյուղ, ավան, ամրոց, նավահանգիստ, գյուղաքաղաք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Բզնունիք գավ-ում, նոր ժամանակներում՝ Բիթլիսի նահանգի Բիթլիս գավառում, Վանա լճի հր.-արմ. եզրին, Նեմրութով, Գրգուռով և Հայկական Տավրոս լեռնաճյուղերով շրջապատված բլրապատ, գեղատեսիլ հովտում, որն ունի փարթամ բուսականություն և տեղ-տեղ անտառապատ է: Հնում Արծրունի թագավորների ամառանոցն էր: 10-11դդ. ուներ 10-15 հազար բնակիչ և ամուր բերդ /որը նոր ժամանակներում լիովին ավերակ էր/: Վաճառաշահ նավահանգիստ էր: Միջին դդ. ուներ 6 եկեղեցի, որոնցում ընդօրինակվել են մի քանի ձեռագրեր: Դատվանը ոմանք նույնացնում են Պևտինգերյան քարտեզի Դոգնեվան կայանի հետ, որը նույնն են համարում հայասական աղբյուրներում հիշատակած Դուկկամա քաղաքի հետ: Նոր ժամանակներում Դատվանը անշուքացել և վերածվել էր սովորական գյուղի: 20-րդ դ. սկզբին ուներ մոտ 700 տուն՝ մեծագույն մասը հայեր: Զբաղվում էին արհեստներով, առևտրով, ձկնորսությամբ, նավավարությամբ /Դատվանը Բիթլիսի նավահանգիստն էր/, երկրագործությամբ: Նրա հայ բնակիչների մեծ մասը զոհվեց 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, մյուս մասը գաղթեց Արլ. Հայաստան: Դատվանի մոտակայքում կային մի քանի եկեղեցիներ, որոնցից մեկը՝ Ս. Սարգիս, մինչև առաջին համաշխարհային պատերազմը կանգուն էր: Գյուղի արլ. կողմում՝ լճափին, երևում էին Վասպուրականի թագավորների ամառանոցի ավերակները, հս-ում բխում են մի քանի աղբյուրներ, որոնց թվում նաև հանքային: ՀՏԲ, հ. 2, էջ 48: Այս Դատվանը անհրաժեշտ է տարբերել ՀՏԲ-ում հանդիպող Դատվան՝ Բաշխան գյուղից, որը նույնպես գտնվում էր Բիթլիսի նահանգում, Խութի շրջանում, Խութ գյուղի հարավային կողմում և հնում մտնում էր Աղձնիքի Տատիկ գավառի մեջ: Այս գյուղի բնակիչները զբաղվում էին հիմնականում անասնապահությամբ: ՀՏԲ, հ. 2, էջ 48:

75. Աստուածաշունչ Մատեան Հին ու Նոր Կտակարանների, Ելք, գլուխ 16:31-36.«*Իսրայելացիները իրենց կերածի անունը դրեցին ման: Դա գինջի սերմի նման սպիտակ էր ու մեղրախորիսիի համ ուներ*»: Սասունում չորս-հինգ տարին մեկ անգամ անտառների վրա իջնում էր գազպեն /մանանա/: Ամբողջ անտառը՝ հատկապես կաղնու ծառերը, ծածկվում էին սպիտակ շաքարանյութով, ծառերի կանաչ տերևները սպիտակում և ծանրանում էին մանանայից: Մուշի և Սասունի բնակիչները հավաքում էին ծառերի տերևները, լվանում ջրով, ապա կրակի վրա եփելով՝ տեղափոխում տուն: Այդ մասին ականատեսը ասում է, որ գազպեն կաղնի ծառերի վրա էր իջնում, մայիս-հունիս ամիսներին. «*ճիշտ մեղրի պես, ժողովուրդը գնում է ընտանիքով, կտրում թուփերը, լվանում են և ստանում բոպ և կամ չորացնում են և հաց են կազմում գազպեի այդ ալյուրից*»: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 111: Գազպէն «*բոյսերից արտաթորուած քաղցր մի նիւթ է, մանանայ, Ս.Կարապետի հալվա*», ՀՀԲ-ն գրում է նաև գազպի, գազպէ, որոնց համար վկայութիւն չկայ: Պահլավերեն gazpen բառից փոխառեալ, որ բուն նշանակում է «մոշայի մեղր» և կազմուած է gaz «գազ, մոշայ» և pen «մեղր» բառերից: Հր. Աճառյան, ՀԱԲ, հ.Ա, էջ 499:

76. Բոռ, Բոր, Պոռ-Գյուղ Արմ. Հայաստանում, Բիթլիս քաղաքից 5-6 կմ հս-արլ, նույնանուն գետի ձախ կողմում, օդասուն, ջրառատ և բերրի հողերով հարուստ շրջանում: 1880-ական թթ. ուներ 30 տուն, 1914 թ՝ 100 տուն /392 շունչ/ հայ բնակիչ. զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղից հս, լեռնալանջին ծառերի և կանաչի մեջ երևում էր Բոռա Ս. Հովհանի վանքը, հս-արմ կողմում՝ Ս. Հարություն եկեղեցին, որի մոտ դարձյալ Ս. Հարություն անվամբ ավերված եկեղեցին:

Այստեղ են ծնվել միջնադարի հայ նշանավոր նկարիչ և բանաստեղծ Մկրտիչ Նաղաշը /14-15-րդ դդ/, տաղերգու, մատենագիր, երաժիշտ Առաքել Բաղիշեցին /1380-1454/: ՀՏԲ, հ 1, էջ 730: Դատվան՝ գյուղախումբ Արմ. Հայաստանում, Բիթլիսի նահանգի, Բիթլիսի գավառում: Տարածվում էր Բիթլիս և Խլաթ քաղաքների միջև, Դատվան գյուղաքաղաքի շուրջը, Վանա լճի արմ. ափերին: 1909-ին գյուղախումբն ուներ 9 հայաբնակ գյուղ, որոնք միասին ունեին 495 տուն՝ 2252 բնակչով: Այդ գյուղերն էին՝ Ալամեք, Բաբշեն, Դատվան, Խախրև, Ծվար, Կամախ, Մզրե, Պոռ, Օրդափ: ՀՏԲ, հ. 2, էջ 48: Տե՛ս ՀՍՀ, Հ. 9, էջ 382:

77. Բոռա Ս.Հոհան, Ս.Հոհաննես, Ս.Հովհաննես, Նարեկա վանք, Նարեկացու վանք, Պոռա Ս.Հոհան, Պոռա վանք-Վանք Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհում, Բաղեշ /Բիթլիս/ ք-ից հս.-արլ., Բոռ գյուղի մոտ: Եկեղեցին կառուցված է սրբատաշ քարերով, չափերով փոքր է, ուներ գմբեթ: 14-15-րդ դդ եղել է հայ գրչության հայտնի կենտրոններից մեկը, որտեղ ապրել և ստեղծագործել են Մկրտիչ Նաղաշը, Առաքել Բաղիշեցին: Մեզ են հասել այստեղ գրված մի քանի հայերեն ձեռագրեր: Երբեմն անվանվել է նաև Նարեկա վանք կամ Նարեկացու վանք. իբր Գրիգոր Նարեկացին ապրել ու ստեղծագործել է այս վանքում: 19-րդ դ. վերջերին վանքն արդեն ավերված ու լքված էր: ՀՏԲ, հ 1, էջ 730:

78. 20-դ սկզբին Արևմտյան Հայաստանին դեռևս բնորոշ էր նահապետական ընտանիքներով բնակվելը: Հ.Մ.Պողոսյանը իր աշխատությունում գրում է, որ սասունցիները նույնպես ապրում էին նահապետական գերդաստաններով, տան հարկի տակ ապրում էին 70-80 հոգի, ապա բերում է 1906-ին Բոստոնում հրատարակված «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթից մի հատված, ըստ որի՝ ընտանիքի անդամները կառավարվում էին. *«Ամենայն արդարությամբ, առանց գրկանքի: Սասնցի հարսներ ամոթ են համարում և մեղք պան բաժանման պատճառ դառնալ. ուստի պարկեշտ և ազնիվ հնազանդվում են պանտիրուհուն»:* Հարկ է նկատել, որ ճաշից բացակայողների թիվը այսպիսի ընտանիքներում կարողանում էին որոշել գդալները համրելով: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 96-97:

79. Իսլամը խարսխված է հինգ հենասյուների վրա, որոնք արտահայտում են Իսլամի բուն էությունը և նպատակաուղղվածությունը: Առաջին հիմնասյունը միաստվածության սկզբունքի հաստատումն է, որը ելակետային և անկյունաքարային է իսլամի ուսմունքի և համակարգի մեջ: Երկրորդ հիմնասյունը աղոթքն է՝ սալաթ /հգն. սալավաթ/ [salat կամ namaz]: Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 31: Ըստ ղուրանի՝ ուրբաթ օրվա կեսօրի աղոթքը շաբաթվա ամենակարևոր հաղորդակցման աղոթքն է, համաձայն որի, պահանջվում էր, որպեսզի այդ ժամին դադարեցվի ամեն տեսակի աշխատանք: Աղոթքի կանչի երաժշտությունը շարադրել է Մուհամմեդը: Մզկիթը չունի ո՛չ երաժշտական գործիքներ, ո՛չ երգչախումբ, բայց ինչպիսին էլ լինի գործիքի արժանիքը, սրա արձակած երաժշտությունը անփոփոխ միատոն է, տանջալից և ծայրահեղ տխուր: Գոյություն ունի արաբական երրաժշտական գործիքավորում: Մուսուլմանն իր աղոթքն արտասանում է՝ անկախ գտնվելու վայրից: Անկախ իր սեռից՝ չափահաս հավատացյալը պարտավոր է այս ծիսակատարությունը իրականացնելու օրական հինգ անգամ /շիաների մոտ՝ օրական երեք անգամ/ և նշված ժամերին. առավոտյան, կեսօրին, կեսօրից հետո, երեկոյան՝ արևը մայր մտնելուց հետո և գիշերվա առաջին կեսին: Մինարեթներից ազդարարվում է աղոթքի կանչը, որը հրավիրում է հազարավոր հավատացյալների՝ դադարեցնելու ամեն տեսակի աշխատանք և սովորական զբաղվածություն՝ աղոթելու համար: Որոշ մուսուլմաններ նախընտրում են մեկնել մզկիթ, մյուսները՝ կարտասանեն իրենց աղոթքը որտեղ պատահի… Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 124-125:

80. Քաղաքի չորս թաղամասերն իրար էին կապում 27 միակամար կամուրջներ: ՀՏԲ, հ.1, էջ 685-686:

81. Տե՛ս Համակենտրոնացման ճամբարներ տեղահանված հայերի, ՀՀՀ, էջ 112 կամ Армянский вопрос, с. 159, 211. См. История Второй мировой войны 1939-1945, в 12-ти томах, Институт Военной истории Министерства обороны СССР, Институт Марксизма-Ленинизма при ЦК КПСС, Институт Всеобщей истории АН СССР, Институт Истории СССР АН СССР, Ордена Трудового Красного Знамени Военное издательство Министерства обороны СССР, т. 3, М., 1974, с. 206, т. 6, М., 1976, с. 434, т. 10, с.56, 68, 79, 292-293, 493-496; См. Кто был кто в Великой отечественной войне 1941-1945, Люди. События. Факты, Справочник, под ред. О.А. Ржешевского, Институт “Открытое общество”Мегапроект “Пушкинская библиотека”, М., Изд. “Республика”, 2000, см. фото с. 299.

82. Ջոջ՝ մեծ, հին, դարևոր: Սեյլան, Սասուն, էջ 253:

83. Լամուկ՝ քուրդ երիտասարդ: Սեյլան, Սասուն, էջ 252:

84. Բնագրում՝ թիվ 13 տետր, Մ.Ղազարյանը գրում է Շեֆ մամի գերեզման-դամբարան:

85. Սևագրում վերապրողն օգտագործում է «բազմացել»:

86. Տեկանցը Բսանաց գավառը դնում է Սղերդի սանջակի մեջ և գտնում է, որ այնտեղ ապրում էին 8814 բնակիչ, որից հայեր էին 5836-ը, իսկ քրդեր՝ 2978-ը: Այդ տվյալները ապացուցում են, որ Մուշի և Բաղեշի սանջակներում ապրող բնակիչների մեծ մասը հայեր էին: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 109:

87. Մինչև XIX դարի 60-ական թթ. Մուշի դաշտի հարավային շրջանները գտնվում էին Դիարբեքիրի /Ամիդ/ վիլայեթի մեջ, իսկ Մուշում նստում էր թուրքական փաշան: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 99:

88. Ամենաանտանելին այն էր, որ 45-ից բարձր տարիք ունեցող արու բնակիչները պետք է շալակով Մուշից մինչև Հասան Ղալե, Քեփրի Քյոյ, տաս օրվա ճանապարհ անցնելով, պարեն փոխադրեին թուրքական բանակի համար: Թուրքերը այդ ջոկատներն անվանում էին *համալ թաբուրի* /շալակով փոխադրություն կատարող վաշտեր/: Հայ գյուղացիներից կազմված շալակավորների այդ քարավանները դեպի ռազմաճակատ են քշվել ծեծի և խարազանների ուժով… Ականատեսը գրում էր, որ նրանցից *«ճամբան մեռնողներ եղան, իսկ մեծ մասը կը վերադառնար հյուծված և հիվանդ»*: Սակայն սկսած 1915-ի փետրվարից՝ թուրքական իշխանությունների հայաջինջ գործունեության հետևանքով շալակավորները *«սկսան անհետանալ նախ՝ անհայտապես ու ապա անհետ կորչիլ խումբերով»*: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 307-308: Տե՛ս Магда Нейман, Армяне, Краткий очерк их истории и современного положения “Литературная Армения”(Приложение), Ер., 1990, с.115.

89. ՀՏԲ-ում հանդիպում ենք «Կասրիկ» անվանումը կրող չորս բնակավայրի: Երկուսը՝ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգում, Հեքյարի գավառի Բաշկալե գավառակում և Վանի գավառի Խոշաբի գավառակում, երրորդը՝ Պարսկաստանի Սալմաստ գավառում և չորրորդը, որի մասին հիշատակում է հեղինակը, Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, Սղերդ քաղաքից մոտ 13 կմ հր, Բիթլիսի գետի միջին հոսանքի շրջանում, լեռնալանջի վրա: Գյուղից արմ. անցնում է գյուղամիջյան ճանապարհ: Նշանակված է Կովկասի 5-վերստանոց քարտեզում: ՀՏԲ, հ. 2, էջ 963:

90. Էմմա Սրապիոնի Վարդանյանը այժմ էլ *միլամով* է բուժում շատ հիվանդություններ: Միլամի բաղադրատոմսը ժառանգել է 1926-ի հայրենադարձության ժամանակ՝ ընտանիքով Կ.Պոլսից եկած սկեսրայրի եղբորից՝ Վահան Հարությունի Տերտեր-

յանից: Բաղադրատոմսը հետևյալն է՝ հավաջիվայի /խարի- алкана-alkanna tausch/ արմատը /20սմ/ կտրատել քսան մասի, ավելացնել երկու դեսերտի գդալ զեյթունի յուղ, 50 գ կարագ, 50-100 գ ակնամոմ, թեյի գդալի ծայրով անարատ մեղր և եփել գոլորշու վրա էմալապատ ամանի մեջ: Զանգվածը միատարր դառնալուց հետո, վերցնել գոլորշու վրայից և լցնել ու պահել ապակյա տարայում: Տե՛ս Ջուլիետտա Հովհաննիսյան, Կանաչ դեղատուփ, Զանգակ- 97, Եր., 2005, էջ 188:

91. Սասունում բժիշկներ չկային: Այնտեղ զարգացած էր հին դարերից եկած ժողովրդական բժշկությունը: Լեռնագագաթների վրա աճող բազմաթիվ ծաղիկներից և խոտաբույսերից նրանք դեղեր էին պատրաստում և բուժում, բնակիչների մոտ եղած, հիվանդությունները: Սասունցիները կռիվների ժամանակ վիրավորվածներին նույնպես բուժում էին ծաղիկներից պատրաստված դեղերով: Սասունում ապրող բնակիչները շատ փորձված էին մարմնի մասերի կոտրվածքները բուժելու մեջ: Ըստ Գ.Սրվարձտյանի.« *Պառավները, որ մեկ-մեկ հիպոկրատես են նախնական բժշկականությամբ, կրակով խարածին, գնդակով զարնվածին, սրով վիրավորվածին, քարով ջախջախածին, զանազան խուրեր և արմատներ, յուրաքանչյուր ցավին ու վերքին զատ-զատ ի գործ կ՚ածեն և զանազան չոր ծաղիկներե, տերևներե և արմատներե փոշիներ ունին թե վերքի և թե ցավի, պես-պես մահլամներ կը շինեն թարախ ու արյուն մաքրելու, ցամաքեցնելու, խոցերը բուժելու*»: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 122-123:

92. Մզկիթը՝ արաբների «masdjid»-ը ծառայում է որպես մուսուլմանական կուլտի շինություն: Տերմինը միջնադարյան լատիներենի «moschet» բառի ժամանակակից կրկնօրինակումն է, որից էլ առաջ եկավ արաբերենի «masdjid»-ը: Մզկիթը նախ և առաջ աղոթքի տուն է: «Աղոթքը» մի բառ է, որին ընտելացած ենք, բայց բառը մեր իմացած իմաստով չի գործածվում: Ծիսական աղոթքը աստվածային երկրպագության մի գործողություն է, որին անպարկեշտ կլինի որևէ բարեփոխություն: Մզկիթում աղոթքը նախագահվում է իմամի կողմից այնպես, որ բոլորը կարողանան նրան տեսնել: Հավատացյալների շարքերը զարգանում են լայնությամբ՝ մինչև նշված կարգով խորքում տեղավորվելը: Փաստորեն, ներկա գտնվողները, իմամի հետ միաժամանակ, նստած թե կանգնած, գետնին խոնարհվելով, կրկնում են աղոթքի նվիրական ֆորմուլան, որն երբեք չի փոխվում: Այսպիսին է մուսուլմանական աղոթքի ընդունված, անփոփոխ ծիսակատարությունը: Այս փաստերը ազդեցություն են գործել նույնիսկ մզկիթի ճարտարապետական պլանի վրա: Հնում սա կառուցվել է կրոնական նպատակներից ելնելով և ընդունել է տարբեր պլաններ, թեպետ այսօր դրանցից գոյություն չունի նույնիսկ մեկ ընդհանուր տեսակ: Շենքը փակված է փակ, կամ էլ պատուհանի բացվածքով, բարձր պատով, որը կատարում է դեկորատիվ դեր, իսկ լուսավորումը հիմնականում ապահովվում է ներսի բակի կողմից: Տարբերվում են թաղի հիմնական /«djami»/ և այսպես կոչված «Մեծ մզկիթներ» կամ «Մզկիթ տաճարներ», որտեղ էլ կատարվում է ուրբաթ օրվա հանդիսավոր աղոթքը՝ «m'mbar»:Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 37-38: Տե՛ս Ն.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 31-32:

93. Մինարեթը ծառայում է հավատացյալներին աղոթքի կանչելու համար: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 59: Մինարե, մինարեթ /արաբերեն մանարա, բառացի՝ փարոս/, մզկիթներին կից կամ շինության հետ ամբողջություն կազմող աշտարակ: Եգիպտոսի, Իրաքի, Իրանի, Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներին բնորոշ են բարձր, դեպի վեր նեղացող, կլոր կամ բազմանկյուն հատակագծով մինարեթները՝ զարդարված աղյուսի ձևավոր շարվածքով, փորագրություններով, ջնարակած խեցեղենով, ցանցկեն պատշգամբների հարկերով: Հատակագծում քառակուսի մինարեները բնորոշ են Սիրիային և Հյուսիսային Աֆրիկայի երկրներին: Թուրքական մինարեները

առանձնանում են բազմանկյուն, բարակ բնով ու սայրաձև ավարտով: ՀՍ Հ, հ. 7, Եր., 1981, էջ 556-557:

94. Մենք համամիտ ենք այն կարծիքին, համաձայն որի՝ ակնհայտ է, որ XXդ. առաջին ցեղասպանության մոդելը, ինչպես նաև կոտորածների ժամանակ ստեղծված համակենտրոնացման ճամբարները իբրև նախատիպ հանդիսացան Երկրորդ համաշխարհայինի ժամանակ գերմանացիների նմանատիպ վայրերում մյուս ազգերի /հրեաներ, գնչուներ և այլն/ նկատմամբ իրագործած սանձարձակությունների համար, չնայած, որոշ պատմաբաններ մերժում են ցեղասպանության մոդելների նմանության հանգամանքը՝ 1915-ի Մեծ եղեռնը անվանելով «դեպքերի հայկական վարկած»: Տե՛ս Ռուբեն Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, 1990, էջ 23-25: Լիպարիտ Ազատեան, Հայ որբերը Մեծ եղեռնի, Գիրք երկրորդ, Լոս Անճելըս, 1999, էջ 11-13: См. Рубен Саакян, Методологические вопросы историографии геноцида армян, Страны и народы Ближнего и Среднего Востока, XVI, НАН РА Институт Востоковедения, Гитутюн, Ер., 1996, с. 151-165. Рубен Сафрастян, К вопросу о методологии сравнительного исследования геноцида армян и геноцида евреев, Страны и народы Ближнего и Среднего Востока, XVIII, НАН РА Институт Востоковедения, Ер. 1999, с.49-54. Vahakn N. Dadrian, The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice, Reprint, Copyright, 1998 by The Yale Journal of International Law, Inc. Summer 1998, Volume 23, Number 2: The genocide of the Armenians by the Turks, Commemoration of 87-th anniversary of the Armenian genocide, Armenian popular movement, Yerevan, 2002. Hikolay Hovhannisyan, The Armenian genoside, “Zangak-97 ”, Press, Yerevan, 2005.

95. Վերապրողը այս պատժաձևի մասին արդեն նախապես գրել է:

96. Սևագիր չորրորդ տետրի այս հատվածում Մ.Ղազարյանը բնութագրում է Սառային և Ճերճիսին, որի հերոսական ընդվզումը ներկայացնում է նշելով, որ այդպես էին փսփսում ճամբարում: Այսպիսով՝ թվում է թե հակասություն է առաջանում հիմնական բովանդակության և այս հատվածի միջև: Մեր կարծիքով վերապրողը այստեղ բերում է այն տեղեկությունները, որոնք լսել է ճամբարում՝ չցանկանալով մոռացության մատնել նաև այդ վարկածը:

97. *Մեճիդյե*՝ քսան դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանուն: *Մեճիդիյե չարեկ*-հինգ դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: *Միմ մեջիդիե*-քսանհինգ դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: *Մեճիդիյե ալթինի*-մեկ լիրա արժեք ունեցող ոսկե դրամի անվանում: *Դուրուշ*՝ թուրքական լիրայի հարյուրերորդ մասը: Турецко-русский словарь, с. 576, 610.

98. Эшелон-ռազմական էշելոն, մարտակարգի երկայնաշարան, զորքերի առ-ջևընթաց երկայնաշարան, փոխադրագնացք /երկաթուղային, ավտոշարանի, օդա-նավաշարանի/ էշելոն, զինվորական էշելոն: Ա.Ս. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 1404:

99. Ըստ սևագիր տետր թիվ 5-ի՝ Մռտեյենց Մանուկի տանը:

100. Իսլամի չորրորդ հիմնասյունը *հաջն* է՝ ուխտագնացությունը Մեքքա: Դա սովորաբար կատարվում է *զու-լ-հիջա* ամսին: Հաջը պարտադիր է այն բոլոր մուսուլմանների համար, որոնց առողջական և ֆինանսական վիճակն ընձեռում է այդ հնարավորությունը: Ուխտագնացը հասնելով Մեքքա, հագնում է հատուկ սպիտակ զգեստ՝ *իհրամ*, կատարում է ծիսային լվացում… Մեքքա ուխտագնացություն կատարողին կոչում են Հաջի, որը հարգալից կոչում է: Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 33:

101. Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ.., էջ 150:

102. Գրականության մեջ այս բառը հանդիպում է նաև այլ ձևերով: Օրինակ՝ Սեյլանի մոտ հանդիպում է *գայմագամ* ձևով: Սեյլան, նշվ. աշխ., էջ 81:

103. Մ. Ղազարյանը Նանե է կոչում Զանոյին:

104. Հայկական առաջին կոտորածների ժամանակ Վանի հայերը, չնայած ծանր կորուստներին, հերոս. ինքնապաշտպանության շնորհիվ՝ հիմնականում փրկվել են: 1896-ի հունիսի 3-ին և հաջորդ օրերին քաղաքում ավերվել ու թալանվել է 1514 տուն, զոհվել 546, առևանգվել 208 մարդ: Հիմնահատակ կործանվել է Հայկավանք թաղը /զոհերի գրեթե կեսը այս թաղից էր/: Վ-ից հեռացած մի քանի հարյուր հայ զինյալ երիտասարդները /գրեթե բոլորը/ զոհվել են թուրք-պարսկ. սահմանագլխին: ՀՀՀ, էջ 427-428: Տե՛ս Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան,նշվ. աշխ.., էջ 21:

105. Բիթլիս համանուն գավառակը ընդգրկում էր Բիթլիս և Տատիկ գետերի հովիտները, ինչպես նաև Մեղրագետի վերին հոսանքի շրջանը: Գավառակի մեջ էին մտնում Բ. քաղաքի շրջակայքը, Դատվանի /Ռահվա/, Անձնվաձորի, Տատիկի, Շատախի /Շատակ/, Բայրկանի, Նահիալի և Վերին Զուխուրի գյուղախմբերը՝ շուրջ 140 գյուղերով: 1895-96-ի հայկակ. կոտորածների ժամանակ գավառակի բոլոր հայաբնակ գյուղերը ենթարկվել են թալանի և կոտորածի, բազմաթիվ հայեր բռնությամբ մահմեդականացվել են: Չնայած կրած կորուստներին, հայերը ընդհուպ մինչև 1915-ը շարունակում էին կազմել բնակչության մեծամասնությունը: Հինգ տասնյակից ավելի գյուղեր գերազանցապես գտնվում էին քաղաքի շրջակայքում, Դատվանի, Տատիկի, Ազնվաձորի գյուղախմբերում: Բազմամարդ էին հատկապես Բաբշենը, Դատվանը, Խախրևը, Խուլթիկը, Կամախը, Կորվու, Հանդը, Մոճկոնեսը, Մուշեղշենը, Պասը, Պոռը, Սակը, Վանիկը: 1915-ին, Մեծ եղեռնի ժամանակ Բ. գավառակի 15 հզ-ի հասնող հայությունը գազանաբար ոչնչացվել է: Փրկված սակավաթիվ հայերը հիմնականում գաղթել են Արլ. Հայաստան, ՀՀՀ, էջ 84:

106. Բաբշեն, Բաբժեն, Գապշեն, Պապշեն, Փափշեն-Գյուղ Արմ. Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սասունի գավ-ի Մոտկանի գվռկ-ում, Բիթլիս քաղաքից հս, Վանա լճի հր.-արմ. ափին, Բիթլիս-Մուշ ճանապարհի վրա: 1880-ական թթ. ուներ 153, 1909-ին՝ 325 հայ բնակիչ. զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, բրուտագործությամբ: Բաբշենցիները հատուկ սեր ունեին երաժշտության նկատմամբ և նվագում էին ազգային տարբեր գործիքներ: Հնում եղել է առևտրական կենտրոն, որի վկայությունը մոտակայքում գտնվող քարաշեն քարավանատունն է /բաբշենու խան/: Գյուղի արմ. կողմում էր գտնվում Ս.Հարություն քարաշեն հոյակապ եկեղեցին, իսկ արլ. կողմում, ուռենու ծառերի տակ գտնվող աղբյուրի մոտ՝ Լուսապտուղ Ս. Սահակ փոքրիկ մատուռը, ուր հաճախում էին աչքացավով տառապողները: Մինչև 1915 թ. Բաբշենում գործում էր նախակրթարան վարժարան: 1898 թ. հոկտեմբերի 20-ին Բաբշենի մոտ հայկական ազատագրական խմբերի առաջնորդ Սերոբ փաշան պարտության մատնեց թուրքական կանոնավոր ուժերին: Բաբշեն անունը սովորաբար կապում են հայոց Արշակունի թագավոր Պապի անվան հետ: Բաբշենցիները կոտորածի ենթարկվեցին Մեծ եղեռնի տարիներին 1915-18 թթ.: ՀՏԲ, հ.1, էջ 529:

107. Կամախ, Գամախ, Քեմախ-Գյուղ Արմ. Հայաստանում, Բիթլիսի նահանգի Բիթլիսի գավառում, Դատվանի գավառակում, Բիթլիս քաղաքից մոտ 8 կմ հս-արլ, Ռահովա սարավանդում, դեպի Մուշ տանող ճանապարհից աջ, ոչ բարձր լեռներով ու բլուրներով պատած գոգահովտում: Զուտ հայաբնակ էր: 20-րդ դ. սկզբներին ուներ 45 տուն /ըստ այլ աղբյուրների՝ 60 տուն/՝ 260 բնակչով. զբաղվում էին արհեստագործությամբ և երկրագործությամբ: Եղել է գրչության կենտրոն: Եկեղեցին՝ Քառասուն մանկունք: Գյուղի մոտ գտնվում էր Խաթունակ աղբյուրը: 1895-ին բնակչությունը ջարդվել ու կողոպտվել էր թուրքերի ձեռքով: Ավերվել է 1915-ին: ՀՏԲ, հ.2, էջ 914:

108. Саркисов-ювелир конца 19-начала 20 в., жил в Константинополе, известный в Турции производитель корпусов мужских и женских часов.

109. Սևագիր տետր թիվ 5-ում հեղինակը գրել է.«մազերն էր խուզում», հետո դարձրել է «կտրում»:

110. Ըստ սևագիր տետրեր թիվ 5-ի և թիվ 6-ի ավագ որդու անունը Ահմեդ է, իսկ ըստ մաքրագիր ձեռագրի և մեքենագրի՝ Հասան:

111. Բնագրում՝ «խույս տվեցի»:

112. Մեքենագիր օրինակում 1915-ը Մ.Ղազարյանը դարձրել է 1905 թ.:

113. Գաբանք՝ «խծկանք», նշանակում է.«Տան ճակատի փոքրիկ բացուածքը՝ ձեղունի լուսաւորութեան համար, որ կարող է ապակեպատ լինել կամ ոչ. և որ ձմեռները խծկում են, որպէսզի ձիւն չմտնէ»,-գրում է Ա. Զամինեանը: Գիւղերում կոչւում է գաբանքի: Ռուսները սրա բարեփոխեալ ձևը կոչում են слуховое окно: Նոյն բառի մասին Ս.Մովսիսեան էլ գրում է.«Գաբանք անծանօթ բառը գւռ. գ՝աբ՝անակն է, որ է« գիւղական տների և օդանների երդիկների կափարիչ, որ շինւում է դռան նման տախտակից՝ շրջանակի մեջ անցկացրած» ցերեկը թելով վար քաշելով բաց են անում, գիշերը վեր քաշելով փակում»: Այս մեկնութիւնների համաձայն բառս նոյնանում է թրք. kepenk ձևի հետ, որ է «պատուհանի կամ դռան փեղկ, որ անձրևի և շոգի ժամանակ փակում են»: Քաջունի ևս մեկնում է գաբանակ «տճկ. քէփէնք»: Բայց այս բառը նաև մի ուրիշ աւելի յարմար իմաստ էլ ունի-Պոլսում նշանակում է «հին տների մէջ սանդուխի գլխին շինուած լայն փեղկ, որ գիշերները ծածկելով երկրորդ յարկը առաջինից բաժանում են և որի վրայ անկողին գցելով պառկում էլ են» /միջոց որպէսզի առաջին յարկը մտած գողը նաև երկրորդ յարկը չկարողանայ բարձրանալ/: Այս բառն է, որ Մ.Աբիկեան մեկնում է «վերնադուռ»: Հր.Աճառյանը գրում է.«Բայց թուրքական արմատներով էլ չի կարելի մեկնել բառս. ուստի պէտք է ենթադրել, որ ծագում է հայերեն կափանք «թակարթ, կափարիչ, խուփ» բառից, արմատը կափ «փակել, խփել, որից ունինք կափուլ «թակարթ», կափարիչ ևն: Թուրքերէնից յետ է առնուած հայերէնը և դարձած գաբանք»: Հր.Աճառյան, ՀԱԲ, հ. Ա, էջ 495-496:

114. Կում՝ կավե նեղաբերան երկարուկ ու լայնափոր անոթ ջրի համար: Էդ. Աղայան, հ. 1, էջ 781:

115. Պուտուկ՝ ճաշ եփելու կամ մթերքներ պահելու նեղաբերան երկկանթ կավե անոթ, կճում: Պղնձից պատրաստված նույն ձևի անոթ: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ 2, էջ 1235:

116. Ծաղիկ՝ Variola vera-Оспа натуральная-острая инфекционная болезнь, характеризующаяся общей интоксикацией, лихорадкой и пустуло-популезной сыпью. Источником инфекции является больной человек, начиная с первых дней болезни и до отпадания корок. Передача возбудителя происходит в основном воздушно-капельным путем, однако заражение возможно воздушно-пылевым путем. Натуральная оспа была широко распространена в странах Азии, Африки, Южной Америки. В СССР оспа ликвидирована с 1937г. В настоящее время оспа ликвидирована во всем мире. Возбудитель натуральной оспы относится к вирусам группы оспы. Казанцев А.П., Матковский В.С., Справочник по инфекционным болезням, М., Медицина, 1986, с. 179-182.

117. Մեքենագրված տեքստում «փոլիս» բառը փոխարինել ենք «չավուշ» բառով, որն համապատասխանում է բովանդակությանը:

118. Ղուրանը հստակորեն հայտարարում է, որ տղամարդը կնոջից բարձր է: Նա կնոջը խրատում է ենթարկվել ամուսնուն, իսկ տղամարդուն հորդորում է ծեծել կանանց և ուղարկել իրենց անկողինը, եթե իրենց վատ են պահում կամ էլ չեն ենթարկվում…

Վաղ մանկությունից աղջիկները սովորում են հնազանդվել: Տղան կարող է հարգել միայն այն կնոջը, որը պատկանում է իր ընտանիքին: Իսկ ընտանիքից դուրս՝ նա կատի բոլոր մյուս կանանց, բացառությամբ նրանից, ում հետ պետք է ամուսնանա: Մուսուլմանի համար չքողված կինը տղամարդուն հեշտությամբ հանձնվող էակ է, հետևաբար նա կլինի ատելության առարկա: Արու մուսուլմանը հարգում է միայն մայրերին ու տարեց կանանց: Ամբողջ մանկության ընթացքում նրան սովորեցնում են, որ կինը գոյություն ունի միայն ծառայության և արուին հաճույք պատճառելու համար: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 117:

119. Սումաղ՝ Rhus coriaria, сумах, բուսբ. կոծոխուր, ծոր, զրիշկ: Ա.Ս. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 1199: Турецко-русский словарь, с. 784.

120. Թիվ 6 սևագիր տետրում Մ.Ղազարյանը շարունակում է.«Ինձ հետ էր մեր Արաբ շունը»:

121. Թիվ 6 սևագիր տետրում գրված «ասքյարների» բառը ըստ իմաստի փոխարինում ենք «նրանցով»:

122. 1914-ի վերջերին Սարիղամիշի մոտ թուրքական բանակի խայտառակ պարտությունից հետո, զինվորների մեջ սկսվեց մասսայական դասալքությունը: Փախչում էին բոլոր ազգերի ներկայացուցիչները, որոնց գնդակահարելու սպառնալիքով պատերազմի դաշտ էին քշել երիտթուրքերը: Կառավարությունը չէր կարող այս փաստի կողքով անցնել և սկսեց դիմել ամենախիստ միջոցների… Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 307:

123. Հ.Մ.Պողոսյանը գրում է.«…Պետրոս Կուրավցին, որը Մուշի առաջնորդը և ս. Կարապետ վանքի վանահայրն էր: Նրա ժամանակ քրդական Հարսնանցի աշիրեթի Ալեդին տան ներկայացուցիչների հետ միասին սկսեցին ավելի հարստահարել և ճնշել Մշո դաշտի հայ հատվածին… Մատենադարանում գտնվող Կարապետ վարդապետ Լուսարյանի «Պատմութիւն սրբոյ Հովհաննու Կարապետի և հաղորդութիւնք վանահարց ուխտին Տարօնոյ սուրբ Կարապետի Մշոյ» աշխատության մեջ հետաքրքրական փաստեր կան Պետրոս Կուրավցու մասին, որի ժամանակ «Մշո աշխարհը կը կառավարվեր Ալետին պեկի տուն ըսված թուրք միապետական փաշաներով. Հասանանցի աշիրեթ մեկ կողմեն և Ալետին պեկի տուն մյուս կողմեն, լեցվան Մշո դաշտը»: Թուրք միապետական փաշաներ արտահայտությունը, անկասկած, ասում է այն մասին, որ Ալեդին տան փաշաները իսլամը ընդունելուց հետո իրենց թուրքեր էին համարում: Մուշ քաղաքում կային այդպիսի քուրդ և հայ ընտանիքներ էլ…»: Հ.Մ.Պողոսյան, նշված աշխ., էջ 35-36: Միհրան Ղազարյանի հուշերից երևում է, որ Հարսնցոյ աշիրեթը բավականին հզոր է եղել նաև Բիթլիս քաղաքում:

124. *Միրզա*՝ «Ամիր զադե» /իշխանազուն/ բառի աղավաղված ձևն է: Երբ այն դրվում է անունից հետո՝ նշանակում է «տեր», «իշխան», «արքայազն», իսկ երբ հիշվում է անունից առաջ՝ նշանակում է «դպիր», «գրագիր»: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 153:

125. Շիա և սուննի՝ Իսլամի երկու ուղղություններն են [առաջացել են VII-VIIIդդ.]: Առաջինը իր դրույթները հիմնում է Մուհամմադ մարգարեի ընտանիքի բացառիկ հեղինակության վրա: Շիաները օրինական խալիֆներ են համարում միայն Մուհամմադի ազգական չորրորդ խալիֆա Ալիին [Մուհամեդի հորեղբորորդուն և փեսային] և նրա ժառանգ-իմամներին: [Չեն ընդունում սուննիների մարգարեներ Աբու Բեքիրին, Օմարին և Օսմանին]: Մինչդեռ ուղղադավան սուննիները ընդունում են նաև մարգարեի հետևորդների վկայությունները [այսինքն՝ Մուհամեդի ճառերը կամ նրա մասին եղած պատմվածքները պարունակող գրքերի՝ սուննի սրբությունը]: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 153: Տե՛ս Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 37-40, Ահարոն

Կայայան, նշվ. աշխ., էջ 40-43, Ազատ Համբարյան, նշվ. աշխ., էջ 58, տողատակ 12:

126. Կառավարության վարած քաղաքականության հետևանքով՝ Արևմտյան Հայաստանում նկատելի արագությամբ մեծացավ թուրք բնակչության թիվը: Չնայած դրան, Արևմտյան Հայաստանում իրենց քանակով թուրքերը կազմում էին ազգաբնակչության երրորդ խոշոր զանգվածը: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը նշում էր, որ Առաջին համաշխարհայինի նախօրյակին հայկական վեց վիլայեթներում ապրում էր 666000 թուրք, իսկ Պ.Ի.Ավերյանովը այդ թիվը հասցնում է 888000… Երկրի որոշ շրջաններում նրանք հանդիսանում էին բնակչության մեծամասնությունը /Սվազի վիլայեթում, Էրզրումի, Երզնկայի, Դերջանի, Բաբերդի և այլ գավառներում/, իսկ այլ շրջաններում՝ փոքրամասնությունը /Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթներում, Վանի վիլայեթի մի շարք վայրերում/: Արևմտյան Հայաստանում թուրքերի մեծ մասը բնակվում էր գյուղերում և զբաղվում էր երկրագործությամբ և անասնապահությամբ, իսկ փոքր մասը՝ քաղաքներում և զբաղվում պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ, մյուլթեզիմությամբ, վաճառականությամբ, արհեստներով, օրամշակությամբ: Ազատ Համբարյան, նշվ. աշխ., էջ 53-54: Գէորգ Մեսրոպը գրում է, որ ըստ թուրք կառավարության 1880-ական թթ. կազմած վիճակագրությունների. «*1880-ին իր կազմած վիճակագրութեամբ Փոքր Ասիայի 9 վիլայէթներուն մէջ /Վան, Էրզրում, Տրապիզոն, Սվազ, Պիթլիս, Խարբերդ, Տիարպէքիր, Հալէպ, Ատանա/ կային 4,629,375 բնակիչ, որուն 3,619,625 հոգին մահմեդական /78%/, 726,750 հոգին հայ /16%/, 283,000 հոգին ուրիշ քրիստոնեայ /6%/: Իսկ 1891-94-ի հրապարակութեամբ, Վիթալ Քինէի /Vital Cuinet/ գործին մէջ յիշեալ ինը նահանգներու բնակիչները կը ներկայացուին հետեւեալ պատկերով. Ընդհանուր ազգաբնակչութիւն՝ 5,924,125, որուն 4,453,250 մահմեդական /76%/, 838,125 հայ /14%/, 632,750 ուրիշ քրիստոնեաներ /10%/*»: Նշվ. աշխ., էջ 51-52:

127. Արևմտյան Հայաստանի քրդերը չունեին միասնական կրոն: Նրանց ճնշող մեծամասնությունը մահմեդականներ էին, ստորաբաժանվելով սունների /1.475.000/ և շիա /25.000/ ուղղությունների, իսկ մյուս մասն էլ ղզզլբաշներ /200.000/ և եզդիներ /40.000/ էին: Չտանելով թուրքական իշխանությունների բռնությունները, եզդիները փորձում էին հավատափոխվել, սակայն ձգտում էին ընդունել ոչ այնքան իսլամ, որքան քրիստոնեություն, մասնավորապես ուղղափառություն, կամենալով անցնել Ռուսաստանի հովանավորության տակ: Ուշագրավ է, որ բացի եզդիներից, թուրքական բռնություններից ազատվելու համար դավանափոխության փորձեր էին անում քրդական այլ զանգվածներ: Այսպես. 1901 թ. Դերսիմի ղզզլբաշները ներկայացուցիչներ ուղարկեցին Բիթլիս և Մուշ, պարզելու համար այստեղի հայերի ուղղափառություն ընդունելու հարցը: Եթե իմանային, որ հայերն արդեն դարձել են ուղղափառ, ապա իրենք ևս պետք է հետևեին նրանց օրինակին: Ազատ Համբարյան, նշվ. աշխ., էջ 52, 58 տողատակ 11:

128. Ձեռագրի այս հատվածում «արաբ դասալիքներ» արտահայտության փոխարեն վերապրողն օգտագործում է «արաբ փախստականներ» արտահայտությունը:

129. 1000 քիսա /50000 ռուպլի/՝ մեկնաբանում է Սեյլանը իր «Սասուն» աշխատությունում, էջ 94:

130. Զապիթ /աստիճանավոր/՝ մեկնաբանում է Սեյլանը իր «Սասուն» աշխատությունում, էջ 83: Հանդիպում է նաև «զապիթիեներ» ձևով: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 79:

131. Առաջին սպանությունը բերված է ըստ մաքրագիր ձեռագրի և մեքենագրի, իսկ երկրորդը՝ ըստ սևագիր տետր թիվ 6-ի: Այս հատվածների նմանությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ կանայք մի քանի անգամ են այս ձևով

վրեժխնդիր եղել, իսկ վերապրողի հիշողության մեջ մնացել են այս երկու դեպքերը:

132. Բաբշենի կռիվ 1898, տեղի է ունեցել հոկտեմբերի 20-ին Աղբյուր Սերոբի խմբի և թուրք. զինվորների միջև: Բիթլիսից ոչ հեռու Բաբշեն գյուղում գտնվելիս՝ ֆիդայիների խումբը /թվով 14, այլ տվյալներով 16 հոգի/ մատնությամբ պաշարվել է թուրք. զինվորների կողմից: Սկսվել է անհավասար մարտը: Ֆիդայիները դիրքեր են գրավել գյուղի դիմացի բլուրների վրա և կազմակերպված դիմադրել: Թուրքերին միացել են շրջակա գյուղերի քրդերը և Բիթլիսի խուժանը, գործի են դրել նաև թնդանոթ: Կռիվը տևել է մինչև ուշ երեկո, թշնամին կորցրել է 70 մարդ: Ֆիդայիները լեռան հակառակ կողմով հեռացել են: Բաբշենի կռվից հետո Սերոբը հեռացել է Խլաթից, որովհետև թուրք. կառավարությունը ամենուրեք հետապնդել է նրան, և այդ պատրվակով սրի ու ավերածության ենթարկել հայկական գյուղերը: ՀՀՀ, էջ 71:

133. Հ.Մ.Պողոսյանը գրում է ցեղապետական՝ աշիրեթական, նշվ. աշխ., էջ 122:

134. *Դիվան* /ուղիղ իմաստով/՝ պետական գործիչների ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ. էջ 151: Տվյալ դեպքում օգտագործված է փոխաբերական իմաստով:

135. Ղուրանի 24-րդ գլխում գրված է.«Եվ ասեք անհավատ կնոջը, որ խոնարհի հայացքն ու համեստ լինի, ցուցադրի միայն արտաքին բարեմասնությունները, որ քողը իջեցնի մինչև կուրծքը, բարեմասնությունները ցույց տա միայն ամուսնուն և մտերիմներին, նույնիսկ այն ծառաներին, որոնք զրկված են իրենց առնականությունից /օրինակ ներքինիներին/»: Նա հավասարապես պարզ է դարձնում, որ սեռական գործողությունը ունի միայն արական և միակողմանի բնույթ: Ուրեմն ստացվում է, որ մարդ էակը միայն տղամարդն է: Իսկ կինը պատկանում է մի դասակարգի, որի մարդկային չափանիշը մնում է երկիմաստ և անորոշ: Կինը ճանաչված է միայն սեռական գործողության համար: Իր էությամբ նա հող է, կարող են նրան ցանել և նա կծնի: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 117:

136. Լիպարիտ Ազատեանը գրում է.«*Հայ որբերու իսլամացումն ու թրքացումը շատ հեռու է նմանուելէ Դեւշէրմէի /մանկահաւաքի/ եւ Եանիչերիական յատուկ զօրամասի կազմաւորման գաղափարէն: Նմանութիւնը միայն ծիսակատարութեան մէջ է եւ ոչ թէ քաղաքականութեան, այսինքն՝ կը հաստատուէր անուանափոխութիւն, թլփատում եւ երդման արարողութիւն. բայց նպատակը ուրիշ էր: ...Այս պարագային, գլխաւոր նպատակը, հայը թրքացնելով, հայուն ֆիզիքական բնաջնջումն էր նաեւ հոգեկան, հաւատական գետնի վրայ*»: Լիպարիտ Ազատեան, նշվ. աշխ., Գիրք երկրորդ, էջ 17:

137. Մուհամմեդը Մեքքան դարձրեց մուսուլմանական կրոնի կենտրոն: Ուխտագնացության մեկնելով այնտեղ՝ նա ուսումնասիրեց այդ ծիսակատարության կատարման եղանակը: Նրա օրինակին հետևեցին աշակերտները: «Hadj»-ը իրականացնելու համար պետք է առկա լինեն հետևյալ պայմանները, անպայման լինի մուսուլման, գիտակից, ազատ և պատասխանատու, լինել ողջամիտ և մտավոր կարողությամբ օժտված, ունենալ ֆիզիկական և նյութական հնարավորություններ: Կինը պետք է ուղեկցվի մոտ ազգականի կողմից: Ամուսինը չի կարող կնոջն արգելք հանդիսանալ, հակառակ դեպքում՝ կինը կարող է հաշվի չառնել ամուսնուն: Սրբագործվելու համար ուխտագնացը հնազանդվում է 10 արգելքների. արգելվում է հագնել կար ունեցող շորեր: Թույլատրվում է միայն մահուդե սպիտակ շոր /վերևի համար՝«izar», ներքևի համար «rida»/ միայն այն պայմանով, որ բաց մնան կրունկներն ու մատները: Կանանց համար ոչ մի հատուկ հագուստ չի նախատեսված, պարտադիր է փակ պահել հատկապես ձեռքերն ու դեմքը: Տղամարդկանց արգելվում է զարդեր կրել և գլուխը ծածկել:

Թույլատրվում է լվացվել, բայց օծանելիք չցանել: Արգելվում է եղունգները կտրելը: Արգելվում է երեքից ավելի մազ կամ աղվամազ հանելը: Սափրվելը, մազերը կտրելը ընդունվում է միայն որոշակի հիվանդությունների կամ մակաբույծներից ազատվելու դեպքում: Բայց որպես փրկագին՝ հարկադրվում է կատարել որևէ կենդանու զոհաբերություն: Ուխտագնացության ընթացքում արգելվում է սեռական հարաբերությունն ու սիրախաղը: Թույլատրվում է ձկնորսությունը: Արգելվում է երկնային կենդանիների, բացառությամբ վտանգավորների, որսը: Սուրբ տարածքում արգելվում է ծառերի և կանաչ տնկիների կտրելը: Թույլատրվում է միայն չոր խոտերի քաղհանը: Արգելվում է բռնությունը, վիճաբանությունն ու վեճին միջամտելը: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 129-130:

138. Այն մուսուլմանը, որն ի վիճակի է ուխտագնացության գնալ Մեքքա, ապա այն պետք է անի կյանքում առնվազն մեկ անգամ: Յուրաքանչյուր տարի ուխտագնացության ընթացքում հազարավոր հավատացյալներ հոսում են դեպի Մեքքա… համբերությամբ տանելով շոգը, որը բացարձակ անտանելի է ամռանը: սակայն նրանք տանում են այս ամենը՝ միայն թե արժանանան «hadj»-ի կոչմանը և օգտվեն Աստծո կողմից սուրբ վայրեր հաճախողներին տրված երկնային երախտագիտությունից: Նրանց դիմավորելիս՝ բարեկամներն անպայման համբուրվում են, որպեսզի ձեռք բերեն ուխտագնացի արժանիքների մի մասը: Բայց ուխտագնացությունն ինքնին ոչ մի հոգևոր և բարոյական բարեփոխում չի առաջացնում: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 130-131:

139. Ուխտագնացներն հավաքվում են մուսուլմանական տարեթվի 12-րդ ամսվա սկզբներին: Նրանք ծիսականորեն մաքրվում են, հանում իրենց հին հագուստները և ամբողջ մարմինը ծածկում երկու կտորով: Կանանց հակառակ, նրանք չպետք է ծածկեն իրենց գլուխը: Ուխտագնացության ժամանակ գլուխը չծածկող կինը կպատժվի: Ուխտագնացը պետք է կատարի հետևյալը. մոտենա Կաաբային և նրա շուրջը պտտվի 7 անգամ, համբուրի սև քարը, վազի երկու բլուրների՝ Սաֆայի և Մարվայի արանքով, խմի Զեմզեմ ակունքից, կանգնի տարբեր տեղեր, այցելի Արաֆատ բլուրը՝ Մեքքայից 12 մղոն դեպի արևմուտք, գլաքարեր նետի հրեշ հիշեցնող երեք սյուներին: Նա պետք է կենդանիների զոհաբերություններ կատարի ամսվա 10-րդ օրը՝ Աբրահամի [Դրանով նա հարգանքի տուրք է մատուցում նախահայր Իբրահիմ-Աբրահամին, որը ըստ ավանդության՝ եղել է այդ վայրերում] և նրա որդու հիշատակին: Վերջինս, ըստ ավանդույթի, Իսմայելն էր, ոչ թե Իսահակը: Վերջում ուխտագնացը պետք է վերադառնա Մեդին՝ այցելելու մարգարեի գերեզմանը, որից հետո միայն նա կարող է տուն վերադառնալ: Ահարոն Կայայան, նշվ. աշխ.., էջ 131:

140. Թուրքերն աշխատում էին հարստություն դիզել՝ տիրանալով երկրից արտաքսված մեծահարուստների և բարձրաստիճան պաշտոնատարների ունեցվածքին: «*Նոր տերերը*,- մատնանշում է սուլթանի նախկին գործակալներից Խաջեթլաշեն,- *գտնում էին մեծ մասամբ թաքցրած հարստություններ*»: …Իշխանություններն թուրք բնակչությանն ամեն կերպ հորդորում ու շահագրգռում էին զենք ձեռք բերելու… Զինվում էին նաև լազերը, չերքեզները, գյուրջիները /թուրքացած վրացիները/, մուհաջիրները: Միանգամայն հակառակ պատկեր էր հայկական միջավայրում, նույնիսկ հարուստ հայերը զենքի վրա փող չէին ծախսում: Եթե մահմեդականը զինվում էր հայի վրա հարձակվելու համար, հայը «ինքնապաշտպանության էր պատրաստվում» առանց զենքի: Նա գերադասում էր գնել կահկարասի, ոսկեղեն, այլևայլ զարդեղեններ, իսկ զենք, պաշտպանության միջոց՝ մեծ դժվարությամբ, այն էլ հայ քաղաքական ուժերի հարկադրանքի ներքո: Եվ պատահական չէ, որ երբ երիտթուրքական հեղաշրջումից հետո այդ նույն քաղաքական ու կրոնական ուժերը պահանջեցին զենքերը

հանձնել իշխանություններին, հայերը չընդդիմացան և զենքերը հանձնեցին… Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 10; 21-22:

141. Օշարակ՝ արաբերեն շէրբաթ, քաղցր ու զովացուցիչ ըմպելիք, որ պատրաստում են զանազան պտուղների հյութից:

142. Տնտեսական կյանքի լճացածությունը, մահմեդական կրոնի քարոզած վարքի նորմերը թուրքի մեջ ձևավորել էին ոչինչ չանելու, անբանության, ծուլության պաշտամունք: Օսմանյան թուրքերի միջավայրում դասակարգային բաժանումն արտաքուստ ցցուն չէր: Հպատակ ժողովուրդների համեմատությամբ «բոլոր թուրքերը ազնվականներ էին»: Դա նաև այն պատճառով, որ թուրքերը երբեք չեն ունեցել փակ կաստայի վերածված արտոնյալ ազնվականություն: Թուրք ազնվականը նույնպես իրավազուրկ էր այն առումով, որ ամենաբարձր աստիճանին հասածն անգամ սուլթանի քմահաճույքով մի ակնթարթում կարող էր դառնալ սինլքոր: Օսմանյան հասարակության հոռի բարքերը թուրքին հարկադրում էին մնալ տգեղ, բիրտ, պարծենկոտ, տարրամերժ, նախապաշարմունքներին գերի: «Բնությունը,- գրում է Գոլոբորոդկոն,- թուրքերին օժտել է խելքով և սրտով, սակայն զրկել է ստեղծագործելու կարողությունից ու ճաշակից»… Սակայն այդ ամենը թուրքի արտաքինն էր: Նա արյունռուշտ էր, ստրուկին հատուկ դաժանությամբ ու ատելությամբ: Թուրքի անազատությունը նույնպես արտաքուստ էր: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ., էջ 17-18:

143. Աբ-դաստ՝ ձեռաջուր: Սեյլան, Սասուն, էջ 130-131:

144. Мохаммед, Мухаммед, Магомет (т.е. достойный восхваления) Абул Касим ибн Абдаллах (571-632), основатель названной его именем религии и халифата. Из бедной семьи; разбогател, женившись на богатой вдове, у которой был до этого в услужении. Видимо, под влиянием рассказов об иудейской и христианской религиях на 40 году жизни бросил торговлю и удалился в пустыню, где его размышления, подкрепляемые галлюцинациями, приняли форму божественных откровений. Он с детства был эпилептиком и свои припадки стал принимать за проявления божественного духа. Первыми последователями Мухаммеда были его жена, дочери, зять Али, рабы, приемный сын Сеид и друг Абу Бекр. Родственники отвернулись от него, а простой народ шел за ним толпами. 12 июля 622 г. он бежал из Мекки в Медину- это событие стало началом новой эры и нового летосчитания магометан. Магда Нейман, назв. раб., с.244. Տե՛ս Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 25-57:

145. Սեյլանի մոտ այս բառը հանդիպում է «էշիրեթ» ձևով, նշվ. աշխ., էջ 94: Ազատ Համբարյանը գրում է.«*Քուրդ գյուղացիության կեսից ավելին վարում էր կիսաքոչվորական կյանք և ապրում համարյա բացառապես անասնապահությամբ, իսկ մնացածը՝ զբաղվում էր երկրագործությամբ: Կիսաքոչվորական քրդերը կոչվում էին աշիրեթական, քանզի դեռ պահպանում էին տոհմացեղային կապերը և ունեին որոշ ինքնուրույնություն, իսկ երկրագործ քրդերը՝ ռայաներ: Սրանք արդեն զրկվել էին այդ կապերից և ընկել պետության ու աղաների իշխանության տակ: Ռայա-քրդերը ցրված էին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում, մինչդեռ աշիրեթական-քրդերը ապրում էին որոշակի տարածություններում, հանդիսանալով այդ տարածքների փաստացի տերերը: Քրդական որոշ աշիրեթներ բազմամարդ էին, իսկ մյուսները՝ սակավամարդ*»: Նշվ. աշխ., էջ 52:

146. *Միտնդ*՝ մոլլա, կրոնական ուսուցիչ, նաև մոլլա՝ «տեր», հոգևորականներին տրվող կոչում: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 150,153: Իսլամը պարծենում է Աստծո և մարդու միջնորդ չունենալու համար: Մոլլաները, իմամները և այաթոլլաները իսլամական հոգևորականության անդամներն են, և յուրաքանչյուրը գրավում է մի

առանձնահատուկ տեղ՝ մուսուլմանական հիերարխիայում: Ուլեմաները աստվածաբան են: Նրանք կարդում են և բացատրում են Ղուրանը: Սրանք մեծ հեղինակություն վայելող դասակարգ են… Ամեն ուրբաթ տեղի է ունենում մասսայական աղոթք մոլլայի կան իմամի հոգևոր առաջնորդությամբ: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 126:

147. *Բեկ*-տիտղոս, որ տրվում էր կրտսեր զինվորականներին և մանր ֆեոդալներին: Հաճախ այն դառնում էր հատուկ անունների բաղադրիչ: Բեկերը երկու խմբի էին բաժանվում. անկախ սեփականատեր-բեկեր և ծառայության մեջ գտնվող բեկեր: Առաջինները խոշոր հողատերեր էին և ունեին չնչին ծառայողական պարտականություններ: Պալատական արիստոկրատիան և պաշտոնյաները կազմում էին ծառայության մեջ գտնվող բեկերի երկրորդ խումբը: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 150:

148. Մեկնում է վերապրողը:

149. *Իսլամ* նշանակում է հնազանդություն: Նա պահանջում է մուսուլմաններից հնազանդություն նախ և առաջ Ալլահին, նոր կրոնի բոլոր դոգմաների անշեղ կատարում, ենթակայություն հոգևոր առաջնորդներին՝ իմամներին, աստվածաբան-ուլեմներին… Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 29:

150. Արաբերենում «*քարիմ*» բառն ունի մի քանի նշանակություն՝ առատաձեռն, ողորմած, ազնիվ, մեծահոգի… Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 34:

151 Նիկոլայ Հովհաննիսյանը գրում է.«*Իսլամը դավանողները կոչվում են Մուսուլման: Հայ իրականության մեջ, այդ թվում և միջնադարյան պատմագիտական գրականության մեջ, «իսլամի» փոխարեն շատ հաճախ օգտագործվում է «մահմեդականություն» եզրը՝ կապված նրա ստեղծողի՝ Մուհամմադի անվան հետ: Իսկ այդ կրոնի դավանողը կոչվում է «մահմեդական»: Այս ավանդույթը շարունակվում է ցայսօր: Կարծում ենք, որ երկու անվանումներն էլ հավասարապես կիրառելի են*»: Նշվ. աշխ., էջ 29: Ահարոն Կայայանը այս մասին նշում է.«*Հնում մուսուլմաններին համապատասխանորեն «mahometan» մահմեդական էին անվանում: Բայց Մուհամմեդի կրոնը կոչվում է «իսլամ», որը ինչպես տեսանք, նշանակում է հպատակություն, նրա հետևորդը կոչվում է «մուսուլման», այսինքն՝ հնազանդվող*»: Նշվ. աշխ., էջ 57:

152. Աբդուլ Համիդ II /1842-1918/, թուրք սուլթան 1876-1909-ին: Կառավարման սկզբ. շրջանում ներկայացել է իբրև բարենորոգումների և սահմանադրական կարգի կողմնակից. 1876-ին հռչակել է օսմ. սահմանադրությունը, որի մշակմանը մասնակցել է նաև Գ.Օտյանը: Սակայն 1878-ին Ա.Հ.II-ը արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ, որը հայտնի է «զուլում» անունով, մտցրել խիստ գրաքննություն, արգելել «ազատություն», «Հայաստան» ևն բառերը: Դաժանորեն ճնշել է բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազատագրական շարժումները: Ա.Հ.II-ի օրոք Անգլիան Թուրքիայից գրավել է Կիպրոսը և Եգիպտոսը, Ֆրանսիան՝ Թունիսը, թուրք. լծից ազատագրվել են եվրոպ. մի շարք ժողովուրդներ, Ռուսաստանին են անցել Արմ. Հայաստանի որոշ տարածքներ, այդ թվում՝ Կարսը և Արդահանը: Սան Ստեֆանոյի պայմանագրով /1878/ և Բեռլինի դաշնագրով /1878/ Ա.Հ.II-ը պարտավորվել է բարենորոգումներ անցկացնել Արմ. Հայաստանում: Սակայն հետևել են 1894-96-ի հայկական կոտորածները, որոնց համար նա ստացել է «Կարմիր սուլթան» մականունը: Երիտթուրք. հեղաշրջումից /1908/ հետո հարկադրված վերականգնել է 1876-ի սահմանադրությունը, սակայն 1909-ի մարտի 31-ի հեղաշրջման անհաջող փորձից հետո գահընկեց է արվել և աքսորվել: ՀՀՀ, էջ 7: Տե՛ս Գաբրիել Լազեան, նշվ. աշխ., էջ 61, 76, 79-80, 140-141:

153. Ահարոն Կայայանը գրում է.«Նույնիսկ ոչ մուսուլմանի համար եկեղեցական ոչ մի հավատամք այնքան հաճախակի չի արտասանվել և այնքան հայտնի չի եղել, որքան«*la ilaha illa Allah. Muhammad rasul Allah*» /«Աստված միայն Ալլահն է, Մուհամ-

մեղը նրա մարգարեն է»/ աղոթքը: Ամբողջ աշխարհում, օրական հինգ անգամ միլիոնավոր մուսուլմաններ ծունկ են չոքում՝ արտասանելու հավատամքի այս խոսքերը»: Ահարոն Կայայան, նշվ. աշխ.,. էջ 56: Տե՛ս Ա.Ռ.Գայաեան, նշվ. աշխ.:

154. Սպանությունը՝ ըստ վերը պատմածի, տեղի էր ունեցել գիշերը, սակայն «օր ցերեկով» ասելով՝ վերապրողը հավանաբար ի նկատի ունի, որ սպանության պահին դեռ լույս է եղել, մթնշաղ կամ ճրագալույց:

155. Մ.Ղազարյանը *մաղաք* ասելով ի նկատի ունի կա՛մ մահակը՝ փայտե հաստ գավազան, կա՛մ մախաղը՝ փոքրիկ տոպրակ , որի մեջ լցնում են ուտելիքի պաշար և կապում մեջքից: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ.2, էջ 957:

156. Սեյլանը, նկարագրելով Սասունի Կուս-գետ գյուղի բնակչությանը, գրում է.«Ահա կուսգետցին… Լվացվել, մաքրվել, մազերը սանրել չգիտեն. մանկությունից չխուզված, անհարդար մազերը խճճված, թաղիքի պես պնդացած, գոցում են մեջքն ու աչքերը իբրև տիպար *«դերվիշ»,* նշվ. աշխ., էջ 97:

157. Կանացի կուսության հետ կապված միտքը անդադար հետապնդում է արաբ տղամարդուն, և սա վտանգի է ենթարկում բոլոր այն կանանց, ովքեր կատարել են նվազագույն սխալ: Կասկածելի սեռական կարիքները կնոջը դարձնում են անկարգության և ոչ բանականության խորհրդանիշ, սատանայի հետնորդ: Կնոջ մասին այս կարծիքը հենվում է այն սկզբունքի վրա, ըստ որի կինն օժտված է ամենամեծ սեռական ընդունակությամբ: Անկասկած այս գաղափարը գալիս է Մուհամմեդի կանանց և կենակցուհիների դժբախտ փորձից: Ահարոն Կայայան, նշվ. աշխ.,. էջ 118:

158. Կնոջ եռանդուն ցանկությունը, ինչպես նաև նրա անդիմադրելի հրապուրանքը մրցակցելով Աստծո զորության հետ, նրան գերագույն կարողություն են տալիս՝ տղամարդու վրա ազդելու համար: Եթե թողնեն տղամարդկանց կամավոր հանձնվելու, և եթե չօգնեն նրանց, ապա վերջիններս չեն կարող դիմադրել կանանց և կլքեն Աստծուն: Մի մարոկկացի հեղինակ գրում է, թե.«Մուսուլմանական հասարակության համար գոյություն ունի երկու սպառնալիք. դրսից անհավատը, իսկ ներսից՝ կինը: Սոցիալական սիստեմի ամբողջականությունը կարող է դիտվել որպես մի պաշտպանություն՝ կնոջ սեռական գործողությունների հանդեպ»:Իրականում, սեռական ակտիվության սահմանափակումը ավելի շատ պատճառաբանված է հասարակության պահպանության համար, քան բարոյական տեսանկյունից: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 118:

159. Մուսուլմանը՝ լինի պահպանողական, կամ առաջադեմ, ամուսնությունը դիտում է որպես սոցիալական ամենակարևոր գործոն: Շատ կարևոր է ընտանեկան կյանքի սոցիալական և կրոնական արժեքը: Տղամարդ մուսուլմանը կարող է ունենալ չորս կին, սակայն բազմակնությունը կիրառվում է բնակչության 100-ից 4-ի մոտ: Ղուրանը թույլ է տալիս ամուսնանալ ուրիշ կանանց հետ միայն հատուկ դեպքերում, երբ այրին միջոցներ չունի իր կարիքները հոգալու համար, կամ երբ կինը մտավոր կամ ֆիզիկապես հաշմանդամ է դառնում: Եթե ամուսինը ամուսնացել է մեկից ավելի կանանց հետ, ապա օրինավոր ձևով նրանց պետք է հավասար ընդունի: Կինը տղամարդու հակառակորդն է: Վերջապես թշնամի է դառնում այն կինը, որը չափն անցնում է և հաճախակի է գնում տղամարդու հարկաբաժին: Եթե նա արկածախնդրությամբ զբաղվի, ապա կսերմանի անկարգություն և կհանգեցնի մտքի հեղաշրջման: Իրականում, միայն նրա ներկայությունը ագրեսիա է համարվում: Նա խանգարում է Ալլահի ավանդական կարգ ու կանոնը՝խթանելով տղամարդուն՝ ընկնելու ցանկասիրության մեջ: Ինչ վերաբերում է տղամարդուն՝ նման հանդիպումից նա կկորցնի ամեն ինչ. մտքի խաղաղությունը, ինքնակառավարումը, Ալլահի հավատարմությունը, հասարակական հեղինակությունը: Ահարոն Կայայան, նշվ. աշխ. էջ 119:

160. Բնագրում վերապրողը օգտագործում է «թևադիրներ» բառը:

161. *Թասակ*՝ թասի ձևով առանց շքոցիկի գլխարկ, որ ծածկում է գլխի վերևի մասը: Էդ. Աղայան, հ. 1, էջ 419: Վերապրողը այս իմաստով նաև օգտագործում է թասկալ բառը:

162. Մուշ, Տե՛ս, Ի.Է.Ավագյան, Հուշեր անցյալից /Հայրապետ Տոնոյանի հիշողությունները/, տողատակ 3, էջ 30-31: ՀՀՀ, էջ 343: Հ.Մ.Պողոսյան, Սասունի պատմություն, էջ 107-108:

163. Խնուս, Խնուսիս գավառ և քաղաք Արմ. Հայաստանի Էրզրումի նահանգում, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Հարք գավառում, Արածանիի աջակողմյան Խնուս վտակի ավազանում: XVIդ. երկրորդ կեսին ընկել է թուրք. տիրապետության տակ և կազմել Էրզրումի էյալեթի Խնուս գավառը /համանուն կենտրոնով/: XVI-XVIIIդդ. հվ-ից և Բյուրակնյան /Բինգյոլ/ լ-ներից քրդ. ցեղերի, Հս. Կովկասից լեզգիների ներհոսքից հետո Խ. գավառը վերածվել է կիսանկախ իշխանության /հյուքյումեթություն/՝ ենթարկվելով Բայազետի փաշային: XVIIIդ. 70-ական թթ. Խնուսի և Մանազկերտի բեյերի միջև արյունալի բախումների հետևանքով բազմաթիվ հայկ. գյուղեր հիմնահատակ ավերվել են: Այնուամենայնիվ, XIXդ. սկզբին գավառն ուներ 58 հայկ. գյուղ՝ 21 հզ. հայ բնակչությամբ: 1829-ի ամռանը Խ. գրաված ռուս. զորքերը գավառը վերադարձրել են Օսմ. կայսրությանը, որից հետո հազարավոր հայեր, քրդերի և թուրքերի վրեժխնդրությունից խուսափելով, արտագաղթել են Անդրկովկաս. Արտագաղթից հատկապես խիստ տուժած Թեքման նահիեն /գավառի հս-ում/ բնակեցվել է քրդերով: 1860-ական թթ. այնտեղ հայտնվել են հյուսիսկովկասյան գաղթականներ: Արտագաղթը շարունակվել է նաև դարի երկրորդ կեսին: 1881-ին Խ. բերդաքաղաքում կար 947 հայ բնակիչ: 1895-ի աշնանը Խ. մի շարք գյուղեր ենթարկվել են կոտորածների: XXդ. սկզբին գավառի 33 հայաբնակ բնակավայրեր ունեին 19հզ., 1914-ին՝ 24,5հզ. բնակիչ: Խ. քաղաքի 900 տուն բնակիչներից 325-ը /2163 մարդ/ հայեր էին: Մեծ եղեռնի ժամանակ1915-ի մարտին, Խ- ում և գյուղերում ձեռբակալվել, Էրզրում և Կեսարիա են աքսորվել 25 հայ մտավորականներ: Մայիսի սկզբին ռուս. զորքերը, գրավելով Բուլանիխը, քրդ. ջոկատներին հարկադրել են նահանջել Խնուս, որտեղ նրանք մինչև մայիսի 20-ը ասպատակել են Սայլու /Սարչու/, Կարաչոբան, Դուման, Մժնկերտ, Քաղքիկ և այլ հայկ. գյուղեր: Հատկապես արյունալի դեպքեր են տեղի ունեցել մայիսի 19-ին: Ինքնապաշտպանության դիմաց հայերին որոշ վայրերում աջակցել են խնուսցի թուրքերը, որից անհանգստացած՝ իշխանությունները շուտով ձեռբակալել են հայերին, զինաթափել թուրքերին: Մայիսի վերջին ձերբակալված 600 հայեր ևս աքսորվել են ու ոչնչացվել Էրզրումի ճանապարհին: Մայիսի 20-ին սկսվել է գավառի 37 հայկ. գյուղերի տեղահանությունը: 1700 տուն խնուսցիներից բաղկացած կարավանը տարվել է Գումգում և Վարդո: Հունիսի 11-ին Բասկանի մոտ՝ Քըռու չատ կիրճում նրանց մեծ մասը, այդ թվում 27 նորածիններ, գնդակահարվել են: Փախուստի դիմած 300 կանանց մի քանի օր անց ձերբակալել են և Գունդեմիրի ոստիկանապետ Միրզա Ալիի կարգադրությամբ ջրահեղձ արել Ամարակ լճում: 1916-ի փետր. սկզբին, ռուս. զորքերի կողմից Խ-ի գրավումից առաջ, նահանջող թուրք և քուրդ զինվորականները սրածել են քաղաքում մնացած տասնյակ հայերի /փրկվել է ընդհամենը 6 մարդ/: Խ-ի 27 հայկ. գյուղերի 3322 հայ տներից փրկվել են Կոպալ, Գովանդուկ, Կարաչոբան, Խրմխայա գյուղերի 128 բնակիչներ: 1916-17-ին վերադարձած փոքրաթիվ խնուսցիները 1918-ի փետր. թուրք. հարձակման նախօրյակին, գաղթել են Անդրկովկաս: Մի խումբ խնուսցիներ 1917-ին միացել են Անդրանիկի ջոկատին և աչքի ընկել Զանգեզուրում 1918-ին մղված մարտերում: Այժմ Խ. գավառը /հիմնականում քրդաբնակ/ մտնում է Էրզրումի իլի կազմի մեջ: ՀՀՀ, էջ 170: Տե՛ս Սեյլան, նշվ. աշխ.., էջ 28, 124-125:

164. 1915-ին, Մեծ եղեռնի ժամանակ Վանի նահանգի մի շարք գավառներում / Շատախ, Հայոց ձոր, Արճեշ, Թիմար, Ալջավազ/ հայերը կազմակերպեցին ինքնապաշտպանություն: Ամենաերկարատևն ու արդյունավետը եղավ Վան քաղաքի հայության շուրջ 27-օրյա հերոսամարտը, երբ հայերը ազատագրվեցին թուրք. լծից: Այգեստանում բնակվում էր 20հզ. հայ, Քաղաքամեջում 3հզ.: Այս հատվածները գտնվում էին իրարից 5-6կմ հեռավորության վրա: 1915-ին Վանում կուտակվել էին շրջակա գյուղերից փախած 70հզ. հայ: 1915-ի ապրիլին Ջևդեթ բեյի գլխավորությամբ թուրքերը պաշարեցին Այգեստանը՝ կտրելով կապը Քաղաքամեջի հետ: Ինքնապաշտպանական կռիվները սկսվեցին ապրիլի 7-ին: Մայիսի 6/19/-ին քաղաք մտան ռուս. զորքերը հայ կամավորական խմբերի հետ, իսկ հաջորդ օրն ստեղծվեց Վ-ի նահանգապետությունը՝ Ա.Մանուկյանի գլխավորությամբ: Ինքնապաշտպանության ժամանակ արձակվել էր 15հզ-ից ավելի արկ: Սպանվել 1000 թուրք, մահմեդական ամբոխի թիվը հաշվի չի առնված: Հայերի կորուստը կազմել է 350 խաղաղ բնակիչ և մարտիկներ: Ինքնապաշտպանությունը 150հզ. հայերի հնարավորություն տվեց փրկվել անխուսափելի ոչնչացումից: Սակայն ռուս. զորքի անսպասելի նահանջը /հուլիսին/ քաղաքի բնակչությանը հարկադրել է մեծ կորուստներով գաղթել Արլ. Հայաստան: Վ. մտած թուրք. զորքերը լիովին ավերեցին այն՝ գազանաբար սրի քաշելով գաղթել չկարողացած սակավաթիվ հայերին: Մեծ եղեռնի ժամանակ Վանի նահանգի հայ բնակչության տված 26-28հզ. զոհերին ավելացավ ևս 50 հզ. զոհ՝ գաղթի ճանապարհին: Ռուս. զորքերի կողմից քաղաքը վերագրավելուց հետո, նրա բնակիչների միայն մի փոքր մասն ի վիճակի եղավ վերադառնալ /տեղի կոմիսարության 1917-ի հուլիսին կատարած վիճակագրության համաձայն, Վ-ում ապրում էր ընդամենը 5388 բն./: 1918-ի փետր. թուրք. զորքերի հարձակման ժամանակ հայերը վերջնականապես լքեցին Վանը: Վանի ն-ը լիովին հայաթափ եղավ 1918-ին, երբ այնտեղ վերահաստատված 25հզ. հայեր թուրք. բանակի հարձակման սպառնալիքի տակ կրկին հեռացան: ՀՀՀ, էջ 426-427,428-430, 430-431: Տե՛ս Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, նշվ. աշխ.., էջ 442-444:

165. Մուհամմեդն արգելել էր իր կանանց առանց քողի տանից դուրս գալ: Նրա ցույց տված օրինակը հետագայում օրենքի ուժ ստացավ: Ներկայումս այդ սովորույթը ամենուր միատեսակ չէ. որոշ տեղեր քողը ծածկում է կնոջը գլխից մինչև ոտքերը, իսկ մեկ այլ վայրում՝ թեթևակի միայն գլուխը… Մուհամմեդական աշխարհում քողը կնոջ դրությունը խորհրդանշող բանալիներից մեկն է: Շատ հասարակարգեր քողով ծածկեցին իրենց կանանց, բայց արդիական ժամանակներում դրա կիրառությունը պահպանվել է իսլամական երկրներում, բացառությամբ քրդերից: Քող կրելու խստությունը բոլոր տեղերում նույնը չէ: Որոշ երկրներում կինը կրում է միայն այն, ինչը հայտնի է«իսլամական քող անունով»: Այսինքն, կինը ծածկվում է ոչ թե ամբողջությամբ , այլ միայն երեսն ու մազերը: Նա կրում է շարժումները չխանգարող, նմանապես ոտքերն ու ձեռքերը ծածկող երկար շոր: Քողը կնոջ անճանաչելիությունն է փողոցում: Ահարոն Կայայան, նշվ. աշխ.., էջ 120:

166. Ճևտետ բեյ, թուրքական կառավարության կողմից նշանակվել է Վանի վիլայեթի կուսակալ: Նա աչքի էր ընկնում հայերի նկատմամբ ունեցած ատելությամբ և դաժանությամբ: Կազմակերպել է տեղի հայ բնակչության կոտորածը և Վանի ապստամբության կազմակերպիչներ՝ թուրքական մեճլիսի պատգամավորներ Ա. Վռամյանի /Օնիկ Դերձակյան/ և Իշխանի /Նիկողայոս Միքայելյան/ դավադիր սպանությունները: ՀՀՀ, էջ 428: Армянский вопос, с. 90.

167. Բնագրում հուշագիրը օգտագործում է «բարձրությամբ» բառը, միգուցե ի նկատի ունենալով տեղանքի առանձնահատկությունը:

168. *Շապկանց՝* միայն վերնաշապիկով: Հայ-ռուսերեն բառարան, էջ 511:

169. Սասունցիները ընդհանրապես պանդխտության չէին մեկնում: Սակայն ոմանք մեկնում էին Պելիճե, Այնթափ, Հալեպ՝ աշխատում որպես հացթուխներ, ջրաղացպաններ և զբաղվում էին ջորեպանությամբ: Սասունցիների մոտ մասսայական պանդխտություն չկար, ինչպես այդ գոյություն ուներ Մուշում, Վասպուրականում և այլուր: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 112:

170. *Հաջը* կամուխտագնացությունը նույնպես ավարտվում է տոնակատարությամբ, որը կոչվում է *իդ ալ-ադիա կամ կուրբան-բայրամ:* Դա մուսուլմանական ամենամեծ տոնն է: Այդ օրը ողջ մուսուլմանական աշխարհում կատարվում է զոհաբերություն, մարդիկ չեն աշխատում և վայելում են Ալլահի տված բարիքները՝ փառաբանելով նրան և նրա զորությունը: Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 33: Մ.Ղազարյանի մոտ հանդիպում ենք «Ղուրբան բայրամ» ձևով: Այս բառը «կորբան» ձևով հանդիպում է նաև Աստվածաշնչում.« *Կորբան, այսինքն՝ Աստծուն նվիրված ընծա»: Նոր կտակարան, Մարկոս 7.11:*

171. Իսլամի երրորդ հիմնասյունը *սաումն* է կամ *ուրազան* ծոմը: Ծոմապահությունը պարտադիր է բոլոր օրինապահ մուսուլմանների համար, որի ընթացքում նրանք պետք է ձեռնպահ մնան սնունդ և հեղուկ ընդունելուց, զվարճալիքներից, ընթերցեն Կորան, աղոթեն, մտորեն Ալլահի և նրա ամենամեծը լինելու մասին: Ծոմապահության շարքում գլխավորը ռամադան ամսի ծոմն է, որը տևում է մեկ ամիս և պարտադիր է բոլորի համար, բացի հիվանդներից և ճանապարհորդներից: Սովորաբար ռամադան ամսվա ծոմն ավարտվում է թաթախման տոնով՝ իդ ալ-ֆիտր: Ծոմապահության արգելքների կողքին կան նաև մի շարք արգելքներ, որոնք պարտադիր են տարվա բոլոր օրերին: Իսլամն արգելում է գործածել ալկոհոլային խմիչքներ և խոզի միս, մելեխաղեր, ինչպես նաև վաշխառությունը՝ ռիբա: Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ. էջ 32: Ահարոն Կայայանը գրում է.«Որոշ համառ մուսուլմաններ նույնիսկ թուք կուլ չեն տալիս: Եթե պատահում է այնպես, որ հակառակ իրենց կամքին ընդհատում են ծոմը /օրինակ,եթե ատամները լվալուց մի կաթիլ ջուր է գնում կոկորդը/, ապա դրա համար քավություն խնդրելով պահում է լրացուցիչ ծոմ», նշվ. աշխ.., էջ 128:

172. Եկեղեցական ծոմի համար ընտրվեց Ռամադանի ամիսը: Մուհամմեդի տեսած առաջին հայտնությունը կատարվեց Ռամադանի ժամանակ՝ մ.թ. 610-ին: Մեքքայից դեպի Մեդին մարդկանց հոսքը նույնպես կատարվեց Ռամադանի ամսվա ընթացքում: Մարգարեի համար մարտնչող աշակերտների որոշիչ ճակատամարտը նույնպես կատարվեց այս ամսվա ընթացքում: Պատմական այս կարևոր իրադարձությունների հետևանքով, Ռամադանի ծոմը պատճառ դարձավ աշխարհի մուսուլմաններին՝ հավաքվելու, որն ստեղծեց և ամրացրեց եղբայրության և միասին ապրելու ուժեղ զգացմունքը: Ըստ լուսնային օրացույցի՝ ամեն տարի Ռամադանը գալիս է անցած տարվա համեմատ 10 օր ավելի շուտ: Այն կարող է լինել ձմռանը, երբ օրերը կարճ են և ամռանը, երբ օրերը երկար են: Ծոմը սկսվում է նորալուսնով և տևում է մինչև հաջորդ նորալուսինը: Նյութապես ապահովված հավատացյալի համար ծոմ պահելը այնքան էլ ձանձրալի չէ: Նա ամբողջ օրը քնելով կհանգստանա տանը: Բայց սովորական աշխատողի համար իսկական տառապանքի ապացույց է: Նրան թույլատրվում է ուտել միայն գիշերվա ընթացքում: Մահացություններ ավելի շատ են այդ ամսվա ընթացքում: Ի հայտ են գալիս մեծ քանակությամբ հիվանդություններ, անախորժ կռիվներ՝ ուղեկցված զայրույթի նոպայով: Ռամադանը տարվա ամենադժվար ժամանակահատվածն է մուսուլման հավատացյալների համար: Մեր օրերում ծոմ պահելու կանոններին հետևելը այնքան էլ հեշտ չէ: Պատճառը սա է, որ շատ մուսուլմաններ չեն ձգտում դրան հետևել: Ա.Կայայան, նշվ. աշխ., էջ 128-129:

173. *Սափորի* նման մետաղյակավե ամա՝ հեղուկների համար: Էդ. Աղայան, հ. 2, էջ 1286:

174. *Սաղդ՝* գավառական սենյակի պատի երկայնքով սարքած բարձր տախտակամած՝ քնելու և նստելու համար: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 1267:

175. Բնագրում Մ.Ղազարյանը գրում է «լամաղից» հետո: Միգուցե ի նկատի ունի լամել՝ ծամել, ուտել իմաստը: Լամ՝ լինդ, ծնոտ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.2, էջ 372:

176. Բիթլիսում են ծնվել Վ. Սարոյանի ծնողները, հայ դերասանուհի Զաբելը՝ Մարիամ Կնորոզովան /ծնվ. 1858թ./: ՀՏԲ, հ.1, էջ 686:

177. Բնագրում Մ. Ղազարյանը գրում է «լամազը» կատարելով…

178. Անխմոր հաց: Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 1. էջ 397:

179. Մինչև XIX դ. 60-ական թթ. Մուշի դաշտի հարավային շրջանները գտնվում էին Դիարբեքիրի /Ամիդ/ վիլայեթի մեջ, իսկ Մուշում նստում էր թուրքական փաշան: Հետագայում թուրքական կառավարությունը հայոց պատմական Աղձնիք և Տուրուբերան նահանգներից կազմեց Բիթլիսի վիլայեթը, որի կենտրոնը Բիթլիսն էր: Այն ուներ չորս սանջակ՝ Բաղեշ,Մուշ, Սղերդ, Կենճ: Մուշի սանջակի մեջ էր մտնում Մուշի մի մասը: Վարչական այսպիսի բաժանումների ժամանակ թուրքական կառավարությունը ելնում էր «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունից: Աշխարհագրական տեսակետից միաձույլ Սասունը կառավարությունը բաժանել էր մի քանի մասերի, Խութն ու Մոտկանը մտնում էին Բիթլիսի սանջակի, իսկ Շատախն ու Բռնաշենը՝ Մուշի սանջակի մեջ, Խուլբը, Խիանքը և Տալվորիկը՝ Կենճի մեջ, իսկ Բսանքը, Արձնը և Ռնդուանը՝ Սղերդի մեջ: Վարչական այս բաժանման նպատակը շատ պարզ էր, եթե Սասունից կազմվեր մի սանջակ, ապա այնտեղ հայկական բնակչությունը ճնշող մեծամասնություն կկազմեր, իսկ եթե այն բաժանվում էր չորս մասերի, ապա հայերի թիվը հարաբերական տեսակետից քիչ կլիներ: Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 99:

180. Հավատացյալն աղոթքը սկսում է լվացումով, հետո տեղավորվում է մեքքայական «kaaba»-ի դիմաց և արտասանում ծիսական նախադասություններն արաբերեն լեզվով: Աղոթքն սկսելու համար նա պետք է արտասանի «Allahu akbar»-ը /«Ալլահը մեծ է»/, հետո Ղուրանի Fatiha-ն կամ էլ Ղուրանից այլ հատվածներ: Սովորաբար նա պետք է ծնկաչոք իջնի երկու անգամ և ճակատը հպի գետնին: Սա կոչվում է «rak'ah»: Ամենօրյա հինգ աղոթքների ընթացքում 17 անգամ պետք է իրականացվի «rak'ah»-ը: Կուլտը ընդունելի կդառնա Աստծո կողմից միայն այն դեպքում, որ այն կատարվի մաքուր, համաձայն հաստատված կանոնների, նույնիսկ եթե հավատացյալը չի հասկանում արաբերեն ոչ մի բառ: Անկասկած, այս կուլտը որոշ մուսուլմանների համար աստվածապաշտության արժանահավատ վարժություն է: Բայց մեծամասնության համար միայն մեխանիկական գործողություն է, որը զրկված է բարոյական և հոգևոր բոլոր արժեքներից: Ընդհանրապես կանայք իրենց աղոթքն արտասանում են մզկիթի բաժանված մասում կամ իրենց օջախում: Մուսուլմանական աշխարհի բազմաթիվ մասերում զգալիորեն պակասել է աղոթող մուսուլմանների քանակը: Աղոթքի վերջում հավատացյալը կարող է ասել իր անձնական աղոթքը՝ իր մայրենի լեզվով: Այլ առիթներով, ինչպիսիք են՝ ծնունդը, ամուսնությունը, հուղարկավորությունը, աղոթք արտասանում են տեղական կամ արաբերեն լեզվով: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 125:

181. *Խան՝* տիտղոս, որով մեծարվում էին բարձրաստիճան զինվորականության ներկայացուցիչները, վրաց վալիները և բեկլարբեկերը: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 151:

182. *Կասկար, կասկարա*՝ կաթսայի տակ դրվող եռոտանի: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ 1, էջ 697:

183. *Փողան*՝ հնացած, փողոց, հրապարակ, միջանցք: Էդ Աղայան, նշվ. աշխ., հ. 2, էջ 1530: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում՝ հրապարակ, փողոց, առվակ: Հ. 4, էջ 668:

184. Ծեծած և թեփը հանած ցորեն կամ գարի: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, էջ 197:

185. Սաղմոս բառը առաջացել է յունարէն փսալմոս բառից, որը որպէս վերնագիր օգտագործուել է Հին Կտակարանի յունարէն հին թարգմանութեան մէջ եւ նշանակել է բանաստեղծութիւն կամ հոգեւոր երգ: Սաղմոսները սահմանուած էին երուելու երաշժտութեան ընկերակցութեամբ: Սաղմոսների գիրքը 150 աղօթքներից բաղկացած մի ժողովածու է, որ գործածուել է Հին Իսրայէլում պաշտամունքի ժամանակ: *Աստուածաշունչ, Գիրք սաղմոսաց:*

186. *Մեզար*՝ գոգնոց: Էդ. Աղայանը բացատրում է.«Գավառական բառ է, որ նշանակում է քառակուսի կտոր, չորս անկյունները կարված, մեջը բան լցնելու համար»: Էդ. Աղայան,նշվ. աշխ., հ. 2, էջ 986: Տե՛ս օտար բառերի բառարան:

187. Տե՛ս թասակ:

188. Վերապրողը ի նկատի ունի Աստվածաշնչյան նշանավոր կերպար Հովհաննես Մկրտչի հորը՝ Զաքարիա անունով քահանային, որը կասկածեց ավետաբեր Գաբրիել հրեշտակի ասածին և արդյունքում պապանձվեց մինչև Հովհաննեսի ծնունդյան օրը: Տե՛ս *Աստուածաշունչ, գիրք Հին եւ Նոր Կտակարաններու, Աւետարան ըստ Ղուկասու, գլուխ 1:5-21 խոսք:*

189. Հավանաբար պետք է լինի քոչք ու քենա, ոչ թե քոշք ու քենա:

190. *Բղող*, բղուղ՝ հայկական, պանրի, թթվի մեծ կճուճ: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, 193:

191. *Կարաս*՝ Թրծած կավե մեծ աման հեղուկների, առավելապես գինու համար: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ.1, էջ 702:

192. *Աստուածաշունչ, Ծննդոց. 18-19*:

193. Ն. Հովհաննիսյանը իր «Արաբական երկրների պատմություն» աշխատությունում գրում է.«Կորանը բաղկացած է 114 սուրահներից՝ գլուխներից, որոնք բաժանվում են այաթների՝ ֆրազների կամ խոսքերի և արտահայտությունների»: Սուրահների դասավորությունը կատարվել է ըստ ծավալների, մեծից փոքր: Բացառություն է կազմում միայն առաջին սուրհան, որը կոչվում է ֆաթիհ, այսինքն Բացող կամ Սկիզբ: Ահա այն.«*Հանուն գթառատ, գթասիրտ Ալլահի: Փառք Ալլահին, աշխարհների Տիրոջը գթառատ, գթասիրտ, դատաստանի օրվա թագավորին: Քեզ ենք մենք պաշտում և խնդրում օգնել: Տար մեզ ուղիղ ճանապարհով, նրանց ճանապարհով, ում որ Դու բարերարություն ես արել, բայց ոչ նրանց, ովքեր գտնվում են զայրույթի ներքո, և ոչ մոլորյալների*», հ. I., էջ 34-35:

194. *Լաչակ*՝ հայկական, սպիտակ նուրբ կտոր, որով կանացի գլուխներն են կապում, մասամբ դեմքը: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 515:

195. *Փարչ*՝ գավառական ունկ / բռնակ/ ունեցող կավե կամ պղնձե գավաթ: Էդ. Աղայան, նշվ. աշխ.., հ.2, էջ 1514:

196. Մուսուլմանական քաղաքավարությունը կարծում է, թե կինը կիրապուրի ուզած տղամարդուն: Սրա դեմն առնելու համար հասարակությունը ստեղծում է բաժանված տարածություններ՝ տղամարդու և կնոջ միջև զարգացող հարաբերությունները խանգարելու համար: Ըստ Շարիաթի, երբ տղամարդն ու կինը մենակ են, ապա անպայման կկասկածվեն սեռական կապեր ունենալու մեջ: Պետք է խանգարել

նման իրավիճակները: Սակայն մուսուլմանները, որոնք չեն կարող տիրապետել իրենց սեռամոլությանը, դրա կարիքը նույնիսկ չպետք է ունենան: Սեռերի ֆիզիկական բաժանությունը բնութագրում է մուսուլմանական աշխարհի ամենօրյա կյանքը: Փոխադարձաբար հրապուրված տղամարդն ու կինը կհեռացվեն իրարից: Ուրեմն, իսլամական հասարակությունը խրախուսում է կանանց՝ օջախի ներսում մնալը: Նրանք այնտեղից կարող են դուրս գալ միայն եզակի դեպքերում. տղամարդու կողմից համաձայնեցված թույլտվությամբ միայն կայցելեն մերձավորներին և կգնան գնումներ կատարելու: Իդեալական կլինի, եթե կինն ունենա ֆինանսական մեծ միջոցներ և ծառաներ: Սա նրան թույլ կտա տասնյակ տարիներ մնալու տան ներսում: Սա գոյություն ունեցող ազատությունից զրկելու ամենավատ ձևն է, որը այդպես չի մեկնաբանվում նրանց կողմից… Հաշվարկել են, որ մարդկության բոլոր քաղաքակրթություններից՝ արաբական մուսուլմանական հասարակությունում է անգրագետ կանանց ամենամեծ տոկոսը, դպրոց հաճախող աղջիկների ամենացածր մակարդակը, իսկ ընդհանուր առմամբ՝ աշխատող կանանց ամենափոքր քանակությունը: Ահարոն Կայայան, նշվ. աշխ. էջ 118:

197. *Ղշլաղ*՝ քոչվորների ձմեռանոց: Միրզա Յու. Ներսեսով, նշվ. աշխ., էջ 152:

198. *Դարման*՝ ճար, ճարակ, խնամք, հոգ, դեղ, ուտելիք, ապրուստ: Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 639-640:

199. Խոսքը բույսերի տեղական անվանումների մասին է, որոնց գրական անվանումը վերականգնելը բավականին դժվար է: Մեր կարծիքով՝ քրտնացնելու համար նախատեսված կծու, սպիտակ կռճը կարելի է նույնացնել Երիցուկ սովորականի հետ, որի տեղական անվանումներից են կոկոռչիկը, կուծուռին: Ջուլիետտա Հովհաննիսյան, նշվ. աշխ. էջ 168: Ըստ բնագրի՝ «զարդաչուն» բառը նաև կարելի է կարդալ «զարդաշուն» ձևով:

200. Բնագրում անունը գրված է արաբական տառերով:

201. Երիտթուրքեր՝ հակամիապետական, բուրժուակալվածատիրական, ազգայնամոլական շարժման մասնակիցներ Թուրքիայում, XIXդ. վերջին-XXդ. սկզբին: Առաջին գաղտնի խմբերը առաջացել են Կ.Պոլսում, 1889-92-ին, զինվ. և քաղաքաց. հատուկ ուս. հաստատություններում: Բոլոր խմբերի ընդհանուր գաղափարական ծրագիրն էր 1876-ի սահմանադրության վերականգնումը և սուլթան Աբդուլ Համիդ II-ի տապալումը: XIXդ. վերջին սկսեցին ձևավորվել երիտթուրքերի վտարանդիական կենտրոնները: Կ.Պոլսի կազմակերպությունը, որը կոչվում էր «Միության և առաջադիմության օսմանյան ընկերություն», ուներ իր կանոնադրությունն ու ծրագրային դրույթները, որոնց էությունը հանգում էր երկրի առաջադիմության համար պայքարին, կայսրության բոլոր հպատակների համար հավասարությունն ու ազատությունն ապահովելուն: Նույն գաղափարներն են քարոզել Ժնևի, Փարիզի, Կահիրեի պաշտոնաթերթերը: 1902-ի փետր. Փարիզում տեղի ունեցավ երիտթուրքերի առաջին համաժողովը, որտեղ առաջացան երկու հիմն. խմբավորումներ՝ «Միության և առաջադիմության ընկերությունը»՝ Ահմեդ Ռիզայի գլխավորությամբ, որը կենտր. իշխանության և կայսրության ամբողջականության պահպանման կողմնակից էր, և «Անձնական նախաձեռնության ընկերությունը»՝ Սաբահէդդինի գլխավորությամբ, որը նպատակահարմար էր համարում վարչ. կառուցվածքի զգալի ապակենտրոնացումը և տեղական իշխանություններին լայն լիազորություններով օժտելը: Երիտթուրքերի առաջնորդները դեռևս 1895-ին փորձեցին կապեր հաստատել հայ քաղ. կուսակցությունների հետ, միաժամանակ հայտարարելով, որ չեն պաշտպանում Արմ. Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հայերի պահանջը, քանի որ հանդես են գալիս կայսրության ամբողջ տարածքում ընդհանուր բարենորոգումների օգտին: Այդ

իսկ պատճառով հնչակյան կուսակցությունը հրաժարվեց դաշնակցել: Դաշնակցությունն ու վերակազմյալ հնչակյանները պատրաստ էին փոխզիջման: Սակայն խոր տարաձայնությունների պատճառով բանակցությունները վերակազմյալ հնչակյանների հետ արդյունք չտվեցին: Դաշնակցությունը հանձայնեց 1902-ին մասնակցել երիտթուրքերի առաջին համաժողովին, որտեղ բացահայտվեցին լուրջ տարաձայնություններ կողմերի միջև: Ազգային հարցում երիտթուրքերը հանդես էին գալիս Թուրքիայի ամբողջականության պահպանման օգտին, թուրք. տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին համարում էին օսմանցիներ, մերժում ազգային անկախության ձգտումները, ներքին ինքնավարությունը: Չնայած տարաձայնություններին, երիտթուրքերը ձգտում էին դաշնակցել հայ քաղ. կուսակցությունների հետ: Դաշնակցությունը հանդես եկավ իբրև երիտթուրքերի երկրորդ համաժողովի /Փարիզ, 1907-ի դեկտ./ նախաձեռնող: Նրանց համագործակցությունը կրում էր զուտ մարտավարական բնույթ և ուղղված էր Աբդուլ Համիդի վարչակարգի դեմ: 1908-ի գարնանը երիտթուրք սպաները ապստամբեցին Մակեդոնիայում՝ պահանջելով 1876-ի սահմանադրության վերականգնում: Այդ ապստամբությունը սկիզբն էր 1908-ի երիտթուրքական հեղաշրջման, որի հետևանքով անցան իշխանության գլուխ: Հանդես գալով կայսրության բոլոր ժողովուրդների ազատության, հավասարության, եղբայրության կարգախոսներով՝ իրենց կազմակերպությունը վերածեցին կուսակցության՝ «Միություն և առաջադիմություն» անունով: Մերժելով ոչ թուրք ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, վարեցին մեծապետ., օսմանականության և պանթյուրքիզմի քաղաքականություն ազգային հարցում, որի ծանրությունը զգացին հույները, ալբանացիները, արաբները, քրդերը: Սակայն ամենամեծ հարվածը երիտթուրքերը հասցրեցին հայ ժողովրդին, դեռևս 1909-ին նրանք կազմակերպեցին Ադանայի կոտորածը, իսկ 1915-ից իրագործեցին ցեղասպանության ծրագիրը: Նրանք ասպարեզ իջան որպես բուրժ. հեղափոխականներ, իշխանության գլուխ անցնելով՝ դարձան ազգայնամոլներ, իսկ ասպարեզից հեռացան որպես քաղ. և ռազմ. հանցագործներ: ՀՀՀ, էջ 124: Տե՛ս Ավետիս Փափազյան, Ժամանակագրություն: Հայկական հարցը և մեծ եղեռնը. /1876-2000/, Եր., «Զանգակ-97», 2000, էջ 10: Дж.С.Киракосян, Младотурки перед судом истории, Ер., Айастан, 1989.

202. Ղուրանի 9:5 սուրահը հաստատում է, որ Մուհամմեդին եկած հայտնությունը հրամայեց նրան պատերազմ մղել Արաբիայի կռապաշտների դեմ՝ իսլամին հնազանդեցնելու և այն ընդունելու նպատակով: Հայտնությունից անմիջապես հետո Մուհամմեդը նախաձեռնեց հայտնի «djihad»-ը՝ սուրբ պատերազմը: Սուրբ պատերազմի նպատակը Տիրոջ գերիշխանության առաջմղումն է: Միայն խաղաղ ճանապարհով անհավատներին հավատքի բերելու գործընթացի ձախողումից հետո պետք է դիմել Սուրբ պատերազմին: Պատերազմին մասնակցող մուսուլմանը, որպես աստվածային սիրո ամենավառ ապացույց, նվիրաբերում է իր կյանքը: «Djihad»-ը կանոնակարգված է այնպես, որ այն դառնում է իսլամի պրոպագանդայի միջոցներից մեկը: Եթե այլադավանը իսլամը կամավոր ընդունի, այն կպարտադրվի «djihad»-ի կողմից: Անօրինական է համարվում այն լքելը և խաղաղությանն ու թուլակազմությանն անդամագրվելը: Ըստ մուսուլմանական աստվածաբանի՝ աշխարհը բաժանված է թշնամական երկու մասի.«Dar-ul-Islam»-ը դեմ է դուրս եկել«Դառ-ul-Harb»-ին: Առաջինը ենթարկվում էր Ալլահին, երկրորդը՝ անդադար պատերազմների բոցավառ պաշտպան է: Ըստ մեղքի տեսակի՝ գոյություն ունի երեք տեսակի մահ. անհավատի, հարակցողի և մեծամտի: Քրիստոնյաներին բաժին կլինեն առաջին երկու տեսակի մահը: Անհավատը պարզապես չի հավատում Ալլահին, իսկ հարակցողը կոչ է անում մեղավորին՝ հարակցել աստծուն: Մեծամտությունը այն մեղքն է, որը անտեսում է Աստծուն

հնազանդվելը: Անարդարացի կլիներ եզրակացնել, թե Ղուրանը տալիս է միայն դաժան և անմարդկային հրամաններ: Իսլամի Սուրբ գիրքը պարունակում է տեղեկություններ առաքինության, հավատարմության, հանդուրժողականության, չափավորվածության, բարեգործության, ներման մասին: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 131-134: *Ջիհադ, Ղազավաթ՝* Մահմեդականների սրբազան պատերազմը անհավատների դեմ: Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ. աշխ., էջ 151, 153:

203. Ավազանը կատարում է կրկնակի կարևոր դեր, սա արարողական կարգ է՝ ավանդական լվացման համար, իսկ գեղագիտական տեսակետից, այն ծառայում է որպես հայելի՝ արտաքին մասի համար: Երկուսը միասին համաչափություն են ստեղծում տարածության մեջ, որն առաջացնում է բարձյալի անզուգական շունչը: Բոլոր մզկիթները ունեն նույն ընդհանուր տեսքը. դրսի բակի կենտրոնում՝ հուշարձան աղբյուրը ծառայում է ծիսական լվացումների համար: Մյուս ընդհանուր կողմերը ներառում են քարից կամ փայտից պատրաստած սյուների ճոխությունը, հատուկ կամարը, որը հենվում է սյունագլուխների վրա և մեղրամոմի բջիջների նման օգտագործած շթաքարերը: Սա տիպիկ արաբական ձև է, որ թույլ է տալիս քառանկյուն ձևից անցնելու շրջանաձևին, և գմբեթը հենել եռանկյուն հիմքի վրա: Ահարոն Կայայան, նշվ. աշխ.., էջ 59:

204. Ջրծաղիկ՝ Varicella-Оспа ветряная-острая инфекционная болезнь, преимущественно детского возраста; характеризуется доброкачественным течением, умеренной общей интоксикацией, лихорадкой и пятнисто-везикулезной сыпью. Возбудитель распространяется воздушно-капельным путем. Восприимчивость к ветряной оспе всеобщая. Возбудитель ветряной оспы относится к вирусам группы герпеса. Казанцев А.П., Матковский В.С., Назв. раб., с. 178-179.

205. Մալարիա՝ Малярия-острая протозойная болезнь, характеризующаяся лихорадочными приступами, анемией, увеличением печени и селезенки. Может давать рецидивы. Эпидемиология: Источником инфекции является человек, больной малярией, или здоровый гемотоноситель. Казанцев А.П., Матковский В.С., Назв. раб., с. 145-152. Տե՛ս, Լ.Ա. Ֆրանգուլյան, Բժշկական միկրոբիոլոգիա, «Լույս», Եր., 1979, էջ 442-446:

206. Պահպանվել է Մ.Ղազարյանի 1969-ը թ. Սպանդարյանի շրջանի նարդու երկար խաղի անհատական առաջնության մրցումներում երկրորդ տեղը գրավելու համար շնորհված Երկրորդ կարգի դիպլոմը, որը ստորագրված է Սպանդարյանի շրջանի ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահ Վ.Գալստյանի կողմից:

207. *Ճան* ժողովրդական վեգ, անասունի կոճիկ, որը հնում օգտագործում էին խաղալու համար: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ 2, էջ 935:

208. Об армянских хамалах-носильщиках тяжестей в Турции кому только из европейских корреспондентов и туристов не приходилось писать! Хамалы-это свежие силы земледельческого населения Битлисского, Ванского и Харпутского вилайетов, отрывающиеся от сохи вследствие притеснений курдов и вымогательств турецких чиновников. Ежегодно они тысячами стремились в Константинополь, Смирну и прочие приморские города Европейской и Азиатской Турции, для искания заработков тяжелым физическим трудом. Константинопольские таможни в Галате и Стамбуле, где имелось по несколько сот хамалов, обойтись без них никак не могли. После истребления в 1896 г. хамалов в Константинополе турки вынуждены были заменить их курдами, но по отзывам русских корреспондентов как таможни, так и получатели товаров

оказались в большом затруднении. Во-первых, курды далеко не обладают той громадной силой, при какой так легко справлялись армянские хамалы... Во-вторых, таможенное начальство не доверяет курдам амбары, где хранятся товары до их очищения. Этими амбарами прежде заведовали всегда армяне, безусловная честность которых ни разу не была запятнана. Хозяева же товаров терпят еще больше неприятностей от курдов: последние то отговариваются усталостью и не доставляют товаров вовремя по назначению, то допускают небывалые дотоле злоупотребления, присваивая часть чужой собственности. Магда Нейман, назв. раб., с 115-116.

209. От исчезновения армянских хамалов немало пострадали также торговые общества, банки и богатые магазины европейцев в Константинополе. Доставка золота и серебра из государственного казначейства в Отоманский банк и в администрацию Dette publique и оттуда обратно, дневная и ночная охрана банковых касс, магазинов, ночная сторожевая служба на всех улицах, в многочисленных константинопольских ханах /гостиных дворах/, все это вверялось только пришлому люду из глубины Армении. Пользуясь безусловным доверием турок, армян, греков, евреев и европейцев, эти представители армянского простонародья исполняли обязанности русских артельщиков, не внося, однако, никакого материального обеспечения, в виде залога, своим хозяевам: честное имя их национальности считалось достаточною гарантией. Достойно внимания, что, несмотря на их тяжелый труд, при ничтожном заработке, в хамалах не замечалось ни малейшего признака угнетенности. Их прямая осанка, атлетическое телосложение и гордая поступь возбуждали всегда зависть в дряблых константинопольских сибаритах и восторг у европейских туристов. Магда Нейман, назв. раб., с 116.

210. Հնարավոր է, որ չիք բառի փոխարեն պետք է լինի շիք /թրք. շըք/ բառը:

211. Հուշագրությունում «բրաունինգ» բառը հանդիպում է բրանվիկ, բրավնիկ, պրավնիկ, պրանվիկ ձևերով: ***Браунинг*** /Bowning/ Джон /21.1.1855, Огден, штат Юта-26.11.1926, Херстал, Бельгия/, американский изобретатель, конструктор названных его именем образцов автоматического оружия, фабрикант. Наибольшее распространение получили автоматические пистолеты /патенты куплены бельгийской фирмой Гесталь/, первые образцы которых появились в 1879-78гг.. Пистолеты, а также ручные, станковые и крупнокалиберные пулеметы системы Браунинг с воздушным охлаждением ствола стоят на вооружении многих армий. БСЭ, третье изд., т. 4, М., Советская Энциклопедия, 1971, с. 11.

212. Տե՛ս օտար բառերի բառարան:

213. Հավանաբար խոսքը Սմիթ վեսոն տիպի ատրճանակի մասին է:

214. ***Наган,*** револьвер системы бельгийского оружейника Нагана (Hagant). Изобретен в конце 19 в. и принят на вооружение армий ряда стран (России, Швеции, Австро-Венгрии и др.). На вооружении Красной Армии до Великой Отечественной войны 1941-45 гг. состоял Наган образца 1895: калибр 7,62 мм, дальность стрельбы до 100 м, емкость барабана 7 патронов. БСЭ, т. 17, М., 1974 г., сс. 196-197.

215. Բիթլիսն ուներ առողջարար օդ, թեև ամառը շատ տաք էր, ձմեռը, որ հաճախ տևում էր հինգ ամիս, ձյունառատ էր, երբեմն՝ սոսկալի ցուրտ: ՀՏԲ, հ. 1, էջ 686:

216. *Գովնդի՝* գովնդ պարի եղանակ, պարի տեսակ: Գովնդ՝ ժողովրդական կլոր պարի մի տեսակ: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 254:

217. Հավանաբար Մ.Ղազարյանը ի նկատի ունի *խոնջան* բառը, տե՛ս օտար բառերի բառարան:

218. Լիրա-լիր /Թուրքիայի դրամական միավոր, որը հավասար է հարյուր ղուրուշի/:

219. Այսպես էր կոչվում հրեական կրոնական մեծագույն խմբակցության որևէ անդամ, որ հավատում էր, թե օրենքի տառացի գործադրությամբ միայն հնարավոր է փրկություն ապահովել, և ըստ այնմ էլ պահանջում էր խստիվ պահել օրենքը և նրա շուրջ աճած «հայրերի ավանդույթը» /*Մարկոս 7:1-13*/: Սրանք դեմ էին հռոմեացիների իշխանությանը, այն համարում էին իրենց տրված աստվածային պատիժ և շեշտում էին անհատական բարեպաշտության կարևորությունը: *Ասպվածաշունչ, Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի, հավելվածի բառարան, էջ 694:*

220. *Կճուն*՝ թրծած կավե անոթ, կերակուր եփելու կամ մթերք պահելու համար, պուտուկ, կճիկ, բղուղ: Էդ. Աղայան, նշվ. աշխ., հ. 1, էջ 740:

221. Վերապրողը ի նկատի ունի կավե պուտուկը: Խոսվածքներում հաճախ ենք հանդիպում «հողե աման» արտահայտությանը: Տե՛ս Ի.Է.Ավագյան, Ծննդավայրիցս դեպի Տեր Զոր, Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները, էջ 17:

222. Նկատի ունենալով, որ Մուհամմեդն եղել է որբ, առանց հովանավորի և կարողության, պարզ է դառնում, թե ինչու Ղուրանը շեշտեց կարիքավորներին օգնության հասնելու պարտականությունը: Իսլամում գոյություն ունի մաքրազերծման հարկ: Շատ է խրախուսվում դիմը /եկամուտի տաս տոկոսի հատկացումը մզկիթին/: Ահարոն Կայայան, նշվ. աշխ., էջ 129: Իսլամի հինգերորդ հիմնասյունը զաքաթն է: Դա յուրահատուկ մի հարկ է, որը գանձվում է հարուստների գույքից և եկամուտներից, և հատկացվում իսլամական ումմայի՝ համայնքի կարիքների բավարարման համար: Այդ եկամուտները նախատեսված են ումմայի աղքատների համար: Միաժամանակ, իսլամը հորդորում է իր համահավատացյալներին տալ սադակա, կամավոր զոհաբերություն և ողորմություն: Ո՛չ զաքաթը, ո՛չ սադական ի վիճակի չեն վերացնել սոցիալական անհավասարությունը: Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 33:

223. Բառացի՝ ես ունեմ Հայաստան: Ճիշտ կլիներ ասել.«Ժը սյուի Աղմենիէն»:

224. *Գամ*-բևեռ, մեխ, չիվի: Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 508:

225. Армянского хамала легко было отличить притом по его узорчатой красной шапочке-***арахчину***, который он никогда не менял на феску, так как это был подарок жены или сестры, которых он оставил на родине. Они вышивали его из сотканной ими материи. Магда Нейман, назв. раб., с 116.

226. Անդրանիկի ջոկատը ռուսական 4-րդ կորպուսի կազմում 1916-ի հունվարի սկզբներին Վանից շարժվելով Մուշի, Բիթլիսի ուղղությամբ, համառ, արյունահեղ մարտեր մղեց թշնամու գերազանց ուժերի դեմ և մասնակցեց բազմաթիվ հայկական գյուղերի, քաղաքների ազատագրմանը: Առջևում էր Բիթլիսը, որի գրավումը գեներալ Աբացևը /վերջինիս հրամանատարության տակ էր գտնվում Անդրանիկի ջոկատը/, սաստիկ սառնամանիքի և պարենի պակասության պատճառով, գտնում էր անհնարին: Անդրանիկը, խիստ զայրացած գեներալի անվճռականությունից, հեռագրում է կորպուսի հրամանատարին.«Գլխովս կերաշխավորեմ, որ կարելի է Բիթլիսը գրավել անմիջապես»: Կորպուսի հրամանատարը, Աբացևի կամքին հակառակ, համաձայնվեց Անդրանիկի առաջարկին: Վերջինս իր 1500 մարտիկներով և 200 հեծյալ կազակներով փետրվարի 20-ին գրոհեց Բիթլիսի վրա: Գրոհը սկսվեց գիշերը: «Առանց գնդակ մը արձակելու,- գրել է Գ. Ղորղանյանը,-կամավորական խումբը մոտեցավ թուրքական դիրքերի կանխավ որոշած հատվածին: Սվինային հարվածով վար նետեց հոն գտնվող զորքը, գրավեց երկու լեռնային թնդանոթ և փախչող թշնամիի ուսերի վրա ներս խուժեց

քաղաք»: Այնպիսի արագությամբ կատարվեց այդ բոլորը, որ թշնամու զորահրամանատարները չհասցրեցին մինչև անգամ հագնվել ու փախուստի դիմել: Անդրանիկը գերեց թշնամու 1300 զինվոր, 35 հրամանատար, գրավեց բավականաչափ զենք ու զինամթերք, 24 թնդանոթ, մի քանի միլիոն փամփուշտ, 1400 ձի ու ջորի և այլն: Փրկվեցին 300 հայ կանայք ու երեխաներ և ուղարկվեցին Վան: Հայ ժողովրդի պատմություն, հ 6, էջ 550-551:

227. Բնագրում՝ սևագիր տետր # 15, վերապրողը նշում է 1916-ի փետրվարի 14-ը, շփոթելով Բիթլիսի գրավման օրը Էրզրումի գրավման օրվա հետ: Ռուսական զորքերը 1916-ի հունվարի 16-ին հասան մինչև Քյոփրի-քյոյ, ուր համառ կռիվներից հետո ջախջախեցին թուրքական երեք դիվիզիա, որոնց մնացորդները ետ շպրտվեցին դեպի Կարին: Այնուհետև երեք կողմից շրջապատեցին Կարինը: Հարյուրհազարանոց թուրքական բանակը չկարողացավ այն իր ձեռքում պահել: Հնգօրյա գրոհից հետո, փետրվարի 16-ին, ռուսական զորքերը մտան Կարին և գրավեցին բերդը: Հայ ժողովրդի պատմություն, հ 6, էջ 543:

228. Արամ Հայկազը Անդրանիկի մասին գրում է.«Կը դառնայ ղեկավար ու «Իբրեւ Արծիւ» կը սաւառնի սարէ սար, կռուէ կռիւ, յաղթանակէ յաղթանակ…: Օր մը Սասուն է, օր մը՝ Մշոյ դաշտ, օր մը՝ Վասպուրական: Լման երեսուն երեք տարի կռիւ է մղած ան ազգին թշնամիներուն դէմ: Ինկած են իր ընկերներէն ու զինուորներէն շատեր՝ հայրենիքի դաշտերն ու սարերու կողերը իրենց արիւնով կարմիր ներկելով, բայց ինք մնացած է անխոց՝ ու անսասան: Առաջնորդ ու պետ էր ծնած Անդրանիկ: Իր խօսքը՝ անկաշկանդ, հրամայական. իր ձայնը՝ հզօր ու իշխանական, նոյն ատեն ան ունէր թովիչ քաղցրութիւն մը՝ որով կախարդած էր իր զինուորները, զինակիցներն ու բոլոր զինքը լսողները…: Անսահման հավատք՝ եւ պաշտամունքի հաւասարող վստահութիւն մը պարտադրած էր ան բոլորին: …Իզուր չէ զինքը սիրողներուն եւ ատողներուն այ այն հաւատքը թէ, ան կախարդուած է՝ եւ անոր գդակ չի դպիր»: Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիւ Եորք, Միացեալ նահանգներ, 1957, էջ 376-377:

229. Անդրանիկ Թորոսի Օզանյան /1865, Շապին Գարահիսար-1927 Չիկո՝ Սակրամենտոյի մոտ, ԱՄՆ/, ազգային-ազատագրական շարժման գործիչ, զորավար: Սովորել է Ծննդավայրի Մուշեղյան վարժարանում: Զինագործարանի բանվոր է եղել Կ.Պոլսում, ապա աշխատել Ռումինիայում: Վերադառնալով հայրենիք՝ աշխատել է որպես ատաղձագործ: 1891-ին անդամագրվել է հնչակյան կուսակցությանը, ապա /հավանաբար մեկ տարի անց/՝ ՀՀԴ կուսակցության անդամ /որից հեռացել է առաջին անգամ 1907-ին, վերականգնվել 1914-ին և երկրորդ անգամ հեռացել 1917-ին, ինչի մասին հայտարարել է մամուլում/: XIX դ. 90-ական թթ. զինվորագրվել է հայդուկային շարժմանը, նախ՝ շարքային հայդուկ, ապա՝ տասնապետ, խմբապետ Աբրոյի, Գուրգենի, Աղբյուր Սերոբի խմբերում: Համագործակցել է ազատագրական շարժման գործիչներ Հրայրի, Նիկոլ Դումանի, Մեծն Մուրադի հետ: Աղբյուր Սերոբի մահից /1899/ հետո /որի մահվան վրեժը լուծել է՝ սպանելով նրան սպանող Բշարե Խալիլին/ Վասպուրականում և Սասունում գործող հայդուկային խմբերով մասնակցել է թուրքական կանոնավոր զորքերի և քրդական հրոսակախմբերի դեմ բազմաթիվ մարտերի: Անդրանիկին մեծ համբավ են բերել Առաքելոց վանքի կռիվը /1901/ և Աղթամարի կռիվը /1904/: 1904-ի վերջից Անդրանիկը դուրս է եկել Արեմտյան Հայաստանից, եղել Իրանում, Բաքվում, Թիֆլիսում, ապա հաստատվել Ժնևում: Այստեղ հրատարակել է հայդուկային կռվի իր ռազմուսույցը՝ «Մարտական հրահանգներ» /1906/ կանոնագիրքը: 1907-ին տեղափոխվել է Բուլղարիա: Նա դեմ էր երիտթուրքերի հետ դաշնակցականների մերձեցմանը, գտնում էր, որ յուրաքանչյուր այդպիսի քայլ հղի է կործանարար հետևանքներով արևմտահայերի համար /այս տեսակետը նա արտահայտել

է դաշնակցության IV համագումարում, 1907-ին, Վիեննայում/: Բալկանյան 1-ին պատերազմի /1912-1913/ ժամանակ մասնակցել է հայկական կամավորական վաշտի ձևավորմանը, որը հետագայում Նժդեհի /վաշտի պետն էր/ գլխավորությամբ /Անդրանիկը եղել է վաշտի ավագը/ մասնակցել է թուրքական զորքերի դեմ մարտերին: ՀՀՀ, էջ 36-37: Սարգիս Խ. Տէօվլէթեանը գրում է.«1887-ին, Հնչակեան կուսակցութեան հիմնարկութենէն հազիւ վեց ամիս անցած, կարեւոր մասնաճիւղի մը հիմը կը դրուէր Շ.Գարահիսարին մէջ: Նախաձեռնողներն էին Վռամշապուհ քահ. Քիպարեան, Աւագ էֆ. Տուրիկեան, Սիմոն Ճգնաւորեան, Չմշկածագցի Սարգիս Քաջունի /բոլորն ալ դասատու/: Մասնաճիւղին կ՝ անդամակցէին Անդրանիկ Օզանեան /ապագայ հերոսը/, Ղուկաս աղբար, Մկրտիչ Թացեան, Մրոտ Ոսկի Աւետիսը, Հաճի Յակոբը, Յարութիւն եւ Պաղտասար Ղարիպեանները, Յարութիւն Օզանեանը /Գագիկ/ ու եղբայրը, Նիկողոս Այնաճեան եւ ուրիշներ: Տարին չլրացած քաղաքին երեսուն առ հարիւրը անդամ կ՝արձանագուէր նորակազմ կուսակցութեան»: Յուշեր Շապին Գարահիսարէն, Փարիզ, 1954, էջ 81-82: Տե՛ս Արամ Հայկազ, նշվ. աշխ., էջ 374:

230. Ուշագրավ են Արամ Հայկազի մեջբերած Անդրանիկի զինակից Մուրատի խոսքերը: Արամ Հայկազը գրում է.«Իր զինակիցներէն անմոռանալի Մուրատը, ինքն ալ հսկայ մը եւ հայրենի փառք մը, այսպէս կը բնորոշէ Անդրանիկը.«Անդրանիկ աչք ունի. մենք չունինք: Սար ու ձորով կ՝անցանինք. ամէն մէկս իր ճամբան կը քալէ. իսկ Անդրանիկը՝ ամէնքիս ճամբան: Մենք անհոգ կ՝երթանք, ան կը տեսնէ, կի պրպտէ ամէն քար, ամէն ժայռ, փոս ու մացառ. ոչինչ կը փախի, ոչինչ կվրիպի անոր աչքէն. ու ինչ որ մէկ անգամ կը տեսնէ, երբեք չի մոռնար. երբ նոյն ճամբով յետ գալու ըլլանք կռուով ու նահանջով, ան գիտէ՝ մինչեւ ո՞ր պէտք է քաշուինք, որ սարին ու ժայռին կամ թումբին ու փոսին հասնելու համար: Ան գիտէ դիրք բռնել թշնամու դէմ այն ժայռին՝ կամ այս բլրին ետեւ: Մենք վստահ ենք որ լաւագոյնն է եւ երբեք չի սխալուիլ եւ մեր դիրքերը լավագոյնը կը մնան: Անդրանիկին հրամանին տակ կռուիլը խաղ ու պար է.-Անդրանիկ աչք ունի»: Նշվ. աշխ., էջ 376:

231. Маузеръ /братья Павел и Вильгельм /Mauzer/ последний умер в 1882 г./-оружейные техники , предложившие образец однозарядного ружья, который был принят в Германии под именем пехотного ружья образца 1871 года: переделанное впоследствии в магазинное , оно получило название пехотного образца 1871-84г. К последнему-затвор был предложен братьями Маузер / приобревшими в 1874г. казенный оружейный завод в Обендорфе в Вюртенберге, а также и проект переделки однозарядного ружья в магазинное/. Для Турции завод Маузера изготовлял магазинные ружья образца 1887г., калибром 3,74 лин., с подствольным магазином на 8 патронов. Брокгаузъ (Лейпцигъ) и Ефронъ (С.-Петербургъ), Энциклопедический словарь, том XVIII А, С.-Петербургъ, 1896, с.818.

232. Զորավար Անդրանիկ. Առաջին համաշխարհայինի սկզբին Անդրանիկը մեկնել է Թիֆլիս, նշանակվել հայկական կամավոր 1-ին ջոկատի հրամանատար, որը Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի կազմում աչքի է ընկել Վանի, Բիթլիսի, Մուշի գրավման ժամանակ, Դիլմանի ճակատամարտում /1915 ապրիլ/: Հետագայում վրդովված հայկ. կամավոր. ջոկատների նկատմամբ ռուս. հրամանատարության անվստահությունից, 1916-մարտին հրաժարական է տվել և հեռացել ռազմաճակատից: 1916-17-ին Թիֆլիսում և Հս. Կովկասում մեծ աշխատանք է կատարել հայ գաղթականներին բազմակողմանի օգնություն կազմակերպելու գործում, մասնակցել արևմտահայերի I համագումարին, նախաձեռնել է «Հայաստան» թերթի /1917-1918/ հրատարակումը: 1918-ի հունվ. Էրզրումի ամրացված շրջանը թուրքական

հարձակումից պաշտպանելու համար նշանակվել է նոր ձևավորված հայկական բանակային կորպուսի երկրապահ դիվիզիայի հրամանատար: Նույն ամսին Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը նրան շնորհել է գեն-մայորի կոչում: Կովկասյան ճակատի փլուզման, ռուսական զորքերի հեռանալու, թուրք. գերիշխող ուժերի հարձակման պայմաններում Անդրանիկի դիվիզիան հարկադրված նահանջել է Կարս-Ալեքսանդրապոլ-Վորոնցովկա ուղղությամբ, դիրքավորվել Ջալալօղլիում՝ խնդիր ունենալով արգելել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Երևան: Ապրիլին Անդրանիկը նշանակվեց Հայկական առանձին հարվածային ջոկատի հրամանատար, որը հունիսին նահանջել է Դիլիջան-Սևան-Նոր Բայազետ-Սելիմի լեռնանցքով դեպի Ջուլֆա և Խոյ /Իրան/՝ Հս. Իրանում կուտակված հայ գաղթականներին, Վանի հայությանը օգնելու նպատակով: Հանդիպելով թուրք. զորքերի դիմադրությանը՝ ջոկատը վերադարձել է Նախիջևան՝ այն հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս: Անդրանիկը Բաքվի կոմունայի ղեկավար Ս.Շահումյանին հեռագրել է, որ իր ջոկատը դնում է Խորհրդային Ռուսաստանի կենտր. կառավարության տրամադրության տակ: Բարդ իրավիճակում անցել է Գորիս, ապա Սիսիան, որտեղ տեղավորել է իր զորամասն ու նրա հետևից եկող հայ գաղթականներին: 1918-ի նոյեմբ. իր ջոկատով անցել է Ղարաբաղ՝ թուրքերից և մուսավաթականներից այն պաշտպանելու համար, բայց Կովկասում, անգլիական հրամանատարության պահանջով, որը խոստանում էր հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, Անդրանիկը հետ է դարձել: Հուսախաբվելով Անտանտի քաղաքականությունից և գժտվելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ 1919-ի ապրիլին իր զորամասը բերել է Էջմիածին, զորացրել այն, իսկ ինքն անցել արտասահման: Գտնվելով Ֆրանսիայում, ապա՝ Անգլիայում ծրագրեր է մշակել Կիլիկիայի հայերի պայքարին օժանդակելու համար: 1922-ից ապրել է ԱՄՆ-ում, շարունակել օգնությունը սփյուռքահայերին: Մահացել է Չիկո կուրորտային վայրում, թաղվել Ֆրեզնոյում: 1928-ին Անդրանիկի աճյունը տեղափոխվել է Փարիզ, ամփոփվել Պեր Լաշեզ գերեզմանատանը: ՀՀՀ, էջ 36-37:

233. Համբ, Համպա, Համփա՝ գյուղ Արմ. Հայաստանի Բիթլիսի նահանգի, Բիթլիս գավառում: Գյուղի դիմացի բարձունքին է գտնվել հայտնի Ս. Հակոբի մենաստանը: ՀՏԲ, h.3, էջ 328:

234. «Համաշխարհային պատերազմի սկզբնաւորութեան Անդրանիկ անցաւ Կովկաս՝ կռուելու: Իր առաջին հանդիպումը ռուս զինուորական իշխանութեանց հետ, եղած է Ա. Խաթիսեանի ներկայութեամբ: Ահա թէ Թիֆլիզի յայտնի քաղաքապետը ինչպէս կը նկարագրէ այդ հանդիպումը.«Ռուս զինուորական իշխանութիւնները չափազանց անհամբեր կերպով կ'ուզէին տեսնել Անդրանիկը: Հենց որ ան Թիֆլիզ եկաւ, ես անձամբ զինքը առաջնորդեցի Զօր. Միշշայէվսկիի մօտ, որ փոխարքայի օգնական էր զինուորական գործերու մասին: Պատերազմը թուրքերու հետ դեռ չէր սկսած: Մեծ քարտէսի մը վրայ ռուս զօրավարը սկսաւ իր ժամուայ խօսակցութիւնը Անդրանիկի հետ: Այդ խօսակցութիւնից յետոյ, Միշշայէվսկին, որ ատեն մը համայն Ռուսիոյ զինուորական սպայակոյտին պետն էր, ըսաւ ինծի.«Պարոն Անդրանիկը սքանչելի կերպով կը հասկընայ պատերազմական ճակատի դրութիւնը, գիտէ անոր ամենէն կենսական կէտերը, ինչպէս նաեւ շատ լաւ կ'ընմբռնէ ձմեռնային արշաւանքի մը պայմանները»: Արամ Հայկազ, նշվ. աշխ., էջ 379-380:

235. Աղբյուր Սերոբ /1864-1899/: Армянский вопрос, с. 68:

236. *«Իսկ Սերոբ, իր ողջութեան, հլու հնազանդ իրեն ենթարկուող Գարահիսարցի նորելուկ զինուորին մասին խօսելով, ըսած է.«Ան գողան անուն պիւրի ունենայ իմ մահէս վերջ»*, Արամ Հայկազ, նշվ. աշխ., էջ 376:

237. «Իսկ հայ վշտի եւ սրբազան ըմբոստացումներու երգիչ Աւ.Ահարոնեան, այսպէս կը նկարագրէ Անդրանիկը.«Անդրանիկի ձեռքի շարժումը լայն է, տիրական, հայեացքը անխարդախ ու կախարդիչ. խոսքը՝ անկաշկանդ ու միշտ հրամայողական. ձայնը իշխանական ու անյազօրեն հզօր՝ հակառակ իր թովիչ քաղցրութեան: Անդրանիկ գեղջուկ էր իր ապրուստի եղանակով, իր նիստ ու կացով, իր ուտել խմելով, իր հոգեկան պարզութեամբ, իր բարոյական ու քաղաքական ըմբռնումներով, բայց իսպառ զերծ՝ գեղջկական գծուծ նիւթապաշտութիւնից, եւ մանաւանդ ժողովուրդի քծնող ստրկամտութիւնից, նրա համբերատար ոգուց: Սքանչելի մանկական ծիծաղի հետ, անհնարին ցասումն ունէր, որպէս ամպրոպային Արամազդ: Յախուռն ու յանդուգն էր իր վճիռներուն մէջ, նաեւ խիզախ՝ իր գործերի եւ շարժումների մէջ: Հայ ժողովուրդից, հայ շինական ժողովուրդից դուրս, աշխարհում ոչինչ չէր ճանաչում եւ ոչինչ չէր սիրում: Արքայ թէ մեծանուն զօրավար, նախարար թէ առաջնակարգ քաղաքական գործիչ, գիտուն թէ գրագէտ, նրա համար միեւնոյնն էին, ամէնքի մօտ ու ամէն տեղ նա նոյն հաւասարակշռուած, հանդարտ եւ տիրական մարդն էր, մերթ լրջօրէն ծանրախոհ, մերթ մանկան պէս քրքջուն: Մասնաւորապէս հանդէս, ճառ, գովք ու ներբող, պճնուած կանայք, սեթեւեթանք՝ անզօր էին նրան խռովք պատճառել եւ յաճախ, փարթամ յարկերի տակ, ճոխ սեղաններու շուրջ, նրան զարմացնելու եւ հաճելի երևալու ճիգերը վերջանում էին միշտ հակառակ արդիւնքով: Անդրանիկ պոռթկում էր հին զայրացկոտ յանկերգը թէ.«Դուք անպէտք, անսիրտ մարդիկ էք, չէք օգնում ժաղովուրդին»: Ամէն տեղ, ամէն պարագայում, Անդրանիկը մնում էր տիրական, իշխող ու հրամայող: Նա առհասարակ խնդրել, նամանաւանդ՝ հայցել չէր գիտեր. ո՛չ ըկերական շրջապատում, ոչ ալ հասարակութեան մէջ: Անծանօթներ, նրա հռչակով յափշտակուած մարդիկ, յաճախ դէմ առ դէմ գալով այս անսովոր հայդուկին, մնում էին շւարած, քարացած: Ան, համբերող ու յախուռն, հպարտ, անողոք, անդրդուելի էր ժայռի պէս: Նա միշտ սիրելի մնաց իր հարազատներին եւ զինակիցներին, որոնք նրա մի խօսքով, ձեռքի մէկ շարժումով, յօնքի մէկ գալարով պատրաստ էին հուր ու ջուր նետուիլ»: Արամ Հայկազ, նշվ. աշխ.., էջ 380-382:

238. Էրզրում , Կարին, քաղաք և գավառ Արմ. Հայաստանում, Էրզրումի նահանգում, Արմ. Եփրատի վերին հոսանքի շրջանում: Համապատասխանում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Կարին գավառին: Կենտրոնը՝ Էրզրում: XVդ. 2-րդ կեսին գրավել են օսմ. թուրքերը: Հնագույն ժամանակներից Հայաստանի ամենահոծ հայաբնակ գավառներից էր: XIXդ. սկզբին գավառում բնակվում էր 68 հզ. հայ, որոնցից 41 հզ-ը՝ 128 գյուղերում: XIX դ. ընթացքում և XXդ. սկզբին կոտորածների, արտագաղթերի, 1859-ի երկրաշարժի, բռնի մահմեդականացման հետևանքով գավառի հայ բնակչության թիվը նվազել է մինչև 40 հզ., քաղաքում՝ մինչև 15 հզ. մարդ, հայկ. գյուղերի թիվը՝ 48 /շուրջ 25 հզ. մարդ/: 1878-ից հետո Էրզրումը դարձել է թուրք. լծի դեմ ազատագրական պայքարի կենտրոններից: 1879-ի հունիսին քաղաքի բարենորոգումների մի ընդարձակ ծրագիր են ներկայացրել սուլթան. կառավարությանը: 1881-ին Կերեքցյանի նախաձեռնությամբ հիմնվել է «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը: 1891-ին Էրզրումում ստեղծվել են Հնչակյան և Դաշնակցական կուսակցությունների կազմակերպություններ: 1895-ի հոկտ. 18-ին մահմեդ. ամբոխը սկսել է կոտորել պատահած հայերի ու կողոպտել նրանց խանութները: Սուլթանի հրամանով ժամանած «համիդիե» /3000 զինվոր/ գնդերը կրակ են բաց արել հայերի վրա: Զոհվել է 316 մարդ: Բարբարոսաբար կոտորվել են Կես կամ Կերզ գյուղի հայերը՝ փրկվել են միայն հինգ-վեց հոգի: Քաղաքում զինված դիմադրություն է կազմակերպել ֆիդայի Հ.Կորկոտյանը: 1899-ին Արամ Արամյանը Էրզրումում կախաղան բարձրացվեց: 1914-ի սեպտ. 18-ին թուրք. իշխանությունները զանգվածաբար զենք են բաժանել

գավառի մահմեդ. բնակչությանը: Էրզրում Ժամանած Բեհաէդդին Շաքիրի հրամանով բանտերից ազատվել են բոլոր քրեական հանցագործները, նրանցից կազմավորվել չեթեական գնդեր: 1914-ի նոյեմբերին՝ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, թուրք. բանակ են զորակոչվել կամ պաշտպանական աշխատանքների տարվել հազարավոր էրզրումցիներ: 1915-ի սկզբին Սարիղամիշում թուրք. բանակի կրած պարտությունից հետո, հայերի հալածանքները սաստկացել են: Սարիղամիշից Էրզրում փախած Էնվերի հրամանով զինաթափ են արվել բանակի հայ զինվորները, կալանվել հայ բժիշկները: Նրանց մեծ մասին կոտորել են Էրզրում-Երզնկա Ճանապարհի վրա, այնտեղ աշխատող հայերի հետ մեկտեղ: Մայիսի 5-ին ստացվել է երիտթուրքական կառավարության գաղտնի հրամանը: Գերմանացի սպաների մասնակցությամբ հրավիրված գաղտնի ժողովը մշակել է նահանգի հայության ջարդի իրականացման մանրամասն ծրագիր: Հանձնարարվել է հատուկ քրեական հանցագործներից կազմված ջոկատներ դնել տարագրության ճանապարհին՝ կարավանների վրա հարձակվելու և կոտորելու համար: Մայիսի 13-ին թուրք զորքերը շրջափակել են դաշտավայրի գյուղերը: Երեք կարավաններով տեղահանվել է ավելի քան 20 հայկ. գյուղերի բնակչությունը: Մինչև հունիս դատարկվել է գավառի գյուղերի մեծ մասը: Բնակչությունը հիմնականում ոչնչացվել է Էրզրում-Դերջան-Երզնկա և Էրզրում-Բաբերդ-Դերջան ճանապարհներին, Խարբերդի, Մալաթիայի շրջակայքում և Դեյր էզ Զորում: Մայիսի 26-ին մոլեռանդ մահմեդականները քանդել են քաղաքի հայկ. գերեզմանոցում կանգնեցված 1877-78-ի ռուս-թուրք. պատերազմում զոհված ռուս զինվորների հուշարձանը: Նույն օրը Երզնկայի ուղղությամբ տարված Էրզրումցի 150 մտավորականների կարավանը Եփրատն անցնելիս թուրք և քուրդ ավազակախմբերի զոհն է դարձել: Հունիսի սկզբին քաղաքի հայերին կարգադրվել է անմիջապես պարպել քաղաքը: Միայն Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Ռոբերտ Սթեբլդի միջամտությունից հետո հայերին 15 օր ժամանակ է տրվել գաղթին նախապատրաստվելու համար: Հունիսի 16-ին թուրք. բանակի մի զորագունդ վաղ առավոտյան ներխուժել է հայերի տները և զենքի ուժով ստիպել թողնել քաղաքը: Գերմ. հյուպատոս Շոյբները Թահսիին հայտնել է իր դժգոհությունը բռնագաղթի կապակցությամբ, սակայն ստանալով Կ.Պոլսում Գերմանիայի դեսպանի հրամանը, ինքն է նպաստել տեղահանությանը: Հունիսի 7-ին առաջին կարավանը քաղաքից դուրս է եկել Երզնկայի ուղղությամբ: Մինչև Խարբերդ հասնելը, նրանց մեծ մասը կոտորվել է: Երկրորդ կարավանը 400 ոստիկանների ուղեկցությամբ տարվել է Բաբերդի ճանապարհով: Երրորդ կարավանից /3 հզ. մարդ/ շատերը զոհվել են մինչև Կամախ հասնելը, չորրորդ կարավանը /9 հզ. մարդ/ նահատակվել է Եփրատի կիրճում՝ Կամախ-Բողազի վայրում: Մոսուլ են հասել 400-500 հիվանդ ու կմախքացած մարդիկ: Հինգերորդ կարավանը /7 հզ. մարդ/, հուլիսի 18-ին դուրս գալով Էրզրումից, արժանացել է նախորդ չորսի ճակատագրին: 1915-ի օգոստ. Էրզրումում մնացել էին 50 հայեր, որոնց մի մասը իբրև լավ արհեստավորներ, պահվել էին թուրք. բանակի պետքերի համար: Մյուսները կաթոլիկներ էին, որոնք տեղահանվել են նոյեմբերին: Վտանգելով կյանքը՝ Ռ.Սթեբլդը իր տանը թաքցրել է 19 հայուհիների, գյուղերից հավաքել հայ որբերի: 1916-ի փետրվարին Էրզրում մտան ռուսները: 1916-ի ամռանը ստեղծվեց Գաղթականական կոմիտե: Սկսեց գործել Մոսկվայի հայկ. կոմիտեն, որը բացեց հիվանդանոց, որբանոց, դպրոց: Հայանպաստ աշխատանք ծավալեցին նոր հիմնված Քաղաքների միությունը, Եղբայրական օգնության միությունը, Բաքսթը եղբայրների որբանոց-դպրոցը: 1917-ին Էրզրումի զինկոմ նշանակված Կ.Չաքրյանը հարյուրավոր գաղթականների տեղավորեց քաղաքում և գյուղերում: 1918-ի սկզբին Էրզրումցիներից ստեղծվեց 500 հոգանոց պաշտպանական ջոկատ՝ Ա.Միրոյանի գլխավորությամբ: Ստեղծվեցին նաև

Զինվ. միության կոմիտե և Կամավոր. կոմիտե: 1918-ի հունվ. 30-ին գնդապետ Թորգոմը /Արշակ Երվանդյան/ հատուկ հռչակագրով ազդարարեց Հայկական պետականության վերականգնումը՝ Էրզրում մայրաքաղաքով: Ռուսական բանակի հրամանատարությունը ձերբակալեց Թորգոմին և դատ. գործ հարուցեց նրա դեմ: 1918-ի սկզբին թուրք. բանակը, օգտվելով Կովկասյան ճակատի փլուզումից և խախտելով 1917-ի դեկտ.5-ի ռուս-թուրք. զինադադարը, անցավ հարձակման: Ինքնապաշտպանական գունդը ի զորու չէր դիմադրել: 1918-ի փետր.18-ին Էրզրում ժամանեց Անդրանիկի փոքրաթիվ զորքը, որը չկարողացավ դիմակայել թուրք. 25 հզ. բանակին և հարկադրված նահանջեց՝ իր հետ Արդրկովկաս տանելով էրզրումցի գաղթականների: Քաղաքի վերագրավումից հետո սրի քաշվեցին մնացած բոլոր հայերը: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո որոշ Էրզրումցիներ վերադարձան: 1930-ին այնտեղ ապրում էին 250 հայեր, մեծ մասամբ թրքախոս: Ըստ դ-ր Լեփսիուսի, 1915-ին Էրզրում նահանգի ավելի քան 200 հզ. հայերից փրկվել է 40 հզ-ը: Էրզրում նահանգի տարածքում, որը հիմնականում համընկնում է ժամանակակից Թուրքիայի Էրզրում, Երզնկա, Աղրի իլերին, ապրող հայերի մասին պաշտոնական տեղեկություններ չկան. հայերի մեծ մասն ապրում է ծպտյալ վիճակում՝ թուրք. ազգանուններով: ՀՀՀ, էջ 134-136, 137: Տե՛ս ՀՏԲ, հ 2, էջ 366-367: Магда Нейман, назв. раб., с 255.

239. Լիպարիտ Ազատյանը գրում է.« *Լոնդոնի Armenian Red Cross & Refugee Fund մարդասիրական հասպատրութիւնը Ալեքսանդրապոլի մէջ որբանոց մը կը բանայ, 40 փոքրիկ Սասունցի մանչերով: Թրքական բանակներու յառաջիւաղացման ընթացքին այս որբերը կը փոխադրուին Դիլիջան եւ կը տեղաւորուին նոր որբանոցի մը մէջ՝ միևնոյն անգլիական հասպատրութեան հովանիին տակ: Դիլիջանի այս որբանոցը ուրիշ որբանոցներու հետ աշխատանոցներ կ՚ունենայ անտառներու մէջ: Հետեւեալ արհեստները կը կիրարկուէին այդ որբանոցներուն մէջ՝ նուրբ կահ-կարասիներու արտադրութիւն, ատաղձագործութիւն, երկաթագործութիւն եւ կօշկակարութիւն: Օրական 50 որբեր կ՚աշխատէին այս արհեստանոցներուն մէջ, եւ աշխատանքի բարոյ ընթացքը կը մղէ վարիչները աշխատող որբերու թիւը աւելցնել 100-150-ի*»: Ստորև հեղինակը բերում է Դիլիջանի որբանոցների ցուցակը և որբերի թիվը: Դիլիջանում գործել են տասնվեց որբանոցներ, որոնց որբերի թիվը հասել է 1026-ի, իսկ Դիլիջանի թիվ երեք որբանոցը խնամատարության տակ ունեցել է 72 որբ: Լիպարիտ Ազատեան, նշվ. աշխ., Գիքր առաջին, Լոս Անճելըս, 1995, էջ 51-52:

Օտար բառերի և արտահայտությունների բառարան

Բառարանում բերում ենք գրքում գործածված բոլոր օտար բառերն ու արտահայտությունները՝ նշելով դրանց բացատրություններն ու իմաստները: Օտար բառերի բացատրությունը նշելիս ի նկատի ենք ունեցել որևէ բառի իմաստն ընդհանրապես, նաև ստույգ կամ մոտավոր իմաստը, որը գործածվում է հուշապատման մեջ: Ակնհայտ է, որ արաբերեն և պարսկերեն մի շարք բառեր վերցված են անմիջապես թուրքերենից: Բառերի ուղղագրությունը պահել ենք բնագրին համապատասխան՝ ընդգրկելով նաև ժամանակակից գրական ուղղագրությունը և բարբառային ու խոսակցական ավելի շատ տարածում գտած որոշ ձևեր: Տվել ենք նաև ճիշտ տառադարձումը: Գործածված են հետևյալ համառոտագրությունները՝ արբ.-արաբերեն, թրք.-թուրքերեն, պրսկ.-պարսկերեն, քրդ.-քրդերեն, ռուս.-ռուսերեն, հուն.-հունարեն, լտ.-լատիներեն, ֆր.-ֆրանսերեն, անգլ.-անգլերեն:

Աբ — պրս. ջուր:
Աբա — արբ. աբա /հաստ, կոպիտ բրդյա կտոր/, կոպտաբուրդ, առանց օձիքի կոպտաբուրդ թիկնոց:
Աբլա, էբլա — թրք. ավագ քույր, ավագ աղջիկներին, կամ կանանց հարգալից դիմելաձև, օգտագործվում է նաև հատուկ անունների հետ:
Ադաթ, ադէթ, էդէթ — արբ. հոգնակին ադեթ բառի, սովորույթ, ավանդույթ, սովորական իրավունք:
Ազադէ — պրսկ. ազատ, անկախ, ինքնուրույն, ինքնագլուխ:
Ազաթ — պրսկ. ազատություն, ինքնուրույնություն, ինքնորոշում, անկախություն:
Ազիզ — արբ. թանկ, թանկագին, արժեքավոր, անգին, սիրասուն, սուրբ, սրբազան:
Աթա — թրք. հայր, պապ, պապիկ:
Աժան — թրք. գործակալ, ներկայացուցիչ, լրտես, շպիոն:
Աժանս — թրք. գործակալություն:
Ալա — արբ. նախածանց՝ հետ, վրա, վրայով, մի բանի համաձայն: Լավագույն, լավ, գերազանց, բարձրագույն:
Ալաման, Ալման — գերմանացի:
Ալլահ, ալլախ — արբ. Աստված:
Ալաֆրանգա, ալաֆրանկա — թրք. եվրոպական, եվրապական ձևով, արևմտյան:
Աղա — թրք. աղա, /դրվում է հատուկ անունից հետո/, տեր, պարոն, ունևոր գյուղացի, ավագ եղբայր, եղբայր /կոչական/: Պատմական՝ որոշ պաշտոնավոր պետերի և դեմքերի տիտղոս, կոչում հին Թուրքիայում: Պատմական՝ որոշ մանր պաշտոնավոր դեմքերի և արհեստավորների տիտղոս, կոչում:

Պատմական՝ ցածր և միջին սպաներին տրվող տիտղոս, կոչում:
Ամա—արբ. միջազգային վա՜յ, վա՜խ, ա՜խ, օ՜հ, օ՜ֆ, Աստվա՜ծ, օգնեցե՜ք, գթացե՜ք, ողորմացե՜ք:
Ամէլ, համէլ—արբ. գործ, գործողություն, աշխատավոր, բեռնակիր:
Ամէլէ, ամալէ, համալէ, համալիա—արբ. աշխատավորական, աշխատանքային, բանվորական:
Ամի, ամմի—արբ. քեռի, հորեղբայր:
Ամիողլի, ամիողլու—հորեղբոր որդի:
Այնալու—գավառական՝ հնատիպ հրացան:
Ան—արբ. վայրկյան, պահ, ինչքան հնարավոր է արագ, խելք, գիտակցություն, միտք:
Անա—թրք. մայր, **անա բաբա**—ծնողներ:
Աշիրեթ, աշիրաթ, էշիրեթ, իշարէթ—արբ. /քոչվոր/ ցեղ, /քոչվոր/ տոհմ:
Ապ, աբ—ջուր, տեստ, տաստ, տեսթ—ավազան, տաշտ, կոնք:
Ապար-թոպար, ափալ-թափալ—թրք. իրարանցում, արագ-արագ, հապճեպ, շտապով, փութով, աճապարանքով:
Ապթես, ապդաստ, ապդէստ, աբդաստ, ապտեստ—պրսկ. ծիսական լվացում /աղոթքից առաջ/:
Առ—արբ. ամոթ, ամաչկոտություն, ամոթխածություն, քաշվել:
Ասլը, ասլի—թրք. կախովի, կախ ընկած:
Ասմա—թրք.կախովի, կախ, կախ ընկած:
Ասքէր, ասքար, ասքյար, ասկյար, էսքէր—արբ. զինվոր, զինվորներ, զորք, զինվորական գունդ:
Ասքէրի, ասքարյա, էսքէրյա, ասքյարյա, ասկյարյա—արբ. ռազմական, զինվորական:
Ասքյարյա թային, ասքարյա թային, էսքէրի թային—զինվորական փայ:
Ասկէրի մէկթէպ, էսքէրյա մէքթէպ, ասքարյա մէքթէփ—ռազմական, զինվորական ուսումնարան:
Արզ—արբ. աղերսագիր, խնդրագիր, խնդիրք:
Արզուհալ, ազրահալ—արբապրսկ. խնդրագիր, դիմում, աղերսագիր:
Արխալուխ, արխալուղ, արքալը—թրք. անթև զգեստի տեսակ, բաճկոնակ:
Արաղ—խոսակցական՝ օղի:
Արշին, **аршин**—ռուս. արշին: Ռուսական երկարության միավոր, որը հավասար է 0,71 մ:
Աֆէրիմ, աֆէրէմ՝ խոսակցական, **աֆէրին**—պրսկ. բրավո, ապրես, հիանալի, շատ լավ, գերազանց:

Բաբա—թրք. հայր, պապա, ծնող, փոխաբերական՝ բարերար, հայր հարազատ: Շեյխ /որոշ դերվիշական օրդենների, միաբանությունների գլուխ/, շեյխերի տիտղոս:
Բազար, պազար—պրսկ.շուկա:

Բալա—պրսկ. բարձրագույն:
Բալա—խոսակցական՝ երեխա, ձագ:
Բալուլ—քրդ. բարուրած, խանձարուրած նորածին:
Բակ—բաք:
Բաքքալ, բագալ—արբ. նպարավաճառ, մանրածախ առևտրական: **Բակկալ դյուքքանը**—նպարեղենի կրպակ, խանութ:
Բակկալիյէ, բաքքալիյէ—արբ. նպարեղեն, նպարեղենի խանութ:
Բահթ, բախտ—պրսկ.ճակատագիր, վիճակ:
Բահշ, բահշէս—պրսկ. նվեր, ընծա, պարգև:
Բահշիշ, բահշայիշ—պրսկ. նվեր, ընծա, ողորմություն:
Բահչէ, բաղչա, բախչա, պաղճա, պախճա—պրսկ. այգի, պարտեզ:
Բահչէջի—այգեպան:
Բաղ—պրսկ. խաղողի այգի, այգի, պարտեզ, քնարական՝ դրախտ:
Բաղարջ, փաղաչ, բաղաչ, բաղաջ—թրք. կենտրոնում անցքով ուռած բլիթի ձևի կամ տափակ շրջանաձև հաց, բոքոն:
Բայրամ—թրք.տոն, տոնակատարություն, տոնախմբություն:
Բանջար, փանջար, փինջար—թրք. ճակնդեղ, տակ, բազուկ:
Բաշ, պաշ—թրք. գլուխ, գլխավոր, առաջնորդ, ազնիվ:
Բաշիբոզուք, բաշիբոզուխ, բաշըբոզուք, բաշիբուզուկ—թրք. բաշիրոզում, անարխիստ, վայրագ, անկարգ, ավազակաբարո մարդ, քաղաքացի, քաղաքացիական:
Բաշին, բաշըն—թրք. հիմնական, գլխավոր:
Բաշլիկ, բաշլիք, բաշլուղ, բաշլըղ—գլխարկ, գլխազարդ, իշխանություն, վարչություն: Հաստ կտորից /շալից, մահուդից/ գլխի ծածկոց՝ վեղարի նման և երկար սուր ծայրերով:
Բաշխ—պրսկ. բաժին, մաս: **Բաշխեց**— պրսկ. նվիրեց:
Բաջի, բաճի—թրք. /ավագ/ քույր, դայակ, մորաքու՛յր, կողակից, հորաքու՛յր, հորեղբոր կին:
Բէթէր, բէթար—պրսկ. վատագույն:
Բէլա—արբ. փորձանք, դժբախտություն, դժվար կացություն, աղետ, պատուհաս:
Բէլէդի—արբ. քաղաքային, մունիցիպալ, տեղական:
Բէլէդիյէ, բէլէդյա, բալատէա, պալատյա, պալատէա, պէլատյա, բալատիա—արբ. բէլէդի բառի իգական ձևն է—մունիցիպալիտետ: **Բէլեդիյէ ռէյսի**—քաղաքագլուխ:
Բէհեզյա, բէյազ—արբ. սպիտակ:
Բէրաթ, բերաթ—արբ. պատմական՝ բերաթ, վկայական, պատենտ, սուլթանի գրություն, նամակ, պարգևագիր, հրովարտակ:
Բիլէզիկ, բիլազուկ—թրք. ապարանջան:
Բին—թրք. հազար, արբ. որդի:
Բինտ—բինտ, երիզ, վիրակապ, վիրակապ ժապավեն, կապ:
Բինբաշի, պինբաշի—թրք. մայոր /ռազմական աստիճան/, հազարապետ:

Բիսմիլլահ—արբ. կրոնական՝ հանուն ալլահի /արտահայտություն, որը մուսուլմանները արտաբերում են ինչ-որ գործ սկսելիս/:
Բիր—թրք. մեկ /թիվ և թվանշան/:
Բյույուկ, բէյուք, բօյուք, բոյուք—թրք. մեծ, խոշոր, ընդարձակ:
Բու /բունու/—թրք. այս, այդ, սա, դա:
Բուխանկա—ռուս. բոքոն, հատուկ անոթի մեջ թխված սովորաբար սև հաց:
Բույուր, բույուռուն, բույուռունուզ—թրք. համեցեք, խնդրեմ, սիրալիր հրավիրել, ներս կանչել, լսում եմ, պատրաստ եմ քո ծառայությանը, օգնությանը:
Բօլուգ—թրք. զորամաս, գումարտակ, խումբ, հատված, մաս:
Բօհչա, բոխչա—թրք. քառակուսի կտոր, գործվածք, գլխաշոր /որի մեջ իրեր են փաթաթում/, փաթեթ, ծրար, կապոց:
Բօյ, պօյ—թրք. բարձրություն, հասակ, երկարություն, ցեղ, տոհմ, համայնք:

Գամ—սանձ:
Գայմակամ, կայմակամ, կայկամ, քայմաքամ, ղայմաղամ, ղայիմախամ, ղայմագամ, ղայկամ—թրք. կուսակալի տեղակալ, տեղապահ, գավառապետ, ժամանակավոր պարտականություններ կատարող, տեղակալ, փոխարինող, ռազմական, հնացած՝ փոխ—գնդապետ:
Գանոն, գանյան/՞/—առաջինը եկած ձի: **Գանոն չավուշ**—ձիավոր չավուշ:
Գավուր, գյավուր, գյաուր, կյավուր, գավիր—պրսկ. գյաուր, անհավատ, ոչ մահմեդական, քրիստոնյա, անաստված, սրբապիղծ մարդ, դաժան, անխիղճ, անսիրտ, երդմնազանց, ուխտադրուժ:
Գէլին, կյալին—թրք. հարս, նորահարս:
Գյուղյում, գյուգյում, գյգյում, գումգում—թրք. կուժ /կանթով, կափարիչով և ծորակով՝ հաճախ պղնձե/:
Գյուռ, գյուռռ, գուռ, գյուռուլ—շատ, առատ, թավ, ճոխ, հնչեղ, ջրի հորձանքի աղմուկի ընդօրինակում: Հայերենում՝ փոքրիկ ջրավազան, ջրոց:
Գյուզէլ, գյոզալ—թրք. գեղեցիկ, հիանալի:
Գրվանկա, գրվանքա—հնացած չափի միավոր՝ ֆունտ: Եվրոպական երկրներում հնացած քաշի միավոր է, Ռուսական ֆունտը հավասար է 409,5 գ, անգլիականը՝ 453,6 գ:
Գուրբէթ, գուրբաթ, ղուրբաթ, ղուրբէթ, ղուրբըթ—արբ. օտարություն, օտարաշխարհ:
Գօչ, քօչ—թրք. քոչում, քոչել, քոչ, չու, գաղթ, վերաբնակեցում, մահ, վերջ, գաղթի կամ տեղափոխության պահին տան իրեղենը: Հավանաբար այստեղից էլ՝ «*քոչք ու քենա», «քոշք ու քենա»* արտահայտությունը:
Գօռէր, գոռնէր, գուռիստան—պրսկ. մահմեդականի գերեզման, գերեզմանոց:
Գօռնափշտիկ—պրսկ. ուրվական:

Դաբբէ, դաբբա—արբ. հեծնելու, բեռնակիր կենդանի:
Դաիրէ, տայրա—արբ. շրջան, բնակարան, վարչություն, շրջապատ, շքախումբ:
Դայէ—պրսկ. դայակ:
Դաստուր, դյուստուր—արբ. թույլտվություն, կարգադրություն:
Դարդ—պրսկ. տխրություն, տրտմություն, դժբախտություն, վիշտ, հոգս, մտահոգություն:
Դարման, դերման—պրսկ. ուժ, ամրություն /ֆիզիկական/, դեղ, բուժիչ միջոց, դեղամիջոց, բուժամիջոց, դարման, փրկություն, պրծում, ազատություն, սփոփում:
Դարվէշ, դէրվիշ, դարվիշ—պրսկ. մահմեդական՝ դերվիշ, մուրացկան, աղքատ, չքավոր, հասարակ, համեստ:
Դէբբաղ—արբ. դաբաղ, աղաղորդ, խաղախորդ, կաշեգործ, կաշեվաճառ:
Դէբբաղհանէ, դաբբախանէ, դաբբահանէ—կաշեգործարան, կաշեմշակման արհեստանոց:
Դիլ—պրսկ. սիրտ, հոգի:
Դիլխոր, դիլհոր, դիլհուն—պրսկ. տրտմած, տխուր, սգավոր:
Դիվան, տիվան—արբապրսկ. պատմական՝ բարձրագույն խորհուրդ, ատյան, դատաստան, դատարան, ժողով, դիվան, բազմոց:
Դիվանբաշի—դիվանապետ:
Դյուշման, դուշման—պրսկ. թշնամի, հակառակորդ, ոսոխ, ախոյան:
Դյունյա, դունյա—արբ. աշխարհ, տիեզերք, ամբողջ աշխարհ, սփյուռք, Երկիր /մոլորակ/, **դյունյա հաբերլերի**—միջազգային լուրեր:
Դոկտոր—բժիշկ, դոկտոր /գիտական աստիճան/:
Դոլմա, տոլմա, տոլմը—թրք. տոլմա, լցոնված, լցոն, լիցք:

Զաբիթ, զապիթ, զաբիդ—թրք. քաղաքապետ, իշխան, ոստիկան, պետ:
Զաբիթա—արբ. ոստիկանություն:
Զաբթիյէ, զաբթիա—արբ. պատմական՝ ժանդարմերիա, ոստիկանություն, ժանդարմ, ոստիկան:
Զադե—պրսկ. ծնված, հանդես է գալիս իբրև բարդ բառի երկրորդ մաս՝ **հալալզադե**—օրինածին, օրինավոր ամուսնությունից ծնված:
Զառ, զահր—պրսկ. բարդ բառի երկրորդ մաս, որը ավելանալով գոյականին, տալիս է ինչ—որ բանով լի տեղի իմաստ: Այստեղից էլ՝ **զահրումար**—օձերով լի տեղ/՞/:
Զիյա—արբ. լույս, ճառագայթում, ճառաքում:
Զիյառեթ, զիարաթ—արբ. այցելություն, ուխտագնացություն:
Զուլալ—արբ. մաքուր, թափանցիկ, սառը ջուր:
Զուլում—արբ. անարդարություն, աղետ, մեծ չարիք, անիրավություն, բռնություն, բռնակալություն, բռնապետություն:
Զուռնա—պրսկ. երաժշտական՝ զուռնա:

Զօռ—պրսկ. ուժ, հզորություն, կարողություն, բռնություն, հարկադրում, ստիպում, անհրաժեշտություն, նեղություն, դժվարություն, ժող.՝ տանջանք, տառապանք:
Զօռբա, զօրպա, զօրբը—պրսկ. տիրան, բռնակալ, բռնապետ, կոպիտ, անհնազանդ, անզուսպ, սանձարձակ, ուժեղ, վեհ, ժանտ, խիստ, ապստամբ:
Զօրը—պրսկ. դժվար:
Զօռօվ—պրսկ. հազիվ: Խոսակցական՝ ստիպողաբար:

Էլիֆ—արբ. էլիֆ /արաբական այբուբենի առաջին տառը/:
Էլիֆբա, էլիֆբէ—արբ. այբուբեն, այբբենարան, այբբեն:
Էյ—միջազգային՝ դե, լսի՛ր, ըը՛, էհ, վա՜հ:
Էյլէմ—թրք. գործողություն, արարք, գործունեություն, աշխատանք, գործ:
Էնթարի, անթարի—թրք. կանացի զգեստ /թևքերով/, խալաթ:
Էրմենի—թրք. հայ:
Էրմենիջե—թրք. հայոց լեզու, հայերեն:
Էշելոն—ռազմական՝ էշելոն, մարտակարգի երկայնաշարան, փոխադրագնացք:
Էվ—թրք. տուն:
Էվլա—արբ.ավելի հարմար, լավագույն, նախընտրելի:
Էֆէնդի—թրք. էֆենդի, տեր, պարոն, սեփականատեր, ազնիվ, դաստիարակված, վեհանձն, ազնվաբարո: **Էֆէնդիլէրի**—կապիտալիստներ: **Էֆենդիլեր**—պարոններ:

Ըան, ան — պրսկ. պոետական գրավչություն, հրապույր, նազելիություն, նրբագեղություն:

Թաբուր, թաբոր, թափոր, թափուր, թըբուռ—թրք. ռազմական գումարտակ, դիվիզիոն, շարասյուն, ջոկատ, ռազմական հատուկ միավոր, տաբոր:
Թալան—պրսկ. կողոպուտ, կողոպտել, ավարառություն, թալան, ավազակություն:
Թազէ, թազա—պրսկ. թարմ, ամուր, ուժեղ, առողջ, նոր: Թարմ, ջահել՝ կնոջ մասին, ջահել կին:
Թախըմ, թախում—թրք. սերմ, ամբողջ խումբ, կոմպլեկտ, սարք:
Թակրիր—արբ. շարադրում, շարադրանք, պարզաբանում, բացատրում, զեկույց, զեկուցագիր, առաջարկություն, դիմում, ցուցմունք:
Թահթ, թախթ, թաղթ, թախտ—պրսկ. գահ, գահույք:
Թահթա, թախթա—պրսկ. ծառ /իր պատրաստելու հումք/, փայտ, տախտակ:
Թահթափաբուչ, թախթափափուչ, թախթափափուճ—պրսկ. կաղապար, ոտնակոճղ: **Թախթա փափուչ**՝ փայտե չուստ:

Թաման, թըման—արբ. ամբողջ, լիքը, ողջ, բոլոր, ավարտված, կատարյալ:
Թային, տային—արբ. ռազմ. օրապարեն, փայ, մթերաբաժին, օրական մթերավորում, նշանակել, որոշել, ընտրել:
Թայֆէ, թայֆա—արբ. մարդկանց խումբ, ամբոխ, ցեղ:
Թանդիր—արբ. թանդիր, թոնիր, հողի մեջ փորված օջախ:
Թանզիմ—արբ. կանոնակարգում, կարգավորում, վերափոխում, փոխակերպում:
Թանզիմաթ—արբ. բարեփոխումներ, բարեփոխություններ, ռեֆորմներ, բարենորոգություններ:
Թաշ, տաշ—թրք. քար:
Թառ—պրսկ. թել, մազաթել, նրբաթել, թառ: Հայերենում՝ փայտե ձող հավերը թառելու համար, արևելյան երաժշտական գործիք:
Թաս—արբ. թաս, գավաթ, բաժակ, սկահ:
Թասիփ, թասիբ—արբ. դժվարություն, խոչընդոտ, նեղություն:
Թափ—պրսկ. ուժ, հզորություն, կարողություն:
Թէսլիմ—արբ. ընծայում, ապավինում, հանձնում, փոխանցում, անձնատուր լինել, կապիտուլյացիա, հանձնվել:
Թէսլիմ օլ—հանձնվի՛ր, ընծայվի՛ր, ապավինի՛ր:
Թէսպիհ, թէսբիհ, թազբէհ, թազբէ, թազբէխ—թրք. թազբեհ, տերողորմյա, համրիչ, վարդարան:
Թէրզի, թըրզի—թրք. դերձակ:
Թէրզիհանէ, թերզիխանէ, թերզիխանա, թըրզիհանէ—թրք. դերձակի արհեստանոց, կարանոց, կարի արհեստանոց:
Թէփսի, թէպսի—թրք. մատուցարան, սկուտեղ, մեծ ափսե, թավա:
Թիջարէթ, թուջարաթ—արբ. առևտուր, կոմերցիա, վաճառականություն, եկամուտ, շահույթ, շահում, վաճառել, զբաղվել վաճառքով, շահույթ ստանալ, վաստակել:
Թյուջջար, թուջար—արբ. թաջիր բառի հոգնակին է, վաճառականներ, առևտրականներ, վաճառական, առևտրական:
Թուման, թումբան—թրք. վարտիք, փոխան /լայն և երկար/:
Թումբաք, թամփակ, փամփակ—արույր, լատուն, պղծացինկ, տոմպակ:
Tomb [tu:m]՝ թում—անգլ. գերեզման, շիրիմ, տապանաքար, մահարձան, գերեզմանաքար:
Թոփալ—թրք. կաղ:

Ժաժի, ժաժիկ—քրդ.նաև ժողովրդական կաթնաշոռի տեսակ, որը ստանում են խնոցելով՝ թանից:
Ժանդարմա, ժանդարմ, ժանդարմիա—ժանդարմ, ժանդարմերիա:

Իբրիկ, իբրէկ, իբրէղ, իբրէխ—արբ. կուժ, սափոր, ջրաման /կանթով և ծորակով/:
Իբրիշիմ, ապրըշմ, ապրեշում, ապրշում—պրսկ. կերպաս, հյուսած մետաքս, մետաքսյա թելեր /կարի և ասեղնագործության համար/:
Իմամ—արբ. իմամ, ավագ մոլլա, մուսուլմանների հոգևոր առաջնորդ, հոգևոր դպրոցի առաջնորդ, որոշ փոքր մահմեդական պետությունների գլուխ, խալիֆ Ալիի և նրա տասնմեկ տոհմակիցների շնորհված տիտղոս, մահմեդական մեծ գիտնականներին և հոգևոր գրողներին տրվող տիտղոս:
Իմամօղլի—արբաթրք. իմամի որդի:
Ինգլիշ, Ինգիլիզ—թրք. անգլիացի:
Ինսան, իսան—արբ. մարդ, մարդիկ, մարդկային տոհմ, ցեղ, մարդասեր, մարդկային:
Ինտենսիվ—լարված, աշխույժ:
Իշ—թրք. աշխատանք, գործունեություն, զբաղմունք, աշխատանք:
Իշլեկ, իշլիկ—թրք. աշխատանքային հագուստ, հատուկ հագուստ, արհեստանոց /նկարիչների/:
Իշլի—թրք. ասեղնագործ, նախշակար, զարդարված /ինչ-որ բանով/:
Իշմար—խոսակցական՝ նշան /ձեռքով, գլխով/ աչքով անել:
Իս'աֆ—արբ. ընդունում, կատարում, իրագործում /օր.՝խնդրանքի/:

Լաթա—թրք. մուսուլմանական հոգևորականի հագուստ, զգեստավորում:
Լամուկ—քրդ.թրք. տղա՝ թուրքի, քրդի:
Լէշ, լաշ—թրք. դիակ, դի, լեշ:
Լիրա—լիր /Թուրքիայի դրամական միավոր, որը հավասար է հարյուր ղուրուշի/:
Լէղէն, լանգան, լագյան, լակին—պրսկ. մեծ թաս, տաշտակ, **լէղէն իբրիկ**—թաս և կուժ /լվացվելու կամ ծիսական լվացման համար/:
Լոթի—բարբառային՝ զբոսամոլ, քեֆչի, զվարճասեր, շվայտ մարդ, ծակաչք, ագահ, շատակեր, զվարթ, սրտաբաց, կերուխում սիրող:

Խաթուն, խաթյուն, հաթուն—տիրուհի, բեկի կին, հարգված կին:
Խալ, խըլ, խալօ, խալու, խըլէ մի —քրդ. քեռի:
Խալաթ—պրսկ. զգեստ, որով արևելքում իշխողները պարգևատրում էին մեկին՝ ի նշան իրենց գոհունակության, նորահարսին արվող նվեր:
Խանչալ, խանջալ, խէնջալ, խէնչալ, հէնջէր, խանչար—պրսկ. դաշույն:
Խաշ—արբ. գոհունակություն, հաճույք արտահայտող բացականչություն: Այստեղից էլ **խաշկամա, խաշքամա**— հանգիստ եղիր:
Խաս, հաս—արբ. լավ, շատ լավ, նրբին, նբաճաշակ: **Կաս ղումաշ**—ընտիր կերպաս:
Խէր—արբ. հարստություն, բարիք, բարօրություն: **Խէր խաբար**—բարի նո-

րություն: **Խէր օլսուն**—արբ.թրք. Բարի լինի:
Խիար, հըյար—պրսկ.վարունգ:
Խոմ—խոսակցական՝ խո, հենց, էլ, ահա, գոնե:
Խուդա, խուդը, խուդէ—պրսկ. Աստված, տեր:
Խուժան—պրսկ. խառնամբոխ, սրիկա ամբոխ, խառնիճաղանջ ամբոխ:
Խուրջ, խուրջին, հուրչ—արբ. մի կողմից մյուս կողմը գցվող մեծ տոպրակ:
Խօնջան, խունչան—վարտիքի, անդրավարտիքի գոտենման կապը, որով դրանք ամրացվում էին մեջքին:

Կազան, ղազան, քազան—թրք. կաթսա:
Կազուխ, ղազուխ, քազըք, քազիք, ղազխ—թրք. ցից, բիր, ձող, ցցիկ, բրիկ, ցցագերան:
Կամ—պրսկ. ցանկություն, նպատակ:
Կամա, քամա—թրք. խանչալ, դանակ, սեպ, գամ:
Կանդ, քանդ—արբ. շաքար—ռաֆինադ /գլխիկներով/, տարբեր ձևերի զտած կտոր շաքար:
Կանդաշ, քանդաշ—թրք. արյունակից:
Կասապ, քասապ, կասաբ, ղասաբ, ղասապ—արբ. ուղիղ և փոխաբերական իմաստով՝ մսավաճառ, մսագործ: **Կասապ դյուքյանի**—մսավաճառի կրպակ, խանութ:
Կասապհանէ, կասաբխանէ, կասապհանէ, ղասապհանէ, ղասաբխանէ, ղասաբխանա—արբապրսկ. սպանդանոց:
Կավուրմա, կաուրմա, կաղուրմա, քավուրմա, ղավուրմա, ղաուրմա—թրք. ղավուրմա, տապակած, խորոված, չորացրած, շիկացրած: Սառը ձևով պահվող տապակած միս:
Կարդէշ, քարդէշ, կարդաշ, գարդաշ, գարդէշ—թրք. եղբայր, քույր: **Կառդէշիմ, գարդաշմ**—եղբայրս, ընկերս, քույրս:
Կէփէնկ, գաբանք, գաբանգ, քէփէնք, կափանք, քըփանգ, գաբանգ—թրք. խծկանք, փեղկ, փակոցափեղկ, փեղկափակոց, կափարիչ, խուփ:
Կէբափ, կեբապ, քյաբաբ, քէբափ—արբ. տապակած, շոգեխաշած միս, խորոված:
Կէսէ—պրսկ. ամենակարճ, կարճագույն, պարկ, դրամապանակ, գրպան, լողարանի թաթպատ, հնացած՝ 500 դուրուշ պարունակող դրամապանակ:
Կէսէջի, քէսէջի—թրք. կտրող, ձևող, մսագործ, ձևարար:
Կէրվան, քէրվան, կարավան—պրսկ. քարավան:
Կէրվանբաշի, կարվանբաշի, քէրվանբաշի—քարավանապետ, քարավանի գլուխ, սկիզբ:
Կըզարթմա, կիզարթմա, քըզարթմա—տապակած միս կամ ձուկ, տապակած, բռված, խորոված /ուտեստ/:
Կըզըլ, կիզիլ, քըզըլ—թրք. կարմիր: **Կզլմէջիդ**—Կարմիր մզկիթ:
Կըշլա, քըշլա, կշլայ, ղշլայ, ղշյա, ղշլայ—թրք. զորանոց:

Կըշլակ, ղշլաղ, քըշլաք—թրք. ձմեռանոց, ձմեռային արոտավայր, հնացած ձմեռային բնակարան:
Կըսմէթ, կըսմաթ, ղսմաթ, քըսմըթ, քըսմէթ—արբ. երջանկություն, հաջողություն, բախտ, ճակատագիր, բաժին:
Կիր, կըր—քրդ. տղամարդու սեռական անդամ: **Կուռ, կօռ, կօռօ, կյօռօ**—տղա:
Կիս, քիս, քիսա—արբ. դրամապանակ, քսակ:
Կիզ, կըզ, քըզ, ղըզ, գըզ—թրք. աղջիկ, օրիորդ, կույս, աչիկ, դեռահաս աղջիկ:
Քյազըմ, քյազմ—իմ աղջիկ, աղջիկս:
Կճմտել—խոսակցական՝ կսմթել:
Կյուս, քյուս—թրք. նեղացած, վիրավորված, քյուսյու—վիրավորանք, դժգոհություն, քյուսուպ—վիրավորված, դժգոհ, անարգված:
Կյօկ, կօկ, քօք, քյօք—թրք. արմատ, հիմք, ծննդաբանություն, սերունդի սկիզբ, տոհմ:
Կնուտ—ռուս. մտրակ՝ փայտին ամրացված պարան կամ փոկ, որը ծառայում էր մարմնական պատիժների կամ կենդանիներին ձայն ածելով քշելու, վազեցնելու, վարելու համար:
Կոպալ, կօպալ—խոսակցական՝ փայտ, ձեռնափայտ, հաստ գլխով գավազան, ցուպ, մահակ:
Կրամիցա, գրիմնիցա—ոսկյա մեծ զարդ: Հավանաբար ռուս. *գրիվնա* ***гривна*** բառից՝ Հին Ռուսիայում ոսկյա կամ արծաթյա զարդ, որը կրում էին պարանոցին, մանյակ:
Կուլուխ, քուլուք, ղուլուխ, քուիկ, քուլէկ—թրք. ստրկություն, հնացած՝ պահակակետ, դիրք, կետ, պոստ, պահականոց, պահակատնակ:
Կումաշ, ղումաշ, քումաշ—արբ. կտոր, գործվածք, ընտիր կերպաս:
Կունդուրա, կօնդուրա, քունդուրա—թրք. կոպիտ կիսակոշիկներ, ոտնամաններ, կոշիկներ:
Կուռան, Քուր'ան, կորան, ղուրան—արբ. ղուրան:
Կուրբան, կօրբան, ղուրբան, քուրբան—արբ. զոհաբերվող կենդանի, զոհ:
Կուրբան բայրամը—մուս. լուսնային օրացույցի տասներկուերորդ ամսում կատարվող զոհաբերության տոն:
Կուրուշ, ղուրուշ, քուրուշ—ղուրուշ՝ թուրքական լիրայի հարյուրերորդ մասը:
Կօք մէյդան, քօկ մէյդան, կօք մեյդան, կոք մեդան, կոկմեյդան, կօկ մէյդան—թրք. հիմնական հրապարակ, կենտրոնական հրապարակ:
Կոմսէր—լտ. կոմս բառից՝ ազնվական տիտղոս, զինվորական բարձր աստիճան: Որպես պաշտոն նույնանում է կոմիսարի հետ:

Հաբէր, խաբար, խապար—արբ. լուր, տեղեկություն, ազդարար, հաղորդում:
Հազըր— արբ. պատրաստ, ներկա, առկա, ի վիճակի:
Հազինէ, հազինա, խազինա, խազինը—պետական գանձարան, դրամարկղ, գանձարկղ, գանձ, պահեստարան, պատմական՝ հարյուր վաթսուն լիր արժողությամբ գանձապետական տոմս:

Հաթա—արբ. սխալ, վրիպակ: Հաթաբալա, խաթաբալա—բարբառային՝ պատուհաս, փորձանք, հոգս, անհաճո դրություն:
Հաթըր, խաթր—արբ. հիշատակ, հարգանք ինչ-որ մեկի նկատմամբ, հարգարժան վերաբերմունք:
Հալ—արբ. վիճակ, դրություն, պարագա, հանգամանք, կացություն:
Հալա, հըլը—արբ. դեռ, մինչև հիմա, ցայժմ, ցարդ, մինչև այժմ, դեռ էլի, դեռ հիմա էլ, ներկա ժամանակ, ներկա պահին:
Հալալ—արբ.արդար, անխարդախ, օրինավոր:
Հալը, խալի—թրք. գորգ:
Հալըջը—թրք. գորգագործ, գորգավաճառ: **Խալիչա**—գորգի տեսակ:
Հալկ, խալխ, խալի, խալք—արբ. ժողովուրդ, բնակչություն, ամբոխ, մարդիկ:
Հախից /գալ/—արբ. հաշվի նստել, պատժելու իմաստով, հաշվեհարդար տեսնել:
Հակ—արբ. իրավունք, արդարություն, հասանելիք, մաս, փայ:
Համամ—արբ. բաղնիք, բաղնիս, լողարան: **Համամ կեսեսի**—բաղնիքի թաթպան:
Համամչի, համամջը—արբ. բաղնիքպան, մուսուլմանական՝ ծիսական լվացման կարիք ունեցող:
Հայ—միջազգային՝ արտահայտում է անակնկալ վախ, զարմանք, հիացմունք:
Հայաթ—արբ. կյանք, գոյություն: Բարբառային՝ տան արտաքին սրահ /ծածկված/, նախասենյակ, նախասրահ, տան առջև գտնվող բակ:
Հան, խան—պատմական տիտղոս՝ խան, պրսկ. իջևանատուն, իջևան, օթևան, պանդոկ, քարվանսարայ, գործարարական տուն, որտեղ տեղավորված են զանազան հաստատություններ, հիմնարկություններ ու գրասենյակներ:
Հանէ, խանէ—պրսկ.տուն, բարդ բառի երկրորդ մաս՝ սրահ, զետեղարան, շենք, տեղ:
Հանըմ, խանում—թրք. խանում, տիկին, տիրուհի, տանտիրուհի, տանտիկին, օրիորդ:
Հաշ—արբ.որոշ արտահայտություններում ներողություն արտահայտելու ձև:
Հաշա—արբ. երբե՛ք, Աստված կարոտ պահի, ներող եղեք:
Հաշլամա, խաշլամա—թրք. եփած, խաշած, խաշովի, շոգեխաշած:
Հաջ, հաճ—արբ. մուսուլմանական հաջ /ուխտագնացություն Մեքքա, որը կատարվում է զիլխիջ ամսին/:
Հաջի, հաճի—արբ. թրք. ուխտավոր, ուխտագնաց, մահտեսի, կոչում, որ տրվում է Մեքքայից եկած ուխտագնացին:
Հաստահանէ, հաստանէ, խաստախանէ, խաստախանա—պրսկ. հիվանդանոց, հոսպիտալ, լազարեթ:
Հարամ—արբ. մուսուլմանական՝ արգելված, չթույլատրված, անթույլատրելի, արգելափակ, անիրավ, անօրեն, անարժան: Անազնիվ ճանապարհով ձեռք բերված, օրինակ՝ **հարամ փարա**—փող:

Հարամզադէ, հարամզադա—արբապրսկ. անօրինական ամուսնությունից ծնված, արտամուսնական կապից ծնված, արտամուսնական զավակ, պոռնկորդի, բիճ, ոչ ցեղական՝ խառնածին էակ, վիժվածք, տականք, կիսատ—պռատ էակ, այլանդակություն:
Հարս—արբ. մշակույթ, հնացած՝ վարում, հերկում:
Հարսը—արբ. մշակութային, գյուղատնտեսական:
Հըմբըլ—թրք. հիմար, ծույլ: **Համբալ**—խոսակցական՝ բեռնակիր:
Հյուրիէթ—արբ. ազատություն, անկախություն:
Հյուքյում, հուքմ, յուքմ—արբ. հրաման, դատաստան, կամք, վճիռ:
Հյուքյումէթ, հյուքիմէթ, հուքիմէթ, հյուքիմետ—արբ. կառավարություն:
Հյուջում, հուջում—արբ. հարձակում, գրոհ, գրոհում, հարված, սրընթաց հարձակում:
Հուր, հուրի—արբ. հուրի, հուրի-փերի, դրախտային կույս, գեղեցկուհի, սիրելիս:
Հօջա, հօճա, խօջա, խօճա—պրսկ. ուսուցիչ, վարժապետ, դաստիարակ, խրատատու, հոջա, մոլլա, հոգևոր դեմք, վաճառական, ավագ, պարոն:
Հօր—պրսկ. ստոր, ոչնչություն, արհամարհելի: Տե՛ս *դիլիսոր*:

Ղալմաղալ—մեծ աղմուկ, աղմուկ—աղաղակ:
Ղահուէ, ղայֆէ, ղահֆէ, ղայֆա, կայֆա, կահուէ, կահվէ—արբ. սուրճ, կոֆե:
Ղայլան, կայլան, ղայլօն, կայլօն— տես. նարգիլե:
Ղարիբ, գարիբ—արբ. օտարական, պանդուխտ, օտարերկրացի:
Ղօչաղություն, ղօչախություն—թրք. արիություն, քաջություն:
Ղուլ—թրք. ստրուկ—զինվոր /գվարդիական զինվոր/, այստեղից՝ **ղուլուխ**, տե՛ս *կուլուխ*:

Մաժանդէն—քրդ. քսել, ձեռքերով տրորել: Այստեղից էլ **մաժել, մաժմժել**:
Մալ—արբ. թրք. խոշոր եղջերավոր անասունների խումբ, հարստություն, ապրանք, գույք, ոսկի, արծաթ, սեփականություն, կարողություն:
Մալարիա—լատ. ժանտատենդ, ճահճատենդ:
Մահրա, մախարա—թրք. փայտե տարա /խաղողի տեղափոխման համար/:
Մաղարա—արբ. քարանձավ, անձավ, այր, քարայր:
Մաշալլահ, մաշալլա, մըշըըլլահ—արբ. Ահա թե ինչ: Բրավո՛: Շա՛տ լավ: Փառք Աստծուն: Ի սեր Աստծո:
Մասալ, մասալա—արբ. հեքիաթ, առասպել, միֆ, առակ:
Մար, մառ, մահր, մըր, մըհր —պրսկ. օձ:
Մէզար—արբ. ջեջիմի տիպի բրդե ցանցագծավոր կտոր, ավելի սակավ հանդիպող, սովորաբար քառակուսի կտոր, որը նաև օգտագործվում է իբրև աղոթքի գորգ:
Մէլիէմ, միլամ, մայլամ, մէրիէմ—արբ. քսուք, քսաղեղ:

Մէյդան, մէյտան, միյտան—արբ. հրապարակ, վարժահրապարակ, դաշտ:
Մէջիդիյէ, մէջիդյա, մէջիդյէ, մէճիդյէ, մէճիդյա, մեճիտյա—արբ. քսան ղուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: **Մէջիդիյէ ալթինի**—մեկ լիրա արժեք ունեցող ոսկե դրամի անվանում: **Մէջիդիյէ չէյրէղի, չարէկ**—հինգ ղուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: **Սիմ մէջիդիէ**—քսանհինգ ղուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում:
Մէջլիս, մեճլիս—արբ. ժողով, խորհուրդ, պառլամենտ, խորհրդարան: **Միլլի մէջլիս**— ազգային ժողով: **Բէլէդիյէ մէջլիսի**—մունիցիպալ /տեղական կառավարման/ ժողով:
Մէսջիդ, մաչիթ, մզկիթ, մէչէթ, մէչէտ, մէչիդ, մէչիթ—արբ. աղոթատուն, փոքր մզկիթ /ուր չի կատարվում ուրբաթ օրվա կեսօրի աղոթքը/:
Մէքթէբ, մէքթէպ, մէքթէփ—արբ. դպրոց, ուսումնարան, ուսումնական հաստատություն:
Միհրաբ, միհրապ—արբ. մուսուլմանական՝ միհրաբ, մզկիթի որմնախորշ:
Մինարէ, մինարէթ—արբ. մինարեթ, 10—20 մ բարձրություն ունեցող, մզկիթների մոտ աշտարակ, որի վրայից մոլլաները բարձրաձայն աղոթքով հավատացյալներին աղոթքի են հրավիրում:
Միսիա, միսսիա—հանձնարարություն, առաքելություն, առաջադրանք, միսիա:
Մյուդուր, մյուդիր—արբ. կառավարիչ, պետ, տնօրեն, ղեկավար, վարիչ, գավառակի ավագ:
Մյուֆթյու, մուֆթաց, մուֆթի, մուֆթանց—արբ. մուսուլմանական՝ մուֆթի /բարձրագույն հոգևոր դեմք, որը համարվում է շարիաթի գործածության հարցերում գլխավոր իրավահոգևոր անձը, որն իր կարծիքն է արտահայտում ֆետվայում/:
Մոբիլիզացնել—ռազմականացնել, զորահավաքի ենթարկել:
Մուգանի, մուղամ—արբ. երգիչ, երգ:
Մութաֆ—պրսկ. արհեստավոր, որը այծի բրդից պատրաստում է իրեր /պարկեր, սթար, ծիու ծածկոց, տապաստ և այլն/:
Մութաֆ, մութաֆա, մութաք, մութաքա, մութանքա, մութաֆաթ—պրսկ. այծի բրդից պատրաստված պարկեր, սթար, ծիու ծածկոց, տապաստ, երկար գլաբաձև բարձ:
Մուխսի—արբ. մախտեսի, Երուսաղեմ ուխտագնացություն կատարած:
Մուհսին—բարերար, բարեգութ:
Մուհամմեդի—արբ. մուսուլմանական, մահմեդական, մուսուլման, մահմեդական: Մուհամմեդիե—Մուհամմեդի վարկագրությունը:
Մուհանաթ, մուհնաթ—արբ. վախկոտ, փոքրոգի, ստոր, անարժան, սրիկա, անպիտան:
Մուհաջիր, մուհաճիր—արբ. գաղթական, էմիգրանտ, փախստական, վերաբնակիչ:
Մունդառ—պրսկ. խոսակցական տե՛ս մուրդառ:
Մուռդառ, մուրդար, մուրտառ—պրսկ. կեղտոտ, աղտոտ, անմաքուր, պղծված,

ապականված, աղտեղի, անմաքրասեր, փնթի: **Մուռդառ հերիֆ**—կեղտոտ տիպ, ստոր տիպ:
Մուսանդրրա, մուսանդարա, մուսանդար—թրք. պատի պահարան /անկողինը պահելու համար/:
Մօլլա—արբ. մուսուլմանական հնացած մուլլա, մոլլա, գլխավոր ղադի /մուսուլմանական հոգևոր դատավոր/, մուսուլմանական իրավունքի դոկտոր, մեդրեսեի /հոգևոր ուսումնարան/ աշակերտ:
Մօնսօյ—ֆր. պարոն: **Միստր**—անգլ. պարոն:
Mosque [mosk]—անգլ. մզկիթ

Յազմա—թրք. դաջովի չիթ, ասեղնագործ, նախշակար: **Յազմա մանդիլ**—նախշակար գլխաշոր, **յազմա յամանի**—ասեղնագործ թաշկինակ:
Յաթաք, յաթաղ—թրք. անկողին, մահճակալ, մահիճ:
Յաթը—թրք. գիշերում, օթևանում, գիշերելու տեղ, օթևան:
Յաթըմ—թրք. պառկելը, պառկած լինելը, թեքել, թեքվել, կռանալ, կռացնել, խոնարհել, խոնարհվել:
Յաշա—թրք. կեցցե՛, բրավո՛, ուռա՜:
Յավրու, յավրում—թրք. մանուկ, երեխա, զավակ:
Յափունջի, յափնջի, յափնջակ—թրք. բրդոտ, մազոտ սթար, ծիու ծածկոց, տապաստ, այծենակաճ:
Յէթիմ—արբ. որբ:
Յէթիմհանէ—արբապրսկ. որբանոց, մանկատուն:
Յէլէկ, յէլըկ, յէլակ, էլակ—բաճկոն:
Յուզ—թրք. հարյուր:
Յուզբաշի—թրք. հարյուրապետ, կապիտան, ռոտմիստր:
Յուվա—թրք. բույն, օջախ, հանգրվան:
Յօլա, յօլ, յօլը—թրք. ճանապարհ, ճամփա: **Յոլա գնալ**—ճամփա գնալ: Նաև՝ խոսակցական՝ դիմանալ:
Յօյդուրմէք, օլդուրմէք, էօլտուրտի—թրք. սպանել, սատկացնել:

Նազ—պրսկ. քմահաճույք, քմայք, ինքնահաճություն:
Նալ—արբ. պայտ:
Նալբանդ—արբ. պայտար, պայտառ:
Նամուս—արբ. նամուս, պատիվ, հարգանք, պատվազգացություն, արժանապատվություն, խիղճ, խղճմտանք:
Նամազ, նէմազ—պրս. մուս. աղոթք, նամազ, Մուհամմեդ մարգարեին ուղղված աղոթք:
Նաշ—արբ. հանգուցյալով դագաղ, պատանկված հանգուցյալ՝ դագաղի մեջ դրված:

Նարգիլէ—պրսկ. նարգիլե, ղայլան, գլգլակ՝ ծխելու սարք, որի մեջ ծուխը անցնում է ջրով լի անոթով ու մաքրվում:
Նէ /նեյի/—թրք. ինչ, որ, թե:
Նէ—պրս. նէ…, նէ…թե…, թե:
Նոքար, նոքյար—պրսկ. ծառա:
Նուր—արբ. լույս, փայլ, ճառագայթ: **Նուրի Ալեմ**—կրոնական՝ աշխարհի լույս /Մուհամմեդի մականուն/:

Շամաթա, շամբթա—արբ. աղմուկ, իրարանցում, կռիվ-դավի, գոռոց, խայտառակություն:
Շառ, շրռ շէրի—արբ. բացատրել, մեկնաբանել, պարզել, վեճ, կռիվ, ընդհարում: Հայերենում՝ գավառական փորձանք, ձախողություն, զրպարտություն, սուտ մեղադրանք, չարագուշակ:
Շարափ, շառապ, շառափ, շէրաբ—պրսկ. գինի:
Շէրիաթ—արբ. կրոնական շարիաթ:
Շէրիֆ—արբ.սուրբ, օրհնյալ, ազնվատոհմ, մահմեդական՝ մարդ, որը սերում է Մուհամմեդից:
Շէքէր, շաքար, շրքէր—պրսկ. շաքար, կոնֆետներ, համեղ բան, քաղցր բան, քաղցրեղեն, քաղցրս: **Փինի շաքար, փէնի շէքէր**— շաքարկոտրիչով կոտրվող շաքար:
Շէյթան—արբ. սատանա, դև, գրող:
Շէյխ, շէխ—արբ. ծերունի, տարիքավոր մարդ, մուսուլմանական կրոնապետ, հոգևոր առաջնորդ, շեյխ, դերվիշների մենաստանի առաջնորդ, արաբական ցեղի առաջնորդ:
Շրռինգ, շրռիլ—ձայն, քչքչոց:
Շրք, շիք—ճոխ, շքեղ:
Շիա—արբ. մուսուլմանական՝ շիիզմ:
Շիլա, շիլը—կարմիր գույնի կտավ, քաթան:
Շիրա—պրսկ.քաղցու, խաղողից մզված քաղցր հյութ:
Շիրմա—շիրմա, առաջակալ, վարագույր, ծածկույթ:
Շիլէջէկ, շիլաջի—թրք. սավան /բաղնիքի/:
Շիվեկար—պրսկ. նազուտուզ անել, կոտրատվել, շինծու, անբնական: Այստեղից էլ՝ հնացած, գավառական՝ սուգ ու շիվան—ողբ, լացուկոց:
Շյուկրան, շուկրան, շուքրան—արբ. շնորհակալություն, երախտագիտություն, երախտապարտություն:
Շյուկյուր, շուքր, շիքիր—արբ. շնորհակալություն, երախտագիտություն, շատ շնորհակալ եմ, փառք Աստծուն:
Շրէշտ—բույս cremurus և սոսինձ, որը պատրաստում են այս բույսի արմատներից:
Շուրվա, շյոռբը—արբ. ապուր, ջրալի կերակուր:

Չադրա—սպիտակ կամ գույնզգույն շոր, որի մեջ Արևելյան կանայք փաթաթվում էին տնից դուրս գալիս:
Չալմա, չալումա—թրք. չալմա, տուրբան, նուրբ երկար կտոր, սպիտակ, սև կամ այլ գույնի, որը գլխավորապես մահմեդականները, մի քանի անգամ փաթաթում են ֆեսի վրա, գլխի փաթթոց:
Չավուշ, չաուշ, չաւուշ, շավիշ—թրք. պատմական՝ մունետիկ, ավետաբեր, հանձնակատար, զինվորական կրտսեր աստիճան, նվիրակ, ավագ ժանդարմ, հարվածամարտիկ:
Չարք, չարկ, չարխ—պրսկ. անիվ, սրոցաքար, սրելու չարխ, պտուտակ:
Չամուռ, չամուր—ցեխ, շլոփա, ողորմելի, ոչնչություն:
Չարշը, չարշի, չարշու, չարսու, չարչնոց—պրսկ. շուկա, առևտրական շարքեր, պասաժ, առուծախի հրապարակ: **Կապալի չարշը**—ծածկած շուկա:
Չափա—թրք. բրիչ, քլունգ:
Չափահանէ, ճապախանէ, ճապախանա—թրք. զինանոց:
Չաք, չըք, չիք, ճաք, ճըք—զենք /հրազեն և սառը/:
Չիքիլա, չիքլա—քող, ծածկոց: Հայերենում՝ գավառական շղարշ:
Չյոլ, չօլ—թրք. անապատ, անջրդի կամ անմշակ վայր, վայրի անբնակ տեղ, տափաստան, փխբ. ավերակ, քարուքանդ:
Չյոք, չոք—պրսկաթրք. ծունկ, ծնկից, **չյոքէր**, չոքել-իջնել, ծնկել:
Չօբան—պրսկ. հովիվ, խաշնարած, նախրապան:
Չօլաք, չօլախ—թրք. գասաձեռն, ձեռքը չորացած, ձեռքերն անկար:
Չօփչյու, չյօփչի—թրք. հավաքարար, աղբահան, բակապան:
Չուբուկ, չուբուք, չիբուխ—թրք. ձող, ճիպոտ, շիվ, ծխափող, ծխամորճ:
Չուլ—թրք. կոպիտ բրդյա կտոր, բրդե սթար, քուրձ, հնացած՝ շոր, զգեստ:

Պազար, բազար—պրսկ. շուկա:
Պէյ, բէյ—թրք. բեյ, պարոն, ցեղի, տոհմի առաջնորդ, հատուկ անունների բաղադրիչ՝ Իհշան Բեյ: **Բէյիմ, պեյըմ**—իմ պարոն:
Պուդրա, պուդրի—դիմափոշի:

Ջամի, ճամի—արբ. մզկիթ, ուրբաթ օրվա մզկիթ, մահմեդականների աղոթատուն, ժողովարան:
Ջան—պրսկ.թրք. հոգի, անձ, մարմին, ոգի, կյանք, գոյություն:
Ջաննաթ, ճաննաթ, ճանաթ, ջանաթ—արբ. ջեննեթ ձևի հոգնակին:
Ջանֆիդա, ջանֆէդա—պրսկ. նվիրված, սեփական հոգին ինչ—որ մեկին կամ ինչ—որ բանի նվիրած:
Ջէզվէ, ջազվէ, ջէզվա—թրք. սրճաման, սրճեփ: **Ջէզվա քահվէ**—սրճեփ, ամանիկ, որի մեջ թուրքական ձևով սուրճ են պատրաստում:
Ջեհննեմ, ջահնամ, ջայնամ, ջանդամ, ջհայնամ, ջհանամը—արբ. դժոխք, գեհեն, տարտարոս, սանդարամետ:

Ջեյրան, ջեյլան—սովորական վիթ:
Ջէննէթ, ճեննեթ, ճէնաթ, ջէնէթ—արբ. դրախտ:
Ջիղէր, ջիգար, ջիգյար, ճիգյար, ճիգար, ջիէր—պրսկ. թոք, լյարդ, լյարդութոք, սիրտութոք, փորոտիք, հոգի, սիրտ:
Ջոմէրթ, ջոմարդ—պրսկ. մեծահոգի, առատ, առատաձեռն, պտղաբեր:

Ռամազան, ռամադան—արբ. մահմեդականների լուսնային օրացույցի իններորդ ամիսը, որի ժամանակ մահմեդականները մեծ ծոմ են պահում:
Ռէյս, ռէիս, ռէս—արբ. նախագահ, գյուղապետ, գլխավոր:
Ռեզերվ—պահեստ, պահեստի ուժ, ռեզերվ:
Ռուբլի—ռուս. դրամական միավոր: Սովետական Միության և Ռուսաստանի հիմնական դրամական միավոր, դրամական նշան, մետաղադրամ:

Սաաթ, սահաթ, սըհաթ, սէհէթ—թրք. ժամ, ժամանակ:
Սաբիբ, սապիպ, սապապ, սըբբըբ սապապ, սաբաբ, սաբապ—թրք. պատճառ, առիթ:
Սալախանէ, սալախանա, սալահանէ, սալահանա—արբ. սպանդանոց:
Սալ—տափակ քար, քարե սալ, **խանէ**—սրահ, շենք բառերից: Այստեղից էլ **սալախ**—մսավաճառ:
Սալահ, սէլէ, սըլըհ, սլա, սալակ—արբ. հացը սեղանին մատուցելու համար շիվերից գործած սկուտեղ, լայն զամբյուղ: Հայերենում՝ ժողովրդական՝ զամբյուղ, կողով, ուղենուց, կեղևից գործված տափակ աման հացի համար:
Սազ—պրսկ. արևելյան լարային երաժշտական գործիք: Խոսակցական՝ դհոլ, զուռնա:
Սազանդար, սազէնդէ—պրսկ. լարային գործիքների նվագախումբ, սազ նվագող:
Սաղ—թրք. ողջ, առողջ, կենդանի, անվնաս:
Սալաթ—թրք. մուս. նամազ, աղոթք, Մուհամմեդ մարգարեին ուղղված աղոթք:
Սանիտար—հիվանդապահ, սանիտար, վիրավորներին առաջին օգնությունը ցույց տվող և մարտադաշտից դուրս բերող շարքային բուժաշխատող զինվոր: Կրտսեր բուժաշխատող, որը զբաղվում է հիվանդների և վիրավորների սպասարկմամբ և բուժիմնարկի կացարանների մաքրությամբ: **Սանիտարկա**—սանիտարուհի:
Սաջ, սաճ— թրք. սաջ, մետաղյա թիթեղ, թերթավոր երկաթ:
Սէլըմ, սէլամ, սալամ—արբ. խաղաղություն, հանգստություն, ողջույն, բարի ցանկություն:
Սէլըմալէյկյում, սալամալէյկում, սալամալէքմ—արբ. Խաղաղություն ձեզ: Բարև ձեզ:

Սէլըմէթ, սէլամէթ, սլամաթ, սալամաթ, սիլամըթ—արբ. բարիք, բարօրություն, փրկություն, ապահովություն, ողջություն, անվնաս:
Սէյիդ, սըիդ, սէյդ, սըյէդ—արբ. սեյդ:
Սէն—թրք. դու: **Սէն սաղ օլ**— Դու լինես ողջ ու առողջ:
Սէր, սար—պրսկ. գլուխ, կատար, գլխավոր, ավագ, ծայր, վերջ:
Սէրասկէր, սարասքէր, սէրասքյար—արբապրսկ. պատմական՝ գլխավոր հրամանատար, ռազմական մինիստր /Օսմանյան կայսրությունում/, զորապետ, զորավար, զորագլուխ, սպարապետ:
Սէրքօմսէր, սէրկօմսէր—կոմսէրների գլուխ, գլխավոր, կոմիսարների գլխավոր:
Սիգարետ, սիգարէթ, սիգառա—սիգարեթ, սիգար, ինքնափաթթուկ, ինքնափաթեթ գլանակ:
Սինոռ, սինօռ, սենոր, սէնոր—հուն. սահման, հարակից, սահմանակից:
ՍյունՆէթ, սյունաթ, սունաթ—արբ. մուսուլմանական՝ սուննա /Մուհամմեդ մարգարեի կյանքի և գործունեության մասին պատմող «սուրբ ավանդություն»/, **սյուննաթ**, թլպատման ծիսակատարություն, թլպատության արարողություն:
Սուլթան, սուլտան—արբ. հատուկ անունից առաջ՝ սուլթան, միապետ, տիրակալ, հատուկ անունից հետո՝ սուլթանուհի, սուլթանի աղջիկ, արքայադուստր:
Սուջուք, սուջուխ, սուճուխ—թրք. երշիկ, սուջուկ /քաղցրեղենի տեսակ/:
Սօբա—թրք. վառարան, հալոց, հնոց:
Սօլ—սանդալ, կոշիկ, չուստ, սոլկարնոց—կոշիկի արհեստանոց:
Սօլկէր, սօլկար—կոշկակար:
Սօմաք, սումաք, սումաղ—թրք. բուսաբանական աղտոր, կոծոխուր, ծոր, զրիշկ:
Սօֆի, սուֆի—արբ. կրոն. սուֆի /միստիկ փիլիսոփա/:
Սօֆռա, սօֆրա, սուփռա, սուփրա—արբ. ճաշի սեղան, գցած սեղան: **Սօֆռա թահթասը**—սուփրա /կարճ ոտքերով կլոր սեղան/:

Վաթան—արբ. հայրենիք, ծննդավայր, օջախ, ծագման վայր:
Վալլահ, վալլա, վալլահի—արբ. երդվում եմ Աստծով, Աստված վկա:
Վալի—արբ. վալի, կուսակալ, նահանգապետ:
Վար—թրք.ինչք, կարողություն, կա, կան, ունենալ: **Վար օլսուն**—կեցցե՛:
Վէրէ—թրք. կապիտուլյացիա, հանձնվել, ձեռնաթափ լինել: **Վէրէ կաղըդի**—կապիտուլյացիա /փաստաթուղթ/: **Վէրկախ, վէրքախ**—անձնատուր լինել, հանձնվել:
Վիլայէթ, վիլայէտ—արբ. վիլայեթ, նահանգ:
Վուրմակ /վուրուր/, վուրդը—թրք. ծեծել, խփել, հարվածել, սպանել, **վուր աբալիյա**—գտել ես՝ ում խփես:

Տամա—շաշկի, տամայախաղ:
Տանամա, տանանմա, տոլաթմա—թրք. տոն, ցնծություն, հրավառություն, հաղթանակ, նավատորմ:
Տուր—թրք. շրջան, պտույտ, դարձ:

Բահաթ, ռահաթ—արբ. հանգիստ, հանգստություն, անդորր, անդորրություն, լռություն, խաղաղություն:
Բասուլ, բըսուլ, բէսուլ—արբ. մարգարե /Մուհամմեդ/, Աստծո պատգամաբեր:

Ուլու—թրք. մեծ, բարձրագույն, երևելի, կարկառուն, ականավոր, նշանավոր:
Ուլու ջամի—մայր մզկիթ:
Ուլում—արբ. *իլիմ* բառից՝ գիտություն, **ուլումի դինիյէ**—թեոլոգիա, աստվածաբանություն, **շեյխ ուլումի**—աստվածաբան, գիտուն շեյխ:
Ուլումակ—ոռնոց, ոռնալ:
Ուսուլսյուզ—թրք. անկանոն, կանոններին հակառակ, սխալ:
Ուսուսբի—սրիկա:

Փաբուչ, փափուչ, բաբուչ, բաբուճ—պրս. կիսակոշիկներ /առանց կրունկ ու ետնամասի, կրնկամասի/, չստեր, մաշիկներ:
Փակ, պակ—պրսկ. մաքուր, անբիծ: **Փակէ, փաքի**—լավ:
Փամպ, բամփ/ել/—հարված վերևից, բացված ձեռքի ափով, քիչ ծալած մատներով /երբեմն կատակ/:
Փաշա—թրք. պատմական՝ փաշա /բարձրագույն քաղաքացիական և ռազմական տիտղոս Օսմանյան Թուրքիայում/: **Փաշա կապիսի**—ա/Բարձր դուռ, բ/ կառավարական հաստատություն նահանգում, գավառում:
Փաշատի, փաշատը —թրք. փաշայի իշխանությունը, փաշայի արժանիքը:
Փաշատայրա, փաշա տայրասի, դայրասի—փաշայի աշխատասենյակ, առանձնասենյակ:
Փաչա—թրք. ոտքի ներքևի հատվածը, շալվարի ներքևի հատվածը, մանր եղջերավոր անասունների ոտքերը /մսեղիքի կտրատման ժամանակ/, ոչխարի, գառան ոտքերից պատրաստված կերակուր:
Փասակ, փասա—թրք. կեղտ, կեղտոտ շոր, զգեստ: **Փուսաթ, փուսէթ**—թրք. զենք, գործիք, սպառազինություն: Այստեղից էլ՝ *փասա—փուսա, փասա—փուսեն*:
Փարդա, փերդե, փարդե, փարտա—պրսկ. վարագույր:
Փափաք, փափախ, փափաղ—թրք. գլխարկ /ոչխարի մորթուց/, ժողովրդական՝ փափախ:
Փէյգամբեր, փէխամբար, փէխամբըր, փյէխէմբէր –պրսկ. մարգարե:

Փէնի, փինի, փէնս, փէնսե—թրք. աքցան, ունելի, պինցետ, նրբունելի, շաքար կոտրիչ, շաքարի ունելի:
Փէնջէրէ, փէնճէրա, փէնջարե—պրսկ. լուսամուտ, պատուհան:
Փէշ—պրսկ. փեշ, քղանցք, հետնափեշ, փողածալ: Այստեղից էլ ժողովրդական *փեշակ*—արհեստ, զբաղմունք:
Փէշկէշ, փէշքէշ—պրսկ. նվեր, ընծա:
Փէշկիր—պրսկ. անձեռոցիկ, սրբիչ:
Փէշտմալ, փէշտամալ, փիշտմալ, փեշմալ—պրսկ. գոգնոց /լողարանի կամ խոհանոցի/, մեծ թաշկինակ:
Փիլավ, փըլավ—պրսկ. փլավ:
Փլազա, plaza—հրապարակ:
Փյուսքյուլ, փուսքյուլ, փուսքուլ, փյուսկյուլ, փուսկուլ, փուսկյուլ—թրք. ծոպք, ծոպիկ, փնջիկ:
Փշտո, փշտով, փշտոց—Հին տիպի միհարվածանի ատրճանակ, հնատիպ հրացան, անպետք ժանգոտած հրացան:
Փոշմանել—բարբառային՝ ափսոսալ, զղջալ:
Փոլիս, պոլիս—հուն. պատմական՝ քաղաք—պետություն, ոստիկան, փոլիսմեն: **Փոլիս մյուդուրու**—ոստիկանական վարչության պետ:
Փուսուլա—թրք. գրություն, երկտող, կարգադրություն, ծանուցագիր, հրամանագիր:

Քասըլ, castle [ka:sl]—անգլ. ամրոց, դղյակ:
Քասիփ, քյասիպ, քյասիբ—արբ. սեփական աշխատանքով վաստակող, առևտրական: Գավառական՝ աղքատ:
Քարթու—չոր, կոշտ, երեկվա /միայն հացի մասին/:
Քաֆթար, քյաֆթար, քաֆթառ, քավթառ—արբ. անատամ: Հայերենում՝ գավառական՝ բորենի, ջաղու, չար՝ վատ պառավ, զառամյալ, ծերունական:
Քէմէր, քյամար, քամար—պրսկ. գոտի, կամար, կուզիկ: **Կայիշ /ղայիշ/ կէմէր**—կաշվե գոտի, կաշեփոկ:
Քէյֆ, քեֆ—արբ. ուրախություն, քեֆ, զվարճանք, որակյալ, անկաշկանդ, ինքնակամ:
Քէնար, քէնա—պրսկ. ծայր, եզր, կողմ, ծայրամասային:
Քէրվա—բարեկամ:
Քին, քեն—պրսկ. հիշաչարություն, զայրույթ, թշնամանք, ատելություն:
Քիսաջի, քիսաչի—թրք. լվացող: Գավառական՝ լողացնող:
Քյասէ, քասէ, քասիկ, քյասը, քյասէք, քասա—պրս. պնակ, կթղա /կավե/:
Քյար, քյըր—արբ. շահույթ, օգուտ, շահ, վաստակ:
Քյար, քյէր—քրդ. էշ, ավանակ, իշամայր:
Քյատիպ, քյատիբ, քյաթիպ, քյաթիփ—արբ. քարտուղար, գրիչ, գրագիր:
Քըսա, քյասա, քիսը—թրք. կարճ:
Քյուլ—մոխիր, անթեղ:

Քյուրտ, քյուրթ, կյուրթ, քյուրդ—թրք. քուրդ:
Քյոթէք, քյոթաք, քյոտակ—թրք. հարվածել փայտով:
Քյոլոզ, քոլոզ, քոլոզ—թաղիքե, կաճյա սրածայր գդակ, որը կազմում է տղամարդու գլխազարդի հիմքը, այն կրում են նաև առանց փաթաթանի:
Քյոշէ, քյոշա, գոշա, կյոշէ—պրսկ. անկյուն, փոքրիկ անկյուն, խուլ նրբանցք:
Քյոշք, քյոշկ, քոշկ, քոչք, քոշք—թրք. օթյակ, հովանոց, տաղավար, ապարանք, ամառային պալատ, շքեղ ամառանոց, պերճատուն, առանձնատուն, ռազմական աշտարակ:
Քյուֆթա, քյոֆթէ—պրսկ. կոտլետ /մսե, կարտոֆիլե/, թակովի կոտլետ: **Ջիղ քյոֆթէ**—կոտլետ, որն ուտում են հում վիճակում:
Քողիկ, քուխէկ, քուղիկ—որսորդական տնակ, դարանատեղ, աննկատելի տեղ:
Քոշ—թրք. բարբառային զույգ /օր՝ ձիերի/:
Քոչաք, կոչախ, ղոչաղ, ղոչախ—թրք. արի, քաջ, խիզախ, անվեհեր, կտրիճ, առատաձեռն:

Օդա, ուդա—թրք. սենյակ, խուց, խցիկ, կամերա, կրպակ:
Օլման, օլ—թրք. լինել, կատարվել:
Օլուկ, ուլուղ, ուլուխ—թրք. կիսախողովակ, փողրակ, ջրհորդան, ակոս, ջրորդան:
Օղուլ /օղլու/—թրք. որդի, զավակ, տղա, երեխա, **բյուլուկ օղլի**—ավագ որդի:
Օյին, օյուն—թրք. խաղ, ուրախություն, խորամանկություն, միջոց, ինտրիգ:
Օն—թրք. տաս, տասնյակ:
Օնբաշի—թրք. տասնյակի գլուխ, տասնապետ:
Օրդու, օրդա, ուռտու—թրք. բանակ, բանակատեղ, ճամբար: **Մունթազամ օրդու**—կանոնավոր բանակ:
Օրթա—թրք. կենտրոն, մեջտեղ:

Ֆանար, ֆոնար—լապտեր, լապտերիկ, ցոլալապտեր:
Ֆելդշեր—բուժակ: Միջնակարգ բուժկրթությամբ բժշկի օգնական:
Ֆէթվա—արբ. կրոնական՝ ֆեթվա /Մուֆթու պատասխանն ու որոշումը շարիաթի հարցերում/:
Ֆէս—թրք. ֆես՝ գլխարկի տեսակ, **ֆես փյուսքյուլու**—ֆեսի ծոփք:
Ֆէրման, ֆիրման, ֆարման—պրսկ. հրովարտակ, հրամանագիր, հրաման, կարգադրություն:
Ֆըթա, ֆաթա, ֆաթմա, ֆատա—թրք. գոգնոց, մեզար, գավառական ֆաթա՝ գլուխը և մարմնի վերին մասը ծածկող ժանյակներից, մետաքսից, շղարշից պատրաստված թեթև քող, ծածկոց:
Ֆիդաի, ֆիդայի, ֆէդաի—արբ. ինչ-որ գաղափարի անձնուրաց նվիրված մարդ, պատրիոտ, հայրենասեր, կամավորական:

Ֆինջան, ֆինճան—բաժակ /սուրճի/, գավաթիկ, փոքրիկ թասիկ, ճենապակե բաժակ:
Ֆիսթան, ֆիստան—զգեստ, ֆուստանելլա /ալբանացիների, հույների, շոտլանդացի լեռնականի կիսաշրջազգեստ/:
ֆլան—քրդ. այդ, այսինչը:
Ֆլըհ, ֆլա, ֆլահ, ֆիլան, ֆիլահի—քրդ. հայոց լեզու, հայերեն, խոսակցական՝ հայ: **Ֆիլաստան**—հայաբնակ տեղանք:
Ֆոընգսըզ, ֆրանըս, ֆրանսզ—Ֆրասիա, Ֆրանսիացի, /կշտամբանք/:
Ֆրանկ—թրք. եվրոպացի կամ եվրոպական հագուստով:
Ֆուռ, փուռ, ֆըռըն, ֆիռուն—թրք. վառարան, հալոց, հնոց, հացի փուռ:

Բառակապակցություններ և արտահայտություններ

Աքա գյավուրի քյասաջախ—թրք. Հայրիկը գյավուրին մորթելու է՝ կտրելու է:
Աղջի՛, անիսաֆ—թրք. բառացի՝ Աղջի՛, նազանքի իրագործում, կատարելություն:
Աման ալլահ—թրք. Վայ Աստված:
Այ ալլահ բու նէ խաբար— թրք. Տեր Աստված, էս ի՞նչ լուր է:
Այ գըզ հարամզադա...—թրք. Այ անհավատ աղջիկ:
Այ էրմէնի կըզ— թրք.Այ հայի աղջիկ:
Այ խանում, հոջա էյլէրէմ: Այ խանում, հոջան էյլէրէմ— թրք. Այ տիկին, ուսուցիչդ լինեմ:
Բիսմիլլահ իահման ի իհահիմ—արբ. Հանուն աստծո...
Գյավուր, յաթ— թրք. Անհավատ, պառկի՛ր:
Գյավուր օղլի՛, յաթ—թրք. Անհավատի տղա, պառկի՛ր: Պիղծ տղա, պառկի՛ր:
Գյավուր ֆլահ—թրք. քրդ. Անհավատ հայ:
Գյավուրի վուրդը էօլտուրտի: Գյավուր վուրդու օլդուրդու—թրք. Անհավատին խփե՛ց, սատկացրե՛ց:
Դունյա իշիթըր այ բաջի—թրք. Աշխարհի գործն է, այ քույրիկ:
Դու սաղ սլամաթ:—թրք. Դու ողջ—առողջ:
Է՛յ, գյավուր, թէսլիմ օլ:—թրք. Էյ, անհավատ, հանձնվի՛ր:
Էյ, լաիլլահ—յիլալլահ—մամատիասուլավլա...—արբ. Աստված միայն Ալլահն է, Մուհամմեդը նրա մարգարեն...
Էֆէնդի տուռ— թրք. Պարոն, կանգնի՛ր:
Լլաիլահ—յուլալլահ...—արբ. Աստված միայն Ալլահն է...
Լայիլլա—յուլալլահ—Մուհամմեդ բասուլ ալլահ...—արբ. Աստված միայն Ալլահն է, Մուհամմեդը նրա մարգարեն...
Խանում ավլա, խանում աբլա— թրք. քույրս, քույրիկս /ավագ քրոջը ուղղված հարգալից դիմելաձև/:

Խանում եվլա, խանում էվլա—թրք. նախընտրելի, լավագույն խանում:
Խանու՛մ, հոջա էյլէրէմ: Խանում, հոջան էյլէրէմ:—թրք. Տիկին, ուսուցիչդ լինեմ:
Խաշքամա բաջի—թրք. Հանգիստ եղիր, քույրիկ:
Խաշքամա սահաթ րկա:—թրք. Այս պահին հանգիստ եղիր:
Կախ, գյավուր, վերկախ—թրք. Հանձնվի՛ր, գյավուր, անձնատուր եղի՛ր:
Կյօռ է ֆլահ, կուռ է ֆլա, կոռ է ֆլա—քրդ. խոսակցական՝ հայի տղա:
Կօռօ վարո ավ բդամա: Կօռօ վէրոկը ավ բդամա:—քրդ. Տղա՛, դույլով ջուր տուր:
Կուռ է քյար է—քրդ. էշի տղա:
Համ զիարաթ, համ թուջարաթ: Հէմ թիջարէթ հէմ զիյարէթ:—թրք. Համատեղել, միացնել դուրեկանը օգտավետին, օգտակարին:
Հայ ալլահ: Հայալլահ—արբ. Վա՜խ Աստված:
Յաշա յավրում—թրք. Ապրե՛ս, բալես:
Պունբարաք օլսուն օղլում, բունբարաք օլսուն օղլում—թրք. Շնորհավոր լինի, տղա՛ս:
Սէն սաղ բիզ սլամաթ:—թրք. Դու ողջ ես, մենք առողջ ենք: **Սէն սաղ բէն սէլամէթ:**—ասացվածք՝ Ամեն ինչ կարգին է: Դու ողջ առողջ ես, ինձ մոտ էլ ամեն ինչ կարգին է /երբեմն, երբ գործերը իրականում վատ են/:
Վուր կիթսըն: Վուր գիթսն:—թրք. Խփի՛ր, թող գնա: Զա՛րկ, թող գնա:
Օղուլ, սա ի՞նչ օյին է:—թրք. Տղա՛ս, սա ի՞նչ խորամանկություն է: Տղա՛ս, սա ի՞նչ խաղ է:

Օգտագործված գրականություն

«Հայկական հարց» հանրագիտարանից արված մեջբերումների համառոտագրությունները տե՛ս համանուն հանրագիտարանում: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարանից արված մեջբերումների համառոտագրությունները տե՛ս համանուն բառարանում:

Քարտեզ, Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին /1914-1916թթ/, Բ.Հ.Հարությունյան, Երևան, 1980:

Բառարաններ

Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. Ա-Բ, Հայաստան, Եր., 1976:

Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ, ԵՀ հրատ, Եր., 1976:

Հ.Ա.Ասմանգուլյան, Մ.Ի.Հովհաննիսյան, Անգլերեն-հայերեն բառարան, շուրջ 30000 բառ, Հայաստան, Եր., 1984:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 4հատ., ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1972-1980:

Ա.Ս.Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, երկրորդ հրատարակություն, «Հայաստան» հրատ., Եր., 1977:

Վ.Հ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 1956, էջ 603-613:

Հայ-ռուսերեն բառարան, ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987:

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Թ.Խ.Հակոբյան, Ստ.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, 4 հատորով, ԵՀ հրատ., Եր., 1986, 1988:

Д.А.Магазаник, Турецко-русский словарь, 40000 слов и выражений, ОГИЗ, гос.изд. иностранных и национальных словарей, М., 1945.

С.И.Ожегов, Словарь русского языка, около 57000 слов, М., “Русский язык”, 1988.

Иосиф А. Орбели, Избранные труды в двух томах, том II, выпуск 2, Курдско-русский словарь, НАН РА Институт Востоковедения, Зангак-97, Ер., 2002.

Турецко-русский словарь 48000 слов, АН СССР, Институт Востоковедения, изд. “Русский язык”, М., 1977.

В.Г.Шербинин, Э.М.-Э.Мустафаев, Карманный Русско-турецкий словарь, 11000 слов, изд.“Русский язык”, М., 1995.

Ю.В.Щека, Русско-турецкий разговорник, М., Высш. Шк., СП “Конто”, 1992.



Բիթլիս քաղաքի հատակագիծը 19-րդ դ. վերջին



Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1916 թթ.

Նանեն՝ թոռներ Մակիչի և Ջուլիետայի հետ. 1936թ.

Սիհրան և Ցողիկ Ղազարյանները՝
1930-1931թթ.

Սիհրանը Ցողիկի և նրա քրոջ հետ.
ձախից՝ Ցողիկը (1937թ.)



Միհրանի մայրը՝ Նանեն (1950-ական թթ.)

Նանեն և Միհրանը (1950-ական թթ.)

1960-ական թթ.



Սիհրանը միջնեկ որդու՝ Ռոմիկի հետ

Սիհրան և Ցողիկ Ղազարյանները՝ թոռնուհի Գայանեի հետ՝
զորավար Անդրանիկի հուշարձանի մոտ (Ուջան գյուղում, 1972-73թթ.)



Ծաղկաձորում. 1976 թ.

«Ոսկե հարսանիք». 1983 թ. մայիս



ԴԻՊԼՈՄ

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ

ДИПЛОМ

ВТОРОЙ СТЕПЕНИ

ԸՆԿ. ՄԻՀՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՍՊԱՍՊԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԻ 1969թ. ՆԱՐԴՈՒ ԵՐԿԱՐ ԽԱՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՍՊԱՍՊԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

/Վ. ԳԱԼՍՏՅԱՆ/

6 հունիսի 1969թ.

Նարդու առաջնությունում Միհրան Ղազարյանի ստացած դիպլոմը

Մի պատառիկ Սիհրան Ղազարյանի հուշագրությունից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Համառոտ նկարագրություն՝ Բաղեշ-Բիթլիս քաղաքի 6
Իմ ճակատագիրը 33
Արաբու կամուրջ-մահվան ճամբար 47
Резюме 227
Summary 228
Resumé 229
Համառոտագրություններ և հապավումներ 230
Ծանոթագրություններ 231
Օտար բառերի և արտահայտությունների բառարան 277
Բառակապակցություններ և արտահայտություններ 298
Օգտագործված գրականություն 300
Քարտեզներ 301
Լուսանկարներ 303

Ավագյան Ինգա Էդուարդի
Մեծ եղեռնը վերապրածները
(մատենաշար, գիրք 3)
1915 թ. Բիթլիսյան ողբերգություն
Միհրան Ղազարյանի հուշապատումը

Авагян Инга Эдуардовна
Пережившие Великий геноцид
(серия изданий, книга 3)
1915 г. Битлисская трагедия
Мемуары Миграна Казаряна
Гюмри, издательство “Дпир”, 2008 г.
(на армянском языке)

Խմբագիր և հրատ. խմբագիր՝ ***Հովիկ Կարապետյան***
Գեղ. և տեխ. խմբագիր, համակարգչային էջադրող՝ ***Սուրեն Մանուսաջյան***
Շապիկի դիզայնը՝ ***Համազասպ Պիճիկյանի***
Թարգմանությունները թուրք.՝ ***Ավետիք Մարդոյանի***
Վերսպ. սրբագրիչ՝ ***Կարինե Մկրտումյան***

Սիրելի ընթերցող, Ձեր առաջարկություններն ու ցանկությունները կարող եք ուղարկել ***artakh@web.am*** *էլ փոստով*

Ստորագրված է տպագրության՝ 14.04.2008 թ.
Գրաչափ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ DallakTimeNew:
19,5 պայմ.տպ. մամուլ, 15,91 հրատ. մամուլ:
Տպաքանակ՝ 200:

«Դպիր գրատուն» ՍՊԸ հրատարակչություն,
Գյումրի, Անի թաղ., 7-րդ փ. 5/34: Հեռ./Тел. (093) 74-10-01:
Издательство ООО “Дпир гратун”,
Гюмри, кв. Ани, ул. 7, 5/34.
e-mail: dpirhrat@yandex.ru